
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Գևորգ Քիլիմջյան

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԳԵՎՈՐԳ ՔԻԼԻՄՋՅԱՆ

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 93/94:327
ԳՄԴ 63.3+66.4
Ք 534

Հրատարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան

Գրախոս՝ պ.գ.դ., պրոֆ. Է. Գ. Մինասյան

Քիլիմջյան Գ. Ս.

Ք 534 Բալկանյան հիմնախնդիրները և միջազգային դիվանագիտությունը/ Գ. Ս. Քիլիմջյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2022, 468 էջ:

Աշխատությունը վերաբերում է թուրքական դարավոր տիրապետության դեմ բալկանյան ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրներին, Բալկանյան թերակղզում ռազմաքաղաքական և տնտեսական գերիշխանության հաստատման համար տերությունների միջև ընթացած դիվանագիտական մարտերին, նրանց հակասական շահերի բախման անմիջական ազդեցության հետևանքով Բալկաններում կատարված աշխարհաքաղաքական փոփոխություններին: Շեշտվում է, որ ինչպես պատմական անցյալում, այնպես էլ ներկայումս Բալկանյան թերակղզին շարունակում է մնալ որպես եվրոպական Մեծ տերությունների, նաև ԱՄՆ-ի ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման պայթյունավտանգ աշխարհաքաղաքական տարածաշրջան, որը հղի է միջազգային լուրջ ու անկանխատեսելի բարդություններով և դրանց անմիջական հետևանքներով:

Աշխատությունը կարող է օգտակար լինել թուրքական դարավոր բռնակալական տիրապետության դեմ բալկանյան ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրներով և դրանց կապակցությամբ Մեծ տերությունների վարած քաղաքականությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 93/94:327
ԳՄԴ 63.3+66.4

ISBN 978-5-8084-2571-2

© ԵՊՀ հրատ., 2022
© Քիլիմջյան Գ. Ս., 2022

Рекомендовано к печати
Научным советом Исторического факультета ЕГУ.

Главный редактор проф., академик НАН РА **Рубен А. Сафрастян**
Рецензент док.ист.наук, профессор Е.Г. Минасян

Килимджян Г.С.

Балканские проблемы и международная дипломатия.

Работа посвящена проблемам национально-освободительной борьбы балканских народов против турецкого векогого бладычества, дипломотической войны между сверхдержавами за утверждение на Балканском полуострове боенно-политического и экономического превосходства, вопросам геополитических изменений, возникших на Балканах непосредственно из-за столкновения противоречащих интересов этих государств. Подчёркивается, что как и в историческом прошлом, так и в настоящее время Балканский полуостров продолжает оставаться взрывоопасным геополитическим регионом как для европейских держав, так и Соединенных Штатов, где сталкивается военно-политические и экономические интересы этих государств, что чревато серьезными и непредсказуемыми сложностями международного порядка со всеми вытекающими от сюда последствиями.

Работа может быть полезна для исследователей, занимающихся проблемами балканских народов, которые веками вели национально-освободительную борьбу против турецкого владычества, а также для интересующихся в связи с этим политикой крупных держав в этом регионе.

Publication approved by the academic council of the Faculty of History of Yerevan State University.

Editor-in-Chief professor,
full member of the Armenian National Academy of Sciences **Ruben A. Safrastyan**

Reviewer doct.or professor **E.G. Minasyan**

Kilimjyan G. S.
Balkan Problems and International Diplomacy.

The work is dedicated to the problems of the national liberation struggle of the Balkan peoples against the centuries-old Turkish rule; diplomatic battles between the Great Powers for the establishment of military-political and economic domination over the Balkan Peninsula; issues of geopolitical changes that have arisen in the Balkans because of the conflicting interests of these states. It is emphasized that, both in the historical past and at the present time, the Balkan Peninsula continues to remain an explosive geopolitical region, where the military-political and economic interests of the powers collide, which is fraught with serious and unpredictable international complications with all the ensuing consequences.

The work can be useful for researchers dealing with the problems of the Balkan peoples who for centuries have been fighting a national liberation struggle against Turkish rule, as well as for those interested in this regard in the politics of major powers in this region.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 9
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ (ՆՎԱՃՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1878 Թ.) 11
Հունաստան 13
Կրետե կղզու՝ 1868 թ. կազմակերպական Կանոնադրությունը 48
Բուլղարիա 55
Սերբիա 59
Չեռնոգորիա (Ցրնա Գորա) 73
Բոսնիա և Հերցեգովինա 89
Ալբանիա (Շկիպրիա) 90
Մոլդավիա և Վալախիա (Ռումինիա) 91
ԱՄՓՈՓՈՒՄ 128
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ 1875-1878 ԹԹ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ. ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 131
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ 181
Բուլղարիա 185
Արևելյան Ռումելիա 194
Սերբիա 196
Չեռնոգորիա 198
Կրետե և ‹‹եվրոպական Թուրքիայի մյուս մասեր›› 202
Բոսնիա և Հերցեգովինա, Նովի-Բազարի սանջակ (գավառ) 203
Հունաստան 219
Ռումինիա 220

Կոնգրեսի քննարկումները և որոշումները Արևմտյան Հայաստանում տեղական վարչական բարեփոխումների և Ռուսաստանի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ.....226
ԱՄՓՈՓՈՒՄ 241
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 20-ԱՄՅԱԿՈՒՄ..... 260
1868 թ. Կրետական կազմակերպական Կանոնադրության մեջ կատարված «փոփոխությունները և լրացումները»..... 260
1879 թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված վերջնական հաշտության պայմանագիրը 262
1879 թ. ապրիլի 21-ի ավստրո-թուրքական համաձայնությունը Բոսնիա-Հերցեգովինայի և Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ..... 265
Հյուսիսային Բուլղարիայի Ռուսական քաղաքացիական վարչական կառավարումը.....267
Արևելյան Ռումելիայի վարչական կառավարման կազմակերպումը 277
Եվրոպական տերություններին հղած թուրքական կառավարության 1880 թ. հոկտեմբերի 3-ի շրջաբերականը 282
1881 թ. հունիսի 18-ին Բեռլինում Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքված գաղտնի պայմանագիրը....284
Արևելյան Ռումելիայի միավորումը Բուլղարական իշխանապետության հետ..... 286
Չեռնոգորիա 291
Սերբիա..... 293
Ռումինիա..... 295
Կիպրոս..... 296
Հունաստան 301
ԱՄՓՈՓՈՒՄ 311

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ.....316
1908-1909 թթ. Բոսնիական ճգնաժամը.....316
Բուլղարական իշխանապետության քաղաքական անկախության հռչակումը.....325
Չեռնոգորիայի իշխանապետության հռչակումը թագավորություն.....330
Կրետական հարցը և թուրք-հունական հարաբերությունների սրումը.....331
Թուրք պատմաբանը Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցման, Բուլղարիայի անկախության հռչակման և Հունաստանի հետ Կրետե կղզու միավորման դեմ կազմակերպված ցույցերի մասին.....345
1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները.
Առաջին բալկանյան պատերազմը,
Լոնդոնի հաշտության պայմանագիրը (1913 թ. մայիսի 30).....347
Ներքաղաքական իրադրության սրումը Կ.Պոլսում Առաջին բալկանյան պատերազմից հետո.....362
Երկրորդ բալկանյան պատերազմը
Բուխարեստի հաշտության պայմանագիրը
(1913 թ. օգոստոսի 10).....364
Ալբանական պետության ստեղծումը.....371
Կ.Պոլսի բուլղարա-թուրքական 1913 թ. հաշտության պայմանագիրը.....373
Աթենքի 1913 թ. թուրք-հունական հաշտության պայմանագիրը...375
1914 թ. օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական դաշինքը.....378
Սերբա-թուրքական 1914 թ. հաշտության պայմանագիրը.....388
Բալկանյան երկրները 1918-1923 թթ.....389
Բալկանյան հիմնախնդիրները 1919-1920 թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսում.....390

Հարավսլավիա (Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորություն) 391
Բուլղարիա 392
Ռումինիա 393
Ալբանիայի անկախության հռչակումը 394
Սևրի հաշտության պայմանագիրը (1920 թ. օգոստոսի 10) 395
Լոզանի հաշտության պայմանագիրը (1923 թ. հուլիսի 24) 398
Հարավսլավիայի քայքայումը և մասնատումը 402
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ՌՈՒՍԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 405
Ալբանիա 405
Բոսնիա և *Հերցեգովինա* 407
Բուլղարիա 412
Հունաստան 423
Օգտագործված հունարեն գրականություն 433
Մոլդավիա և Վալախիա (Ռումինիա) 434
Չեռնոգորիա 445
Սերբիա 454

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Պատմության ընթացքում Բալկանյան թերակղզին ունեցել է աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական կարևորագույն նշանակություն: Այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները ձևավորել են այնպիսի միտումներ, որոնք գործուն ազդեցություն են ունեցել Եվրոպայի և Լևանտի միջազգային հարաբերությունների վրա, առաջացրել են դիվանագիտական լուրջ բախումներ, զինված հակամարտություններ և պատերազմներ. դրանց անմիջական մասնակիցն են եղել ինչպես Բալկանյան ժողովուրդները և պետությունները, այնպես էլ Թուրքիան և Մեծ տերությունները: Այդ պայքարը շարունակվում է նաև մեր օրերում՝ ձեռք բերելով, իհարկե, ավելի քողարկված բնույթ:

Դարեր շարունակ Բալկանները գտնվել են թուրքական դաժան տիրապետության ներքո, սակայն այստեղ ապրող ժողովուրդները չեն համակերպվել դրա հետ և մղել են համառ ազգային-ազատագրական պայքար նվաճողների դեմ: Օսմանյան կայսրությունը պատասխանել է՝ կիրառելով բիրտ ուժ և արյան մեջ խեղդելով բալկանյան ժողովուրդների արդարացի պայքարը՝ հանուն անկախության և ազատության: Բալկանյան ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, թուրքերի փորձերը ճնշելու այն, ինչպես նաև Մեծ տերությունների ձգտումը օգտագործելու այդ պայքարը, իրենց շահերից ելնելով, հանգեցրին 18-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի եվրոպական դիվանագիտության ամենակարևոր խնդիրներից մեկի՝ Արևելյան Հարցի առաջացմանը: Աշխատանքի վաստակաշատ հեղինակը՝ Գ. Ս. Քիլիմջյանը, հմտորեն անդրադառնում է վերը նշված խնդիրներին՝ համակարգելով դրանք ըստ երկրների:

Աշխատությունում կարևոր տեղ է հատկացված նաև Օսմանյան Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, բալկանյան ժողովուրդների նկատմամբ նրա կողմից իրականացրած բռնաճնշումների առանձնահատկությունների բացահայտմանը:

Տպավորիչ է հեղինակի կողմից օգտագործված աղբյուրների և մասնագիտական գրականության ցանկը: Եզրակացությունները համոզիչ են, բխում են շարադրանքի տրամաբանությունից:

Կարող ենք արձանագրել, որ Գ. Ս. Քիլիմջյանին հաջողվել է ընթերցողի սեղանին դնել օգտակար մի հետազոտություն, որի կարիքը վաղուց էր զգացվում: Համոզված ենք, որ նրա հրատարակումը կնպաստի Բալկանյան ժողովուրդների և պետությունների պատմության կարևոր էջերի ավելի խորը ընկալմանը մեզանում:

Ռուբեն Սաֆրաստյան
Պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ (ՆՎԱՃՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1878 Թ.)

11-րդ դարի կեսերին ռազմաքաղաքական նոր իրադրություն է առաջանում Հայաստանի, հայ ժողովրդի և, ընդհանրապես, Այսրկովկասի երկրների ու ժողովուրդների համար: Սիր-Դարիայի միջին հոսանքում՝ Կարատաուի նախալեռնային շրջաններում, 10-րդ դարի ընթացքում հաստատված քոչվոր թյուրք օղուզների ցեղախմբին պատկանող սելջուկ-թուրքերը, 11-րդ դարի 30-50-ական թթ. նվաճելով Միջին Ասիան, Իրանի սարահարթը, Իրաքը, 1047/48-1072 թթ. ընթացքում գրավելով 1045 թվականից բյուզանդական տիրապետության տակ գտնվող Հայաստանը, 1071 թ. օգոստոսի 19-ին Մանազկերտի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում ջախջախիչ պարտության են մատնում իրենց առաջխաղացումը կասեցնելուն ընդառաջ եկած բյուզանդական կայսր Ռոմանոս 4-րդ Դիոգենեսի (1068-1071 թթ.) գլխավորած զորքերին: Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի դեմ սելջուկ-թուրքերի վճռական հաղթանակը շրջադարձային է հանդիսանում թյուրքական քոչվոր ցեղերի կողմից Փոքր Ասիան նվաճելու և իրենց տիրապետությունը աստիճանաբար մինչև Էգեյան ծով տարածելու համար: Թուրքական պատմագրությունը շեշտում է, որ Անատոլիան իրենց հայրենիքը դարձնելու նպատակով Բյուզանդիայի դեմ սելջուկ-թուրքերի տարած 1071 թ. Մանազկերտի հաղթական ճակատամարտը Անատոլիայում սկիզբ է դնում Թուրքիայի պատմությանը[1]:

Բյուզանդական կայսրության դեմ տարած Մանազկերտի հաղթական ճակատամարտի հետևանքով, նշում է թուրքական պատ-

[1] Tarih. Özel ders konseptli konu anlatlml. Okyanus Baslm. İstanbul, 2015, s. 73.

մագրությունը, իսլամական աշխարհում մեծանում է թուրքերի հեղինակությունը, թուրքերի վերահսկողության տակ են անցնում Արևելքի և Արևմուտքի առևտրական ուղիները, սկսվում է Անատոլիայի թուրքացման և իսլամականացման, տեղանունները թուրքերեն վերակոչելու քաղաքականությունը[2]:

Մանազկերտի ճակատամարտից հետո թյուրքական նվաճումների հետևանքով երեսուն տարվա ընթացքում Բյուզանդական կայսրության տարածքը հետզհետե սահմանափակվում է Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասով՝ Մարմարա ծովի արևելյան և հարավային շրջաններով: Հարձակումները Բյուզանդական կայսրության փոքրասիական այդ վերջին տարածքի վրա առանձնապես ավելի են ուժեղանում, երբ 1299 թ. օսմանյան պետության ստեղծումով 1326 թ. գրավվում է մ.թ.ա. 2-րդ դարի սկզբին հիմնված պատմական Բյութանիայի թագավորանիստ Պրուսան, որն էլ, վերանվանվելով Բուրսա, դառնում է պետության առաջին մայրաքաղաքը: Այնուհետև 1331 թ. օսմանյան թուրքերը գրավում են պատմական Բյութանիայի քաղաքներ Նիկեան (Իզնիկ), իսկ 1337 թ.՝ Նիկոմեդիան (Իզմիտ)՝ իրենց տիրապետությունը Փոքր Ասիայում հասցնելով մինչև Մարմարա ծովը: 1352 թ. օսմանյան թուրքերն անցնում են Դարդանելի նեղուցը և, երկու տարվա ընթացքում հաստատվելով Գալլիպոլի թերակղզում՝ այն վերածում են դեպի Բալկաններ և Եվրոպա ներխուժելու հզոր ռազմաբեմի՝ այդտեղ տեղափոխելով բազմաքանակ բանակներ և թյուրքական քոչվոր ցեղերի բազմահազարանոց զանգվածներ, որոնք, թյուրքական նվաճումներին զուգահեռ, տարածվում են բալկանյան բոլոր երկրներում: Ինչպես նշվում է թուրքական պատմագրության մեջ, բալկանյան երկրները նվաճելու ընթացքում օսմանյան պետությունը թյուրքերով վերաբնակեցնե-

[2] Նույն տեղում, էջ 73, 76:

լու միջոցով իրականացնում էր «Բալկանները թյուրքացնելու» և իսլամականացնելու քաղաքականություն[3]:

Արևելյան Թրակիայում 1363 թ. Բյուզանդիայից գրավելով Ադրիանապոլիսը և այն վերանվանելով Էդիրնե՝ Բուրսայի փոխարեն թուրքերը բալկանյան այդ քաղաքը 1365 թ. դարձնում են իրենց տերության նոր մայրաքաղաքը:

Թուրքական ծավալվող նվաճումների սպառնալիքի ներքո 1424 թ. փետրվարին 22-ին կնքած պայմանագրով բյուզանդական կայսրը հարկադրված պարտավորվում էր ամենամյա հարկ վճարել և թուրքերին զիջել Կ.Պոլսի շրջակա մի շարք քաղաքներ[4]: Այդպիսով՝ թուրքական լայնածավալ նվաճումների հետևանքով և 1424 թ. պայմանագրով Բյուզանդական կայսրության տարածքը սահմանափակվում է սոսկ մայրաքաղաք Կ.Պոլսի շրջակայքով և Բալկանյան թերակղզու հունական մի շարք տարածքներով:

Հունաստան

Բալկաններում իրենց գերիշխանությունը հաստատելու ընթացքում օսմանյան նվաճումները տարածվում են նաև Հունաստանի վրա: 1430 թ. թուրքերը Բյուզանդիայից գրավում են Թեսալոնիկեն և Էպիրոսը: Բոլոր կողմերից շրջապատված Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կ. Պոլիսը 1453թ. մայիսի 29-ին գրոհով գրավվում է թուրքերի կողմից: Այդպիսով՝ Բյուզանդական հազարամյա կայսրությունը վերանում է պատմության ասպարեզից: Կ. Պոլիսը վերանվանելով Ստամբուլ՝ թուրքերն այն դարձնում են իրենց կայսրության մայրաքաղաքը:

Մեկնաբանելով Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսի գրավման պատճառները, թուրքական պատմագրությունը

---

[3] Նույն տեղում, էջ 120-121:

[4] Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Empire Ottoman. Tome premier. 1300-1789, Paris, 1897, p. 10, N 36.

շեշտում է, որ Կ.Պոլսի գրավումը անհրաժեշտ էր Բալկաններում օսմանյան նվաճած տարածքները Անատոլիայի հետ միավորելու, Կ.Պոլսի աշխարհագրական բարենպաստ դիրքի առավելությունները օգտագործելու, Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով Սև ծովի տարածաշրջան մտնող Մետաքսի Մեծ ճանապարհի վրա վերահսկողություն սահմանելու, Բալկաններում հետագա նվաճումների քաղաքականությունը առավել եռանդագին կերպով շարունակելու, ինչպես նաև Կ.Պոլսի առումով մուսուլմանների բարոյահոգեբանական մարտական ոգին առավելագույնս բարձրացնելու համար[5]:

Կ.Պոլսի անկման հետևանքները մեծ ազդեցություն են թողնում օսմանյան տերության և համաշխարհային պատմության քաղաքական ու տնտեսական հետագա զարգացումների վրա, եզրակացնում է թուրքական պատմագրությունը: Այսպես. Կ.Պոլսի անկումով հազարամյա Բյուզանդական կայսրությունը այլևս թաղվում է պատմական անցյալի մեջ, միջնադարը ավարտվում է և սկսվում է համաշխարհային պատմության նոր ժամանակաշրջանը: Իսթանբուլ վերանվանված Կ.Պոլիսը դառնում է Օսմանյան կայսրության մայրաքաղաքը՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 1923թ. հոկտեմբերի 13-ը: Կ.Պոլսի գրավման հետևանքով ամրապնդվում է օսմանյան տերության տարածքային ամբողջականությունը, ավարտվում է օսմանյան տերության կազմավորման ժամանակաշրջանը և սկսվում է նրա վերելքի դարաշրջանը՝ դառնալով համաշխարհային հզոր տերություն: Քրիստոնեական աշխարհի կողմից սրբազան համարվող Կ.Պոլսի գրավումը իսլամական աշխարհում բարձրացնում է օսմանյան տերության հեղինակությունը: Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, ինչպես նաև դրանցով Սև ծով մտնող միջազգային առևտրական ծովային ուղիները անցնում են օսմանյան տերության վերահսկողության տակ, նոր թափով է շարունակվում բալկանյան երկրները նվաճելու և դրանք թյուրքական ցեղերով վերաբնակեց-

[5] Tarih, էջ 133:

նելու և իսլամականացնելու քաղաքականությունը: Կ.Պոլիսը նվաճած սուլթան Մեհմեդ 2-րդը Կ.Պոլսի հունական պատրիարքությանը վերցնելով իր հովանավորության ներքո, շահում է ուղղափառ քրիստոնեական եկեղեցու աջակցությունը՝ այդպիսով խափանելով ուղղափառ և կաթոլիկ քրիստոնեական եկեղեցիների միավորումը և մեծ կարևորություն տալով քրիստոնյա Եվրոպան պառակտելու քաղաքականությանը: Բալկանյան երկրները նվաճելու գործում նշանակալի էր հույների աջակցությունը ստանալու համար սուլթանների կողմից հույներին սիրաշահելու համար կիրառված քաղաքականությունը:

Բոսֆորի և Դարդանելի նեղուցները և դրանցով Սև ծովի տարածաշրջան մտնող միջազգային առևտրական ծովային ուղիները օսմանյան վերահսկողության տակ անցնելու հետևանքով, դեպի Չինաստան և Հնդկաստան տանող ծովային նոր ուղիներ գտնելու նպատակով եվրոպացիների կողմից սկսվում է աշխարհագրական Մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանը, Կ.Պոլսից հեռացած և Իտալիայում ապաստանած բյուզանդացի մտավորականները և արվեստագետները Եվրոպայում հիմք են դնում Վերածննդի դարաշրջանին, հզոր հրետանիով ամրոցները կործանելու ռազմավարությունը եվրոպական երկրներին օրինակ է ծառայում ֆեոդալական իշխանապետությունների անջատողականությունը ճնշելու և թագավորների բացարձակ միապետությունը ամրապնդելու գործում[6]:

Կ.Պոլսի գրավումից հետո թուրքերը ավարտում են ցամաքային Հունաստանի նվաճումը: 1460 թ. ընկնում է 1202-1204 թթ. Խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով 1204 թ. ստեղծված և Լատինական կայսրության մասը կազմող Աթենքի դքսությունը: Նույն՝ 1460 թ. Պելոպոնեսյան թերակղզում թուրքերը զավթում են տապալված Բյուզանդական կայսրության բալկանյան վերջին տի-

[6] Նույն տեղում, էջ 134:

րույթը՝ Մորեայի դեսպոտատը: Ցամաքային Հունաստանի նվաճմանը միաժամանակ թուրքերը սկսում են զավթել Էգեյան ծովի կղզիները, որոնք Խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով նույնպես գտնվում էին Լատինական կայսրության և Վենետիկյան հանրապետության տիրապետության ներքո: Վենետիկյան հանրապետության և նրա դաշնակիցների դեմ 1463 թ.-ից մինչև 1718 թ. մղած յոթ պատերազմների ընթացքում թուրքերը իրենց տիրապետությունն են հաստատում Էգեյան ծովի բոլոր կղզիների վրա, Միջերկրական ծովում 1571 թ. գրավում են Կիպրոսը, իսկ 1699 թ.՝ Կրետեն: Թուրքերն իրենց գերիշխանությունը չեն կարողանում հաստատել միայն Հոնիական յոթ կղզիների վրա, որոնք Խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով անցել էին Վենետիկյան հանրապետության տիրապետության տակ: Հետագայում՝ 1797 թ. հոկտեմբերի 17-ին, Լոմբարդիայում՝ Կամպոֆորմիո գյուղի մոտ, Ավստրիայի և Ֆրանսիայի միջև կնքված հաշտության պայմանագրով վերացված Վենետիկյան հանրապետության տիրույթներից Ֆրանսիային են անցնում Հոնիական յոթ կղզիները, որոնք 1815 թ. Վիեննայի կոնգրեսի որոշմամբ դրվում են Անգլիայի քաղաքական հովանավորության ներքո:

1821 թ. մարտին հույն ժողովուրդը ազգային-ազատագրական, հերոսական պատերազմ է սկսում թուրքական դարավոր տիրապետության դեմ: Հույն ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմի սկիզբը պաշտոնապես համարվում է մարտի 25-ը, որն ամեն տարի նշվում է որպես Հունաստանի Անկախության օր:

1822 թ. հունվարին Արևելյան Պելոպոնեսի Էպիդավրոս քաղաքում հրավիրված հունական Ազգային ժողովը հռչակում է Հունաստանի անկախությունը և ընդունում առաջին Սահմանադրությունը՝ Էպիդավրոսի կազմակերպական Կանոնադրությունը: Սահմանադրությունը Հունաստանը հռչակում էր անկախ պետություն՝ ընտրովի նախագահի գլխավորությամբ:

Բայց սկզբնական շրջանում հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը հանդիպում է «Սրբազան դաշինքի» հիմնադիր տերությունների՝ Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի, ինչպես նաև՝ այդ դաշինքին հարող Անգլիայի թշնամական վերաբերմունքին: Բայց աստիճանաբար հունական ազատագրական պայքարի ռազմական որոշակի հաջողությունները և հունական տարածքի որոշ մասի ազատագրումը ստիպում են ռուսական, անգլիական և ֆրանսիական կառավարող շրջաններին նոր մոտեցումներ ցուցաբերել հունական ազատագրական պայքարի նկատմամբ՝ նպատակ ունենալով իրենց ազդեցությունը հաստատելու նոր ստեղծվող պետության վրա: 1823 թ. գարնանը անգլիական դիվանագիտությունը կտրուկ շրջադարձ է կատարում՝ հանդես գալով հունական ազատագրական պատերազմի պաշտպանությամբ, և Անգլիայի արտգործնախարար Կաննինգը հույներին ճանաչում է պատերազմող կողմ՝ այդպիսով սկիզբ դնելով հունական և անգլիական իշխանությունների միջև ոչ պաշտոնական հարաբերություններին[7]: Անգլիական կառավարության համաձայնությամբ 1824 թ. փետրվարին Լոնդոնի բանկիրները 800 հազար, իսկ 1825 թ. մարտին՝ 3 միլիոն ֆունտ ստեռլինգ փոխառություն են տրամադրում հունական իշխանություններին:

Երկարատև բանակցությունների արդյունքում, 1826 թ. ապրիլի 4-ին Պետերբուրգում ստորագրվում է անգլո-ռուսական արձանագրություն, որը նախատեսում էր Պելոպոնեսում և Էգեյան կղզիներում ստեղծել Թուրքիայից վասալական կախվածության մեջ գտնվող, հարկատու, սակայն ներքին լիակատար ինքնուրույնությամբ օժտված հունական ինքնավար պետություն, իսկ նրա ցամաքային և ծովային սահմանների վերջնական ճշգրտումները պայմանավորվող տերությունների կողմից կատարվելու էին հետագայում: Երկարատև պայքարի մեջ գտնվող երկու ժողովուրդներին իրարից լիո-

[7] История дипломатии, т. 1, М., 1959, с. 535.

վին անջատելու և նրանց միջև հետագա բախումները կանխելու նպատակով իրենց անշարժ սեփականությունները հույներին վաճառելով՝ թուրքերը պետք է հեռանային ինքնավարություն ստացած մայրցամաքային Հունաստանից և նրա կղզիներից:

Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, օգտագործելով թուրքական կառավարության և հույների վրա ունեցած իրենց ազդեցությունը, պետք է ջանքեր գործադրեին, որ հակամարտող երկու կողմերը հաշտություն կայացնեին՝ նրանց առաջարկված պայմանների հիման վրա:

Երկու տերությունները պարտավորվում էին այդ համաձայնությամբ Օսմանյան կայսրությունում չհետապնդել տարածքներ ձեռք բերելու, բացառիկ ազդեցություն հաստատելու և իրենց հպատակների համար առևտրական առավելություններ ձեռք բերելու նպատակներ:

Երկու տերությունները պայմանավորվում էին Պետերբուրգյան արձանագրությանը հաղորդակից դարձնել Վիեննայի, Փարիզի և Բեռլինի արքունիքներին՝ առաջարկելով նրանց նույնպես դառնալ Թուրքիայի և Հունաստանի միջև կայանալիք վերջնական հաշտության երաշխավորներ[8]:

Պրուսիայի արտաքին գործերի նախարարը Կ. Պոլսում հավատարմագրված իր ներկայացուցչին 1827 թ. մարտի 12-ին հանձնարարում էր թուրքական կառավարությանը վճռականորեն հայտարարել, որ Հունաստանի վերաբերյալ ընդունված 1826 թ. ապրիլի 4-ի արձանագրությունը բացարձակապես մերժելը չի կարող փոփոխություններ առաջացնել տերությունների ընդունած որոշումներում: Միևնույն ժամանակ Պրուսիայի արտաքին գործերի նախարարը իր ներկայացուցչին հանձնարարում էր թուրքական կառավարությանը

[8] Noradounghian G., Recueil d'Actes Internationaux de l'Émpire Ottoman. Tome deuxième. 1789-1856. Paris, 1900.
N 37. Protocole relative aux affaires de la Grèce. Signé à Saint-Pétersbourg entre la Russie et l'Angleterre le 23 Mars-4 Avril 1826, p. 114-116.

նախազգուշացնել այն վտանգավոր հեռանկարների մասին, որ տերությունների միասնական որոշումները մերժելու հետևանքով սպառնում էին Թուրքիային: Նույն օրը թուրքական կառավարությանը նույնանման նախազգուշացում է կատարում նաև Ավստրիայի դեսպանը:

Կ.Պոլսում հավատարմագրված ֆրանսիական, անգլիական, ռուսական, ավստրիական և պրուսական դեսպաններին 1827 թ. հունիսի 9-ին և 10-ին հղած նոտայով, հիմնվելով կրոնական, քաղաքական, ազգային և վարչական անխախտելի սկզբունքների վրա, թուրքական կառավարությունը կտրականապես մերժում էր ընդունել Հունաստանի ինքնավարությանը վերաբերող 1826 թ. ապրիլի 4-ի Պետերբուրգի արձանագրությունը[9]:

1827 թ. հուլիսի 6-ին Անգլիան, Ռուսաստանը և նրանց միացած Ֆրանսիան Լոնդոնում ստորագրում են Հունաստանի ինքնավարության վերաբերյալ 1826 թ. Պետերբուրգյան արձանագրության սկզբունքներից բխող պայմանագիր: Հուլիսի 6-ի պայմանագրի հոդվածները իրականացնելու, Թուրքիայի և հույների միջև հաշտություն կայացնելու նպատակով պայմանավորվող տերությունները իրենց միջնորդությունն էին առաջարկում թուրքական կառավարությանը: Պայմանագրին կցված գաղտնի հոդվածով երեք տերությունները թուրքական կառավարությանը նախազգուշացնում էին, որ եթե մեկ ամսվա զինադադարի ընթացքում միջնորդության առաջարկը չընդունվի, ապա իրենք անհապաղորեն կձեռնարկեն հույների հետ մերձենալու անհրաժեշտ միջոցառումներ և, այդ առումով, հունական իշխանությունների հետ կհաստատեն առևտրական հարաբերություններ, ինչպես նաև երկուստեք կփոխանակեն դիվանագիտական ներկայացուցիչներ:

[9] Annuaire historique universel pour 1827. Paris, 1828. Appendice. Note remise le 9 et 10 juin 1827, par le reis-effendi, aux drogmans des légations française, anglaise, russe, autrichienne et prussienne, p. 99-102.

Լոնդոնի պայմանագրով նախատեսված մեկ ամսվա զինադադարի պայմանը Թուրքիայի կողմից չընդունվելու դեպքում երեք տերությունները պետք է զենքի ուժով պարտադրեին իրենց կայացրած ընդհանուր որոշումը: Երեք տերությունները միաժամանակ նախազգուշացնում էին նաև հունական իշխանություններին հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագիրը մերժելու դեպքում նրանց նկատմամբ իրենց ձեռնարկելիք միջոցառումների մասին[10]: Օգոստոսի 21-ին հունական կառավարությունը, իսկ օգոստոսի 25-ին՝ Ազգային ժողովը ընդունում են հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագրով իրենց ներկայացված առաջարկությունները: Հունական իշխանությունները միաժամանակ հույս էին հայտնում, որ ազատագրական պատերազմ մղող համախմբված հույների ջանքերը, աջակցություն ստանալով տերությունների բարյացակամ որոշումներում, կպսակվեն երջանիկ հաջողությամբ[11]:

Կ. Պոլսում հավատարմագրված Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները օգոստոսի 16-ին թուրքական կառավարությանը հղած վերջնագրով նախազգուշացնում են, որ 1827 թ. հուլիսի 6-ին Լոնդոնում Հունաստանի վերաբերյալ ստորագրված պայմանագրին 15 օրվա ընթացքում կրկին բացասական, խուսափողական, անբավարար պատասխան տալու կամ բացարձակ լռության մատնելու դեպքում դաշնակից տերությունները հարկադրված կլինեն ձեռնարկելու անհրաժեշտ միջոցառումներ՝ թուրքական կառավարության իրական շահերին չհամապատասխանող, միջազգային առևտրի անվտանգությանը և Եվրոպայի լիակատար անդորրությա-

[10] Noradounghian G., նշվ. աշխ, h. 2, N 42. Traité pour la pacification de la Grèce conelu entre l' Angleterre, la France et la Russie et signé à Londres le 5 juillet 1827 avec un article additionnel en date du me^me jour. Article additionnel, p. 130-134:

[11] Annuaire historique universel, pour 1827. Paris,1828. Appendice. Proclamation de la commission représentative du gouvernement de la Grèce, sur le traité du 6 juillet. Réponse faite à la notification du traité, p. 138-140.

նը սպառնացող իրադրությանը վերջ տալու համար[12]: Օգոստոսի 31-ին երեք տերությունները կրկնում են օգոստոսի 16-ին թուրքական կառավարությանը հղած հուշագիրը[13]:

Թուրքական կառավարությանը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հղած հուշագրի հաջորդ օրը՝ օգոստոսի 17-ին, Պրուսիայի դիվանագիտական ներկայացուցիչը իր վերադասից ստացած հանձնարարականով Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին վերջին անգամ պետք է նախազգուշացներ, որ երեք տերությունները անհրաժեշտ բոլոր միջոցներն ունեն հուլիսի 6-ի պայմանագիրը իրականացնելու համար, և որ նա չի կարող չգիտակցել, թե թուրքական կառավարությունը իր համար ինչպիսի ապագա է պատրաստում, եթե նա համառորեն մերժում է իր բարեկամների առաջարկությունները, խորհուրդները, ինչպես նաև խնդրանքները[14]:

Ի պատասխան Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի օգոստոսի 16-ի վերջնագրի՝ օգոստոսի 31-ին թուրքական կառավարությունը հայտարարում է, որ «չի ընդունում հույներին վերաբերող ոչ մի առաջարկություն... և կձգտի իր շահերը պաշտպանել սեփական ուժերով»:

Թուրքական կողմի մերժման հետևանքով 1827 թ. հոկտեմբերի 20-ին Պելոպոնեսի հարավարևմտյան մասում՝ Նավարինի ծովածոցում, անգլիական, ֆրանսիական և ռուսական 27 ռազմանավերը չորս ժամ տևող ծովային ճակատամարտում լիովին ոչնչացնում են 89 մարտանավերից բաղկացած թուրք-եգիպտական նավատորմը:

---

[12] Noradounghian G., նշվ. աշխ, h.2, N 43. Notification à la Porte Ottomane des Représentans d' Angleterre, de France et de Russie relative aux affaires de Grèce. En date du 16 Août 1827, p. 134-135:

[13] Նույն տեղում, N 44. Seconde notification à la Porte Ottomane des Représentants d'Angleterre, de France et de Russie au sujet des affaires de Grèce. En date du 31 Août 1827, p.136-137:

[14] Annuaire historique universel, pour 1827. Paris, 1828. Appendice. Instruction donnée, le 17 aoˆut 1827, au drogman de la légation prussienne à Constantinople, p. 104-106.

Այդ հաղթական ճակատամարտը վճռական նշանակություն է ունենում հունական ազգային-ազատագրական ապստամբության հաղթանակի համար: Ինչպես նշվում է հունական պատմագրության մեջ, Նավարինի ծովային ճակատամարտը փրկում է հունական հեղափոխությունը այն ժամանակ, երբ այն արդեն անխուսափելի կործանման եզրին էր[15]:

Սակայն գործը Նավարինի ծովային հաղթական ճակատամարտով չի ավարտվում:

Նավարինի ծովային հաղթական ճակատամարտից ընդամենը 20 օր անց՝ նոյեմբերի 10-ին, թուրքական կառավարությանը հղած միասնական նոտայով երեք տերությունները վճռականորեն պահանջում են առանց հապաղելու պարզորոշ վերաբերմունք արտահայտել օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո Հունաստանի ինքնավարության վերաբերյալ 1827 թ. հուլիսի 6-ին Լոնդոնում ստորագրված պայմանագրին[16]:

Թուրքական կառավարությանը երեք տերությունների հղած միասնական նոտայից երկու օր անց՝ նոյեմբերի 12-ին, դիվանագիտական ներկայացուցիչներին ուղղած շրջաբերականով Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Նեսսելրոդեն նշում էր, որ կայսրի համոզմամբ՝ 1827 թ. հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագրի հիմնական նպատակի փոխարեն որպես այլընտրանք ցամաքային Հունաստանում և Էգեյան կղզիներում թուրքական կառավարությունը իրականացնում է հույներին բնաջնջելու քաղաքականություն: Այդ պատճառով, շեշտում էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը, սերտորեն համագործակցելով Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ կայսրը վճռականորեն որոշել է կենսագործել Հունաստանի վերաբերյալ ընդունված 1827 թ. հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագի-

[15] Лулес Димитрис, Образование греческого государства и Россия (1821-1832): Տե՛ս “Советское славяноведение” 1980, N 3, с. 41:

[16] Annuaire historique universel, pour 1827. Paris 1828. Appendice. Note collective addressée par les trois ambassadeurs de la France, de la Grande-Bretagne et de la Russie au reis-effendi, le 10 novembre 1827, p. 115-116.

րը՝ միաժամանակ խստորեն պահպանելով պայմանավորվող տերությունների կողմից տարածքային նվաճումներ չկատարելու կամ բացառիկ արտոնություններ ձեռք չբերելու գերագույն սկզբունքը[17]:

Թուրքական կառավարության կողմից Հունաստանի ինքնավարության վերաբերյալ երեք տերությունների նոյեմբերի 10-ի միասնական նոտան մերժելու հետևանքով Կ. Պոլսում հավատարմագրված Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները դեկտեմբերի 2-ին հրահանգ են ստանում իրենց դիվանագիտական գործունեությունը դադարեցնելու մասին[18]:

Որպես պատասխան՝ երեք տերությունների նոյեմբերի 10-ի միասնական նոտայի՝ Օսմանյան կայսրության մուսուլմաններին հղած 1827 թ. դեկտեմբերի 18-ի շրջաբերականով թուրքական կառավարությունը հայտարարում էր, որ 1827 թ. հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագրի սկզբունքներն ընդունելու դեպքում Մորեայի (Պելոպոնեսի) և Էգեյան կղզիների անկախությունը կխրախուսի և անխուսափելիորեն կուժեղացնի Ռումելիայի և Անատոլիայի հույների անկախության անկասելի ձգտումը, որի իրականացմամբ նրանք կոչնչացնեն իսլամական դավանանքը, կքայքայեն կայսրությունը և գերիշխանություն կհաստատեն մուսուլման ժողովրդի վրա: Թուրքական կառավարությունը բոլոր մուսուլմաններին կոչ էր անում համախմբվելով հզոր ճակատ ստեղծել և Օսմանյան կայսրությունը օտարերկրյա կործանարար միջամտությունից պաշտպանելու համար կրոնական ու ազգային «սրբազան» պատերազմ մղել, որովհետև ո՛չ բանականությունը, ո՛չ օրենքը, ո՛չ քաղաքականությունը, ո՛չ կրոնը թույլ չեն տա ընդունել նման առաջարկությունները[19]:

---

[17] Նույն տեղում, Appendice. Note circulaire adressée au légations par S.Exc. le comte de Nesselrode, ministre des affaires étrangères de Russie. Saint-Pétersbourg, 12 novembre, p. 116-117:

[18] Նույն տեղում, Appendice. Instructions données aux drogmans des légations de France, d'Angleterre et de Russie, en date du 2 décembre 1828, p. 117-118:

[19] Նույն տեղում, Appendice. Hatti -chérif ou proclamation adressé, le 18 décembre 1827, aux ayans d'Europe et d'Asie, p. 119-122:

Թուրքական կառավարության բացասական պատասխանի հետևանքով Ռուսաստանը 1827 թ. հուլիսի 6-ի պայմանագիրը զենքի ուժով իրականացնելու նպատակով 1828 թ. ապրիլի 26-ին պատերազմ է հայտարարում Թուրքիային՝ ռազմական գործողություններ ծավալելով Բալկաններում և Հայաստանում: Ռուսական կառավարող շրջանները համոզված էին, որ միայն պատերազմը «կկարողանա լուծել հունական հարցը»[20]:

Մայիսի 20-ին թուրքական կառավարությունը պաշտոնապես պատերազմ է հայտարարում Ռուսաստանին:

Ի պատասխան ռուսական կայսրի պատերազմ հռչակող մանիֆեստի՝ հունիսի 4-ին հրապարակած հայտարարությամբ թուրքական կառավարությունը կտրականապես մերժում էր հունական գործերին վերաբերող օտարերկրյա որևէ միջամտություն[21]:

Ռուս-թուրքական պատերազմին միաժամանակ՝ 1828 թ. հոկտեմբերին, ֆրանսիական 14000-անոց հեծելազորը ստիպում է թուրք-եգիպտական բանակներին առանց դիմադրության հեռանալ հունական ազատագրական պայքարի կենտրոն Պելոպոնեսից:

Դեռևս ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը 1829 թ. մարտի 22-ին Լոնդոնում Հունաստանի վերաբերյալ ընդունում են 1827 թ. հուլիսի 6-ին ստորագրած համաձայնագրի վրա հենված արձանագրություն: Դրա համաձայն՝ օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո Հունաստանը ստանում էր ներքին ինքնավարության լայն իրավունքներ, իսկ նրա քաղաքական կառուցվածքը պետք է կրեր ժառանգական միապետության բնույթ: Օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո ներքին լայն ինքնավարությամբ օժտված Հունաստանի առաջին միապետը պետք է ընտրվեր երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և սյուզերեն սուլթանի փոխադարձ համաձայ-

[20] Лулес Димитрис, նշվ. աշխ., էջ 45:

[21] Annuaire historique universel, pour 1828. Paris, 1829. Appendice. Réponse de la Porte Ottomane au Manifeste de la Russie. 4 juin 1828, p. 127-132.

նության պայմաններում: Ինքնավար Հունաստանի միապետը պետք է պատկաներ քրիստոնեական դավանանքին և ազգակցական կապեր չունենար Անգլիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում իշխող արքայատոհմերի հետ: Որպես Օսմանյան կայսրության վասալ՝ ժառանգաբար գահ բարձրացած Հունաստանի յուրաքանչյուր միապետ պարտավոր էր ժամանել Կ. Պոլիս և ինվեստիտուրա ստանար իր սյուզերեն սուլթանից և, բացի տերությունների սահմանած 1.5 մլն ֆրանկ պարտադիր ամենամյա հարկից, իր գահակալության համար թուրքական կառավարությանը միանվագ պետք է վճարեր նույնքան տարեկան հարկ:

Երեք տերությունները 1829 թ. մարտի 22-ի արձանագրությամբ կոնկրետ կերպով սահմանում էին օսմանյան սյուզերենության ներքո ինքնավար Հունաստանի ցամաքային և ծովային տարածքները: Այսպես. Բալկաններում Հունաստանին էին տրվում Հոնիական ծովի Արտայի ծովածոցից մինչև Էգեյան ծովի Վոլոյի ծովածոցը ձգվող սահմանից հարավ գտնվող տարածքները և Պելոպոնեսյան թերակղզին: Էգեյան ծովի կղզիներից Հունաստանին էին տրվում Կիկլադյան արշիպելագը, Էվբեան (Նեգրեպոնտը) և Պելոպոնեսյան թերակղզու բոլոր հարակից կղզիները[22]:

1828 թ. ապրիլի 26-ին սկսված ռուս-թուրքական պատերազմը Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում ընթանում է Ռուսաստանի հաղթանակներով: 1829 թ. հուլիսի 9-ին ռուսական բանակը Արևմտյան Հայաստանում գրավում է Էրզրումը, իսկ օգոստոսի 20-ին Բալկաններում անձնատուր է լինում Օսմանյան կայսրության երբեմնի մայրաքաղաք Ադրիանապոլիսը: Հետագա ջախջախիչ պարտություններից խուսափելու համար թուրքական կառավարությունը օգոստոսի 15-ին Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային

[22] Noradounghian G., նշվ. աշխ., h. 2. 1789-1856. N 50. Note des Ambassadeurs de France et de la Grande-Bretagne relativement aux bases de pacification et d'organisation de la Grèce en éxecution du Protocole du 22 Mars 1829. En date du 9 juillet 1829, p. 160-164:

հղած նոտայով հարկադրված էր հայտարարելու, որ ընդունում է հունական հարցի վերաբերյալ 1827 թ. հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագիրը[23]:

Օսմանյան կայսրության համար ստեղծված ռազմաքաղաքական ճգնաժամային իրադրության պայմաններում սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում սկսված ռուս-թուրքական հաշտության բանակցություններն ավարտվում են նույն ամսվա 14-ին: Ադրիանապոլսի ռուս-թուրքական հաշտության բանակցությունների ընթացքում՝ սեպտեմբերի 9-ին, Անգլիային ու Ֆրանսիային հղած լրացուցիչ հայտարարությամբ թուրքական կառավարությունը անվերապահորեն վերահաստատում էր հունական հարցի վերաբերյալ 1827 թ. հուլիսի 6-ին Լոնդոնում երեք տերությունների կայացրած որոշումները ամբողջությամբ ընդունելու վերաբերյալ օգոստոսի 15-ին արտահայտած իր պատրաստակամությունը[24]:

1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանապոլսում Թուրքիայի հետ կնքված հաշտության պայմանագրի՝ Հունաստանին վերաբերող մասը՝ 10-րդ հոդվածը, նույնությամբ բխում էր նույն թվականի մարտի 22-ին Լոնդոնում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ստորագրած արձանագրության սկզբունքներից[25]:

1829 թ. Ադրիանապոլսի ռուս-թուրքական հաշտությամբ, օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո, ինքնավար Հունաստանի ստեղծմամբ ավարտվում էր նաև հույն ժողովրդի ազգային ազատագրության համար մղած աննախադեպ հերոսական պատերազմը թուրքական դարավոր տիրապետության դեմ: Ռուսական զենքի

---

[23] Նույն տեղում, N 51. Réponse de la Sublime Porte à la note ci-dessus des Ambassadeurs de la France et de la Grande-Bretagne pour adhérer au traité de Londres du 6 juillet 1827. En date du 15 Août 1829, p. 164-165:

[24] Նույն տեղում, N 52. Déclaration supplementaire de la Sublime Porte aux Représentants de la France et de la Grande-Bretagne, pour la question grecque: En date du 9 Septembre 1829, p. 165:

[25] Նույն տեղում, N 53. Traité de paix avec la Russie. Conclu à Andrinople le 2/14 Septembre 1829, p. 166-173:

հաղթանակի շնորհիվ նշվում է հունական պատմագրության մեջ, յոթնամյա կենաց ու մահու պայքարից հետո Հունաստանը, ի վերջո, ազատագրվում է:

Կարճ ժամանակ անց՝ 1830 թ. փետրվարի 3-ին, Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Լոնդոնում կայացած կոնֆերանսում Հունաստանի քաղաքական կարգավիճակի և սահմանների վերաբերյալ ստորագրում են երեք նոր արձանագրություններ: Երեք տերությունների Լոնդոնի կոնֆերանսի որոշմամբ Հունաստանը դադարում էր օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո սոսկ ինքնավար պետության կարգավիճակ ունենալուց և ճանաչվում էր լիակատար անկախ պետություն՝ դառնալով միջազգային իրավունքի իրավահավասար սուբյեկտ: 1830 թ. փետրվարի 3-ի Լոնդոնի արձանագրությունները ստորագրած երեք տերություններից յուրաքանչյուրը երաշխավորում էր Հունաստանի՝ որպես ինքնուրույն պետության քաղաքական անկախությունը և նրանցից ոչ մեկը, առանց մյուս երկու պետությունների համաձայնության, չէր կարող զորք մտցնել անկախություն ստացած Հունաստանի տարածք: Երեք տերությունների որոշմամբ անկախություն ստացած Հունաստանն իր քաղաքական կառուցվածքով պետք է լիներ ժառանգական միապետություն, որի միապետը, սակայն, չէր կարող ընտրվել 1827 թ. հուլիսի 6-ի Լոնդոնի պայմանագիրը ստորագրած երեք տերություններում՝ Անգլիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում իշխող արքայատոհմերի ներկայացուցիչներից: Դաշնակից երեք տերությունները փետրվարի 3-ին Լոնդոնում կայացած կոնֆերանսում «Հունաստանի ինքնակալ տեր» ժառանգական տիտղոսով հունական պետության միապետ են ընտրում գերմանական Սաքս-Կոբուրգ հերցոգության իշխան Լեոպոլդին: Ինչ վերաբերում էր քաղաքական անկախություն ստացած Հունաստանի ցամաքային ու ծովային տարածքներին, ապա Անգլիայի պնդմամբ, որը չէր ցանկանում Թուրքիայի հետագա թուլացումը, 1830 թ. փետրվարի 3-ի Լոնդոնի կոնֆերանսի արձանագրությունների համաձայն Հունաստանի ցամաքային

տարածքը որոշակիորեն կրճատվում է: Ուստի, ցամաքային Հունաստանի կազմում է մնում դեպի Էգեյան ծով հոսող Սպերխիոս և դեպի Հոնիական ծով հոսող Ասպրոպոտամոս (Աքելոոս) գետերի գետաբերանների միջև ձգվող սահմանից հարավ գտնվող տարածքը և Պելոպոնեսյան թերակղզին: 1829 թ. մարտի 22-ի Լոնդոնի արձանագրությամբ Հունաստանին տրված Պելոպոնեսյան թերակղզու հարակից կղզիներից, Կիկլադյան արշիպելագից ու Էվբեայից բացի, 1830 թ. փետրվարի 3-ի արձանագրությամբ, երեք տերությունները անկախ Հունաստանին են հանձնում նաև Էգեյան ծովի Հյուսիսային Սպորադյան կղզիները: 1830 թ. փետրվարի 3-ի արձանագրությամբ որոշելով Բալկաններում Թուրքիայի հետ Հունաստանի ցամաքային սահմանը և նրան հանձնելով Էգեյան ծովի Հյուսիսային Սպորադները, Էվբեան, Կիկլադյան արշիպելագը և Պելոպոնեսյան թերակղզու հարակից կղզիները՝ երեք տերություններն իրենց քաղաքական երաշխավորության ներքո գտնվող Հունաստանին զգուշացնում են, որ չեն կարող հանդուժել Օսմանյան կայսրության որևէ տարածքի զավթում կամ նրա դեմ ուղղված թշնամական ձեռնարկում:

Լոնդոնի կոնֆերանսում ընդունված որոշումների համաձայն՝ թուրքական կառավարությունը պետք է լիակատար ներում շնորհեր 1821-1829 թթ. ազատագրական պատերազմին մասնակցած կայսրության հույներին՝ երաշխավորելով նրանց անվտանգությունը և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը: Թուրքահպատակ յուրաքանչյուր հույն իրավունք էր ստանում մեկ տարվա ընթացքում իր անշարժ ու շարժական սեփականությունը վաճառելով ազատորեն տեղափոխվելու Հունաստան: Համանման պայմաններ էին ստեղծվում նաև Հունաստանում բնակվող թուրքերի համար:

Ֆրանսիայի նախաձեռնությամբ 1830 թ. փետրվարի 3-ի Լոնդոնի արձանագրությունն ամրագրում էր, որ հունական պետությունում պետք է հաստատվեր բոլոր կրոնների դավանման լիակատար ազատություն, տարբեր դավանանքների պատկանող բոլոր քաղա-

քացիները, առանց խտրականության, պետք է ունենային պետական և հասարակական պաշտոններ զբաղեցնելու համահավասար իրավունքներ: Ֆրանսիան Անգլիայի և Ռուսաստանի համաձայնությամբ Հունաստանում ստանձնում էր կաթոլիկական կրոնի ազատ դավանման, կաթոլիկական կազմակերպությունների, ֆրանսիական կաթոլիկական միսիաների, նրանց հաստատությունների անարգել գործունեության երաշխավորի ավանդական դերը[26]:

Ապրիլի 8-ին Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը պաշտոնական նոտայով թուրքական կառավարությանն են հաղորդում Լոնդոնի կոնֆերանսում փետրվարի 3-ին Հունաստանի անկախության պայմանների վերաբերյալ ընդունած իրենց որոշումները[27]: Ապրիլի 24-ին թուրքական կառավարությունը պաշտոնապես իր համաձայնությունն է հայտնում 1830 թ. փետրվարի 3-ին կայացրած երեք տերությունների՝ Լոնդոնի կոնֆերանսի որոշումներին՝ ճանաչելով Հունաստանի քաղաքական անկախությունը և նրա ինքնիշխանության ներքո գտնվող ցամաքային ու ծովային տարածքները[28]:

Ազատագրական պատերազմի ընթացքում՝ Պելոպոնեսի Տրեզեն քաղաքում նիստեր գումարող Ազգային ժողովը 1827 թ. ապրիլի 14-ին յոթ տարի ժամկետով Հունաստանի հանրապետության պրիզիդենտ է ընտրում Կորֆու կղզու հույն արիստոկրատ, 1809 թ.-ից Ռուսական կայսրությունում դիվանագիտական բարձր պաշտոններ զբաղեցրած Իոհան Կապոդիստրիային:

---

[26] Նույն տեղում, N 55. Protocole (N 1) tenu à Londres le 3 Février 1830, relative à l'indépendance de la Grèce, p. 177-181. N 56. Protocole (N 2) tenu à Londres le 3 Février 1830, concernant le choix du Prince Léopold comme Souverain de la Grèce, p.181-182. N 57. Protocole (N3) tenu à Londres le 3 Février 1830, relatif aux habitants de la Grèce du rite catholique, p. 182-183:

[27] Նույն տեղում, N 59. Note des Représentants de France, de la Grande-Bretagne et de Russie à la Sublime Porte relative aux conditions d'indépendence de la Grèce.En date du 8 Avril 1830, p.186-192:

[28] Նույն տեղում, N 60. Note responsive de la Sublime Porte aux Représentqnts de France, de la Grande-Bretagne et de Russie donnant son adhesion aux resolutions des Cours alliées concernant la Grèce. En date du 24 Avril 1830, p.191-192:

1828 թ. հունվարի 24-ին Կապոդիստրիան ժամանում է Հունաստան՝ իր նստավայրը դարձնելով Պելոպոնեսի արևելյան ափի Արգոլիկոս ծովածոցի Նավպլիոն քաղաք-նավահանգիստը: Ելնելով Հունաստանի ներքին ու արտաքին չափազանց ծանր կացությունից՝ Կապոդիստրիան իր ձեռքում է կենտրոնացնում պետական կառավարման բոլոր օղակները՝ դառնալով երկրի դիկտատորը, ցրելով նաև Ազգային ժողովը: Իր պրեզիդենտության սկզբից Կապոդիստրիան ձեռնամուխ է լինում Հունաստանի նեքին կյանքի կառուցմանը՝ դնելով անկախ պետականության հիմքերը: Կապոդիստրիան երկիրը բաժանում է 13 վարչական միավորների՝ անձամբ նշանակելով դրանց կառավարիչներին, որոնք նաև պետք է վերահսկեին տեղական ընտրովի մարմինների գործունեությունը: Վերացվում է ծովահենությունը հունական ջրերում, որի հետևանքով պետությանն են անցնում 80 նավ: Կարգավորվում է բանակը և ռազմածովային նավատորմը, որոնք անմիջականորեն ենթարկվում են կառավարությանը: Հիմնվում է ռազմական ուսումնարան, կազմակերպվում է կրթական գործը, բացվում են 10 հազ. աշակերտներով 121 հանրակրթական դպրոցներ: Գյուղատնտեսության զարգացման համար ընդունվում են մի շարք կարևոր միջոցառումներ, բացվում են գյուղատնտեսական դպրոցներ, կազմակերպվում է փոստային, բժշկական ծառայությունը: Մեծ աշխատանք է կատարվում փախստականների վերաբնակեցման, ինչպես նաև ագրարային հարցը լուծելու, բանկային համակարգը ստեղծելու գործում: 1828 թ. հիմնվում է Հունաստանի Ազգային բանկը, որին Նիկոլայ 1-ը շնորհում է 1.500.000 ռուբլի ոսկով: Կապոդիստրիան մեծ դեր է կատարում նաև Հունաստանի անկախության միջազգային ճանաչման և նրա սահմանների որոշման գործում: Բայց, Կապոդիստրիայի արտաքին քաղաքականությունից դժգոհ էին Անգլիան և Ֆրանսիան՝ հանձին նրա տեսնելով Հունաստանում ռուսական ազդեցության տարածողի: Կապոդիստրիայից դժգոհ էին նաև ազգային-ազատագրական շարժման որոշ շրջաններ, որոնք դեմ էին

նրա դիկտատորական լիազորություններին և որոնք հարվածում էին իրենց քաղաքական ու տնտեսական շահերին: 1831 թ. հոկտեմբերի 9-ին՝ կիրակի օրը, Նավպլիոնի Սբ. Սպիրիդոն եկեղեցին մտնելիս, Անգլիայի և Ֆրանսիայի գաղտնի աջակցությամբ, Հունաստանի Հանրապետության պրեզիդենտ Կապոդիստրիան սպանվում է Հարավային Պելոպոնեսի լեռնային շրջան Մանիի Մավրոմիխալիսների ազդեցիկ ընտանիքի երկու անդամների կողմից:

Կապոդիստրիայի ողբերգական սպանությամբ ավարտվում է Ռուսաստանի ազդեցությունը Հունաստանի քաղաքական կյանքի վրա: Կապոդիստրիայի սպանությամբ իննամյա ազատագրական պատերազմի հետևանքով ավերված Հունաստանը երկու տարի՝ 1831-1832 թթ., ընկնում է լիակատար անիշխանության և քաղաքական քաոսի մեջ: Նման պայմաններում Հունաստանի քաղաքական անկախության երաշխավոր երեք տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, ստիպված էին կրկին անդրադառնալ հունական հարցին: Քանի որ Սաքս-Կոբուրգ հերցոգության իշխան Լեոպոլդը արդեն հրաժարվել էր ընդունել իրեն առաջարկված թագը, ուստի, 1832 թ. մայիսի 7-ին Լոնդոնում երաշխավոր երեք տերությունների և Բավարիայի ներկայացուցչի միջև կնքված համաձայնությամբ, Հունաստանի թագավոր տիտղոսով Հունաստանի ժառանգական միապետ է ընտրվում գերմանական պետություններից Բավարիայի թագավոր Լյուդովիկոս 1-ին Վիտտելսբախի երկրորդ որդին՝ 17-ամյա արքայազն Ֆրեդերիկ-Օթոնը: Օթոն թագավորի ինքնիշխանության և երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի երաշխավորության ներքո Հունաստանը պետք է լիներ միապետական անկախ պետություն: Նախքան Օթոնի չափահաս դառնալը՝ մինչև 1835 թ. հունիսի 1-ը, երբ լրանար նրա 20 տարին, Հունաստանը կառավարելու էին Բավարիայի թագավորի նշանակած բավարացի երեք խնամակալները: Երաշխավոր երեք տերությունները կատարում էին վերապահում, ըստ որի՝

Բավարիան և Հունաստանը երբեք չպետք է քաղաքականապես միավորվեին մեկ թագի ներքո: Որոշվում էր, որ Օթոն թագավորի ժամանումով Հունաստանում միաժամանակ պետք է տեղակայվեր բավարացի 3500 զինվորներից բաղկացած զորամասը: Այն պետք է սպառազինվեր և վարձատրվեր հունական պետության կողմից: Հունաստանի ազգային ռազմական ուժերը կազմակերպելու նպատակով Բավարիայի թագավորը այդ զորամասի հետ միաժամանակ պետք է գործուղեր նաև որոշակի քանակությամբ բավարացի սպաների: Լոնդոնի կոնֆերանսի որոշմամբ երեք տերությունները պարտավորվում էին Հունաստանին տրամադրել 60 մլն ֆրանկ փոխառություն: Երաշխավոր երեք տերությունները պետք է դիվանագիտական ջանքեր գործադրեին, որպեսզի Օթոնը միջազգայնորեն ճանաչվեր Հունաստանի թագավոր[29]:

Օգոստոսի 8-ին Հունաստանի Ազգային ժողովը երեք երաշխավոր տերությունների թեկնածու Օթոնին հռչակում է Հունաստանի թագավոր:

Հուլիսի 21-ին Կ.Պոլսում թուրքական կառավարության հետ կնքած պայմանագրի հիման վրա օգոստոսի 30-ին երաշխավոր տերությունները վերականգնում են 1829 թ. մարտի 22-ին Լոնդոնի կոնֆերանսի սահմանած Արտա-Վոլոս թուրք-հունական սահմանը: Հունաստանը ստիպված էր վերադարձված այդ տարածքների համար Թուրքիային վճարել 14 մլն. ֆրանկ փոխհատուցում: Այդպիսով՝ 1832 թ. օգոստոսի 30-ին Լոնդոնում երեք երաշխավոր տերությունների կնքած արձանագրության համաձայն՝ քաղաքական լիակատար անկախություն ստացած Հունաստանին էին անցնում Հոնիական ծովի Արտայի ծովածոցից մինչև Էգեյան ծովի Վոլոյի ծովածոցը գծված սահմանից հարավ գտնվող տարածքները՝ ներառյալ Պելոպոնեսյան թերակղզին և նրա հարակից կղզիները: Էգե-

[29] Annuaire historique universel pour 1832. Appendice. Convention signée à Londres le 7 mai 1832, pour organiser d'une manière définitive l'état politique de la Grèce, après la nomination du prince Othon de Bavière au trône de ce nouveau royaume, p. 215-218.

յան ծովի կղզիներից Հունաստանին էին տրվում Հյուսիսային Սպորադները, Էվբեան և Կիկլադյան արշիպելագը[30]: Լոնդոնի կոնֆերանսի ընդունած որոշումների համաձայն՝ քաղաքական անկախություն ստացած Հունաստանի ցամաքային և ծովային սահմանների ընդլայնման հետևանքով նրա ընդհանուր տարածքը հասնում է 47.516 կմ^2-ի, իսկ 60 հազարով ավելացած ընդհանուր բնակչությունը՝ մոտ 740 հազարի: Այդպիսով՝ 1832 թ. օգոստոսի 30-ին Լոնդոնում երեք երաշխավոր տերությունների սահմանած Արտա-Վոլո թուրք-հունական սահմանից հյուսիս՝ Բալկանյան թերակղզում, թուրքական տիրապետության տակ էին մնում Էպիրոսը, Թեսալիան, Մակեդոնիան, Թրակիան և Հունաստանին տրված Էգեյան ծովի կղզիներից բացի Էգեյան ծովի մնացյալ կղզիները, միջերկրածովյան Կրետե ու Կիպրոս կղզիները:

Թուրքական կառավարությունը 1832 թ. դեկտեմբերի 26-ի պաշտոնական հաղորդագրությամբ անվերապահորեն համաձայնում էր արքայազն Օթոն Բավարացուն Հունաստանի թագավոր ընտրելու և Հունաստանի ցամաքային ու ծովային տարածքները սահմանելու վերաբերյալ երեք երաշխավոր տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կայացրած որոշումների հետ[31]:

Երաշխավոր երեք տերությունների դեսպանների Լոնդոնի կոնֆերանսի 1831 թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ 1832 թ. դեկտեմբերի 10-ին թուրքական կառավարությունը հարկադրված էր ինքնակառավարման կարգավիճակ շնորհել հունական մեծամասնություն կազմող Էգեյան ծովի Սամոս կղզուն: Թուրքական կառավարությունը ներում էր շնորհում 1821-1829 թթ. ազատագրական պատերազմին մասնակցած Սամոս կղզու հույն բնակիչներին՝ երաշխավորելով նրանց անվտանգությունը և մասնավոր սեփականության ան-

[30] Noradounghian G., Նշվ. աշխ., h. 2, N 68. Arrangement signé et proposé à la Porte pour la fixation des limites de Grèce et autres questions. En date du 21 Juillet 1832, p. 207-211.

[31] Նույն տեղում, N 72. Acte d'adhésion de la Porte Ottomane à la nomination du Roi de Grèce.En date du 26 décembre 1832, p. 218:

ձեռնմխելիությունը: Թուրքական զորքերն ամբողջությամբ դուրս էին բերվում Սամոս կղզուց: Սամոս կղզու բնակիչները ստանում էին վարչական ինքնավարության իրավունքներ՝ պարտավորվելով 400 հազար պիաստր ամենամյա հարկ վճարել թուրքական կառավարությանը: Կղզու վարչական ինքնակառավարումը պետք է իրականացներ տեղական ավագանուց ընտրված Խորհուրդը՝ իրավասու լինելով ղեկավարելու վարչությանը ենթակա բնագավառները, ինչպես նաև ազատորեն կարգավորելու կրոնական արարողություններին, եկեղեցաշինությանը և առևտրին վերաբերող հարցերը: Կղզու վարչական աշխատանքները պետք է ղեկավարեր սուլթանի նշանակած Խորհրդի նախագահը՝ կրելով սուլթանի շնորհած «Սամոսի իշխան» տիտղոսը: Վարչական Խորհրդի նախագահը պետք է նշանակեր իր անմիջական տեղակալին, որը նույնպես պետք է պատկաներ հունական ուղղափառ եկեղեցու դավանանքին: Սամոսի իշխանին էր վերապահվում վարչական խորհրդում կղզու արտաքին հարաբերություններին վերաբերող քննարկումներին վետո՝ արգելք դնելու, օտարերկրացիների մուտքը կղզի թույլատրելու կամ կղզուց վտարելու, տեղացի նավատերերին արտաքին առևտրի թույլտվություն տալու իրավունքը: Վերջապես, Սամոս կղզու հունական եկեղեցու միտրոպոլիտին, ինչպես միշտ, պետք է նշանակեր Կ.Պոլսի հունական պատրիարքը[32]:

1833 թ. փետրվարի 6-ին Օթոն I Վիտտելսբախը իր խորհրդականներով և 3500 բավարացի զինվորներից բաղկացած զորախմբով, ռուսական և ֆրանսիական ռազմանավերի ուղեկցությամբ անգլիական «Մադագասկար» մարտանավով ժամանում է Նավպլիոն՝ այդ նավահանգիստ քաղաքը նույնպես դարձնելով իր նստավայրը: Հունաստան՝ Նավպլիոն, ժամանելու առաջին իսկ օրը՝ փետրվարի 6-ին, հույն ժողովրդին գերմաներենով և հունարենով

[32] Նույն տեղում, N 71. Note de la Sublime Porte aux Représentants de France, de la Grande-Bretagne et de Russie, concernant les concessions accordées aux habitants de L'Ile de Samos. En date du 10 Décembre 1832, p. 216-217:

ուղղված իր հայտարարությամբ Օթոն թագավորը հանդիսավորապես վստահեցնում էր, որ կհովանավորի հույն ժողովրդի դավանանքը, հավատարմորեն կպահպանի օրենքները, բոլորի հանդեպ կիրականացնի արդարություն, կպաշտպանի Հունաստանի անկախությունը, ժողովրդի ազատությունները և իրավունքները: Այդպիսով, Հունաստանում հաստատվում է բավարական օլիգարխիայի իշխանությունը, որը հենվում էր 3500 բավարացի զինվորներից բաղկացած ռազմական ուժի վրա: Հունաստանի պատմության մեջ Օթոնի կառավարման ժամանակաշրջանը (1833-1862 թթ.) հայտնի է Բավարոկրատիա (Բավարական տիրապետություն) անունով: Բավարոկրատիայի ժամանակ գերմանական կենտրոնացված միապետության օրինակով կազմակերպվում և ստեղծվում է երկամյա անիշխանության հետևանքով լիովին կազմալուծված Հունաստանի պետական կառավարման և դատաիրավական համակարգը, բանակը, ռազմածովային նավատորմը, կարգավորվում են ներքին կյանքի մի շարք բնագավառներ, ընդունվում են քրեական ու քաղաքացիական օրենսգրքեր: Երաշխավոր տերությունների պատասխանատվությամբ 1833 թ. հուլիսին Հունաստանը ստանում է 60 միլիոն ֆրանկ արտասահմանյան փոխառություն: Ստեղծվում են յոթ՝ ներքին և արտաքին, արդարադատության, պաշտամունքների և հանրային կրթության, ֆինանսների, ռազմական և ռազմածովային նախարարություններ: Հիմնվում են Վերահսկիչ պալատը, Բարձրագույն ֆինանսական վարչությունը, Ազգային դրամահատարանը: Թագավորին առընթեր 1835 թ. ստեղծվում է 26 անդամներից բաղկացած օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությամբ օժտված խորհրդակցական բարձրագույն մարմին՝ Պետական խորհուրդ, և այլն: Թագավորը ճանաչվում է հունական ուղղափառ եկեղեցու պետ: Հունական եկեղեցու գործերը վարելու համար թագավորի գլխավորությամբ ստեղծվում է բարձրագույն հոգևորականներից՝ պրելատներից բաղկացած հոգևոր գերագույն մարմին՝ սինոդ: Երկիրը բաժանվում է ապակենտրոնացված կառավարմամբ օժտ-

ված և պատմական-աշխարհագրական տեղանուններով վերանվանված վարչատարածքային տասը նահանգների և 47 շրջանների: Հունական յուրաքանչյուր համայնք պարտավոր էր սեփական միջոցներով կառուցել և պահպանել կառավարության կողմից նշանակված ուսուցիչներով անվճար հիմունքներով դասավանդող մեկ տարրական դպրոց: Ուսուցչական կադրեր պատրաստելու համար հիմնվում է մանկավարժական ինստիտուտ: Թոշակներ են նշանակվում անկախության պատերազմին մասնակցելու հետևանքով հաշմանդամ դարձածներին, սպանվածների այրիներին ու որբերին: Հինգ միլիոն ֆրանկ նախնական կապիտալով և թղթադրամներ թողարկելու՝ էմիսիայի իրավունքով 1841 թ. վերստեղծվում է Հունաստանի ազգային բանկը: 1834 թ. սեպտեմբերի 30-ին հրապարակված կառավարական դեկրետով Նավպլիոն քաղաք-նավահանգստի փոխարեն պատմական Աթենքը հռչակվում է Հունաստանի մայրաքաղաք: Կառավարության նշանակած օրը՝ դեկտեմբերի 13-ին, Նավպլիոնից Պիրեա նավահանգիստ ժամանած թագավոր Օթոնը, նրա խնամակալները, կառավարությունը, պետական հիմնարկները, դիմավորող խուռներամ ժողովրդի ցնծագին ողջույնների ներքո, հանդիսավորությամբ մեկնում են Հունաստանի նորահռչակ մայրաքաղաք Աթենք: Գերմանացի և դանիացի ճարտարապետների նախագծերով շինարարական լայն աշխատանքներ են ծավալվում Աթենքը հիմնովին վերակառուցելու և եվրոպական արդիական մայրաքաղաք դարձնելու համար: 1837 թ. հիմնվում է Աթենքի համալսարանը, այնուհետև՝ ազգային գրադարանը, Մշակույթի կենտրոնը, աստղադիտարանը, ակնաբուժարանը: Բավարիայի թագավորի նվիրատվությամբ կառուցվում է քաղաքային հիվանդանոցը: 1838 թ. ավարտվում է թագավորական պալատի կառուցումը: Կրթության խրախուսման նպատակով ստեղծվում է «Գիտելիքների տարածման ընկերությունը», իսկ Հունաստանի պատմական հուշարձանները հետազոտելու և պեղումներ կազմակերպելու համար հիմնվում է «Հունական հնագիտական ընկերությունը»:

Հիմնվում են նաև օտարերկրյա հնագիտական ընկերություններ: Թագավորի անմիջական մասնակցությամբ 1833 թ. սեպտեմբերի 10-ից Ակրոպոլիսում միջոցառումներ են ձեռնարկվում այդ պատմական հուշարձանը իր համալիր կառույցներով, Պարթենոնի տաճարով բարեկարգելու համար: 1833 թ. հուլիսին ընդունված որոշմամբ Հունաստանում գործող 524 վանքերից փակվում են 412-ը, իսկ դրանց հողատիրույթները վաճառվում են խոշոր կալվածատերերին ու ֆինանսիստներին: Կ. Պոլսի պատրիարքության քաղաքական ազդեցությունը Հունաստանի վրա վերացնելու նպատակով Բավարոկրատիայի ջանքերով և Ռուսաստանի դիվանագիտական միջամտությամբ Կ. Պոլսի պատրիարքը 1850 թ. հունվարին ճանաչում է 1833 թ. օգոստոսին Հունաստանի ուղղափառ քրիստոնեական եկեղեցու ինքնուրույն՝ ավտոկեֆալ հռչակված կարգավիճակը: Բավարոկրատիան չի լուծում Հունաստանի բնակչության 75%-ը կազմող գյուղացիության ագրարային խնդիրները: Թեև ընդունվել էին ազգային-ազատագրական պատերազմի մասնակիցներին հողաբաժիններ հատկացնելու և «հունական ընտանիքներին» հողամասեր վաճառելու մասին օրենքներ, այնուամենայնիվ օտարվում է «ազգային հողերի» ընդամենը 3%-ը: Վեց գյուղացիներից միայն մեկն ուներ սեփական հողաբաժին, իսկ հողազուրկները հարկային ծանր պարտավորություններով հողի սոսկ վարձակալներ էին:

Հունաստանի միջազգային հարաբերությունները ամրապնդելու նպատակով Բավարոկրատիան 1833 թ. վերջին դիվանագիտական մշտական ներկայացուցիչներ է նշանակում եվրոպական մի շարք երկրների մայրաքաղաքներում, ինչպես նաև Կ. Պոլսում: Ռուսական դիվանագիտության ջանքերով Օսմանյան կայսրությունում 1834 թ. հիմնվում են հունական յոթ հյուպատոսություններ:

Օթոն թագավորի խնամակալության տարիները լրանալուց հետո՝ 1835 թ.-ից, Հունաստանում իշխող Բավարոկրատիայի վարչակարգը աստիճանաբար ընդունում է բացարձակ միապետության բնույթ: Հունաստանում տիրապետող քաղաքական իշխանություն է

ձեռք բերում միայն Օթոն թագավորի անձնական կաբինետը: Երկրում սկսում է լուրջ դժգոհություն դրսևորվել Օթոն թագավորի բռնապետական վարչակարգի դեմ, մասնավորապես՝ հասարակական այն խավերի շրջանում, որոնք նշանակալիորեն զրկվել էին քաղաքական այն իշխանությունից ու ազդեցությունից, որ նրանք ունեին 1821-1829 թթ. ազատագրական պատերազմի և անգամ օսմանյան նախկին տիրապետության ժամանակաշրջանում: Ընդհանուր առմամբ՝ Բավարոկրատիան բացարձակապես միջոցառումներ չէր ձեռնարկում երկրի տնտեսական զարգացման համար: Երկրում տիրում էր այն աստիճանի ֆինանսական ծանր ճգնաժամ, որ 1843 թ. կառավարությունն այլևս ի վիճակի չէր մարելու երաշխավոր տերությունների պատասխանատվությամբ ստացած արտասահմանյան փոխառությունների տոկոսները:

Հունաստանի գրեթե ամբողջ բնակչությունը ի սկզբանե երբեք չդադարեցրեց օտար Բավարոկրատիայի դեմ ուղղված զինված պայքարը՝ 1833 թ.-ից մինչև 1862 թ. երկրի տարբեր շրջաններում բարձրացնելով ավելի քան 30 ապստամբություններ ու խռովություններ, որոնք, հունական պատմագրության բնորոշմամբ, շատ հաճախ ընդունում էին քաղաքացիական պատերազմի բնույթ:

Իշխանությունը պահելու նպատակով Բավարոկրատիան ձեռնարկում էր տարբեր պատժամիջոցներ. բազմաթիվ ընդդիմադիրներ բանտարկվում կամ աքսորվում են Էգեյան ամայի կղզիներ, փակվում են առավել արմատական բնույթի թերթերը: Սակայն, վարչակարգի ձեռնարկած պատժամիջոցները այլևս չէին կարող կասեցնել ընդդիմադիր ուժերի ծավալվող շարժումը, որն արդեն ընդգրկել էր նաև բանակը և ուսանողությանը: Հունաստանում աստիճանաբար հասունանում էր հեղափոխական իրադրությունը:

1842 թ. աշնանը ձևավորված Բավարոկրատիային ընդդիմադիր հունական քաղաքական բոլոր խմբավորումները և հասարակական խավերը, ապավինելով Աթենքի կայազորի ռազմական աջակցությանը, 1843 թ. սեպտեմբերի 14-15-ին ապստամբություն են

բարձրացնում՝ պահանջելով ընդունել Սահմանադրություն, ինչպես նաև, բացի 1821-1829 թթ. ազատագրական պատերազմին մասնակից ֆիլհելլեններից, պետական ծառայությունից հեռացնել բոլոր օտարերկրացիներին:

Միապետական կարգերին լրջորեն սպառնացող հեղափոխական ալիքի ճնշման ներքո, ինչպես նաև Աթենքում հավատարմագրված եվրոպական դեսպանորդների միահամուռ խորհրդով իր գահը փրկելու նպատակով Օթոնը ստիպված ստորագրում է հունական քաղաքական ընդդիմադիր խմբավորումների և ուժերի ներկայացրած հիմնական պահանջների հիման վրա ընդունած Պետական խորհրդի կարևոր որոշումները:

1843 թ. նոյեմբերի 20-ին Աթենքում իր նիստերը սկսած Ազգային ժողովը 1844 թ. մարտի 30-ին ընդունում է Սահմանադրություն, որով Հունական թագավորությունը դառնում էր սահմանադրական միապետություն: 1844 թ. մարտի 30-ին ընդունված Հունական թագավորության Սահմանադրությունը հռչակում էր դեմոկրատական մի շարք իրավունքներ ու ազատություններ: Սահմանադրությամբ ամրագրվում էին մամուլի, խոսքի, անձի ազատության, օրենքի առաջ բոլոր հույների իրավահավասարության, առանց սահմանափակումների բոլոր տեսակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքները: Սահմանադրությունը ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառներում թագավորին օրենսդրորեն օժտում էր գործունեության լայն լիազորություններով: Նա հռչակվում էր գլխավոր հրամանատար, ստանում պատերազմ հայտարարելու և միջազգային պայմանագրեր կնքելու իրավունք: Օրենսդիր իշխանությունը հանձնվում էր թագավորին և Պատգամավորների պալատից ու Սենատից բաղկացած երկպալատ պառլամենտին:

Պառլամենտի վերին պալատի՝ Սենատի անդամները չէին ընտրվում, այլ ցմահ նշանակվում էին թագավորի կողմից: Պառլամենտի ստորին՝ Պատգամավորների պալատի ընտրությունները սահմանափակվում էին գույքային ցենզով (արտոնակարգով): Գոր-

ծադիր իշխանության՝ կառավարության գլուխը թագավորն էր՝ պետությունը ղեկավարելով իր նշանակած և իրեն պատասխանատու նախարարների միջոցով: Թագավորը կարող էր նախարարների նշանակել նաև պառլամենտի ստորին պալատում փոքրամասնություն կազմող կուսակցությունների ներկայացուցիչներից: Թագավորը օժտված էր պառլամենտի ստորին պալատը արձակելու իրավունքով:

Մարտի 30-ին Օթոնը Ազգային ժողովում հավատարմության երդում է տալիս Սահմանադրությանը:

1843 թ. սեպտեմբերյան հեղափոխության հետևանքով բավարացի բարձրագույն պաշտոնյաներին կառավարման համակարգում փոխարինած հունական ռազմաքաղաքական շրջանները, բավարարվելով Սահմանադրության հռչակումով, դառնում են Օթոն թագավորի միապետության և հունական կառավարող օլիգարխիայի (խմբիշխանության) հենարանը:

Հունաստանի անկախության նվաճումով, այնուամենայնիվ, թե՛ հունական կառավարող շրջանները, թե՛ հույն ժողովուրդը չհրաժարվեցին դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող հունական հողերը ազատագրելու և միավորված, հունական պետություն ստեղծելու նպատակից: Այդ առումով, նորաստեղծ պետության արտաքին քաղաքականության հիմնական նպատակն է դառնում «Մեգալի իդեայի»՝ «Մեծ Հունաստանի›› ստեղծման գաղափարախոսության իրականացումը: Այդ գաղափարախոսության նվիրված ջատագովներն են դառնում նաև Հունաստանի թագավոր Օթոնը և թագուհի Ամալյան: Հունաստանի կառավարող շրջանները իրենց արտաքին քաղաքականության այդ հիմնական նպատակը իրականացնելու համար միշտ աշխատում էին օգտվել Օսմանյան կայսրության միջազգային ծանր իրադրությունից, մասնավորապես՝ ռուս-թուրքական պատերազմներից:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ընթացքում, մասնավորապես՝ 1853 թ. նոյեմբերի 30-ին Սինոպի ծովային ճակատամարտում

ռուսական ռազմական նավատորմի հաղթանակից հետո, Հունաստանում սկսվում է ազգային շարժում՝ թուրքական տիրապետության տակ գտնվող Թեսալիան, Էպիրոսը և հունական այլ հողերը ազատագրելու և մայր երկրի հետ միավորելու համար: Միաժամանակ, հունական այդ հողերում, Աթենքի կառավարության գաղտնի աջակցությամբ և օժանդակությամբ, սկսվում են հակաթուրքական ապստամբություններ: Ապստամբներին օգնության են հասնում հունական բանակի կադրային սպաներ և պարտիզանական ջոկատներ: 1854 թ. հունվարին, առանց պատերազմ հայտարարելու, հունական կառավարությունը բանակ է մտցնում Էպիրոս և Թեսալիա՝ այդ մարզերը ազատագրելու և Հունաստանի հետ միավորելու նպատակով: 1854 թ. մարտի 19-ին Թուրքիան վերջնագիր է ներկայացնում Հունաստանին՝ իր դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությամբ ռազմական գործողություններ սկսելով հունական բանակի դեմ: Հունաստանի վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու նպատակով 1854 թ. մայիսի վերջին անգլո-ֆրանսիական վեց հազարից բաղկացած ռազմածովային ուժերը գրավում են Պիրեա նավահանգիստը՝ ստիպելով Հունաստանին պահպանել խստագույն չեզոքություն: Հունաստանը ենթարկվում է Թուրքիայի դաշնակից տերությունների ռազմաքաղաքական և դիվանագիտական ճնշմանը, իսկ Թեսալիայում, Էպիրոսում և Մակեդոնիայում բռնկված ապստամբությունները դաժանորեն ճնշվում են թուրքական զորքերի կողմից: Պիրեայի անգլո-ֆրանսիական ռազմական օկուպացիան ավարտվում է Ղրիմի պատերազմից հետո՝ 1857 թ. փետրվարին:

Օգտվելով Հունաստանի տնտեսական ծանր վիճակից՝ Անգլիան ու Ֆրանսիան, նոր ճնշում գործադրելու նպատակով, ստեղծում են միջազգային ֆինանսական հանձնաժողով, որը պահանջում է ամեն տարի վճարել արտասահմանյան փոխառություններից ստացած գումարների 36 հազար ֆունտ ստեռլինգ տոկոս: 1859 թ. հոկտեմբերին հունական կառավարությունը ստիպված էր ընդունե-

լու միջազգային ֆինանսական հանձնաժողովի այդ որոշումը՝ ավելի ուժեղացնելով իր կախումը անգլո-ֆրանսիական կապիտալից:

Հունաստանի արտաքին քաղաքականության այդ անհաջողությունը, երկրի ներքաղաքական և տնտեսական սուր խնդիրները լրջորեն սասանում են 1833 թ.-ից իշխող թագավոր Օթոն Բավարացու և նրա վարչակարգի դիրքերը: 1862 թ. փետրվարի 13-ին Հունաստանում բռնկված ապստամբության հետևանքով Օթոնը հոկտեմբերի 22-ին գահընկեց է արվում: Անգլիական կառավարության անմիջական նախաձեռնությամբ Հունաստանի Ազգային ժողովը 1863 թ. մարտի 30-ին բուռն խանդավառության մթնոլորտում միաձայնորեն Գեորգ 1-ին անունով համայն հելլենների սահմանադրական թագավոր է հռչակում Դանիայի միապետ Քրիստիան 9-րդի երկրորդ որդուն՝ 17-ամյա արքայազն Վիլհելմ Գլյուքսբուրգին[33]:

1863 թ. հուլիսի 13-ին մի կողմից Դանիայի, իսկ մյուս կողմից Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների միջև Լոնդոնում կնքված համաձայնությամբ, «համայն հելլենների թագավոր» ժառանգական տիտղոսով Հունաստանի գահը հանձնվում է Գեորգ 1-ին Գլյուքսբուրգին (1863-1913 թթ.): Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հովանավորության ներքո իր քաղաքական կառուցվածքով Հունաստանը պետք է լիներ սահմանադրական, անկախ միապետություն[34]:

Հուլիսի 13-ին Լոնդոնում կնքված համաձայնությամբ անգլիական կառավարությունը սեփական նախաձեռնությամբ պատրաստակամություն էր արտահայտում 1815 թ. Վիեննայի կոնգրեսի որոշմամբ իր քաղաքական հովանավորությանը հանձնված Հոնիական ինքնավար յոթ կղզիները, նրանց Ազգային ժողովի և տերու-

[33] Martens Fr., Nouveau Requeil Général de Traités.Tome XVII. Partie II. Gottingue,1869. XI. Décret de l'Assemblée nationale de Grèce proclamant le Prince Georges de Danemark roi des Grecs; rendu le 30 mars 1863, p. 71.

[34] Նույն տեղում, XIV. Convention, signée à Londres, le 13 juillet 1863, entre le Danemark d'une part et la France, la Grande-Bretagne et la Russie de l'autre part pour l'accession du roi Georges 1-er au trône de Grèce, p. 79-81:

թյունների համաձայնությամբ ու հովանավորությամբ, հանձնել Հունաստանին: Ամրագրվում էր, որ Հունաստանը և Դանիան երբեք չեն կարող քաղաքականապես միավորվել մեկ թագի ներքո: Շեշտվում էր, որ Գեորգ 1-ին թագավորի օրինական ժառանգները պետք է ընդունեին հունական ուղղափառ եկեղեցու դավանանքը: Որոշվում էր, որ Գեորգ 1-ին թագավորի գահաթերթին Հունաստանի պետական բյուջեն ամեն տարի պետք է հատկացներ տասը, իսկ երեք տերություններից յուրաքանչյուրը՝ չորս հազար ֆունտ ստեռլինգ: Երաշխավոր երեք տերությունները պարտավորվում էին դիվանագիտական ջանքեր գործադրել, որպեսզի Գեորգ 1-ինը միջազգայնորեն ճանաչվեր համայն հելլենների թագավոր[35]:

Հոնիական յոթ կղզիների Ազգային ժողովը հոկտեմբերի 19-ին միաձայնորեն քվեարկում է հօգուտ Հունաստանի հետ քաղաքական միության[36]: Ի փոխհատուցում իր թեկնածու թագավորի ընտրության՝ 1863 թ. նոյեմբերի 14-ին կրկին Լոնդոնում արդեն նաև Ավստրիայի ու Պրուսիայի մասնակցությամբ կնքված համաձայնությամբ, Անգլիան Հունաստանին է զիջում Հոնիական յոթ կղզիները՝ այդ քայլով հետապնդելով Հունաստանում իր քաղաքական ազդեցությունը ամրապնդելու նպատակը: Հունաստանի հետ միավորված Հոնիական կղզիները պետք է գտնվեին մշտական չեզոքության պայմաններում: Այդ առումով ոչ մի բանակ, ոչ մի ռազմական նավատորմ չէր կարող կենտրոնանալ կամ կայանել այդ կղզիների ցամաքային կամ ջրային տարածքներում՝ բացառությամբ հասարակական կարգը պահպանելու և պետական հարկերը հավաքելու անհրաժեշտ ուժերից: Պայմանավորվող երաշխավոր երեք տերությունները պարտավորվում էին պահպանել Հոնիական կղզիների մշտական չեզոքության վերաբերյալ կայացրած իրենց որոշումը:

---

[35] Նույն տեղում:

[36] Martens Fr., Nouveau Requeil Général de Traités: Tome XVIII. Gottingue,1873. N 26. Décret de l'Assemblée nationale des Iles Ioniennes sur la réunion des Sept Iles au Royaume de Grèce; voté à Corfou, le 19 octobre 1863, p. 54-55.

Որպես Հոնիական կղզիների մշտական չեզոքության պայման ամրագրվում էր, որ նախքան այդ կղզիներից բրիտանական զորքերի հեռանալը պետք է կործանվեին Կորֆու (Կերկիրա) և մյուս կղզիներում կառուցված ռազմական բոլոր ամրությունները[37]:

Հունաստանի հետ Հոնիական կղզիների միավորման փաստը միջազգային իրավական ճանաչում է ստանում մի կողմից՝ երաշխավոր տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ հելլենների թագավորի ներկայացուցիչների միջև 1864 թ. մարտի 24-ին Լոնդոնում կնքված համաձայնագրով[38]: Վերջապես, նույն թվականի մայիսի 28-ին Կորֆու կղզում Հունաստանի հետ կնքած վերջնական համաձայնագրով, ինչպես նաև կղզիների հույն բնակչությանը ուղղած անգլիական կառավարության պաշտոնական հայտարարությամբ Անգլիան Հունաստանին է զիջում 1815 թ.-ից իր քաղաքական հովանավորության ներքո գտնվող Հոնիական ծովի համանուն կղզիները[39]:

1864 թ. հունիսի 2-ին բրիտանական վերջին զորաջոկատը հեռանում է Հունական թագավորության՝ դրոշը արդեն բարձրացված Կորֆու կղզուց:Նախքան Հոնիական կղզիներից հեռանալը՝ անգլիացիները կործանում են Կորֆուի և մյուս կղզիների ռազմական ամրությունները: Այդպիսով՝ քաղաքական անկախություն ստանալուց երեսուն տարի անց, Հունաստանը խաղաղ ճանապարհով ստանում է 1815 թ.-ից Անգլիայի տիրապետության ներքո

---

[37] Նույն տեղում, 27. Traité conclu entre l'Autriche, la France, la Grande-Bretagne, la Prusse et la Russie, relativement à la réunion des Iles Ioniennes au Royaume de Grèce; signé à Londres, le 14 novembre 1863:

[38] Նույն տեղում, 30. Traité conclu entre la France, la Grande-Bretagne; la Russie et la Grèce, relativement à la réunion des Iles Ioniennes au Royaume de Grèce; signé à Londres, le 24 mars 1864, p. 63-68:

[39] Նույն տեղում, 31. Protocole relative à la cessation du Protectorat britannique sur les Iles Ioniennes; signé à Corfou, le 28 mai 1864, per les Représentants de la Grande-Bretagne et de la Grèce, p. 68-71. 32. Proclamation du Lord-haut-commissaire des Iles Ioniennes, relative à la cessation du Protectorat britannique; en date de Corfou, le 28 mai 1864, p. 71-72:

գտնվող Հոնիական յոթ կղզիները՝ 2.3 հազար կմ^2 տարածությամբ և 236 հազար բնակչությամբ:

Հոնիական կղզիները Հունաստանին միանալուց անմիջապես հետո՝ 1864 թ. հուլիսին ընտրված Հոնիական կղզիների 84 պատգամավորները օգոստոսին դառնում են Հունական թագավորության Ազգային ժողովի լիիրավ անդամները:

Հոնիական կղզիները Հունաստանին զիջելուց կարճ ժամանակ անց՝ 1863 թ. հոկտեմբերի 30-ին, Հունաստան է ժամանում Գեորգ 1-ին Գլյուքսբուրգը: Հույն ժողովրդին ուղղած իր ուղերձում նա խոստանում էր պահպանել պետական օրենքները և առաջին հերթին՝ նոր քաղաքակրթության անկյունաքարը՝ Սահմանադրությունը, և իր ուժերի հնարավորության սահմաններում Հունաստանը դարձնել օրինակելի թագավորություն Արևելքում: Երկու օր անց Գեորգ 1-ինը Ազգային ժողովում հանդես է գալիս թագավորական երդումով:

Հունական թագավորության հետ Հոնիական կղզիների քաղաքական միավորման կարևոր հետևանքներից մեկը մինչ այդ Կ. Պոլսի պատրիարքի հոգևոր բարձրագույն իշխանությանը ենթակա Հոնիական կղզիների հունական ուղղափառ եկեղեցին, Հունաստանի Ազգային ժողովի որոշմամբ, 1865 թ. մարտին դառնում է Հունաստանի ազգային եկեղեցու բաղկացուցիչ մասը:

1865 թ. ապրիլի 8-ին թուրքական կառավարությունը պաշտոնապես ճանաչում է Հունական թագավորության հետ Հոնիական կղզիների միավորման վերաբերյալ 1864 թ. մարտի 29-ին Լոնդոնում երաշխավոր տերությունների և Հունաստանի միջև կնքված համաձայնագիրը[40]:

1862 թ. հեղափոխության քաղաքական կարևոր հետևանքներից մեկը ոչ միայն Օթոն թագավորի 30-ամյա վարչակարգի տա-

[40] Noradounghian G., Requeil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome troisième. 1856-1878, Paris, 1902.
N754. Acte d'accession de la Turquie au Traité de Londres du 29 Mars 1864 relatif à la réunion des Iles Ioniennes à la Grèce. Signé à Constantinople, le 8 Avril 1865, p. 231-235.

պալումն էր և նոր՝ Գլյուքսբուրգյան արքայատոհմի իշխանության հաստատումը, այլև Հունական թագավորության նոր Սահմանադրության ընդունումը: 1864 թ. հոկտեմբերի 30-ին Հունաստանի Ազգային ժողովի հաստատած Սահմանադրությունը Հունական թագավորությունը հռչակում էր կենտրոնացված համակարգով կառավարվող սահմանադրական, անկախ միապետություն: Սահմանադրությունը հռչակում էր, որ գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին՝ ամրագրելով, որ «ամբողջ իշխանությունը բխում է ազգից»: Սահմանադրությունը նշանակալիորեն ընդլայնում էր հույն քաղաքացիների իրավունքները՝ հռչակելով օրենքի առաջ բոլորի իրավահավասարության, ժողովների ու միությունների, խոսքի ու մամուլի ազատության, նամակագրության գաղտնիության, անձի ու բնակարանի անձեռնմխելիության սկզբունքները:

Սահմանադրությամբ հիմնվում էր թագավորության օրենսդիր բարձրագույն մարմին՝ 150 պատգամավորներից բաղկացած միապալատ պառլամենտ՝ Ազգային ժողով: Միապալատ Ազգային ժողովի պատգամավորներն ընտրվում էին համընդհանուր, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ: Ընտրական ձայնի իրավունքով էին օժտված մինչև ընտրությունների օրը երկու տարուց ոչ պակաս իրենց բնակավայրերում գրանցված, 21 տարին լրացած, քաղաքացիական կամ քաղաքական իրավունքներից օգտվող տղամարդիկ: Ազգային ժողովի պատգամավոր կարող էր ընտրվել 25 տարին լրացած քաղաքացին: Պատգամավորներն ընտրվում էին չորս տարով և ստանում էին վարձատրություն: Հոգևորականությունը զրկված էր ընտրական ձայնի իրավունքից:

Ազգային ժողովը օժտված էր օրենսդրական նախաձեռնության իրավունքով:

Սահմանադրության համաձայն՝ թագավորը պետության գլուխն էր ու կառավարության գլուխը: Նա պաշտոնապես կրում էր «համայն հելլենների թագավոր» տիտղոսը՝ համարվելով նաև Հունաստանի սահմաններից դուրս՝ այլ երկրներում բնակվող հույների

հովանավորը: Թագավորի գլխավորած գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, բաղկացած էր յոթ նախարարներից: Կառավարության անդամները նշանակվում և պաշտոնաթող էին լինում թագավորական հրամանագրով: Պառլամենտի որոշմամբ նախարարները կարող էին դատական պատասխանատվության ենթարկվել և միայն պառլամենտի համաձայնությամբ ներման ենթարկվել:

Թագավորն օժտված էր օրենսդրական նախաձեռնության, Ազգային ժողովի ընդունած օրինագծերը հաստատելու կամ մերժելու՝ բացարձակ վետոյի (արգելք), պառլամենտն արձակելու իրավունքով: Սակայն թագավորն իրավունք չուներ պառլամենտում մասնակցելու հիմնական օրենքի՝ Սահմանադրության վերանայման գործընթացին: Սահմանադրության ամբողջական փոփոխությունն ընդհանրապես բացառվում էր:

Սահմանադրությունը երաշխավորում էր դատավարության հրապարակայնությունը, դատավորների անփոփոխելիությունը: Քաղաքական հանցագործությունների և մամուլի վերաբերյալ հիմնվում էր երդվյալ ատենակալների դատարան: Նույն՝ 1864 թ. նոյեմբերի 29-ին, Գեորգ 1-ինը Ազգային ժողովում հավատարմության երդում է տալիս Սահմանադրությանը:

Հունական պատմագրության գնահատմամբ՝ 1862 թ. հեղափոխության հետևանքով 1864 թ. հոկտեմբերի 29-ին Ազգային ժողովի ընդունած Հունաստանի Սահմանադրությունը եվրոպական երկրներում գործող ամենադեմոկրատական Սահմանադրություններից մեկն էր՝ Հունական թագավորությունում հիմք դնելով պառլամենտական կարգերի ձևավորմանը:

19-րդ դարի 60-ական թթ. միջերկրածովյան Կրետե կղզում կրկին բորբոքվում է հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական տիրապետության դեմ: 1866 թ. մայիսին կրետացիները խնդրագիր են ուղարկում սուլթան Աբդուլ Ազիզին՝ վարչական և դատական բնույթի բարեփոխումներ անցկացնելու կղզում: Չստանալով դրական պատասխան՝ 1866 թ. ամռանը կղզու

մեծամասնություն կազմող հույն բնակչությունը ապստամբություն է բարձրացնում և սեպտեմբերի 2-ին ապստամբական ընդհանուր ժողովը հռչակում է Կրետեի միավորումը Հունաստանի հետ[41]: Հունաստանը փորձում է այդ անգամ ևս ռազմական աջակցություն ցուցաբերել ապստամբներին: Տերությունների ճնշմամբ[42] 1868 թ. հունվարի 10-ին Թուրքիան Կրետեին շնորհում է կազմակերպական Կանոնադրություն, որով կղզին ստանում էր տեղական վարչական ինքնավարություն[43]:

Կրետե կղզու՝ 1868 թ. կազմակերպական Կանոնադրությունը

1868 թ. հունվարին Կրետե կղզուն թուրքական կառավարության շնորհած կազմակերպական Կանոնադրության համաձայն՝ կղզու վարչական գերագույն կառավարումը՝ գործադիր իշխանությունը, բացառապես պետք է իրականացներ սուլթանի նշանակած գեներալ-նահանգապետը, իսկ կայսերական ամրոցների և դրանցում տեղակայված կայազորների հրամանատարությունը՝ գլխավոր հրամանատարը: Գեներալ-նահանգապետի և գլխավոր հրամանատարի պաշտոնները պետք է լինեին միմյանցից անկախ, սակայն, անհրաժեշտության դեպքում, սուլթանը կարող էր գեներալ-նահանգապետին օժտել նաև գլխավոր հրամանատարի լիազորություններով:

Գեներալ-նահանգապետը Կրետե կղզին պետք է կառավարեր՝ Օսմանյան կայսրության հիմնական օրենքների, կայսերական հրա-

[41] Martens Fr., նշվ. աշխ., h. XVIII. 34. Décret de l'Assemblée nationale des Crétois, declarant l'union avec la Grèce; en date de Sfakia, le 2 septembre 1866, p. 77-78:
[42] Նույն տեղում, 35. Déclaration des Représentants de la France, de l'Italie, de la Prusse et de la Russie, relative aux affaires de Crète; remise le 29 octobre 1867 au Ministre des affaires étrangères de la Porte Ottomane, p. 79-80:
[43] Schopoff A., Les Réformes et la protection des Chrétiens en Turquie. 1673-1904. Paris, 1904. N 98. Règlement organique de l'ile de Crète (1868), p. 600-637.

հանգների և կղզուն շնորհված կազմակերպական Կանոնադրության համաձայն: Գեներալ-նահանգապետին պետք է օգնեին կայսերական հրամանագրով նշանակված երկու խորհրդականները, որոնցից մեկը պետք է ընտրվեր կայսրության մուսուլման, իսկ մյուսը՝ քրիստոնյա պաշտոնյաներից: Գեներալ-նահանգապետի նախագահությամբ պետք է գործեր գեներալ-նահանգապետության վարչական խորհուրդը, որը բաղկացած էր լինելու կայսերական հրամանագրով նշանակված երկու խորհրդականներից, արդարադատության վերահսկիչից, հունական եկեղեցու միտրոպոլիտից, ֆինանսների դիրեկտորից, թղթակցությունների երկու դիրեկտորներից, թուրքական և հունական համայնքներից համամասնաբար ընտրված երեք մուսուլման և երեք քրիստոնյա ներկայացուցիչներից: Գեներալ-նահանգապետության վարչական խորհուրդը պետք է քննարկեր, կարծիքներ հայտներ և առաջարկություններ ներկայացներ վարչական կառավարմանն առնչվող հարցերի վերաբերյալ, սակայն իրավասու չէր միջամտելու գործադիր իշխանության և արդարադատության գործերին: Գեներալ-նահանգապետության վարչական խորհուրդը պարզապես գեներալ-նահանգապետի սոսկ խորհրդակցական մարմինն էր:

Կրետե կղզու գեներալ-նահանգապետությունը բաժանվում էր հինգ՝ Կանեայի, Սֆակիայի, Ռեթիմոյի, Կանդիայի և Լասսիթի նահանգների: Յուրաքանչյուր նահանգ պետք է կառավարեր սուլթանական հրամանագրով նշանակված նահանգապետը: Նահանգապետների կեսը պետք է նշանակվեր կայսրության քրիստոնյա, իսկ մյուս կեսը՝ մուսուլման պաշտոնյաներից: Վարչական կառավարման բնագավառում նահանգապետներին պետք է օգնեին նահանգային վարչական խորհուրդները և սուլթանական հրամանագրով նշանակված մեկ խորհրդական, որը մուսուլման նահանգապետի դեպքում պետք է լիներ քրիստոնյա, իսկ քրիստոնյա նահանգապետի դեպքում՝ մուսուլման:

Քրիստոնյա և մուսուլման խառը բնակչությամբ յուրաքանչյուր նահանգի վարչական խորհուրդը՝ նահանգապետի նախագահությամբ, բաղկացած պետք է լիներ օգնականից, դատավորից, եպիսկոպոսից, հաշվապահից, թղթակցությունների երկու դիրեկտորներից և ընտրված վեց՝ երեք մուսուլման և երեք քրիստոնյա անդամներից:

Ամբողջությամբ քրիստոնյաներով բնակեցված յուրաքանչյուր նահանգում՝ նահանգապետի նախագահությամբ, նահանգային վարչական խորհուրդը բաղկացած պետք է լիներ օգնականից, եպիսկոպոսից, հաշվապահից, թղթակցությունների երկու դիրեկտորներից և ընտրված վեց քրիստոնյա անդամներից:

Կրետե կղզու գեներալ-նահանգապետության հինգ նահանգները բաժանվում են քսան սանջակների (գավառների), որոնք պետք է կառավարեին կայսերական պաշտոնյաներից հավասար թվով ընտրված մուսուլման և քրիստոնյա կառավարիչները: Մուսուլման կառավարիչներին պետք է օգնեին կայսերական կառավարության նշանակած քրիստոնյա, իսկ քրիստոնյա կառավարիչներին՝ մուսուլման խորհրդականները:

Թուրքերով և հույներով խառը բնակչությամբ, իսկ բացառապես հույներով բնակեցված սանջակների վարչական խորհուրդները՝ նույնպես կառավարչի նախագահությամբ, բաղկացած պետք է լինեին նահանգների նույնանման վարչական խորհուրդների պես:

Կղզու գեներալ-նահանգապետը միաժամանակ պետք է կատարեր Կանեայի նահանգապետի, իսկ գեներալ-նահանգապետության վարչական խորհուրդը՝ Կանեայի նահանգի վարչական խորհրդի պարտականությունները:

Նահանգապետների և սանջակների կառավարիչների մշտական պաշտոնական նստավայրը պետք է որոշեր գեներալ-նահանգապետը: Իրենց վարչական խորհուրդներով նահանգապետները միաժամանակ պետք է կառավարեին այն սանջակը, որտեղ պետք է գտնվեր իրենց պաշտոնական նստավայրը:

Իրենց կառավարմանը ենթակա վարչատարածքային միավորումներում գործադիր իշխանություն իրականացնելու համար գեներալ-նահանգապետը, նահանգապետները և սանջակների կառավարիչները նախապես պետք է խորհրդակցեին իրենց նախագահության ներքո գտնվող վարչական խորհուրդների հետ: Առանց իրենց վարչական խորհուրդների հետ խորհրդակցելու՝ գեներալ-նահանգապետը, նահանգապետները և սանջակների կառավարիչները իրավունք չունեին գործադիր իշխանություն իրականացնելու: Սակայն գեներալ-նահանգապետի, նահանգապետների և սանջակների կառավարիչների վարչական խորհուրդները բացառապես կրում էին սոսկ խորհրդակցական բնույթ և պատասխանատու չէին գործադիր իշխանության իրականացրած քաղաքականության համար:

Նահանգների սանջակները պետք է ստորաբաժանվեին կազաների (շրջանների), որոնք պետք է կառավարեին կայսրության մուսուլման և քրիստոնյա պաշտոնյաներից թուրքական կառավարության նշանակած կայմակամները: Կառավարման բնագավառում կայմակամներին, ինչպես՝ սանջակների կառավարիչներին, պետք է օգնեին խորհրդականները և վարչական խորհուրդները:

Մուսուլմանական և քրիստոնյա գյուղական համայնքների վարչական կառավարումը պետք է իրականացնեին ավագներից ընտրված խորհուրդները: Յուրաքանչյուր գյուղական համայնքում ավագների խորհուրդը պետք է իրականացներ նաև հաշտարար դատավորների պարտականություններ: Սակայն ավագների խորհրդի կայացրած դատավճիռները կարող էին իրավական ուժ ստանալ միայն տեղի խառը դատարանի կողմից հաստատվելուց հետո:

Գեներալ-նահանգապետության կենտրոն Կանեա քաղաքում պետք է հիմնվեր ժողովրդի կողմի ընտրված Գլխավոր խորհուրդ, որի կազմում բացառապես մուսուլման և քրիստոնյա բնակչություն ունեցող յուրաքանչյուր կազա պետք է ներկայացվեր երկուական,

իսկ մուսուլմաններով և քրիստոնյաներով խառը բնակչությամբ կազաներից յուրաքանչյուրը՝ մեկական մուսուլման պատգամավորներով:

Յուրաքանչյուր տարի մեկ անգամ նիստեր գումարող կղզու ընտրովի Գլխավոր խորհուրդը պետք է քննարկեր և առաջարկներ ներկայացներ հասարակականորեն օգտավետ աշխատանքների, մասնավորապես՝ հաղորդակցության ճանապարհների կառուցման, ֆինանսավարկային հաստատությունների ստեղծման, գյուղատնտեսության, առևտրի ու արդյունաբերության զարգացման, հանրային կրթության բարելավման վերաբերյալ: Գլխավոր խորհրդի կողմից կղզում բարելավումներ և բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկությունները կայսերական կառավարության կողմից հաստատվելուց հետո տեղական եկամուտներից պետք է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացվեին այդ առաջարկությունները կենսագործելու համար: Կենտրոնական կառավարության հատկացրած ֆինանսական միջոցների օգտագործման վերահսկողությունը պետք է իրականացներ կղզու Գլխավոր խորհուրդը:

Գեներալ-նահանգապետության գլխավոր քաղաքում, ինչպես նաև սանջակներում և կազաներում, պետք է հիմնվեին քաղաքացիական և ռազմական դատարաններ:

Նահանգապետության գլխավոր քաղաքի, խառը բնակչությամբ սանջակների և կազաների դատարանները պետք է բաղկացած լինեին ժողովրդի կողմից ընտրված մուսուլման և քրիստոնյա անդամներից: Բացառապես քրիստոնյաներով բնակեցված սանջակներում և կազաներում քաղաքացիական և ռազմական դատարանները պետք է բաղկացած լինեին միայն քրիստոնյաներից:

Նահանգապետության կենտրոնական քաղաքում և խառը բնակչությամբ յուրաքանչյուր սանջակում պետք է հիմնվեր մուսուլմանական կրոնական դատարան: Քրիստոնյաների և մուսուլմանների միջև առաջացած քաղաքացիական, քրեական, առևտրական

և այլ խառը վեճերը պետք է դատվեին քաղաքացիական և առևտրական խառը դատարանների կողմից:

Կղզու գեներալ-նահանգապետության, սանջակների ու կազաների ֆինանսական բնագավառները պետք է կառավարեին մուսուլման ու քրիստոնյա պաշտոնյաները:

Հունարենը դառնում էր թուրքերենին իրավահավասար պաշտոնական լեզու: Գեներալ-նահանգապետության Գլխավոր խորհրդում գեներալ-նահանգապետի և պատգամավորների ելույթները, քննարկումները և առաջարկությունները կարող էին կատարվել հունարենով: Պաշտոնական բոլոր փաստաթղթերը՝ վարչական խորհուրդների արձանագրությունները, հավասարապես պետք է կազմվեին հունարեն և թուրքերեն: Պաշտոնական երկու իրավահավասար լեզուներով կատարվող գրագրությունների ղեկավարությունը պետք է իրականացնեին գեներալ-նահանգապետության թղթակցությունների երկու գլխավոր, իսկ յուրաքանչյուր սանջակում՝ նույնքան դիրեկտորները: Այնուամենայնիվ, չնայած 1868 թ. կազմակերպական Կանոնադրությանը՝ Կրետեի հույն բնակչությունը չի դադարեցնում պայքարը թուրքական տիրապետության դեմ՝ հանուն իր ազգային ազատագրության և մայր հայրենիքի՝ Հունաստանի հետ քաղաքական միավորման:

Թուրքական դարավոր տիրապետության դեմ հույն ժողովրդի մղած 1821-1829 թթ. ազգային-ազատագրական անօրինակ հերոսական պատերազմի, եվրոպական հզոր երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիվանագիտական ու ռազմաքաղաքական անմիջական միջամտության, մասնավորապես՝ Հունաստանի ազատագրության համար Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած 1828-1829 թթ. հաղթական պատերազմի հետևանքով Բալկանյան թերակղզում, ի վերջո, 1830 թ. ստեղծվում է առաջին անկախ պետությունը՝ Հունական թագավորությունը: Առանց թուրքական կառավարության վրա երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Հունաստանի քաղաքական անկա-

խությունը ճանաչելու համար գործադրած դիվանագիտական, քաղաքական ու ռազմական ճնշումների և հարկադրանքների՝ հույն ժողովրդի ազգային-ազատագրականաան պատերազմը, ի վերջո, անխուսափելիորեն դատապարտված էր կործանիչ պարտության, իսկ ապստամբած հույն ժողովուրդը՝ ցեղասպանության: Հունական պետության անկախության երաշխավորությունը միասնաբար ստանձնած երեք տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանն են ընդհանուր համաձայնությամբ որոշում թուրքական տիրապետությունից ազատագրված Հունաստանի ցամաքային ու ծովային սահմանները, քաղաքական կարգը, թագավորելու համար միապետներ ընտրում օտարերկրյա արքայատոհմերի արքայազների:

Երաշխավոր երեք տերությունների՝ Լոնդոնի կոնֆերանսի 1831 թ. նոյեմբերի որոշմամբ էր, որ թուրքական կառավարությունը հարկադրված էր իր ռազմական ուժերը և վարչակազմը դուրս բերել և ինքնավարություն շնորհել հունական մեծամասնություն կազմող Էգեյան ծովի Սամոս կղզուն, իսկ 1868 թ. հունվարին՝ կազմակերպական Կանոնադրություն տրամադրել Կրետեին:

Երաշխավոր երեք տերությունները, մասնավորապես՝ Անգլիան և Ֆրանսիան, հենվելով իրենց համակիր քաղաքական ուժերի վրա, պայքար են ծավալում Հունական թագավորությունում իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերն ու ազդեցությունը ուժեղացնելու համար: Այդ առումով Անգլիան 1863 թ. Հունաստանին է զիջում 1815 թ.-ից իր քաղաքական հովանավորության տակ գտնվող Հոնիական յոթ կղզիները: Անգլիական կառավարությունը Հունաստանի ներքին ու արտաքին քաղաքականության վրա որոշակի ազդեցություն էր գործում իր նախաձեռնությամբ Հունական թագավորության միապետ ընտրված դանիացի արքայազն Գեորգ 1-ին Գլյուքսբուրգի և անգլիամետ իշխանությունների միջոցով:

Անգլիան ու Ֆրանսիան խստագույն վերահսկողություն են սահմանում հունական կառավարության արտաքին, հիմնականում՝ Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունների վրա՝ դիվանագի-

տական կամ ռազմական միջամտությամբ կանխելով դեռևս օսմանյան տիրապետության տակ գտնվող հունական հողերը ազատագրելու և Հունաստանի հետ միավորելու որևէ նախաձեռնություն: Այնուամենայնիվ, անկախություն ստացած Հունաստանը պետք է պայքար ծավալեր օսմանյան տիրապետության տակ գտնվող հունական պատմական հողերը՝ Էպիրոսը, Թեսալիան, Մակեդոնիան, Թրակիան, Էգեյան ծովի կղզիները, միջերկրածովյան Կրետեն ու Կիպրոսը ազատագրելու և մեկ միասնական, ազգային պետության մեջ քաղաքականապես միավորելու համար:

Բուլղարիա

Բուլղարիայում 1018 թ. հաստատված բյուզանդական տիրապետության տապալման հետևանքով 1187 թ. ստեղծված Բուլղարական Երկրորդ թագավորությունը արտաքին անբարենպաստ դրության և ֆեոդալական երկպառակությունների պատճառով 1363 թ. բաժանվում է երկու ինքնուրույն պետությունների: Բուլղարիայի հյուսիս-արևմտյան մասում առաջանում է Վիդինի թագավորությունը՝ համանուն քաղաքի կենտրոնով, իսկ կենտրոնական և արևելյան Բուլղարիայում՝ Տիրնովոյի թագավորությունը՝ Սոֆիա կենտրոնով: 14-րդ դարի կեսերին Բալկաններում ծավալվող թուրքական նվաճումների հետևանքով բուլղարական երկու թագավորությունները 1388 թ. վասալական կախվածության մեջ են ընկնում թուրքական սուլթանից: Շարունակելով իրենց նվաճումները Բալկաններում՝ 1393 թ. թուրքերը գրավում և ոչնչացնում են Տիրնովոյի թագավորությունը:

Թուրքական նվաճումները Բալկաններում կասեցնելու նպատակով 1396 թ. սեպտեմբերի 25-ին Տիրնովոյի մոտ՝ Նիկոպոլում, Հունգարիայի թագավոր Սիգիզմունդի հրամանատարությամբ տեղի է ունենում 70.000-անոց եվրոպական խաչակիրներից բաղկացած ճակատամարտը սուլթան Բայազիդի գլխավորած 200.000-

անոց բանակի դեմ: Նիկոպոլի ճակատամարտում հաղթանակած թուրքերը նույնպես վերացնում են Վիդինի թագավորությունը՝ 1396 թ. լիովին ավարտելով Բուլղարիայի նվաճումը: Թուրքիայի գրաված Բուլղարիան ընդգրկվում է 1382 թ. Սոֆիա կենտրոնով 1362 թ. Բալկաններում ստեղծված մեկ միասնական վարչական միավորի՝ Ռումելիայի բեյլերբեյության մեջ: 1400 թ. թուրքերը նվաճում են նաև Երկրորդ Բուլղարական թագավորության հյուսիս-արևելյան շրջանում 1348 թ. առաջացած Դոբրուջայի ինքնուրույն իշխանապետությունը: Այնուամենայնիվ, եվրոպական երկրները մեկ անգամ ևս փորձում են կանխել թուրքական նվաճումները Բալկաններում: 1444 թ. նոյեմբերի 10-ին Վառնայի մոտ տեղի է ունենում ճակատամարտ սուլթան Մուրադ 2-րդի 40.000-անոց բանակի և եվրոպական տերությունների 10.000-անոց բանակի միջև: Այդ ճակատամարտը նույնպես ավարտվում է թուրքերի հաղթանակով: Եվրոպական միացյալ բանակների հրամանատար, Լեհաստանի և Հունգարիայի թագավոր Վլադիսլավ 3-րդը սպանվում է ճակատամարտում:

1393 թ. գրավելով և ոչնչացնելով Տիրնովոյի թագավորությունը՝ թուրքական կառավարությունը վերացնում է նաև 1235 թ. Գալլիպոլիի եկեղեցական ժողովի անկախ ճանաչած բուլղարական ուղղափառ եկեղեցու հոգևոր կենտրոն Տիրնովոյի պատրիարքությունը, իսկ 1767 թ. Օխրիդի արքեպիսկոպոսությունը ենթարկվում է 1454 թ. սուլթանական հրովարտակով Արևելքի բոլոր ուղղափառ եկեղեցիների միակ գլուխ հռչակված Կ.Պոլսի հունական պատրիարքի իրավասությանը: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս հունական պատրիարքությանը հունականացման քաղաքականության ենթարկելու բուլղար ժողովրդին: Այնուամենայնիվ, հունական դարավոր մշակույթը, հունարեն լեզուն, հունական դպրոցները նշանակալի դեր են կատարում բուլղար ժողովրդի մշակութային զարգացման և ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Բուլղար ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորման և ազգային անկախության նվաճման գործում նշանակալի դեր է ունե-

նում բուլղար վանական Պաիսի Խիլենդարցու 1762 թ. հեղինակած «Սլավոնա-բուլղարական պատմություն» աշխատությունը, որը բազմաթիվ ձեռագիր ընդօրինակություններով տարածվում է բուլղար ժողովրդի լայն շրջաններում և առաջին անգամ հրատարակվում 1844 թ.: Բուլղար ժողովրդի ազգային ինքնագիտակցության և անկախության գաղափարների ձևավորման գործում մեծ դեր են կատարել Ռուսաստանի սլավոնական կոմիտեները, սլավոնաֆիլները, համալսարանները: Հետևանքը լինում է այն, որ 19-րդ դարի 40-60-ական թթ. Բուլղարիայում սկսվում է գաղափարական շարժում՝ Կ. Պոլսի հունական պատրիարքությունից լիովին անկախ, ինքնուրույն ազգային եկեղեցի ստեղծելու համար: Ռուսական դիվանագիտությունը մեծ գործունեություն է ծավալում բուլղարական ինքնուրույն ազգային եկեղեցի հիմնելու գործում՝ այն համարելով քաղաքական առաջին լուրջ քայլը ապագայում անկախ բուլղարական պետություն ստեղծելու և սլավոնական այդ պետությունում իր ազդեցությունը հաստատելու ճանապարհին: Ռուսական դիվանագիտության և, մասնավորապես, Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Իգնատևի եռանդուն ջանքերի արդյունքում 1870 թ. մարտի 11-ին հրապարակվում է սուլթանական հրովարտակ՝ Կ.Պոլսի հունական պատրիարքությունից անկախ, բուլղարական ինքնուրույն եկեղեցի՝ էկզարխատություն հիմնելու մասին[44]: Սուլթանական հրովարտակով բուլղարական ինքնուրույն էկզարխատի հոգևոր իրավասության ներքո ստեղծում էր 15 թեմերից բաղկացած հատուկ եկեղեցական շրջան, որի սահմանը, հյուսիսում լինելով Դանուբ գետը, հարավում ներառում էր Մակեդոնիայի և Թրակիայի հյուսիսային շրջանները:

Սուլթանական հրովարտակով թույլատրելով կոնկրետ նշված շրջաններում հիմնել 15 հոգևոր թեմերից բաղկացած ինքնուրույն բուլղարական եկեղեցի՝ թուրքական կառավարությունը ակամայից փաստորեն քաղաքական հիմք էր նախապատրաստում էկզարխա-

[44] Schopoff A., նշվ. աշխ., N 36. Firman constitutif de l'Exarchat bulgare. En date du 11 mars 1870, p. 134-137:

տի իրավասության ներքո գտնվող տարածքում ապագայում բուլղարական պետության ստեղծման համար: Կ.Պոլսի հունական պատրիարքության ենթակայությունից անկախ՝ ինքնուրույն բուլղարական եկեղեցու ստեղծումը բուլղար ժողովրդի ազգային շարժման, ինչպես նաև այդ շարժումը քաղաքական նպատակներով օգտագործող ռուսական դիվանագիտության հաղթանակն էր: Այժմ արդեն պետք է պայքար ծավալվեր բուլղարական պետության ստեղծման համար:

Բուլղարական անկախ եկեղեցու՝ էկզարխատի ստեղծումը, որի հոգևոր իրավասությունը տարածվում էր նաև պատմական Մակեդոնիայի և Թրակիայի հյուսիսային շրջանների վրա, առաջացնում է Կ.Պոլսի հունական պատրիարքության և Հունաստանի կառավարող շրջանների աննկարագրելի զայրույթը և դժգոհությունը: Նախ՝ Կ.Պոլսի հունական պատրիարքությունը զրկվում էր իր գանձարանը հոսող հսկայական ֆինանսական միջոցներից և ապա՝ բուլղարական տարածքները հունականացնելու դարավոր քաղաքականությունից: Երկու տարվա համառ դիմադրությունից հետո՝ 1872 թ. սեպտեմբերին, Կ.Պոլսում հրավիրված տիզերական ժողովը նորաստեղծ բուլղարական եկեղեցին հայտարարում է սխիզմատիկ (պառակտողական) (Կ.Պոլսի հունական պատրիարքությունը բուլղարական ինքնուրույն եկեղեցին ճանաչում է 1945 թ.):

Հունաստանի կառավարող շրջանները և Կ.Պոլսի ազդեցիկ հունական խավերը սուլթանական հրովարտակով նախատեսված բուլղարական էկզարխատի աշխարհագրական սահմաններն ընկալում են որպես լուրջ հարված Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ գտնվող հողերի, մասնավորապես՝ Մակեդոնիայի և Թրակիայի նկատմամբ դրսևորվող իրենց տարածքային ձգտումներին: Նրանք համոզված էին, որ բուլղարական էկզարխատի ստեղծման հիմնական նախաձեռնողը ռուսական դիվանագիտությունն էր, որ հեռահար նպատակներ էր հետապնդում Բալկաններում արտաքին քաղաքական խնդիրներ իրականացնելու համար: Բուլղարական

ինքնուրույն էկզարխատի ստեղծումը լուրջ հարված է հասցնում հույն-ռուսական հարաբերություններին և, մյուս կողմից, Բալկաններում սկիզբ դնում հույն-բուլղարական տարածքային հակասություններին:Հենց թուրքական պատմագրությունն է շեշտում, որ Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակաշրջանում իրականացվել է բալկանյան ժողովուրդների միջև հակասությունները խորացնելու քաղաքականությունը և, այդ առումով, հույն-բուլղարական հակասությունները հարատև բորբոքված վիճակում պահելու նպատակով 1870 թ. ստեղծվել է Կ.Պոլսի հունական պատրիարքությունից լիովին անկախ, բուլղարական ինքնուրույն եկեղեցի[45]:

Հետագայում՝ Արևելյան Ռումելիան Հյուսիսային Բուլղարիայի հետ միավորվելուց հետո, 1890 թ. հուլիսի 26-ի սուլթանական հրովարտակով բուլղարական եկեղեցու հոգևոր կենտրոններ՝ միտրոպոլիտություններ են ստեղծվում նաև էկզարխատի իրավասության թեմերի աշխարհագրական սահմաններից դուրս գտնվող նաև Մակեդոնիայի Սկոպյե (Սկոպլե) և 1767 թ. արքեպիսկոպոսությունից զրկված Օխրիդ քաղաքներում:

Հույն-բուլղարական տարածքային հակասությունները մեծ վնաս են հասցնում թուրքական տիրապետության դեմ ուղղված բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին՝ պատմական մի երկարատև ժամանակահատվածով կասեցնելով նրանց միասնական ճակատի ստեղծումը՝ իրենց ստրկացրած թշնամու դեմ ընդհանուր ուժերով հանդես գալու համար:

Սերբիա

1389 թ. հունիսի 15-ին Հարավային Սերբիայում՝ Կոսովոյի դաշտում (Պրիշտինա քաղաքի մոտ), սերբ-բոսնիական 20.000-անոց բանակի և թուրքական 30.000-անոց բանակի միջև տեղի

[45] Tarih, նշվ. աշխ., էջ 310:

ունեցած վճռական ճակատամարտն ավարտվում է թուրքերի հաղթանակով: Կոսովոյի ճակարտամարտից հետո Սերբական իշխանապետությունը վասալական կախվածության մեջ է ընկնում Թուրքիայից, իսկ 1448 թ. հոկտեմբերի 29-30-ը կրկին Կոսովոյի դաշտում արդեն եվրոպական բանակների կրած պարտությունից հետո, 1459 թ. դառնում է Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասը: 1521 թ. թուրքերը գրավում են նաև 1427 թ.-ից հունգարների կողմից դեռևս պաշտպանվող Բելգրադը: Այնուհետև, վարչական բաժանումների հետևանքով, 1739 թ. ստեղծվում է Բելգրադի նահանգը (փաշայությունը):

Սերբիայի նվաճումից հետո թուրքերը վերացնում են Կոսովո-Մետոխիայի Պեչ քաղաքում 1346 թ. հիմնված սերբական ուղղափառ եկեղեցու պատրիարքությունը՝ այն ենթարկելով նրա անկախ կարգավիճակը 1376 թ. ճանաչած Կ.Պոլսի հունական պատրիարքի հոգևոր իշխանությանը: Այնուամենայնիվ, սերբական հոգևորականությունը կարողանում է համաձայնության գալ թուրքական կառավարության հետ և, մուսուլմանացած, ծագումով բոսնիացի (սերբ) մեծ վեզիր Մեհմեդ փաշա Սոկոլիի օգնությամբ 1557 թ. Պեչում վերականգնում է սերբական պատրիարքությունը: Սերբական պատրիարքության հոգևոր իրավասությունը տարածվում էր նաև Չեռնոգորիայի, Բոսնիա–Հերցեգովինայի և հարավ-արևմտյան Բուլղարիայի ուղղափառ եկեղեցիների վրա: Թուրքական դաժան տիրապետության ժամանակաշրջանում իր հոգևոր իշխանության ներքո միավորելով հարավ-սլավոնական այդ երկրներին՝ Պեչի սերբական պատրիարքությունը նշանակալի դեր է ունենում ապագա ազատագրական ապստամբությունները կազմակերպելու և ղեկավարելու գործում: Սերբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գլխատելու և Սերբիայում թուրքական տիրապետությունը ամուր պահելու նպատակով, սուլթանի կառավարությունը 1766 թ. վերացնում է Պեչի ուղղափառ եկեղեցու պատրիարքությունը՝ այն կրկին ենթարկելով Կ.Պոլսի հունական պատրիարքին: Հետագայում՝ 1832

թ. սերբական ուղղափառ եկեղեցին մասամբ վերականգնում է իր ինքնուրույն կարգավիճակը, իսկ 1879 թ. հիմնականում արդեն դառնում է անկախ՝ ավտոկեֆալ եկեղեցի:

Սերբիան նվաճելու ընթացքում և նաև իրենց տիրապետությունը հաստատելուց հետո էլ թուրքերը վայրագ բռնությունների և կոտորածների միջոցով ստիպում էին քրիստոնյա սերբերին զանգվածաբար արտագաղթել իրենց հայրենիքից և սերբական տարածքները, մասնավորապես՝ սերբ ժողովրդի պատմական բնօրրան Կոսովո-Մետոխիան վերաբնակեցնել մուսուլման ալբանացիներով՝ այդպիսով հիմքեր ստեղծելով հետագայում մուսուլման բնակչությամբ մեծամասնություն կազմած սերբական մարզերը Սերբիայից անջատելու համար: Թուրք վերաբնակիչները հորդում էին նաև սերբական քաղաքները, որոնք վերածվում էին թուրքական կայազորներով կայանված ամրոցների և վարչական կենտրոնների: Սերբ ֆեոդալների որոշ մասը իր տիրապետող դիրքերը և արտոնությունները պահպանելու համար դավանափոխվում է՝ ընդունելով իսլամական կրոնը՝ նպաստելով Սերբիայում թուրքական տիրապետության ամրապնդմանը:

1804 թ. փետրվարին թուրքական տիրապետության դեմ ազգային-ազատագրական ապստամբություն է բռնկվում Սերբիայի՝ տնտեսապես առավել զարգացած մասում՝ Բելգրադի նահանգում: Սերբիայի առաջին Ազգային ժողովը՝ Սկուպշչինան, ապստամբության ղեկավար է ընտրում ազգային-ազատագրական պայքարում իր ռազմական ընդունակություններով աչքի ընկած Կարագեորգիին, որն այնուհետև հռչակվում է Սերբիայի ժառանգական գերագույն առաջնորդ: Ապստամբության ընթացքում թուրքական տիրապետությունից ազատագրվում են Բելգրադի նահանգը և նրա տարածքից դուրս գտնվող վեց շրջաններ (նահիյաներ): Ապստամբության ընթացքում ստեղծվում են ռազմական և պետական կառավարման մարմիններ: 1806 թ. Բելգրադը դառնում է Սերբական իշխանապետության մայրաքաղաքը: Սերբական ազգային-ազատագ-

րական ապստամբությանը մեծապես նպաստում է Ռուսաստանի անմիջական ֆինանսական, ռազմաքաղաքական և դիվանագիտական աջակցությունը, որը դրսևորվում է Թուրքիայի դեմ 1806-1812 թթ. մղած հաղթական պատերազմում: Այդ առումով, մեծ նշանակություն է ունենում 1807 թ. հունիսին ձևավորված ռուս-սերբական ռազմաքաղաքական դաշինքը, որի հիման վրա 1807 թ. Արևելյան Սերբիա մտած ռուսական բանակները սերբական ապստամբական զորքերի հետ մի շարք ջախջախիչ հաղթանակներ են տանում թուրքերի դեմ: Ռուս-սերբական միասնական հաղթական ռազմական գործողություններ են տեղի ունենում նաև 1810 և 1811 թթ.:

1806-1812 թթ. պատերազմում պարտված Թուրքիան 1812 թ. մայիսի 28-ին Բուխարեստում կնքած հաշտության պայմանագրի 8-րդ հոդվածով պարտավորվում էր համընդհանուր ներման ենթարկել սերբական ապստամբության բոլոր մասնակիցներին և Սերբիային շնորհել ներքին ինքնավարության իրավունքներ: Սերբիայի տարեկան հարկերը հավաքելու և թուրքական կառավարությանը հանձնելու իրավունքը վերապահվում էր միայն սերբ հարկահաններին: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր Սերբիայի ներքին ինքնավարության կարգավիճակը սահմանել և հարկերի չափը որոշել միայն «սերբ ժողովրդի հետ համընդհանուր համաձայնությամբ»: Հաշտության պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն ապստամբության ընթացքում սերբերի կառուցած բոլոր ամրոցները պետք է քանդվեին, իսկ թուրքական կառավարությունը վերականգնում էր բոլոր սերբական ամրոցներում կայազորներ տեղաբաշխելու, սպառազինություն և ռազմամթերք կենտրոնացնելու իրավունքը[46]:

Բուխարեստի հաշտության կնքումից որոշ ժամանակ անց՝ օգոստոսի 10-ին, ռուսական զորքերը հեռանում են ինքնավարու-

[46] Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome deuxième.1789-1856. Paris, 1900.
N30. Traité de paix avec la Russie. Signé à Bucharest le 16/28 mai 1812, p. 86-92.

թյուն ստացած Սերբական իշխանապետության մայրաքաղաք Բելգրադից: Օգոստոսի 27-ին իշխանապետության Սկուպշչինան հավատարմության երդում է տալիս Ռուսաստանին:

Բուխարեստի հաշտության պայմանագրով, փաստորեն, սկիզբ էր դրվում Սերբիայի ապագա քաղաքական անկախությանը: Այդպիսի քաղաքական արդյունքով է ավարտվում թուրքական տիրապետության դեմ մղված 1804-1812 թթ. Առաջին սերբական ազգային-ազատագրական ապստամբությունը:

Օգտվելով Ռուսաստանի դեմ Նապոլեոնի ձեռնարկած 1812 թ. արշավանքից և Եվրոպայում ստեղծված միջազգային բարդ իրադրությունից, ինչպես նաև Սերբիայի թուլությունից, թուրքական զորքերը 1813 թ. հուլիսին հարձակվում են Սերբիայի վրա, ջախջախում նրան և վերականգնում սուլթանի գերիշխանությունը: 1815 թ. ապրիլին սկսում է Երկրորդ սերբական ազգային-ազատագրական ապստամբությունը թուրքական տիրապետության դեմ: 1815 թ. հունիսին Վաթերլոոյի ճակատամարտում Նապոլեոնի ջախջախիչ պարտությունը քաղաքական նպաստավոր պայմաններ է ստեղծում սերբական ապստամբության համար: Նապոլեոնյան պատերազմում հաղթանակած և Եվրոպայում իր միջազգային ազդեցությունն աննախադեպորեն ուժեղացած Ռուսաստանը կրկին հանդես է գալիս սերբական ազատագրական ապստամբության պաշտպանությամբ: Վիեննայի կոնգրեսի ավարտից հետո՝ 1815 թ. սեպտեմբերի 18-ին, թուրքական կառավարությանը հղած նոտայով Ռուսաստանը պահանջում է անհապաղորեն կենսագործել Սերբիայի ինքնավարության վերաբերյալ Բուխարեստի հաշտության պայմանագրի 8-րդ հոդվածը: Սերբական հարցում ռուսական դիվանագիտության կտրուկ միջամտությունը ստիպում է թուրքական կառավարությանը բանակցություններ սկսել սերբական ապստամբության ղեկավարության հետ: Ի վերջո, 1815 թ. հոկտեմբերի 10-ին թուրքական և սերբական կողմերի միջև կայացած բանավոր համաձայնության արդյունքում սերբերը վերականգնում են Բուխարեստի հաշտության

պայմանագրի 8-րդ հոդվածով ամրագրված իրենց ինքնավարության իրավունքը: Ապստամբության առաջնորդ Միլոշ Օբրենովիչը ճանաչվում է ինքնավար Սերբիայի գերագույն իշխան (1815-1839, 1858-1860 թթ.):

1821-1829 թթ. հունական ազգային-ազատագրական պատերազմի, ինչպես նաև Բալկաններում ստեղծված քաղաքական իրադրության հետևանքով սրված ռուս-թուրքական հարաբերությունների պայմաններում ռուսական դիվանագիտությունը հանդես է գալիս բալկանյան հարցերի կարգավորման նախաձեռնությամբ: 1826 թ. հոկտեմբերի 7-ին Բեսարաբիայի Ակկերման ամրոցում կնքված համաձայնությամբ, ի թիվս բալկանյան այլ խնդիրների, Թուրքիան պարտավորվում էր իրագործել 1812 թ. Բուխարեստի հաշտության պայմանագրով Սերբիային վերաբերող պայմանները և շեշտվում էին նրա ներքին ինքնավարության կոնկրետ սկզբունքները: Ըստ Ակկերմանի համաձայնության՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր Կ.Պոլսի սերբական պատվիրակության հետ քննարկել «սերբ ժողովրդի այն բոլոր պահանջները, որոնք առավելագույնս անհրաժեշտ էին նրա անվտանգությունը և բարեկեցությունը ապահովելու համար»՝ խոստանալով Սերբիային շնորհել «ներքին կառավարման անկախություն», իրենց կառավարիչներին ընտրելու, դավանանքի և կրոնական արարողությունների, ինչպես նաև արտաքին առևտրի ազատություն: Սերբիայի ինքնավար տարածքում թույլատրվում էր հիմնել հիվանդանոցներ, ուսումնարաններ և տպարաններ: Սերբ առևտրականներն իրավունք էին ստանում սեփական անձնագրերով առևտուր կատարել Օսմանյան կայսրության բոլոր մարզերում, քաղաքներում ու նավահանգիստներում: Թուրքական կայազորային ամրոցներից բացի, մուսուլմաններին արգելվում էր բնակվել ինքնավար Սերբիայի տարածքում: Սերբիայից հեռացած մուսուլման հողատերերի կալվածքների կառավարումը իրականացնելու էին սերբերը, պայմանով, որ այդ կալվածքներից ստացված եկամուտները մեկ միասնական տարեկան հարկի

հետ պետք է հանձնեին թուրքական կառավարությանը: Վերջապես, թուրքական կառավարությունը պարտավորվում էր ինքնավար Սերբիային վերադարձնել Երկրորդ սերբական ապստամբության ժամանակ Բելգրադի նահանգի սահմաններից դուրս գրաված վեց շրջանները[47]:

Ակկերմանի համաձայնությունը խանդավառության ալիք է բարձրացնում սերբ ժողովրդի շրջանում: Իշխան Միլոշ Օբրենովիչը Ակկերմանի համաձայնության Սերբիային վերաբերող ակտը հանդիսավորությամբ հրապարակում է Սկուպշչինայի հատուկ նիստում, որը երախտագիտական ուղերձ է հղում ռուսական կառավարությանը:

Թուրքիայի դեմ 1828-1829 թթ. Ռուսաստանի մղած հաղթական պատերազմը քաղաքական նպաստավոր հետևանքներ է ունենում նաև Սերբիայի համար: 1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանապոլսում կնքած հաշտությամբ Թուրքիան պարտավորվում էր իրականացնել Սերբիայի ինքնավարությանը վերաբերող Ակկերմանի համաձայնության սկզբունքները, ինչպես նաև վերադարձնել նրանից զավթած վեց շրջանները: Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը պարտավորեցնում էր Թուրքիային նաև կայսերական հատուկ հրովարտակով օրինականացնել Սերբիայի փաստական ինքնավարությունը[48]:

Սերբիային վերաբերող Ակկերմանի համաձայնության և Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի հոդվածների հիման վրա՝ 1830, 1833 և 1838 թթ. սուլթանական հրովարտակներով, սուլթանի

---

[47] Noradounghian G., նշվ. աշխ., h. 2. 1789-1856:
N38. Convention explicative et complémentaire du traité de paix de Bucharest de 1812 avec la Russie. Signé à Ackerman le 7 octobre 1826, p.116-121.
N 40. Séned relative à la Servie annexé au traité d'Ackerman avec la Russie en date du même jour. Le 7 octobre 1826, p. 125-126.

[48] Noradounghian G., նշվ. աշխ., h. 2.1789-1856.
N 53. Traité de paix avec la Russie.Conclu à Andrinople le 2/ 14 septembre 1829, p. 166-173.

գերագույն իշխանության ներքո Սերբիան ստանում էր տեղական վարչական ինքնակառավարման լայն իրավունքներ[49]: Սերբական իշխանապետության կառավարիչ Միլոշ Օբրենովիչը հաստատվում է սերբ ժողովրդի ժառանգական գերագույն իշխան՝ օժտվելով սյուզերեն սուլթանի անունից իշխանապետությունը ղեկավարելու իրավասություններով: Ստեղծվում է սերբական իշխանապետության կենտրոնական և տեղական վարչական ինքնակառավարման և դատական մարմինների համակարգ, ազգային բանակ, ոստիկանություն և դպրոցական ցանց: Սերբական իշխանապետությունը իրավունք է ստանում հարաբերություններ հաստատելու օտարերկրյա պետությունների հետ, ինչպես նաև սյուզերեն կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում ունենալու իր դիվանագիտական հավատարմատարներին՝ Սերբիայի հետ առնչվող հարցերը անմիջականորեն թուրքական կառավարության հետ կարգավորելու համար: Թուրքական իշխանությունները լիովին զրկվում են Սերբական իշխանապետության վարչական կառավարմանը և, ընդհանրապես, նրա ներքին գործերին խառնվելու որևէ իրավունքից: Որպես օսմանյան սուլթանից վասալական կախում ունեցող իշխանապետություն՝ Սերբիան տարեկան պետք է վճարեր 2 մլն. 300 հազ. գրոշ կայուն հարկ, իսկ սերբական ամրոցներում պետք է պահպանվեին թուրքական կայազորները: Բացի նախկին թուրքական կայազորային ամրոցներից, հետագայում կառուցված բոլոր բերդերը և ռազմական ամրությունները ենթակա էին քանդման: Բացառությամբ թուրքական կայազորներով կայանված ամրոցների, թուրքերին կտրականապես արգելվում էր բնակվել սերբական իշխանապետության որևէ այլ տարածքում: Բոլոր թուրքերը պարտավոր էին իրենց անշարժ սեփականությունները վաճառել և մեկ տարվա ընթացքում

[49] Նույն տեղում: N63. Hatti-chérif, concernant l'autonomie serbe. Le 29 août 1830, p. 197-200. N64. Firman d'investiture de Milosch Obrénowitsch comme prince héréditaire de la Serbie. Septembre 1830, p. 201-202. N 86. Hatti-chérifréglant le statut organique de la Serbie. Donné de C.ple le 24 décembre 1838, p. 261-269:

հեռանալ Սերբական իշխանապետության տարածքից: Հեռացած մուսուլմանների չվաճառված անշարժ սեփականության իրավատերն էր դառնում Սերբական իշխանապետությունը: Վերջապես, Սերբական իշխանապետությունը Թուրքիայից ետ էր ստանում Առաջին սերբական ապստամբության ընթացքում Բելգրադի նահանգի սահմաններից դուրս ազատագրված վեց շրջանները: Տեղական վարչական ինքնակառավարման լայն իրավունքներով օժտված Սերբական վասալական իշխանապետությունը ամրապնդում է նաև միջազգայնորեն ճանաչվելու իր հնարավորությունը: 1836 թ. Բելգրադում հյուպատոսություն է հիմնում Ավստրիան, 1837 թ.՝ Անգլիան և Ռուսաստանը, իսկ 1839 թ.՝ Ֆրանսիան:

Սերբական ինքնավար իշխանապետությունը ստեղծվում է նախկին Բելգրադի նահանգի և նրանից դուրս վեց շրջանների սահմաններում: Սերբական ինքնավար իշխանապետության սահմաններից դուրս՝ Թուրքիայի լիակատար տիրապետության տակ էին մնում սերբական հողերի հարավային տարածքները՝ այսպես կոչված Հին Սերբիան: Այնուամենայնիվ, Սերբական ինքնավար իշխանապետությունը դառնում է թուրքական տիրապետության տակ մնացած բոլոր սերբական հողերի ազատագրման և միավորման քաղաքական կենտրոնը: Այդ մեծ նպատակի իրականացման համար սերբական պետական և քաղաքական գործիչ Իլիյա Գարաշանինը (1812-1874 թթ.) 1844 թ. կազմում է Մեծ Սերբիա ստեղծելու արտաքին քաղաքականության ծրագիրը՝ «Նաչերտանիեն», որը նախատեսում էր միապետական Սերբիայի գերիշխանության ներքո թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր հարավ-սլավոնական ժողովուրդների ազատագրումը և միավորումը: Ըստ Գարաշանինի՝ հարավ-սլավոնական հողերը իր գերիշխանությամբ միավորած հզոր և անկախ միապետական Մեծ Սերբիան անհաղթահարելի պատնեշ էր դառնալու Բալկաններում եվրոպական տերությունների, հիմնականում՝ Ավստրիական կայսրության նվաճողական քաղաքականության դեմ: Ձգտելով իրականացնել հարավ-սլա-

վոնական հողերը թուրքական տիրապետությունից ազատագրելու և Սերբիայի գերիշխանությամբ միավորելու իր ծրագիրը՝ բալկանյան երկրների միասնական հակաթուրքական դաշինք ստեղծելու նպատակով Գարաշանինը 1866-1867 թթ. մի շարք պայմանագրեր և համաձայնագրեր է կնքում Չեռնոգորիայի, Հունաստանի և Ռումինիայի հետ:

Ռուսաստանի պարտությունը 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմում մեծ հարված է հասցնում ոչ միայն Բալկանյան թերակղզու ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին, այլև Ռուսաստանի բալկանյան քաղաքականությանը և բալկանյան երկրների նկատմամբ նրա միանձնյա քաղաքական ավանդական հովանավորությանը: Օգտվելով ջախջախված ճորտատիրական Ռուսաստանի ռազմական թուլությունից՝ Ղրիմի պատերազմի քաղաքական արդյունքներն ամփոփող եվրոպական տերությունների 1856 թ. Փարիզի հաշտության կոնգրեսը Սերբական իշխանապետության վերաբերյալ կայացնում է որոշում, ըստ որի՝ վեց Մեծ տերությունները այլևս համատեղ կերպով պետք է հովանավորեին նրա ներքին ինքնավարությունը՝ «անկախ և ազգային կառավարումը», սակայն, նրա նկատմամբ պահպանելով սուլթանի գերագույն իշխանությունը: Որպես սուլթանի գերագույն իշխանության վկայություն՝ սերբական մի շարք ամրոցներում շարունակելու էին տեղակայված մնալ թուրքական կայազորները: Սակայն, առանց եվրոպական վեց հովանավոր տերությունների համաձայնության, թուրքական կառավարությանը կտրականապես արգելվում էր որևէ զինված միջամտություն կատարել Սերբական ինքնավար իշխանապետության ներքին գործերին[50]: Այնուամենայնիվ, սերբական ինքնավար իշխանապետության ներքաղաքական իրադրությանը հարատև սպառնալիք էին ստեղծում թուրքական կայազորներով տեղակայ-

[50] Annuaire des Deux Mondes.Histoire Général des divers états. VI.1855-1856. Paris; 1856.
VI. Protocoles du Congrès de Paris. Protocole n XIII. Séance du 24 mars 1856, p.925.

ված ամրոցները և դրանց շուրջը բնակություն հաստատած թուրքերը: Ապավինելով սերբական ամրոցներում կայանված թուրքական կայազորների պաշտպանությանը՝ նվաճողի հոգեբանությամբ թուրքերը հրաժարվում էին ենթարկվել ինքնավար իշխանապետության օրենքներին՝ մշտապես իրականացնելով տարբեր խժդժություններ ու վայրագություններ:

1862 թ. հունիսի 15-ին իշխանապետության մայրաքաղաք Բելգրադում սերբ բնակչության նկատմամբ թուրքերի կազմակերպած հերթական խժդժությունը պաշտպանություն է գտնում տեղի թուրքական ամրոցի կայազորի կողմից, որը հունիսի 17-ին 4.5 ժամ տևողությամբ հրետանային ավերիչ ռմբակոծության է ենթարկում սերբական թաղամասերը: Բելգրադում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ եվրոպական հովանավոր վեց տերությունների Կ.Պոլսի դեսպանների կոնֆերանսի կողմից 1862 թ. սեպտեմբերի 8-ին Սերբիայի վերաբերյալ ընդունած արձանագրության համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր անհապաղորեն կործանել Սերբիայում կառուցած իր բոլոր ռազմական ամրությունները, ինչպես նաև Սոկոլ և Ուժիցա ամրոցները: Այնուամենայնիվ, թուրքական կառավարությունը, տերությունների համաձայնությամբ, շարունակելու էր կայազորներ պահել սերբական չորս ամրոցներում, այդ թվում՝ Բելգրադի ամրոցում: Թուրքական կառավարությունը հավաստիացնում էր, որ միայն երկրի պաշտպանական նպատակներին ծառայող Բելգրադի ամրոցը երբևէ որևէ ճնշում չէր գործադրելու սերբական ինքնավար իշխանապետության վրա, չէր սահմանափակելու սուլթանների կողմից նրան շնորհած և միջազգային պայմանագրերով երաշխավորված արտոնությունները, ինչպես նաև բնավ չէր ահաբեկելու մայրաքաղաքի սերբ բնակչությանը: Բելգրադի թուրքական ամրոցի նահանգապետին արգելվում էր ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն կատարել մայրաքաղաքի կամ ինքնավար իշխանապետության ներքին գործերին՝ պարտավորեցնելով նրան պատշաճ հարգանք ցու-

ցաբերել երկրի ղեկավար իշխանի և կառավարության հանդեպ: Տերությունների որոշմամբ՝ Բելգրադի արվարձաններում և թուրքական կայազորներով տեղակայված ամրոցների շրջակայքի մուսուլման բնակիչները, իրենց հողերը և ընդհանրապես՝ անշարժ գույքը վաճառելով, արագորեն պետք է հեռանային Սերբական իշխանապետության տարածքից: Այնուամենայնիվ, մուսուլմանները կարող էին գործնական նպատակներով շրջագայել իշխանապետության տարածքում՝ անպայմանորեն ենթարկվելով ինքնավար իշխանապետության օրենքներին: Մուսուլման բնակիչների հեռանալուց հետո իշխանապետության տարածքում մուսուլմանական հոգևոր հաստատությունները, կառույցները, շինությունները, շիրիմները և դամբարանները պետք է պահպանվեին սերբական իշխանությունների կողմից[51]:

19-րդ դարի 60-ական թթ. բարենպաստ պայմաններ են ստեղծում Սերբիայում թուրքական իրական ներկայությունը վերացնելու համար: Սերբիայում թուրքական կայազորների գործադրած վայրագությունների, 1866-1869 թթ. կրետական ազատագրական ապստամբության, այդ կապակցությամբ սրված հույն-թուրքական հարաբերությունների և ընդհանրապես՝ Օսմանյան կայսրության համար Բալկաններում ստեղծված միջազգային ծանր իրադրության պայմաններում Սերբիան, Ռուսաստանի և մի շարք եվրոպական տերությունների դիվանագիտական աջակցությամբ կարողանում է 1867 թ. ապրիլի 10-ի սուլթանական հրովարտակով ազատվել իր իշխանապետության տարածքի չորս քաղաքներում, այդ թվում՝ մայրաքաղաք Բելգրադում, տեղակայված թուրքական կայազորների առկայությունից: Առանց որևէ փոխհատուցման՝ Սերբական իշխանապետության տնօրինությանն են հանձնվում նաև այդ ամրոցների ամբողջ սպառազինությունը և զինամթերքը: Բելգրադի ամրոցի աշտարակի վրա՝ որպես Օսմանյան կայսրության սյուզերեն իրավունք-

[51] Сборник договоров Росии с другими государствами. 1856-1917, М., 1952. N 13. Протокол по Сербским делам. К.Поль, 27 августа/8 сентября 1862, с. 85-92.

ների խորհրդանիշ, պահպանվում է թուրքական դրոշը, որի կողքին բարձրացվում է նաև Սերբական ինքնավար իշխանապետության դրոշը[52]: Այդպիսով՝ Բելգրադի ամրոցի աշտարակի վրա ծածանվող սյուզերեն տերության դրոշը և Օսմանյան կայսրությանը վճարվող ամենամյա հարկը սոսկ ձևականորեն խորհրդանշում էին Սերբական ինքնավար իշխանապետության վասալական կախվածությունը Օսմանյան կայսրությունից:

Օսմանյան տիրապետության տակ մնացած սերբական տարածքներից բացի, նաև Ավստրիական կայսրության կազմում էին գտնվում մի շարք սլավոնական և այլ երկրներ ու մարզեր: Դեռևս 1282 թ. Սլովենիան անցել էր Ավստրիայում իշխող Հաբսբուրգյան արքայատոհմի տիրապետության տակ: Թուրքիայի դեմ Ավստրիայի մղած 1683-1699 թթ. պատերազմում, որին մասնակցում էին նաև Վենետիկի հանրապետությունը, Լեհաստանը և Ռուսաստանը, 1698-1699 թթ. Կարլովիցում կայացած հաշտության կոնգրեսի որոշումներով՝ Հաբսբուրգյան արքայատոհմի տիրապետության տակ են անցնում հարավ-սլավոնական երկրներ Սլավոնիան և Խորվաթիան: Հետագայում՝ 1716-1718 թթ. ավստրո-թուրքական պատերազմի արդյունքում, Ավստրիային են անցնում սերբական տարածքներ Բանատը, Բաչկան և Սրեմը, որոնք 1848-1849 թթ. մինչև 1860 թ. միավորված էին մեկ միասնական՝ Վոյեվոդինա հերցոգության մեջ: Օգտվելով 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից՝ ռուսական զորքերի հեռանալուց հետո՝ 1775 թ., Ավստրիան գրավում է 14-րդ դ. կեսին Մոլդավիայի կազմի մեջ մտած արևելա-սլավոնական երկիր Բուկովինան: Ֆրանսիայի հետ Կամպոֆորմիոյում 1797 թ. կնքած հաշտության պայմանագրով Ավստրիան ստանում է Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմտյան՝ Ադրիատիկ ծովի

[52] Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome troisième. 1856-1878. Paris, 1902. N 768. Firman Imperial au Prince Michel de Serbie lui confiant la garde des forteresses Serbes de Belgrade, Feth Islam, Smédérevo et Chabatz. En date du 10 avril 1867, p. 260.

առափնյա սլավոնական պատմական տարածքներ Իստրիան և Դալմաթիան:

Թուրքիայի դեմ մղած 1683-1699 թթ. պատերազմում Հաբսբուրգյան կայսրությունը 1686 թ. ազատագրում է 1541 թ.-ից թուրքական տիրապետության տակ գտնվող Հունգարիան, իսկ 1687 թ. իր գերիշխանությունն է հաստատում 1526 թ. Մոխաչի ճակատամարտի հետևանքով քայքայված հունգարական թագավորությունից անջատված և պատմական Դակիայի տարածքում թուրքական սյուզերենության ներքո 1541 թ. առաջացած արևելա-ռոմանական իշխանապետություն Տրանսիլվանիայի վրա: Սլավոնիայի Կարլովից քաղաքում 1699 թ. հունվարի 26-ին կնքված հաշտության պայմանագրով, հօգուտ Ավստրիայի, Թուրքիան հրաժարվում է Տրանսիլվանիայից և Հունգարիայից:

Թուրքական նվաճումներից պաշտպանվելու նպատակով Հունգարիայի կառավարող շրջանների Պետական ժողովը 1687 թ. հարկադրված ընդունում է Հաբսբուրգյան արքայատոհմի ժառանգական իրավունքները հունգարական գահի նկատմամբ՝ նույնպես դառնալով ավստրիական բազմազգ կայսրության բաղկացուցիչ մասը: Այդպիսով՝ պատմական տարբեր ժամանակաշրջաններում, մասնավորապես՝ թուրքական հարձակումների դեմ 1532 թ.-ից մինչև 1790 թ. մղած ինը պատերազմների արդյունքում, իր սահմաններն ընդլայնած Ավստրիան վերածվում է բազմազգ կայսրության՝ 1282 թ.-ից իշխող Հաբսբուրգյան արքայատոհմի գլխավորությամբ:

Հաբսբուրգյան բազմազգ կայսրության սլավոնական ժողովուրդների և, մասնավորապես, առավել ուժգին ծավալվող հունգարների ազգային-ազատագրական շարժումները կանխելու նպատակով ավստրիական կառավարվող շրջանները հարկադրված էին 1867 թ. փետրվարին հունգարական ազգային շարժման ղեկավարների հետ կնքել փոխզիջումային համաձայնություն՝ Հունգարիային շնորհելով Ավստրիային իրավահավասար քաղաքական իրավունք-

ներ՝ Հաբսբուրգյան կայսրությունը վերածելով Ավստրո-Հունգարական երկմիասնական (դուալիստական) կայսրության: Այդ թվականից Ավստրո-Հունգարական երկմիասնական կայսրության երկու իրավահավասար պետություններից յուրաքանչյուրը պետք է ճնշեր իր կազմում գտնվող սլավոնական ժողովուրդների ազգային շարժումները: Սակայն, չդադարող ազգային շարժումների հետևանքով առաջացած երկմիասնական կայսրության ներքաղաքական ճգնաժամը, ի վերջո, դառնում է Հաբսբուրգյան բազմազգ կայսրության կործանման հիմնական պատճառներից մեկը:

Չեռնոգորիա (Ցրնա Գորա)

Ժամանակակից Չեռնոգորիայի Հանրապետության սահմաններում է գտնվում դեռևս 7-րդ դ. սերբական Դուկլյան ցեղով բնակեցված պատմական Դիոկլեայի տարածքը, որը 11-րդ դ. Զետա է կոչվել Սկադերի (Սկադար) լիճը թափվող Մորաչա գետի համանուն աջ վտակի անունով: 9-րդ դ. կեսերին այդ տարածքում առաջանում է սերբական Դուկլեա իշխանապետությունը, որը, Հռոմի պապի աջակցությամբ, 1077 թ. դառնում է ինքնուրույն թագավորություն, իսկ 1089 թ. ձեռք է բերում եկեղեցական անկախություն: Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով Զետայի թագավորությունը 12-րդ դ. բաժանվում է Ռաշկա, Բոսնա և Զետա ինքնուրույն մասերի: 1170 թ. Զետան, որպես նահանգ, միացվում է միավորված Սերբական իշխանապետությանը (1159-1217 թթ.): Սակայն սերբական թագավորության (1217-1371 թթ.) քայքայման հետևանքով, այդ տարածքը 1366 թ. անջատվում է՝ առանձնանալով որպես ինքնուրույն քաղաքական միավոր: Օգտվելով թուրքական լայնածավալ նվաճումների հետևանքով Բալկանյան թերակղզում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունից և, մասնավորապես, Կոսովոյի ճակատամարտում թուրքերի հաղթանակից՝ Վենետիկյան հանրապետությունը 1396 թ. իր տիրապետությունն է հաստատում

Զետայի իշխանապետության կենտրոն Սկադարի վրա, իսկ այնուհետև Ադրիատիկ ծովի արևելյան ափին 1420 թ. գրավում է Կոտոր, 1425 թ.՝ Ուլցին, իսկ 1443 թ.՝ Բուդվա և Բար նավահանգիստները:

Թուրքական հարձակումներից պաշտպանվելու նպատակով Զետայի իշխանապետության կառավարիչ Ստեֆան Չեռնոևիչը (1426-1465 թթ.) ստիպված 1444 թ. ընդունում է հարավային Զետայում Վենետիկյան հանրապետության գերագույն իշխանությունը և, որպես վասալ մնալով Վերին Զետայի կառավարիչ, իր նստավայրն է դարձնում Դուրմիտորյան լեռներում գտնվող Ժաբլյակ քաղաքը:

1459 թ. սերբական իշխանապետության, 1463 թ. Բոսնիական թագավորության և 1479 թ. Ալբանիայի նվաճման հետևանքով թուրքերը 1479 թ. գրավում են Վենետիկյան հանրապետության տիրապետության տակ գտնվող Սկադարը և իրենց գերիշխանությունն են հաստատում Զետայի հարթավայրային մասում: Հետագայում՝ 1571 թ., թուրքերը գրավում են նաև Ուլցին և Բար նավահանգիստները: Ուլցինի գրավումով թուրքերը ավարտում են Զետայի նվաճումը:

Վենետիկյան հանրապետությունը Ադրիատիկ ծովի արևելյան ափին թուրքական նվաճումից կարողանում է իր տիրապետությունը պահպանել Զետայի իշխանապետությունից 1420 թ. գրաված Կոտոր նավահանգստի վրա: Հետագայում՝ 1797 թ., Կամպոֆորմիոյում կնքված ֆրանս-ավստրիական հաշտության պայմանագրով վերացված Վենետիկյան հանրապետության Կատտարո վարանվանված Կոտոր նավահանգիստը տրվում է Ավստրիական կայսրությանը՝ նրա կազմում մնալով մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը:

Թուրքերի կողմից 1482 թ. Ժաբլյակը զավթելու հետևանքով Զետայի կառավարիչ Իվան Չեռնոևիչը (1465-1490 թթ.) իր ժողովրդով բարձրանում է հյուսիսային Զետայի դժվարամատչելի՝ Չոռնիե գորի կոչված լեռնային շրջանը և Լովչեն լեռան արևելյան լանջին՝ ծովի մակերևույթից 641 մ բարձրության վրա, դեպի Ադրիատիկ ծովը հոսող Ցետինա գետի հովտում, 1484 թ. հիմնադրում

է Ցետինե վանքը և համանուն քաղաքը, որն էլ դառնում է իշխանապետության քաղաքական և եկեղեցական հոգևոր թեմի՝ միտրոպոլիտության կենտրոնը: Նույն թվականին Իվան Չեռնոևիչը Ցետինեում կազմակերպում է նաև տպագրական գործը՝ հիմնելով Բալկաններում առաջին տպարանը:

15-րդ դարի 80-ական թթ. թուրքերն իրենց գերիշխանությունն են հաստատում նաև վերին՝ հյուսիսային Զետայի բարձրաբերձ լեռնային մասի վրա, որն էլ այդ ժամանակից սկսում է կոչվել Չեռնոգորիա (ֆր. Մոնտենեգրո, թուրք. Կարադաղ): Ի դեպ՝ «Չեռնոգորիա» աշխարհագրական տեղանունն առաջին անգամ հիշատակվում է Սերբիայի թագավոր Միլուտին Նեմանիչի (1282-1321 թթ.) հրովարտակներից մեկում:

1499 թ. Չեռնոգորիան պաշտոնապես դառնում է Օսմանյան կայսրության բաղկացուցիչ տարածքը, բայց չեռնոգորցիները չեն ճանաչում թուրքերի գերիշխանությունը՝ կառավարվելով իրենց ցեղային առաջնորդների՝ իշխանների (կնեզների) և ռազմական առաջնորդների՝ վոյեվոդների կողմից: Իշխանապետության ներքին կյանքին ու արտաքին հարաբերություններին վերաբերող կարևորագույն խնդիրները՝ միտրոպոլիտի գլխավորությամբ, վճռվում էին ցեղային առաջնորդներից և վոյեվոդներից բաղկացած համապետական ներկայացուցչական ժողովի՝ Սկուպշչինայի կողմից:

1691-1692 թթ. թուրքերն ավերիչ արշավանքով ենթարկում են Չեռնոգորիան, բայց լեռնային և ազատատենչ չեռնոգորցիները երբեք չեն դադարեցնում պայքարը թուրքական տիրապետության դեմ: Անկախության համար պայքարին եռանդուն մասնակցություն էր ցուցաբերում Չեռնոգորիայի ուղղափառ եկեղեցին, որի միտրոպոլիտները շատ հաճախ իրենք էին ղեկավարում թուրքերի դեմ մղած ճակատամարտերը: 1346 թ. միտրոպոլիայի վերածված Չեռնոգորիայի ուղղափառ եկեղեցու գլուխը՝ միտրոպոլիտը, որի նստավայրն էր Ցետինեն, միաժամանակ աշխարհիկ իշխանության գլուխն էր: Նա էր իրականացնում նաև դատական իշխանությունը:

Չեռնոգորիայի ազգային-ազատագրական պայքարը համախմբելու և ղեկավարելու գործում Ցետինեի միտրոպոլիտության դերը ավելի է մեծանում, երբ թուրքական կառավարության կողմից սերբական եկեղեցու Պեչի պատրիարքությունը վերացնելուց հետո դառնում է ինքնուրույն (ավտոկեֆալ), որի անկախությունը փաստորեն ճանաչվում է Կ. Պոլսի հունական պատրիարքի կողմից:

1697 թ. Դանիլո Պետրովի Նեգոշը Սկուպշչինայի կողմից ընտրվում է Չեռնոգորիայի ուղղափառ եկեղեցու պետ՝ միտրոպոլիտ (1697-1735 թթ.), հիմք դնելով Նեգոշների ժառանգական իշխանատոհմին (1697-1918 թթ.): Հենվելով քրիստոնյա չեռնոգորցիների աջակցության վրա՝ միտրոպոլիտ Դ. Նեգոշը ոչնչացնում է թուրքական տիրապետության հենարան, իսլամ ընդունած և թուրքացած չեռնոգորցիների մի մասին, իսկ նրանց մեծ մասը փախչում և ապաստանում է Թուրքիայում:

Իշխանապետության ներքին միասնականությունը ամրապնդելու նպատակով միտրոպոլիտ Դ. Նեգոշի իրականացրած բարեփոխումները սկիզբ են դնում ցեղային անջատականության վերացմանը: Այդ առումով՝ 1713 թ. ստեղծվում է 12 ցեղային ավագներից բաղկացած բարձրագույն դատական մարմինը՝ «Միտրոպոլիտ Դանիլոյի դատարան»-ը: Վենետիկյան հանրապետության առաջարկությամբ և նյութական աջակցությամբ 1717 թ. միտրոպոլիտ Դանիլո Նեգոշը հիմնում է բարձրագույն քաղաքացիական իշխանությամբ օժտված Չեռնոգորիայի ընտրովի նահանգապետի (գուվերնատուրի) պաշտոնը:

1711 թ. Չեռնոգորիան ռազմական և քաղաքական կապեր է հաստատում Ռուսաստանի հետ: 1715 թ. միտրոպոլիտ Դ. Նեգոշը մեկնում է Ռուսաստան, և այդ ժամանակվանից Ռուսաստանը դառնում է Չեռնոգորիայի փաստական քաղաքական հովանավորը՝ կանոնավորապես նրան տրամադրելով զենք, զինամթերք, դրամական միջոցներ և ցորեն: Իր հերթին, Չեռնոգորիան հանդես է գալիս Ռուսաստանի ռազմական դաշնակից:

Թուրքիայի դեմ 1787-1791 թթ. մղած ավստրո-ռուսական պատերազմում միտրոպոլիտ Պյոտր 1-ին Նեգոշը (1781-1830 թթ.) գլխավորում է չեռնոգորցիների պայքարը թուրքերի դեմ և 1796 թ. սեպտեմբերի 22-ի հաղթանակով սկիզբ դնում Չեռնոգորիայի փաստական անկախությանը: Թուրքերի դեմ տարած հաղթանակները նշանակալիորեն ամրապնդում են միտրոպոլիտ Պյոտր 1-ին Նեգոշի իշխանությունը և հեղինակությունը, որի հետևանքով իշխանապետության Սկուպշչինան նրան օժտում է կառավարման գերագույն լիազորություններով և հռչակում «չեռնոգորյան ժողովրդի առաջնորդ և հովանավոր»:

Թուրքիայի դեմ մղած պատերազմներում լեռնային փոքրիկ Չեռնոգորիայի հաղթանակը և դրա անմիջական արդյունքում նրա տարածքի որոշակի ընդլայնումը մեծ նշանակություն է ունենում իշխանապետության հեղինակության բարձրացման և միջազգային դրության ամրապնդման գործում: Այդ առումով՝ նշանակալիորեն մեծանում է Չեռնոգորիայի դերը Ռուսաստանի բալկանյան քաղաքականության բնագավառում: Ուստի Չեռնոգորիայի իշխանապետության հետ քաղաքական հարաբերություններն ընդլայնելու և ամրապնդելու նպատակով Ռուսաստանը 1804 թ. հատուկ հյուպատոս է նշանակում Ցետինեի մոտ գտնվող Ադրիատիկ ծովի ավստրիական Կոտոր (Կատտարո) նավահանգստում: Իր հերթին, նույն թվականի օգոստոսի 16-ին իշխանապետության ներկայացուցչական մարմինը՝ Սկուպշչինան, երդվում է առհավետ հավատարիմ մնալ Ռուսաստանին[53]:

Թուրքերի դեմ չեռնոգորցիների տարած 1796 թ. ռազմական հաղթանակը նաև պայմաններ է ստեղծում իշխանապետության պետական կառավարման համակարգը կազմակերպելու համար: Այդ համապետական խնդրի իրականացման ֆինանսական դժվարությունները հաղթահարելուն մեծապես նպաստում է Չեռնոգո-

[53] История Югославии, т 1, М., 1963, с. 351.

րիային յուրաքանչյուր տարի հազար ցեխին (մոտ երեք հազար ռուբլի) լրահատկացում (սուբսիդիա) տրամադրելու մասին Ռուսաստանի կայսր Պավել 1-ի կողմից 1798 թ. կայացված որոշումը[54]: Ֆինանսական օգնությունից բացի, Ռուսաստանը Չեռնոգորիային ցուցաբերում է նաև դիվանագիտական աջակցություն: Այսպես. 1799 թ. հունվարին Պավել 1-ինը Կ. Պոլսի իր դեսպանին կարգադրում է հանդես գալ Չեռնոգորիայի իշխանապետության շահերի պաշտպանությամբ:

1798 թ. հոկտեմբերի 18-ին իշխանապետության Սկուպշչինան ընդունում է Չեռնոգորիայի առաջին համապետական օրենսգիրքը, որը 1803 թ. լրացվում է նոր հոդվածներով: 1798 թ. ստեղծվում է Չեռնոգորիայի բոլոր ցեղերի և շրջանների ավագներից բաղկացած, բարձրագույն վարչական և դատական լիազորություններով օժտված մարմինը՝ իշխանապետության կառավարությունը: Կառավարության գլուխն էր իշխանապետության միտրոպոլիտը, որը միաժամանակ գերագույն գլխավոր հրամանատարն էր և արտաքին քաղաքականության ղեկավարը: Չեռնոգորիայի բոլոր ցեղերի և շրջանների ավագներից բաղկացած իշխանապետության բարձրագույն մարմնի՝ կառավարության փոխարեն 1831 թ. ստեղծվում է 16 ցեղապետներից բաղկացած խորհրդակցական օրենսդիր մարմին՝ Կառավարող սենատը: Կառավարության կողմից ցեղերի ղեկավարներ են նշանակվում կապիտանները, որի հետևանքով ցեղային ավագների նշանակալի մասը զրկվում է իր նախկին արտոնություններից: Միաժամանակ ստեղծվում են իշխանապետության դատաոստիկանական մարմինները: 1833 թ. կարգավորվում է հարկային քաղաքականությունը:

Ռուսաստանի անմիջական միջամտության հետևանքով 1831 թ. վերացվում է նահանգապետի (գուվերնատուրի) պաշտոնը, որովհետև նահանգապետները ձգտում էին միտրոպոլիտի փոխարեն

[54] Նույն տեղում, էջ 350:

միայն իրենց ենթարկելու Չեռնոգորիայի ամբողջ գերագույն աշխարհիկ իշխանությունը և քաղաքականապես կողմնորոշվում էին դեպի Վենետիկյան հանրապետությունը, իսկ նրա անկումից հետո՝ դեպի Ավստրիական կայսրությունը: Նահանգապետի պաշտոնի վերացումը նպաստում է Չեռնոգորիայի կենտրոնական իշխանության ամրապնդմանը և ռուսական կողմնորոշման ուժեղացմանը:

Որոշակի ուշադրություն է դարձվում ուսումնական գործի կազմակերպմանը և դպրոցաշինարարությանը: Իշխանապետության կենտրոն Ցետինեում 30 աշակերտներով 1833 թ. հիմնվում է Չեռնոգորիայի առաջին տարրական դպրոցը: Ինը տարի անց արդեն գործում էին տարրական 6 դպրոցներ: Տարրական դպրոցների շրջանավարտների որոշ մասը իր կրթությունը շարունակում էր Ռուսաստանի և Սերբիայի ուսումնական հաստատություններում: 1834 թ. Ցետինեում հիմնվում է նոր տպարան, որտեղ տպագրվում էին պաշտոնական փաստաթղթերը և առաջին չեռնոգորյան «Գորլիցա» օրաթերթը (մինչև 1852 թ.):

Իշխանապետությունը որոշակի հաջողությունների է հասնում նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Ռուսաստանի միջնորդությամբ 1841 թ. հաստատվում է ավստրո-չեռնոգորյան սահմանը, իսկ Հերցեգովինայի կառավարչի հետ 1842 թ. կնքած հաշտության պայմանագրով՝ Չեռնոգորիայի և Հերցեգովինայի միջև սահմանը: Այդ պայմանագրում Չեռնոգորիան առաջին անգամ անվանվում է «անկախ մարզ»[55]:

1851 թ. հոկտեմբերի 19-ին մահացած միտրոպոլիտ Պյոտր 2-րդ Նեգոշի՝ Ադրիատիկ ծովի ավստրիական Դուբրովնիկ (Ռագուզա) նավահանգստի ռուսական հյուպատոսությանը ի պահպանություն տրված կտակի համաձայն՝ Չեռնոգորիայի իշխանապետության գահի իրավաժառանգորդ էր նշանակվում նրա 25-ամյա ազգական Դանիլո Պետրովը: Վիեննայում հավատարմագրված Ռու-

[55] Նույն տեղում, էջ 353-354:

սաստանի դեսպանորդին նոյեմբերի 14-ին Պետերբուրգից տեղեկացվում էր, որ Նիկոլայ 1-ինը Դանիլո Նեգոշին ճանաչում է Չեռնոգորիայի իշխանապետության գահի օրինական իրավաժառանգորդ, և նա գտնվում է Ռուսաստանի հովանավորության ներքո: Դանիլո Նեգոշին Չեռնոգորիայի իշխանապետ ճանաչելու վերաբերյալ Նիկոլայ 1-ինի ուղերձը ցեղապետների ներկայությամբ նոյեմբերի 20-ին Սենատում հրապարակվելուց հետո Դանիլոն ճանաչվում է Չեռնոգորիայի գերագույն կառավարիչ:

1852 թ. հունվարի 1-ին իշխանապետության Սկուպշչինան Դանիլո 1-ին Նեգոշին հռչակում է Չեռնոգորիայի գերագույն կառավարիչ, իսկ մարտի 1-ին կայացնում է որոշում՝ Նեգոշների ժառանգական իշխանատոհմի ղեկավարությամբ Չեռնոգորիայում աշխարհիկ կառավարման համակարգին անցնելու և միտրոպոլիտին միայն ուղղափառ եկեղեցու հոգևոր գլուխ ճանաչելու մասին: Վիեննայում հավատարմագրված Ռուսաստանի դեսպանորդը Պետերբուրգ է հղում հեղինակավոր ավագների, հոգևորականության ներկայացուցիչների, Սենատի անդամների կողմից Նիկոլայ 1-ինին ուղղված համաժողովրդական խնդրագիրը, որը հայցում էր պաշտպանել Չեռնոգորիան աշխարհիկ իշխանապետության վերածելու վերաբերյալ Սկուպշչինայի կայացրած որոշումը: Ընդունելով հունվարին Պետերբուրգում գտնվող Դանիլոյին՝ Նիկոլայ 1-ինը պատրաստակամություն է արտահայտում պաշտպանելու Չեռնոգորիան աշխարհիկ պետության վերածելու վերաբերյալ չեռնոգորյան ժողովրդի կայացրած որոշումը:

1852 թ. հունիսի 18-ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական հայտարարությամբ, աջակցություն էր արտահայտվում Չեռնոգորիայում հաստատված կառավարման աշխարհիկ համակարգին: Օգոստոսին Ցետինեի եկեղեցու բակում, ի լուր ժողովրդի, նախ՝ ռուսերեն և ապա՝ սերբերեն հրապարակվում է Չեռնոգորիայի աշխարհիկ պետական կառավարման համակարգին աջակցելու ռուսական կառավարության պատրաստակա-

մությունը արտահայտող փաստաթուղթը: Այնուհետև, Պետերբուրգում Ստանիսլավի 1-ին աստիճանի շքանշանի արժանացած Դանիլո Նեգոշը Նիկոլայ 1-ինի կողմից իր տնօրինությանը հանձնված շքանշաններով ու մեդալներով պարգևատրում է Չեռնոգորիայի ավագանու ներկայացուցիչներին ու անվանի ցեղապետներին:

Սեպտեմբերի 9-ին Ցետինեում Սկուպշչինան հանդիսավոր պայմաններում Դանիլո 1-ին Նեգոշին հռչակում է Չեռնոգորիայի իշխանապետ: Այդպիսով՝ Չեռնոգորիայում ավարտվում է կառավարման աստվածապետական վարչաձևը և աշխարհիկ իշխանությունը բաժանվում է հոգևոր իշխանությունից: Չեռնոգորիայի միտրոպոլիտը մնում է միայն իշխանապետության ուղղափառ եկեղեցու հոգևոր գլուխ:

Չհաշտվելով Չեռնոգորիան աշխարհիկ պետության վերածելու իրողության հետ՝ թուրքական կառավարությունը 1852 թ. դեկտեմբերին 30 հազարանոց բանակով ռազմական գործողություններ է ծավալում իշխանապետության դեմ: Ռուսաստանի և Ավստրիայի դիվանագիտական միջամտության հետևանքով թուրքական կառավարությունը 1853 թ. փետրվարի 28-ին դադարեցնում է պատերազմը Չեռնոգորիայի դեմ՝ վերադարձնելով գրաված Գրահովոն և գերիներին:

Թուրքական հարձակումից հետո իշխանապետությունում շարունակվում են կենտրոնացված պետական կառավարման համակարգի ամրապնդման և երկրի պաշտպանունակության ուժեղացման միջոցառումները:

1855 թ. ապրիլի 23-ին իշխանապետության Սկուպշչինան ընդունում է այսպես կոչված Դանիլո 1-ինի Օրենսգիրքը՝ 93 հոդվածներից բաղկացած Սահմանադրությունը: Այն հռչակում էր օրենքի առաջ բոլոր քաղաքացիների իրավահավասարության, մասնավոր սեփականության անձեռնմխելիության, անձի ազատության սկզբունքները: Սահմանադրությունը օրենսդրորեն ամրապնդում էր կառավարման բացարձակ միապետության վարչաձևը: Իշխանը

հռչակվում էր պետության անձեռնմխելի, սրբազան գլուխ և գլխավոր հրամանատար: Նա օժտված էր օրենսդիր իշխանության, բարձրագույն պաշտոնյաներին նշանակելու, արտաքին քաղաքականություն վարելու, մահվան դատապարտելու կամ ներում շնորհելու լիազորություններով: 1831 թ. հիմնված իշխանապետության Կառավարող սենատը հիմնականում բաղկացած էր պետության գլխի ազգականներից և նրա համախոհներից՝ իրականացնելով նրա բոլոր կարգադրությունները: Սկուպշչինան սոսկ ձևականորեն հաստատում էր իշխանի հրապարակած օրենքները և կայացրած որոշումները: Մինչև 1868 թ. պետական գանձարանը չէր անջատված իշխանականից: Օրենսգիրքը հստակորեն որոշում էր պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները, խստագույն պատիժներ սահմանում պաշտոնեական դիրքը չարաշահողների, կաշառակերների, կաշառատուների և հասարակական կարգը խախտողների նկատմամբ[56]:

1855 թ. Օրենսգիրքը մեծապես նպաստում է Չեռնոգորյան իշխանապետության կենտրոնացված կառավարման համակարգի ամրապնդմանը:

Բացի 1855 թ. սահմանադրական ակտից, 50-ական թթ. կատարվում են նաև իշխանապետության ռազմական կառույցների և վարչական համակարգի վերափոխումներ: 1853 թ. կատարվում է 18-ից մինչև 50 տարեկան բոլոր զինապարտների հաշվառում: Կատարելագործվում է ռազմական նախապատրաստությունը: Չեռնոգորյան բանակը, որի հիմքն էր կազմում իշխանապետության աշխարհազորը, ստորաբաժանվում է տասնյակների, հարուրյակների և հազարյակների: Ստեղծվում է մեկ հազարյակից բաղկացած գվարդիա: Կատարվում է նաև տեղական կառավարման համակարգի վերափոխում: Տարածքային խոշոր միավորները փոքրացվում են, վերացվում է ցեղային ավագների՝ կնեզների (իշխանների)

[56] Annuaire des Deux Mondes. Histoire Générale des divers États. VI. 1855-1856. Paris, 1856. IX. Constitution du Monténégro, p. 946-952.

պաշտոնը: Վարչական, դատական և ռազմական իշխանությունը ցեղերում պահպանում են կապիտանները (մինչև 1871 թ. բարեփոխումը): Նրանց են ենթարկվում հարյուրապետները և տասնապետները, որոնք, բացի ռազմական ու վարչական իշխանությունից, վարում էին նաև դատական որոշակի գործեր: Առաջին անգամը լինելով՝ 1855 թ. կատարվում է մարդահամար, որի տվյալներով Չեռնոգորիայի բնակչությունը հասնում էր 80 հազարի: Այդպիսով՝ 50-ական թթ. Չեռնոգորիայի իշխանապետության հասարակական-քաղաքական կյանքում տեղի են ունենում նշանակալի փոփոխություններ: 1852 թ. վերացվում է իշխանապետության կառավարման աստվածապետական վարչաձևը: Դանիլո 1-ի Օրենսգիրքը, երկրում կատարված վարչական և ռազմական բարեփոխումները ամրապնդում էին Չեռնոգորիայի աշխարհիկ իշխանապետության կենտրոնացված քաղաքական համակարգը՝ որոշակիորեն նպաստելով երկրի առջև ծառացած արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը հետամուտ լինելու համար:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմում ջախջախիչ պարտություն կրած Ռուսաստանը, Փարիզի հաշտության կոնգրեսում բանակցությունների ընթացքը չբարդացնելու նպատակով, խուսափում է Չեռնոգորիայի փաստական անկախությունը ճանաչելուց: Պատասխանելով Չեռնոգորիայի հանդեպ Ռուսաստանի ցուցաբերած հարաբերությունների բնույթի վերաբերյալ ավստրիական պատվիրակի հարցին՝ Ռուսաստանի ներկայացուցիչները հայտարարում են, որ Ռուսաստանի և Չեռնոգորիայի հարաբերությունները խարսխված են Ռուսաստանի հանդեպ չեռնոգորցիների տածած սոսկ համակրական վերաբերմունքի և այդ լեռնականների նկատմամբ Ռուսաստանի ցուցաբերած բարյացակամ զգացմունքների վրա[57]: Հենվելով Չեռնոգորիայի վերաբերյալ ռուսական պատվի-

[57] Annuaire des Deux Mondes. Histoire Générale des divers États. VI. 1855-1856. Paris, 1856.
Protocole n² XIV. Séance du 25 mars 1856, p. 927.

րակների արտահայտած պաշտոնական հայտարարության վրա՝ Փարիզի հաշտության կոնգրեսը մարտի 26-ին կազմում է արձանագրություն՝ շեշտելով, որ Ռուսաստանը այդ նահանգի հետ չի պահպանում քաղաքական բնույթի բացառիկ հարաբերություններ[58]: Միաժամանակ, թուրքական պատվիրակը հայտարարում է, որ Չեռնոգորիան Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասն է, և շեշտում, որ թուրքական կառավարությունը նպատակ չունի փոփոխության ենթարկելու իշխանապետության կարգավիճակը, այսինքն՝ չի ճանաչում նրա փաստական անկախությունը[59]: Թուրքական պատվիրակի այդ ելույթից հետո Չեռնոգորիայի վերաբերյալ կոնգրեսի կազմած արձանագրությունը կարդացվում է և ընդունվում[60]:

Փարիզի հաշտության կոնգրեսից հետո Դանիլո 1-ին Նեգոշը հանդես է գալիս սուլթանական կառավարության հետ Չեռնոգորիայի կարգավիճակի վերաբերյալ անմիջական բանակցություններ վարելու նախաձեռնությամբ:

1856 թ. օգոստոսին Դանիլո 1-ինը թուրքական կառավարությանը ներկայացնում է մի Պայմանագիր, ըստ որի՝ Չեռնոգորիայի քաղաքական անկախությունը ճանաչելու, Հերցեգովինայի մի մասը, Հյուսիսային Ալբանիայի սահմանամերձ շրջանները և Ադրիատիկ ծովի առափնյա շրջանը՝ Անտիվարի նավահանգստով, Չեռնոգորիային միացնելու, Նեգոշների իշխանատոհմի ժառանգական իրավունքները ճանաչելու, Կ. Պոլսում Չեռնոգորիայի դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու պարագայում համաձայնում էր ճանաչել օսմանյան սուլթանի անվանական սյուզերենությունը: Սակայն, թուրքական կառավարությունը մերժում է օսմանյան սուլթանի սյուզերենությունը Չեռնոգորիայի նկատմամբ ճանաչելու վերաբերյալ Դանիլո 1-ինի առաջադրած պայմանները: Դեմ լինելով

[58] Նույն տեղում, Protocole n² XV. Séance du 26 mars 1856, p. 928:
[59] Նույն տեղում:
[60] Նույն տեղում:

Չեռնոգորիայի անկախությունը սուլթանի սյուզերենության ներքո ճանաչելուն՝ Դանիլո 1-ինի Պայմանագրի դեմ է հանդես գալիս նաև ռուսական դիվանագիտությունը:

Չեռնոգորիային սահմանակից Շկոդերի սանջակի (գավառի) և Բոսնիական վիլայեթի (նահանգի) մարզերում 1857 թ. ամռանը բռնկված հակաթուրքական ապստամբությանը Դանիլո 1-ինը ցուցաբերում է զինված օգնություն: Ապստամբության ընթացքում այդ մարզերը փաստացիորեն անցնում են Չեռնոգորիայի տիրապետության ներքո: Ի պատասխան՝ 1858 թ. ապրիլի 26-ին թուրքական զորքերը ռազմական գործողություններ են սկսում Չեռնոգորիայի դեմ: Մայիսի 13-ին Գրահովոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական բանակը պարտություն է կրում՝ տալով 3000, իսկ չեռնոգորյանը՝ 1000 սպանված: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դիվանագիտական ճնշման ներքո թուրքական կառավարությունը դադարեցնում է Չեռնոգորիայի դեմ ուղղված ռազմական գործողությունները՝ համաձայնելով քննարկել իշխանապետության հետ սահմանազատում կատարելու հարցը: Ալբանիայի ու Հերցեգովինայի հետ Չեռնոգորիայի սահմանագիծը որոշելու համար եվրոպական տերությունների հյուպատոսներից և Չեռնոգորիայի ներկայացուցչից բաղկացած հանձնաժողովը հոկտեմբերին ավարտում է քարտեզագրման աշխատանքները: 1858 թ. նոյեմբերի 8-ին և ապա՝ 1859 թ. Կ. Պոլսում եվրոպական հինգ տերությունների դեսպանները և թուրքական կառավարության ներկայացուցիչները ստորագրում են Չեռնոգորիայի և Ալբանիայի ու Հերցեգովինայի սահմանագծի վերաբերյալ արձանագրություն (վերջնական արձանագրությունը ստորագրվում է 1860 թ. ապրիլի 17-ին)[61]: Այդ սահ-

[61] Noradounghian G., նշվ. աշխ., h. 3. 1856-1878:
N 703. Protocole de délimitation des frontiers de l'Albanie, de l'Herzégovine et du Monténégro. Signé à C.ple le 8 novembre 1858, p.118.
N 708. Protocole d'examen du travail des Comissaires chargés de la délimitation de l'Albanie, de l'Herzégovine et du Monténégro. Signé à C.ple, le 17 avril 1860, p. 123.

մանագծի հաստատման հետևանքով Չեռնոգորիային են միացվում Հերցեգովինայի վիլայեթի և Շկոդերի սանջակի մի շարք տարածքներ, որի հետևանքով այդ փոքրիկ լեռնային իշխանապետության ընդամենը 80 հազար բնակչությամբ 1000 կմ^2 տարածքը դառնում է 5 հազար կմ^2՝ 130 հազար բնակչությամբ:

Եվրոպական տերությունների և թուրքական կառավարության կողմից Օսմանյան կայսրության հետ Չեռնոգորիայի պետական սահմանի հաստատումը մեծապես նպաստում է իշխանապետության հեղինակության բարձրացմանը և նրա միջազգային դրության ամրապնդմանը:

1861 թ. սկզբին Հերցեգովինայում թուրքական տիրապետության դեմ կրկին բռնկված ապստամբությանը ռազմական օգնություն ցուցաբերող Չեռնոգորիայի դեմ թուրքական կառավարությունը նախապատրաստում է նոր պատերազմ՝ 1862 թ. ապրիլին եվրոպական տերություններին հղած նոտայով հաղորդելով իր այդ որոշումը՝ միաժամանակ խոստանալով չխախտել իշխանապետության վարչական կարգավիճակը և տարածքային ամբողջականությունը[62]: Չեռնոգորիայի վրա երկու ուղղություններով՝ Ալբանիայից ու Հերցեգովինայից հարձակվելու համար թուրքական կառավարությունը առանձնացրել էր 54 հազարանոց բանակ, մինչդեռ այդ ահռելի ուժին պետք է դիմակայեր ընդամենը 16 հազար աշխարհազորայիններից բաղկացած և 17 լեռնային հրանոթներով զինված իշխանապետության բանակը: Մայիսի 24-ին և 25-ին թուրքերը երկու ուղղություններով սկսում են հարձակումը՝ գրավելով և ավերելով Չեռնոգորիայի մեծ մասը՝ ընդհուպ մոտենալով իշխանապետության կենտրոն Ցետինեին: 1860 թ. հուլիսի 31-ին սպանված Չեռնոգորիայի իշխան Դանիլոյին փոխարինած Նիկոլա Նեգոշը (1860-1918 թթ.) դիվանագիտական միջնորդության խնդրանքով դիմում է ռուսական կառավարությանը: Օգոստոսի 2-ին թուրքական կառավարությանը

[62] Хитрова Н. И., Черногория в национально-освободительном движении на Балканах и русско-черногорские отношения в 50-70-х годах XIX века, М., 1979, с. 192.

հղած նոտայով Ռուսաստանը պահանջում է դադարեցնել Չեռնոգորիայի դեմ ուղղված պատերազմը: Ռուսաստանի դիվանագիտական ջանքերի շնորհիվ՝ օգոստոսի 5-ին թուրքական կառավարությանը նույնանման նոտա են հղում նաև եվրոպական հինգ տերությունները[63]:

1862 թ. օգոստոսի 31-ին ալբանական Սկուտարի քաղաքում կնքած համաձայնությամբ թուրքական կառավարությունը պաշտոնապես ճանաչում էր մինչև պատերազմը ձևավորված Չեռնոգորիայի իշխանապետության վարչական կառավարման համակարգը, ինչպես նաև երկու երկրների ներկայացուցիչներից բաղկացած խառը հանձնաժողովի կողմից 1859 թ. որոշած նրա սահմանները: Թուրքական կառավարությունը այդ համաձայնությամբ փաստորեն ճանաչում էր Օսմանյան կայսրությունից Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքականապես անկախ կարգավիճակը և նրա տարածքային սահմանները: Այդ առումով՝ Օսմանյան կայսրության յուրաքանչյուր ընտանիք Չեռնոգորիայի իշխանապետություն կարող էր մուտք գործել միայն թուրքական անձնագրերով: Չեռնոգորիան պարտավորվում էր ռազմական բնույթի ամրություններ չկառուցել թուրքական տիրապետության ներքո գտնվող Ալբանիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի հետ ունեցած սահմաններում, այդ սահմանակից մարզերում բռնկված ապստամբություններին չցուցաբերել ո՛չ բարոյական և ո՛չ էլ նյութական աջակցություն և, ընդհանրապես, հրաժարվել իրենց հարևանների դեմ թշնամական գործողություններ ձեռնարկելուց: Հերցեգովինայից Չեռնոգորիայի տարածքով դեպի ալբանական Սկուտարի քաղաք տանող ճանապարհը պետք է շահագործվեր միայն առևտրական նպատակների համար: Սակայն Թուրքիայի դեմ Չեռնոգորիայի ռազմական ելույթը կանխարգելելու նպատակով թուրքական կառավարությունը այդ առևտրական ճանապարհի մի շարք ստրատեգիական կետերում

[63] Նույն տեղում, էջ 199:

ստանում էր կայազորներ տեղակայելու իրավունք: Երկու երկրները պարտավորվում էին ոչ մեծ կարևորություն ունեցող սահմանային տարածայնությունները կարգավորել ընդհանուր համաձայնությամբ: Չեռնոգորիային սահմանակից յուրաքանչյուր երկիր իշխանապետության կենտրոն Ցետինեում պետք է ունենար իր լիազոր ներկայացուցիչը՝ սահմանային տարածայնությունները կարգավորելու համար, իսկ ընդհանուր համաձայնության չհանգելու դեպքում այդ երկրները անմիջականորեն պետք է դիմեին թուրքական կառավարության հաշտարար միջնորդությանը: Չեռնոգորցիները ստանում էին թուրքական տիրապետության տակ գտնվող Ադրիատիկ ծովի Անտիվարի (Բար) նավահանգստով առանց մաքսատուրքերի ապրանքներ ներմուծելու և արտահանելու իրավունք, իսկ զենքի և սպառազինությունների ներմուծումն արգելվում էր: Չեռնոգորցիները կարող էին իշխանապետության սահմաններից դուրս հողեր վարձակալել և գյուղատնտեսությամբ զբաղվել, ինչպես նաև թուրքական իշխանությունների հովանավորության ներքո Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում առևտրական գործունեությամբ զբաղվել[64]:

Չնայած Չեռնոգորիայի կրած ռազմական պարտությանը և 1862 թ. հաշտության ծանր պայմաններին՝ այնուամենայնիվ, անձնազոհ պատերազմ մղած այդ լեռնային փոքրիկ հերոսական իշխանապետությունը կարողանում է պահպանել Օսմանյան կայսրության հետ միջազգայնորեն 1858 թ. հաստատված սահմանագիծը և իր քաղաքական անկախությունը: Ինչ վերաբերում է պայմանագրի համաձայն Չեռնոգորիայում տեղակայված թուրքական կայազորներին, ապա՝ տերությունների անմիջական միջամտությամբ դրանք հեռանում են 1866 թ.:

[64] Noradounghian G., նշվ. աշխ., h. 3. 1856-1878. N 740. Arrangement avec le Monténégro pour la cessation des hostilités. Fait à Scutari d'Albanie, le 31 août 1862, p. 202-204:

Բոսնիա և Հերցեգովինա

12-14-րդ դարերում Բալկանյան թերակղզու հյուսիսարևմտյան մասում՝ պատմական Իլլիրիայի տարածքում, դեռևս 6-7-րդ դարերում ձևավորվել էր սլավոնական ցեղերով բնակեցված Բոսնիական ֆեոդալական իշխանապետությունը, որը 1377 թ. հռչակվել էր թագավորություն: Արտաքին հարձակումների, ֆեոդալական երկպառակությունների և կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով Բոսնիական թագավորության հարավային մասի կառավարիչներից մեկը 1448 թ. իրեն հռչակում է անկախ դուքս՝ հերցոգ, որի հետևանքով նրա տնօրինության ներքո գտնվող տիրույթը պատմության մեջ է մտնում Դքսություն՝ Հերցեգովինա, իշխանական բարձրագույն կոչումով:

1453 թ. Կ.Պոլսի առումից և 1459 թ. Սերբական իշխանապետության վերջնական գրավումից հետո իրենց նվաճումները շարունակող օսմանյան թուրքերը Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմուտքում 1463 թ. գրավում են Բոսնիական թագավորությունը՝ վերացնելով նաև բոգոմիլության ուղղությանը պատկանող ինքնուրույն բոսնիական եկեղեցին: 1482 թ. գրավելով նաև Հերցեգովինյան իշխանապետությունը՝ օսմանյան թուրքերը ավարտում են Բալկանյան թերակղզու արևմտյան երկրների գրավումը:

Թուրքական դաժան տիրապետության պայմաններում բնիկ սլավոնական այդ երկրների ֆեոդալների մեծամասնությունը և բնակչության մի մասը հարկադրաբար մուսուլմանանում է: Մուսուլմանացած ֆեոդալները պահպանում են իրենց արտոնությունները՝ դառնալով տիրապետող մուսուլմանական ֆեոդալական դասակարգի բաղկացուցիչ մասը: Սլավոնական Բոսնիայի և Հերցեգովինայի մուսուլմանացումը քաղաքական և սոցիալ-տնտեսական խիստ բացասական հետևանքներ է թողնում հարավսլավոնական ժողովուրդների հետագա պատմական զարգացման վրա:

Ալբանիա (Շկիպրիա)

1389 թ. Կոսովոյի ճակատամարտից հետո թուրքերը հարատև հարձակումներ են սկսում Ալբանիան նվաճելու համար: Սակայն, ալբանական ժողովրդի դիմադրական համառ պայքարի հետևանքով, Ալբանիայի վերջնական հպատակեցումը թուրքերը ավարտում են միայն 1479 թ.: Նվաճված Ալբանիան ընդգրկվում է Ռումելիայի նահանգի մեջ՝ բաժանվելով չորս վարչական տարածքային շրջանների (սանջակների), որոնց մեջ, սակայն, կային նաև ոչ ալբանական տարածքներ: Ալբանիայի բացարձակ մեծամասնությունը կազմող ուղղափառ և կաթոլիկ քրիստոնյա բնակչությունը, թուրքական դաժան ճնշումների, մասնավորապես՝ զանգվածային կոտորածների և ծանր հարկային քաղաքականության հետևանքով, հարկադրված դավանափոխվում է՝ ընդունելով նվաճողների պարտադրած իսլամական կրոնը: Ալբանիայի ցեղային առաջնորդների և ֆեոդալների ճնշող մեծամասնությունը նույնպես հավատափոխվում է, իսկ հրաժարվողներն անխնա ոչնչացվում են: Մուսուլմանացած ցեղային առաջնորդները և ֆեոդալները սկսում են ծառայել Օսմանյան կայսրութանը, ինչպես նաև մեծ մասնակցություն են ցուցաբերում բալկանյան ժողովուրդների և, առաջին հերթին՝ սերբերի և բուլղարների ազգային-ազատագրական ապստամբությունները ջախջախելու, իրենց ազդեցությունն ու վերահսկողությունը Ալբանիային սահմանակից զուտ սլավոնական Նովի Բազարի, Կոսովոյի-Մետոխիայի և ընդհանրապես Հին Սերբիայի վրա հաստատելու, այդ տարածքներում մուսուլման ալբանացիներով ժողովրդագրական մեծամասնություն ստեղծելու գործում: Օգտվելով 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրության ներքին և արտաքին հզորության թուլացումից՝ Ալբանիայում իշխող սուլթանի վասալ ալբանացի ֆեոդալ կառավարիչները սկսում են հանդես գալ իրենց ենթակա մարզերում անկախանալու ձգտումներով: Սակայն Օսմանյան կայսրությունից անջատվելու փորձերը, ինչպես նաև թուրքա-

կան տիրապետության դեմ ուղղված ժողովրդական ապստամբությունները, դաժանորեն ճնշվում էին կենտրոնական իշխանությունների կողմից:

Մոլդավիա և Վալախիա (Ռումինիա)

Դանուբի ձախ ափի ստորին ավազանի հյուսիսային՝ պատմական Դակիայի տարածքում 14-րդ դարում ձևավորվում են երկու անկախ արևելահռոմեական ֆեոդալական միապետական իշխանապետություններ՝ Վալախիան (1324 թ.) և Մոլդավիան (1359 թ.), որոնք պատմության մեջ հայտնի են նաև «Դանուբյան իշխանապետություններ» անունով: Դանուբյան յուրաքանչյուր միապետական իշխանապետության գլուխն էր ֆեոդալական ավագանուց՝ բոյարներից և բարձրագույն հոգևորականության ժողովի կողմից ընտրված իշխանը՝ վոյեվոդը, որը նաև կոչվում էր գոսպոդար: Իշխանապետության գլխի՝ գոսպոդարի լիազորությունները սահմանափակված էին ֆեոդալական ավագանու ներկայացուցիչներից բաղկացած բոյարական խորհրդի կողմից, առանց որի համաձայնության չէր կարող ընդունվել պետական կարևորագույն նշանակություն ունեցող որևէ մի որոշում: Արտաքին հարաբերություններին, պատերազմներին կամ հաշտությանը վերաբերող հարցերը վճռվում էին աշխարհիկ ֆեոդալական ավագանու և բարձրագույն հոգևորականության ընդլայնված ժողովներում: Յուրաքանչյուր իշխանապետություն ուներ իր կենտրոնական, տեղական կառավարման և դատական համակարգը: Իշխանապետությունները բաժանված էին ազնվապատկան ֆեոդալների՝ բոյարների կողմից կառավարվող վարչական շրջանների: Վարչական շրջանի ղեկավարը միաժամանակ բոյարական խորհրդի անդամ էր: Նա էր իրականացնում նաև իր ենթակայության ներքո գտնվող վարչական շրջանի դատական իշխանությունը: Յուրաքանչյուր իշխանապետության հիմնական զինված ուժն էին գոսպոդարական և բոյարական ռազմական դրու-

ժինաները: Արտաքին վտանգի դեպքում զորակոչվում էին նաև զենքի ընդունակ ժողովրդական լայն զանգվածները: Զորակոչվածները պարտավոր էին ներկայանալ իրենց սպառազինությամբ ու պարենամթերքի որոշակի պաշարով: Առանձին դեպքերում գոսպոդարներն հավաքագրում էին նաև օտարերկրյա վարձկաններից բաղկացած ռազմական ջոկատներ: Յուրաքանչյուր իշխանապետությունում մեծ նշանակություն և ազդեցություն ուներ ուղղափառ քրիստոնեական եկեղեցին: Կ.Պոլսի հունական պատրիարքի կողմից 1359 թ. ճանաչված Վալախիայի միտրոպոլիտությունը մեծ դեր ուներ իշխանապետության համախմբման, գոսպոդարի իշխանության ամրապնդման, ժողովրդական զանգվածներին միավորելու և էթնիկ ինքնությունը պահպանելու գործում: Կ.Պոլսի հունական պատրիարքը 1401 թ. նույնպես ճանաչում է իր ենթակայության ներքո գտնվող Մոլդավական իշխանապետության ուղղափառ եկեղեցու ինքնավար կարգավիճակը: Յուրաքանչյուր իշխանապետության միտրոպոլիտը նաև ֆեոդալական ավագանու և բարձրագույն հոգևորականության ընդլայնված ժողովների նախագահն էր:

Բալկաններում օսմանյան նվաճումների հետագա ծավալման և Դանուբյան իշխանապետություններին անմիջական սպառնալիք ստեղծելու հետևանքով 1415 թ. Վալախիան, իսկ 1456 թ.՝ Մոլդավիան, որպես փրկագին, հարկադրված են լինում ամենամյա հարկ վճարել թուրքական սուլթանին: Թուրքական չդադարող արշավանքների արդյունքում 1538 թ. Մոլդավիա, իսկ 1542 թ. Վալախիա իշխանապետությունները լիովին հպատակեցվում են՝ դառնալով Օսմանյան կայսրության բաղկացուցիչ տարածքը: Թուրքերը գրավում են նաև 1367 թ. մոլդավական իշխանապետության մեջ մտած Բեսարաբիան:

Ընկնելով թուրքական տիրապետության տակ, այնուամենայնիվ, Մոլդավիան և Վալախիան չեն վերակազմակերպվում որպես Օսմանյան կայսրության նահանգներ, այլ թուրքական կառավարության սյուզերենության ներքո վերածվում են օսմանյան սուլթանի

նշանակած կառավարիչների՝ գոսպոդարների ղեկավարությամբ կառավարվող երկու ինքնավար վասալական իշխանապետությունների: Թուրքական կառավարությանը վճարվող ամենամյա դրամական հարկից, սուլթանին և արքունական բարձրագույն պաշտոնյաներին տրվող թանկարժեք նվերներից (ռիկաբիյե, հեդիյե) և մի շարք այլ պարտավորություններից բացի, երկու իշխանապետությունների զորքերը պետք է մասնակցեին Թուրքիայի մղած պատերազմներին:

Վերածվելով Օսմանյան կայսրության վասալական իշխանապետությունների, այնուամենայնիվ, Մոլդավիան և Վալախիան երբեք չդադարեցրին անկախության համար մղած ազգային-ազատագրական պայքարը՝ Թուրքիայի դեմ պատերազմներում 16-րդ դարի վերջից դաշնակցելով, ինչպես նաև քաղաքական ու դիվանագիտական կապեր հաստատելով Ռուսաստանի հետ: Իրենց հերթին, Ռուսական կայսրության միապետները, մասնավորապես՝ Պյոտր 1-ինից սկսած՝ յուրաքանչյուր ռուս-թուրքական պատերազմում հրովարտակներով դիմում էին նվաճված բալկանյան ժողովուրդներին՝ ընդհանուր և միասնական ուժերով հանդես գալու Օսմանյան կայսրության դեմ՝ շեշտելով, որ Ռուսաստանը պատերազմ է մղում քրիստոնյա ժողովուրդներին թուրքական տիրապետությունից ազատագրելու համար՝ վստահեցնելով, որ նրանց շահերը նկատի են առնվելու Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը կնքելու ժամանակ: Այսպես՝ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, 1769 թ. Պետերբուրգում պատասխանելով Ռուսաստանի կազմի մեջ Մոլդավիային ընդունելու մոլդավական պատվիրակության խնդրանքին, Եկատերինա 2-րդ կայսրուհին պատասխանում է, որ «կձգտի պաշտպանել անողորմ թշնամու վայրագություններից»:

18-րդ դարի երկրորդ կեսից Թուրքիայի դեմ մղած Ռուսաստանի հաղթական պատերազմները իրենց ռազմաքաղաքական հետևանքներով մեծ ազդեցություն էին թողնում նաև Բալկանյան թե-

րակղզու ժողովուրդների հետագա պատմական զարգացման վրա: Այսպես. Վալախիային 1390 թ. միացված պատմական Դուբրուջայի Սիլիստրա քաղաքից ոչ հեռու՝ Քյուչուկ-Կայնարջի գյուղում, 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում 1774 թ. հուլիսի 21-ին կնքված հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությունից անջատվում և Ռուսաստանի տիրապետության տակ էին անցնում Դնեպր և Հարավային Բուգ գետերի միջև գտնվող տարածքները, ինչպես նաև Դնեպրի գետաբերանի Կինբուրն ամրոցը, և ռուս-թուրքական սահմանն էր դառնում Հարավային Բուգ գետը: Ռուսական կայսրությունը, այդպիսով, Օսմանյան կայսրությանն էր վերադարձնում 1768-1774 թթ. պատերազմի ընթացքում Հարավային Բուգից արևմուտք գրաված տարածքները, Բեսարաբիան՝ Ակկերման, Կիլիյա, Իզմայիլ և Բենդեր ամրոց քաղաքներով, ինչպես նաև Մոլդավիա և Վալախիա իշխանապետությունները: Այնուամենայնիվ, 1768-1774 թթ. Քյուչուկ-Կայնարջիում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր պահպանել դեռևս սուլթան Մեհմեդ 4-րդի ժամանակ (1648-1687 թթ.) Մոլդավիային և Վալախիային շնորհված ներքին ինքնավարության կարգավիճակը: Իրենց շահերը պաշտպանելու համար երկու իշխանապետություններն իրավունք էին ստանում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում ունենալու իրենց դիվանագիտական հավատարմատարներին: Խիստ կարևոր էին հաշտության պայմանագրի այն հոդվածները, որոնց համաձայն Ռուաստանը քաղաքական հովանավորություն էր հաստատում Օսմանյան կայսրության կազմում գտնվող այդ ինքնավար իշխանապետությունների վրա: Կ.Պոլսում հավատարմագրված Ռուսական կայսրության դիվանագիտական ներկայացուցիչները լիազորվում էին հանդես գալու այդ երկու իշխանապետությունների շահերի պաշտպանությամբ:

Թուրքական կառավարությունը պարտավորվում էր լիակատար ներում շնորհել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազ-

մում իր դեմ հանդես եկած երկու իշխանապետությունների բնակիչներին, վերականգնել բոյարների տիտղոսները, կոչումները և վերադարձնել նրանց կալվածքներն ու հողերը: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր արգելքներ չհարուցել իշխանապետություններում քրիստոնեական կրոնի ազատ դավանության համար, համաձայնվում էր, որպեսզի վերականգնվեին ավերված-խոնարհված եկեղեցիները, կառուցվեին նորերը, վերադարձվեին խլված վանքապատկան հողերը, տիրույթները, ինչպես նաև պաշտոնապես ճանաչել և, ըստ աստիճանակարգի, արժանավայել հարգանք ցուցաբերել քրիստոնյա հոգևոր դասի ներկայացուցիչների նկատմամբ: Երկու իշխանապետություններից որևէ մեկում բնակվող յուրաքանչյուր ընտանիք, եթե կցանկանար տեղափոխվել մեկ այլ վայր, հաշտության պայմանագրի փոխանակման օրվանից՝ մեկ տարվա ընթացքում, կարող էր իր ամբողջ ունեցվածքով ազատորեն հեռանալ, ընդ որում՝ նրանից չէր պահանջվելու չվճարած նախկին պետական պարտքերից և ոչ մի գումար: Երկու իշխանապետությունների բոլոր բնակիչները ազատվում էին ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության գանձարանին չվճարած հարկերից և որևէ ռազմատուրքից, իսկ հաշտության պայմանագրի փոխանակման օրվանից՝ նաև հետագա երկու տարիների բոլոր պետական հարկերից ու պարհակներից[65]:

Ռուսական կառավարության պահանջով օսմանյան սուլթանը նույն թվականի դեկտեմբերի 15-ին հրապարակում է Մոլդավիային ու Վալախիային վերաբերող երկու կայսերական հրամանագրեր՝ հաթթ-ը շերիֆներ՝ հաստատելով և կոնկրետացնելով Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով Դանուբյան իշխանապետություններին շնորհած իրավունքներն ու արտոնու-

[65] Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottomam. Tome première. 1300-1789. Paris, 1897.
N 36. Traité de paix définitif avec la Russie conclu au camp près du village de Kutchuk-Kainardji, le 10/ 21 juillet 1774, p. 319-334.

թյունները: 1774 թ.-ից, նշում է ռումինական տարեգրությունը, Մոլդավիայի և Վալախիայի վրա թուրքական տիրապետությունը աստիճանաբար նվազում է[66]:

1779 թ. մարտի 10-ին Կ.Պոլսի սուլթանական պալատներից Այնալի-Կավակում ստորագրված ռուս-թուրքական համաձայնությամբ ռուսական դիվանագիտության ջանքերով, առանց որևէ էական փոփոխությունների, ամբողջությամբ կրկին հաստատվում էին Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի բոլոր պայմանները, իսկ համաձայնության 7-րդ հոդվածով՝ նաև սուլթանի կողմից Մոլդավիային ու Վալախիային շնորհված իրավունքներն ու արտոնությունները: Այդպիսով՝ Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի «լրացումը և պարզաբանումը» հանդիսացող Այնալի-Կավակի համաձանությամբ թուրքական կառավարությունը հարկադրված էր այլևս չխախտել և անշեղորեն իրականացնել 1768-1774 թթ. պատերազմի հաշտության պայմանագրով ստանձնած իր բոլոր պարտավորությունները: Այնալի-Կավակի համաձայնությանը բարձրագույն իրավական ուժ հաղորդելու նպատակով, բանակցող երկու կողմերի պայմանավորվածությամբ, չորս ամսվա ընթացքում այն պետք է վավերացվեր Ռուսաստանի կայսրի և Օսմանյան կայսրության սուլթանի կողմից[67]:

Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի պայմանների և դրանք հաստատող սուլթանական հրամանագրերի՝ հաթթ-ը շերիֆների և դրանց վերաբերյալ կայացած ռուս-թուրքական համաձայնությունների գործնական իրականացմանը անմիջականորեն հետևելու և հսկելու, ինչպես նաև Դանուբյան իշխանապետություններում Ռուսաստանի քաղաքական շահերը հետապնդելու և պաշտպանելու նպատակով 1779 թ. դեկտեմբերի 7-ի

[66] Histoire chronologique de la Roumanie, Bucarest, 1976, p. 140.

[67] Noradounghian G., նշվ. աշխ., h. 1, N 38. Convention explicative du Traité de Kutchuk-Kainardji avec la Russie. Conclu à A"inali Cavak lès Constantinople le 10 mars 1779, p. 338-344.

կայսերական հրամանագրով Մոլդավիայում, Վալախիայում և Բեսարաբիայում 1781 թ. հիմնվում են Ռուսական կայսրության գլխավոր հյուպատոսությունները: 1784 թ. Ռուսական կայսրության փոխհյուպատոսություն է հիմնվում Մոլդավական իշխանապետության մայրաքաղաք Յասսիում, իսկ 1786 թ.՝ Դանուբի գետաբերանի ամրոց Կիլիայում: Հետզհետե Դանուբյան իշխանապետություններում գլխավոր հյուպատոսություններ են հիմնում Ավստրիան (1783 թ.), Պրուսիան (1785 թ)., Ֆրանսիան (1797 թ.) և Անգլիան (1803 թ).:

Հետագա ռուս-թուրքական պատերազմների հաշտության պայմանագրերը և համաձայնությունները ոչ միայն վերահաստատում էին Օսմանյան կայսրության կազմում Դանուբյան իշխանապետությունների ներքին ինքնավարության կարգավիճակը և այդ իշխանապետությունների նկատմամբ Ռուսաստանի քաղաքական հովանավորության իրավունքը, այլև՝ աշխարհաքաղաքական նոր փոփոխություններ էին առաջացնում Դանուբի ստորին ավազանում: Այսպես. 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի քաղաքական արդյունքներն արտացոլող 1791 թ. դեկտեմբերի 29-ի (1792 թ. հունվարի 9-ի) Յասսիի հաշտության պայմանագրով Ռուսաստանին էր անցնում Հարավային Բուգի և Դնեստրի միջև գտնվող տարածքը և, այդպիսով, Բալկաններում ռուս-թուրքական սահմանն էր դառնում Դնեստր գետը: Ռուսաստանը վերադարձնում էր 1787-1791 թթ. պատերազմում Թուրքիայից գրաված Բեսարաբիան՝ Բենդեր, Ակկերման, Կիլիյա և Իզմայիլ ամրոցներով: Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիան և Վալախիան նույնպես վերադարձվում էին Թուրքիային: Այնուամենայնիվ, ամբողջությամբ պահպանվում էին Մոլդավիային ու Վալախիային վերապահված ինքնավարության արտոնությունները, և թուրքական կառավարությունը պարտավորվում էր «անխախտորեն պահպանել և ճշգրտորեն իրագործել» Դանուբյան իշխանապետությունների ինքնավարությանը վերաբերող 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածները: Մոլդավիա և Վալախիա իշխանապետու-

թյուններն ազատվում էին 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության գանձարանին վճարելիք հարկերից, ռազմատուրքերից, իսկ Յասսիի հաշտության վավերացված պայմանագրի փոխանակման օրվանից՝ նաև երկու տարով ամեն տեսակի հարկերից ու պարհակներից: Վավերացված հաշտության պայմանագրի փոխանակումների օրվանից, սեփական ցանկությամբ, իշխանապետություններում բնակվող յուրաքանչյուր ընտանիք կարող էր 14 ամիսների ընթացքում իր անշարժ գույքը, հողերը վաճառելով կամ իր հայեցողությամբ որևէ մեկին տնօրինության հանձնելով իր ունեցվածքով ազատորեն հեռանալ Մոլդավիայից կամ Վալախիայից[68]:

Թուրքերի կողմից Քյուչուկ-Կայնարջիի և Յասսիի հաշտության պայմանագրերի հոդվածների խախտումները կանխելու և դրանք ամբողջությամբ իրականացնելու նպատակով կայսր Ալեքսանդր 1-ինը Կ.Պոլսի իր դեսպանին հղած 1801 թ. հուլիսի 21-ի հրահանգում պատվիրում էր դիվանագիտական ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ ստիպելով «ամենուրեք ճշգրտությամբ իրագործել Ռուսաստանի հետ կնքած պայմանագրերի հոդվածները»: Միաժամանակ, Ալեքսանդր 1-ինը դեսպանին հրահանգում էր անհրաժեշտության դեպքում, առանց բացահայտվելու, ըստ ամենայնի օժանդակություն ցուցաբերել Մոլդավիայի և Վալախիայի գոսպոդարներին՝ Քյուչուկ-Կայնարջիի և Յասսիի հաշտության պայմանագրերի համապատասխան հոդվածները իրենց կառավարմանը ենթակա իշխանապետություններում կիրառելու համար:

Ռուսական դիվանագիտության ճնշման ներքո սուլթան Սելիմ 3-րդը (1789-1807 թթ.) 1802 թ. սեպտեմբերի 24-ին հրապարակում է Դանուբյան իշխանապետություններին վերաբերող երկու նույնանման հաթթ-ը շերիֆներ՝ սուլթանական հրամանագրեր, որոնք ոչ միայն վերահաստատում, այլև կոնկրետացնում և լրացնում էին

[68] Noradounghian G., նշվ. աշխ., h.2. 1789-1856.Paris, 1900. N 5. Traité de paix avec la Russie. Signé à Yassi le 9 janvier 1792. p. 16-21:

Քյուչուկ-Կայնարջիի և Յասսիի հաշտության պայմանագրերով Ռուսաստանի քաղաքական հովանավորության ներքո Մոլդավիային և Վալախիային շնորհված ինքնավարության պայմաններն ու արտոնությունները՝ շեշտելով նաև այդ իշխանապետությունների շահերը պաշտպանելու Ռուսաստանի օրինական իրավունքները[69]:

Ռուսական կառավարության հանձնարարականների հիման վրա կազմված սուլթանական հրամանագրերով թուրքական սուլթանը պարտավորվում էր վերադարձնել Մոլդավիա և Վալախիա իշխանապետություններից զավթած և Օսմանյան կայսրությանը կցված տարածքները, ինչպես նաև անհապաղորեն դուրս բերել Վալախիա ներխուժած ապստամբ թուրքական զորքերը: Արգելվում էր թուրքական բարձրագույն պաշտոնյաներին, Մոլդավիային և Վալախիային սահմանակից շրջանների աստիճանավորներին, սպաներին այդ իշխանապետություններում ձեռք բերել հողատիրույթներ, արոտավայրեր, ինչպես նաև քրիստոնյա հպատակներից տարբեր տեսակի պարիակներ, նվերներ ու դրամ պահանջել: Օսմանյան կայսրության բարձրագույն պաշտոնյաներից բացի, գործնական նպատակներով Դանուբյան իշխանապետություններ կարող էին մուտք գործել միայն սուլթանական անցագրերով օժտված առևտրականները:

Ռուսական կառավարության պահանջով Դանուբյան իշխանապետությունների գոսպոդարների կառավարման ժամկետը սահմանվում էր յոթ տարի՝ նրանց այդ պաշտոնում սուլթանի նշանակած օրվանից: Սուլթանը կարող էր իր վասալ գոսպոդարներին պաշտոնազրկել՝ նրանց կատարած որևէ հանցանք Ռուսաստանի և Թուրքիայի կողմից երկկողմանի ապացուցման դեպքում և միայն ռուսական կառավարության համաձայնությամբ: Սուլթանական հրամանագրերում շեշտված էր, որ գոսպոդարները իրենց պաշտոնավարության ժամանակահատվածում պարտավոր էին ղեկավար-

[69] Նույն տեղում, N 18. Hatti-chérif concernant la Valachie. En date de Constantinople, le 24 septembre 1802, p. 55-67:

վել Կ.Պոլսի ռուսական դեսպանի հանձնարարականներով, հրահանգներով և ցուցումներով՝ Դանուբյան իշխանապետություններին սահմանված արտոնությունները պահպանելու և, մասնավորապես, 1802 թ. սուլթանական հրամանագրերը կենսագործելու համար:

Սուլթանական հրամանագրերի համաձայն յուրաքանչյուր իշխանապետության գոսպոդար, խորհրդակցելով և համաձայնության հանգելով բոյարների հետ, իրավունք էր ստանում վերստեղծել և տնօրինել իր ենթակայության ներքո գտնվող երկրի զինված ուժերը: Սուլթանական հրամանագրերով կոնկրետացվում և ճշգրտվում էին գոսպոդարների անձնական հարկային պարտավորությունները: Սուլթանական հրամանագրերի ձևակերպմամբ, իշխանապետությունների գոսպոդարներին հավատարմությամբ և հնազանդությամբ ծառայող բոյարները շարունակելու էին պահպանել իրենց կոչումները, պաշտոնները և հողատիրույթները: Իշխանապետություններում պաշտոնները հիմնականում պետք է զբաղեցնեին տեղաբնիկները, սակայն գոսպոդարները կարող էին պետական ծառայության մեջ վերցնել նաև կրթված և զարգացած հույներին:

Հարկային քաղաքականության բնագավառում սուլթանը չեղյալ էր հայտարարում 1783 թ. հետո Դանուբյան իշխանապետությունների վրա դրված հարկերը, տուրքերը, պարհակները, ինչպես նաև պարտավորվում էր վերադարձնել քրիստոնյա հպատակներից՝ ռայաներից, մուսուլմանների զավթած հողերը, արոտավայրերը: Մոլդավիայի և Վալախիայի վրա սահմանվում էին ամենամյա կայուն հարկեր ու տուրքեր: Այսպես. Վալախիա իշխանապետությունը 7.105.871 պիաստր կազմող տարեկան բյուջեից թուրքական գանձարան պետք է մուծեր 309.500 պիաստր պետական հարկ, իսկ Մոլդավիա իշխանապետությունը՝ 4.414.125 պիաստր կազմող տարեկան բյուջեից 67.9444 պիաստր պետական հարկ: Բացի օսմանյան կայսերական գանձարանին մուծելիք տարեկան կայուն պետական հարկից, Վալախիան պետք է 90 հազար պիաստր ամենամյա տուրք վճարեր՝ որպես հեդիյե, և 40 հազ. պիաստր՝ որպես ռի-

կաբիյե, իսկ Մոլդավիան՝ 90 հազար պիաստր՝ հեդիյե, և 25 հազար պիաստր՝ ռիկաբիյե:

Մոլդավիայի և Վալախիայի գոսպոդարները, հիմք ընդունելով 1802թ. սուլթանական հրամանագրերով սահմանված հարկերը և տուրքերը, պարտավոր էին բոյարական խորհուրդների հետ միասին որոշել և հաստատել իրենց իշխանապետությունների տարեկան բյուջեները: Իշխանապետություններին էին հանձնվում նավահանգիստները, հիվանդանոցները, դպրոցները, ճանապարհները և նման կառույցները պահպանելու, ֆինանսավորելու և կառավարելու լիազորությունները: Վանքերին չպատկանող միտրոպոլիտությունների և վանականների ժառանգական ունեցվածքը, գոսպոդարի գիտությամբ, պետք է ծառայեր բարեգործական նպատակների համար, իսկ վանքերին պատկանող հոգևորականների ժառանգական ունեցվածքը պետք է հանձնվեր վանքերի տնօրինությանը:

Օգտվելով 19-րդ դ. սկզբին Եվրոպայում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններից և 1804 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմից, նաև Նապոլեոնյան դիվանագիտության հրահրումով, 1806 թ. դեկտեմբերի 30-ին Թուրքիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին՝ Քյուչուկ-Կայնարջիի և Յասսիի հաշտության պայմանագրերը վերացնելու և իր գերիշխանությունը նաև Դանուբյան իշխանապետություններում վերականգնելու համար:

1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում 1812թ. մայիսի 28-ին Վալախիայի իշխանապետության մայրաքաղաք Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով Դնեստրի փոխարեն ռուս-թուրքական սահմանն էր դառնում Դանուբի ձախ վտակ Պրուտ գետը: Պարտված Օսմանյան կայսրությունից Ռուսաստանին էր անցնում Դնեստր և Պրուտ գետերի միջև գտնվող տարածքը՝ 1367 թ. Մոլդավիայի կազմի մեջ մտած Բեսարաբիան՝ 40 հազ. քառ. կմ տարածությամբ՝ Խոտին, Բենդեր, Ակկերման, Կիլիյա և Իզմայիլ ամրոցներով: Թեև Ռուսաստանը կրկին Օսմանյան կայսրությանն էր վերադարձնում 1806-1812 թթ. պատե-

րազմում գրաված Մոլդավիան և Վալախիան, այնուամենայնիվ, ամբողջությամբ պահպանվում էին 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի և 1791 թ. Յասսիի ռուս-թուրքական հաշտության պայմանագրերով ամրագրված ու հաստատված Դանուբյան երկու իշխանապետությունների ներքին ինքնավարության իրավունքները, արտոնությունները, ինչպես նաև նրանց հարկերին ու պարհակներին վերաբերող և յուրաքանչյուր ընտանիքի կողմից բնակության վայրը ազատորեն փոխելու պայմանները[70]:

Հույն ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմի հետևանքով լարված ռուս-թուրքական հարաբերությունների պայմաններում՝ ռուսական կառավարությունն անդրադառնում է նաև Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիային և Վալախիային վերաբերող խնդիրներին:

1826 թ. հոկտեմբերի 7-ին Բեսարաբիայի Ակկերման ամրոցում կնքված ռուս-թուրքական համաձայնությամբ հաստատվում էին Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիային ու Վալախիային վերաբերող ռուս-թուրքական պայմանագրերի համապատասխան հոդվածները, և թուրքական կառավարությունը պարտավորվում էր պահպանել նրանց շնորհած ներքին ինքնավարության իրավունքներն ու արտոնությունները: Միաժամանակ, թուրքական կառավարությունը խոստանում էր Ակկերմանի համաձայնության վավերացումից վեց ամիս անց թարմացնել Մոլդավիային ու Վալախիային 1802 թ. սուլթանական հրամանագրերով շնորհված ինքնավարության հատուկ կարգավիճակը:

Ակկերմանի համաձայնությամբ՝ հաստատվում էր Մոլդավիայի և Վալախիայի կառավարիչների ընտրության կարգը և նրանց լիազորությունների շրջանակը: Այսպես. յուրաքանչյուր իշխանապետության կառավարիչ պետք է ընտրվեր յոթ տարի ժամկետով, տեղաբնիկ ավագագույն բոյարներից՝ տվյալ իշխանապետության Դիվա-

[70] Noradounghian G., նույն տեղում, N 30. Traité de paix avec la Russie. Signé à Bucharest le 16/28 mai 1812, p. 86-92:

նի ընդհանուր ժողովի կողմից, և որի ընտրությունը պետք է հաստատեր օսմանյան սուլթանը: Յուրաքանչյուր իշխանապետության ընտրված կառավարիչ ստանում էր գոսպոդար կոչումը՝ կառավարման համապատասխան լիազորություններով: Գոսպոդարներն իրավունք ունեին ընտրվելու նաև կառավարման երկրորդ՝ յոթնամյա ժամկետի համար, սակայն այն պայմանով, եթե տվյալ իշխանապետության դիվանը այդ հարցում միջնորդության խնդրանքով դիմեր թուրքական կառավարությանը և, եթե գոսպոդարի կառավարման առաջին ժամանակահատվածում նրա վարած քաղաքականությունը դժգոհություններ չէր առաջացրել իր ղեկավարած իշխանապետության մեջ: Կառավարման սահմանված ժամկետը լրանալուց հետո նախկին գոսպոդարն այլևս չէր կարող ընտրվել Դիվանի անդամ և ոչ էլ զբաղեցնել իշխանապետության որևէ պաշտոն: Գոսպոդարի պաշտոնը տարբեր պատճառներով ժամկետից շուտ թափուր մնալու դեպքում տվյալ իշխանապետության կառավարումը ժամանակավորապես հանձնվում էր Դիվանի նշանակած կայմականներին: Գոսպոդարներին իրավունք էր վերապահվում Դիվանի մասնակցությամբ որոշելու իշխանապետության ընտրովի մարմինների կազմը, որոնց անդամները, սակայն, չպետք է զբաղեցնեին այլ պաշտոններ: Գոսպոդարները լիազորվում էին դիվանի հետ միասին սահմանել և հաստատել իրենց ենթակա իշխանապետության ամենամյա հարկերն ու պարհակները՝ հիմք ընդունելով 1802 թ. սուլթանական հրամանագրերը: Գոսպոդարներն օժտվում էին կառավարման լայն լիազորություններով, և երկու իշխանապետությունների բոյարները պարտավոր էին անառարկելիորեն կատարել իրենց կառավարիչների հրամաններն ու կարգադրությունները: Գոսպոդարներին արգելվում էր կամայական վերաբերմունք ցուցաբերել բոյարների նկատմամբ և նրանց ենթարկել անօրինական պատիժների: Բոյարները պատիժների կարող էին ենթարկվել միայն դատարանի կողմից՝ տվյալ իշխանապետության օրենքներին և սովորույթներին համապատասխան:

1821 թ. հակաթուրքական ապստամբության հետևանքով Մոլդավիայից ու Վալախիայից հեռացած բոյարները իրավունք էին ստանում ազատորեն վերադառնալ՝ չենթարկվելով հալածանքների և նախկինի պես օգտվել իրենց իրավունքներից, արտոնություններից, կալվածքներից և ամեն տեսակի սեփականությունից: Դանուբյան իշխանապետություններն երկու տարի ժամկետով լիովին ազատվում էին թուրքական կառավարությանը 1802 թ. սահմանված հարկերը վճարելու և պարհակները կատարելու պարտավորություններից, որոնք, այնուհետև, ոչ մի դեպքում չէին ավելացվելու: Միաժամանակ, երկու իշխանապետությունների բնակիչները ստանում էին իրենց գյուղատնտեսական մթերքները և արհեստագործական արտադրանքները ազատորեն տնօրինելու և վաճառելու իրավունք:

Թեև Մոլդավիան և Վալախիան շարունակեցին մնալ որպես Օսմանյան կայսրության վասալ իշխանապետություններ, այնուամենայնիվ, Թուրքիայի հետ կնքած պայմանագրերի հիման վրա՝ Ռուսաստանը պահպանում էր այդ երկու իշխանապետությունների նկատմամբ քաղաքական վերահսկողություն իրականացնելու իրավունքը՝ Ակկերմանի համաձայնությամբ գոսպոդարներին պարտավորեցնելով «ուշադրությամբ ու հարգանքով ընդունել» և անշեղորեն իրականացնել այդ երկրների «իրավունքների ու արտոնությունների» պաշտպանությանը վերաբերող ռուսական կառավարության բոլոր ցուցումներն ու կարգադրությունները: Թուրքական կառավարությունը գոսպոդարներին կարող էր իշխանությունից պաշտոնազրկել կամ նրանց հրաժարականն ընդունել միայն Ռուսաստանի հետ կայացած փոխադարձ համաձայնության դեպքում[71]:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հերթական հաղթանակը նոր առաջընթաց է նշանավորում Մոլդավիայի և Վալախիայի նկատմամբ Թուրքական գերիշխանությունը վերացնելու գործում: 1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանապոլսում

[71] Նույն տեղում, N 38. Convention explicative et complementaire du traité de paix de Bucharest de 1812 avec la Russie. Signé à Ackerman le 7 octobre 1826, p. 116-121:

կնքված հաշտության պայմանագրով՝ Ռուսաստանը, կղզիներով հանդերձ, ստանում էր Դանուբի գետաբերանը՝ այդպիսով լիակատար ռազմաքաղաքական վերահսկողություն հաստատելով Դանուբով դեպի Սև ծով կատարվող եվրոպական տերությունների նավարկության վրա: Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը վերահաստատում և ընդլայնում էր Ռուսաստանի քաղաքական հովանավորության ներքո Մոլդավիայի և Վալախիայի լիակատար ներքին ինքնավարության կարգավիճակը: Թուրքական կառավարությունը զրկվում էր այդ երկու իշխանապետությունների ներքին գործերին խառնվելու իրավունքից: Մոլդավիան ու Վալախիան իրավունք էին ստանում ինքնուրույն կերպով, ցմահ ժամկետով ընտրել իրենց իշխանապետությունների գոսպոդարներին, ունենալ ազգային բանակ, պաշտպանել և ամրացնել սահմանները: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր հաստատել երկու ինքնավար իշխանապետություններում ձևավորված «անկախ կառավարումը», ինչպես նաև ինքնակառավարմանը վերաբերող այն նախագծերը, որ ընդունել էին երկու իշխանապետությունների ընտրովի ժողովները 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում:

Թուրքիայի և երկու ինքնավար իշխանապետությունների սահմանն էր դառնում Դանուբ գետը: Դանուբի աջ ափի բոլոր հարակից կղզիները դառնում էին Մոլդավիայի և Վալախիայի անբաժանելի մասը: Թուրքիան զրկվում էր Դանուբյան իշխանապետություններում իր բոլոր ամրոցներից՝ պարտավորվելով նաև քանդել Դանուբի ձախ ափի բոլոր բերդերը: Մուսուլմաններին կտրականապես արգելվում էր բնակվել կամ որևէ անշարժ սեփականություն ունենալ Մոլդավիայում և Վալախիայում: Երկու ինքնավար իշխանապետություններում բնակություն հաստատած կամ անշարժ գույքի սեփականատեր բոլոր մուսուլմանները պարտավոր էին վաճառել իրենց ամբողջ անշարժ գույքը և 18 ամսվա ընթացքում հեռանալ Մոլդավիայից ու Վալախիայից: Միայն առևտրական նպատակներով Դա-

նուբյան իշխանապետություններ կարող էին մուտք գործել բացառապես սուլթանական ֆերմաններով օժտված մուսուլման առևտրականները: Իրենց հերթին, Մոլդավիայի ու Վալախիայի բնակիչները իրենց իշխանապետությունների անձնագրերով իրավունք էին ստանում սեփական նավերով ազատորեն նավարկել Դանուբ գետով, ինչպես նաև առանց կաշկանդիչ արգելքների առևտուր կատարել Օսմանյան կայսրության բոլոր քաղաքներում ու նավահանգիստներում: Մոլդավիայի ու Վալախիայի բնակիչները ռուսական զորքերի կողմից իրենց իշխանապետությունները գրավելու օրվանից երկու տարով լիովին ազատվում էին Օսմանյան կայսրությանը ամենամյա հարկեր վճարելու և պարհակներ կատարելու պարտավորություններից: Այնուհետև Մոլդավիան և Վալախիան ընդմիշտ ազատվում էին թուրքական կառավարության հանդեպ ունեցած մի շարք պարտադիր վասալական պարտավորություններից ու պարհակներից, որոնցից էին՝ կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսին և Դանուբի ամրոցներին պարենամթերքներ մատակարարելը, ամրոցների շինարարական աշխատանքներին բանվորական ուժ, շինանյութեր տրամադրելը և այլն: Սակայն, որպես փոխհատուցում, Մոլդավիան ու Վալախիան պարտավորվում էին, բացի 1802 թ. սուլթանական հրամանագրերով սահմանված պարտադիր ամենամյա հարկից, թուրքական կառավարությանը տարեկան վճարել լրացուցիչ որոշակի գումար, որի չափը պետք է որոշվեր թուրքական կառավարության և Դանուբյան իշխանապետությունների հետ կայացած փոխադարձ համաձայնությամբ: Բացի վերոհիշյալ հարկերից, յուրաքանչյուր նոր գոսպոդարի ընտրության դեպքում տվյալ իշխանապետությունը թուրքական կառավարությանը պետք է վճարեր 1802 թ. սուլթանական հրամանագրերով սահմանված տարեկան հարկերին համարժեք գումար[72]:

[72] Noradounghian G., նշվ. աշխ., h. 2:
N 53. Traité de paix avec la Russie. Conclu à Andrinople le 2/14 septembre 1829, p. 166-173.

Թեև Մոլդավիան ու Վալախիան Ադրիանապոլսի հաշտության պայմանագրից հետո շարունակեցին մնալ սուլթանից վասալական կախվածության մեջ գտնվող իշխանապետություններ, այնուամենայնիվ, այդ կախվածությունը կրում էր սոսկ անվանական և ձևական բնույթ և իրականում արտահայտվում էր միայն հարկի վճարումով, ընդ որում՝ սյուզերեն սուլթանը հարկադրանքի ոչ մի լծակ չուներ այդ հարկը ստանալու համար: Ընդհանուր առմամբ, Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը ռուսական զենքի և դիվանագիտության փայլուն հաղթանակն էր: Մոլդավիայում և Վալախիայում թեև պահպանվում էր սուլթանի ձևական գերիշխանությունը, այնուամենայնիվ, ռուսական դիվանագիտությունը հիմք էր դնում Դանուբյան իշխանապետությունների լիակատար քաղաքական անկախությանը:

1828 թ. ապրիլի 26-ին սկսված ռուս-թուրքական պատերազմի առաջին իսկ օրերին ռուսական զորքի կողմից ամբողջությամբ գրավված Մոլդավիան և Վալախիան մինչև 1834 թ. ապրիլը շարունակում են մնալ Ռուսաստանի անմիջական քաղաքական հովանավորության և ռազմավարչական կառավարման ներքո:

Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո Մոլդավիայի և Վալախիայի դիվանների Ռուսաստանի լիազոր նախագահ և այդ իշխանապետությունները գրաված ռուսական բանակների հրամանատար է նշանակվում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, գեներալ Պ.Դ. Կիսելյովը: 1829 թ. նոյեմբերի 26-ին Պ.Դ. Կիսելյովը ժամանում է Բուխարեստ՝ իր ձեռքում կենտրոնացնելով Մոլդավիայի և Վալախիայի ռազմական և քաղաքացիական իշխանությունը: Մոլդավիայի և Վալախիայի կառավարիչներ նշանակված Կիսելյովի երկու ռուս տեղակալներից յուրաքանչյուրը ստանձնում է նաև տվյալ իշխանապետության դիվանի՝ Ռուսաստանի լիազոր նախագահի պաշտոնը: Մոլդավիայի և

N 54. Acte séparé conclu avec la Russie relative aux Principautés de Moldavie et de Valachie. Signé à Andrinople le 2/14 septembre 1829, p. 174-177.

Վալախիայի դիվանների՝ Ռուսաստանի լիազոր նախագահ Կիսելյովի ենթակայությամբ ստեղծվում է իշխանապետությունների քաղաքացիական և ռազմական բնագավառները իրենց համապատասխան բաժիններով ղեկավարող հատուկ գրասենյակներից բաղկացած ռուսական վարչություն: Ստեղծվում են նաև վերստուգիչ հանձնաժողովներ՝ իշխանապետություններում տիրող իրավիճակը ուսումնասիրելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար:

Մոլդավիայի և Վալախիայի կառավարման համար ստեղծված ռուսական վարչության առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանապետություններում համաճարակային հիվանդությունների և սովի դեմ պայքարի կազմակերպումն էր: Դեռևս Ռուսաստանի լիազոր նախագահ Կիսելյովի նախորդի ժամանակ՝ 1828 թ. մայիսին, արդեն ստեղծվել է մինչև ռուս-թուրքական պատերազմը իշխանապետություններում բռնկված և նաև ռուսական բանակում տարածվող համաճարակների դեմ պայքարի հանձնաժողով: Իշխանապետությունների բժիշկների, տեղական վարչությունների հետ ռուսական բանակի բժիշկների ծավալած անձնուրաց աշխատանքի հետևանքով 1829 թ. ապրիլին համաճարակները վերանում են: 1830 թ. սկզբին Բուխարեստում և Յասսիում հիմնվում են բժշկական վարչություններ, իսկ շրջանային քաղաքներում կազմակերպվում է ամբողջ բնակչության բուժսպասարկումը: Թուրքիայից տարածվող համաճարակները կանխելու նպատակով Դանուբի ձախ ափին հիմնվում են յոթ բուժական մեկուսարաններ և հինգ շրջիկ կետեր: Երկամյա պատերազմի հետևանքով իշխանապետություններում առաջացած սովի դեմ պայքարելու նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, արտասահմանից ներմուծվում է ցորեն, ռուսական բանակի պարենապահեստարաններից հաց և այլ պարենամթերքներ են բաժանվում բնակչությանը: Նման միջոցառումների հետևանքով իշխանապետություններում սովը դադարում է, նվազեցվում են նաև սննդամթերքների բարձրացված գները: 1829 թ.

նոյեմբերին իշխանապետությունները ստանում են առանց սահմանափակումների, 3% մաքսատուրքով արտաքին առևտրի իրավունք: 1830 թ. հունվարի 1-ին յուրաքանչյուր իշխանապետությունում վերացվում են բոլոր տեսակի ապրանքներից գանձվող ներքին մաքսերը, ինչպես նաև քաղաքներում վաճառվող գյուղատնտեսական ապրանքների վրա դրված հարկերը: Կարգավորվում է հարկային քաղաքականությունը: Դրամական շրջանառության հիմքում է դրվում միայն հոլանդական դրամական միավորը: Մեծ աշխատանքներ են կատարվում իշխանապետությունների քաղաքները և գետային նավահանգիստները ռուս մասնագետների միջոցով վերակառուցելու և բարեկարգելու ուղղությամբ: Այդ նպատակով Բուխարեստում և Յասսիում ստեղծվում են մեկական գլխավոր հանձնաժողովներ և նրանց ենթակա կոմիտեներ, որոնք պետք է զբաղվեին քաղաքների վերակառուցման գլխավոր հատակագծերի նախագծման և ընդհանրապես քաղաքների բարեկարգման և դրանց հետ առնչվող խնդիրներով: Քաղաքների վերակառուցման և բարեկարգման համար տրամադրվում են ֆինանսական հատուկ միջոցներ: Վերանորոգվում է ոչ միայն հաղորդակցական և տնտեսական, այլև ռազմաստրատեգիական կարևորություն ներկայացնող Յասսի-Բուխարեստ-Սիլիստրա 391 կմ երկարությամբ ճանապարհը, որը մինչև Դանուբ գետը Ռուսաստանին միացնում էր իշխանապետությունների կարևորագույն շրջանների ու քաղաքների հետ և հնարավորություն էր ստեղծում պատերազմի դեպքում ռուսական բանակների տեղափոխումը և տեղաշարժը արագորեն կազմակերպելու համար: Վերանորոգվում կամ կառուցվում են մի շարք այլ ճանապարհներ, կամուրջներ և անցումներ: Ռուսաստանի օրինակով կազմակերպվում է փոստային հաղորդակցությունը: Իրենց կանոնադրություններով և բազմաթիվ անդամներով հիմնվում են գյուղատնտեսական ընկերություններ:

1830 թ. մարտին Ռուսաստանի, Թուրքիայի և իշխանապետությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կող-

մից Դանուբ գետով Թուրքիայի հետ կատարած սահմանազատման հետևանքով Դանուբի 30 կղզիները և այդ գետի Բրեիլա, Ջուրջու և Տուրնու նավահանգիստների հարակից տարածքները վերադարձվում են Վալախիային, իսկ Բրադեշ լիճը՝ Մոլդավիային[73]: Միջոցառումներ են ձեռնարկվում իշխանապետությունների ներքին անվտանգությունը ամրապնդելու ուղղությամբ: Ստեղծվում են իրարից լիովին անկախ երկու՝ քաղաքացիական և ռազմական (ռուսական) ոստիկանություններ: Վալախիայում ստեղծվում են նաև 4500, իսկ Մոլդավիայում՝ 2000 հեծյալ ժանդարմներից բաղկացած շրջիկ ջոկատներ: Քաղաքացիներին արգելվում է զենք կրել: Վերակառուցվում և բարեփոխվում է իշխանապետությունների դատաիրավական և քրեակատարողական համակարգը: Մահապատիժը վերացվում և փոխարինվում է տաժանակրությամբ: Կազմակերպվում է արխիվային գործը: Բոլոր քաղաքներում և գյուղերում պետք է կատարվեր քաղաքացիական ակտերի պարտադիր գրանցում: Կազմակերպվում է քաղաքային վարչությունը:

Իշխանապետությունների արտաքին անվտանգությունը ապահովելու նպատակով ռուսական հրամանատարությունը ձեռնարկում է ազգային բանակի կազմակերպման գործը: Այդ նպատակով ռուս-թուրքական պատերազմի ավարտից կարճ ժամանակ անց ռուսական հրամանատարությունը ստեղծում է հատուկ կոմիտե, որի մի բաժինը պետք է զբաղվեր Մոլդավիայի, իսկ մյուս բաժինը՝ Վալախիայի իշխանապետության բանակի կազմավորման գործով: Իշխանապետությունների բանակի հիմքն են կազմում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակիցները: 1829 թ. նոյեմբերին իշխանապետություններում 20-ից մինչև 30 տարեկան տղամարդկանց համար սահմանվում է զինվորական վեցամյա պարտադիր ծառայություն: Բանակի կազմավորման գործընթացը դյուրացնելու նպատակով ծառայության ընթացքում զինվորների ընտանիքները

[73] Histoire chronologique de la Roumanie, p. 154.

ազատվում էին հարկային պարտավորություններից, իսկ զորացրվածները օժտվում էին մի շարք արտոնություններով: Բանակի սպաները հիմնականում դառնում էին ռուս-թուրքական պատերազմի մասնակից բոյարները: Իրենց կազմավորման սկզբնական շրջանում իշխանապետությունների կանոնավոր բանակների քանակակազմը հասնում էր ավելի քան 5500-ի: Ռուսական բանակների օրինակով իշխանապետությունների բանակների կազմավորումը և հրահանգավորումը կատարում էին ռուս զինվորական մասնագետները: Իշխանապետության զինված ուժերի զինվորական կանոնադրությունները նույնպես կազմվում էին ռուսական բանակների զինվորական կանոնադրությունների օրինակով: Իշխանապետությունների բանակները համազգեստավորվում և սպառազինվում էին ռուսական հրամանատարության կողմից[74]:

1831-1832 թթ. ռուսական կառավարությունը Մոլդավիայի և Վալախիայի կառավարման համար կիրառության է դնում գրեթե միանման սահմանադրական օրենքներ՝ կազմակերպական Կանոնադրություններ, որոնք որոշում էին այդ երկու իշխանապետությունների հասարակական-քաղաքական կառուցվածքը: Այդ կազմակերպական Կանոնադրությունները, որ քաղաքական հովանավոր Ռուսաստանի անմիջական վերահսկողությամբ մշակել էին Մոլդավիայի և Վալախիայի ներկայացուցիչներից բաղկացած խմբագրական հանձնաժողովները, հաստատվելով երկու իշխանապետությունների Արտակարգ հասարակական ժողովների և ձևականորեն վավերացվելով սյուզերեն տերության՝ Օսմանյան կայսրության կողմից, Վալախիայում գործադրության են դրվում 1831 թ.

[74] Տե՛ս Булгаков Ф., Русский государственный человек минувших трех царствовании (Граф П.Д. Киселев). Տե՛ս "Исторический вестник". 1882, январь, с. 128-155. март, с. 661-682:
Голицин Н.С., Павел Дмитриевич Киселев и его управление Валахией и Молдавией 1829-1834 гг. Տե՛ս "Русская старина", март, 1879, с.479-496, апрель 1879, с. 639-650. В. Я.Гросул, Реформы в Дунайских княжествах и Россия (20-30 годы XIX века). М., 1966:

հուլիսին, իսկ Մոլդավիայում՝ 1832 թ. հունվարին: Այդ կազմակերպական Կանոնադրությունների համաձայն Վալախիայում և Մոլդավիայում հստակորեն սահմանազատվում էին գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունները: Գործադիր իշխանության՝ կառավարության գլուխ էր հռչակվում իշխանապետության ղեկավարը՝ գոսպոդարը: Յուրաքանչյուր իշխանապետության գոսպոդար պետք է ընտրվեր 40 տարեկանից բարձր հասակում, ցմահ ժամկետով՝ բարձրագույն և միջին բոյարներից ու քաղաքացիական միությունների ներկայացուցիչներից բաղկացած Արտակարգ հասարակական ժողովի կողմից: Իր պաշտոնական ծառայության համար գոսպոդարը պետք է վարձատրվեր ժողովի կողմից գահաթերթով հաստատված որոշակի դրամական գումարով: Որպես գործադիր իշխանության գլուխ և ղեկավար՝ գոսպոդարն օժտված էր կառավարության անդամներին և այլ բարձրագույն պաշտոնյաներին նշանակելու, ինչպես նաև պաշտոնազրկելու լիազորություններով: Նա իշխանապետության բանակի գերագույն հրամանատարն էր: Ստեղծվում է վեց՝ ներքին գործերի, ֆինանսների, պետական քարտուղարության, արդարադատության, պաշտամունքների և ռազմական նախարարություններից բաղկացած գործադիր իշխանություն՝ կառավարություն: Նախարարները պատասխանատու էին գոսպոդարի առաջ: Առաջին երեք գերատեսչությունների ղեկավարները, ներքին գործերի նախարարի նախագահությամբ, կազմում էին հատուկ Վարչական խորհուրդ՝ անմիջականորեն ենթակա լինելով գոսպոդարին: Այդ խորհուրդը իր նիստերը պետք է գումարեր շաբաթը երկու անգամ և քննարկեր իշխանապետությանը վերաբերող տնտեսական, քաղաքական, ֆինանսական ընթացիկ և այլ հարցերը: Քննարկումների արդյունքում ընդունված որոշումները ուժի մեջ էին մտնում միայն գոսպոդարի կողմից հաստատվելուց հետո: Գոսպոդարի մահվան կամ նրա պաշտոնանկության դեպքում, մինչև հաջորդ գոսպոդար ընտրելը, գերագույն դիվանի նախագահից, ներքին գործերի և արդարադատության նախարարներից ստեղծ-

վում էր ժամանակավոր ղեկավարություն՝ կայմակամություն: Մոլդավիայում և Վալախիայում օրենսդիր իշխանությունը պետք է իրականացներ 39 բարձրագույն բոյարներից և երեք եպիսկոպոսներից հինգ տարով ընտրված Սովորական հասարակական ժողովը: Տվյալ իշխանապետության բարձրագույն հոգևոր պետը՝ միտրոպոլիտը, պետք է լիներ Սովորական հասարակական ժողովի անփոփոխ նախագահը: Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը՝ Սովորական հասարակական ժողովը, իր նիստերը պետք է գումարեր յուրաքանչյուր տարվա վերջին երկու ամիսներին և քննարկեր երկրում առաջացած բոլոր կարևոր խնդիրները՝ ստուգեր իշխանապետության եկամուտներն ու ծախսերը, հաստատեր հաջորդ տարվա բյուջեն, ուսումնասիրեր արդյունաբերությանը և առևտրին, մշակույթին, գյուղատնտեսությանը, հանրային կրթությանը վերաբերող հարցերը: Այդ նպատակով յուրաքանչյուր նստաշրջանի սկզբին ստեղծվում էին հատուկ՝ ֆինանսական, վարչական, եկեղեցական, դատական հանձնաժողովներ: Յուրաքանչյուր գոսպոդար օժտված էր օրենսդրական նախաձեռնության լիազորություններով: Սովորական հասարակական ժողովի ընդունած օրինագծերը կազմվում էին օրենսդրական նախաձեռնությամբ օժտված գոսպոդարի ներկայացրած ծրագրերի հիման վրա և օրենքի ուժ էին ստանում գոսպոդարի կողմից հաստատվելուց հետո: Նախարարները Սովորական հասարակական ժողովի անդամներ լինել չէին կարող: Սակայն նրանք պետք է ներկա լինեին ժողովի նիստերին և ընդամենը պատասխանեին իրենց բնագավառների գործունեությանը վերաբերող հարցերին:

Սովորական հասարակական օրենսդիր ժողովը իրավասու էր հանրագրով պահանջներ ներկայացնել գոսպոդարին: Եթե գոսպոդարը չէր բավարարում ժողովի կողմից իրեն հղված հանրագրի պահանջները, ապա ժողովն իրավասու էր այդ հանրագիրը ներկայացնել սյուզերեն տերության կառավարությանը, ինչպես նաև իշխանապետությունների քաղաքական հովանավոր Ռուսաստանին՝

հայցելով միջոցառումներ ձեռնարկել տվյալ իշխանապետության գոսպոդարի դեմ:

Կազմակերպական Կանոնադրությունները Մոլդավիայում և Վալախիայում հիմնում էին նաև դատական իշխանության մարմիններ, որոնք պետք է արդարադատությունն իրականացնեին միայն գործող գրավոր օրենքների հիման վրա:

1834թ. հունվարի 29-ին Պետերբուրգում կնքված ռուս-թուրքական համաձայնությամբ թուրքական կառավարությունը ճանաչում էր Մոլդավիա և Վալախիա իշխանապետությունների հասարակական-քաղաքական կառուցվածքին վերաբերող Ռուսաստանի կազմած սահմանադրությունները՝ կազմակերպական Կանոնադրությունները[75]:

Կազմակերպական Կանոնադրությունների հիման վրա Դանուբյան իշխանապետություններում ստեղծվում են կառավարման մարմիններ, ազգային բանակ, ոստիկանություն, դպրոցներ, վերացվում են յուրաքանչյուր իշխանապետության ներքին մաքսերը: 1831 թ.-ից իշխանապետություններում կատարվում է բնակչության, մասնավորապես՝ հարկատուների ամենամյա հաշվառում: 1833 թ. կատարված ռուսական ռազմական վիճակագրական տվյալների համաձայն՝ Վալախիայում բնակվում էին 382.072, իսկ Մոլդավիայում՝ 221.944 ընտանիք: Իշխանապետություններում կիրառության մեջ են դրվում ծննդյան վկայականները: Ավելանում են ընտրովի քաղաքային խորհուրդներով՝ մագիստրատներով, կառավարվող քաղաքները: Քաղաքային խորհուրդներ՝ մագիստրատներ են հիմնվում վալախական 17 և մոլդավական 6 քաղաքներում: Շարունակվում են քաղաքների վերակառուցման ու բարեկարգման աշխատանքները: 1833 թ.-ից սկսում են լուսավորել բոլոր քաղաքների փողոցները: Կատարելագործվում է փոստային հաղորդակցությունը: Վալախիայում հիմնվում են լրացուցիչ 22 փոստային կայաններ: Մեծ ուշադրու-

[75] Histoire chronologique de la Roumanie, p. 155.

թյուն է դարձվում հակահրդեհային միջոցառումների կազմակերպման աշխատանքներին: Առաջին անգամը լինելով՝ արտասահման մեկնողների համար սահմանվում են անձնագրեր: Արևմտյան Եվրոպա կամ Ռուսաստան մեկնողները ստանում էին ռուսերեն և ֆրանսերեն, իսկ Օսմանյան կայսրություն գնացողները՝ թուրքերեն անձնագրեր: Ստեղծվում են տարբեր բնույթի ծրագրեր կազմող մի շարք հատուկ հանձնաժողովներ: 1833 թ. ստեղծվում է Թուրքիայի հետ Դանուբ գետով և Ավստրիայի հետ իշխանապետությունների սահմանը պաշտպանելու նախագիծ: Թուրքական կառավարությունը 1837 թ. ճանաչում է բաց ծովում ռումինական նավերի նավարկության իրավունքը: 1848 թ. հունվարի 1-ին վերացվում է Մոլդավիայի և Վալախիայի միջև գոյություն ունեցող մաքսային սահմանը՝ տնտեսապես միավորելով երկու իշխանապետությունները և միանման կազմակերպական Կանոնադրությունների հիման վրա պայմաններ ստեղծելով նրանց ազգային ու քաղաքական միավորման համար[76]:

1848 թ. եվրոպական երկրներում ծավալվող հեղափոխությունների անմիջական ազդեցության ներքո ապրիլի 8-ին Մոլդավիայում, իսկ հունիսի 23-ին՝ Վալախիայում սկսվում է ազգային-ազատագրական պայքար՝ Օսմանյան կայսրության վասալական կախվածությունից ազատագրվելու և քաղաքականապես միավորված մեկ միասնական, ռումինական պետություն ստեղծելու համար:

Դանուբյան իշխանապետություններում ազգային-ազատագրական, միասնական պետություն ստեղծելու համար սկսված պայքարը ճնշելու, «օրինական կարգը» վերականգնելու և «երկրի նախկին իրավունքները և հիմնարկությունները» պահպանելու նպատակով ցարական և թուրքական կառավարությունները հուլիսին զինված ուժեր են մտցնում Մոլդավիա և Վալախիա: Հուլիս 31-ի նոտայով ցարական կառավարությունը բացառում էր անկախ դակիա-ռումի-

[76] Տե՛ս В. Я. Гросул, նույն տեղում:

նական պետության մեջ միավորվելու ռումինների կամքը[77]: Սեպտեմբերին ռուսական և թուրքական բանակները ճնշում են դանուբյան իշխանապետություններում անկախության և ռումինական միասնական պետության համար ծավալվող ազգային-ազատագրական շարժումը:

Բոսֆորի նեղուցի եվրոպական ափի՝ Կ.Պոլսին մոտ գտնվող Բալթա-Լիման փոքր նավահանգստում Ռուսաստանը և Թուրքիան 1849 թ. մայիսի 1-ին յոթ տարի ժամկետով կնքում են պայմանագիր՝ համաձայնելով միասնական ռազմաքաղաքական գործողություններ իրականացնելու, Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիայի և Վալախիայի քաղաքական անկախությունը բացառելու և մեկ միասնական ռումինական պետության մեջ այդ իշխանապետությունների միավորումը կանխելու համար: Այդ առումով՝ պայմանավորվող երկու արքունիքները, փոխադարձ համաձայնությամբ, որոշակի փոփոխությունների էին ենթարկում Մոլդավիա և Վալախիա իշխանապետությունների կառավարման համար ռուսական կառավարության կողմից կիրառության մեջ դրված և սյուզերեն տերության՝ Օսմանյան կայսրության վավերացրած 1831 և 1832 թթ. միանման սահմանադրական կազմակերպությունները: Այդ փոփոխությունների համաձայն՝ Մոլդավիա և Վալախիա իշխանապետությունների յուրաքանչյուր գոսպոդար այլևս ընտրվելու էր ոչ թե բոյարներից ու քաղաքացիական միությունների ներկայացուցիչներից բաղկացած Արտակարգ հասարակական ժողովի, այլ՝ Ռուսաստանի համաձայնությամբ, յոթ տարի ժամկետով նշանակվելու էր սյուզերեն տերության՝ օսմանյան սուլթանի կողմից: Երկու իշխանապետությունների Սովորական և Արտակարգ բոյարական ընտրովի ժողովների փոխարեն ստեղծվում էին օրենսդիր խորհուրդներ, որոնց անդամներին «առավել ազնվատոհմիկ և առավել վստահություն վայելող բոյարներից և բարձրագույն հոգևորականներից» պետք է

[77] Histoire chronologique de la Roumanie, p. 164.

նշանակեին գոսպոդարները: Այդ օրենսդիր խորհուրդներից յուրաքանչյուրը հիմնականում օժտվում էր տվյալ իշխանապետության հարկային քաղաքականությանը և տարեկան բյուջեին վերաբերող հարցերը քննարկելու իրավասություններով: Վալախիայի՝ Բուխարեստ և Մոլդավիայի՝ Յասսի վարչական կենտրոններում ստեղծվելու էին բոյարներից բաղկացած մեկական Վերահսկիչ հանձնաժողովներ, որոնք պետք է հետևեին Դանուբյան իշխանապետություններին ռուսական կառավարության շնորհած 1831 և 1832 թթ. կազմակերպական Կանոնադրությունների կիրառման ընթացքին և առաջարկություններ ներկայացնեին սյուզերեն տերության՝ Օսմանյան կայսրության կառավարությանը՝ այդ իշխանապետությունների վարչական համակարգը առավելագույն կերպով բարեփոխելու համար: Այդ առաջարկությունները քննարկելուց հետո, ռուսական կառավարության համաձայնությամբ, սուլթանական հրովարտակով պետք է վավերացվեին Դանուբյան իշխանապետությունների վարչական կառավարման բարեփոխման վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովների արտահայտած նկատառումները: Երկու տերությունների կողմից ժամանակավորապես ռազմական գրավման ենթարկված Դանուբյան իշխանապետությունների կառավարման ընթացքը վերահսկելու էին Ռուսաստանի և Թուրքիայի նշանակած մեկական արտակարգ կոմիսարները, որոնք գոսպոդարներին ներկայացրած իրենց կառավարությունների նույնանման հրահանգներով պետք է կանխեին նրանց ղեկավարության ներքո գտնվող Մոլդավիայում և Վալախիայում ազգային-ազատագրական, միավորման համար մղվող պայքարը: Երկու տերությունների արտակարգ կոմիսարները փոխադարձ համաձայնությամբ պետք է նշանակեին Մոլդավիայի և Վալախիայի Վերահսկիչ հանձնաժողովների անդամներին և իրենց կառավարություններին զեկուցեին տրված հանձնարարականներով գործող այդ հանձնաժողովների աշխատանքների մասին:

Երկու տերությունները պայմանավորվում էին Մոլդավիայից և Վալախիայից իրենց զորքերն ամբողջությամբ դուրս բերել այդ իշխանապետությունների կազմակերպական Կանոնադրությունները բարեփոխելուց և այդ երկու նահանգների ներքին անդորրությունը լիովին կայունացնելուց հետո: Սակայն, նախքան այդ երկու իշխանապետություններից ռուսական և թուրքական զորքերի ամբողջական դուրսբերումը, անհապաղորեն պետք է համալրվեր տեղական միլիցիան, որն իր կարգապահությամբ և անձնակազմով ի վիճակի կլիներ պահպանելու այդ երկու նահանգների «օրինական իշխանությունը»[78]:

Բալթա-Լիմանի 1849 թ. ռուս-թուրքական համաձայնության պայմանները նշանակալիորեն նվազեցնում էին 1831 և 1832 թթ. սահմանադրական կազմակերպություններով շնորհված Դանուբյան իշխանապետությունների ինքնավարության իրավունքները և օսմանյան սուլթանի ձևական սյուզերենության ներքո ուժեղացնում էին Ռուսաստանի ազդեցությունը Մոլդավիայի և Վալախիայի ներքաղաքական կյանքի վրա: Դանուբյան իշխանապետությունների ազգային-ազատագրական, քաղաքական միավորման համար պայքարը ճնշելուց հետո միայն ռուս-թուրքական զինված ուժերը 1851 թ. հեռանում են Մոլդավիայից և Վալախիայից:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմում Ռուսաստանի կրած ծանր պարտությունը աշխարհաքաղաքական նոր իրադրություն է ստեղծում Դանուբյան իշխանապետություններում: Դեռևս պատերազմի ընթացքում՝ 1854 թ. փետրվարի 9-ին, Վիեննայում կայացած կոնֆերանսում Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրայի և Պրուսիայի ներկայացուցիչները իրենց կազմած արձանագրությամբ, որպես հաշտության կայացման անհրաժեշտ-պարտադիր պայման՝ Ռուսաստանից պահանջում են զորքերը դուրս բերել 1853 թ. հուլիսին

[78] Noradounghian G., նշվ. աշխ., h. 2. 1789-1856:
N 142. Traité avec la Russie au sujet des Principautés moldo-valaques fait à Balta-Liman lès Constantinople; le 19 avril /1er mai 1849, p. 389-392.

գրաված Դանուբյան իշխանապետություններից[79]: Ենթարկվելով Թուրքիայի դաշնակից տերությունների պահանջին՝ նույն՝ 1854 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսների ընթացքում ռուսական զորքերը հեռանում են Դանուբյան իշխանապետություններից[80]:

1856 թ. մարտի 30-ին Փարիզի կոնգրեսում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանը վերադարձնում էր 1853-1856 թթ. պատերազմի ընթացքում կորցրած Ղրիմի թերակղզու քաղաքները և նավահանգիստները, որոնցից էին՝ Սևաստոպոլը, Բալակլավան, Կամիշը, Եվպատորիան, Կերչ-Ենիկալեն, Կինբուրնը և այլ տարածքները, որ գրավել էին Օսմանյան կայսրության դաշնակից տերությունները: Ռուսաստանին վերադարձված այդ տարածքների փոխարեն, ինչպես նաև «Դանուբով նավարկության ազատությունը առավելագույն կերպով ապահովելու համար», կոնգրեսի մասնակից եվրոպական տերությունների դիվանագիտական ճնշման ներքո, ռուսական կառավարությունը հարկադրված էր հրաժարվել 1812 թ. Բուխարեստի հաշտության պայմանագրով իր տիրապետության տակ անցած Բեսարաբիայի հարավ-արևմտյան մասից՝ Իզմայիլի գավառից, մասնակիորեն՝ Ակկերման և Կագուլ գավառներից և Դանուբի Իզմայիլ և Ռենի նավահանգիստներից, որոնք, օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո, միացվում էին Մոլդավական իշխանապետությանը: 1829 թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցած Դանուբի Դելտայի կղզիները, ինչպես նաև Դելտային պատկանող սևծովյան Օձի կղզին, վերադարձվում էին թուրքական գերիշխանության տակ:

Կոնգրեսը հաստատում է ռուս-թուրքական բոլոր պայմանագրերում արձանագրված Մոլդավիայի և Վալախիայի ներքին ինքնավարության՝ «անկախ ու ազգային կառավարման» իրավունքը: Իրենց ներքին խաղաղությունը պահպանելու և սահմանների

[79] Histoire chronologique de la Roumanie, p. 169.
[80] Նույն տեղում, 170:

անվտանգությունը ապահովելու նպատակով՝ Դանուբյան իշխանապետությունները պետք է ունենային իրենց զինված ուժը:

Կոնգրեսի որոշմամբ Ռուսաստանն այլևս դադարում էր Դանուբյան իշխանապետությունների միակ ավանդական քաղաքական հովանավորը լինելուց, և Մոլդավիայի ու Վալախիայի ներքին ինքնավարության համատեղ երաշխավորներ էին հռչակվում Փարիզի հաշտության պայմանագիրը ստորագրած եվրոպական վեց տերությունները: Առանց եվրոպական վեց հովանավոր տերությունների համաձայնության՝ թուրքական կառավարությանը կտրականապես արգելվում էր խառնվել Դանուբյան ինքնավար իշխանապետությունների ներքին գործերին: Փարիզի հաշտության պայմանագրով նախատեսվում էր Մոլդավիայում և Վալախիայում հրավիրել դասային ներկայացուցչական արտակարգ խորհրդակցական ժողովներ, որոնք պետք է իրենց ցանկություններն արտահայտեին երկու իշխանապետությունների ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ[81]: Փարիզի հաշտության կոնգրեսը իր օրակարգային հարցերի քննարկման ընթացքում ամրագրում է նաև եվրոպական տերությունների և Թուրքիայի միջազգային հարաբերությունների վերաբերյալ նոր սկզբունքներ: Այսպես. 1856 թ. մարտի 18-ի արձանագրության մեջ հաստատագրվում էր, որ կոնգրեսի մասնակից տերությունները պարտավորվում են հարգել Օսմանյան կայսրության անկախությունը և տարածքային ամբողջականությունը՝ միասնաբար երաշխավորելով խստորեն պահպանել իրենց ընդունած այդ հանձնառությունը: Շեշտվում էր, որ տերությունների և թուրքական կառավարության միջև կնքված և կնքվելիք համաձայնագրերը կամ պայմանագրերը այլևս կազմելու էին եվրոպական միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասը: Կոնգրեսի ընդունած արձանագրության համաձայն՝ Թուրքիան և եվրոպական որևէ տերություն, նախքան միմյանց դեմ պատերազմ սկսելը, իրենց միջև առաջացած

[81] Сборник договоров России с другими государствами. 1856-1917, М., 1952. N 1. Парижский трактат. Париж, 18/30 марта 1856г., с. 23-33.

խնդիրները խաղաղ ճանապարհով կարգավորելու նպատակով պետք է դիմեին եվրոպական մյուս տերությունների հաշտարար միջնորդությանը[82]:

Եվրոպական տերությունների և Թուրքիայի միջազգային հարաբերությունների վերաբերյալ Փարիզի 1856 թ. հաշտության կոնգրեսի մարտի 18-ի արձանագրության սկզբունքները հետագայում կվկայակոչվեն անգլիական դիվանագիտության կողմից՝ Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական հաշտության պայմանագրի հոդվածները եվրոպական միջազգային իրավունքի հիման վրա համաեվրոպական կոնգրեսում քննարկելու և դրան համապատասխան պայմանագիրը փոփոխության ենթարկելու համար:

Չբավարարվելով Փարիզի հաշտության կոնգրեսի մասնակից եվրոպական տերությունների կողմից Օսմանյան կայսրության անկախությունը և տարածքային ամբողջականությանը միասնաբար երաշխավորելու մարտի 18-ի ընդունած պարտավորությամբ՝ հաշտության պայմանագրի կնքումից ընդամենը 15 օր անց՝ ապրիլի 15-ին, Ավստրիան, Ֆրանսիան և Անգլիան Ռուսաստանից գաղտնի Փարիզում ստորագրում են առանձին համաձայնություն՝ Թուրքիային վերցնելով իրենց քաղաքական երաշխավորության ներքո՝ շեշտելով, որ մարտի 30-ի պայմանագրի յուրաքանչյուր խախտում իրենց համար լինելու է «casus belli» (պատերազմի առիթ)[83]:

Վերլուծելով եվրոպական Մեծ տերությունների կողմից Օսմանյան կայսրության անկախությունը և տարածքային ամբողջականությունը միասնաբար երաշխավորելու Փարիզի հաշտության կոնգրեսի մարտի 18-ի արձանագրության և Ավստրիայի, Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից Թուրքիային իրենց քաղաքական երաշխավորության ներքո վերցնելու ապրիլի 15-ին ստորագրած համա-

[82] Annuaire des Deux Mondes. Histoire Générale des divers États. VI. 1855-1856. Paris, 1856.Protocoles du Congrès de Paris.Protocole n °X. Première séance du 18 mars 1856, p. 922.

[83] Նույն տեղում: VII. Traité de 15 Avril 1856 entre la France, la Grande- Bretagne et l'Autriche, p. 944:

ձայնությունը՝ թուրքական պատմագրությունը հանգում է այն եզրակացությանը, որի համաձայն այդ փաստաթղթերը պաշտոնապես ապացուցում էին, որ առանց եվրոպական հովանավոր տերությունների միաբան պաշտպանության՝ Օսմանյան կայսրությունը ինքնուրույնորեն իր գոյությունը այլևս չէր կարող պահպանել: 1856 թ. Փարիզի հաշտության պայմանների համաձայն, շեշտում է թուրքական պատմագրությունը, Օսմանյան կայսրությունը արդեն ճանաչվում էր որպես եվրոպական տերություն՝ դառնալով եվրոպական միջազգային իրավունքի իրավական սուբյեկտ: Ընդհանուր առմամբ, ընդգծում է թուրքական պատմագրությունը, Փարիզի հաշտության կոնֆերանսի ընդունած որոշումների հետևանքով միջազգային հարաբերություններում Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի դեմ այլևս պետք է ստանար եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի միահամուռ աջակցությունը[84]:

Ղեկավարվելով Փարիզի հաշտության կոնգրեսի ընդունած որոշումներով՝ 1857 թ. հունվարի 6-ին օսմանյան սուլթանը հրապարակում է կայսերական ֆերման՝ Մոլդավիայի և Վալախիայի ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ երկու իշխանապետություններում դասային ներկայացուցչական արտակարգ խորհրդակցական ժողովներ հրավիրելու մասին[85]:

Հիմնվելով Փարիզի հաշտության կոնգրեսի ընդունած որոշումների, ինչպես նաև 1857 թ. հունվարի 6-ի սուլթանական ֆերմանի վրա՝ 1857 թ. հոկտեմբերի 18-ին՝ Մոլդավիայի, իսկ երկու օր անց՝ հոկտեմբերի 20-ին, Վալախիայի դասային ներկայացուցչական արտակարգ խորհրդակցական ժողովներն ընդունում են միանման բանաձևեր՝ Ռումինիա անունով երկու ինքնուրույն Դանուբյան ինքնավար իշխանապետությունների քաղաքական միավորման և մեկ

[84] Tarih, նշվ. աշխ., էջ 237:

[85] Annuaire des Deux Mondes. Histoire Générale des divers États.VII. 1856-1857. Paris, 1857.
Appendice.III. Affaires d'Orient. IV. Firman pour la convocation des divans ad hoc, p. 925-926.

միասնական, ազգային անկախ պետության ստեղծման վերաբերյալ[86]:

1856 թ. Փարիզի հաշտության կոնգրեսից հետո Դանուբյան իշխանապետությունների հովանավոր վեց տերությունները, իրենց միջև առկա հակասություններով հանդերձ, շարունակում էին դժվար քննարկումները Մոլդավիայի և Վալախիայի ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ:

1858 թ. մայիսի 22-ից Փարիզում կայացած վեց երաշխավոր տերությունների կոնֆերանսում օգոստոսի 19-ին ընդունվում է «Համաձայնագիր Դանուբյան իշխանապետությունների կազմակերպման վերաբերյալ» Կանոնադրությունը: Դրանով վեց երաշխավոր տերությունները հաստատում էին օսմանյան սուլթանի գերագույն իշխանությունը ինքնավարությամբ օժտված Մոլդավիայի և Վալախիայի վրա, որոնք միավորվելով այլևս իրենց նոր կարգավիճակում անվանվելու էին Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետություններ: Սակայն յուրաքանչյուր ինքնավար իշխանապետություն կառավարելու էր տվյալ իշխանապետության ներկայացուցչական ժողովի ցմահ ընտրած և այդ պաշտոնում սուլթանի հաստատած գոսպոդարը: Յուրաքանչյուր իշխանապետություն ունենալու էր դատական համակարգ և կառավարման բարձրագույն մարմիններ՝ օրենսդիր ժողով և կառավարություն: Նախատեսվում էր երկու միավորված իշխանապետություններում ստեղծել նաև կառավարման մի շարք ընդհանուր մարմիններ, օրինակ՝ Կենտրոնական հանձնաժողով Ֆոկշանի քաղաքում, որն իրավասու պետք է լիներ օրենքներ հրապարակելու և բարձրագույն դատական ատյան՝ Վճռաբեկ դատարան: Սակայն յուրաքանչյուր իշխանապետությունում իրական իշխանությունը պատկանելու էր գոսպոդարին և կառավարությանը: Միացյալ իշխանապետությունները պետք է ունենային միանման ձևով կազմակերպված ոստիկանական ստորաբա-

[86] Histoire chronologique de la Roumanie, p. 173.

ժանումներ, որոնք պատերազմի ժամանակ կազմելու էին մեկ միասնական բանակ: Դանուբյան իշխանապետությունները Կ.Պոլսում պետք է ունենային սուլթանի հաստատած իրենց դիվանագիտական ներկայացուցիչներին, որոնք պահպանելու էին նախկին պայմանագրերով իրենց վերապահված բոլոր արտոնությունները և անձեռնմխելիության կարգավիճակը: Երաշխավոր տերությունները 1858 թ. օգոստոսի 19-ի համաձայնությամբ որոշում էին, որ վասալական երկու իշխանապետություններից Մոլդավիան թուրքական գանձարանին յուրաքանչյուր տարի պետք է վճարեր 1.500.000, իսկ Վալախիան՝ 2.500.000 պիաստր հարկ:

1858 թ. Փարիզի կոնֆերանսի ընդունած համաձայնագրով Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունների ինքնավարության կարգավիճակը և տարածքային անձեռնմխելիությունը միասնաբար երաշխավորում էին օսմանյան կառավարությունը և վեց հովանավոր տերությունները: Առանց վեց հովանավոր տերությունների համաձայնության կամ թույլտվության, ո՛չ սուլթանական կառավարությունը և ո՛չ էլ մեկ այլ տերություն իրավունք չուներ խախտել իշխանապետությունների սահմանները և զորք մտցնել նրանց տարածքները կամ խառնվել նրանց ներքին գործերին[87]:

1858 թ. Փարիզի համաձայնագրին համապատասխան՝ երկու իշխանապետությունների յուրաքանչյուր ընտրական ժողովը 1859 թ. հունվարի 17-ին՝ Մոլդավիայի, իսկ փետրվարի 5-ին՝ Վալախիայի գոսպոդար է ընտրում մոլդավական բոյարական ընտանիքին պատկանող գնդապետ Ալեքսանդր Կուզային՝ այդպիսով անձնական ունիայով փաստորեն միավորելով երկու Դանուբյան Միացյալ իշխանապետությունները և հիմքեր ստեղծելով քաղաքականապես

[87] Noradounghian G., նշվ. աշխ., h. 3. 1856-1878. Paris, 1902:
N 702. Convention pour l'organisation des Principauté de Moldavie et de Valachie.Signé à Paris le 19 août 1858, p. 109-118.

միավորված, մեկ միասնական պետության ստեղծման համար[88]: Անձնական ունիայով միավորված Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունները 1859 թ. մարտին միասնական դիվանագիտական ներկայացուցչություն են հիմնում սյուզերեն տերության մայրաքաղաք Կ.Պոլսում[89]:

1859 թ. ապրիլի 7-ից մինչև սեպտեմբերի 6-ը Փարիզում ընդհատումներով կայացած կոնֆերանսում Եվրոպական հովանավոր վեց տերությունները և Թուրքիան Ալ. Կուզային պաշտոնապես ճանաչում են երկու ինքնուրույն իշխանապետություններ Մոլդավիայի և Վալախիայի մեկ ընդհանուր գոսպոդար՝ սակայն վերապահելով միայն նրա կառավարման ժամանակահատվածի համար[90]:

Փարիզի կոնֆերանսում ընդունված որոշման հիման վրա՝ սեպտեմբերի 24-ին հրապարակված օսմանյան սուլթանի երկու առանձին կայսերական հրովարտակներով Ալ. Կուզան հռչակվում էր Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունների գոսպոդար[91]:

Եվրոպական վեց հովանավոր տերությունների կողմից Ալ. Կուզային երկու ինքնուրույն իշխանապետությունների մեկ ընդհանուր գոսպոդար ճանաչելու հետևանքով երկու իշխանապետությունների կառավարությունները միջոցառումներ են իրականացնում Բուխարեստ կենտրոնով Մոլդավիայի և Վալախիայի քաղաքական, վարչական ու տնտեսական միավորման և մեկ միասնական՝ ռումինա-

---

[88] Histoire chronologique de la Roumanie, p. 174.

[89] Նույն տեղում, 175:

[90] Martens G.Fr., նշվ. աշխ., h. XVII, մաս II:
XV. Protocole (N22) d'une Conférence, tenue à Constantinople, le 6 septembre 1859, entre les Plénipotentiaires de l'Autriche, de la France, de la Grande-Bretagne, de la Russie, de la Sardaigne et de la Turquie relativement à l'union des Principautés danubiennes, p. 82-84.

[91] Noradounghian G., նշվ. աշխ., h.3. 1856-1878. Paris, 1902:
Նույն տեղում, N 706 Firman d'investiture d'Alexandre Jean Couza, comme Hospodar de Valachie.En date du 24 septembre 1859, p. 123:
Նույն տեղում, N 707. Firman d'investiture d'Alexandre Jean Couza, comme Hospodar de Moldavie. En date du 24 septembre, p. 123:

կան պետության ստեղծման համար: Այսպես. 1859-1861 թթ. ընթացքում ստեղծվում է միասնական փոստ-հեռագրային, մաքսային և սանիտարական համակարգ: Միասնականացվում է երկու իշխանապետությունների դրամական միավորը: Կազմակերպվում է երկու իշխանապետությունների մեկ ընդհանուր ռազմական նախարարությունը: Մոլդավիայի և Վալախիայի միացյալ իշխանապետությունները 1860 թ. սեպտեմբերին դիվանագիտական ներկայացուցչություն են հիմնում Փարիզում:

1861 թ. նոյեմբերին եվրոպական վեց հովանավոր տերություններն ի վերջո համաձայնվում են Դանուբյան երկու Միացյալ իշխանությունների քաղաքական միավորմանը:

Եվրոպական հովանավոր տերություններին 1861 թ. դեկտեմբերի 2-ին հղած նոտայով և կայսերական հրովարտակով օսմանյան սուլթանը համաձայնվում էր Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունների վարչական և քաղաքական միավորմանը՝ սակայն վերապահելով միայն Ալ. Կուզայի կառավարման ժամանակահատվածի համար[92]:

1861 թ. դեկտեմբերի 16-ին հրապարակվում է եվրոպական վեց հովանավոր տերությունների դեսպանների կոնֆերանսի նախապես հաստատված դեկտեմբերի 2-ի սուլթանական հրովարտակը՝ Ալ. Կուզայի կառավարման ժամանակահատվածում Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունների կառավարությունները և օրենսդիր ժողովները միավորելու մասին: Այդպիսով՝ եվրոպական վեց հովանավոր տերությունների հաստատած սուլթանական հրովարտակը Դանուբյան երկու ինքնուրույն իշխանապետությունների անձնական ունիան, թեև ժամանակավորապես, վերա-

[92] Martens G.Fr., նշվ. աշխ., h. XVII, մաս II:
XVI. Firman sur l'organisation administrative et législative des Principautés de Moldavie et de Valachie, en date du 2 décembre 1861, suivi de la correspondence officielle du ministre des affaires étrangères de Turquie et des Plénipotentiaire de l'Autriche, de la France, de la Grande-Bretagne, de la Russie, de la Prusse et de l'Italie relative à ce firman, p. 84-91.

ծում էր քաղաքական ունիայի, որի հետևանքով քաղաքականապես միավորված Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունները դառնում էին միջազգային իրավունքի միասնական սուբյեկտ:

Թեև 1861 թ. դեկտեմբերի 2-ի սուլթանական հրովարտակը երկու իշխանապետությունների քաղաքական միավորումը պայմանավորում էր սոսկ Ալ. Կուզայի կառավարման ժամանակահատվածով, այնուամենայնիվ, երկու Միացյալ իշխանապետությունների գոսպոդար Ալ. Կուզան հանդես է գալիս այդ փաստաթղթի սեփական հայեցողությամբ մեկնաբանելու համարձակ նախաձեռնությամբ: Սուլթանական հրովարտակի հրապարակումից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 23-ին, երկու Միացյալ իշխանապետությունների գոսպոդար Ալ. Կուզան հրապարակում է պաշտոնական հայտարարություն Մոլդավիայի և Վալախիայի Միացյալ իշխանապետությունների քաղաքական միավորման և մեկ միասնական, ազգային պետության՝ Ռումինիայի ստեղծման մասին:

Գոսպոդար Ալ. Կուզայի՝ դեկտեմբերի 23-ի հայտարարությունը առաջին պետական ակտն էր, որը պաշտոնապես ազդարարում էր Միացյալ իշխանապետություններ Մոլդավիայի և Վալախիայի քաղաքական միավորման և մեկ միասնական, ազգային պետության առաջացման մասին: 1862 թ. փետրվարի 5-ին Բուխարեստում հրավիրված Մոլդավիայի և Վալախիայի միասնական Ազգային ժողովը կազմում է մեկ ընդհանուր կառավարություն, որով էլ ավարտվում է Դանուբյան Միացյալ իշխանապետությունների քաղաքական միավորումը և միասնական, ռումինական պետության ստեղծումը: Թուրքական սուլթանը, այնուամենայնիվ, շարունակում է միավորված իշխանապետությունների՝ Ռումինիայի նկատմամբ պահպանել, արդեն թեկուզ և ձևական, իր գերագույն իշխանության իրավունքը: Այսպես. 1864 թ. հունիսի 28-ին Կ.Պոլսում Ալ. Կուզայի հետ կնքված արձանագրության համաձայն, առանց թուրքական կառավարության հետ որևէ նախնական պայմանավորվածության, երկու

Միացյալ իշխանապետությունները արդեն լիակատար ազատություն էին ստանում վարչական կառավարման և օրենսդրության բնագավառներում[93]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բալկանյան ժողովուրդների՝ հույների, չեռնոգորցիների, սերբերի, բուլղարների և Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիայի և Վալախիայի ազգային-ազատագրական պայքարի արդյունքում 19-րդ դարի կեսերին Բալկանյան թերակղզում առաջացել էր հետևյալ աշխարհաքաղաքական իրավիճակը:

Թուրքական տիրապետության դեմ 1821-1829 թթ. հույն ժողովրդի մղած ազգային-ազատագրական պատերազմի և Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի անմիջական ռազմաքաղաքական աջակցության հետևանքով Բալկանյան թերակղզում ստեղծվում է առաջին անկախ հունական պետությունը: 1863 թ. խաղաղ ճանապարհով Անգլիան Հունաստանին է զիջում Հոնիական յոթ կղզիները: 1866-1869 թթ. կրետական ապստամբության հետևանքով միջերկրածովյան Կրետե կղզին Մեծ տերությունների անմիջական միջամտության հետևանքով Օսմանյան կայսրության կազմում ստանում է ներքին ինքնավարության իրավունքներ: Անկախություն ստացած Հունաստանը արդեն պետք է պայքար ծավալեր դեռևս օսմանյան տիրապետության տակ գտնվող հունական հողերը՝ Էպիրոսը, Թեսալիան, Մակեդոնիան, Թրակիան, Էգեյան ծովի կղզիները, միջերկրածովյան Կրետեն և Կիպրոսը ազատագրելու և մեկ միասնական, ազգային պետության մեջ միավորելու համար:

Բուլղար ժողովուրդը իր ազգային զարթոնքի և ազգային շարժման, ինչպես նաև ռուսական դիվանագիտության ակտիվ օժանդակության հետևանքով 1870 թ. ստանում է կոնկրետ տարածքում

[93] Histoire chronologique de la Roumanie, էջ 179:

Կ.Պոլսի հունական պատրիարքությունից անջատ, ինքնուրույն ազգային եկեղեցի հիմնելու իրավունք՝ այդպիսով քաղաքական հիմքեր նախապատրաստելով անկախ պետության ստեղծման համար:

1852 թ. անցնելով աշխարհիկ կառավարման համակարգին և, տերությունների միջնորդությամբ 1860 թ. ընդարձակելով Չեռնոգորիայի սահմանները՝ Դանիլո Նեգոշը նպաստում է իր իշխանապետության միջազգային դրության հետագա ամրապնդմանը:

Սերբ ժողովուրդը նախկին Բելգրադի նահանգի և նրա սահմաններից դուրս գտնվող վեց շրջանների տարածքում ստեղծում է միջազգայնորեն ճանաչված իր ինքնավար իշխանապետությունը՝ Մեծ տերությունների դիվանագիտական աջակցությամբ 1867 թ. դուրս հանելով թուրքական կայազորները:

Դանուբյան իշխանապետություններ Մոլդավիան և Վալախիան իրենց ազգային-ազատագրական պայքարի արդյունքում ի վերջո 1862 թ. հունվարին քաղաքականապես միավորվում են մեկ միասնական՝ ռումինական պետության մեջ:

Օսմանյան կայսրությունից ձևականորեն վասալական կախվածության մեջ գտնվող իշխանապետություններ Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան արդեն պետք է պայքար ծավալեին լիակատար քաղաքական անկախության, ինչպես նաև դեռևս թուրքական տիրապետության տակ մնացած իրենց պատմական տարածքները ազատագրելու և մեկ միասնական, ազգային պետության մեջ միավորելու համար: Ինչ վերաբերում է Ալբանիային, Բուլղարիային, Մակեդոնիային, Թրակիային, սլավոնական մարզեր Բոսնիային և Հերցեգովինային, ապա դրանք շարունակում էին մնալ օսմանյան տիրապետության բացարձակ գերիշխանության տակ:

Բալկանյան բոլոր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հաջողությունների նախաձեռնողը և աջակցողը Ռուսաստանն էր՝ 1774 թ. Քյուչուկ- Կայնարջիի հաշտության պայմանագրով Բալկանյան թերակղզում հիմք դնելով օսմանյան դարավոր տիրապետության տապալմանը: Առանց Օսմանյան կայսրության դեմ Ռու-

սաստանի ջախջախիչ ռազմական հաղթանակների և դիվանագիտական նվաճումների, բալկանյան ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, ի վերջո, անխուսափելիորեն դատապարտված էր կործանիչ պարտության:

1856 թ. Փարիզի հաշտության կոնգրեսի որոշումների համաձայն՝ Ռուսաստանը, թեև դադարում էր Օսմանյան կայսրության վասալ բալկանյան երկրների ներքին ինքնավարության միակ քաղաքական հովանավորը և երաշխավորը լինելուց, այնուամենայնիվ, եվրոպական վեց տերությունների միջև եղած տարաձայնություններին և հակասություններին հակառակ, նրանց աջակցությամբ բալկանյան երկրների անկախության նվաճումը սոսկ ժամանակի հարց էր: Այդ պատմական անշրջելի գործընթացի փայլուն ապացուցը կդրսևորվի 1878 թ. Բեռլինի համաեվրոպական կոնգրեսում և նրա ընդունած որոշումներում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ 1875-1878 ԹԹ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ. ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1875 թ. հուլիսին Բոսնիայում ապստամբություն է սկսվում թուրքական տիրապետության դեմ, որը տարածվում է նաև հարևան Հերցեգովինայում: Ապստամբների հիմնական պահանջներից էին այդ տարածքների միացումը Սերբիային ու Չեռնոգորիային: Սակայն, սկզբնական որոշ հաղթանակներին հակառակ, 1877 թ. օգոստոսին թուրքական զինված ուժերը կարողանում են ջախջախել այդ երկու սլավոնական մարզերում բռնկված ապստամբությունը:

1786 թ. ապրիլին թուրքական տիրապետության դեմ ազգային-ազատագրական ապստամբություն է բռնկվում նաև Բուլղարիայում: Սակայն 1876 թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի 20-ը հիմնականում Հարավային Բուլղարիայում բռնկված ապստամբությունը դաժանորեն ճնշվում է թուրքական կանոնավոր զորքերի և նրանց միացած ավազակախմբերի՝ բաշիբոզուկների կողմից:

1875 թ. բոսնիա-հերցեգովինյան ապստամբությամբ սկսված հերթական Արևելյան ճգնաժամը աստիճանաբար իր մեջ է ընդգրկում նաև Սերբիային ու Չեռնոգորիային: Հանդես գալով քաղաքական անկախության նվաճման և սլավոնական տարածքների ազատագրության ծրագրով՝ 1876 թ. հունիսի 30-ին Սերբիան ու Չեռնոգորիան, Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությամբ, պատերազմ են սկսում Օսմանյան կայսրության դեմ: Այնուամենայնիվ, չնայած Ռուսաստանի օգնությանը, սերբական բանակը ծանր պարտություն է կրում: Միայն Ռուսաստանի վճռական միջամտության հետևանքով Թուրքիան հարկադրված է լինում 1876 թ. նոյեմբերի 1-ին Սերբիայի հետ կնքել զինադադար, իսկ 1877 թ. փետրվա-

րի 28-ին՝ հաշտության պայմանագիր՝ պահպանելով նախապատերազմյան իրավիճակը: Իսկ փոքրիկ, հերոսական Չեռնոգորիան շարունակում է պատերազմը Թուրքիայի դեմ:

1875 թ. ամռանը Բոսնիայում և Հերցեգովինայում սկսված ազգային-ազատագրական ապստամբությունը որոշակի ազդեցություն է թողնում նաև Հյուսիսային Ալբանիայի վրա, որտեղի լեռնական ցեղերի առաջնորդները հանդես էին գալիս ինքնավարության պահանջով: Սակայն Հյուսիսային Ալբանիայում ապստամբություններ բարձրացնելու փորձերը ավարտվում էին անհաջողությամբ՝ ցեղապետերի միջև առկա տարաձայնությունների, զենքի ու սննդամթերքի սուր պակասի, թուրքական զինված ուժերի թվական գերակշռության, ինչպես նաև Բալկաններում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններից Ալբանիայի մեկուսացվածության պատճառով: Թուրքական կառավարությունը, ռազմական պատժիչ միջոցառումներով հանդերձ, ապստամբներին կատարած որոշ զիջումներով, ինչպես նաև ցեղապետների մի մասին տարբեր ձևերով իր կողմը գրավելով, կարողանում է պառակտել և զենքի ուժով ճնշել Հյուսիսային Ալբանիայում տեղի ունեցող ապստամբական առանձին ելույթները:

Բալկաններում ծավալվող իրադարձությունները դիվանագիտական ճանապարհով լուծելու նպատակով՝ 1876 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1877 թ. հունվարի 30-ը Կ.Պոլսում տեղի ունեցած եվրոպական տերությունների դեսպանաժողովը որոշում է Օսմանյան կայսրության կազմում տեղական վարչական ինքնավարություն շնորհել Բոսնիային, Հերցեգովինային և Բուլղարիային[94]:

Եվրոպական տերությունների՝ Կ.Պոլսի դեսպանների կոնֆերանսի կողմից Բուլղարիայի համար մշակած կազմակերպական

[94] Noradounghian G., Requeil d' Actes Internationaux de l'Émpire Ottoman. Tome troisième.1856-1878. p. 1902.
N 836. Protocoles de la Conférence de Constantinople pour le rétablissement de l'ordre dans les pays Balkaniques. Du 23 décembre 1876 au 20 janvier 1877, p. 400-494.

Կանոնադրության նախագծի համաձայն՝ 1870 թ. մարտի սուլթանական հրովարտակով ստեղծված բուլղարական էկզարիատի տարածքում՝ Տիրնովո և Սոֆիա կենտրոններով, պետք է ձևավորվեին թուրքական կառավարությանը հարկատու, տեղական վարչական ինքնավարությամբ օժտված երկու առանձին՝ Արևելյան և Արևմտյան նահանգներ: Յուրաքանչյուր նահանգ պետք է կառավարեր տերությունների համաձայնությամբ 5 տարի ժամկետով սուլթանի կողմից նշանակված օսմանահպատակ կամ օտարահպատակ գեներալ-նահանգապետը (Վալին): Գեներալ-նահանգապետը պետք է իրականացներ բարձրագույն իշխանությունը և վերահսկեր Օսմանյան կայսրության օրենքների և նահանգի կազմակերպական Կանոնադրության կատարմանը:Գեներալ-նահանգապետը նահանգը պետք է կառավարեր նահանգային շրջանների մուսուլմաններից և քրիստոնյաներից 4 տարի ժամկետով ընտրված նահանգային ժողովի միջոցով: Նահանգային ժողովը պետք է գումարվեր տարին մեկ անգամ՝ նահանգի ինգամյա բյուջեն քննարկելու և վերահսկելու, հարկերը հաստատելու և թուրքական կառավարությանը վճարելիք ամենամյա չափը որոշելու համար:

Յուրաքանչյուր տարի գեներալ-նահանգապետը նահանգային ժողովին պետք է ներկայացներ ֆինանսական հաշվետվություն և այնուհետև այն տրամադրվեր թուրքական կառավարությանը: Նահանգային ժողովը իր նիստերը պետք է անցկացներ հրապարակայնորեն:

Նահանգային ժողովը յուրաքանչյուր սանջակից (գավառից) 4 տարի ժամկետով նշանակում էր 10 անդամներից բաղկացած վարչական հանձնաժողով, որը պետք է ծառայեր որպես գեներալ-նահանգապետի սոսկ խորհրդակցական մարմին՝ Խորհուրդ: Ըստ իրավունքի՝ այդ Խորհրդի անդամներ պետք է նշանակվեին պաշտոնապես ճանաչված կրոնական համայնքների պետերը:

Նահանգի վարչական միավորն էր դառնալու հինգից մինչև տասը հազար բնակչություն ունեցող շրջանը: Յուրաքանչյուր

շրջան, առանց կրոնական տարբերության, 4 տարով պետք է ընտրեր քաղաքային խորհուրդ, որն իր անդամներից պետք է ընտրեր քաղաքապետ և նշանակեր նրա երկու խորհրդականներին: Քաղաքային խորհուրդը իր նիստերը պետք է գումարեր ամիսը մեկ անգամ և աշխատեր բարձրագույն իշխանությունների վերահսկողության ներքո: Նմանատիպ կառուցվածք պետք է ունենային նաև 10 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքներն ու ավանները:

Բազմաթիվ շրջաններ կարող էին միավորվել սանջակների (գավառների) մեջ և, ըստ իրենց մուսուլման կամ քրիստոնյա բնակչության մեծամասնության, կառավարվել մուսուլման կամ քրիստոնյա կառավարիչների կողմից, որոնք, գեներալ-նահանգապետի ներկայացմամբ, 4 տարի ժամկետով պետք է նշանակվեին թուրքական կառավարության կողմից: Սանջակների կառավարիչները պետք է վերահսկեին տեղական կարգն ու կանոնը և քաղաքային խորհուրդների գործունեությունը: Յուրաքանչյուր սանջակի կառավարիչ պետք է ունենար գրասենյակ և երկու խորհրդական, որոնց նահանգային ժողովի ներկայացրած թեկնածուներից պետք է նշանակեր գեներալ-նահանգապետը: Գեներալ-նահանգապետը կարող էր կասեցնել սանջակի կառավարչի պաշտոնավարությունը և թուրքական կառավարությանը ներկայացներ նրան պաշտոնազրկելու առաջարկ:

Քաղաքացիական և քրեական դատարանների դատավորներին նախ՝ Վերահսկիչ հանձնաժողովի և ապա՝ Վարչական խորհրդի համաձայնությամբ, երեք տարի ժամկետով, պետք է նշանակեր գեներալ-նահանգապետը: Երկրորդ անգամ նշանակված դատավորի պաշտոնավարումը դառնում էր անժամկետ:

Յուրաքանչյուր նահանգի կենտրոնական քաղաքում օսմանյան օրենքների համաձայն գործելու էր Վճռաբեկ դատարանը, որի մուսուլման և քրիստոնյա անդամներին և նախագահին տերությունների համաձայնությամբ պետք է նշանակեր թուրքական կառավարությունը:

Նահանգապետները և դատավորները ենթակա էին պաշտոնանկության միայն Վճռաբեկ դատարանի կայացրած վճռի համաձայն: Վճռաբեկ և բոլոր դատարանների նիստերը պետք է կայանային հրապարակայնորեն:

Կազմակերպական Կանոնադրության նախագծի համաձայն՝ գույքային ցենզի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունք էին ստանալու 25 տարին լրացած նահանգի բոլոր բնակիչները: Պետք է հռչակվեր բոլոր դավանանքների, կրոնական արարողությունների ու ծեսերի, կամավոր դավանափոխության, կրոնական հաստատությունների կառուցման լիակատար ազատության իրավունք: Դատական և վարչական համակարգում բուլղարերենը հավասարեցվելու էր թուրքերենին, իսկ առանձին շրջաններում տիրապետող հունարենը կարող էր դառնալ պաշտոնական լեզու:

Օսմանյան կանոնավոր բանակի զորամասերը պետք է տեղաբաշխվեին ամրոցներում և կարևոր քաղաքներում՝ նահանգները արտաքին վտանգից պաշտպանելու, պատերազմի դեպքում երկրի ներսում կամ նահանգի գեներալ-նահանգապետի պահանջով օգտագործելու համար:

Յուրաքանչյուր նահանգում քրիստոնյաներից և մուսուլմաններից համամասնորեն ստեղծվելու էր ազգային միլիցիա կամ ազգային գվարդիա, որոնց սպաներին պետք է նշանակեր գեներալ-նահանգապետը, իսկ կոնկրետ նշված վայրում ավելի քան հազար միլիցիայից բաղկացած ստորաբաժանումների բարձրաստիճան սպաներին պետք է նշանակեր թուրքական կառավարությունը: Յուրաքանչյուր նահանգի հասարակական անվտանգությունը ապահովելու նպատակով քրիստոնյաներից և մուսուլմաններից համամասնորեն ստեղծելու էր տեղական ժանդարմերիա, որի քրիստոնյա և մուսուլման սպաներին պետք է նշանակեր գեներալ-նահանգապետը: Կ.Պոլսի դեսպանաժողովի որոշմամբ՝ թուրքական կառավարությունը պետք է կասեցներ չերքեզների վերաբնակեցման քաղաքականությունը իր եվրոպական տիրույթներում և նպաստեր այդ

տարածքում հաստատվածներին վերաբնակվելու Փոքր Ասիայի մուսուլմանական նահանգներում[95]:

Բուլղարական պաշտոնական պատմագրության համաձայն՝ առաջին անգամը լինելով՝ միջազգային համաժողովը բուլղար ժողովրդին իր տարածքի սահմաններում պաշտոնապես ճանաչում է որպես ինքնուրույն ազգային հանրություն:

Կ.Պոլսի դեսպանաժողովը նույնանման կազմակերպական Կանոնադրության նախագիծ է մշակում նաև Բոսնիայի և Հերցեգովինայի համար, որոնք, միավորվելով մեկ միասնական նահանգի մեջ, նույնպես պետք է կառավարվեին պետությունների համաձայնությամբ՝ 5 տարով սուլթանի նշանակած գեներալ-նահանգապետի կողմից[96]:

Կ.Պոլսի դեսպանաժողովի մշակած Բուլղարիայի և Բոսնիա-Հերցեգովինայի կազմակերպական Կանոնադրությունները պետք է գործադրվեին երեք ամսվա ընթացքում և մեկ տարով վերահսկվեին եվրոպական տերությունների ստեղծած միջազգային հանձնաժողովի կողմից[97]:

Կ.Պոլսի դեսպանաժողովը Չեռնոգորիայի վերաբերյալ կայացնում է որոշում, ըստ որի՝ «Թուրքիայի և Չեռնոգորիայի միջև շատ հաճախ ցավալիորեն տեղի ունեցող բարդություններից խուսափելու համար իշխանապետության սահմանները պետք է բարելավվեն», որպեսզի նրա տարածքում ներառվեն Հերցեգովինայի, Ալբանիայի սահմանակից և Մորաչա գետի աջափնյա շրջանները, ինչպես նաև Սպուժ, Ժաբլյակ և Նիկշիչ քաղաքները: Չեռնոգորիան պետք է ստանար Բոյանա (Դրին) գետով դեպի Ադրիատիկ ծով ազատորեն դուրս գալու իրավունք, իսկ Սկուտարի լճի կղզիների ամրություննե-

[95] Noradounghian G., նշվ. աշխ., h.3, 1856-1878:
Annexe. Bulgarie. Projet de Règlament Organique, p. 411-415.
[96] Նույն տեղում, Annexe.Projet de Règlement de la Bosnie-Herzégovine, p. 416-419:
[97] Նույն տեղում, էջ 419-422:

րը պետք է ապառազմականացվեին[98]: Սակայն կոնֆերանսի ընթացքում՝ 1876 թ. դեկտեմբերի 23-ին, Թուրքիայում հանդիսավոր պայմաններում հռչակվում է սահմանադրություն, որով էլ փաստորեն վերջակետ է դրվում Կ.Պոլսի դեսպանաժողովի աշխատանքներին: Հենց թուրքական պատմագրությունն է շեշտում, որ Բալկաններում Ռուսաստանի իրականացրած պանսլավոնական քաղաքականությունը և բալկանյան ժողովուրդների ապստամբությունները կանխելու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների առիթով իր ներքին գործերին եվրոպական տերությունների միջամտությունը կանխելու և իր ինքնիշխանական իրավունքները պահպանելու նպատակով օսմանյան կառավարությունը Կ.Պոլսի դեսպանաժողովի ընթացքում՝ 1876 թ. դեկտեմբերի 23-ին, հռչակում է Օսմանյան կայսրության սահմանադրությունը[99]: Սակայն Օսմանյան կայսրության սահմանադրության հռչակումից կարճ ժամանակ անց՝ 1877 թ. փետրվարի 5-ին, սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը սահմանադրության հեղինակ Միդհաթ փաշային ենթարկում է աքսորի և այնուհետև մահվան, իսկ 1878 թ. փետրվարի 14-ին կասեցնում է ձևական բնույթ կրող սահմանադրության և պառլամենտի գործունեությունը:

Այնուամենայնիվ, Արևելյան հարցը դիվանագիտական ճանապարհով կարգավորելու նպատակով 1877 թ. մարտի 31-ին Լոնդոնում Մեծ տերությունները ստորագրում են արձանագրություն՝ հաստատելով Կ.Պոլսի կոնֆերանսի որոշումները՝ Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում էր Չեռնոգորիային, ապա տերությունները ցանկալի էին համարում, որ առավել կայուն և երկարատև խաղաղության հաստատման համար նրա սահմանները պետք է «բարելավվեն», և Չեռնոգորիան Բոյանա գետով պետք է ազատ ելք ունե-

[98] Նույն տեղում, Annexe. Monténégro, p. 410-411:
[99] Tarih, էջ 306:

նա դեպի Ադրիատիկ ծով: Տերությունները շեշտում էին, որ սուլթանի հպատակ քրիստոնյաների դրությունը չբարելավելու հետևանքով խաղաղությունը Արևելքում խախտող իրավիճակը անհամատեղելի է իրենց և ընդհանրապես Եվրոպայի շահերի համար[100]:

Այդ արձանագրությունը վերջին փորձն էր՝ ստիպելու Թուրքիային իրականացնելու Կ.Պոլսի կոնֆերանսի որոշումները: Սակայն ապրիլի 9-ին թուրքական կառավարությունը մերժում է իրեն հղված Լոնդոնի արձանագրությունը՝ այն որակելով տերությունների կողմից որպես կոպիտ միջամտություն իր ներքին գործերին:

Լոնդոնի արձանագրությունում արտահայտված տերությունների միասնական կամքը կենսագործելու նպատակով 1877 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Թուրքիային: Փաստորեն, Թուրքիայի մերժմամբ Արևելյան ճգնաժամը մտնում է նոր փուլ:

Մեկնաբանելով Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմի հիմնական պատճառը՝ թուրքական պատմագրությունը նշում է՝ Օսմանյան կայսրությունը մասնատելու և դեպի Միջերկրական ծով դուրս գալու Ռուսաստանի նպատակի իրականացման լավագույն միջոցը Բալկանյան թերակղզու աշխարհագրական դիրքի օգտագործումն էր: Սակայն, քանի որ 1856 թ. մարտի 18-ի Փարիզի արձանագրությամբ բոլոր տերությունները պարտավորվել էին միասնաբար հարգել Օսմանյան կայսրության անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ուստի Ռուսաստանը Օսմանյան կայսրության դեմ միջազգային իրավունքով արդարացված պատերազմի հիմնական պատճառ է դարձնում թուրքական կառա-

[100] Ключников Ю.В. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. I. От французской революции до империалистической войны. М., 1925.
N 214. Лондонский протокол по Восточному вопросу, заключенная 19/31 марта 1877 года, с. 219-220.

վարության կողմից 1877 թ. մարտի 31-ի Լոնդոնի արձանագրության մերժումը[101]:

Դեռևս 1876 թ. ամռանը, կանխատեսելով Բալկաններում ծավալվող իրադարձությունների հետագա զարգացումները, նախ՝ 1876 թ. հուլիսի 8-ին Չեխիայի Ռեյխշտադտ ամրոցում և ապա՝ 1877 թ. հունվարի 15-ին Բուդապեշտում կազմած երկու գաղտնի համաձայնություններով Ռուսաստանը և Ավստրո-Հունգարիան պայմանավորվում են բալկանյան հարցերում իրենց իրականացնելիք միասնական քաղաքականության վերաբերյալ[102]: Այդ համաձայնությունների ռուսական և ավստրիական տեքստերի միջև առկա որոշ տարբերություններին հակառակ, այնուամենայնիվ, դրանց ընդհանուր հանրագումարը վերջնական արդյունքում հանգում էր հետևյալ պայմանավորվածություններին: Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմում Ավստրո-Հունգարիան պարտավորվում էր պահպանել բարյացակամ չեզոքություն՝ դիվանագիտական ներգործության միջոցով ջլատելով ռուս-թուրքական պատերազմին այլ տերությունների միջամտության կամ կոլեկտիվ միջնորդության փորձերը[103]: Ռուս-թուրքական պատերազմում Ավստրո-Հունգարիայի բարյացակամ չեզոքության դիմաց, որպես փոխհատուցում, Ռուսաստանը համաձայնվում էր, որ Օսմանյան կայսրության կազմում Ավստրո-Հունգարիան ռազմական գրավման ենթարկեր սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան[104]: Սակայն կատարվում էր վերապահում, ըստ որի՝ Ավստրո-Հունգարիան ռազմական գրավման չէր ենթարկելու Սերբիայի և Չեռնոգորիայի միջև գտնվող տարածքը՝

---

[101] Tarih, էջ 238:

[102]Сборник договоров России с другими государствами. 1856-1917, М., 1952.
N 22. Рейхштадтское соглашение между Россией и Австро-Ввнгрией. Рейхштадт, 26 июня/ 8 июля 1876г., с. 144-148.
N 23. Секретная конвенция между Россией и Австро-Венгрией. Будапешт, 3/15 января 1877г., с. 149-155.

[103] Նույն տեղում, էջ 150:

[104] Նույն տեղում, էջ 152:

Նովի Բազարի սանջակը (գավառը)[105]: Իր հերթին, Ավստրո-Հունգարիան համաձայնվում էր, որ Թուրքիայի դեմ հաղթական պատերազմի դեպքում Ռուսաստանը 1856 թ. սահմաններում վերադարձներ Հարավ-Արևմտյան Բեսարաբիան[106]: Համաձայնության ավստրիական տեքստում Ավստրո-Հունգարիան չէր առարկում, որ Ռուսաստանը տարածքներ նվաճեր թուրքական տիրապետության տակ գտնվող սևծովյան շրջաններում և Փ. Ասիայում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում[107]: Ինչ վերաբերում էր Բալկաններում ապագա աշխարհաքաղաքական փոփոխություններին, ապա երկու կայսրությունները կտրականապես բացառում էին սլավոնական կամ որևէ մեկ այլ միավորված մեծ պետության կազմավորման հնարավորությունը[108]:

Երկու պայմանավորվող տերությունները համաձայնվում էին Սերբիայի և Չեռնոգորիայի տարածքային ընդարձակմանը, ընդ որում՝ Չեռնոգորիան դուրս էր գալու Ադրիատիկ ծով՝ ստանալով Սպիցցա նավահանգիստը[109]: Ռուսաստանը և Ավստրո-Հունգարիան համաձայնվում էին ճանաչել Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքականապես անկախ կարգավիճակը[110]:

Համաձայնության երկու տեքստերում Ավստրո-Հունգարիան և Ռուսաստանը չէին բացառում Բուլղարիայի, Ալբանիայի և «մնացյալ Ռումելիայի» անկախանալու հնարավորությունը: Ավստրո-Հունգարիան և Ռուսաստանը համաձայնվում էին, որ Թեսալիան, Էպիրոսի մի մասը և Կրետե կղզին միացվեին Հունաստանին: Ինչ վերաբերում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսի կարգավի-

[105] Նույն տեղում, էջ154:
[106] Նույն տեղում, էջ 148:
[107] Նույն տեղում:
[108] Նույն տեղում, էջ 155:
[109] Նույն տեղում, էջ 147:
[110] Նույն տեղում:

ճակին, ապա այն իր շրջակա տարածքով պետք է վերածվեր միջազգային ազատ քաղաքի[111]:

Այդպիսով՝ ռուս-թուրքական ապագա պատերազմում Ավստրո-Հունգարիայի չափազանց կարևոր բարյացակամ չեզոքությունը ապահովելու, այդ կայսրության համաձայնությամբ Հարավարևմտյան Բեսարաբիան վերադարձնելու, թուրքական տիրապետության տակ գտնվող սևծովյան շրջաններում և Փոքր Ասիայում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում տարածքներ գրավելու դիմաց, որպես փոխհատուցում, Ռուսաստանը չէր առարկում, որ այդ տերությունը ռազմական գրավման ենթարկեր ու կառավարեր սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան, որոնք, թեև ձևականորեն, սուլթանի անվանական սյուզերենության ներքո շարունակելու էին մնալ Օսմանյան կայսրության կազմում: Փաստորեն, ավստրո-ռուսական երկու գաղտնի համաձայնություններով կայացած քաղաքական գործարքների հետևանքով Ավստրո-Հունգարիան հանդես էր գալիս Սերբիայի գլխավորությամբ հարավսլավոնական հողերի միավորման, դեպի Ադրիատիկ ծով դուրս գալու և Ռուսաստանի ազդեցության ներքո Բալկաններում Մեծ Սերբիայի գերիշխանության հաստատման դեմ: 1876 թ. հուլիսի 8-ին Չեխիայի Ռեյխշտադտ ամրոցում և 1877 թ. հունվարի 18-ին Բուդապեշտում կազմված երկու համաձայնություններով ձեռք բերված ավստրո-ռուսական քաղաքական գործարքների հիմնական սկզբունքները հետագայում արտացոլվում են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրում և 1878 թ. Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներում:

Թուրքիայի դեմ ապագա պատերազմում ռուսական բանակների անցումը Ռումինիայով իրականացնելու համար 1877թ. ապրիլի 16-ին Ռուսաստանը Բուխարեստում քաղաքական և ռազմական

[111] Նույն տեղում, էջ 155:

մասերից բաղկացած պայմանագիր է կնքում Ռումինիայի հետ, որով ռումինական կառավարությունը համաձայնվում էր թույլ տալ ռուսական բանակների անցումը իր տարածքով: Դրա դիմաց՝ Ռուսաստանը երաշխավորում էր Ռումինիայի պետական սահմանների և նրա քաղաքական հիմնարկների անձեռնմխելիությունը[112]: Փաստորեն, 1877թ. ապրիլի 16-ի պայմանագրով Ռուսաստանը առաջինն է ճանաչում Օսմանյան կայսրության վասալ Ռումինիայի փաստական անկախությունը՝ որպես անկախ և ինքնիշխան պետություն:

Ապրիլի 22-ին Ռումինիան խզում է դիվանագիտական հարաբերությունները, և մայիսի 11-ին ռումինական պառլամենտը պատերազմ է հայտարարում սյուզերեն տերություն Օսմանյան կայսրությանը: Այնուհետև մայիսի 21-ին Ռումինիան հռչակում է իր անկախությունը՝ որպես ինքնիշխան պետություն:

1877 թ. ապրիլի 24-ին պատերազմ հայտարարելով Թուրքիային՝ հունիսի 27-ի գիշերը ռուսական զորքերը Զիմնիցայի մոտ անցնում են Դանուբ գետը և Բուլղարիայում ռազմական գործողություններ ծավալում թուրքական բանակների դեմ: Սակայն առաջին ռազմական հաղթանակներին հաջորդում են ռուսական բանակների անհաջողությունները: Հուլիսի 20-ին և 30-ին, ինչպես նաև սեպտեմբերի 11-ին և 12-ին Բալկանյան լեռնաշղթայի Պլևնա ամրոցը գրավելու փորձերը ավարտվում են անհաջողությամբ: Ի վերջո, երկարատև պաշարումից հետո, դեկտեմբերի 10-ին Պլևնա ամրոցը անձնատուր է լինում ռուսական բանակին: Դեկտեմբերի 25-31-ին ռուսական բանակները հաղթահարում են Բալկանյան լեռնաշղթան: 1878 թ. հունվարի 8-9-ը ճեղքելով Շիպկայի լեռնանցքի պաշտպանությունը՝ ռուսական զորքերը հունվարի 20-ին գրավում են Ադրիանապոլիսը, որտեղ և տեղափոխվում է բանակի գլխավոր շտաբը:

[112] М.М. Залышкин, Внешняя политика Румынии и румыно-русские отношения. 1857-1878. М., 1974, с. 215-223.

Հաղթական արդյունքներով են ավարտվում ռուսական բանակների ռազմական գործողությունները նաև Կովկասյան ռազմաճակատում: Պատերազմի հայտարարումից ընդամենը մի քանի օր անց՝ ապրիլի 29-ին, Կովկասյան բանակը Արևմտյան Հայաստանում գրավում է Բայազետը, մայիսի 17-ին՝ Արդահանը, իսկ նոյեմբերի 18-ին գրոհով վերցնում է անառիկ համարվող Կարսի բերդը: Այնուհետև ռազմաստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող Էրզրում բերդաքաղաքը, ի վերջո, 1878 թ. փետրվարի 20-ին անձնատուր է լինում պաշարման ենթարկած ռուսական բանակին:

Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում ջախջախիչ պարտություններ կրած Թուրքիան 1878 թ. հունվարի 8-ին հաշտություն է խնդրում: Ադրիանապոլիս ժամանած թուրքական պատվիրակները Կ.Պոլսից հունվարի 27-ին հրաման են ստանում Ռուսաստանի ներկայացրած բոլոր պայմանները ընդունելու վերաբերյալ[113]: Վերջապես 1878 թ. հունվարի 31-ին Ադրիանապոլսում կնքվում է Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում ռուս-թուրքական պատերազմի ռազմական գործողությունները միաժամանակ դադարեցնող զինադադար և նախնական հաշտության պայմանագիր[114]: Զինադադարի պայմանների համաձայն՝ ռուսական բանակը փետրվարի 2-ին գրավում է Մարմարա ծովի հյուսիսային՝ եվրոպական ափի նավահանգիստներից Ռոդոստոն(արդի Թեքիրդաղ), փետրվարի 4-ին՝ Սիլիվրին, իսկ փետրվարի 6-ին՝ Կ.Պոլսից 40 կմ. հեռավորության վրա գտնվող Չաթալջայի բլուրները՝ անմիջական վերահսկողության ենթարկելով Օսմանյան կայսրության մայրաքաղաքը:

---

[113] Օսման Նուրի, Աբդուլ Համիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը: Տե՛ս՝ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: 7: Թուրքական աղբյուրներ: Դ., էջ 111:

[114] Documents diplomatiques. Affaires d'Orient.Congrès de Berlin. 1878. Paris, 1878. Préliminaires de Paix. Signé à Andrinople le (19) 31 janvier 1878, p. 10-11.

Հունվարի 31-ին Ադրիանապոլսում կնքված նախնական հաշտության պայմանագրի համաձայն՝ հաղթանակած Ռուսաստանի թելադրանքով Օսմանյան կայսրության կազմում ստեղծվելու էր Բուլղարական ինքնավար, հարկատու իշխանապետությունը՝ քրիստոնեական կառավարությամբ ու երկրային զորքով: Թուրքական բանակը ամբողջությամբ դուրս էր բերվելու Բուլղարական իշխանապետության տարածքից[115]:

Թուրքական կառավարությունը պարտավորվում էր ճանաչել Չեռնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի քաղաքական անկախությունը, որոնց սահմանները պետք է ընդլայնվեին[116]:

Օսմանյան կայսրության կազմում սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան իրական երաշխիքների պայմաններում ստանալու էին տեղական վարչական ինքնավարության իրավունքներ: Տեղական վարչական ինքնավարության իրավունքներով պետք է օժտվեին նաև թուրքական տիրապետության տակ գտնվող Եվրոպական Թուրքիայի մյուս քրիստոնյա նահանգները[117]:

Զինադադարի կնքումից անմիջապես հետո օսմանյան զորքերը պետք է հեռանային Դանուբի աջափնյա Վիդին, Ռուսչուկ և Սիլիստրա բերդերից, իսկ Արևմտյան Հայաստանում՝ պատմական Կարին՝ Էրզրում քաղաք-ամրոցից: Ռուսաստանը իրավունք էր ստանում հաշտության բանակցությունների ընթացքում իր բանակներով ռազմակալած պահել պատերազմի երկու ռազմաճակատներում՝ Բալկաններում և Արևմտյան Հայաստանում, գրաված կարևորագույն ռազմա-ստրատեգիական հենակետերը: Թուրքիան պարտավորվում էր Բոսֆորի ու Դարդանելի նեղուցների նկատմամբ պահպանել միջազգային պայմանագրերով ամրագրված Ռուսաստանի իրավունքներն ու շահերը: Ինչ վերաբերում էր Ռուսաստանին վճարելիք ռազմատուգանքին, ապա թուրքական կառավարու-

[115] Նույն տեղում, Հոդված 1, էջ 10:
[116] Նույն տեղում, Հոդված 2, 3:
[117] Նույն տեղում, Հոդված 4, էջ 10:

թյունը հանձն էր առնում այդ պարտավորությունը հատուցել ոչ միայն դրամական միջոցներով, այլ նաև տարածքային զիջումներով և այլ ձևերով[118]:

Ադրիանապոլսում 1878 թ. հունվարի 31-ին կնքված ռուս-թուրքական զինադադարի և նախնական հաշտության պայմանագրի օրինակները ռուսական կառավարությունը պաշտոնապես տերություններին է ծանուցում փետրվարի 8-ին:

Ռուսական կայսրության կանցլեր և արտաքին գործերի նախարար Գորչակովը Պետերբուրգի Ֆրանսիայի դեսպանին արդեն հունվարի 28-ին տեղեկացրել էր Թուրքիայի հետ կնքելիք զինադադարի և նախնական հաշտության պայմաններին վերաբերող հիմնական սկզբունքները[119]: Անգլիական կառավարությունը, հունվարի 28-ին պաշտոնապես նույնպես տեղեկացվելով ռուս-թուրքական զինադադարի և նախնական հաշտության հիմնական պայմաններին, տերություններին հղած հունվարի 30-ի նոտայով հայտարարում է, որ չի ճանաչում եվրոպական պայմանագրերը փոփոխության ենթարկող, ինչպես նաև՝ Մեծ Բրիտանիայի կենսական շահերը անտեսող ռուս-թուրքական հաշտության կնքվելիք պայմանագիրը՝ շեշտելով, որ այն պետք է համաձայնեցվի 1856 և 1871 թթ. պայմանագրերը ստորագրած տերությունների հետ[120]: Պատասխանելով հունվարի 30-ի անգլիական նոտային՝ Գորչակովը վճռականորեն հավաստիացնում է, որ հունվարի 31-ին Թուրքիայի հետ կնքած հաշտության պայմանագրում եվրոպական շահերին վերաբերող հարցերը պետք է դիտարկել որպես ոչ վերջնական, այլ՝ որպես նախնական, որոնք պետք է քննարկվեն և համաձայնեցվեն եվրոպական տերությունների հետ[121]: Ռուս-թուրքական զինադադարի և

---

[118] Նույն տեղում, Հոդված 5, էջ 10-11:

[119] Նույն տեղում, Le Général Le Fl ô, Ambassadeur de France à Saint-Pétersbourg, aux Ministre des Affaires étrangères, le 28 janvier 1878, p. 4-5:

[120] Նույն տեղում, Note communiquée par Lord Lyons, Ambassadeur d'Angleterre à Paris, au Ministre des Affaires étrangères. Paris, le 30 janvier 1878, p.7:

[121] Նույն տեղում, էջ 32:

նախնական հաշտության պայմանների շուրջ ստեղծված անգլո-ռուսական լարված հարաբերությունների շրջանում դիվանագիտական ճնշումը Ռուսաստանի վրա ռազմական սպառնալիքով ամրապնդելու նպատակով Լոնդոնից փետրվարի 12-ին անգլիական ռազմանավերին հրամայվում է անցնել Նեղուցները և մտնել Մարմարա ծով, իսկ պառլամենտը 6 միլիոն ֆունտ ստերլինգ է հատկացնում ռազմական ծախսերի համար: Ի պատասխան առանց սուլթանի համաձայնության և Նեղուցների միջազգային կարգավիճակի խախտումով Մարմարա ծովի Իշխանաց կղզիներում փետրվարի 15-ին անգլիական ռազմանավերի խարսխավորման՝ թուրքական կառավարության համաձայնությամբ ռուսական Բալկանյան բանակի գլխավոր հրամանատարը Ադրիանապոլսից իր շտաբով և 10.000-ոց առաջապահ զորամասով, անցնելով զինադադարով որոշված սահմանագիծը, փետրվարի 24-ին կայանում է Կ.Պոլսից 12 կմ արևմուտք գտնվող Մարմարա ծովի եվրոպական ափի Սան Ստեֆանո (արդի՝ Յեշիլքյոյ) առափնյա ամառանոցային ավանում: Ռուս-թուրքական զինադադարի և նախնական հաշտության պայմանագրի կնքման շուրջ ստեղծված անգլո-ռուսական լարված հարաբերությունների կապակցությամբ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ու. Վատտինգտոնը Պետերբուրգի իր դեսպանին փետրվարի 16-ին գրում էր՝ իրադրությունն այնքան է բարդացել և այնքան վտանգավոր դարձել, որ անհնար է կանխատեսել հետագա իրադարձությունների զարգացման հետևանքները[122]:

Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում ռուս-թուրքական պատերազմի ռազմական գործողությունները միաժամանակ դադարեցնող Ադրիանապոլսի զինադադարի և նախնական հաշտության պայմանագրի կնքումից ընդամենը մի քանի օր անց, նախքան դրանց պաշտոնական հրապարակումը, փետրվարի 3-ին տերություններին հղած շրջաբերականով ավստրո-հունգարական

[122] Նույն տեղում, էջ 11:

կառավարությունը՝ որպես միջազգային պայմանագրերի համահեղինակ, առաջարկում էր հրավիրել 1856 թ. Փարիզի հաշտության կոնգրեսի և 1871 թ. Լոնդոնի կոնֆերանսի մասնակիցների կոնֆերանս՝ Արևելքի քաղաքական կառավարման համակարգում փոփոխություններ կատարող ռուս-թուրքական նախնական հաշտության պայմանագիրը Եվրոպայի ընդհանուր համաձայնությանը ենթարկելու համար[123]: Ընդառաջելով ավստրո-հունգարական և ռուսական արքունիքների դիմումներին՝ գերմանական կառավարությունը «շահագրգռված կողմերին իր բարեկամությունը դրսևորելու և խաղաղությունը պահպանելու» նպատակով մարտի 5-ին իր համաձայնությունն է հայտնում համաեվրոպական կոնգրեսը Բեռլինում անցկացնելու վերաբերյալ: Իսկ Գերմանական կայսրության կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը նախապես իր պատրաստակամությունն է հայտնում եվրոպական ապագա կոնգրեսում նախագահելու համար[124]: Մարտի 9-ին անգլիական կառավարությունը համաձայնվում էր կոնգրեսը Բեռլինում անցկացնելու առաջարկության հետ, սակայն նախապես կատարում էր վերապահում, ըստ որի՝ ռուս-թուրքական հաշտությամբ միջազգային պայմանագրերում կատարված բոլոր փոփոխությունները, առանց բացառության, պետք է հաստատվեին տերությունների կողմից: Այդպիսով՝ ի տարբերություն հունվարի 30-ին Գորչակովի կողմից կատարած վճռական հավաստիացման, ըստ որի՝ Թուրքիայի հետ կնքած հաշտության պայմանագրում եվրոպական շահերին վերաբերող հարցերը պետք է դիտարկվեին որպես ոչ վերջնական, այլ՝ նախնական, որոնք պետք է քննարկվեին և համաձայնեցվեին եվրոպական տերությունների հետ, անգլիական կառավարությունը այժմ արդեն պահանջում էր, որ ռուս-թուրքական հաշտությամբ միջազգային պայմանագրերում

[123] Նույն տեղում, էջ 7-8:
[124] Նույն տեղում, էջ 13-14:

կատարված բոլոր փոփոխությունները, առանց բացառության, կոնգրեսում պետք է հաստատվեին տերությունների կողմից[125]:

Ինչպիսի՞ վերաբերմունք ցուցաբերեցին բալկանյան երկրները ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ: Ռուս-թուրքական պատերազմի հենց սկզբին Չեռնոգորիան, որը հաշտություն չէր կնքել Թուրքիայի հետ, ապրիլի 24-ին վերսկսում է ռազմական գործողությունները: Այդ պատերազմում որոշակի մասնակցություն է ունենում բուլղար ժողովուրդը: 1877 թ. հունիսին ձևավորվում է 7500-անոց բուլղարական աշխարհազորը, որի հրամանատարն է նշանակվում ռուսական գեներալ Ստոլետովը: Ռուսական բանակի համագործակցությամբ 1877 թ. օգոստոսին Թուրքիայի դեմ 180 թնդանոթով ռազմական գործողություններ է սկսում ռումինական 50 հազարանոց բանակը:

Պլևնա ամրոցի կապիտուլյացիայից հետո՝ 1877 թ. դեկտեմբերի 13-ին, Թուրքիայի դեմ ռազմական գործողություններն է վերսկսում Սերբիան: Այդպիսով՝ Թուրքիայի դեմ պատերազմում անմիջականորեն մասնակցում են Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան և բուլղարական աշխարհազորը:

Արևելյան ճգնաժամի հենց սկզբին հունական կառավարող շրջանները անվճռական վերաբերմունք են դրսևորում Բալկաններում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունների նկատմամբ: Հունական կառավարող շրջանները մեծ անվստահությամբ էին վերաբերվում Ռուսաստանի բալկանյան քաղաքականությանը, մասնավորապես՝ բուլղարական Էկզարխատի ստեղծումից հետո՝ համոզված լինելով, որ Բալկաններում ծավալվող իրադարձությունները հարվածելու են Հունաստանի ազգային և պետական շահերին: Այդ էր պատճառը, որ հունական կառավարող շրջանները բավական ջանքեր են գործադրում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հունական հողերում ապստամբությունները կանխելու հա-

[125] Նույն տեղում, էջ 17:

մար: Այնուամենայնիվ, Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու առաջին իսկ օրերին ռուսական կառավարությունը պաշտոնապես դիմում է հունական կառավարությանը՝ մասնակցելու ռազմական գործողություններին, խոստանալով հաշտության բանակցություններում նպաստել, որպեսզի Էպիրոսը և Թեսալիան միացվեն Հունաստանին: Հունաստանին պատերազմին մասնակից դարձնելու համար դիվանագիտական մեծ ջանքեր է գործադրում Աթենքում Ռուսաստանի դեսպանորդ Սաբուրովը: Այդ դիվանագիտական ջանքերի հետևանքով հունական կառավարությունը պաշտոնապես խոստանում է 1877 թ. օգոստոսի 1-ին ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ: Սակայն Պլևնայում ռուսական բանակի ռազմական անհաջողությունները վախեցնում են հունական կառավարող շրջաններին, և նրանք հրաժարվում են պատերազմի մեջ մտնելու իրենց խոստումից: Այնուամենայնիվ, չափազանց մեծ ուշացումով 1878 թ. փետրվարի 2-ին հունական կառավարությունը, առանց Թուրքիային պատերազմ հայտարարելու, հրամայում է իր բանակին անցնել սահմանը և մտնել Թեսալիա: Հունական կառավարության այդ ժամանակավրեպ քայլը հանդիպում է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ՝ մյուս տերությունների խիստ բացասական վերաբերմունքին: Նախ, հունվարի 31-ին Ադրիանապոլսում կնքված զինադադարի հետևանքով պատերազմն արդեն ավարտվել էր, և Հունաստանը մեն-մենակ էր մնալու թուրքական հարձակման դեմ: Ուստի, տերությունների ճնշմամբ, փետրվարի 7-ին հունական կառավարությունը ետ է կանչում Թեսալիա մտած իր զորքին:

Ադրիանապոլսի զինադադարից հետո Սան Ստեֆանոյում վերսկսված ռուս-թուրքական հաշտության բանակցությունների ընթացքում՝ մարտի 1-ին, Աբդուլ Համիդի նախագահությամբ կայացած կառավարության նիստը, Բեռլինում թուրքական դեսպանի մասնակցությամբ, կրկին հաշտության պայմանագիրը քննարկելուց

հետո վերջնականապես որոշում է ընդունել այն[126]: Ի վերջո, Սան Ստեֆանոյում ընթացող ռուս-թուրքական բանակցությունները ավարտվում են 1878 թ. մարտի 3-ին կնքված հաշտությամբ: Տերությունների և առաջին հերթին Անգլիայի դիվանագիտական ճնշմամբ Սան Ստեֆանոյում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը կոչվեց «նախնական»[127]: Սան Ստեֆանոյում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրի հիմքն էին 1864-1878 թթ. Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ն.Պ. Իգնատևի կազմած և 1878 թ. հունվարի 5-ին կայսերական խորհրդակցությունում Ալեքսանդր 2-ի հաստատած հաշտության պայմանները:

ՍանՍտեֆանոյի հաշտության պայմանագիրը լիովին փոխում էր Բալկանյան թերակղզու աշխարհաքաղաքական պատկերը:

Ըստ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի՝ Օսմանյան կայսրության կազմում ստեղծվում էր ներքին լայն ինքնավարությամբ օժտված, թուրքական կառավարությանը հարկատու Բուլղարական վասալական իշխանապետությունը՝ բնակչության կողմից ընտրովի իշխանով, քրիստոնեական կառավարությամբ և երկրային զորքով[128]: Բնակչության կողմից ազատորեն ընտրված Բուլղարիայի իշխանը, տերությունների համաձայնությամբ, պետք է հաստատվեր թուրքական կառավարության կողմից: Շեշտվում էր, որ եվրոպական Մեծ տերություններում թագավորող արքայատոհմերի անդամներից ոչ մեկը չէր կարող ընտրվել Բուլղարիայի իշխան[129]: Օսմանյան զորքերը ամբողջությամբ հեռանալու էին ինքնավար իշխանապետության տարածքից, և երկու տարի ժամկետով Բուլղարիայում պետք է մնար հետևակի 6 և հեծելազորի 2 դիվի-

[126] Օսման Նուրի, նշվ. աշխ., էջ 118:

[127] Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը: 19 փետրվարի (3 մարտի) 1878 թ.: Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Երևան, 1972, էջ 83-98:

[128] Նույն տեղում, Հոդված 6, էջ 87:

[129] Նույն տեղում, Հոդված 7, էջ 88:

զիաներից բաղկացած ռուսական 50 հազարանոց բանակը[130]: Այդ երկու տարվա ընթացքում Բուլղարիայում նոր վարչակարգի հաստատման և նրա գործադրման հսկողությունը իրականացնելու էր ռուսական կայսերական կոմիսարը: Ֆիլիպպոպոլսում (Պլովդիվում) կամ Տիրնովոյում գումարված Բուլղարիայի անվանի մարդկանց ժողովը ռուսական կայսերական կոմիսարի հսկողությամբ և օսմանյան կոմիսարի ներկայությամբ պետք է մշակեր իշխանապետության ապագա կառավարման կանոնադրությունը[131]:

Շեշտվում էր, որ ընտրությունների անցկացման կամ կազմակերպական Կանոնադրության մշակման ժամանակ պետք է պատշաճ ուշադրություն դարձվեր Բուլղարական իշխանապետության տարածքում բնակվող թուրքերի, հույների, ռումինների և այլ ժողովուրդների իրավունքների և շահերի պաշտպանությանը[132]: Բուլղարական իշխանապետությունից հեռացած մուսուլմանական կամ այլ դավանանքներին պատկանող հողատերերը կարող էին իշխանապետության տարածքում պահպանել իրենց սեփականությունը՝ այն տալով վարձակալության կամ դրա կառավարումը հանձնարարելով այլ անձանց[133]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը ավելի քան երկու անգամ ընդլայնում էր Կ.Պոլսի կոնֆերանսի կողմից սահմանված Բուլղարիայի տարածքը: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն՝ Բուլղարական ինքնավար իշխանապետության սահմանները պետք է տարածվեին Դանուբից մինչև Ստրումա (Ստրիմոն) և Մեստա (Նեստոս) գետերի գետաբերանների միջև գտնվող էգեյան ծովափը և Սև ծովից մինչև Օխրիդա լիճը և Ալբանական լեռները՝ կազմելով 164 հազ. քառ. կմ տարածություն՝ 4 մլն

[130] Նույն տեղում, Հոդված 8, էջ 89:
[131]Նույն տեղում, Հոդված 7, էջ 88-89:
[132] Նույն տեղում, էջ 88:
[133] Նույն տեղում, Հոդված 11, էջ 90:

բնակչությամբ[134]: Այդպիսով՝ ի տարբերություն Կ.Պոլսի դեսպանաժողովի որոշմամբ բուլղարական էկզարխատի տարածքում ստեղծվելիք երկու առանձին բուլղարական նահանգների՝ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով արդեն նախատեսվում էր Դանուբից մինչև Էգեյան ծով և Սև ծովից մինչև Օխրիդա լիճը և Ալբանական լեռները ձևավորել մեկ միասնական, Բուլղարական իշխանապետություն՝ դրանով հնարավորություն ընձեռելով Ռուսաստանին իր քաղաքական ազդեցության ներքո գտնվող Բուլղարական իշխանապետության տարածքով Սև ծովից անմիջականորեն դուրս գալու դեպի Էգեյան ծով:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով հռչակվում էր Սերբական իշխանապետության քաղաքական լիակատար անկախությունը[135]. նրա տարածքն ընդլայնվում էր՝ ավելանալով մոտ 9 հազար քառ. կմ-ով՝ հասնելով 52 հազար քառ. կմ-ի: Սերբիային միացրած տարածքում հողային սեփականություն ունեցող և արտաբնակվել ցանկացող մուսուլմանները կարող էին պահպանել իրենց անշարժ գույքերի սեփականատիրության իրավունքը՝ դրանք տալով վարձակալության կամ կալվածքների կառավարումը հանձնարարել այլ անձանց[136]: Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի ստորագրումից հետո՝ տասնհինգօրյա ժամանակամիջոցում, սերբական զորքերը պետք է դուրս գային իշխանապետության սահմաններից դուրս գտնվող վայրերից[137]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով թուրքական կառավարությունը վերջնականապես ճանաչվում էր Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքական լիակատար անկախությունը[138]. նրա տարածքն ավելանում էր գրեթե 3.5 անգամ՝ հասնելով մոտ 15 հազ. քառ. կմ-ի: Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայ-

[134] Նույն տեղում, Հոդված 6, էջ 87-88:
[135] Նույն տեղում, Հոդված 3, էջ 85:
[136] Նույն տեղում, Հոդված 4, էջ 86:
[137] Նույն տեղում, էջ 87:
[138] Նույն տեղում, Հոդված 2, էջ 84:

մանագրի ստորագրումից հետո՝ տասնօրյա ժամկետում, չեռնոգորյան զորքերը պետք է դուրս գային իշխանապետության սահմաններից դուրս գտնվող տարածքից[139]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Ռումինիան նույնպես հռչակվում էր քաղաքականապես անկախ իշխանապետություն[140]: Թուրքիան վերադարձնում էր 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրով իրեն տրված Հյուսիսային Դոբրուջան՝ տասը գավառներով, Դանուբի Դելտան՝ հարակից կղզիներով և սևծովյան Օձի կղզին: Ռուսաստանը համաձայնվում էր վերոհիշյալ տարածքները թողնել Ռումինիայի կազմում՝ դրանք փոխանակելով 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրով իրենից օտարված Հարավային Բեսարաբիայի հետ, որը հարավից սահմանակցվում է Դանուբի Քիլիի բազուկի հունին և Ստարի Ստամբուլի գետաբերանին[141]:

Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրով Դանուբ գետը և նրա երկու ափերը պետք է ապառազմականացվեին: Դանուբի ափերին եղած բոլոր ամրոցները պետք է հավասարեցվեին հողին, իսկ ռումինական, սերբական և բուլղարական իշխանապետություններին արգելվում էր Դանուբում ունենալ ռազմանավեր, բացի սովորական մշտական պահականավերից և մանր նավերից, որոնք նախատեսված էին լինելու գետային ոստիկանության և մաքսային վարչության կարիքների համար[142]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը տեղական վարչական կառավարում էր նախատեսում Թուրքիայի տիրապետության տակ մնացած բալկանյան մարզերում: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր Բոսնիայում և Հերցեգովինայում անհապաղորեն իրականացնել տեղական վարչական ինքնավարու-

[139] Նույն տեղում, էջ 85:
[140] Նույն տեղում, Հոդված 5, էջ 87:
[141] Նույն տեղում, Հոդված 19, էջ 93:
[142] Նույն տեղում, Հոդված 12, էջ 91:

թյան մասին Կ.Պոլսի կոնֆերանսի որոշումները: Պայմանագրում նշված էր, որ Բոսնիայում և Հերցեգովինայում թուրքական կառավարության սահմանած ինքնավարության կանոնադրությունները պետք է կիրառվեին ռուսական և ավստրո-հունգարական կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ[143]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 15-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր Կրետե կղզում բարեխղճորեն կիրառել 1868 թ. կազմակերպական Կանոնադրությունը՝ սակայն նրանում փոփոխություններ կատարելով մեծամասնություն կազմող հույն բնակչության ցանկությունների համաձայն[144]: Նույն հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր 1868 թ. կրետական կազմակերպական Կանոնադրության նման տեղական վարչական կառավարման կանոնադրություններ կիրառել իր տիրապետության տակ մնացած Էպիրոսում, Թեսալիայում և Եվրոպական Թուրքիայի «մյուս մասերում», այսինքն՝ նաև Ալբանիայում, Մակեդոնիայում և Թրակիայում: Այդ տեղական ինքնակառավարման կանոնադրությունների մանրամասնությունների մշակումը յուրաքանչյուր մարզում պետք է հանձնարարվեր հատուկ հանձնաժողովի, որում տեղական բնակչությունը պետք է ստանար լայն մասնակցություն: Հանձնաժողովների մշակած կանոնադրությունները ներկայացվելու էին թուրքական կառավարության քննարկմանը, որը, նախքան դրանց գործադրումը, պետք է խորհրդակցեր ռուսական կառավարության հետ[145]: Այդպիսով՝ եզրակացվում է թուրքական պատմագրության մեջ՝ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 15-րդ հոդվածով Ռուսաստանը իրավունք էր ստանում միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին[146]:

---

[143] Նույն տեղում, Հոդված 14, էջ 91:
[144] Նույն տեղում, Հոդված 15, էջ 92:
[145] Նույն տեղում:
[146] Tarih, s. 238.

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն՝ Եվրոպական Թուրքիայից, բացառությամբ՝ Բուլղարական իշխանապետության տարածքի, ռուսական բանակի ամբողջական դուրսբերումը կատարվելու էր երեք ամսվա ընթացքում՝ ռուս-թուրքական վերջնական հաշտության պայմանագիրը կնքելուց հետո[147]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 17-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր լիակատար և անվերապահ ներման ենթարկել և անհապաղորեն ազատել իր տիրապետության բոլոր օսմանահպատակներին, որոնք բանտարկվել, տարագրվել էին հակաթուրքական ապստամբություններին՝ 1877-1878 թթ. պատերազմում Ռուսաստանի ռազմական գործողություններին որևէ ձևով մասնակցած լինելու, ռուսական բանակներին օժանդակած կամ օգնած լինելու համար[148]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով աշխարհաքաղաքական լուրջ փոփոխություններ էին կատարվում նաև թուրքական տիրապետության տակ գտնվող Հարավային Կովկասում և Արևմտյան Հայաստանում: Այսպես. հաշտության պայմանագրով Ռուսաստանին վճարելիք 1.410.000 ռուբլի ռազմատուգանքի մի մասի փոխարեն ֆինանսական դժվարությունների պատճառով թուրքական կառավարությունն իր ցանկությամբ համաձայնվում էր կատարել տարածքային զիջումներ: Այդ առումով՝ Թուրքիան հօգուտ Ռուսաստանի հրաժարվում էր մինչև ռազմական գործողությունների ավարտը անառիկ մնացած սևծովյան կարևորագույն նավահանգիստ Բաթումից և նրա շրջակայքից: Այնուհետև Թուրքիան Ռուսաստանին էր զիջում պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանում գրավված Արդահանը, Կարսը, Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը՝ մինչև Կարսի սարահարթի արևմտյան մասը եզերող Սողանլուղի՝ պատմական Հայաստանի Մեծրաց լեռնա-

[147] Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը: 19 փետրվարի (3) մարտի 1878թ., Հոդված 25, էջ 96:
[148] Նույն տեղում, Հոդված 17, էջ 92:

շղթան տարածվող տարածքը՝ 35.650 քառ. կմ ընդհանուր տարածությամբ[149]: 1.410 մլն ռազմատուգանքի մի մասի՝ 1.100 մլն ռուբլու փոխարեն ստանալով այդ տարածքները՝ Ռուսաստանը պարտավորվում էր վերջնական հաշտության պայմանագրի վավերացված տեքստը փոխանակելուց անմիջապես հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր զորքերը դուրս բերել պատերազմի ընթացքում գրավված «Ասիական Թուրքիայի տարածքից», այսինքն՝ թուրքական տիրապետությանը Սողանլուղի լեռնաշղթայից դեպի արևմուտք վերադարձվող Արևմտյան Հայաստանից[150]: Այդպիսով՝ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրում ամրագրված էր մինչև Սողանլուղի լեռնաշղթան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու պայմանը: Հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով Ռուսաստանը Թուրքիային պարտավորեցնում էր, որ նախքան «ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից»՝ վեց ամսվա ընթացքում՝ վերջնական հաշտության տեքստը կնքելու օրվանից, «անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ», ինչպես նաև «զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[151]: Այդպիսով՝ թուրքական պատմագրությունը շեշտում է, որ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով պատմության մեջ առաջին անգամ Հայկական հարցը օրակարգային դարձնելով՝ Ռուսաստանը հայերին օգտագործելու միջոցով սկսում է իրականացնել Արևելյան Անատոլիայից դեպի Արևելյան Միջերկրական ծով դուրս գալու քաղաքականությունը[152]:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն՝ մինչև Թուրքիային վերադարձվելիք տարածքներից, այսինքն՝ Արևմտյան

[149] Նույն տեղում, Հոդված 19, էջ 93:
[150] Նույն տեղում, Հոդված 25, էջ 96:
[151] Նույն տեղում, Հոդված 16, էջ 92:
[152] Tarih, էջ 238:

Հայաստանի գավառներից, ռուսական բոլոր զորքերի դուրս բերումը, այդ վայրերում կառավարումը և գոյություն ունեցող կարգը մնալու էր անփոփոխ, ինչպես ռուսական գրավման ժամանակ, և այդ ամբողջ ժամանակամիջոցում կառավարման մեջ թուրքական կառավարությունը չպետք է ունենար որևէ մասնակցություն[153]: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր, որ ռուսական բանակների հեռանալուց հետո «չի հալածի և թույլ չի տա հալածել այն թուրքահպատակներին», այսինքն՝ թուրքական տիրապետությանը վերադարձվող Արևմտյան Հայաստանի հայերին, որոնք ռուս-թուրքական «պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ»: Այնուհետև, թուրքական իշխանությունները պարտավորվում էին չընդդիմանալ արևմտահայ այն ընտանիքներին, որոնք կցանկանային ռուսական զորքերի հետ հեռանալ թուրքական տիրապետությանը վերադարձված Արևմտյան Հայաստանից[154]: Ռազմատուգանքի փոխարեն Ռուսաստանին զիջված տարածքների բնակիչները, որոնք չէին ցանկանում ապրել ռուսական տիրապետության պայմաններում, իրավունք էին ստանում հաշտության պայմանագիրը վավերացնելու օրվանից՝ երեք տարվա ընթացքում, ծախելով իրենց անշարժ սեփականությունը, անարգել կերպով ու առանց խոչընդոտների հեռանալ Ռուսական կայսրության սահմաններից: Սահմանված եռամյա ժամկետում Ռուսաստանի տիրապետության տակ անցած տարածքներից չհեռացած և իրենց անշարժ սեփականությունն ու գույքը չծախած բնակիչները դառնում էին Ռուսական կայսրության հպատակներ[155]: Ահա սրանք էին Բալկանյան թերակղզու և Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հիմնական հոդվածները: Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի վավերացված

[153] Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը: 19 փետրվարի (3) մարտի 1878 թ., Հոդված 25, էջ 97:
[154] Նույն տեղում, Հոդված 27, էջ 97:
[155] Նույն տեղում, Հոդված 21, էջ 95:

բնագրերի և դրանց առդիր քարտեզների փոխանակումը Թուրքիայի և Ռուսաստանի միջև կատարվում է մարտի 5-ից 17-ը՝ Ս. Պետերբուրգում, իսկ մարտի 18-ին դրանց օրինակները հանձնվում են Մեծ տերությունների արտաքին գործերի նախարարներին:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը նախ և առաջ մեծ դժգոհություն է առաջացնում ինչպես Հունաստանի, այնպես էլ՝ Սերբիայի կառավարող շրջաններում: Հունական կառավարության դժգոհությունը արտահայտվում էր նրանում, որ Հունաստանի պատմական տարածքները անցնում էին Բուլղարական իշխանապետության սահմանների մեջ, որոնք մեծամասնաբար բնակեցված էին հույներով: Դրանցից էին՝ մակեդոնական քաղաքներ Սերեսը, Կավալան, Քսանթին, Էդեսան, Ֆլորինան, Կաստորիան, (այժմ դրանք գտնվում են Հունաստանի տարածքում), ինչպես նաև Ստրումիցան, Մոնաստիրը, Կորիցան: Հանդես գալով Բուլղարական իշխանապետության սահմանների մեջ պատմական Թրակիան և Մակեդոնիան մինչև Էգեյան ծով ընդգրկելու Սան Ստեֆանոյի հաշտության հոդվածի դեմ՝ հունական կառավարող շրջանները վկայակոչում էին 7-րդ դարի 70-ական թթ. Դանուբի աջ ափին թյուրքական քոչվոր անասնապահ բուլղարական ցեղախմբերի պետության հիմնադիր Ասպարուխ խանի (643-701 թթ.) հետ 681 թ. Բյուզանդիայի կնքած պայմանագիրը, որի համաձայն, ճանաչելով թյուրքական այսպես կոչված Առաջին Բուլղարական թագավորությանը (681-1018 թթ.), նրա տիրապետության ներքո էր ճանաչվում միայն Դանուբից մինչև Բալկանյան լեռնաշղթա և Սև ծովից մինչև Դանուբի աջ վտակ Իսկըր գետը գտնվող աշխարհագրական տարածքը: Ինչ վերաբերում էր Սերբիայի վերաբերմունքին, նույնպես մեծ էր դժգոհությունը, որովհետև Սան Ստեֆանոյի պայմանագրով Բուլղարական իշխանապետության մեջ էին ընդգրկված ոչ միայն ամբողջ Մակեդոնիան և Արևելյան Ռումելիան, այլև Հին Սերբիայի մեծ մասը, քանի որ սերբական բանակի կողմից ազատագրված Նիշը, Պիրոտը և Վրանեն անցնում էին Բուլղարիային (այժմ դրանք

գտնվում են Սերբիայի տարածքում): Սերբական կառավարող շրջանների համոզմամբ, այդ հաշտության հետևանքով Սերբիայի հեռանկարները աննախադեպորեն ահավոր էին. հեռացված լինելով Մորավա և Վարդար գետերի հովիտներից, սեղմված լինելով Ավստրո-Հունգարիայի և Մեծ Բուլղարիայի միջև՝ Սերբիան դատապարտված էր դանդաղ մահվան:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը դժգոհության և բողոքի աննախադեպ ալիք է բարձրացնում Բալկաններում և Արևելյան Միջերկրականում տնտեսական և ռազմաքաղաքական շահեր ունեցող բոլոր տերությունների և, առաջին հերթին՝ Անգլիայում իշխող պահպանողականների շրջանում: 1878 թ. ապրիլի 1-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սոլսբերին շրջաբերական է հղում Մեծ տերություններին, որում արտահայտված էին անգլիական պահպանողական կառավարության տեսակետները և հիմնավորված առարկությունները Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի գրեթե բոլոր հիմնական հոդվածների նկատմամբ[156]:

Սոլսբերին կտրականապես առարկում էր Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի այն հոդվածներին դեմ, ըստ որոնց՝ Բուլղարական իշխանապետության վարչակարգը՝ ռուսական բանակի առկայությամբ, պետք է ստեղծվեր բացառապես ռուսական կառավարության վերահսկողությամբ և ռուսական կայսերական կոմիսարի անմիջական ղեկավարությամբ՝ կանխորոշելով նրա քաղաքական կարգը՝ այդ նորաստեղծ պետությանը փաստորեն ենթարկելով Ռուսաստանի նշանակած իշխանի կառավարմանը[157]: Սոլսբերին վճռականորեն առարկում էր Բուլղարական իշխանապետության սահմանների դեմ՝ շեշտելով, որ Սան Ստեֆանոյի հաշտու-

[156] Le Marquis de Salisbury, principal Secrétaire d'État de Sa Majesté Britannique pour les Affaires étrangères, aux Agents diplomatiques de la Grande-Bretagne. Le 1-er avril 1878, Տե՛ս Documents diplomatiques, p. 31-41:
[157] Նույն տեղում, էջ 37:

թյան պայմանագրի հոդվածներով ստեղծվող Մեծ Բուլղարիան Ռուսաստանի հովանավորությամբ և ղեկավարությամբ Բալկաններում կդառնա հզոր սլավոնական պետություն, որը կտիրապետի Սև և էգեյան ծովերի կարևորագույն նավահանգիստներին և հնարավորություն կընձեռի Մոսկովյան կայսրությանը գերիշխող ազդեցություն հաստատելու այդ երկու ծովերի ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրական հարաբերությունների վրա[158]:

Սոլսբերին կտրականապես դեմ էր արտահայտվում Բուլղարական իշխանապետության սահմաններում հունական տարածքներ ընդգրկելուն՝ շեշտելով, որ գերակշռող սլավոնական բնակչության տիրապետության պայմաններում հույն ժողովրդի նշանակալի մի մասին ապագայում սպառնում է ուծացման վտանգ մի հասարակության կողմից, որն օտար է նրան ոչ միայն սոսկ որպես ազգություն, այլ նաև անհարիր է իր քաղաքական ձգտումներով և կրոնական դավանանքով[159]: Սոլսբերին շեշտում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի մի շարք հոդվածներ իրականում առաջացնում են ինչպես հունական, այնպես էլ այն տերությունների վրդովմունքը, որոնք հավասարապես շահագրգռված են Օսմանյան կայսրության բոլոր մասերի նկատմամբ: Սան Ստեֆանոյի պայմանագրի մի շարք հոդվածներ մեծացնելու են Ռուսական կայսրության հզորությունը Օսմանյան կայսրության այն մասերում և ծովամերձ շրջաններում, որտեղ գերակշռում է հույն ժողովուրդը, և վտանգելու է ոչ միայն այդ ժողովրդին, այլև վնասելու է Արևելյան Միջերկրականում շահեր ունեցող բոլոր տերություններին[160]: Սոլսբերին շեշտում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագրով նշված սահմաններում բուլղարական պետության ստեղծումը ոչ միայն աշխարհագրորեն լուրջ անջրպետ է ստեղծելու Թուրքիայի և նրա տիրապետության տակ գտնվող բալկանյան մարզերի անմիջական հաղորդակցության

[158] Նույն տեղում:
[159] Նույն տեղում:
[160] Նույն տեղում, էջ 37-38:

միջև՝ դրանցում թուլացնելով թուրքական իշխանությունը, այլև նպաստելու է այդ մարզերի ժողովուրդների անջատողական ձգտումների ուժեղացմանը և Թուրքիայից այդ տարածքների անջատմանը: Մեծ Բուլղարական պետության ստեղծմամբ Կ.Պոլսի տարածքի անջատումը օսմանյան տիրապետության տակ մնացած հունական, ալբանական և սլավոնական մարզերից ոչ միայն հարատև բարդություններ է ստեղծելու այդ վայրերի կառավարմանը, այլև դրանց բնակիչներին ենթարկելու անիշխանության վտանգներին, նշում էր Սոլսբերին[161]:

Սոլսբերին դեմ էր արտահայտվում այն բանին, որ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով սևծովյան Բաթում նավահանգիստն անցներ Ռուսաստանին, իսկ ինչ վերաբերում էր Հարավային Բեսարաբիային, Սոլսբերիի համոզմամբ այդ տարածքը Թուրքիայից պետք է վերադարձվեր ոչ թե Ռուսաստանին, այլև միացվեր Ռումինիային: Սև ծովի ափերին Բուլղարիայի հաստատման, Հարավային Բեսարաբիայի վերադարձման և Բաթում նավահանգստի ձեռք բերման հետևանքով, շեշտում էր Սոլսբերին, Ռուսաստանը իր գերիշխանությունը կհաստատի Սև ծովը շրջապատող տարածքների վրա[162]:

Սոլսբերին կտրականապես առարկում էր Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի այն հոդվածի դեմ, ըստ որի՝ Հայաստանում Ռուսաստանի տիրապետության տակ էին անցնում Կարսը, Արդահանը, Բայազետը և մինչև Սողանլուղի լեռնաշղթան գտնվող տարածքը՝ փաստարկելով, որ Հայաստանի ամրոցների ձեռք բերումը այդ տարածքի ժողովրդին անմիջականորեն կդնի դրանք գրավող տերության քաղաքական ազդեցության տակ[163]: Սոլսբերին շեշտում էր, որ անգլիական կառավարությունը ամենևին էլ չի կարող կատարյալ անտարբերությամբ վերաբերվել Ասիական Թուր-

[161] Նույն տեղում, էջ 38:
[162] Նույն տեղում:
[163] Նույն տեղում:

քիայում կատարվող տարածքային փոփոխություններին, որովհետև այդ տարածաշրջանի քաղաքական իրադարձությունները մեծապես հարվածում են Մեծ Բրիտանիայի արևելյան շահերին[164]: Ռուսաստանի կողմից Բաթումի, Արդահանի և Կարսի տիրապետումը, եզրակացնում էր Սոլսբերին, անխուսափելիորեն նպաստելու է թուրքական կառավարության ասիական տիրույթների քայքայմանը՝ Օսմանյան կայսրության մոտալուտ անկման հույսեր ներշնչելով ասիական ժողովուրդներին[165]: Հանդես գալով Հայաստանում Ռուսաստանի քաղաքական տիրապետության հաստատման դեմ՝ Սոլսբերին իր առարկության մյուս պատճառը փաստարկում էր նաև տնտեսական նկատառումներով: Եվրոպական կարևորագույն առևտրական ճանապարհը, նշում էր Սոլսբերին, որը սևծովյան Տրապիզոնի նավահանգիստը միացնում է Պարսկաստանի հետ, կարող է փակվել ռուսական կառավարության մաքսային համակարգի արգելակիչ խոչընդոտների հետևանքով[166]: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի իրականացման դեպքում, եզրակացնում էր Սոլսբերին, բացի հույն ժողովրդին և Անգլիային՝ որպես ծովային տերությանը, սպառնացող հետևանքներից, կսահմանափակվի Թուրքիայի անկախությունը՝ նրան վերածելով Ռուսաստանից քաղաքական կախվածության մեջ գտնվող սոսկ վասալական տերության[167]:

Իր փաստարկներով վճռականորեն դեմ լինելով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ամրագրված Թուրքիայի տարածքային կորուստներին՝ Սոլսբերին իր կառավարության անունից հայտարարում էր, որ Օսմանյան կայսրության սահմանների անձեռնմխելիությունը և տարածքային ամբողջականությունը համապա-

[164] Տե՛ս D'Avril A., Négociations relatives au Traité de Berlin et aux Arrangements qui ont suivi. 1875-1886. Paris, 1886, p. 353-354:
[165] Նույն տեղում, էջ 353:
[166] Documents diplomatiques, էջ 38:
[167] Նույն տեղում, էջ 39:

տասխանում է Անգլիայի գերագույն շահերին[168]:

Սկզբունքորեն ընդունելով Օսմանյան կայսրությունում տեղական վարչական կառավարման կանոնադրություններ կիրառելու և բարեփոխումներ կատարելու, քրիստոնյա ժողովուրդների վիճակը բարելավելու անհրաժեշտությունը՝ Սոլսբերին դեմ էր արտահայտվում Սան Ստեֆանոյի պայմանագրի նաև այն հոդվածի դեմ, ըստ որի՝ նախքան Թեսալիայում և էպիրոսում տեղական վարչական կառավարման կանոնադրությունների գործադրումը՝ թուրքական կառավարությունը անպայման պետք է խորհրդակցեր ռուսական կառավարության հետ, այլ կերպ ասած՝ այդ կանոնադրությունները պետք է նախ բովանդակային խմբագրման ենթարկվեին ռուսական կառավարության վերահսկողությամբ և արժանանային նրա հավանությանն ու համաձայնությանը[169]:

Իր փաստարկներով հիմնավորելով անգլիական պահպանողական կառավարության վճռական առարկությունները Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հիմնական հոդվածների նկատմամբ՝ Սոլսբերին ընդգծում էր, որ Ռուսաստանի միակողմանիորեն կատարած քաղաքական փոփոխությունները սպառնում են լուրջ վտանգի ենթարկել այն միջազգային պայմանագրերը, որոնցով մինչ այդ կարգավորվել էր Հարավ-Արևելյան Եվրոպայի կառավարման համակարգը[170]:

Ամփոփելով անգլիական պահպանողական կառավարության առարկությունները Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի վերաբերյալ և վկայակոչելով Փարիզի հաշտության կոնգրեսի 1856 թ. մարտի 18-ի արձանագրությունը, որի համաձայն՝ տերությունների և թուրքական կառավարության միջև կնքված կամ կնքվելիք համաձայնությունները և պայմանագրերը արդեն դառնում են համաեվրոպական միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասը,

[168] Նույն տեղում:
[169] Նույն տեղում, էջ 37:
[170] Նույն տեղում, էջ 40:

Սոլսբերին շեշտում էր, որ Օսմանյան կայսրությանը վերաբերող քաղաքական բնույթի փոփոխությունները ամբողջությամբ պետք է քննարկման ենթարկվեն համաեվրոպական կոնգրեսում՝ գոյություն ունեցող միջազգային պայմանագրերի, Մեծ Բրիտանիայի և այլ տերությունների ճանաչված իրավունքների և ընդհանրապես Եվրոպայի միասնական համագործակցության բարերար արդյունքների հիման վրա[171]: Սոլսբերին վկայակոչում էր նաև 1871 թ. Լոնդոնի կոնֆերանսում համատեղ ընդունված արձանագրությունը, որի համաձայն՝ բոլոր տերությունները, ինչպես նաև Ռուսաստանը ճանաչել են միջազգային իրավունքի այն հիմնական սկզբունքը, որ ոչ մի պետություն միակողմանիորեն չի կարող ո՛չ վերացնել և ո՛չ էլ փոփոխության ենթարկել տերությունների կողմից միասնաբար ընդունված որևէ պայմանագիր[172]:

Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի բոլոր հոդվածների դեմ ուղղված առարկությունները ռազմական ուժով ամրապնդելու նպատակով անգլիական կառավարությունը ապրիլին հայտարարում է պահեստայինների զորակոչ, իսկ իր գաղութ Հնդկաստանից հնդկական 7000-անոց զորաջոկատ է փոխադրում անգլիական ռազմածովային հենակետի վերածված միջերկրածովյան Մալթա կղզի:

Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը հանդիպում է նաև եվրոպական մյուս տերությունների, հիմնականում՝ Ավստրո-Հունգարիայի դիմադրությանը:

Մեծ Բրիտանիային և մյուս տերություններին հղած ապրիլի 9-ի պաշտոնական հուշագրով պատասխանելով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Բալկաններում և Հայաստանում Ռուսաստանի վերահսկողությամբ կատարվելիք վարչական բարեփոխումների, Մեծ Բուլղարիայի ստեղծման և Հայաստանում Ռուսաստանի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ անգլիական պահպա-

[171] Նույն տեղում:
[172] Նույն տեղում, էջ 36:

նողական կառավարության արտահայտած առարկություններին՝ ռուսական կայսրության կանցլեր և արտաքին գործերի նախարար Գորչակովը կառավարության անունից հայտարարում է, որ առանց ազգային ու կրոնական խտրականության, քրիստոնեական զգացմունքներից ելնելով, կայսերական կառավարությունը Արևելքում մշտապես իրականացրել է պատմության կողմից իրեն նախատեսված հովանավորական առաքելությունը[173]:

Կայսերական կառավարությունը հօգուտ Բուլղարիայի նախատեսել է առավել կատարյալ և առավել հստակ պայմաններ, բացատրում էր կանցլերը, քանի որ այդ երկիրն է եղել պատերազմի հիմնական պատճառը և ռազմադաշտը, իսկ Ռուսաստանը ձեռք է բերել պատերազմում հաղթանակած կողմին անվիճարկելի հատուկ իրավունքներ[174]:

Ինչ վերաբերում է Հայաստանում կատարած տարածքային ձեռքբերումներին, նշում էր Գորչակովը, ապա դրանք Ռուսաստանի համար ունեն բացառապես պաշտպանական նշանակություն և անհրաժեշտ են միայն նրա անվտանգության ապահովման համար, որպեսզի յուրաքանչյուր պատերազմում այլևս չնվաճվեն, ինչպես Կարսի ամրոցը, որը երեք անգամ գրավվել է կեսդարյա ժամանակահատվածի ընթացքում: Ռուսաստանին Թուրքիայի կատարած տարածքային զիջումները բացառապես պատերազմի անխուսափելի հետևանքն են, շեշտում էր ռուսական կայսրության կանցլերը[175]:

Եթե 1878 թ. մարտի 9-ին անգլիական կառավարությունը նախապես կատարում էր վերապահում, ըստ որի՝ ռուս-թուրքական հաշտությամբ միջազգային պայմանագրերում կատարված բոլոր փոփոխությունները, առանց բացառության, եվրոպական կոնգրեսում պետք է հաստատվեին տերությունների կողմից, այժմ անգլիական կառավարությունը պահանջում էր, որ հանուն համաեվրոպա-

[173] Նույն տեղում, էջ 45:
[174] Նույն տեղում:
[175] Նույն տեղում, 46-47:

կան խաղաղության պահպանման, նախքան կոնգրեսը, Ռուսաստանը պետք է անպայմանորեն համաձայնության հանգեր Սոլսբերիի՝ ապրիլի 1-ի շրջաբերականում արտահայտած անգլիական կառավարության հիմնադրույթների և տեսակետների շուրջ[176]: «Կոնգրեսը անհնար է, եթե մենք չընդունենք անգլիական շրջաբերականի հիմնադրույթները»,- իր հուշագրերում նշել է Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Պ.Ա. Շուվալովը[177]:

Ապագա եվրոպական կոնգրեսում Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի հիմնական սկզբունքները և բովանդակությունը փրկելու նպատակով ռուսական կառավարությունը հարկադրված էր ապրիլի 1-ի անգլիական շրջաբերականի հիմնական դրույթների շուրջ փոխհամաձայնության գալ Անգլիայի հետ և «այն դարձնել ընդունելի անգլիական կառավարության համար»: Այդ առումով, 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Պյոտր Շուվալովը և Անգլիայի արտգործնախարար Սոլսբերին մեկշաբաթյա բանակցությունների արդյունքում ստորագրում են երկու Հուշագրերից բաղկացած գաղտնի «Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին»[178]: Այդ Համաձայնագիրը հիմնականում վերաբերում էր Բուլղարիային և Հայաստանին: «Բանակցությունների հենց սկզբին ինձ պարզ դարձավ,- գրել է Շուվալովը Բեռլինի կոնգրեսի մասին իր հուշագրություններում,- որ Անգլիայի հիմնական նպատակը Բուլղարիան երկու մասի բաժանելն էր, այնպես, որ Բալկանյան լեռնաշղթան անցներ սուլթանին, որպեսզի նրան հնարավորություն ընձեռվեր պաշտպանվելու մեր ապագա հարձակումնե-

[176] П. А. Шувалов о Берлинском конгрессе 1878. Տե՛ս “Красный архив”. Исторический журнал. Т 4 (59). М.,1933, с. 95:

[177] Նույն տեղում:

[178] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան 1972:
Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին, էջ 99-103:

րից»[179]: Այդ պատճառով, անգլիական ճնշման ներքո, Ռուսաստանը ստիպված համաձայնվում էր, որպեսզի Օսմանյան կայսրության կազմում Բուլղարիան աշխարհագրորեն բաժանվեր երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների, ընդ որում՝ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ստեղծվելու էր քաղաքական ինքնավարությամբ օժտված Բուլղարական վասալական իշխանապետությունը, իսկ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ կազմակերպվելու էր միայն տեղական վարչական լայն ինքնավարությամբ օժտված բուլղարական նահանգը, որը պետք է ունենար Եվրոպայի համաձայնությամբ սուլթանի կողմից 5-ից մինչև 10 տարի ժամկետով նշանակվող քրիստոնյա նահանգապետ:[180] Այդպիսով՝ Անգլիան սկզբունքորեն չէր առարկում, որպեսզի Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի համաձայն Օսմանյան կայսրության կազմում ստեղծվեր քաղաքական ինքնավարությամբ օժտված Բուլղարական վասալական իշխանապետություն նահանգը, սակայն պահանջելով, որ դրա տարածքն աշխարհագրորեն սահմանափակվեր սոսկ Դանուբ գետի և Բալկանյան լեռնաշղթայի միջև:

Անգլիան առարկում էր Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրով նախատեսված Բուլղարիայի աշխարհագրական սահմանների դեմ: Ուստի Անգլիայի պնդմամբ Բուլղարիայի արևմտյան սահմանները պետք է շտկվեին ազգային հատկանիշով, այնպես, որ այդ նահանգից դուրս մնար ոչ բուլղար բնակչությունը, իսկ հարավում վարչական տարածքը աշխարհագրորեն պետք է հեռու լիներ Էգեյան ծովից՝ պարփակվելով Կ.Պոլսի դեսպանաժողովի առաջարկած սահմանագծով[181]: Անգլիան համաձայնվում էր, որ թուրքական բանակը հեռանար Հարավային Բուլղարիա նահան-

[179] П. А. Шувалов о Берлинском конгрессе 1878, с. 95.

[180] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին: Հուշագիր N1, Հոդված 4, էջ 100:

[181] Նույն տեղում, Հոդված 2,3, էջ 99-100:

գից, այլապես՝ ռուսական կողմը «չէր հավատա բուլղար ժողովրդի ապագա ճակատագրի ո՛չ անվտանգությանը, ո՛չ ապահովությանը, եթե այնտեղ մնային օսմանյան զորքերը»[182]: Ռուսաստանը համաձայնվում էր, որպեսզի Հարավային Բուլղարիայի միլիցիայի բարձր աստիճանավորները, Եվրոպայի համաձայնությամբ, նշանակվեին թուրքական կառավարության կողմից[183]: Առարկելով Բուլղարիայում նոր վարչակարգի հաստատումը և դրա գործադրման հսկողությունը երկու տարվա ընթացքում ռուսական կայսերական կոմիսարին հանձնարարելու Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 7-րդ հոդվածի դեմ, անգլո-ռուսական Համաձայնագրի երկրորդ Հուշագրով անգլիական կառավարությունը իրեն իրավունք էր վերապահում կոնգրեսում պահանջելու, որ Եվրոպան մասնակցեր բուլղարական երկու մարզերի վարչական կարգավորմանը, ինչպես նաև քննարկելու Բուլղարիայի ռուսական ռազմակալման տևողության ու բնույթի և Ռումինիայի տարածքով ռուսական բանակի անցնելու հարցը[184]: Ինչ վերաբերում էր պատերազմի ընթացքում Հայաստանում կատարած Ռուսաստանի տարածքային նվաճումներին, ապա՝ Բալկանյան լեռնաշղթայով Բուլղարիան երկու՝ Հյուսիսային և Հարավային նահանգների բաժանելու պահանջի դիմաց, որպես փոխզիջում, անգլիական կառավարությունը համաձայնվում էր, որպեսզի Կարսը, Արդահանը և Արդվինը մնան ռուսական կայսրության կազմում: Սակայն, Անգլիայի պահանջով, Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային վերադարձնել Բայազետ քաղաքը և Ալաշկերտի հովիտը՝ այն պատճառաբանությամբ, որ այդ հովիտը հանդիսանում է սևծովյան Տրապիզոնի նավահանգստից դեպի Պարսկաստան տանող տարանցիկ մեծ ճանապարհի և թուրքերի համար ունի հսկայական նշանակություն: Որպես փոխհատուցում՝ Ռուսաստանը հօգուտ Պարսկաստանի ստանում էր Կոտուրի ոչ մեծ տա-

[182] Նույն տեղում, Հոդված 5, էջ 100:
[183] Նույն տեղում, Հոդված 6, էջ 100:
[184] Նույն տեղում, Հուշագիր N2, a և b, էջ 103:

րածքը[185]: Անգլիայի ճնշմամբ Թուրքիային վերադարձնելով Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը՝ Ռուսաստանը բնականաբար հրաժարվում էր նաև այդ տարածքներից դեպի արևմուտք՝ մինչև Սողանլուղի լեռնաշղթան գրավելու պայմանը ամրագրող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածից:

Անգլիայի ճնշմամբ Ռուսաստանը պարտավորվում էր տարածքային նոր նվաճումներ չձեռնարկել և իր սահմանները չընդլայնել Ասիական Թուրքիայի կողմից: Անգլո-ռուսական Համաձայնության մեջ ամրագրվում էր, որ Օսմանյան կայսրությանն այդ վտանգից պահպանելու պարտականությունը այդուհետև կիրականացնի հատկապես Անգլիան, այսինքն՝ Ասիական Թուրքիայի վրա Ռուսաստանի հարձակման դեպքում Անգլիան զենքի ուժով հանդես էր գալու Թուրքիայի փոքրասիական սահմանների պաշտպանությամբ[186]: Պատերազմի սպառնալիքով ստանալով կայսր Ալեքսանդր 2-րդի «հավաստիացումն այն մասին, որ ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի կողմից», որպես փոխզիջում, Անգլիան պարտավորվում էր կոնգրեսում չվիճարկել Ռուսաստանի վերջնական որոշումը Հարավային Բեսարաբիայի վերադարձման վերաբերյալ և համաձայնվում չառարկել սևծովյան կարևորագույն առևտրական Բաթում նավահանգիստը ձեռք բերելու Ռուսաստանի ցանկությանը[187]: Համեմատելով բալկանյան և փոքրասիական տարածաշրջաններում անգլիական արտաքին քաղաքականության որոշակի տարբերությունը՝ Շուվալովը այդ կապակցությամբ շեշտում է. «Ինչքան էլ որ կարևոր էր սահմանների փոփոխությունը Փոքր Ասիայում, Կարսի և ամենակարևորը՝ Բաթումի հանձնումը Ռուսաստանին, այնուամենայնիվ, բալկանյան հարցը առավելագույն նշանակություն ուներ բրիտանական կառա-

[185] Նույն տեղում, Հուշագիր N1, Հոդված 10, էջ 101:
[186] Նույն տեղում, Հոդված 11, էջ 102:
[187] Նույն տեղում, էջ 101-102:

վարության համար»[188]:

Անգլո-ռուսական Համաձայնագիրը նաև վերաբերում էր Բալկաններում և Փոքր Ասիայում թուրքական տիրապետության տակ մնացած քրիստոնեական մարզերում տեղական վարչական կառավարման կանոնադրություններ կիրառելու, տեղական կարիքներից բխող բարելավումներ և բարեփոխումներ իրականացնելու Սան Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան հոդվածների բովանդակային փոփոխությանը: Այսպես. անգլո-ռուսական Համաձայնագրում ամրագրվում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան հոդվածները կոնգրեսում պետք է ենթարկվեին այնպիսի փոփոխության, որպեսզի մյուս տերությունները և, մանավանդ՝ Անգլիան, ինչպես նաև Ռուսաստանը, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցեին Բալկաններում թուրքական տիրապետության տակ մնացած հունական մարզեր Էպիրոսի, Թեսալիայի և «քրիստոնեական մյուս մարզերի» ապագա կազմակերպական Կանոնադրությունների մշակմանը[189]: Ինչ վերաբերում էր Հայաստանին ամրագրած Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի բովանդակությանը, ապա այն պետք է ենթարկվեր այնպիսի փոփոխության, ըստ որի՝ տեղական կարիքներից հարուցված բարելավումների և բարենորոգումների խոստումները պետք է տրվեին ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից[190]:

Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի՝ Բուլղարիային և Հայաստանին վերաբերող և մի շարք այլ հոդվածներում երկու տերությունների փոխհամաձայնեցված փոփոխությունների արդյունքում անգլիական կառավարությունը խոստանում էր ապագա կոնգրեսում թուլացնել այն առարկությունները, որ ինքը, այնուամենայնիվ, դեռևս ուներ պայմանագրի այդ նոր տարբերակի

[188] П.А. Шувалов, նշվ. աշխ., էջ 95:
[189] Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին, Հուշագիր N1, Հոդված 8, էջ 100-101:
[190] Նույն տեղում, Հուշագիր N 1, Հոդված 7, էջ 100:

դեմ և պարտավորվում էր չառարկել ռուս-թուրքական նախնական հաշտության պայմանագրի այն մյուս հոդվածների դեմ, որոնք փոփոխության չէին ենթարկվել անգլո-ռուսական Համաձայնագրով[191]: Փաստորեն, 1878 թ. ապրիլի 1-ի անգլիական շրջաբերականի սկզբունքային դրույթների և Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի փոփոխության ենթարկված մի շարք հոդվածների վրա հիմնված 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի պայմանները երկու տերությունների համար ապագա կոնգրեսում դառնում էին բանակցությունների հիմք:

Այդպիսով, Բալկանյան լեռնաշղթայով Բուլղարիան աշխարհագրորեն երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու, այդ մարզերի վարչական կարգավորմանը եվրոպական տերություններին մասնակից դարձնելու, Բուլղարիայի արևմտյան սահմանը ազգային հատկանիշով որոշելու, նրա հարավային տարածքը Էգեյան ծովից նշանակալիորեն դեպի հյուսիս հեռացնելու և Կ. Պոլսի կոնֆերանսի առաջարկած սահմանագծով հաստատելու, Բալկանյան լեռնաշղթայում թուրքական կայազորներ տեղակայելու և, այդպիսով, Ռուսաստանի հնարավոր հարձակումներից Արևելյան Ռումելիան պաշտպանելու, Բուլղարական իշխանապետության հետ Արևելյան Ռումելիայի միավորումը կանխելու, սևծովյան Տրապիզոնի նավահանգստից Ալաշկերտի հովտով և Բայազետ քաղաքով դեպի Պարսկաստան և այնուհետև՝ դեպի Հնդկաստան ուղղվող միջազգային առևտրական ճանապարհը Թուրքիային վերադարձնելու, ապագայում Ռուսաստանի սահմանը Ասիական Թուրքիայի կողմից չընդլայնելու, Օսմանյան կայսրությանն այդ վտանգից «զենքի ուժով» Անգլիայի կողմից պաշտպանելու, Հայաստանի վերաբերյալ խոստումները ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլև Անգլիայի անունից տրվելու, Բալկանյան թերակղզում թուրքական տիրապետության տակ մնացած հունական մարզեր Էպիրոսի, Թեսա-

[191] Նույն տեղում, Հոդված 11, էջ 102:

լիայի և «քրիստոնեական մյուս մարզերի ապագա կազմակերպման մեջ» Անգլիան նույնպես խորհրդակցական ձայնի իրավունք ունենալու վերաբերյալ անգլո-ռուսական Համաձայնագրի բոլոր պայմաններն ընդունելու պարագայում միայն Անգլիան արդեն պարտավորվում էր ապագա կոնգրեսում չառարկել, որ Ռուսաստանը Թուրքիայից վերադարձներ Հարավային Բեսարաբիան, ստանար սևծովյան Բաթում նավահանգիստը և պահպաներ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Հայաստանում կատարած իր նվաճումները, որոնցից էին՝ Կարսը, Արդահանը և Արդվինը:

Այդպիսով, 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված անգլո-ռուսական Համաձայնագրով Անգլիան արգելք էր դնում Դանուբից մինչև Էգեյան ծով և Սև ծովից մինչև Օխրիդա լիճը և Ալբանական լեռները Ռուսաստանի քաղաքական ազդեցության ներքո Բուլղարական իշխանապետության՝ որպես սլավոնական մեծ պետության, ստեղծման վրա: Պահանջելով, որ Բուլղարիայի հարավային վարչական տարածքը աշխարհագրորեն հեռացվեր Էգեյան ծովից և պարփակվեր Կ.Պոլսի դեսպանաժողովի որոշած բուլղարական էկզարխատի սահմաններում, Անգլիան, այդպիսով, Ռուսաստանին զրկում էր Սև ծովից Բուլղարիայի տարածքով անմիջականորեն դեպի Էգեյան ծով դուրս գալու հնարավորությունից:

Հայաստանին վերաբերող նույն՝ մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրով, Ռուսաստանին ստիպելով Թուրքիային վերադարձնել Բայազետ քաղաքը և Ալաշկերտի հովիտը, Անգլիան այդպիսով իր ազդեցությունն էր պահպանում անգլիական առևտրական և քաղաքական շահերի համար մեծ կարևորություն ներկայացնող սևծովյան Տրապիզոնի նավահանգստից Էրզրումով դեպի Պարսկաստան՝ Թավրիզ, Թեհրան, Մեշխեդ, այնուհետև՝ Աֆղանստանի Հերաթ և այդտեղից դեպի իր գաղութ Հնդկաստանի Փեշավար քաղաքը տանող ցամաքային ուղու վրա:

Նույն համաձայնագրով, պատերազմի սպառնալիքով Ռուսաստանին պարտավորեցնելով ապագայում իր սահմանը չընդարձա-

կել Ասիական Թուրքիայի կողմից, Անգլիան այդպիսով Ռուսաստանին զրկում էր Ասիական Թուրքիայի տարածքներով դեպի Կ.Պոլիս և Նեղուցները առաջանալու, ինչպես նաև՝ դեպի Միջերկրական ծով իջնելու հնարավորությունից և փաստորեն Թուրքիային վերցնում էր իր ռազմաքաղաքական պաշտպանության և հովանավորության ներքո՝ հավերժացնելով թուրքական տիրապետությունը Արևմտյան Հայաստանում: Այդ առումով Անգլիան մեծագույն պատասխանատվություն է կրում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության իրականացրած զանգվածային կոտորածների և ցեղասպանության քաղաքականության համար: Ինչ վերաբերում էր Եվրոպական Թուրքիայում և մասնավորապես Հայաստանում թուրքական կառավարության կատարելիք բարեփոխումներին, ապա այդ Համաձայնագրով բարեփոխումների իրականացման նախաձեռնությունը գործնականում անցնում էր Անգլիային:

Սոլսբերիի համաձայնությամբ Շուվալովը Բիսմարկին է տեղեկացնում անգլո-ռուսական Համաձայնագրի բոլոր պայմանները և դրանց վերաբերյալ անգլո-ռուսական հնարավոր տարաձայնությունները հարթեցնելու համար, որպես հաշտարար, նրան առաջարկում է ստանձնել համաեվրոպական կոնգրեսը հրավիրելու նախաձեռնությունը: Ինչպես նշում է Շուվալովը իր հուշագրություններում, գերմանական կանցլերը շատ է զարմանում՝ տեղեկանալով անգլո-ռուսական Համաձայնագրի և դրա պայմանների մասին: Նա շատ է մտահոգվում, վկայում է Շուվալովը, որ Ռուսաստանը Ավստրիայի հետ պայմանավորվելու փոխարեն, բանակցություններ է վարել Անգլիայի հետ[192]: Մեկնաբանելով ոչ թե Ավստրիայի, այլ Անգլիայի հետ համաձայնության հանգելու Ռուսաստանի ցանկությունը՝ Շուվալովը շեշտում է, որ Ռուսաստանի շահերից է բխում բանակցություններ վարել մի տերության հետ, որը մտադրված է պատերազմ հայտարարել Ռուսաստանին, և որի նավատորմը լիո-

[192] Шувалов П.А., նշվ. աշխ., էջ 96:

վին պատրաստ է: Դրանից բացի, շեշտում էր Շուվալովը, Անգլիան, այլ ոչ թե Ավստրիան է վիճարկում Ռուսաստանի իրավունքը Կարսի և Բաթումի վրա: Բիսմարկը ծայրահեղորեն զարմանում է, վկայում է Շուվալովը, որ Անգլիան, այնուամենայնիվ, համաձայնվել է Ռուսաստանին զիջել Կարսը և Բաթումը: Բավարարվելով Անգլիայի հետ Ռուսաստանի վարած բանակցությունների անհրաժեշտության բացատրություններով՝ Բիսմարկը եզրակացնում է. «Դե, այդ դեպքում դուք իրավացի էիք՝ բանակցություններ վարելով Անգլիայի հետ: Նա ձեզ հետ կպատերազմեր նույնիսկ միայնակ, այնինչ Ավստրիան ձեզ պատերազմ կհայտարարեր իր դաշնակիցների հետ միասին»[193]: Գերմանական կանցլերը համաձայնվում է մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա ընդունել կոնգրեսը հրավիրելու Շուվալովի առաջարկությունը և, ապագա կոնգրեսում որպես ռուսական պատվիրակության ղեկավարի, նրան խոստանում է ամենաանկեղծ և վերապահ աջակցություն:

Հետագայում, երբ Ռուսաստանի կանցլեր և արտաքին գործերի նախարար Ա. Մ. Գորչակովը Ալեքսանդր 2-րդի կողմից նշանակվում է կոնգրեսում ռուսական պատվիրակության ղեկավար, այդ նշանակումից դժգոհ Բիսմարկը Շուվալովին հայտարարում է. «Հանգամանքները բոորովին փոխվել են: Կոնգրեսի ընթացքում անձամբ մենք կմնանք բարեկամներ, սակայն իշխան Գորչակովին ես թույլ չեմ տալու երկրորդ անգամ բարձրանալու իմ ուսերի վրա՝ դրանք հենարան դարձնելու իր համար»[194]:

Գերմանիայի կայսր Վիլհելմ 1-ինը, Շուվալովից իրազեկվելով անգլո-ռուսական Համաձայնագրի պայմաններին, նույնպես զարմանում է, որ Անգլիան համաձայնվել է, որ Ռուսաստանը վերցնի Կարսն ու Բաթումը[195]:

Շուվալովի վկայությամբ՝ Ալեքսանդր 2-րդը «նույնպես զարմա-

[193] Նույն տեղում:
[194] Նույն տեղում, էջ 100:
[195] Նույն տեղում, էջ 97:

ցած էր» անգլո-ռուսական Համաձայնագրի պայմաններով և չէր ցանկանում հավատալ, որ Բուլղարիան երկու մասի բաժանելու դիմաց անգլիացիները հակված էին Ռուսաստանին զիջել Կարսը և Բաթումը: Երբ գործը հասնի համաձայնությունը ստորագրելուն, անգլիացիները կհրաժարվեն դրանից: «Մի խոսքով, նրանք ձեզ խաբում են,- իր համոզմունքն էր Շուվալովին հայտնում Ալեքսանդր 2-րդը»[196]: Այնուամենայնիվ, կայսր Ալեքսանդր 2-րդի նախագահությամբ Պետերբուրգում կայացած խորհրդակցություններում քննարկման ենթարկելուց հետո՝ 1878 թ. մայիսի 30-ին, Լոնդոնում կնքված անգլո-ռուսական Համաձայնագիրը, իր բոլոր պայմաններով հանդերձ, Թուրքիայից Հարավային Բեսարաբիան վերադարձնելու, սևծովյան Բաթում նավահանգիստը ստանալու և 1877-1878 թթ. պատերազմում Հայաստանում գրաված տարածքները՝ Կարսը, Արդահանը, Արդվինը, պահելու համար լիովին հավանության է արժանանում և ամբողջովին հաստատվում[197]: Այլապես, շեշտում էր Շուվալովը, մայիսի 30-ի Համաձայնագրում ցանկացած փոփոխություն կարող էր վնասել կոնգրեսի հրավիրմանը: Սակայն Բալկանյան լեռնաշղթայում թուրքական զորքեր տեղակայելու և, այդպիսով, երկու Բուլղարիաների միավորումը կանխարգելող Համաձայնագրի միայն այդ պայմանը մտահոգություն պատճառող կայսրին Շուվալովը բացատրում է, որ անգլիացիները հակված չեն զիջելու այդ հարցում և չեն հրաժարվի այդ պահանջից, ուստի՝ անհրաժեշտ է համակերպվել այդ պայմանի հետ՝ շեշտելով, որ Բալկանյան լեռնաշղթայում թուրքական զորքերի տեղակայումը, այնուամենայնիվ, կպահանջի այնպիսի նյութական զոհողություններ, որ դրա իրականացումը, ամենայն հավանականությամբ, անհնարին կդառնա: Մյուս կողմից, նշում էր Շուվալովը, ակնհայտ էր, որ Հյուսիսային Բուլղարիայի անջատումը Հարավայինից կրում էր արհեստական բնույթ, եթե նույնիսկ Բալկանյան լեռնաշղթայի պաշտպանությունը

[196] Նույն տեղում, էջ 98:
[197] Նույն տեղում:

իրականացվեր թուրքերի կողմից: Կոնգրեսից երկու տարի անց արդեն ակնհայտ էր դառնում, նշում է Շուվալովը, որ սուլթանը չէր կարող պաշտպանվել Բալկանյան լեռնաշղթայում, և որ մի քանի տարի անց, անգամ ամիսների ընթացքում այդ երկու նահանգների միավորումը կայանալու էր: Հետագա իրադարձությունները ապացուցեցին, գրել է Շուվալովը Բեռլինի կոնգրեսի մասին իր հուշագրության մեջ, «որ ես չեմ սխալվել»[198]: Այդպիսով՝ Թուրքիայից Հարավային Բեսարաբիան վերադարձնելու, սևծովյան Բաթում նավահանգիստը ստանալու և իր տիրապետությունը Հայաստանում ձեռք բերած տարածքների՝ Կարսի, Արդահանի և Արդվինի վրա հաստատելու համար՝ կայսր Ալեքսանդր 2-րդի գլխավորությամբ, ռուսական կառավարությունը համաձայնվում էր 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված անգլո-ռուսական Համաձայնագրի անգլիական բոլոր պայմանների հետ՝ արդեն նախօրոք համակերպվելով այդ սկզբունքների հիման վրա ընդունելու ապագա եվրոպական կոնգրեսի կայացնելիք որոշումները:

Օգտվելով 1877-1878 թթ. պատերազմում պարտված Օսմանյան կայսրության համար ստեղծված միջազգային ծանր դրությունից՝ անգլիական դիվանագիտության առաջնահերթ խնդիրներից էր դառնում ռազմաստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող Միջերկրական ծովի Կիպրոս կղզին գրավելու և այդտեղ Մեծ Բրիտանիայի տիրապետությունը հաստատելու կարևորագույն նպատակը: Ներկայացնելով այդ հրատապ և կարևորագույն նպատակի իրականացման անհրաժեշտության պատճառները՝ Մեծ Բրիտանիայի պահպանողական կառավարության ղեկավար Դիզրայելին՝ լորդ Բիկոնսֆիլդը, Վիկտորյա թագուհուն մայիսի 5-ին ուղղած նամակում գրում էր. «Եթե Թուրքիան Կիպրոսը զիջի Անգլիային, և եթե Անգլիան միաժամանակ պաշպանողական դաշնակցություն կնքի Թուրքիայի հետ՝ երաշխավորելով Ասիական Թուր-

[198] Նույն տեղում:

քիայի անվտանգությունը ռուսական հարձակումից, ապա Անգլիայի հզորությունը Միջերկրականի տարածաշրջանում նշանակալիորեն կմեծանա և Հնդկական կայսրությունը անչափորեն կամրապնդվի», - իր համոզմունքն էր արտահայտում Դիզրայելին: «Կիպրոսը արևմտյան Ասիայի բանալին է»,- Կիպրոսի կարևորության վերաբերյալ թագուհուն իր տեսակետն էր ներկայացնում անգլիական պահապանողական կառավարության ղեկավարը[199]:

Թուրքական կառավարությունը բացարձակապես տեղյակ չէր անգլո-ռուսական խիստ գաղտնի Համաձայնագրի պայմաններին: Օգտվելով Թուրքիայի միջազգային ծանր դրությունից և դիվանագիտական ճնշումներով ահաբեկելով ապագա կոնգրեսում նրան սպառնացող ծանր հեռանկարներով՝ պահպանողականների կառավարությունը, թուրք պատմաբանի բնութագրմամբ, «սարսափով և հուսալքությամբ համակված» սուլթանին ստիպում է կնքելու «Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև», որը հայտնի է նաև «Կիպրոսի կոնվենցիա» անունով: Այդ դաշինքը կնքվում է հունիսի 4-ին Կ.Պոլսում Օսմանյան կայսրության արտգործնախարար Սաֆվետ փաշայի և Անգլիայի արտակարգ ու լիազոր դեսպան Հենրի Լայարդի միջև[200]: Այդ դաշնակցային պայմանագրով նշվում էր, որ եթե Ռուսաստանը, պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ դրանցից մեկնումեկը, այնուհետև երբևիցե փորձ աներ տիրելու Ասիայում սուլթանի երկրներից որևէ մասին, այդ ժամանակ Անգլիան պարտավորվում էր միանալ սուլթանի հետ՝ «զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար»[201]: Որպես փոխհատուցում Օսմանյան կայսրության Ասիական Թուրքիայի երկրները Ռուսաստանի ապագա նվաճումներից զենքի

---

[199] Տե՛ս Pierre Benaerts, Nationalité et nationalism (1860-1870). Paris, 1968, p. 400:

[200] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972:
Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև: Կ.Պոլիս, 4 հունիսի 1878 թ., էջ 104-105:

[201] Նույն տեղում, Հոդված 1, էջ 104:

ուժով պաշտպանելու Անգլիայի ռազմական դաշնակցության՝ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը Անգլիային խոստանում էր ձեռնարկել անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք պետք է մանրամասնորեն որոշվեին երկու տերությունների միջև, որոնց նպատակն էր Օսմանյան կայսրության քրիստոնյա և այլ հպատակ ժողովուրդների «բարվոք կառավարումը և պաշտպանությունը»[202]: Այդպիսով՝ որպես փոխհատուցում Ռուսաստանի դեմ Անգլիայի ռազմական դաշնակցության՝ Աբդուլ Համիդ 2-րդը բացառապես Անգլիային էր վերապահում Օսմանյան կայսրությունում իրականացվելիք բարենորոգումների ծրագրերը թուրքական կառավարության հետ նախապես մանրամասնաբար նախորոշելու և իրականացումը վերահսկելու արտակարգ իրավունքը: Ռուսաստանի դեմ ուղղված Անգլիայի ռազմական դաշնակցության դիմաց կատարած մյուս փոխհատուցմամբ սուլթանը համաձայնվում էր, որ Օսմանյան կայսրության կազմում «Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»[203]:

Այդպիսով՝ Ասիական Թուրքիայի երկրները, հիմնականում՝ Արևմտյան Հայաստանը, Օսմանյան կայսրության կազմում պահելու, Ռուսաստանի առաջխաղացումը Փոքր Ասիայով դեպի Կ.Պոլիս և Նեղուցները, նաև դեպի Միջերկրական ծով կանխելու ռազմական դաշնակցության դիմաց, որպես փոխհատուցում, Աբդուլ Համիդ 2-րդը Անգլիային էր վերապահում բարենորոգումների ծրագրերը թուրքական կառավարության հետ կազմելու և դրանց իրականացումը վերահսկելու իրավունքը, ինչպես նաև փաստացիորեն Անգլիային էր զիջում Կիպրոս կղզին: Անգլո-թուրքական ռազմական դաշնակցության պայմանագիրը կրում էր խիստ ձևական բնույթ, որովհետև 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրով Ռուսաստանը, Հայաստանում ստանալով Կարսը, Արդահանը և Արդվինը, արդեն պարտավորվել էր ապագայում իր

[202] Նույն տեղում:
[203] Նույն տեղում:

սահմանը այլևս չընդլայնել Ասիական Թուրքիայի կողմից: Այնինչ, խաբելով այդ պայմանագրից անտեղյակ թուրքական կառավարությանը, ռազմական դաշնակցության դիմաց, որպես փոխհատուցում, Անգլիան իր ձեռքն էր վերցնում Օսմանյան կայսրության քրիստոնյա և հպատակ այլ ժողովուրդներին վերաբերող բարենորոգումների նախաձեռնությունը և վերահսկողությունը, ինչպես նաև Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու իրավունքով իր տիրապետությունն էր հաստատում Արևելյան Միջերկրականի ռազմաստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող Կիպրոս կղզու վրա: Գրավելով Կիպրոսը, նշում է ֆրանսիական պատմագրությունը, Անգլիան պաշտպանողական օղակ է ավելացնում Ջիբրալթարի նեղուցից մինչև Բոմբեյ ձգվող Բրիտանական հենակետերի շղթայում՝ վերածվելով Միջերկրածովյան տերության:[204]

Թուրք պատմաբան Բայուրը, մեկնաբանելով Անգլիայի և Թուրքիայի միջև 1878 թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված պաշտպանողական դաշնակցություն կնքելու անգլիական կառավարության դրդապատճառները, գրում է. «Բալկաններից, Նեղուցներից, Միջերկրականից և դեպի Հնդկաստան տանող ուղիներից Ռուսաստանին հեռու պահելու քաղաքականության հետևանքով Անգլիայում իշխող պահպանողականների կառավարությունը, պաշտպանելով և ամրապնդելով Օսմանյան կայսրությունը, նրան պատնեշ էր դարձնում ռուսական հեղեղի դեմ»[205]:

Մեկնաբանելով Թուրքիայի հետ պաշտպանողական դաշնակցություն կնքելու անհրաժեշտության պատճառները՝ Սոլսբերին նշում էր, որ միակ միջոցը, որը ռուսական հետագա նվաճումների դեմ կարող է էապես երաշխավորել օսմանյան տիրապետությունը Թուրքական Ասիայում, դա մի հզոր տերության կողմից Թուրքիային ցուցաբերելիք ռազմական օգնությունն է: Մյուս կողմից,

[204] Pierre Beneaerts, նշվ. աշխ., էջ 400:
[205] Y. H. Bayur, Türk İnkilâbi tarihi, cilt 1-2 (kisim 1-3). İstanbul-Ankara, 1940-1951. Birinci kisim. Berlin Muahedesinden meşrutiyetin ilanina kadar. 1878-1908, s.13.

ընդգծում էր Սոլսբերին, Թուրքիայի հետ հզոր տերության ռազմական դաշինքը ասիական նահանգների ժողովուրդներին անհրաժեշտ վստահություն կներշնչի, որ Ասիայում թուրքական տիրապետությանը ապագայում կործանում չի սպասվում[206]:

Չբավարարվելով անգլո-ռուսական Համաձայնագրով և անգլո-թուրքական պաշտպանողական դաշինքով՝ անգլիական կառավարությունը կոնգրեսի անմիջական նախօրյակին՝ հունիսի 6-ին, Ավստրո-Հունգարիայի հետ կնքում է համաձայնություն՝ իրենց շահագրգռող հարցերի վերաբերյալ կոնգրեսում միասնական քաղաքականություն վարելու մասին: Այսպես. Ավստրո-Հունգարիան համաձայնվում էր Բալկանյան լեռնաշղթայով Բուլղարիան երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու և ռուսական օկուպացիոն բանակի ռազմակալման ժամկետը վեց ամսով սահմանափակելու անգլիական տեսակետի հետ: Անգլիան, իր հերթին, պարտավորվում էր պաշտպանել Ավստրո-Հունգարիայի հավակնությունները Օսմանյան կայսրության սլավոնական մարզեր Բոսնիայի և Հերցեգովինայի նկատմամբ[207]:

[206] Տե՛ս. D'Avril, նշվ. աշխ., էջ 354:
[207] История дипломатии, том II, М., 1963, с.129.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

1878 թ. հունիսի 13-ին Բեռլինում իր նիստերն է սկսում 1856 թ. Փարիզի հաշտության կոնգրեսի և 1871 թ. Լոնդոնի կոնֆերանսի մասնակից տերությունների կոնգրեսը՝ Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը քննարկելու և իրենց քաղաքական շահերին համապատասխանեցնելու համար:

Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի կարևորագույն սկզբունքների դեմ անգլիական դիվանագիտության առարկությունների քաղաքական նպատակները քողարկելու նպատակով անգլիական պահպանողական կառավարության և պատվիրակության ղեկավար Դիզրայելին՝ լորդ Բիկոնսֆիլդը, հայտարարում է, որ իրենք Բեռլին են եկել թուրքական սուլթանի գործերը կոնգրեսում կարգավորելու և նրան Թուրքիայում իր իշխանությունը իրականացնելու լիակատար հնարավորություն ընձեռելու համար:

Թուրքական պատվիրակների հետ պաշտոնական տեսակցության ժամանակ կոնգրեսի նախագահ Բիսմարկը թուրքական պատվիրակության ղեկավար Ալ. Կարաթեոդորիին շեշտում է. «Ես, քան որևէ մեկ ուրիշը, ձեր հանդեպ շատ անկեղծ կլինեմ: Ես չեմ ուզում իրադրությունը ձեզանից թաքցնել: Եթե դուք կարծում եք, որ կոնգրեսը Թուրքիայի համար է հրավիրվել, ուրեմն սխալվում եք: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կմնար այնպիսին, ինչպիսին որ կնքվել է Թուրքիայի և Ռուսաստանի միջև, եթե այն չդիպչեր եվրոպական բնույթի շահերին: Հենց այդ կարգի եվրոպական շահերի լուծման համար են տերությունները կոնգրես գումարել Բեռլինում: Այդ դժվարությունների կարգավորման կապակցությամբ, հնարավոր է, որ Սան Ստեֆանոյի որոշ հոդվածների խստությունը մեղմացվի և, այդ առումով, դուք կշահեք: Բայց եթե ցանկանաք ավելի հեռուն գնալ, դուք չեք հաջողի, որովհետև, կրկնում

եմ, կոնգրեսը Թուրքիայի համար չի գումարվել: Ձեր համառության հետևանքով վերսկսված եվրոպական պատերազմը կործանարար կլինի սուլթանի համար, որը, այնուամենայնիվ, դեռևս շարունակում է մնալ որպես անկախ տիրակալ»[208]: Պատերազմի վերսկսման դեպքում, շեշտում էր Բիսմարկը, Թուրքիան հիմնահատակ ավերվածության կենթարկվի: Կարաթեոդորի համոզմամբ, ըստ Բիսմարկի, Արևելյան հարցը Եվրոպային հետաքրքրում է նրա կարգավորման այնպիսի հետևանքներով, որոնք սոսկ կարող են նպաստել եվրոպական Մեծ տերությունների միջև հարաբերությունների բարելավմանը:

Ավստրո-հունգարական կայսրության արտաքին գործերի նախարար և պատվիրակության ղեկավար Անդրաշիի առաջարկությամբ կոնգրեսի նախագահ է ընտրվում Գերմանիայից, Ռուսաստանից և Ավստրո-Հունգարիայից 1873 թ. ստեղծված «Երեք կայսրերի դաշինքի» անդամ, Գերմանիայի կանցլեր Բիսմարկը: Այդ հանգամանքը որոշակի դեր է ունենում Գերմանիայի դաշնակից տերությունների՝ Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի շահերը Բիսմարկի կողմից կոնգրեսում պաշտպանելու համար: Ստանձնելով կոնգրեսի նախագահի պաշտոնը՝ Բիսմարկը շեշտում է, որ վեհաժողովի մասնակից պատվիրակությունների հիմնական նպատակը Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ճակատագրի բարելավման ուղղությամբ արդյունավետ երաշխիքների ընդունումն է և Եվրոպային այնքան անհրաժեշտ խաղաղության ապահովումը: Բիսմարկի առաջարկած կոնգրեսի աշխատանքային ընթացակարգի հաստատումից անմիջապես հետո Դիզրայելին իր ելույթում տերությունների ներկայացուցիչների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, ըստ որի՝ նախքան Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի քննարկմանն անցնելը՝ անհրաժեշտ է անհապաղորեն լուծել ծայրահեղորեն անհետաձգելի մի հարց, որը վերա-

[208] Տե՛ս Bareilles B., Le rapport secret sur le Congrès de Berlin adressé à la S.Porte par Karathéodory pacha, premier plénipotentiaire ottoman. Paris, 1919. p. 75-76:

բերում է Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսի մատույցները ոազմակալած ռուսական բանակների ներկայությանը՝ շեշտելով, որ դեմ առ դեմ գտնվող երկու թշնամական բանակների միջև առաջացած ցանկացած միջադեպի դեպքում անգամ այդ իրավիճակը հղի է ռազմական գործողությունների վերսկսման աղետալի հետևանքներով, նույնիսկ ռուսական բանակի կողմից Օսմանյան կայսրության մայրաքաղաքը գրավման ենթարկելու սպառնալիքով: Շեշտելով, որ պատերազմական դրության մեջ գտնվող այդ երկու տերությունների, ինչպես նաև Եվրոպայի ընդհանուր շահերի համար ստեղծված այդպիսի միանգամայն անորմալ և խիստ վտանգավոր իրադրության պայմաններում բացարձակապես անհնար է հանգիստ ու անկաշկանդ մթնոլորտում քննարկել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածները, Դիզրայելին առաջ էր քաշում Կ.Պոլսի մատույցներից ռուսական բանակները շուտափույթ կերպով հեռացնելու պահանջը: Դիզրայելիի՝ դիվանագիտորեն քողարկված նպատակը շատ պարզ էր ու հասկանալի. Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներից ռուսական զորքերի հեռացումով բացառել ճնշման այն հզոր ռազմական գործոնը, որի միջոցով Ռուսաստանը կարող էր գործադրել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածների հիմնական սկզբունքները կոնգրեսում իրականացնելու համար: Պատասխանելով Դիզրայելիի ելույթին՝ Ռուսական կայսրության կանցլեր և պատվիրակության ղեկավար Գորչակովը շեշտում է, որ իր կառավարության միակ նպատակը Օսմանյան կայսրության բոլոր հպատակ քրիստոնյա ժողովուրդներին արդյունավետ երաշխիքներով ապահովված ինքնավարության կարգավիճակի շնորհումն է, և եթե այդ արդյունքները ձեռք բերելու համար կոնգրեսը Ռուսաստանին կարող է լավագույն այլ միջոցներ առաջարկել՝ առանց Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցները ռուսական բանակների կողմից ռազմակալած պահելու և առանց թուրքական կառավարության վրա քաղաքական հարկադրանքներ գործադրելու, ապա ռուսական կառավա-

րությունը պատրաստակամ է այդ առաջարկությունը քննարկման ենթարկելու: Մերժելով ռուսական բանակները Կ.Պոլսի մատույցներից անհապաղորեն հեռացնելու անհրաժեշտության վերաբերյալ Դիզրայելիի ելույթի փաստարկները՝ ռուսական պատվիրակները հերքում են Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրության մայրաքաղաքը գրավելու հավանականությունը և փաստում, որ զինադադարի ստորագրումից հետո անմիջականորեն երկու հանդիպակաց բանակների միջև որևէ լուրջ միջադեպ տեղի չի ունեցել, իսկ նախքան վերջնական հաշտության պայմանագրի կնքումը ռուսական բանակների հեռանալը կարող է լուրջ անկարգությունների ազդանշան ծառայել՝ անկանխելի սպառնալիք ստեղծելով Կ.Պոլսի քրիստոնյա բնակչության անվտանգությանը:

Լիովին համաձայնվելով Կ.Պոլսի մատույցները ռազմակալած պահելու անհրաժեշտության վերաբերյալ ռուսական պատվիրակների ներկայացրած փաստարկների հետ՝ կոնգրեսի նախագահ Բիսմարկը կարծիք է հայտնում, որ անգլիական ներկայացուցիչները պետք է որ արդեն բավարարված լինեն Ռուսաստանի՝ իրենց պաշտոնակիցների այդ համոզիչ պատասխաններից և, հետևաբար, կոնգրեսի աշխատանքները չպետք է պայմանավորեն Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներից ռուսական բանակների հեռացման հետ: Այնուհետև, շեշտելով, որ կոնգրեսը ամենևին էլ իրավասու չէ քննարկման ենթարկելու Կ.Պոլսի մատույցներից ռուսական բանակների հեռացման հարցը, վեհաժողովի նախագահ Բիսմարկը, փաստորեն, մերժում է անգլիական առաջարկը և կարծիք հայտնում, որ այդ հանգամանքը նախ և առաջ պետք է որ անմիջականորեն կարգավորվի միայն Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների երկկողմանի բանակցությունների միջոցով: Իր առաջարկության վերաբերյալ ստանալով Դիզրայելիի և մյուս պատվիրակների համաձայնությունը՝ կոնգրեսի նախագահ Բիսմարկը Կ.Պոլսի մատույցներից ռուսական բանակների հեռացմանը վերաբերող հարցի քննարկումը անառարկելիորեն հայտարա-

րում է ավարտված[209]: Այդպիսով՝ կոնգրեսի առաջին իսկ նիստում վեհաժողովի նախագահ Բիսմարկը արդեն մեծ ծառայություն է մատուցում «Երեք կայսրերի դաշինքի» անդամ Ռուսաստանին՝ մերժելով Մեծ Բրիտանիայի կառավարության և պատվիրակության ղեկավար Դիզրայելիի պահանջը, որի հետևանքով Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցները ռազմակալած ռուսական բանակների առկայությունը նշանակալի ազդեցություն է թողնում կոնգրեսում Սան Ստեֆանոյի պայմանագիրը Ռուսաստանի շահերին համապատասխանող քննարկման ենթարկելու համար: Իրենց հերթին, անգլիական պատվիրակները արդեն կոնգրեսի առաջին իսկ նիստում, նախագահ Բիսմարկի անառարկելի միջամտության հետևանքով, դիվանագիտական առաջին լուրջ պարտությունն են կրում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի քննարկումները սեփական հայեցողությամբ իրականացնելու ճանապարհին:

Իր անմիջական միջամտությամբ մերժելով Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներից ռուսական բանակների հեռացման անհրաժեշտության վերաբերյալ Դիզրայելիի փաստարկները և անցնելով կոնգրեսի օրակարգային հարցերի հերթականության հաստատմանը՝ կոնգրեսի նախագահ Բիսմարկը առաջարկում է Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի քննարկումները սկսել առաջնահերթ կարևորություն ներկայացնող Բուլղարական իշխանապետության քաղաքական կազմակերպմանը և նրա սահմաններին վերաբերող համապատասխան հոդվածներից:

[209] Documents diplomatiques. Affaires d'Orient. Congrès de Berlin. 1878. Paris,1878. Protocole N°1.Séance du 13 juin 1878, p. 65-71.

Բուլղարիա

Բուլղարիայի վերաբերյալ քննարկումների ժամանակ Բիսմարկը նախապես զգուշացնում է թուրքական պատվիրակներին՝ շեշտելով, որ թուրքական կառավարության շահերից չի բխում, որ իրենց առարկություններով բարդություններ ստեղծեն կոնգրեսի աշխատանքների համար, մանավանդ, որ վեհաժողովը մտադիր է սուլթանին վերադարձնել այն տարածքները, որոնցից նա արդեն հրաժարվել է Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով: Այնուհետև Բիսմարկը շեշտում է, որ թուրքական պատվիրակները իրավունք չունեն կոնգրեսում առարկություններ ներկայացնել իրենց կառավարության կողմից ստորագրված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածների դեմ՝ սպառնալով, որ ինքը չի կարող հանդուրժել նրանց ցուցաբերած հակաճառությունները և, որպես կոնգրեսի նախագահ, նրանց համառության դեպքում ստիպված կլինի գործնական սանկցիաներ կիրառել իր նկատառումները իրականացնելու համար: «Բիսմարկի խոսքերի ձայներանգները, նրա շարժուձևերը և հայացքի արտահայտությունը շեշտում էին նրա խոսքերի խստությունը»,- թուրքական պատվիրակներին ուղղված կոնգրեսի նախագահ Բիսմարկի սպառնալից զգուշացման մասին իր զեկուցագրում թուրքական կառավարությանն էր հաղորդում Ալ. Կարաթեոդորին:

Բուլղարիայի վերաբերյալ կոնգրեսը քննարկումներ և վերջնական որոշումներ է կայացնում՝ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հյուսիս՝ քաղաքական ինքնավարությամբ վասալական իշխանապետություն, իսկ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ՝ վարչական լայն ինքնավարությամբ նահանգ ստեղծելու՝ 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված անգլո-ռուսական փոխզիջումային Համաձայնագրի և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածների սկզբունքների հիման վրա: Այնուամենայնիվ, Բուլղարիային վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայ-

մանագրի որոշ հոդվածներ վիճարկման էին ենթարկվում անգլիական և ավստրիական պատվիրակների կողմից: Այսպես. ելույթ ունենալով կոնգրեսի հինգերորդ՝ հունիսի 24-ի նիստում, հենվելով հունիսի 6-ի անգլո-ավստրիական համաձայնության վրա՝ Անդրաշին առարկություններ է ներկայացնում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 8-րդ հոդվածի դեմ, ըստ որի՝ մինչև Բուլղարական իշխանապետության անվտանգությունը, կարգն ու անդորրությունը պահպանելու անհրաժեշտ երկրային զորքերի լիակատար կազմավորումը, հետևակային վեց և հեծելազորային երկու դիվիզիաներից բաղկացած ռուսական հիսուն հազարանոց բանակը երկու տարի պետք է ռազմական գրավման ենթարկեր երկիրը և, անհրաժեշտության դեպքում, ռուսական կայսերական կոմիսարին ցույց տար աջակցություն: Անդրաշին իր առարկությունները հիմնավորում էր՝ փաստարկելով, որ Բուլղարական իշխանապետությունը ռուսական բանակով ռազմակալելու պայմաններում, այսինքն՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական ճնշման ներքո ընթացող կոնգրեսի աշխատանքները չեն կարող հաջողությամբ պսակվել, իսկ սահմանագծում դեմ հանդիման գտնվող թշնամական երկու՝ ռուսական և թուրքական բանակների վտանգներով հղի առճակատումը կշարունակվի նաև վերջնական հաշտության պայմանագիրը կնքելուց հետո: Հիմնվելով այդ փաստարկների վրա՝ Անդրաշին կոնգրեսին առաջարկում է Բուլղարական իշխանապետությունում ռուսական բանակի ռազմակալման ժամկետը սահմանափակել ընդամենը վեց ամսով: Ռուսական բանակի ռազմակալման վեցամսյա ժամկետը լրանալուց հետո, անհրաժեշտության դեպքում, նշում էր Անդրաշին, իշխանապետության կարգ ու կանոնը, անդորրությունը և անվտանգությունը ապահովելու նպատակով Մեծ տերությունների տրամադրած զորախմբերից կարելի է ստեղծել 10-ից մինչև 15 հազ. օժանդակ զորամիավորում, որը կդրվի Եվրոպական հանձնաժողովի ենթակայության ներքո:

Ռուսական բանակի ռազմակալման ժամկետը երկու տարվա

փոխարեն վեց ամիս սահմանելու, իսկ այնուհետև ռուսական բանակը Մեծ տերությունների զորախմբերից բաղկացած 10-ից 15 հազ. զորամասով փոխարինելու առաջարկություններով Անդրաշիի նպատակն էր թուլացնել Ռուսաստանի անմիջական ռազմաքաղաքական վերահսկողությունը ապագա Բուլղարական իշխանապետության քաղաքական կառուցվածքի վրա՝ այն ենթարկելով Մեծ տերությունների ազդեցությանը:

Հենվելով Բուլղարիայում ռուսական բանակի ռազմակալման ժամկետը վեց ամսով սահմանափակելու հունիսի 6-ի անգլո-ավստրիական համաձայնության վրա՝ Դիզրայելին անմիջապես միանում է Բուլղարական իշխանապետությունում Եվրոպական հանձնաժողովի ենթակայության ներքո Մեծ տերությունների զորախմբերից կազմված զորամաս տեղակայելու Անդրաշիի առաջարկությանը՝ հայտարարելով, որ Անգլիան պատրաստ է այդ նպատակի համար անհրաժեշտ զորախումբ տրամադրել: Իր հերթին Սոլսբերին շեշտում է, որ ռուսական բանակի ռազմակալման պայմաններում անհնար է Բուլղարական իշխանի ազատ ընտրություններ անցկացնել:

Պատասխանելով Անդրաշիին և նրա առարկությունները պաշտպանող անգլիական պատվիրակներին՝ Շուվալովը շեշտում է, որ ռուսական բանակով Բուլղարական իշխանապետության ռազմակալումը վեց ամսով սահմանափակելը չափազանց կարճ ժամանակահատված է՝ Ռուսաստանի վերահսկողությամբ Բուլղարական իշխանապետության քաղաքական կառուցվածքը կազմակերպելու համար: Ինչ վերաբերում էր ռուսական բանակի ռազմակալումը Մեծ տերությունների զորախմբերից բաղկացած զորամասով փոխարինելու Անդրաշիի առաջարկությանը՝ Շուվալովը շեշտում է այդ միջազգային խառը զորախմբերի ռազմակալումից բխելիք վտանգավոր հետևանքները: Ռուսական բանակը հարմարված է ռազմակալած երկրի սովորույթներին ու բարքերին, նրան ծանոթ է բուլղարերեն լեզուն, կարող է անհապաղորեն արձագանքել տեղերում առաջացած իրադարձություններին, մի երևույթ, որը սկզբնական

շրջանում չի կարող դրսևորվել փորձառությունից զուրկ միջազգային խառը զորախմբերից բաղկացած զորամասի կողմից, նշում էր Շուվալովը: Նա նաև մտահոգություն էր արտահայտում, որ սկզբնական շրջանում օտար զորախմբերը չեն կարող հաղթահարել իշխանապետության ներքին դժվարությունները, իսկ տերությունների քաղաքական տարաձայնությունների դեպքում նրանց միջև առաջացած հնարավոր ռազմական ընդհարումները կարող են ընդունել համաեվրոպական կոնֆլիկտի բնույթ: Շուվալովը մերժում է ռուսական բանակով Բուլղարական իշխանապետության ռազմակալման ժամկետը վեց ամսով սահմանափակելու Անդրաշիի առաջարկությունը և այդ հարցը երկարատև քննարկման չենթարկելու համար համաձայնվում է ռուսական բանակը Բուլղարական իշխանապետությունից տարհանել վերջնական հաշտության պայմանագիրը ստորագրելուց ինը ամիս հետո:

Կոնգրեսի նախագահ Բիսմարկը անվերապահորեն իր համաձայնությունն է հայտնում ռուսական բանակով Բուլղարական իշխանապետությունը ինը ամսով ռազմակալելու անհրաժեշտության, ինչպես նաև ռուսական բանակի փոխարեն օտարերկրյա զորախմբերից բաղկացած զորամաս տեղաբախշելու աննպատակահարմարության վերաբերյալ Շուվալովի ներկայացրած փաստարկներին՝ շեշտելով, որ դրանք պետք է ընդունվեն կոնգրեսի կողմից: Այդպիսով՝ ռուսական բանակի ռազմակալման ժամկետը Բուլղարիայում ընդամենը վեց ամսով սահմանափակելու և այնուհետև ռուսական բանակը Մեծ տերությունների զորախմբերից բաղկացած զորամասով փոխարինելու ավստրո-անգլիական նախապես համաձայնեցված առաջարկությունները մերժվում են նախագահ Բիսմարկի անառարկելի միջամտության հետևանքով: Ռուսական բանակով Բուլղարական իշխանապետությունը ինը ամսով ռազմակալելու կոնգրեսի որոշումը նշանակալիորեն նպաստում է Բուլղարիային վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածների հիմնական սկզբունքները հաստատելու համար:

Չի հաջողվում նաև Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածը սկզբունքային փոփոխության ենթարկելու, Բուլղարական իշխանապետության ժամանակավոր կառավարումը և ապագա քաղաքական կառուցվածքի կազմակերպման ու գործադրման հսկողությունը ռուսական կայսերական կոմիսարի փոխարեն Եվրոպական հանձնաժողովին հանձնարարելու ավստրո-անգլիական առաջարկությունը: Առարկելով ավստրիական և անգլիական պատվիրակների այդ համատեղ առաջարկությանը՝ Շուվալովը կոնգրեսի ուշադրությունն է հրավիրում այն կարևոր իրողության վրա, որ, ի տարբերություն այլ տերությունների, ի սկզբանե Ռուսաստանն է, որ անմիջականորեն նախաձեռնել է Բուլղարական ինքնավար իշխանապետության կազմակերպման գործը:

Քննարկումների արդյունքում Բիսմարկի միջամտությամբ կոնգրեսը արձանագրում է Բուլղարական իշխանապետությունում ռուսական կայսերական կոմիսարի ժամանակավոր գործունեությունը Եվրոպական տերությունների հյուպատոսների վերահսկողությանը ենթարկելու Շուվալովի փոխզիջումային առաջարկությունը[210]: Այդպիսով՝ Բուլղարական իշխանապետությունը ռուսական բանակով ինը ամսով ռազմակալելու և այդ ընթացքում նրա ժամանակավոր կառավարումը և վարչական կառուցվածքը հիմնականում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածների հիման վրա ռուսական կայսերական կոմիսարի անմիջական վերահսկողությամբ կազմակերպելու կոնգրեսի ընդունած որոշումը մեծապես նպաստում է այդ նահանգում Ռուսաստանի քաղաքական ազդեցության հաստատմանը:

Բուլղարիայի վերաբերյալ քննարկումների արդյունքում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված Համաձայնագրի և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածների կարևորագույն

[210] Documents diplomatiques. Protocole N°5.Séance du 24 juin 1878, p. 96-100.

սկզբունքների հիման վրա, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ սուլթանի գլխավորությամբ ստեղծվելու էր Օսմանյան կայսրության կառավարությանը ամենամյա տուրք վճարող, քաղաքական ինքնավարությամբ օժտված Բուլղարական իշխանապետությունը՝ քրիստոնեական կառավարությամբ և ժողովրդական միլիցիայով: Թուրքական բանակն ամբողջությամբ դուրս էր բերվելու ինքնավար Բուլղարական իշխանապետության սահմաններից, իսկ մեկ տարի անց կամ ավելի շուտ բոլոր հին ամրոցները իշխանապետության կողմից պետք է հողին հավասարեցվեին: Ինքնավար Բուլղարիան պետք է ունենար բնակչության կողմից ազատորեն ընտրված իր իշխանը, որին, տերությունների համաձայնությամբ, պետք է հաստատեր թուրքական սուլթանը: Վերապահվում էր, որ եվրոպական տերություններում թագավորող արքայատոհմերի անդամներից և ոչ մեկը չէր կարող ընտրվել ինքնավար Բուլղարիայի իշխան: Մինչև իշխանի ընտրությունը՝ Բուլղարական իշխանապետության կառավարման կարգը՝ կազմակերպական Կանոնադրությունը, պետք է մշակեր և ընդուներ Տիրնովոյում գումարված Բուլղարիայի անվանի մարդկանցից ընտրված ժողովը: Կոնգրեսը հաստատում էր Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ամրագրված այն պայմանը, որի համաձայն՝ Բուլղարական իշխանապետության կազմակերպական Կանոնադրությունը մշակելիս պետք է նկատի առնվեին Բուլղարիայում բնակվող ժողովուրդների՝ թուրքերի, ռումիններ, հույների և այլ բնակչությունների իրավունքներն ու շահերը: Կոնգրեսի որոշմամբ՝ Բուլղարական իշխանապետության պետական իրավունքի հիմքում պետք է ամրագրվեին կրոնական հավատալիքների ու դավանանքների իրավահավասարության, առանց բացառության՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու, պետական պարգևներ ստանալու, զանազան ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու սկզբունքները: Իշխանապետության սահմաններից ընդմիշտ հեռացող մուսուլմաննե-

րը իրենց անշարժ սեփականությունները կարող էին հանձնել վարձակալության կամ դրանց տնօրինումը հանձնարարել այլ անձանց:

Կոնգրեսի որոշմամբ, մինչև ինքնավար Բուլղարական իշխանապետության կազմակերպական Կանոնադրության վերջնական մշակումը, Բուլղարիայի ժամանակավոր կառավարումը պետք է իրականացվեր ռուսական կայսերական կոմիսարի ղեկավարությամբ: Նրան աջակցելու և ժամանակավոր կառավարման ընթացքին հետևելու նպատակով պետք է հրավիրվեին Օսմանյան կայսերական կոմիսարը և Բեռլինի տրակտատը ստորագրած տերությունների հյուպատոսները: Կոնգրեսի որոշմամբ՝ ռուսական կայսերական կոմիսարի ղեկավարությամբ Բուլղարական իշխանապետության ժամանակավոր կառավարումը Բեռլինի պայմանագրի վավերացումների փոխանակման օրից սահմանափակվում էր ինը ամսով: Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի համաձայն՝ կոնգրեսը փաստորեն Ռուսաստանին էր հանձնարարում Բուլղարական իշխանապետության կառավարման ամբողջ համակարգի կազմակերպումը: Կազմակերպական Կանոնադրության մշակման ավարտից հետո սկսվելու էին Բուլղարիայի իշխանի ընտրությունները, և նրան իր պաշտոնում հաստատելուց հետո գործի էր դրվելու ինքնավար իշխանապետության կառավարման նոր համակարգը: Կոնգրեսը Բուլղարական իշխանապետությանը պարտավորեցնում էր, որ բացի թուրքական կառավարությանը վճարելիք ամենամյա տուրքից, մասնակցեր նաև Օսմանյան կայսրության պարտքերի որոշակի մասի վճարմանը: Կոնգրեսը Բուլղարական իշխանապետությունում ուժի մեջ էր թողնում տերությունների հետ թուրքական կառավարության կնքած միջազգային բոլոր պայմանագրերը, կոնվենցիաները, համաձայնագրերը, կապիտուլյացիաներով օտարահպատակներին վերապահված արտոնությունները, առանձնաշնորհումները, ինչպես նաև հյուպատոսային իրավասության և հովանավորության իրավունքները: Բուլղարական իշխանապետության տարածքով փոխադրվող ապրանքներից չէր գանձվելու ոչ մի տեսակի տարանցիկ մաքս: Բեռլինի պայմանագրի վավերա-

ցումների փոխանակման օրից Բուլղարական իշխանապետությունը պետք է ստանձներ Ռուսչուկ-Վառնա երկաթուղու ընկերության վերաբերյալ թուրքական կառավարության ունեցած պարտականություններն ու պարտավորությունները:

Ի տարբերություն Մեծ Բուլղարիա ստեղծող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի՝ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա՝ Բեռլինի կոնգրեսը Բուլղարական իշխանապետության տարածքը հյուսիսում սահմանափակում է Դանուբի, հարավում՝ Բալկանյան լեռնաշղթայի, արևելքում՝ Սև ծովի և արևմուտքում՝ Դանուբի աջ վտակ Տիմոք գետի միջև: Ռուսական պատվիրակների գործադրած դիվանագիտական ջանքերի շնորհիվ, այնուամենայնիվ, Բուլղարական իշխանապետության սահմաններում են ընդգրկվում սևծովյան Վառնա նավահանգիստն իր տարածքով, ինչպես նաև Բալկանյան լեռնաշղթայից հարավ-արևմուտք գտնվող Սոֆիայի գավառը և Կյուստենդիլի շրջանը[211]: Այդպիսով, ի տարբերություն Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրով ստեղծվելիք 164 հազ. քառ. կմ տարածությամբ և 4 մլն բնակչությամբ Մեծ Բուլղարիայի, կոնգրեսի որոշմամբ, Բուլղարական իշխանապետության տարածքը կրճատվում է 100 հազ. քառ. կմ-ով՝ կազմելով մոտ 64 հազ. քառ. կմ ընդամենը՝ 1.5 մլն բնակչությամբ:

[211] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Երևան, 1972: Բեռլինի պայմանագիրը: 1/13 հուլիսի, 1878 թ., էջ 105-130:
Հոդվածներ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 22:

Արևելյան Ռումելիա

1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա, կոնգրեսի որոշմամբ՝ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ՝ մինչև Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռները, սուլթանի քաղաքական և ռազմական անմիջական գերիշխանության ներքո, ստեղծվում է վարչական ինքնավարությամբ օժտված Օսմանյան կայսրության Հարավային Բուլղարիա նահանգը, որը, անգլիական պատվիրակության առաջարկով, պետք է անվանվեր «Արևելյան Ռումելիա»: Այդպիսով՝ թուրքական տիրապետությանն էին վերադարձվում Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռներից դեպի հարավ՝ մինչև Էգեյան ծովը գտնվող տարածքը՝ պատմական Մակեդոնիան՝ Ռուսաստանին զրկելով Սև ծովից Բուլղարիայի տարածքով անմիջականորեն դեպի Էգեյան ծով դուրս գալու հնարավորությունից: Արևելյան Ռումելիա նահանգը պետք է կառավարեր քրիստոնյա գեներալ-նահանգապետը, որին, տերությունների համաձայնությամբ, հինգ տարով պետք է նշանակեր թուրքական սուլթանը: Բեռլինի կոնգրեսի պայմանագրի վավերացումների փոխանակումներից հետո ստեղծվելու էր Եվրոպական հանձնաժողով՝ թուրքական կառավարության հետ Արևելյան Ռումելիայի վարչական կառուցվածքը մշակելու համար: Եվրոպական հանձնաժողովը եռամսյա ժամկետում պետք է սահմաներ գեներալ-նահանգապետի իշխանության և նրա լիազորությունների սահմանների ոլորտը, ինչպես նաև մարզի վարչական, դատական և ֆինանսական կառավարման կարգը: Թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Արևելյան Ռումելիայից, որի ներքին կարգը պետք է պահպաներ տեղացիների պահակախմբի միջոցով, տեղական միլիցիայի օժանդակությամբ: Տեղացիներից բաղկացած պահակախմբերի, նույնպես և միլիցիայի սպաներին նշանակելիս սուլթանը պետք է նկատի ունենար տվյալ վայրերի բնակիչների դավանանքը: Արևելյան Ռումելիայի պաշտպանությունը պետք է իրականացներ թուրքական

կառավարությունը՝ նահանգի ծովային և ցամաքային սահմանների վրա ամրություններ կառուցելով և դրանցում կայազորներ տեղակայելով: Սուլթանը պարտավորվում էր Արևելյան Ռումելիայի սահմանապահ կայազորներում չօգտագործել բաշիբոզուկներից և չերքեզներից բաղկացած անկանոն զորքեր, իսկ այդ ծառայության համար նշանակված կանոնավոր զորքերը ոչ մի պարագայում չպետք է տեղավորվեին տեղաբնիկների տներում: Կանոնավոր զորքերը մարզի միջով պետք է անցնեին առանց իջևանումների: Արևելյան Ռումելիա օսմանյան զորքեր կարելի էր մտցնել միայն գեներալ-նահանգապետի կողմից օգնություն խնդրելու դեպքում՝ նահանգի ներքին խաղաղությունը պահպանելու կամ արտաքին սպառնալիքը կանխելու համար: Սակայն, նախքան Արևելյան Ռումելիա զորք մտցնելը, թուրքական կառավարությունը պարտավոր էր Կ.Պոլսում հավատարմագրված տերությունների դեսպաններին իրազեկել այդ կապակցությամբ ընդունած իր որոշման և դրա դրդապատճառների մասին: Կոնգրեսի որոշմամբ՝ Արևելյան Ռումելիա նահանգում գործադրվելու էին տերությունների հետ թուրքական կառավարության կնքած կամ կնքվելիք պայմանագրերը, կոնվենցիաները և միջազգային համաձայնագրերը, օտարերկրացիներին վերապահված արտոնություններն ու առանձնաշնորհումները: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր այդ նահանգում հսկել բոլոր դավանությունների նկատմամբ կիրառվող կրոնական ազատությանը վերաբերող կայսրության համընդհանուր օրենքների կատարմանը: Արևելյան Ռումելիայում երկաթուղիների նկատմամբ անփոփոխ էին մնում թուրքական կառավարության իրավունքներն ու պարտավորությունները:

Ռուսական զորքերով Բուլղարական ինքնավար իշխանապետության և Արևելյան Ռումելիայի օկուպացման ժամկետը սահմանվում էր ինը ամիս՝ Բեռլինի պայմանագրի վավերացումների փոխանակման օրվանից: Բուլղարական իշխանապետությունում և Արևելյան Ռումելիայում ռուսական օկուպացիոն կորպուսը պետք է բաղ-

կացած լիներ 50 հազ. զինվորներից և սպաներից՝ վեց հետևակային և երկու հեծելազորային դիվիզիաներից[212]: Փաստորեն, Բուլղարական իշխանապետության և Արևելյան Ռումելիայի վերաբերյալ կոնգրեսի ընդունած որոշումները Ռուսաստանը պետք է իրականացներ՝ հենվելով Օսմանյան կայսրության այդ երկու տարբեր վարչաքաղաքական նահանգները ինը ամսով ռազմակալած իր 50 հազարանոց օկուպացիոն բանակի վրա:

Սերբիա

Կոնգրեսի՝ հունիսի 28-ի նիստում, երբ նախագահ Բիսմարկը ներկայացնում է Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երրորդ հոդվածը, որով թուրքական կառավարությունը անվերապահորեն ճանաչում էր Սերբական վասալական իշխանապետության քաղաքական անկախությունը, թուրքական պատվիրակության ղեկավար Ալ. Կարաթեոդորին հանդես է գալիս Սերբական իշխանապետությանը քաղաքական անկախություն շնորհելուն դեմ՝ փաստարկելով, որ Օսմանյան կայսրության սյուզերենության ներքո Սերբիան արդեն օժտված է իրական անկախության իրավունքներով: Ի պատասխան՝ կոնգրեսի նախագահ Բիսմարկը անառարկելիորեն շեշտում է, որ Սերբական իշխանապետության քաղաքական անկախությունը ճանաչելու Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երրորդ հոդվածը կրում է բացարձակ բնույթ և, հետևաբար, Թուրքիան չի կարող հրաժարվել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երրորդ հոդվածով Սերբիայի անկախությունը ճանաչելու իր համաձայնությունից: Բիսմարկի վճռական առարկությունից հետո կոնգրեսը ճանաչում է Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երրորդ հոդվածով ամրագրված Սերբական իշխանապետության քաղաքական անկախությունը: Նրա տարածքն ընդլայնվում է հա-

[212] Նույն տեղում, Հոդվածներ 13, 14,15, 16, 17, 18, 19, 20, 21, 22:

րավում և հարավ-արևելքում՝ ընդգրկելով չորս շրջաններ՝ Նիշը, Պիրոտը, Վրանեն և Տոպլիցը: Այդ շրջանների միացման հետևանքով Սերբիայի սահմաններն ընդարձակվում են 11 հազ. ք. կմ-ով՝ 352 հազ. բնակչությամբ, որի հետևանքով Սերբիայի ընդհանուր տարածքը կազմում է 48 հազ. ք. կմ.՝ 2մլն. 315 հազ. բնակչությամբ: Սակայն, Սերբիան այդ տարածքները ձեռք է բերում Ավստրո-Հունգարիայի հետ առևտրական կամ մաքսային, ինչպես նաև Բելգրադ-Նիշ երկաթուղագիծ կառուցելու համաձայնության հետևանքով (243 կմ երկարությամբ Բելգրադ-Նիշ երկաթուղագիծը շահագործման է հանձնվում 1884 թ. սեպտեմբերին): Այնուհետև, Ավստրո-Հունգարիայի ճնշմամբ, Սերբիան հրաժարվում է Բոսնիայի և Հերցեգովինայի նկատմամբ հավակնություններ դրսևորելուց: Այդպիսով՝ աջակցելով Սերբիայի սահմանների ընդլայնմանը՝ որպես փոխհատուցում՝ Ավստրո-Հունգարիան իր տնտեսական և քաղաքական ազդեցությունն էր ուժեղացնում անկախություն ստացած այդ հարավսլավոնական պետության վրա:

Կոնգրեսի որոշմամբ՝ Բեռլինի հաշտության պայմանագրի վավերացումների փոխանակումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, օսմանյան զորքերը պետք է հեռանային Սերբական իշխանապետության միջազգայնորեն հաստատված սահմաններից: Նույն՝ տասնհինգօրյա ժամանակամիջոցում, սերբական զորքերը պետք է դուրս գային սերբական իշխանապետության նոր սահմաններից դուրս գրաված տարածքից: Կոնգրեսը անկախություն ստացած Սերբական իշխանապետությանը պարտավորեցնում էր հաշտության պայմանագրով ստացած տարածքների համար ստանձնել օսմանյան պետական պարտքի մի մասը: Օտարերկրյա պետությունների հետ մինչև նոր համաձայնություններ կնքելը՝ Սերբիայում պահպանվելու էին առևտրական նախկին պայմանագրերը: Սերբիայի տարածքով փոխադրվող տարանցիկ ապրանքներից ոչ մի մաքսատուրք չէր գանձվելու: Կոնգրեսը ամրագրում էր Սերբիայում կրոնական հավատալիքների ու դավանանքների իրավահավասա-

րության՝ առանց բացառության քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու, պետական պարգևներ ստանալու, զանազան ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու սկզբունքները: Պահպանվում էին օտարահպատակների արտոնություններն ու առանձնաշնորհումները, հյուպատոսային իրավասության ու հովանավորության իրավունքները: Սերբիային միացված տարածքներից վերջնականորեն հեռացող մուսուլմանները պահպանում էին սեփականատիրության իրավունքները և կարող էին իրենց անշարժ ունեցվածքը տալ վարձակալության կամ դրանց կառավարումը հանձնարարել այլ անձանց[213]:

Չեռնոգորիա

Կոնգրեսում բուռն քննարկումներ են կայանում Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքական անկախության ճանաչման և նրա տիրապետության տակ անցնող ծովային ու ցամաքային տարածքները սահմանագծելու վերաբերյալ:

Կոնգրեսի՝ հուլիսի 1-ին կայացած նիստում, երբ նախագահ Բիսմարկը ներկայացնում է Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երկրորդ հոդվածը, որի համաձայն՝ «թուրքական կառավարությունը վերջնականապես ճանաչում է Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը», անգլիական պատվիրակ Սոլսբերին անմիջապես հանդես է գալիս Չեռնոգորիային քաղաքական անկախություն շնորհելուն դեմ՝ փաստարկելով, որ անգլիական կառավարությունը երբեք չի ճանաչել Չեռնոգորիայի քաղաքական անկախությունը, և պահանջում հոդվածում ջնջել «վերջնականապես» բառը: Այդպիսով՝ ի դեմս Սոլսբերիի՝ անգլիական պատվիրակությունը խախտում էր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև 1878 թ.

[213] Documents diplomatiques. Protocole N°4. Séance du 22 juin 1878, p. 88-96. Բեռլինի պայմանագիրը: Հոդվածներ 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42:

մայիսի 30-ին Լոնդոնում կնքված Համաձայնագրի այն պայմանը, որով պահպանողականների կառավարությունը պարտավորվում էր կոնգրեսում չառարկել Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության պայմանագրի այն հոդվածների դեմ, որոնք փոփոխության չէին ենթարկվել պայմանավորվող երկու տերությունների կողմից:

Պատասխանելով Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքական անկախությունը վերջնականապես չճանաչելու Սոլսբերիի պահանջին՝ Ռուսաստանի պատվիրակները հայտարարում են, որ իրենց կառավարությունը միշտ էլ ճանաչել է Չեռնոգորիայի քաղաքական անկախությունը, որովհետև Չեռնոգորիայի իշխանապետները երբեք ինվեստիտուրա չեն ստացել թուրքական սուլթանից և բնավ հարկատու չեն եղել Օսմանյան կայսրությանը: Հիմնվելով իրենց ներկայացրած փաստարկների վրա՝ Ռուսաստանի պատվիրակները պահանջում են ընդունել Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքական անկախությունը վերջնականապես ամրագրող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի երկրորդ հոդվածը:

Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքական անկախությունը վերջնականապես ճանաչելու օգտին են արտահայտվում ֆրանսիական և իտալական պատվիրակությունները: Ֆրանսիական պատվիրակությունը, մասնավորապես, հայտարարում է, որ Ֆրանսիան ըստ էության ճանաչել է Չեռնոգորիայի իշխանապետության քաղաքականապես անկախ կարգավիճակը:

Ամփոփելով Չեռնոգորիայի քաղաքական անկախությունը վերջնականապես ճանաչելու վերաբերյալ արտահայտված տեսակետերը՝ նախագահ Բիսմարկը հայտարարում է, որ Գերմանիան սկզբունքորեն ճանաչել է այդ իշխանապետության անկախությունը և, հենվելով 1876 թ. հուլիսի 8-ին Ռեյխշտադտում և ապա՝ 1877 թ. հունվարի 15-ին Բուդապեշտում ավստրո-ռուսական Համաձայնություններով բալկանյան հարցերի վերաբերյալ ձեռք բերված երկկողմանի պայմանավորվածությունների վրա, շեշտում է, որ Ավստրո-Հունգարիան նույնպես ճանաչել է այդ իշխանապետության քա-

ղաքական անկախությունը և, այդպիսով, Չեռնոգորիայի քաղաքական անկախությունը ճանաչելու վերաբերյալ քննարկումները հայտարարում է ավարտված:

Ալ. Կարաթեոդորին ընդդիմանում է նաև Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ամրագրված Չեռնոգորիայի իշխանապետության ծովային ու ցամաքային սահմանները ճանաչելուն: Հիմնավորելով ստրատեգիական և ազգագրական բնույթի մի շարք փաստարկներ՝ թուրքական պատվիրակության ղեկավարը շեշտում է, որ Չեռնոգորիայի ցամաքային սահմանը Ալբանիայի ուղղությամբ նշանակալիորեն չպետք է ընդլանվի՝ առարկելով նաև Ադրիատիկ ծովի Անտիվարի (Բար) նավահանգիստը Չեռնոգորիային հանձնելուն, շեշտելով, որ ժողովրդի կամքին հակառակ, առանց ուժ գործադրելու, չեռնոգորցիները չեն կարող հաստատվել այդ ալբանական նավահանգստում:

Պատասխանելով Ալ. Կարաթեոդորիի առարկություններին՝ Շուվալովը կոնգրեսին իրազեկում է, որ ռուսական և ավստրո-հունգարական պատվիրակությունների միջև սկզբունքորեն լիակատար համաձայնություն է կայացել Չեռնոգորիայի ծովային և ցամաքային սահմանների վերաբերյալ և հույս հայտնում, որ ավստրո-ռուսական սահմանագիծը կգոհացնի թուրքական կառավարությանը, որովհետև այդ սահմանագծի հաստատման հետևանքով նա կվերադարձնի Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Չեռնոգորիայի իշխանապետությանը զիջած տարածքների մի մասը:

Նախագահ Բիսմարկը, ավարտելով Չեռնոգորիայի իշխանապետության սահմանների վերաբերյալ քննարկումները, նշում է, որ կոնգրեսը գոհունակությամբ է տեղեկանում Չեռնոգորիայի սահմանների որոշմամբ առանձնապես շահագրգռված տերությունների՝ Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի միջև կայացած երկկողմանի համաձայնության մասին, և շեշտում, որ թուրքական կառավարությունը պետք է ընդունի ոչ միայն Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ամրագրված իր պարտավորությունները, այլև այդ

պայմանագրի հոդվածներում կոնգրեսի կատարած բոլոր փոփոխությունները: Ի վերջո, հուլիսի 1-ին կայացած նիստում կոնգրեսը ճանաչում է Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը, բայց Սան Ստեֆանոյի պայմանագրով սահմանված նրա տարածքը կրճատվում է 7 հազ. ք. կմ-ով՝ հասնելով 8500 քառ. կմ-ի: Չեռնոգորիայի սահմաններում են ընդգրկվում բարեբեր հողեր՝ Պոդգորիցա, Նիկշիչ, Կոլաշին և ժաբլյակ քաղաքներով: Չեռնոգորիան ստանում է նաև 70 կմ ծովափով ելք դեպի Ադրիատիկ ծով՝ Անտիվարի (Բար) և Ուլցին նավահանգիստներով: Ավստրո-Հունգարիայի ճնշմամբ Չեռնոգորիան զրկվում էր ռազմական դրոշ ունենալու իրավունքից: Նրա տարածքի լճերի և ծովեզրի միջև գտնվող ամրությունները պետք է հողին հավասարեցվեին, և նորերը չպետք է կառուցվեին: Չեռնոգորիան զրկվում էր ռազմանավեր ունենալու իրավունքից: Անտիվարի (Բար) նավահանգիստը և ընդհանրապես Չեռնոգորիայի բոլոր ծովային տարածքները փակ էին մնալու օտար ռազմանավերի համար: Ծովային և ոստիկանական հսկողությունը, ինչպես Անտիվարի նավահանգստի, այնպես էլ չեռնոգորյան ծովափի երկայնքով թեթև պահականավերով իրականացնելու էր Ավստրո-Հունգարիան: Չեռնոգորյան առևտրական նավատորմը օտար նավահանգիստներում հովանավորելու էին ավստրո-հունգարական հյուպատոսները: Չեռնոգորիան ստանում էր Ալբանիայի հետ սահման հանդիսացող Բոյանա գետով նավարկելու լիակատար ազատություն՝ սակայն առանց այդ գետի երկայնքով ամրություններ կառուցելու իրավունքի: Չեռնոգորիան պետք էր համաձայնության գար Ավստրո-Հունգարիայի հետ՝ իր տարածքում նոր ճանապարհներ և երկաթուղագիծ կառուցելու համար: Բեռլինի պայմանագրի վավերացումների փոխանակման օրից հաշված՝ քսանօրյա ժամանակահատվածում, կամ, հնարավորության դեպքում ավելի շուտ, չեռնոգորյան զորքերը պարտադիր կարգով պետք է դուրս գային իշխանապետության նոր սահմաններից դուրս գրաված տարածքից: Նույն՝ քսանօրյա ժամանակամիջոցում, օսմանյան զորքերը պետք է

հեռանային Չեռնոգորիային անցած տարածքներից: Կոնգրեսը Չեռնոգորիային պարտավորեցնում էր հաշտության պայմանագրով ստացած տարածքների համար ստանձնել օսմանյան պետական պարտքի մի մասը: Թուրքական կառավարության համաձայնությամբ՝ Չեռնոգորիայի իշխանապետությունը կարող էր դիվանագիտական ներկայացուցիչներ և գործակալներ նշանակել Կ.Պոլսում և Օսմանյան կայսրության այլ քաղաքներում:

Իշխանապետությանը միացված տարածքներից վերջնականապես հեռանալու պարագայում մուսուլմանները կարող էին իրենց անշարժ սեփականությունը հանձնել վարձակալության կամ կառավարել այլոց միջոցով: Կոնգրեսն ամրագրում էր Չեռնոգորիայում կրոնական հավատալիքների և դավանանքների իրավահավասարության, առանց բացառության՝ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու, պետական պարգևներ ստանալու, զանազան ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու սկզբունքները[214]:

Կրետե և ‹‹եվրոպական Թուրքիայի մյուս մասեր››

Բեռլինի կոնգրեսը քննարկում է նաև Կրետե կղզուն և Եվրոպական Թուրքիային վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածը: Անգլիական պատվիրակության առաջարկով կոնգրեսը բովանդակային փոփոխության է ենթարկում Կրետե կղզում, հունական մարզեր Էպիրոսում, Թեսալիայում և «Եվրոպական Թուրքիայի մյուս մասերում» կազմակերպական Կանոնադրություններ գործադրելու վերաբերյալ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածը: Այսպես. կոնգրեսի որոշմամբ՝ Կրետե կղզու 1868 թ. կազմակերպա-

[214] Documents diplomatiques. Protocole N°10. Séance du 1er juillet 1878, p. 161-176. Բեռլինի պայմանագիրը: Հոդվածներ 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33:

կան Կանոնադրության մեջ վարչական բնույթի փոփոխությունները արդեն պետք է կատարվեին ոչ թե կղզու մեծամասնությունը կազմող հույն բնակչության ցանկությունների համաձայն, այլ միայն թուրքական կառավարության սեփական նախաձեռնությամբ, որոնք, կոնգրեսի ձևակերպմամբ, կճանաչվեին արդարացի: Այդ առումով, Կրետեին վերաբերող հոդվածը ստանում էր հետևյալ տեսքը. «Թուրքական կառավարությունը պարտավորվում է Կրետե կղզում բարեխղճորեն կիրառել 1868թ. կազմակերպական Կանոնադրությունը այն փոփոխություններով, որոնք կճանաչվեն արդարացի»:

Կոնգրեսի խմբագրմամբ տեղական կարիքներին հարմարեցված և կրետական կազմակերպական Կանոնադրությանը նմանօրինակ կանոնադրություններ պետք է կիրառվեին նաև թուրքական տիրապետության տակ մնացած այսպես կոչված «Եվրոպական Թուրքիայի մյուս մասերում»: Կրետական կազմակերպական Կանոնադրությանը հարմարեցված նմանօրինակ վարչական կառավարման կանոնադրությունների մանրամասների մշակումը թուրքական կառավարությունը Եվրոպական Թուրքիայի յուրաքանչյուր մարզում պետք է հանձնարարեր հատուկ հանձնաժողովի, որի մեջ տեղացի բնակչությունը պետք է ստանար լայն մասնակցություն: Սակայն, նախքան այդ կազմակերպական Կանոնադրությունները գործադրության մեջ դնելը, անգլիական պատվիրակության առաջարկով, թուրքական կառավարությունը պետք է արդեն խորհրդակցեր ոչ թե ռուսական կառավարության, այլ Արևելյան Ռումելիայի համար նշանակված Եվրոպական հանձնաժողովի հետ[215]:

[215] Բեռլինի պայմանագիրը, Հոդված 23:

Բոսնիա և Հերցեգովինա
Նովի-Բազարի սանջակ (գավառ)

Կոնգրեսում առանձին քննարկման է ենթարկվում Օսմանյան կայսրության կազմում սլավոնական մարզեր Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելու՝ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածը: Այդ կապակցությամբ առաջինը ելույթ ունենալով կոնգրեսի հունիսի 28-ի նիստում՝ Ավստրո-հունգարական կայսրության արտգործնախարար և պատվիրակության ղեկավար կոմս Անդրաշին, հենվելով 1876 թ. հուլիսի 8-ին և ապա՝ 1877 թ. հունվարի 15-ին կազմված ավստրո-ռուսական երկու գաղտնի Համաձայնությունների վրա, ըստ որոնց՝ Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմում պահպանած բարյացակամ չեզոքության փոխարեն, որպես փոխհատուցում, Ավստրո-Հունգարիան Օսմանյան կայսրության կազմում պետք է գրավեր և կառավարեր սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան, դեմ է արտահայտվում Օսմանյան կայսրության կազմում սլավոնական մարզեր Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելուն՝ իր առարկությունները հիմնավորելով մի շարք փաստարկներով: Բոսնիա-հերցեգովինյան հարցի վերջնական կարգավորումը և այդ մարզերում կայուն խաղաղության հաստատումը, իր համոզմունքն էր արտահայտում Անդրաշին, ամենևին էլ չի կարող իրականացվել տեղական վարչական ինքնավարության հաստատման պայմաններում: Ընդհակառակը, շեշտում էր Անդրաշին, տեղական ինքնավարությունը կխրախուսի և հուզումների նոր ազդակ կծառայի այդ մարզերի մեծամասնությունը կազմող սլավոններին՝ հետագա պայքար ծավալելու իրենց ազգային նպատակների լիակատար իրականացման համար: Անդրաշին կոնգրեսի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Օսմանյան կայսրության կազմում Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարու-

թյուն շնորհելու պարագայում այդ մարզերի մուսուլման բնակչություն ունեցող շրջանները անխուսափելիորեն արդեն կենթարկվեն մեծամասնություն կազմող քրիստոնյա սերբերի և չեռնոգորցիների գերիշխանությանը, որի հետևանքով մուսուլմանական շրջաններում հուզումները սլավոնական խտրականության և ճնշումների դեմ կընդունեն հարատև բնույթ: Անդրաշին նշում էր, որ տեղական ինքնավարության պայմաններում թշնամությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև անխուսափելիորեն ավելի կուժեղանա ինչպես կրոնական, այնպես էլ սոցիալական հակասությունների պատճառով, քանի որ Բոսնիայում և Հերցեգովինայում կալվածատեր հողատերերը մուսուլմաններ էին, իսկ բնակչության մեծամասնությունը կազմող քրիստոնյա սլավոնները՝ հողերի վարձակալներ: Այնուհետև, Անդրաշին հիշեցնում էր, որ թուրքական կառավարությունները երբեք էլ չեն իրականացրել բարենորոգումներ իրականացնելու իրենց ծրագրերը և խոստումները, ուստի ամենևին վստահություն չէր տածում, որ թուրքական իշխանությունները երբևէ գործնականում կկիրառեն Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելու կոնգրեսի որոշումը: Անդրաշին ընդգծում էր նաև այն հանգամանքը, որ, այնուամենայնիվ, Բոսնիային և Հերցեգովինային Օսմանյան կայսրության կազմում ինքնավարություն շնորհելու դեպքում անգամ թուրքական իշխանությունները ի վիճակի չեն լինելու կառավարելու և կայուն խաղաղություն հաստատելու այդ հեռավոր ծայրամասային սլավոնական մարզերում: Այնուհետև, Անդրաշին շեշտում էր, որ Բոսնիայում և Հերցեգովինայում բռնկվող ապստամբությունները ամենևին էլ սոսկ տեղական բնույթ չեն կրում և լուրջ վտանգ են ներկայացնում եվրոպական խաղաղությանը, ինչպես նաև Ավստրո–Հունգարիայի ներքաղաքական կյանքին՝ իրենց անմիջական ազդեցությամբ նպաստելով Հաբսբուրգյան կայսրության կազմում գտնվող սլավոնական ժողովուրդների ազգային շարժումների ուժեղացմանը: Անդրաշին շեշտում էր, որ Ավստրո-հունգարական կայսրության ներքին կյան-

քի վրա նաև խիստ բացասական ազդեցություն են թողնում ապստամբության ընթացքում Բոսնիայից և Հերցեգովինայից կայսրության տարածք ներխուժած ավելի քան 200 հազար փախստականները, որոնց կենսապահովման համար երեք տարիների ընթացքում, կայսրությունը ծախսել է 10 միլիոն ֆլորին: Բոսնիային և Հերցեգովինային սահմանամերձ կայսրության բնակչությունը անհաշիվ վնասներ է կրում այդ փախստականների անդադրում ներհոսքի պատճառով, նշում էր Անդրաշին: Անդրաշին ընդգծում էր, որ բոսնիա-հերցեգովինյան հարցի կարգավորումը թեև ուղղակիորեն վերաբերում է այդ մարզերին սահմանակից Ավստրո-Հունգարիային և, որևէ տերության համեմատությամբ, նախ և առաջ Հաբսբուրգյան կայսրությունն է շահագրգռված այդ մարզերի կարգավիճակի որոշմամբ, այնուամենայնիվ, քննարկվող հարցը իր բուն էությամբ չի դադարում առաջին աստիճանի եվրոպական բնույթ կրելուց: Այդ առնչությամբ Անդրաշին կոնգրեսի ուշադրությանն էր հրավիրում այն անառարկելի փաստի վրա, ըստ որի՝ Բալկաններում հենց սլավոնական մարզեր Բոսնիայում և Հերցեգովինայում բռնկված հակաթուրքական ապստամբական շարժումների հետևանքով է առաջացել 1877-1878 թթ. պատերազմն Արևելքում: Իր ներկայացրած փաստարկներով դեմ արտահայտվելով Օսմանյան տիրապետության պայմաններում Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելուն՝ Անդրաշին վճռական համոզմունք էր հայտնում, որ կրոնական ատելությամբ և սոցիալական ոխակալությամբ պառակտված այդ սլավոնական մարզերի պրոբլեմները կարող է լուծել «ոչ թե թույլ ու անզոր թուրքական կառավարությունը», այլ «բացառապես հզոր և անկողմնակալ իշխանությունը»: Ամփոփելով իր առարկության փաստարկները և ընդգծելով, որ լինելով այդ երկու սլավոնական մարզերին սահմանակից տերություն և, այդ առումով, առաջին հերթին շահագրգռված լինելով դրանց կարգավիճակի լուծումով՝ Անդրաշին «անկեղծորեն և բացահայտորեն» հայտարարում է, որ Ավստրո-հունգա-

րական կայսրության կենսական շահերը չեն կարող թույլ տալ բոսնիա-հերցեգովինյան հարցի այնպիսի կարգավորում, որը վերջնականորեն չի հանգեցնի այդ մարզերում հարատև կայունության հաստատմանը և չի կանխարգելի այն իրադարձությունների կրկնմանը, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում եվրոպական խաղաղությանը և սպառնալիք ստեղծում Ավստրո-Հունգարիայի ներքաղաքական կյանքի անդորրությանը: Հանգամանորեն փաստարկելով թուրքական տիրապետության պայմաններում մուսուլմանական փոքրամասնություն ունեցող սլավոնական մարզեր Բոսնիային և Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելու աննպատակահարմարության և անհեռանկարայնության, հետագա անցանկալի և վտանգավոր քաղաքական իրադարձությունների զարգացման պատճառները՝ երկմիասնական կայսրության արտաքին գործերի նախարարը հանգում էր այն հիմնական եզրակացությանը, որի համաձայն՝ այդ երկու մարզերի «պրոբլեմը կարող է լուծել միայն հզոր և անկողմնակալ իշխանությունը»: Անդրաշիի եզրահանգման նպատակը շատ պարզ էր ու հասկանալի. միայն Բոսնիային և Հերցեգովինային սահմանակից հզոր տերությունը կարող էր «կարգ ու կանոն հաստատել» թուրքական տիրապետության տակ գտնվող այդ մարզերում, այլ կերպ ասած՝ ճնշել այդ մարզերում ազգային-ազատագրական շարժումները՝ բացառելով ինչպես Ավստրո-Հունգարիայի ներքաղաքական կյանքի անդորրությանը, այնպես էլ եվրոպական խաղաղությանը սպառնացող լուրջ բարդությունների վտանգները:

Իր փաստարկներով վճռականորեն հանդես գալով Օսմանյան կայսրության կազմում Բոսնիային ու Հերցեգովինային տեղական վարչական ինքնավարություն շնորհելու Սան Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան հոդվածի դեմ՝ Անդրաշիի հիմնական նպատակն էր այդ մարզերը դուրս բերել «անզոր թուրքական իշխանության ենթակայությունից» և դրանց անմիջական կառավարումը հանձնել այնպիսի մի ուժեղ տերության, որն իր հնարավորու-

թյուններով կկարողանար ճնշել Հաբսբուրգյան կայսրության ներքին անդորրության վրա բացասաբար անդրադարձող այդ սլավոնական մարզերի ազգային-ազատագրական շարժումները և այդպիսով նաև կկանխեր Սերբիայի հետ միավորվելու նրանց քաղաքական վերջնական նպատակի իրականացումը:

Իտալիայի արտաքին գործերի նախարար և կոնգրեսում իտալական պատվիրակության ղեկավար Կորտիի կողմից Անդրաշիին ուղղված հարցմանը, թե ինչ հիմունքների վրա է նրա կառավարությունը հաստատվելու գրավման ենթակա Բոսնիայում և Հերցեգովինայում, իր գաղտնի զեկուցագրում Ալ. Կարաթեոդորին նշում է, որ «նախքան պատասխանելը՝ Անդրաշին նախ՝ շրջվում է դեպի նախագահ Բիսմարկը և ապա՝ հայացքը հառելով Կորտիի աչքերին՝ ջղագրգռորեն արտահայտվում է. «Իտալիայի պարո՛ն ներկայացուցիչ, գրավելով Բոսնիան և Հերցեգովինան, Ավստրիան դրանցում կհաստատվի եվրոպական տեսակետի համաձայն: Ես այլևս ուրիշ ոչինչ չունեմ հավելելու»: Անդրաշիի այդ պատասխանը, իր զեկուցագրում նշում է Ալ. Կարաթեոդորին, շանթահարիչ ազդեցություն է թողնում Կորտիի վրա: Նա ոչ միայն չի պատասխանում Անդրաշիին, իր զեկուցագրում շարունակում է Ալ. Կարաթեոդորին, այլև ո՛չ ինքը, ո՛չ էլ իտալական պատվիրակության անդամ, Բեռլինում Իտալիայի դեսպանը այլևս չեն մասնակցում Բոսնիայի և Հերցեգովինայի շուրջ ընթացող քննարկմանը, իսկ երբ թուրքական պատվիրակները նրանց խնդրում են կոնգրեսին առաջարկել, որ Ավստրիայի կողմից այդ մարզերի գրավումը կրի գոնե սոսկ ժամանակավոր բնույթ, կոնգրեսում ահաբեկման ենթարկված Իտալիայի արտաքին գործերի նախարար և իտալական պատվիրակության ղեկավար կոմս Կորտին նրանց խնդրանքը կտրականապես մերժում է՝ ասելով, որ ինքը ոչինչ չի կարող անել և անձնապես զգուշացված է, որ քննարկվող խնդրում իր միջամտությունը կհամարվի

մի «casus belli»[216]:

Թուրքական տիրապետության պայմաններում սլավոնական մարզեր Բոսնիային և Հերցեգովինային տեղական ինքնակառավարման կարգավիճակ շնորհելու քաղաքական աննպատակահարմարության և դրա իրականացման անհնարինության, ինչպես նաև Սերբիայի գլխավորությամբ հարավսլավոնական մարզերը միավորելու և Բալկաններում Ռուսաստանի քաղաքական ազդեցության ներքո սլավոնական մեծ պետության գերիշխանությունը կանխելու վերաբերյալ Անդրաշիի ներկայացրած առարկությունների բոլոր փաստարկները և պատճառաբանությունները լիովին ու ամբողջությամբ պաշտպանության են արժանանում անգլիական պահպանողական կառավարության և կոնգրեսում պատվիրակության ղեկավար Դիզրայելիի և պատվիրակության անդամ, արտաքին գործերի նախարար Սոլսբերիի կողմից: Հիմնվելով կոնգրեսում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին հունիսի 6-ին կայացած անգլո-ավստրիական պայմանավորվածության վրա՝ նրանք նույնպես իրենց ներկայացրած հիմնավորումներով ապացուցում են, որ այդ սլավոնական մարզերում ողջամիտ, ամուր և կայուն կառավարման վարչություն ստեղծելու, մուսուլման բնակչության հանդեպ մեծամասնություն կազմող քրիստոնյա սերբերի և չեռնոգորցիների գերիշխանական դիրքը բացառելու,համաեվրոպական խաղաղությանը վտանգ ներկայացնող հարավսլավոնական ազգային-ազատագրական ապստամբությունները ճնշելու, Սերբիայի գլխավորությամբ հարավսլավոնական հողերը միավորելու, Մեծ սերբական պետության ստեղծմանը և Բալկաններում նրա ռազմաքաղաքական գերիշխանության հաստատմանը կանխարգելելու անհրաժեշտ ուժերն ու հնարավորություններն ունեցող միակ տերությունը այդ մարզերին սահմանակից Ավստրո–հունգարական կայսրությունն է: Հենվելով թուրքական տիրապետության պայմաններում Բոսնիային

[216] Տե՛ս Bareilles B., նշվ. աշխ., էջ 144:

ու Հերցեգովինային տեղական ինքնակառավարման կարգավիճակ շնորհելու ավստրո-անգլիական համաձայնեցված փաստարկված առարկությունների ու պատճառաբանությունների վրա՝ Դիզրայելին և Սոլսբերին իրենց ելույթներում թուրքական կառավարությանը խորհուրդ են տալիս ցուցաբերել «մեծագույն ողջախոհություն» և հրաժարվել տնտեսապես անշահավետ և ռազմաստրատեգիական կարևորություն չներկայացնող կայսրության այդ հեռավոր ու ծայրամասային մարզերը իր ուժերից ու հնարավորություններից վեր կառավարելուց և այդ մարզերից եվրոպական խաղաղությանը սպառնացող ապստամբությունների վտանգները կանխելու, այդ մարզերում կառավարման անկանխակալ, կայուն և ամուր վարչություն ստեղծելու, Սերբիայի գերիշխանությամբ հարավսլավոնական հողերը միավորելու, Մեծ սերբական սլավոնական պետության ստեղծմանը և Բալկաններում նրա ռազմաքաղաքական գերիշխանության հաստատմանը կանխարգելելու նպատակով անգլիական կառավարության անունից կոնգրեսին առաջարկում են ընդունել որոշում Ավստրո-Հունգարիայի կողմից այդ մարզերը Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու մասին:

Օսմանյան կայսրության կազմում Բոսնիան և Հերցեգովինան Ավստրո-Հունգարիայի կողմից գրավելու և կառավարելու անգլիական կառավարության առաջարկը լիովին և անվերապահորեն հավանության է արժանանում եվրոպական տերությունների պատվիրակությունների կողմից: Իր հերթին, Ռուսական կայսրության կանցլեր և արտաքին գործերի նախարար, պատվիրակության ղեկավար Գորչակովը, հենվելով ավստրո-ռուսական Համաձայնությունների վրա, հայտարարում է, որ անհրաժեշտ է պաշտպանել քրիստոնյա ժողովուրդներին թուրքական դարավոր կեղեքումներից, և, այդ առումով, Օսմանյան կայսրության կազմում սլավոնական մարզեր Բոսնիան ու Հերցեգովինան Ավստրո-Հունգարիայի կողմից գրավելու և կառավարելու անգլիական կառավարության առաջարկը լիովին համապատասխանում է Ռուսաստանի հիմնական

տեսակետներին:

Կոնգրեսի նախագահ Բիսմարկը, պաշտպանելով Օսմանյան կայսրության կազմում Բոսնիան և Հերցեգովինան Ավստրո-Հունգարիայի կողմից գրավելու և կառավարելու անգլիական առաջարկը, իր հերթին շեշտում է, որ քննարկվող հարցը միայն Ավստրո-Հունգարիային չի վերաբերում, այլ կրում է համաեվրոպական բնույթ, որի լուծման համար անհրաժեշտ են իրականացնել արդյունավետ միջոցառումներ: Կոնգրեսի նախագահը նշում է, որ խիստ վտանգավոր է հույսեր փայփայել, որ թուրքական տիրապետության պայմաններում իբրև թե հնարավոր է վարչական բարեփոխումների իրականացման միջոցով բարելավել այդ մարզերում տիրող պայթյունավտանգ իրադրությունը, և համոզմունք հայտնում, որ միայն հզոր և անհրաժեշտ ուժեր ունեցող տերությունն ի վիճակի կլինի այդ ապստամբական մարզերում կարգ ու կանոն, կայուն խաղաղություն հաստատել և ապահովել այդ մարզերի ժողովուրդների ճակատագիրն ու ապագան: Գերմանական կառավարության անունից նույնպես համաձայնվելով Օսմանյան կայսրության կազմում սլավոնական մարզեր Բոսնիան ու Հերցեգովինան Ավստրո-Հունգարիայի կողմից գրավելու և կառավարելու անգլիական առաջարկի հետ՝ Բիսմարկը կոնգրեսին խորհուրդ է տալիս այդ առումով անվերապահորեն ընդունել համապատասխան որոշում:

Բոսնիան ու Հերցեգովինան Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու հարցում ստանալով եվրոպական պատվիրակությունների համաձայնությունը՝ նույն նիստում Անդրաշին անմիջապես առաջ է քաշում Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև գտնվող և Բոսնիան Մակեդոնիայի հետ միացնող Կոսովոյի նահանգի չորս գավառներից Նովի-Բազարի սանջակը (գավառը) Միտրովիցայից (արդի Կոսովսկա-Միտրովիցա) այն կողմ՝ Ավստրո-Հունգարիայի կողմից ռազմական գրավման ենթարկելու պահանջը: Ընդսմին, Անդրաշին կոնգրեսին վստահեցնում էր, որ Նովի-Բազարի սանջակը ռազմական գրավման ենթարկելու դեպքում այդ տա-

րածքում կառավարման փոփոխություն տեղի չի ունենալու, և պահպանվելու է թուրքական վարչությունը:

Ինչո՞վ էր պատճառաբանվում արդեն Նովի-Բազարի սանջակը Օսմանյան կայսրության կազմում Ավստրո-Հունգարիայի կողմից ռազմական գրավման ենթարկելու Անդրաշիի պահանջը:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Նովի-Բազարի սանջակը բաժանելով Սերբիայի և Չեռնոգորիայի միջև և նրանց տարածքների երկայնքով թողնելով սոսկ մի նեղ հողաշերտ, որը ստրատեգիական առումով խիստ խոցելի էր և ցանկացած պահի կարող էր ընկնել այդ երկու իշխանապետությունների անմիջական վերահսկողության տակ, ռուսական դիվանագիտությունը դրանով փաստորեն փակում կամ լրջորեն խոչընդոտում էր դեպի Էգեյան ծովի Թեսալոնիկե նավահանգիստը ձգտող Ավստրո-Հունգարիայի տնտեսական ու քաղաքական էքսպանսիայի ճանապարհը: Ավստրո-հունգարական դիվանագիտության և նրա աջակիցներ Անգլիայի ու Գերմանիայի խնդիրն էր Նովի-Բազարի սանջակի ավստրիական ռազմական գրավումով վերականգնել Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև նախքան Սան Ստեֆանոյի հաշտությունը գոյություն ունեցող բաժանարար տարածքային միջանցքը և, այդպիսով, ընդլայնել դեպի Թեսալոնիկե նավահանգիստը և ընդհանրապես դեպի Էգեյան ծով տանող ավստրիական տնտեսական և քաղաքական էքսպանսիայի ճանապարհը: Այդ կապակցությամբ Անդրաշին բացահայտորեն հայտարարում էր, որ Սերբիայի և Չեռնոգորիայի սահմանները մոտեցնելու հետևանքով Արևելքի հետ առևտրային շահեր ունեցող Հաբսբուրգյան կայսրություն հաղորդակցության ուղիները անխուսափելիորեն վտանգի կենթարկվեն: Ավստրիական դիվանագիտության հաջորդ կարևոր խնդիրը քաղաքական էր. Նովի-Բազարի սանջակի ռազմական գրավումով կանխել ապագայում Սերբիայի ու Չեռնոգորիայի հավանական քաղաքական միավորումը մեկ միասնական սլավոնական պետության մեջ, որը վերջնականորեն կպատնեշեր ու կփակեր Ավստրո-Հունգարիայի էքսպանսիան Բալ-

կանյան թերակղզում: Ավստրո-հունգարական կայսրության այդ տնտեսական ու քաղաքական խնդիրների իրականացման համար Անդրաշին նշում էր, որ Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև գտնվող Բոսնիական նահանգի նախկին մասը կազմող Նովի-Բազարի սանջակի քաղաքական նոր իրավիճակը, այսինքն՝ դրա ռազմական գրավումը, ինչպես նաև այդ տարածքով անցնող հաղորդակցության ուղիների ազատությունը և անվտանգությունը ապահովելու համար Ավստրո-Հունգարիան պետք է ստանա այդտեղ կայազորներ պահելու, ռազմական և առևտրական ճանապարհներ կառուցելու իրավունք: Առանց կոնգրեսի քննարկմանը ենթարկելու, հենվելով Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերյալ կայացած եվրոպական պատվիրակությունների համաձայնության վրա, կոնգրեսի նախագահ Բիսմարկը Նովի-Բազարի սանջակի ռազմական գրավման վերաբերյալ Անդրաշիի պահանջը ներկայացնում է քվեարկության: Հանկարծակիի եկած ռուսական պատվիրակության համար ստեղծվում է դժվարին կացություն: 1877 թ. հունվարի 15-ի ավստրո-ռուսական Համաձայնությամբ Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ ոչ մի պայմանավորվածություն չէր արձանագրված: Ուստի, ի տարբերություն մյուս եվրոպական պատվիրակությունների, ռուսական պատվիրակությունը հրաժարվում է մասնակցել քվեարկությանը՝ նշելով, որ իրենք համաձայնվել են միայն Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերյալ անգլիական առաջարկի հետ: Նովի-Բազարի սանջակի ռազմական գրավման հարցում հաջողության հասնելու նպատակով Անդրաշին ստիպված էր փոխզիջումային համաձայնության գալ ռուսական պատվիրակության հետ: Կոնգրեսից դուրս՝ Գորչակովի հետ կայացած բանակցություններում, Անդրաշին հարկադրված էր համաձայնվել նպաստելու Ռուսաստանին կենսականորեն շահագրգռող Չեռնոգորիայի իշխանապետության սահմանների ընդլայնմանը: Ստանալով Չեռնոգորիայի սահմանների ընդլայնմանը նպաստելու Անդրաշիի խոստումը՝ ռուսական պատվիրակությունը այնուհետև միանում է Նովի-Բազարի սանջակը Օսմա-

նյան կայսրության կազմում Ավստրո-Հունգարիայի կողմից ռազմական գրավման ենթարկելու կոնգրեսի որոշմանը: Այդպիսով՝ կոնգրեսի մասնակից բոլոր եվրոպական պատվիրակությունները միաձայն քվեարկում են, որպեսզի Սերբիայի և Չեռնոգորիայի միջև գտնվող Նովի-Բազարի սանջակը՝ նախկին տարածքով, ռազմական գրավման ենթարկվի Ավստրո-Հունգարիայի կողմից:

Սակայն թուրքական պատվիրակությունը հրաժարվում է ընդունել Օսմանյան կայսրության կազմում Բոսնիան ու Հերցեգովինան Ավստրո–Հունգարիայի կողմից գրավելու և կառավարելու, ինչպես նաև Նովի-Բազարի սանջակը Միտրովիցայից այն կողմ ռազմական գրավման ենթարկելու կոնգրեսի որոշումը: Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիան ու Հերցեգովինան գրավելու և կառավարելու, ինչպես նաև Նովի-Բազարի սանջակը Միտրովիցայից այն կողմ ռազմական գրավման ենթարկելու կոնգրեսի որոշումը իրականացնելու նպատակով Բիսմարկը դիվանագիտական ու հոգեբանական հզոր ճնշում է գործադրում թուրքական պատվիրակության վրա: Բիսմարկը խստորեն թուրքական պատվիրակության ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ կոնգրեսը հրավիրվել է ոչ թե Թուրքիայի աշխարհագրական սահմանները պահպանելու, այլ Եվրոպայի ներկա ու ապագա կայուն և հարատև խաղաղությունը ապահովելու նպատակով: Այնուհետև, կոնգրեսի նախագահը շեշտում է, որ առանց տերությունների դիվանագիտական միջամտության՝ Թուրքիան պարտադրված կլիներ ամբողջությամբ և առանց փոփոխությունների, ընդունելու Ռուսաստանի թելադրած Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի բոլոր հոդվածները, այնինչ, կոնգրեսի անմիջական միջամտության շնորհիվ, Թուրքիային է վերադարձվում Էգեյան ծովից մինչև Բալկանյան լեռները տարածվող Բոսնիայից ավելի մեծ և ավելի արգավանդ մի նահանգ: Բիսմարկը նաև ընդգծում է, որ կոնգրեսի մասնակից եվրոպական տերությունները համաձայն են Բոսնիա-Հերցեգովինայի և Նովի-Բազարի սանջակի հարցում և սպառնում, որ Թուրքիայի շա-

հերից չի բխում իր անհամաձայնություններով ու առարկություններով ձախողել կոնգրեսի աշխատանքները, որոնց հետևանքները չափազանց կործանարար կլինեն Օսմանյան կայսրության համար[217]:

Բոսնիա-Հերցեգովինայի և Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումները թուրքական ներկայացուցիչներին պարտադրելու համար ավստրիական ու անգլիական պատվիրակները կոնգրեսից դուրս հանդես են գալիս Օսմանյան կայսրության հանդեպ սպառնալից հայտարարություններ կատարելով: Անդրաշին թուրքական պատվիրակներին տեղեկացնում է, որ Ավստրո-Հունգարիայի կողմից Օսմանյան կայսրության կազմում Բոսնիան ու Հերցեգովինան գրավելու և կառավարելու, ինչպես նաև Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև գտնվող Նովի-Բազարի սանջակը ռազմական գրավման ենթարկելու առաջարկությունը կատարել են Անգլիան ու Գերմանիան, ուստի, այդ կապակցությամբ կոնգրեսի կայացրած որոշմանը չենթարկվելու դեպքում, Օսմանյան կայսրությանը սպառնում են կործանարար հետևանքներ: Ինչ վերաբերում է Նովի-Բազարի սանջակը ռազմական գրավման ենթարկելուն, ապա դա, նշում էր Անդրաշին, Ավստրո-Հունգարիային անհրաժեշտ է Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև անհաղթահարելի, երկաթե պատնեշ ստեղծելու միջոցով կանխելու այդ երկու սլավոնական իշխանապետությունների քաղաքական միավորումը[218]:

Իրենց կողմից, Դիզրայելին ու Սոլսբերին թուրքական պատվիրակներին նախազգուշացնում են, որ չընդունելով Բոսնիա-Հերցեգովինայի ու Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ կոնգրեսի կայացրած որոշումները՝ իրենք ոչ միայն Ավստրիային մղում են իրենց թշնամիների ճամբարը, այլև հարկադրում են Անգլիային հրաժարվելու Թուրքիայի շահերը կոնգրեսում պաշտպանելուց: «Որպես Օսմանյան կայսրության վաղեմի բարեկամ ու բացահայտ պաշտպան»

[217] Documents diplomatiques. Protocole N°8. Séance du 28 juin 1878, p. 129-149.
[218] Bareilles B., նշվ. աշխ., էջ 136-137:

Դիզրայելին թուրքական պատվիրակներին հորդորում է հաշտվելու կոնգրեսի կայացրած որոշումների հետ և այդպիսով իրեն հնարավորություն ընձեռել նպաստելու Թուրքիայի հարատևմանը Եվրոպայում[219]: Ֆրանսիական պատվիրակության ղեկավար Վատտինգտոնը իր կողմից թուրքական ներկայացուցիչներին հորդորում է համակերպվել Բոսնիայի ու Հերցեգովինայի վերաբերյալ կոնգրեսի կայացրած որոշման հետ և խորհուրդ տալիս այդ մարզերի դիմաց ավստրիացիներից կա՛մ դրամական փոխհատուցումներ պահանջել, կա՛մ այդ մարզերում որոշ իրավունքներ պահպանել: Այլ պահանջները միանգամայն անիրականանալի ցանկություններ կլինեն, թուրքական պատվիրակներին ուղղած իր հորդորն էր եզրափակում Վատտինգտոնը[220]: Իսկ Ռուսաստանի կանցլեր և արտաքին գործերի նախարար Գորչակովը հայտարարում է, որ ինքը գերադասում է, որ Նովի-Բազարի սանջակը գտնվի Ավստրո-Հունգարիայի, այլ ոչ թե Թուրքիայի տիրապետության ներքո[221]:

Գերմանական կայսրության «երկաթե» կանցլեր, կոնգրեսի նախագահ Բիսմարկի, ինչպես նաև ավստրո-հունգարական, անգլիական ու ֆրանսիական պատվիրակների սպառնալիքները և դիվանագիտական հզոր ճնշումը, որ կատարվում էր նաև կոնգրեսից դուրս, ստիպում է ահաբեկված թուրքական կառավարությանը հաշտվելու կոնգրեսի որոշման հետ: Վերջապես, 1878 թ. հուլիսի 13-ին Բեռլինի կոնգրեսի մասնակից եվրոպական վեց տերությունների և Օսմանյան կայսրության պատվիրակների կողմից ստորագրված պայմանագրի 25-րդ հոդվածում արձանագրվում է. «Բոսնիա և Հերցեգովինա նահանգները կգրավվեն և կկառավարվեն Ավստրո-Հունգարիայի կողմից»: Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ նույն հոդվածում ամրագրված էր, որ ավստրո-հունգարական կառավարությունը չի ցանկանում ստանձնել Սերբիայի և Չեռնոգո-

[219] Նույն տեղում, էջ 166:
[220] Bareilles B., նշվ. աշխ., էջ 166:
[221] П. А. Шувалов, նշվ. աշխ., էջ 102:

րիայի միջև հարավարևելյան ուղղությամբ և Միտրովիցայից այն կողմ տարածված Նովի-Բազարի սանջակի կառավարումը, որտեղ նախկինի պես կգործի օսմանյան կառավարությունը: Բայց շեշտված էր, որ Նովի-Բազարի սանջակի ռազմական գրավման հետևանքով ստեղծված քաղաքական նոր կարգը, հաղորդակցության ուղիների ազատությունն ու անվտանգությունը ապահովելու համար Ավստրո-Հունգարիան իրեն իրավունք է վերապահում այդտեղ պահելու կայազորներ, ինչպես նաև այդ նախկին Բոսնիական վիլայեթի (նահանգի) ամբողջ երկարությամբ ունենալու ռազմական և առևտրական ճանապարհներ[222]:

Այդպիսով՝ առանց պատերազմի, խաղաղ ճանապարհով, անգլո-գերմանական դիվանագիտության եռանդուն աջակցությամբ 1876 թ. հուլիսի 8-ի և 1877 թ. հունվարի 15-ի ավստրո-ռուսական գաղտնի Համաձայնությունների հիման վրա, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Ավստրո-Հունգարիան իրավունք է ստանում գրավելու և կառավարելու սահմանակից 50 հազ. քառ. կմ ընդհանուր տարածությամբ և 1.5 մլն բնակչությամբ սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան, որոնք, թեև ձևականորեն, սուլթանի անվանական սյուզերենության ներքո շարունակելու էին մնալ Օսմանյան կայսրության կազմում: Այդ մարզերի հետ միասին, սակայն առանց վերացնելու թուրքական կառավարումը և տեղական վարչությունը, Ավստրո-Հունգարիան իրավունք է ստանում ռազմական գրավման ենթարկելու Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև գտնվող և Միտրովիցայից այն կողմ տարածվող 7350 հազ. քառ. կմ տարածությամբ և 153 հազ. բնակչությամբ Կոսովոյի նահանգի չորս գավառներից Նովի-Բազարի սանջակը: Կոնգրեսի որոշմամբ իրավունք ստանալով գրավելու և կառավարելու Օսմանյան կայսրության կազմում գտնվող սլավոնական Բոսնիա և Հերցեգովինա մարզերը, ֆրանսիական պատվիրակության ղեկավար Վատտինգտոնի դիպուկ

[222] Documents diplomatiques. Protocole N°8. Séance du 28 juin 1878, p. 129-149. Բեռլինի պայմանագիրը, Հոդված 25:

բնորոշմամբ, Հաբսբուրգյան կայսրությունը ստանձնում էր համաեվրոպական ժանդարմի դեր՝ հանդես գալով այդ տարածքներում ազգային–ազատագրական ապստամբությունները ռազմական ուժով ճնշելու, Սերբիայի գլխավորությամբ հարավսլավոնական հողերի միավորումը բացառելու և Ռուսաստանի քաղաքական ազդեցության ներքո Մեծ Սերբիայի ստեղծմանը կանխարգելողի դերում[223]:

Հաստատվելով սլավոնական այդ տարածքներում՝ Ավստրո-Հունգարական կայսրությունը դառնում էր նաև բալկանյան տերություն և հնարավորություն ստանում Նովի-Բազարի սանջակի Միտրովիցա քաղաքը 1874 թ.-ից Թեսալոնիկե նավահանգստի հետ միացնող 225 կմ երկաթգծով ուղղակիորեն դուրս գալու դեպի Էգեյան ծով:

Բեռլինի կոնգրեսի ընդունած դաշնագրի կնքման օրը՝ հուլիսի 13-ին, Ռուսաստանը և Ավստրո-Հունգարիան ստորագրում են գաղտնի համաձայնություն, ըստ որի՝ Բեռլինի կոնգրեսի որոշումներն իրականացնելու գործում Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական աջակցությունը ստանալու նպատակով Ռուսաստանը պարտավորվում էր Ավստրո-Հունգարիային արգելքներ չհարուցել Նովի-Բազարի սանջակը Բոսնիայի և Հերցեգովինայի նման վերջնականապես նույնպես գրավելու համար[224]: Այդպիսով՝ Հարավային Բեսարաբիան վերադարձնելու, սևծովյան կարևորագույն նավահանգիստ Բաթումը ստանալու, Կարսի ու Արդահանի վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումները իրականացնելու գործում Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական աջակցությունը ստանալու դիմաց, որպես փոխհատուցում, Ռուսաստանը ստիպված համաձայնվում էր, որ Բոսնիայի և Հերցեգովինայի նման Ավստրո-Հունգարիան վերջնականորեն նույնպես գրավեր Նովի-Բազարի սանջակը:

---

[223] Documents diplomatiques. Protocole N°8. Séance du 28 juin 1878, p. 137-138.
[224] Տե՛ս Steed H. W, La Monarchie des Habsbourg, P., 1914, p. 325-326:

Հունաստան

Կոնգրեսը հուլիսի 5-ի նիստում լսում է նաև Հունաստանի ներկայացուցիչների ցանկությունները, որ շարադրում են արտգործնախարար Թեոդոր Դելյանիսը և Բեռլինում Հունաստանի դեսպան Ալեքսանդր Ռանգաբեն: Կոնգրես հրավիրված հունական պատվիրակները առաջ են քաշում թուրքական տիրապետության տակ գտնվող միջերկրածովյան Կրետե կղզին, ինչպես նաև սահմանակից մարզեր Էպիրոսը և Թեսալիան Հունաստանի հետ միավորելու հարցը: Առանց անդրադառնալու Կրետե կղզին Հունաստանի հետ միավորելու հունական պատվիրակության առաջարկությանը՝ Վատտինգտոնի նախաձեռնությամբ, կոնգրեսը հույն-թուրքական սահմանի վերաբերյալ կազմում է արձանագրություն, ըստ որի՝ Թուրքիան և Հունաստանը պետք է համաձայնության գային, որպեսզի Թեսալիայում սահմանագիծն անցներ դեպի Էգեյան ծովը հոսող Սալամիրիաս (Պինիոս), իսկ Էպիրոսում՝ դեպի Հոնիական ծովը հոսող Կալամաս գետերի հովիտներով: Այդ կապակցությամբ Բեռլինի դաշնագրի 24-րդ հոդվածը ամրագրում էր, որ «կոնգրեսի նշած սահմանագծի վերաբերյալ եթե Թուրքիայի և Հունաստանի միջև փոխադարձ համաձայնություն չկայանա, այդ դեպքում Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան և Ռուսաստանը իրենց իրավունք են վերապահում բանակցությունները դյուրացնելու համար երկու կողմերին առաջարկել իրենց միջնորդությունը»:

Դիզրայելին Վատտինգտոնի առաջարկած հույն-թուրքական սահամանգիծը անգլիական պատվիրակության տեսակետից թեև համարում է վիճարկելի, այնուամենայնիվ, միանում է այդ կապակցությամբ կոնգրեսի ընդունած արձանագրությանը՝ միաժամանակ տերությունների պատվիրակներին հորդորելով այդ նպատակի իրականացման համար հրաժարվել թուրքական կառավարության վրա հարկադրանքի կամ ճնշման միջոցառումներ ձեռնարկելուց,

քանզի, իր համոզմամբ, «սուլթանը, ենթարկված լինելով այնպիսի ահավոր դժբախտությունների, արժանի է մեծագույն հարգանքի ու համակրանքի»[225]: Փաստորեն, Բեռլինի կոնգրեսի ընդունած սահմանագծի վերաբերյալ ապագա թուրք-հունական բանակցություններում Դիզրայելին թուրքական կառավարությանը բացահատորեն խոստանում էր ցուցաբերել Անգլիայի դիվանագիտական բարյացակամ աջակցությունը:

[225] Documents diplomatiques. Protocole N°13.Séance du 5 juillet 1878, p. 199-207. Բեռլինի պայմանագիրը, Հոդված 24:

Ռումինիա

Կոնգրեսում լուրջ քննարկումների են ենթարկվում Ռումինիային վերաբերող Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածները: Անգլիական պատվիրակությունը, դեմ լինելով Հարավային Բեսարաբիան Ռուսաստանի տիրապետությանը վերադարձնելու վերաբերյալ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրով ձեռք բերված պայմանավորվածությանը, հունական պատվիրակության հեռանալուց անմիջապես հետո, հանձին Սոլսբերիի, առաջարկում է նույնպես հաշվի առնել Ռումինիայի ներկայացուցիչների նկատառումները՝ փաստարկելով, որ եթե կոնգրեսը լսել է օտար նահանգների նկատմամբ հավակնություններ ցուցաբերող ժողովրդի պատվիրակներին, ապա նույն վերաբերմունքը պետք է դրսևորի նաև իրենց տարածքները պահպանել պահանջող երկրի ներկայացուցիչների նկատմամբ:

Պատասխանելով ռումինական ներկայացուցիչների նկատառումները Հարավային Բեսարաբիայի վերաբերյալ կոնգրեսին ներկայացնելու Սոլսբերիի առաջարկությանը՝ նախագահ Բիսմարկը շեշտում է, որ հրավիրվողների՝ արդեն նախապես հայտնի պահանջները բարդություններ են ստեղծելու Ռումինիային վերաբերող հարցերի լուծման ճանապարհին: Այնուամենայնիվ, տերությունների համաձայնությամբ, կոնգրեսի հուլիսի 1-ի նիստին հրավիրված Ռումինիայի կառավարության նախագահ Բրատիանոն և արտգործնախարար Կոգալնիչանոն մերժում են ընդունել Հարավային Բեսարաբիան Դոբրուջայի հետ փոխանակելու Սան Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածը՝ շեշտելով, որ Հարավային Բեսարաբիան պատմականորեն ռումինական տարածք է՝ հանդիսանալով Մոլդավիայի բաղկացուցիչ մասը և, հետևաբար, չի կարող անջատվել Ռումինիայից: Այնուհետև, նրանք փաստարկում են, որ 1877թ ապրիլի 16-ի Համաձայնությամբ Ռուսաստանը աներկբայորեն երաշխավորվել էր Ռումինիայի տարածքային ամբողջականությունը, որի

սահմաններում էր 1856թ. Փարիզի հաշտության պայմանագրով Ռուսաստանից վերադարձված Հարավային Բեսարաբիան: Նշելով, որ ռումինական ոչ մի տարածք չի կարող անջատվել Ռումինիայից, նրանք միաժամանակ պահանջում էին Դանուբի գետաբերանը՝ հարակից կղզիներով, ինչպես նաև սևծովյան Օձի կղզին:

Ռումինական կառավարության ներկայացուցիչների ներկայացրած պահանջները պաշտպանության են արժանանում անգլիական պատվիրակներ, պահպանողական կառավարության և պատվիրակության ղեկավար Դիզրայելիի և արտգործնախարար Սոլսբերիի կողմից, որոնք, առարկելով Հարավային Բեսարաբիան Ռուսաստանին զիջելու Սան Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան հոդվածի դեմ, շեշտում էին այդ տարածքի ռումինական պատկանելությունը, որի անցումը Ռուսաստանի տիրապետության տակ, իրենց համոզմամբ, կարող էր լրջորեն սպառնալ Դանուբ գետով դեպի Սև ծով կատարվող եվրոպական առևտրանավերի ազատ ու անվտանգ նավարկությանը:

Իտալիայի արտաքին գործերի նախարար և իտալական պատվիրակության ղեկավար Կորտին փաստարկում էր, որ Ռումինիան, լինելով Թուրքիայից վասալական կախվածության մեջ գտնվող իշխանապետություն, չէր կարող մասնակցել ոուս-թուրքական հաշտության պայմանագրի կնքմանը և, հետևաբար, նա ոչ մի առնչություն չի կարող ունենալ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածների հետ: Մերժելով Հարավային Բեսարաբիայի վերադարձման դեպքում Ռուսաստանի կողմից Դանուբի ազատ և անվտանգ նավարկությանը սպառնացող անհիմն վտանգի անգլիական փաստարկը, ի փոխանակումն Հարավային Բեսարաբիայի, ռուսական պատվիրակները համաձայնվում էին Ռումինիային զիջել Դանուբի գետաբերանը՝ նրա կղզիներով և Հյուսիսային Դոբրուջան: Ընդ որում՝ ոուսական պատվիրակները վճռականորեն հայտարարում էին, որ Ռուսաստանը Ռումինիայի քաղաքական անկախությունը կարող է ճանաչել միայն Հարավային Բեսարաբիան վե-

րադարձնելու դեպքում: Հակառակ պարագայում, այսինքն՝ Հարավային Բեսարաբիան պահելով իր սահմաններում, զգուշացնում էին ռուսական պատվիրակները, անհնարին կլինի բարյացակամ հարաբերությունների հաստատումը Ռուսաստանի և Ռումինիայի միջև, և Ռումինիան, իրականում, չի կարող պահպանել իր անկախությունը և տարածքային ամբողջականությունը՝ համառորեն գոյատևելով 1812 թ. Բուխարեստի հաշտության պայմանագրով մի մեծ կայսրության տիրապետության տակ անցած տարածքի վրա: Հարավային Բեսարաբիայի վերադարձը, շեշտում էին ռուսական պատվիրակները, Ռուսաստանի կողմից դիտվում է որպես պատվի, հեղինակության և արժանապատվության հարց, որը պետք է լուծվի բացառապես Ռուսաստանի օրինական պահանջների հիման վրա: Անդրաշին, հիմնվելով 1877 թ. հունվարի 15-ին Բուդապեշտում կնքված ավստրո-ռուսական Համաձայնության վրա, պաշտպանում է Հարավային Բեսարաբիան Ռուսաստանին վերադարձնելու ռուսական պատվիրակների պահանջը՝ սակայն առաջարկելով հօգուտ Ռումինիայի ընդարձակել Հյուսիսային Դոբրուջայի հարավային տարածքը: Հստակեցնելով Հյուսիսային Դոբրուջայի հարավային տարածքն ընդլայնելու Անդրաշիի առաջարկը՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար և պատվիրակության ղեկավար Վատտինգտոնը նպատակահարմար է համարում Հյուսիսային Դոբրուջայի հարավային սահմանը դարձնել Դանուբի աջ ափի բուլղարական Սիլիստրա նավահանգիստ-քաղաքի հյուսիսից դեպի Սև ծովի Մանգալիա նավահանգստից հարավ ձգվող սահմանագիծը:

Քննարկումներին վերջակետ է դնում Բիսմարկը՝ անառարկելիորեն հայտարարելով, որ կոնգրեսը Ռումինիայի քաղաքական անկախությունը կարող է ճանաչել, եթե նա համաձայնվի ընդունել Հարավային Բեսարաբիան Դոբրուջայի հետ փոխանակելու Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 19-րդ հոդվածը: Բիսմարկը նույնպես շեշտում էր, որ Հարավային Բեսարաբիայի վերադարձումը Ռուսաստանին ամենևին էլ չի կարող վտանգել Դանուբով կա-

տարվող եվրոպական երկրների առևտրական նավարկությանը: Բիսմարկը զգուշացնում է, որ մերժելով բավարարել Ռուսաստանի պատմական զգացմունքները՝ այդ հզոր կայսրությունը իր ապագա արտաքին քաղաքականությունը կվարի վիրավորված արժանապատվության զգացմունքով՝ ձախողելով կոնգրեսի ընդունած բոլոր որոշումները՝ իրենց քաղաքական ծանր հետևանքներով: Վերջապես, բուռն քննարկումների արդյունքում, ռուսական պատվիրակության անդամ Շուվալովը ներկայացնում է Հարավային Բեսարաբիան ռումինական տարածքների հետ փոխանակելու փոխհամաձայնեցված խմբագրությունը, որը նույնությամբ ընդունվում է կոնգրեսի մասնակից բոլոր տերությունների կողմից: Այդպիսով, կոնգրեսի որոշմամբ, Ռումինիայի իշխանապետությունը վերադարձնում էր 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրով Ռուսաստանից անջատված 9 հազ. 400 կմ^2 կազմող Հարավային Բեսարաբիան, որը արևմուտքից սահմանափակված է Պրուտ գետի հունով, հարավից՝ Դանուբի Դելտայի հյուսիսային գետաբազուկ Քիլիյի հունով և Ստարի Ստամբուլի գետաբերանով: Հարավային Բեսարաբիայի փոխարեն, որպես փոխանակություն, Ռումինիան ստանում էր Դանուբի Դելտայի հյուսիսային գետաբազուկ Քիլիյից հարավ գտնվող տարածքները՝ Դանուբի Դելտան և նրա կղզիները, ինչպես նաև Դանուբի գետաբերանից դեպի արևելք 40 կմ հեռավորության վրա գտնվող 0.17 քառ. կմ սևծովյան Օձի կղզին: Ռումինիան ստանում էր Թուլչիի շրջանը՝ իր տասը գավառներով, ինչպես նաև Հյուսիսային Դոբրուջայից դեպի հարավ գտնվող տարածքը՝ Դանուբի աջ ափի բուլղարական Սիլիստրա նավահանգիստ-քաղաքի հյուսիսից դեպի Սև ծով ձգվող սահմանով՝ Մանգալիա նավահանգիստը ներառելով Ռումինիայի կազմում: Այդպիսով՝ Ռուսաստանին վերադարձրած Հարավային Բեսարաբիայի փոխարեն Ռումինիան ստանում էր Հյուսիսային Դոբրուջան՝ սևծովյան Կոնստանցա ու Մանգալիա նավահանգիստներով՝ 14 հազ. քառ. տարածությամբ և 170 հազ. բնակչությամբ: Հիշյալ տարածքների փոխանակման փոխհա-

մաձայնեցված տարբերակի հաստատումից հետո միայն կոնգրեսը ճանաչում է Ռումինիայի իշխանապետության քաղաքական անկախությունը:

Կոնգրեսը վավերացնում է Ռումինիայի իրավունքներին, առանձնաշնորհումներին, արտոնություններին և պարտավորություններին վերաբերող բոլոր պայմանագրերը, ակտերը և որոշումները:

Կոնգրեսի որոշմամբ՝ Ռումինիան էր ստանձնում իրեն զիջված տարածքում թուրքական կառավարության բոլոր նախկին իրավունքներն ու պարտականությունները, որոնք վերաբերում էին հասարակական աշխատանքներին և նման կարգի ձեռնարկումներին:

Կոնգրեսը ամրագրում էր Ռումինիայում կրոնական հավատալիքների ու դավանանքների իրավահավասարության, առանց բացառության քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու, պետական պարգևներ ստանալու, զանազան ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու սկզբունքները: Բոլոր տերությունների հպատակները, առևտրով զբաղվողները և մյուսները, առանց դավանության խտրության, Ռումինիայում պետք է օգտվեին լիակատար իրավասության իրավունքներից: Մինչև շահագրգռված տերությունների հետ համաձայնություն կայացնելը՝ ռումինական իշխանապետությունում իրենց ուժն էին պահպանելու հյուպատոսների առանձնաշնորհումները և նրանց հովանավորական գործողությունները: Դանուբով ազատ ու անվտանգ նավարկության երաշխիքները մեծացնելու նպատակով, կոնգրեսի որոշմամբ, հողին էին հավասարեցվելու գետի՝ Երկաթե Դարպասից մինչև գետաբերանը կառուցված ամրոցներն ու ամրությունները: Բացառությամբ գետային ոստիկանության և մաքսային ծառայության նավերի՝ ոչ մի ռազմանավ չէր կարող Դանուբի Երկաթե դարպասից նավարկել դեպի Սև ծով: Սակայն Դանուբի գետաբերանում տերությունների մշտական պահականավերը կարող էին նավարկել մինչև Գալաց նավահանգիստը: Ռումինիան իր ներկայացուցիչն էր

ունենալու Եվրոպական Դանուբյան հանձնաժողովում և տարածքային իշխանություններից լիակատար անկախության պայմաններում, մինչև Գալաց նավահանգիստը, պետք է իրականացներ գործողությունների իր ոլորտը:

Երկաթե Դարպասից մինչև Գալաց նավահանգիստը նավարկության, գետային ոստիկանության և հսկողության վերաբերյալ կանոնները, ափամերձ պետությունների պատգամավորների օժանդակությամբ, պետք է մշակեր Եվրոպական հանձնաժողովը: Իշխանապետության տարածքով փոխադրվող օտարերկրյա ապրանքները ազատվում էին մաքսատուրքեր վճարելու պարտավորություններից[226]:

Կոնգրեսի քննարկումները և որոշումները Արևմտյան Հայաստանում տեղական վարչական բարեփոխումների և Ռուսաստանի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ

Անգլիական պատվիրակության նախաձեռնությամբ կոնգրեսի քննարկմանն են ենթարկվում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Ռուսաստանի գրաված Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ» անհապաղ կենսագործելու, «հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից զերծ պահելու» թուրքական կառավարության ստանձնած պարտավորությանը, ինչպես նաև Հարավային Կովկասում և Արևմտյան Հայաստանում՝ մինչև Սողանլուղ Ռուսաստանի տարածքային ձեռքբերումներին վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ և 19-րդ հոդվածները:

Հուլիսի 4-ին կայացած կոնգրեսի 12-րդ նիստում Սոլսբերին

[226] Documents diplomatiques. Protocole N°13.Séance du 5 juillet 1878, p.199-207. Բեռլինի պայմանագիրը, Հոդված 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57:

հայտարարում է, որ անգլիական պատվիրակությունը պատրաստ է ընդունել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի միայն այն պարբերությունը, որի համաձայն՝ «Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»: Կոնգրեսին առաջարկելով մերժել 16-րդ հոդվածի առաջին պարբերությունը, որն ուղղակիորեն վերաբերում էր պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանին, Սոլսբերիի ներկայացրած բուն տեքստը, փաստորեն, ենթարկվում էր իմաստային և բովանդակային այնպիսի փոփոխության, ըստ որի՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր «տեղական կարիքներից հարուցված բարելավումներ և բարենորոգումներ» իրականացնել ոչ թե հայ ժողովրդի ազգային-պատմական բնօրրանը հանդիսացող Հայաստանում, այլ Թուրքիայի ինչ-որ «հայաբնակ մարզերում»: Այնուհետև, Սոլսբերին Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին պարբերությանը դեմ էր արտահայտվում նաև այն պատճառով, որ թուրքական կառավարությունը պարտավորվում էր «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ» իրականացնել վեց ամսվա ընթացքում՝ նախքան «Թուրքիային վերադարձվելիք վայրերից», այսինքն՝ թուրքական տիրապետությանը վերադարձվելիք Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերումը: Սոլսբերին 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությունն ընդունելի էր համարում այն անհրաժեշտ ու անառարկելի պայմանով, որ, կոնգրեսի որոշմամբ, թուրքական կառավարությունը «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ» պետք է իրականացներ Արևմտյան Հայաստանը գրաված ռուսական զորքերի հեռանալուց հետո միայն, այսինքն՝ առանց հաղթած տերության ռազմական ներկայության և քաղաքական հարկադրանքի պայմաններում, այլ՝ սոսկ սե-

փական կամքով ու նախաձեռնությամբ: Հակառակ պարագայում, այսինքն՝ Հայաստանին վերաբերող 16-րդ հոդվածի առաջին պարբերությունը չջնջելու դեպքում, շեշտում էր Սոլսբերին, անգլիական պատվիրակությունը կոնգրեսի քննարկմանը կներկայացնի հայերին վերաբերող մի հոդված: Այդպիսով՝ անգլիական պատվիրակությունը, Սոլսբերիի ելույթով, կտրականապես բացառում էր ռուսական զորքերի առկայության պայմաններում Արևմտյան Հայաստանում «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ» անցկացնելու Ռուսաստանի հանդեպ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով ստանձնած թուրքական կառավարության պարտավորությունը:

Առարկելով 16-րդ հոդվածը իմաստային ու բովանդակային խմբագրմամբ աղճատման ենթարկելու անգլիական պատվիրակության առաջարկությանը՝ Շուվալովը մտահոգություն է հայտնում՝ շեշտելով, որ նախքան թուրքական կառավարության «բարելավումների և բարենորոգումների» իրականացումը՝ Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերումը կարող է լուրջ անկարգությունների ազդանշան ծառայել, այլ կերպ ասած՝ անմիջական սպառնալիք ստեղծել հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությանը: Այնուամենայնիվ, ռուսական պատվիրակը առաջարկում է 16-րդ հոդվածի վերաբերյալ բոլոր նկատառումները հանգամանորեն քննարկել Հայաստանին վերաբերող կոնգրեսի հաջորդ նիստերից մեկում:

Կոնգրեսի հուլիսի 6-ի 14-րդ նիստում Սոլսբերին քննարկման է ներկայացնում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական տարբերակը, որը, անփոփոխ թողնելով 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը, ավարտվում էր լրացված հավելումով, ըստ որի՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ» կենսագործելու և դրանց իրականացման անհրաժեշտ միջոցներ կիրառելու հարցում

խորհրդակցել հաշտության պայմանագիրը ստորագրած վեց տերությունների հետ: Քննարկման ներկայացնելով կոնգրեսի պատվիրակներին նախապես բաժանված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի փոփոխված անգլիական տարբերակը՝ Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերին հանդիսավորությամբ հայտարարում է, որ հայերի շահերը պետք է պաշտպանվեն, և որ անգլիական առաջարկի նպատակն է նրանց ներշնչել անհապաղ բարելավումների, ինչպես նաև ապագա առաջադիմության հույսեր: Իր հերթին, թուրքական պատվիրակության ղեկավար Ալ. Կարաթեոդորին առաջարկում է 16-րդ հոդվածի անգլիական տարբերակին ավելացնել լրացում, ըստ որի՝ թուրքական կառավարությունը կոնգրեսի մասնակից վեց տերություններին կտեղեկացնի այդ ուղղությամբ, այսինքն՝ «հայաբնակ մարզերում» բարելավումների և բարենորոգումների վերաբերյալ իր ձեռնարկած միջոցառումների արդյունքների մասին: Նման հավելումը, նշում է Ալ. Կարաթեոդորին, լիովին գոհացնելով թուրքական կառավարությանը, միաժամանակ կլրացնի նաև անգլիական պատվիրակության ներկայացրած 16-րդ հոդվածի իմաստային բովանդակությունը: Շուվալովն առարկում է անգլիական տարբերակին Ալ. Կարաթեոդորիի առաջարկած թուրքական լրացումը կցելուն՝ նշելով, որ եթե թուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումները երբևէ չեն իրականացվել, ապա լիովին անիմաստ է այդ մասին հոդվածում ձևակերպել: Կոնգրեսի նախագահ Բիսմարկը նույնպես թերահավատությամբ է վերաբերվում «հայաբնակ մարզերում» «բարելավումների և բարենորոգումների» վերաբերյալ անգլիական պատվիրակության ներկայացրած 16-րդ հոդվածի տարբերակի արդյունավետության նկատմամբ՝ շեշտելով, որ անհնազանդ ցեղերի՝ քրդերի նկատմամբ հարկադրական միջոցառումներ ձեռնարկելով՝ անհնարին է գործնական արդյունքներ ակնկալել Սոլսբերիի առաջարկած տարբերակի կիրառումից:

16-րդ հոդվածի անգլիական տարբերակին թուրքական պատվիրակության առաջարկած լրացումը կցելու, քննարկման ընթացքում արտահայտված կարծիքները նկատի առնելու, անգլիական և թուրքական տարբերակները համաձայնեցնելու և միասնականացնելու նպատակով, Սոլսբերիի նախաձեռնությամբ, հարցի քննարկումը հետաձգվում է կոնգրեսի հաջորդ նիստի օրակարգ: Վերջապես, հուլիսի 8-ի 15-րդ նիստում Սոլսբերին կոնգրեսին է ներկայացնում Արևմտյան Հայաստանի տեղական վարչական կառավարմանը վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական և թուրքական պատվիրակությունների համատեղ կազմած խմբագրությունը, որի համաձայն՝ «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը»: Առանց որևէ վերաբերմունք դրսևորելու և առանց քննարկման ենթարկելու՝ կոնգրեսի մասնակից տերություններն իրենց համաձայնությանն են արժանացնում թուրքական կառավարությանը ոչնչով չպարտավորեցնող և իրականացման համար բացարձակապես երաշխիքներ չպարունակող անգլո-թուրքական համատեղ խմբագրած 16-րդ հոդվածը, որն իր արտացոլումն է գտնում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում և միջազգային դիվանագիտության օրակարգի մեջ է մտնում Արևմտյան Հայաստանի՝ տեղական վարչական կառավարման «բարելավումներին և բարենորոգումներին» վերաբերող «Հայկական հարց» անունով[227]: Այդպիսով՝

[227] Documents diplomatiques. Protocole N°12.Séance du 4 juillet 1878, p. 187-199.
Protocole N°14. Séance du 6 juillet 1878, p. 208-218.
Protocole N°15. Séance du 8 juillet 1878, p. 218-232.
Բեռլինի պայմանագիրը, Հոդված 61:

եզրակացնում է թուրքական պատմագրությունը, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով վերացվում էր «հայկական բարենորոգումների» անվան տակ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով հայերի վրա Ռուսաստանի ձեռքբերած ազդեցությունը, և Հայկական հարցը, Անգլիայի գլխավորությամբ, անցնում էր եվրոպական տերությունների վերահսկողության տակ[228]:

Թուրքական կառավարության՝ «բարելավումներ ու բարենորոգումներ» իրականացնելու կապակցությամբ կոնգրեսը անդրադառնում է նաև Օսմանյան կայսրությունում դավանանքների ու կրոնների, հանրային, քաղաքացիական ու քաղաքական պաշտոններ զբաղեցնելու, մասնագիտություններով ու արհեստներով զբաղվելու հարցերին: Ի գիտություն ընդունելով, «որ թուրքական կառավարությունը հայտնել է ամենալայն իմաստով կրոնական ազատության սկզբունքը պահպանելու հաստատ մտադրություն», հաշտության պայմանագրի 62-րդ հոդվածում կոնգրեսը ամրագրում էր. «Օսմանյան կայսրության ոչ մի մասում դավանության տարբերությունը չի կարող առիթ տալ որևէ մեկին բացառելու կամ որևէ մեկի իրավունակությունը չճանաչելու համար բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու և պարգև ստանալու կամ զանազան ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությունը»[229]:

Նույն հոդվածում կոնգրեսը հստակեցնում էր կրոնական ազատությանը, կրոնական համայնքների աստիճանակարգային (հիերարխիկ) կառուցվածքին վերաբերող սկզբունքները՝ ամրագրելով. «Բոլորն ապահովվում են ամեն տեսակ ժամերգության և եկեղեցական ծիսակատարության ազատությամբ, և ոչ մի տեսակի ճնշումներ չեն կարող գործադրվել տարբեր կրոնական համայնքների հիերարխիկ կառուցվածքի նկատմամբ և իրենց հոգևոր պետերի հետ

[228] Tarih, s. 239.
[229] Բեռլինի պայմանագիրը, Հոդված 62:

նրանց ունեցած կապերի մեջ»: Օսմանյան կայսրությունում բոլորը, առանց դավանության խտրության, իրավունք էին ստանում վկայություն տալ դատարաններում[230]:

Անգլիական պատվիրակության նախաձեռնությամբ, կոնգրեսի քննարկմանն է ներկայացվում նաև սևծովյան Բաթում նավահանգստին և Արևմտյան Հայաստանում՝ մինչև Սողանլուղի լեռնաշղթա՝ Ռուսաստանի տարածքային ձեռքբերումներին վերաբերող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 19-րդ հոդվածը: Անտեսելով սևծովյան Բաթում նավահանգստի և Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ստորագրված անգլո-ռուսական Համաձայնագիրը՝ անգլիական պատվիրակները կոնգրեսում հանդես են գալիս Սան Ստեֆանոյի պայմանագրի վերաբերյալ կայացրած երկկողմանի պայմանավորվածությունը ժխտելու նախաձեռնությամբ: Ելույթ ունենալով կոնգրեսի հուլիսի 6-ի 14-րդ նիստում՝ Սոլսբերին հայտարարում է, որ Ռուսաստանի կողմից Կարսի և Արդահանի նման կարևորագույն ամրոցների գրավումը կսասանի թուրքական կառավարության հզորությանը և հեղինակությանը Փ. Ասիայում՝ խիստ կասկածի տակ դնելով այդ տարածաշրջանում անդորրության պահպանմանը: Այնուամենայնիվ, եթե Ռուսաստանը անդրդվելի լինի Կարսը և Արդահանը իր տիրապետության տակ պահելու մտադրությունում, ապա այդ դեպքում, սպառնում էր Սոլսբերին, Անգլիան իրեն իրավունք է վերապահելու բոլոր միջոցներով իր շահերն ու ազդեցությունը պաշտպանելու այդ տարածաշրջանում: Իր հերթին, անգլիական պատվիրակության ղեկավար Դիզրայելին կտրականապես դեմ է արտահայտվում նաև սևծովյան կարևորագույն Բաթում նավահանգիստը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուն՝ փաստարկներով հիմնավորելով նախ՝ այդ քաղաք-նավահանգիստը իր շրջակայքով ռուսական զորքերի

[230] Նույն տեղում:

կողմից գրավված չլինելու, և հետևաբար, թուրքական սուլթանի գերիշխանության ներքո չնվաճված տարածք լինելու հանգամանքով: Այնուհետև, Դիզրայելին շեշտում էր, որ Բաթումի մարզի մուսուլման ժողովուրդը չի ցանկանում ընկնել Ռուսաստանի տիրապետության տակ և, անկախ բոլոր լուրջ վտանգներից, պատրաստ է զենքի ուժով դիմադրել՝ Օսմանյան կայսրության կազմում մնալու համար: Անգլիական պատվիրակները նաև շեշտում էին, որ Ռուսաստանի տիրապետության պայմաններում սևծովյան Բաթում նավահանգիստը կարող է վերածվել ռուսական ռազմածովային հզոր հենակետի՝ լուրջ սպառնալիք ստեղծելով ոչ միայն Սև ծովի, այլև Նեղուցների անվտանգությանը:

Պատասխանելով Հայաստանում Կարսն ու Արդահանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու վերաբերյալ Սոլսբերիի արտահայտած առարկություններին՝ Գորչակովը, հենվելով 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կայացած անգլո–ռուսական Համաձայնագրի վրա, հայտարարում է, որ Ռուսաստանը արդեն գնացել է տարածքային լուրջ զիջումների՝ հրաժարվելով Էրզրումից, և մասնավորապես՝ Սև ծովի Տրապիզոնի նավահանգստից դեպի Պարսկաստան տանող առևտրական կարևորագույն տարանցիկ ուղի հանդիսացող Ալաշկերտի հովտից ու Բայազետ քաղաքից: Ինչ վերաբերում էր Բաթում նավահանգիստը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու վերաբերյալ անգլիական պատվիրակների արտահայտած առարկություններին, Գորչակովը նրանց վստահեցնում է, որ Բաթում նավահանգիստը ռազմական ոչ մի սպառնալիք չի կարող ստեղծել Սև ծովի և Նեղուցների անվտանգությանը այն պարզ պատճառով, քանի որ Ռուսաստանը ռազմանավեր չունի Սև ծովում: Ստանալով սևծովյան Բաթում նավահանգիստը, հայտարարում է Գորչակովը, ռուսական կառավարությունը պատրաստակամ է այն դարձնելու ապառազմականացված, մաքսերից ազատ առևտրական նավահանգիստ, որը լիովին համապատասխանում է բոլոր տերությունների, և առավելապես՝ աշխարհի ամենամեծ առևտրա-

կան նավատորմն ունեցող Մեծ Բրիտանիայի շահերին: Իր հերթին՝ Շուվալովը նշում է, որ Բաթումը Ռուսաստանին անհրաժեշտ է իր սևծովյան նավահանգիստների հետ հաղորդակցությունը ապահովելու և ընդհանրապես՝ իր առևտուրը զարգացնելու համար: Ռուսական երկրորդ պատվիրակ Շուվալովը նույնպես հավաստիացնում է, որ Ռուսաստանի կազմում Բաթումը կդառնա համաշխարհային առևտրի կարևորագույն նավահանգիստները մեկը՝ բացարձակապես ոչ մի սպառնալիք չստեղծելով Սև ծովի և Նեղուցների անվտանգությանը[231]: Մասնավորապես՝ Բաթում նավահանգստի վերաբերյալ կայացած անգլո-ռուսական Համաձայնագրի պայմանը համառորեն ժխտելու՝ անգլիական պատվիրակների վերաբերմունքի հետևանքով «Ռուսաստանի վիճակը դառնում էր օրհասական,- հետագայում փաստել է Շուվալովը,- նա պետք է կա՛մ հրաժարվեր Բաթումից, որը դժգոհության պայթյուն կառաջացներ Ռուսաստանում, կա՛մ կոնգրեսի աշխատանքները պետք է ձախողվեին, իսկ մենք, հավանաբար, կհայտնվեինք պատերազմի մեջ»[232]: Մինչդեռ Ռուսաստանի հասարակական կարծիքը նույնպես բուռն կերպով արտահայտվում էր հօգուտ Բաթումի և Կարսի միացման, շեշտում է Շուվալովը, ինչպես որ գերմանական հասարակական կարծիքն էր 1870 թ. պահանջում Էլզասը միացնել Գերմանիային[233]:

Սևծովյան Բաթում նավահանգստի, Կարսի ու Արդահանի վերաբերյալ կայացած մայիսի 30-ի անգլո-ռուսական երկկողմանի Համաձայնագրի պայմանները բացահայտորեն խախտելու անգլիական պատվիրակության նենգամիտ նկրտումները բացասական վերաբերմունքի են արժանանում կոնգրեսի նախագահ Բիսմարկի կողմից: Այսպես. Բիսմարկը Դիզրայելիի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ինքը՝ որպես Գերմանիայի կանցլեր, համաձայնվել է կոնգրեսը Բեռլինում անցկացնելու առաջար-

[231] Documents diplomatiques. Séance du 6 juillet 1878, p. 208-218.
[232] П.А. Шувалов, նշվ. աշխ., էջ 105-106.
[233] Նույն տեղում, էջ 96:

կության հետ, երբ տեղեկացվել է մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի Համաձայնագրի պայմանների մասին: Բիսմարկը շեշտում է, որ խախտելով սևծովյան Բաթում նավահանգստի, Կարսի ու Արդահանի վերաբերյալ անգլո-ռուսական գաղտնի Համաձայնագրով ձեռք բերված պայմանավորվածությունը՝ բրիտանական կառավարությունը խախտում է այդ պայմանավորվածությունը պահպանելու վերաբերյալ նաև Գերմանիայի առջև ստանձնած պարտավորությունը: Ամփոփելով սևծովյան Բաթում նավահանգստի և Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի տարածքային ձեռքբերումների վերաբերյալ հուլիսի 6-ի քննարկման արդյունքները՝ կոնգրեսի նախագահ Բիսմարկը հայտարարում է, որ Բայազետից ու Ալաշկերտի հովտից Ռուսաստանի հրաժարվելը և Բաթումը ազատ առևտրական նավահանգստի վերածելը արդեն նշանակալիորեն փոփոխության է ենթարկում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը՝ վճռորոշ առաջընթաց կատարելով անգլո–ռուսական համաձայնության կայացման և խաղաղության պահպանման գործում: Կոնգրեսի նախագահը մասնավորապես ընդգծում է, որ Ռուսաստանի կատարած տարածքային զիջումները և հատկապես էրզրումից հրաժարվելը այն գինն է, որ Ռուսաստանը վճարում է սևծովյան Բաթում նավահանգիստը ստանալու դիմաց, և բրիտանական կառավարությունը, մեծ շահեր ունենալով այդ տարածաշրջանում, պետք է որ արդեն բավարարված լինի քննարկվող հարցերի վերաբերյալ կայացած համաձայնությամբ:

Կոնգրեսի եվրոպական տերությունների պատվիրակները, որոնց նույնպես արդեն հայտնի էին դարձել անգլիական մամուլում հրապարակված մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի Համաձայնագրի պայմանները, լիովին հավանության են արժանացնում Կարսի, Արդահանի և սևծովյան Բաթում նավահանգստի վերաբերյալ ռուսական պատվիրակների ելույթները: Անդրաշին մասնավորապես շեշտում է, որ Բաթումը ազատ առևտրական նավահանգիստ դարձնելը մեծ նշանակություն ունի եվրոպական բոլոր տերություն-

ների առևտրական հարաբերությունների զարգացման համար: Սև-ծովյան Բաթում նավահանգստի, Կարսի և Արդահանի վերաբերյալ կոնգրեսի հուլիսի 6-ի քննարկումներում դիվանագիտական պար-տություն կրած անգլիական պատվիրակությունը հարկադրված էր հրաժարվել Ռուսաստանի հետ փոխհամաձայնեցված մայիսի 30-ի Համաձայնագրի պայմանները խախտելու նենգավոր դիտավորու-թյունից: Արդյունքում, ի վերջո, անգլիական պատվիրակությունը իր համաձայնությունն է հայտնում Ռուսաստանի կազմում Բաթումը ազատ առևտրական նավահանգիստ դարձնելուն՝ այդ կապակցու-թյամբ սկզբունքորեն չպնդելով նաև փոփոխության ենթարկելու մի-ջազգային պայմանագրերով ամրագրված Նեղուցների կարգավի-ճակը: Միաժամանակ, անգլիական պատվիրակությունը, հանձին Դիզրայելիի, որպես փոխհատուցում Բաթումը ազատ առևտրական նավահանգիստ դարձնելու և Բայազետն ու Ալաշկերտի հովիտը Թուրքիային վերադարձնելու Ռուսաստանի պատրաստակամությա-նը, այլևս չի առարկում, որ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Կարսը և Արդահանը՝ իրենց շրջաննե-րով, անցնեն Մոսկովյան կայսրության տիրապետության տակ[234]:

Հուլիսի 9-ի հերթական՝ 16-րդ նիստում, ռուսական պատվիրա-կության երկրորդ անդամ Շուվալովը կոնգրեսին է ներկայացնում Թուրքիային վերադարձվելիք տարածքների վերաբերյալ անգլո-ռու-սական պատվիրակությունների կազմած հոդվածի նախագիծը, ըստ որի՝ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Ռուսաստանը հրաժարվում էր Սան Ստեֆանոյի հաշ-տության պայմանագրի 19-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանում իր տիրապետության տակ անցած Ալաշկերտի հովտից և Բայազետ քաղաքից, իսկ Թուրքիան, այդ տարածքների փոխարեն, որպես փոխհատուցում, Պարսկաստանին էր զիջում Կոտուր քաղաքը և նրա տարածքը: Ինչ վերաբերում էր Ռուսաստանի տիրապետու-

[234] Documents diplomatiques. Séance du 6 juillet 1878, p. 208-218.

թյան տակ անցած Բաթում նավահանգստին և շրջակա տարածքին, ապա Գորչակովը կոնգրեսին է հաղորդում նրա սահմանների առնչությամբ Դիզրայելիի հետ ձեռքբերված համաձայնության մասին: Այնուհետև, Գորչակովը հայտարարում է, որ Ռուսաստանը մտադիր է Բաթումը դարձնել ապառազմականացված, մաքսերից ազատ միջազգային նավահանգիստ[235]: Այնուամենայնիվ, նշում է Շուվալովը, դեռևս չլուծված էր մնում Ռուսաստանի համար չափազանց կարևոր մի հարց, որը վերաբերում էր ռուս-թուրքական սահմանը Բաթումից և Կարսից ըստ հնարավորին հեռու նշանակելուն, մինչդեռ անգլիացիները ձգտում էին Ռուսաստանի հետ Թուրքիայի սահմանագիծը մոտեցնել ընդհուպ այդ երկու քաղաքների պարիսպները[236]: Ռուս-թուրքական սահմանի որոշումից էր կախված խաղաղությունը կամ պատերազմը Եվրոպայում, փաստում էր Շուվալովը[237]: Ի վերջո, կոնգրեսը միաձայն ընդունում է Բիսմարկի առաջարկությամբ ռուսական, անգլիական և գերմանական երկրորդական պատվիրակներից կազմված հանձնաժողովի փոխզիջումային սահմանագիծը, որով և Ռուսաստանին կենսականորեն շահագրգռող հարցը այդպիսով վերջնականապես լուծվում է[238]:

Ինչ վերաբերում էր ռուսական զորքերը Թուրքիային վերադարձված տարածքներից դուրս բերելու ժամկետին, ապա Շուվալովը վճռականորեն հայտարարում է, որ Ռուսաստանը Էրզրումը Թուրքիային կհանձնի միայն այն ժամանակ, երբ Բաթում նավահանգիստը՝ իր տարածքով, կանցնի Ռուսաստանի լիակատար տիրապետության ներքո[239]:

Հուլիսի 10-ին կայացած կոնգրեսի 17-րդ նիստում թուրքական պատվիրակության ղեկավար Ալ. Կարաթեոդորին առաջ է քաշում Ասիայում Ռուսաստանի ձեռքբերած տարածքների դիմաց նրան օս-

[235] Նույն տեղում, Protocole N°16.Séance du 9 juillet 1878, p.233-241:
[236] П.А. Шувалов, նշվ. աշխ., էջ 107:
[237] Նույն տեղում:
[238] Նույն տեղում, էջ 105:
[239] Documents diplomatiques. Protocole N°17.Séance du 10 juillet 1878, p.243.

մանյան պարտքի մի մասի վճարմանը մասնակից դարձնելու հարցը: Ի պատասխան, Շուվալովը հայտարարում է, որ հաղթանակած լինելով Եվրոպայում և Ասիայում, Ռուսաստանը ոչինչ չի վճարի այդ տարածքների համար և, ընդհանրապես, ոչ մի առնչություն չունի օսմանյան պարտքի վճարման հանգամանքների հետ: Իր հերթին, Գորչակովը առավել վճռականորեն մերժում է իրեն չափազանց զարմացրած թուրքական պատվիրակի ներկայացրած այդ առաջարկը: Հենվելով ռուսական պատվիրակների փաստարկված վճռական առարկությունների վրա՝ Բիսմարկը հայտարարում է, որ կոնգրեսի օրակարգային հարց դարձնելու թուրքական առաջարկը համարում է անիրականանալի[240]:

Ի վերջո, Արևմտյան Հայաստանի տարածքների և սևծովյան Բաթում նավահանգստի վերաբերյալ տերությունների կայացրած միասնական որոշումները արձանագրվում են 1878 թ. հուլիսի 13-ին կոնգրեսի ընդունած Բեռլինի դաշնագրում՝ ստանալով միջազգային իրավունքի ուժ: Այսպես. Բեռլինի կոնգրեսի որոշման համաձայն՝ Թուրքիան Ռուսաստանին է զիջում սևծովյան Բաթում նավահանգիստը և նրա տարածքը: Բեռլինի դաշնագրի 59-րդ հոդվածում շեշտվում էր, որ Ռուսաստանի տիրապետության ներքո Բաթումը դառնալու է ապառազմականացված, միջազգային առևտրական ազատ նավահանգիստ՝ պորտո-ֆրանկո:

Բեռլինի կոնգրեսի դաշնագրի 58-րդ հոդվածի համաձայն՝ Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի տիրապետությանն էին տրվում Կարսի և Արդահանի տարածքները, իսկ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին անցած Ալաշկերտի հովիտը և Բայազետը՝ պատմական Հայաստանի Վաղարշակերտ, և Դարույնք քաղաքները՝ 9 հազ. 600 քառ. կմ տարածությամբ, վերադարձվում էին թուրքական իշխանությանը: Ռուսաստանի վերադարձրած այդ տարածքների փոխարեն, կոնգրեսի

[240] Նույն տեղում, էջ 244-245:

որոշմամբ, որպես փոխհատուցում, թուրքական կառավարությունը Պարսկաստանին է զիջում 5 հազ. բնակչությամբ Կոտուր քաղաքը և նրա 150 քառ. կմ տարածքը:

Վերջապես, հուլիսի 13-ին կայացած կոնգրեսի աշխատանքների ավարտական՝ 20-րդ նիստում վեհաժողովի մասնակից յոթ տերությունների պատվիրակները հանդիսավոր պայմաններում ստորագրում են ֆրանսերենով կազմված Բեռլինի հաշտության պայմանագրի յոթ բնագրերը: Բեռլինի հաշտության պայմանագրի յոթ բնօրինակների ստորագրության արարողակարգի ավարտից հետո նախագահ Բիսմարկը իր ավարտական հանդիսաճառում գոհունակությամբ շեշտում է, որ կոնգրեսը՝ իր կայացրած որոշումներով, նշանակալի ծառայություն է մատուցել Եվրոպային: Եթե անհնար էր իրականացնել կոնգրեսից ակնկալվող բոլոր սպասելիքները, այնուամենայնիվ, իր համոզմունքն էր արտահայտում կոնգրեսի նախագահը, պատմությունն ըստ արժանվույն կգնահատի կոնգրեսի հետապնդած նպատակները, նրա կատարած աշխատանքը, որովհետև կոնգրեսի մասնակից պատվիրակությունների միջև կայացած համաձայնությունների շնորհիվ վերացել է Եվրոպայի խաղաղությանը լրջորեն սպառնացող պատերազմի վտանգը: Կոնգրեսի այս հաջողությունը ոչ մի քննադատություն չի կարող նսեմացնել, շեշտում էր Բիսմարկը, և ինքը լիովին վստահ է, որ Եվրոպայի կայացրած համաձայնությունը կհարատևի, իսկ կոնգրեսում պատվիրակությունների միջև ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի դրսևորումները կամրապնդեն ու կհամախմբեն մեր կառավարությունների բարեկամական հարաբերությունները, ոգևորությամբ իր հանդիսաճառն է ավարտում Բիսմարկը[241]:

Ի կատարումն Բաթում նավահանգիստը Ռուսաստանին հանձնելու Բեռլինի կոնգրեսի որոշման՝ կայսր Ալեքսանդր 2-րդի թագադրման տարեդարձի օրվա նախօրյակին՝ օգոստոսի 25-ին,

[241] Նույն տեղում, Protocole N°20. Séance du 13 juillet 1878, p. 268-270.

առանց որևէ թշնամական միջադեպերի հանդիպելու, ռուսական զորամիավորումները մտնում են Բաթում: Միաժամանակ, նույն օրը Բաթումի նավահանգստում խարիսխ են գցում ռուսական չորս ռազմանավեր: Օգոստոսի 31-ին թուրքական բանակի վերջին միավորումները ռազմանավերով հեռանում են Բաթում նավահանգստից: Քաղաքից հեռացող թուրքական իշխանությունների կիրառած հարկադրական միջոցառումների հետևանքով, ինչպես նաև ինքնակամ կերպով Թուրքիա են տեղափոխվում 30 հազ. մուսուլման բնակիչներ: Սեպտեմբերի 1-ին Կովկասի տարածքում և սևծովյան առափնյա շրջաններում ռազմական դրությունը վերացվում է: Բաթում նավահանգստից թուրքական վերջին զորամիավորումների հեռանալուց հետո միայն ռուսական զորքերը սեպտեմբերի 7-ին դուրս են գալիս Արևմտյան Հայաստանի քաղաք-ամրոց Էրզրումից:Ռուսաստանին անցած 26 հազ. քառ. կմ տարածության վրա սեպտեմբերի 20-ին մոտ 4 հազ. քառ. կմ սահմաններում ռազմական նահանգապետի ղեկավարության ներքո ստեղծվում է Բաթումի մարզը: Հոկտեմբերի 8-ին Բաթումը հայտարարվում է մաքսերից ազատ, միջազգային առևտրական նավահանգիստ՝ պորտո-ֆրանկո, և այդ կարգավիճակը պահպանվում է մինչև 1886 թ. հուլիսը: Անցնելով Ռուսական կայսրության տիրապետության տակ՝ Բաթումի մարզը ապրում է տնտեսական նշանակալի վերելք, մասնավորապես՝ 1883 թ. Բաթում-Թբիլիսի-Բաքու երկաթգծի և 1907 թ. Բաքու-Բաթում նավթամուղի շահագործման հետևանքով:

Արևմտյան Հայաստանից Ռուսաստանին անցած Արդահանի և Կարսի շրջանների հիման վրա կայսր Ալեքսանդր 2-րդի 1878 թ. նոյեմբերի 1-ի հրովարտակով Կովկասի փոխարքայության կազմում՝ 19 հազ. քառ. կմ տարածքի սահմաններում, ստեղծվում է Կարսի մարզը: Ռուսական կայսրության տիրապետության ներքո Արևմտյան Հայաստանի այդ մի փոքր հատվածը փրկվում է թուրքական դարավոր բռնակալության հայահալած քաղաքականության վայրագ ճնշումներից և դառնում հայ ժողովրդի ազգային հա-

մախմբման, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման կենտրոններից մեկը: Հետագայում, սակայն, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով, հայ ժողովրդի պատմական հայրենիքի անբաժան մասը կազմող Կարսի մարզը վերադարձվում է բոլշևիկյան ղեկավարության կողմից «եղբայրական» հորջորջված քեմալական Թուրքիային:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բեռլինի կոնգրեսի որոշումները հիմնականում կայացվում էին 1876 թ. հուլիսի 8-ին Չեխիայի Ռեյխշտադտ ամրոցում և 1877 թ. հունվարի 15-ին Բուդապեշտում կազմված ավստրո-ռուսական երկու Համաձայնությունների, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը փոփոխելու մասին 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ստորագրված անգլո-ռուսական Համաձայնագրի և այդ Համաձայնագրով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի չփոփոխված հոդվածների կարևոր սկզբունքների հիման վրա:

Հիմնվելով 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի սկզբունքների վրա՝ կոնգրեսը Օսմանյան կայսրության կազմում Բուլղարիան աշխարհագրորեն բաժանում է երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների. Բալկանյան լեռնաշղթայից դեպի հյուսիս՝ մինչև Դանուբ գետը, սուլթանի գլխավորությամբ պետք է ստեղծվեր քաղաքական ինքնավարությամբ օժտված, տուրք վճարող Բուլղարական վասալական իշխանապետությունը՝ քրիստոնեական կառավարությամբ և ժողովրդական միլիցիայով: Մինչև Բուլղարական իշխանապետության կազմակերպական Կանոնադրության՝ սահմանադրության ընդունումը՝ Բուլղարիայի ժամանակավոր կառավարումը 9 ամիս պետք է իրականացվեր ռուսական կայսերական կոմիսարի անմիջական ղեկավարությամբ: Կոնգրեսը, Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն, փաստո-

րեն ամբողջովին Ռուսաստանին էր հանձնարարում Բուլղարական իշխանապետության կառավարման ամբողջ համակարգի կազմակերպման գործը:

1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա՝ Բուլղարական իշխանապետության տարածքը սահմանափակելով սոսկ Դանուբ գետի և Բալկանյան լեռնաշղթայի միջև՝ կոնգրեսը, այդպիսով, կանխում էր Բալկաններում Ռուսաստանի անմիջական քաղաքական ազդեցության ներքո սլավոնական Մեծ Բուլղարիայի առաջացման հնարավորությունը:

Կոնգրեսի որոշմամբ, նույնպես 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա, սուլթանի քաղաքական և ռազմական գերագույն իշխանության ներքո, Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ՝ մինչև Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռները, պետք է ստեղծվեր վարչական լայն ինքնավարությամբ օժտված Արևելյան Ռումելիա անվամբ նահանգը: Այդպիսով, թուրքական լիակատար տիրապետությանն էր վերադարձվում Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռներից դեպի հարավ՝ մինչև Էգեյան ծովը գտնվող տարածքը՝ պատմական Մակեդոնիան՝ Ռուսաստանին զրկելով Սև ծովից Բուլղարիայի տարածքով անմիջականորեն դեպի Էգեյան ծով դուրս գալու հնարավորությունից: Թուրքական բանակը պետք է հեռանար Արևելյան Ռումելիա նահանգից: Այդպիսով, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ, թուրքական բանակը ամբողջությամբ դուրս էր բերվում ինչպես Բուլղարական իշխանապետության, այնպես էլ վարչական ինքնավարությամբ օժտված Արևելյան Ռումելիա նահանգից:

Արևելյան Ռումելիա ինքնավար վարչական նահանգը պետք է կառավարեր քրիստոնյա գեներալ-նահանգապետը, որին, տերությունների համաձայնությամբ, հնգամյա ժամկետով պետք է նշանակեր թուրքական սուլթանը: Բեռլինի կոնգրեսի պայմանագրի վավերացումների փոխանակումներից հետո ստեղծվելու էր Եվրոպական հանձնաժողով՝ թուրքական կառավարության հետ Արևելյան

Ռումելիա նահանգի կառավարման վարչական կառուցվածքը մշակելու և գեներալ-նահանգապետի իշխանության և լիազորությունների ոլորտը սահմանելու համար: Ռուսական կայսերական զորքերի կողմից Արևելյան Ռումելիա նահանգի և Հյուսիսային Բուլղարիայի օկուպացման ժամկետը սահմանվում էր ինն ամիս՝ Բեռլինի պայմանագրի վավերացումների փոխանակման օրվանից: Բեռլինի կոնգրեսից հետո բուլղար ժողովուրդն արդեն պետք է պայքար ծավալեր Բալկանյան լեռնաշղթայով արհեստականորեն երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանված Բուլղարիան քաղաքականապես միավորելու և մեկ միասնական, ազգային պետություն ստեղծելու համար:

Կոնգրեսն առանց վերապահումների վավերացնում է Սերբիայի, Չեռնոգորիայի և Ռումինիայի քաղաքական անկախությունը ճանաչող և նրանց սահմաններն ընդարձակող Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածները: Միջազգայնորեն քաղաքական անկախություն ստացած Սերբիան և Չեռնոգորիան արդեն պետք է պայքարեին դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող իրենց պատմական տարածքները ազատագրելու և մեկ միասնական, ազգային պետության մեջ միավորելու համար:

Կոնգրեսի որոշմամբ, ավստրո-ռուսական Համաձայնությունների, անգլո-ռուսական Համաձայնագրի և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանների հիման վրա Ռուսաստանը Թուրքիայից վերադարձնում է Հարավային Բեսարաբիան, ստանում սևծովյան կարևորագույն նավահանգիստ Բաթումը, իսկ Հայաստանում՝ Կարսը, Արդահանը և Արդվինը: Հայաստանում ստանալով Կարսը, Արդահանը և Արդվինը՝ Ռուսաստանը այդպիսով տարածքային պատնեշ էր ստեղծում դեպի Արևելք տարածվելու և պանթուրքական կայսրություն ստեղծելու թուրքական զավթողական ծրագրերի իրականացման դեմ:

Հիմնվելով 1876 թ. հուլիսի 8-ի և 1877 թ. հունվարի 15-ի ավստ-

րո-ռուսական Համաձայնությունների վրա՝ կոնգրեսը որոշում է կայացնում, ըստ որի՝ Ավստրո-Հունգարիան իրավունք է ստանում Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան, իսկ անգլո-գերմանական դիվանագիտության եռանդուն աջակցությամբ՝ նաև ռազմական գրավման ենթարկելու Սերբիայի և Չեռնոգորիայի միջև գտնվող Նովի-Բազարի գավառը՝ այդպիսով ռազմական պատնեշ ստեղծելով երկու իշխանապետությունների քաղաքական միավորման առջև: Այդպիսով, կոնգրեսի որոշումների համաձայն, Ավստրո-Հունգարիան հանդես էր գալիս Սերբիայի գլխավորությամբ հարավսլավոնական հողերի միավորման, դեպի Ադրիատիկ ծով դուրս գալու և Ռուսաստանի քաղաքական ազդեցության ներքո Բալկաններում Մեծ Սերբիայի գերիշխանության հաստատման դեմ: Հաստատվելով Բոսնիայում և Հերցեգովինայում, նշում է ֆրանսիական պատմագրությունը, Ավստրիան այդպիսով մի պատնեշ էր ստեղծում Բալկաններում ռուսական հետագա ընդարձակման դեմ: Այնուամենայնիվ, շեշտում է ֆրանսիական պատմագրությունը, եթե սլավոնները համաձայնվում էին, որպեսզի ավստրո-հունգարական միապետությունը հաստատվեր մեծամասնությամբ իրենցից բաղկացած նահանգներում, ապա դրա դիմաց, որպես փոխհատուցում, ստանում էին իրենց սահմաններն ընդարձակած և անկախացած մի Սերբիա ու մի Չեռնոգորիա, մի ինքնավար Բուլղարիա և մի արտոնյալ Ռումելիա[242]: Իսկ Նովի-Բազարի սանջակը Ավստրո-Հունգարիայի կողմից ռազմական գրավման ենթարկելու, դրանում կայազորներ տեղակայելու, ստրատեգիական և առևտրական ճանապարհներ կառուցելու միակ նպատակը երկու սերբական պետությունների կենտրոնների՝ Բելգրադի և Ցետինեի միջև բոլոր տեսակի հարաբերությունների կանխարգելումն էր, նշում է ֆրանսիական

[242] Maurice Baumont, L'essor industriel et l'impérialisme colonial (1878-1904), Paris, 1965, p. 119.

պատմագրությունը[243]:

Կոնգրեսը, հիմնվելով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համապատասխան հոդվածի վրա, թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր «Կրետե կղզում բարեխղճորեն կիրառել 1868 թ. կազմակերպական Կանոնադրությունը, այն փոփոխություններով, որոնք կճանաչվեն արդարացի»: Միաժամանակ կոնգրեսը թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր «տեղական կարիքներին հարմարված նմանօրինակ Կանոնադրություններ» կիրառել նաև թուրքական տիրապետության տակ մնացած «Եվրոպական Թուրքիայի մյուս մասերում» և, 61-րդ հոդվածի համաձայն, «առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարեփոխումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից»:

Հօգուտ Հունաստանի՝ թուրք-հունական սահմանագծի փոփոխման կապակցությամբ երկու երկրների միջև փոխադարձ համաձայնություն չկայանալու պարագայում տերություններն իրենց իրավունք էին վերապահում բանակցող կողմերին առաջարկելու իրենց միջնորդությունը:

Բեռլինի կոնգրեսի աշխատանքների ընթացքում՝ հունիսի 4-ին, անգլո-թուրքական դաշնակցային պայմանագիրը վավերացնող հուլիսի 7-ի սուլթանական հրովարտակի հիման վրա, հուլիսի 12-ին Անգլիան Օսմանյան կայսրության կազմում կառավարելու իրավունքով գրավում է միջերկրածովյան Կիպրոս կղզին:

Այդպիսով՝ 1876 թ. հուլիսի 8-ի և 1877 թ. հունվարի 15-ի ավստրո-ռուսական Համաձայնությունների, 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի և այդ Համաձայնագրով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի չփոփոխված հոդվածների կարևոր սկզբունքների հիման վրա Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշում-

[243] История XIX века. Под ред. Лависса и Рамбо, Москва, 1939, т. 7, с. 446.

ներով Բալկանյան թերակղզում թուրքական դարավոր տիրապետությունը վերացվում էր Սերբիայում, Չեռնոգորիայում, Ռումինիայում, Բուլղարական վասալական իշխանապետությունում, վարչական լայն ինքնավարությամբ օժտված Արևելյան Ռումելիա նահանգում, Օսմանյան կայսրության կազմում Ավստրո-Հունգարիայի գրաված սլավոնական մարզեր Բոսնիայում և Հերցեգովինայում, իսկ հունիսի 4-ի անգլո-թուրքական Դաշնակցային պայմանագիրը հուլիսի 7-ին վավերացված սուլթանական հրովարտակով՝ Օսմանյան կայսրության կազմում կառավարելու իրավունքով Անգլիայի գրաված Միջերկրական ծովի Կիպրոս կղզում: 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներով թուրքական դարավոր տիրապետությունը վերացվում էր ռուսական կայսրությանն անցած Հարավային Բեսարաբիայի, սևծովյան Բաթում նավահանգստի, իսկ Հայաստանում՝ Կարսի, Արդահանի և Արդվինի տարածաշրջաններում:

Բեռլինի կոնգրեսում ռուսական պատվիրակության փաստացի ղեկավար Շուվալովը, «Բեռլինի կոնգրեսի մասին» իր հուշագրություններում շեշտելով, որ Ռուսաստանի բալկանյան քաղաքականության և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի նկատմամբ եվրոպական տերությունների ցուցաբերած թշնամական վերաբերմունքի, ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի կրած մարդկային և նյութական ահռելի կորուստների և զոհողություններին, անգլո-ռուսական լարված հարաբերությունների և նույնիսկ Ռուսաստանի դեմ անգլո-ավստրիական հավանական պատերազմի բռնկման պայմաններում ընդունված Բեռլինի կոնգրեսի որոշումները պետք է ոչ միայն չքննադատել, այլ, ընդհակառակը, զարմանալ բոլոր այն զիջումների վրա, որոնք արվել էին Ռուսաստանին[244]: Ռուսաստանի համար լավ կամ վատ էին կոնգրեսի կայացրած որոշումները, այնուամենայնիվ, դրանք ռուսական լիազոր ներկայացու-

[244] П.А. Шувалов, նշվ. աշխ., էջ 104:

ցիչների պատասխանատվությամբ չէին, որ ընդունվել էին, շեշտում է Շուվալովը: Կոնգրեսի յուրաքանչյուր նիստի հաշվետվությունը, փաստում է նա, անմիջապես հեռագրով հաղորդվում էր Ս. Պետերբուրգ, և քննարկման ենթարկված յուրաքանչյուր հոդված, մինչև դրա հաստատումը, ստանում էր կայսրի համաձայնությունը: Այդպիսով՝ ըստ Շուվալովի՝ Բեռլինի կոնգրեսի բոլոր վերջնական որոշումները կայացվում էին կայսր Ալեքսանդր 2-րդի համաձայնությունը նախապես ստանալուց հետո միայն[245]:

Շուվալովի վկայությամբ, Ռուսաստանի համար նպաստավոր որոշումներ կայացնելու նպատակով, ռուսական պատվիրակները քննարկվող վիճահարույց հարցերում շատ հաճախ կոնգրեսից դուրս դիմում էին նախագահ Բիսմարկի օգնությանը և անձնական միջնորդությանը: Օրինակ՝ Բաթումի հարցում հօգուտ Ռուսաստանի աջակցություն ստանալու նպատակով Շուվալովը կոնգրեսից դուրս դիմում է Բիսմարկին՝ խնդրելով նրան ապացուցել կոնգրեսում աջակցություն ցույց տալու պատրաստակամության վերաբերյալ նախապես տված իր խոստումը: Ինչպես նշում է Շուվալովը իր հուշագրություններում, այդ նպատակով նա Բիսմարկին է այցելում նրա ճաշի ժամանակ՝ խնդրելով նրան հօգուտ Ռուսաստանի համոզելու Բիկոնսֆիլդին՝ զիջելու Բաթումի հարցում: Ընդառաջելով Շուվալովի խնդրանքին՝ Բիսմարկը անմիջապես մեկնում է անգլիական կառավարության ղեկավարի նստավայրը և, ինչպես փաստում է Շուվալովը, երկու ժամ անց հօգուտ Ռուսաստանի Բաթումի հարցն արդեն լուծված էր[246]:

Լավատեղյակ լինելով 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական փոխհամաձայնեցված Համաձայնագրի պայմաններին՝ Բիսմարկը Բիկոնսֆիլդին նկատել է տալիս անշեղորեն հետևելու Ռուսաստանի հետ կայացրած պայմանավորվածությունների կատարմանը՝ շեշտելով, որ «լավագույն քաղաքականությունը ազնիվ քաղաքակա-

[245] Նույն տեղում:
[246] Նույն տեղում, էջ 105-106:

նությունն է և անհրաժեշտ է կատարել խոստումները, եթե՝ անգամ դրանք սխալմամբ են տրվել»[247]:

Վճռական էր Բիսմարկի մոտեցումը նաև սևծովյան Վառնա նավահանգիստը Բուլղարական իշխանապետությանը հանձնելու ռուսական պահանջի պարագայում: Հունիսի 15-ի երեկոյան, այցելելով թուրքական պատվիրակներին, ավելի քան մեկ ժամ տևող տեսակցության ընթացքում Բիսմարկը նրանց ներկայացնում էր Վառնա նավահանգիստը ռուսներին հանձնելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ 1878 թ. մայիսի 30-ի Համաձայնագրով այն արդեն անդառնալիորեն այլևս նրանց չի պատկանում, և որ այդ նավահանգիստը պահելու ուղղությամբ նրանց գործադրած ջանքները լիովին ապարդյուն են[248]:

Գնահատելով Բիսմարկի վճռական դերը ռուսական պատվիրակների խնդրանքները մշտապես իրականացնելու գործում՝ Շուվալովը հետևյալ պատասխանն է տալիս կոնգրեսում Ռուսաստանի հանդեպ նախագահ Բիսմարկին բացասական դեր վերագրողներին. «եթե թվելու լինենք բոլոր այն դեպքերը, երբ մենք նրան էինք դիմում, և երբ նա կարծում էր, որ մեզ ծառայություն է մատուցել, անարդարացի կլինի, ինչպես դա արվում էր Ս. Պետերբուրգում, նրան թշնամական վերաբերմունք վերագրել Ռուսաստանի հանդեպ»[249]: Խոսելով կոնգրեսում քննարկվող հարցերի կապակցությամբ ստեղծված լարված իրադրության մասին՝ Շուվալովը շեշտում է, որ կոնգրեսի յուրաքանչյուր նիստում կային խզման բավականաչափ առիթներ: Բավական էր սոսկ մեկ տարաձայնություն, նույնիսկ պատվիրակների մեծամասնությունը մեզ պաշտպանելու դեպքում անգամ, որպեսզի կոնգրեսը տապալվեր, հավաստում է Շուվալովը[250]:

---

[247] Նույն տեղում, էջ 106:
[248] Bareilles B., նշվ. աշխ., էջ 85-86:
[249] П.А. Шувалов, նշվ. աշխ., էջ 104-105:
[250] Նույն տեղում, էջ 104:

Կոնգրեսի աշխատանքային օրակարգի տրամաբանական ընթացակարգն ապահովելու և քննարկվող հարցերում ավստրո-ռուսական, անգլո-ռուսական համաձայնագրերի և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի չփոփոխված էական սկզբունքների հիման վրա անշեղորեն որոշումներ կայացնելու գործում վճռական էր զինվորական խստությամբ և անառարկելի միջամտություններով հանդես եկող կոնգրեսի նախագահ Բիսմարկի դերը, որին, Շուվալովի վկայությամբ, առանց բացառության, ենթարկվում էին բոլոր տերությունների պատվիրակները[251]: Ամփոփելով և հանրագումարի ենթարկելով Բեռլինի կոնգրեսի կայացրած բոլոր որոշումների ընդհանուր արդյունքները՝ Շուվալովը եզրակացնում է. Թուրքիայի հետ անմիջականորեն Ռուսաստանի կնքած հաշտության նախկին պայմանագրերը, վերջին պատերազմի օգուտների համեմատությամբ, երբեք այդքան շահավետ չեն եղել[252]:

Համաձայնելով 1876 և 1877 թթ. ավստրո-ռուսական և 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական փոխհամաձայնեցված պայմնավորվածությունների սկզբունքների հիման վրա ընդունելու համաեվրոպական կոնգրեսի նախագահությունը և ղեկավարվելով Գերմանիայի և Ռուսաստանի միջև «առաջնահերթ նշանակություն ունեցող» բարեկամությունը պահպանելու քաղաքական անհրաժեշտությամբ, Բիսմարկը կոնգրեսում վճռականորեն հետևում էր ավստրո-ռուսական և անգլո-ռուսական Համաձայնությունների դրույթներից անշեղորեն բխող որոշումների կայացմանը: Ավելին, ինչպես նշում է Բիսմարկը, Բեռլինի կոնգրեսում չի արտահայտվել ռուսական որևէ ցանկություն, որի ընդունմանը չի ընդառաջել Գերմանիան, երբեմն՝ նույնիսկ անգլիական կառավարության ղեկավարի նկատմամբ վճռական քայլեր ձեռնարկելու միջոցով, եթե անգամ նա հիվանդ պառկած էր լինում անկողնում[253]: Չնայած Ռուսաստանի կանցլերի

[251] Նույն տեղում, էջ 102:
[252] Նույն տեղում, էջ 104:
[253] О.Бисмарк, Мысли и воспоминания.Т.II. М., 1940, с.101.

նկատմամբ դրսևորած իր անբարյացակամ վերաբերմունքին, այնուամենայնիվ, Բիսմարկը շեշտում է, որ ռուսական քաղաքականությանը իրենց բարեկամությունը ապացուցելու նպատակով, առանց սեփական շահերը վնասելու, կոնգրեսում իրենք անառարկելիորեն առաջնորդվում էին Գորչակովի ցանկությունների համաձայն[254]:

Ամփոփելով ավստրո-ռուսական և անգլո-ռուսական Համաձայնագրերով փոփոխությունների ենթարկված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանների սկզբունքների հիման վրա Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումների քաղաքական արդյունքները՝ հետագայում հրատարակած իր հուշագրություններում Բիսմարկը շեշտել է,որ Թուրքիայի հետ Ռուսաստանի կնքած Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, նաև Բեռլինի կոնգրեսից հետո էլ, այնուամենայնիվ, մնաց Թուրքիայի հետ երբևիցե Ռուսաստանի կնքած պայմանագրերից ամենաշահավետ, եթե ոչ՝ միակ ամենաշահավետ պայմանագիրը. Փոքր Ասիայում Ռուսաստանի նվաճումներն էին Բաթումը, Կարսը և այլն[255]: Բիսմարկը նշում է, որ նույնիսկ անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Բուլղարիան երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումը իրականում էական նշանակություն չուներ նրանց միավորման համար: Սան Ստեֆանոյի նախնական՝ իգնատևյան պայմանների և կոնգրեսի ընդունած որոշումների միջև եղած տարբերությունը, շեշտում է Բիսմարկը, քաղաքական առումով, նշանակություն չուներ, որն ապացուցեց Հյուսիսայինի հետ Հարավային Բուլղարիայի միավորման դյուրությունը: Այնուամենայնիվ, եզրակացնում է Բիսմարկը, Հարավային Բուլղարիան եթե նույնիսկ չմիավորվեր Հյուսիսայինի հետ, ռուս-թուրքական պատերազմից հետո էլ Ռուսաստանի ընդհանուր ձեռքբերումները, անգամ Բեռլինի կոնգրեսի որոշումների արդյունքում, կմնային ավելի փայլուն, քան Թուրքիայի հետ կնքած նախկին պայմանագրերով

[254] Նույն տեղում, էջ 195:
[255] Նույն տեղում, էջ 100:

Ռուսաստանի ձեռք բերած նվաճումները[256]:

Բեռլինի կոնգրեսում թուրքական պատվիրակության ղեկավար, ծագումով Կ.Պոլսի հույն արիստոկրատ Ալ. Կարաթեոդորի փաշան, ներկայացնելով նախագահ Բիսմարկի վճռորոշ դերը կոնգրեսի աշխատանքները ղեկավարելու գործում, թուրքական կառավարությանը հղած իր գաղտնի զեկուցագրում շեշտում էր. Բեռլինի կոնգրեսում բացարձակորեն գերիշխում էր իշխան Բիսմարկը: Նրա հանդեպ բոլոր պատվիրակների տածած ակնածանքը և համակած երկյուղը համընդհանուր էր: Որպես կոնգրեսի գերագույն հաշտարար՝ շատ հաճախ Բիսմարկը նախապես իր կարծիքն էր արտահայտում՝ այդպիսով քննարկվող հարցերի նկատմամբ կանխորոշելով պատգամավորների տեսակետները: Կոնգրեսի կազմած արձանագրությունները և ընդունած պայմանագիրը մեծամասամբ նրա գաղափարների, կամքի և հաճախ նրա անհամբերատարության արգասիքն են, ընդգծում էր թուրքական պատվիրակության ղեկավարը: Շեշտելով կոնգրեսի աշխատանքները խաղաղ հանգրվանի հասցնելու ուղղությամբ Բիսմարկի կատարած վճռական դերը՝ Կարաթեոդորին շեշտում էր. պատերազմի վերսկսման վտանգը կանխվում էր սկզբունքային կարևոր հարցերը տերությունների միջև կայացած համաձայնությունների շնորհիվ և այդ հարցերը հաշտարարությամբ լուծելու երախտիքը լիովին պատկանում է Բիսմարկին: Բացահայտ կերպով ներկայացնելով Բիսմարկի կարծիքը Օսմանյան կայսրության հետագա գոյատևման և ներքին բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ՝ Կարաթեոդորին իր կառավարությանը ուղղակիորեն հաղորդում էր, որ Բիսմարկը չի հավատում Օսմանյան կայսրության ապագային, մեր բարեփոխումների անկեղծությանը, դրանց արդյունավետությանը և համոզված է, որ մեզանում իրական առաջընթացն անհնար է[257]:

Հիմնականում վերլուծելով Բուլղարիայի վերաբերյալ Բեռլինի

[256] Նույն տեղում, էջ 100-101:
[257] Տե՛ս Bareilles B., նշվ. աշխ., էջ 67-68:

կոնգրեսի կայացրած որոշումները՝ թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդորին իր կառավարությանն ուղղած գաղտնի զեկուցագրում հանգում էր հետևյալ եզրակացություններին. Բուլղարիայի վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումները, Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հոդվածների համեմատությամբ, Օսմանյան կայսրության համար ստեղծում են անհամեմատ լավագույն իրավիճակ: Այսպես. Եվրոպական Թուրքիայի երեք քառորդն ընդգրկող, կայսրությունը երկու մասի բաժանող, Կ.Պոլսի մատույցներից մինչև Բոսնիա տարածվող, Թուրքիայից Սև և Էգեյան ծովերի գրեթե ամբողջ մերձծովյան շրջանները գրավող, Եվրոպական Թուրքիան առանց բնական սահմանների, առանց անհրաժեշտ պաշտպանության և առանց հաղորդակցության ուղիների թողնող, Օսմանյան կայսրության մայրաքաղաքին և Նեղուցներին անմիջական սպառնալիք ստեղծող Մեծ Բուլղարիան, այժմ, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ, սահմանափակվում է սոսկ Բալկանյան լեռնաշղթայի և Դանուբ գետի միջև[258]:

Այդպիսով, իր գաղտնի զեկուցագրում ընդգծում է Կարաթեոդորին, Բեռլինի կոնգրեսի որոշմամբ, Օսմանյան կայսրությունը վերստանում է իր պաշտպանության բնական սահմանը՝ Բալկանյան լեռնաշղթան, Սև և Էգեյան ծովերի ափամերձ տարածքների մեծ մասը, իր անմիջական տիրապետությունն է վերահաստատում Եվրոպական Թուրքիայի աշխարհագրական և վարչական սիրտը հանդիսացող Մակեդոնիայի վրա, Բալկաններում վերականգնում իր տարածքների միասնականությունը, վերադարձնում ամբողջ Արևելյան Ռումելիա ինքնավար նահանգը, որտեղ, այնուամենայնիվ, սուլթանը պահպանում է իր իրական և կայուն իշխանությունը[259]:

Թուրք պատմաբան Օսման Նուրին, ներկայացնելով Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումների հետևանքով Բալկաններում Օս-

[258] Նույն տեղում, էջ 127-128:
[259] Նույն տեղում, էջ 128:

մանյան կայսրության կրած մարդկային և տարածքային կորուստների հանրագումարը՝ 1909 թ. Կ.Պոլսում հրատարակած «Աբդուլ Համիդ Երկրորդը և նրա իշխանության շրջանը» իր գրքում նշում է. «Բեռլինի պայմանագրով կատարված տարածքային փոփոխությունները ամբողջապես փոխեցին Եվրոպայի քարտեզը և այդ աշխարհամասում վերանայվեցին երեք Մեծ տերությունների և հինգ փոքր պետությունների սահմանները»[260]: «Բացառությամբ Բեսարաբիայի,- նշում է նա,- այդ բոլոր փոփոխությունները կատարվեցին ի վնաս օսմանյան պետության, և մեր պետությունը կորցրեց Եվրոպայում ունեցած հողերի և ժողովրդի երկու հինգերորդից ավելին»[261]: Ամփոփելով Օսմանյան կայսրության կրած տարածքային ու մարդկային կորուստների հետևանքները՝ թուրք պատմաբանը նշում է. «Այսպիսով, երբ օսմանյան պետությունը պատերազմից առաջ Եվրոպայի աշխարհամասում ուներ 365.300 քառակուսի կիլոմետր հող, Բեռլինի վեհաժողովից հետո մնաց երկու հարյուր հազար քառակուսի կիլոմետրից պակաս հող, իսկ ընդհանուր բնակչությունն էլ 11 մլն-ից կրճատվեց մինչև 4 մլն 600 հազարի»[262]: Համեմատելով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի և հօգուտ Օսմանյան կայսրության Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումների միջև եղած տարբերությունը՝ Օսման Նուրին եզրակացնում է. «Եթե Սան Ստեֆանոյի պայմանագիրը կենսագործվեր, մեր կորցնելիք վայրերը սրանից էլ ավելի շատ լինելու չէին: Այնուամենայնիվ,- շեշտում է նա,- Բեռլինի պայմանագիրը մեզ համար Սան Ստեֆանոյի պայմանագրի համեմատությամբ շատ ավելի օգտակար է: Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ երկիրը բաժանվում էր իրարից անջատ չորս մասի, իսկ Բեռլինի պայմանագրից հետո Եվրոպայում մեր երկրամասը մնաց որպես բնական սահմաններով

[260] Օսման Նուրի, նշվ. աշխ., էջ 151:
[261] Նույն տեղում:
[262] Նույն տեղում, էջ 151-152:

շրջափակված միացյալ և երկարավուն մի հողամաս»[263]: Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումների կապակցությամբ թուրքական հասարակական տարբեր շրջանների դրսևորած վերաբերմունքի մասին թուրք պատմաբանը գրում է. «Ինչ վերաբերում է այն հարցին, թե Բեռլինի պայմանագիրը օսմանցիների կողմից ինչպիսի ընդունելության արժանացավ, ապա այդ ժամանակ մեզանում հասարակական կարծիքը որոշ չափով հակասական էր: Ոմանք հայտնում էին իրենց ուրախությունն ու գոհունակությունը: Պաշտոնյաների դասը բախտավոր էր ու երջանիկ, որ, հակառակ պետության կորցրած այդքան տարածքներին, իրենց պաշտոնը վարելու համար դեռ մնացել է մի երկիր, կողոպտելու համար մի ժողովուրդ և դատարկելու համար մի գանձարան»[264]: Ինչ վերաբերում էր Օսմանյան կայսրության սուլթանի վերաբերմունքին, «մանավանդ, շատ գոհ էր Աբդուլ Համիդը», գրում է Օսման Նուրին: Հենց Աբդուլ Համիդի «չարաբաստիկ իշխանության առաջին իսկ տարիներին», նշում է Օսման Նուրին, Օսմանյան կայսրությունը արդեն շատ տարածքներ էր կորցրել, «սակայն նրա ինչի՞ն էր պետք, հարց էր տալիս Օսման Նուրին, նա նորից կմնար իր պալատում, անձնատուր կլիներ իր զվարճություններին և հաճույքներին, միահեծան բռնակալի իր տենչանքը կատարել կտար, իսկ մնացյալը կթողներ Աստծու շնորհին»[265]:

Մեկ այլ թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, հանրագումարի հանգեցնելով 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրով փոփոխությունների ենթարկված Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հիման վրա Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներով հօգուտ Օսմանյան կայսրության Բալկաններում և Փոքր Ասիայում կատարված սահմանային տեղափոխությունները, նշում է, որ Բուլղարիայի հարավային սահմանը Էգեյան ծովից նշա-

[263] Նույն տեղում, էջ 152-153:
[264] Նույն տեղում, էջ 154-155:
[265] Նույն տեղում, էջ 155:

նակալիորեն դեպի հյուսիս տեղաշարժելու հետևանքով Ռուսաստանը զրկվում էր Էգեյան ծով դուրս գալու հնարավորությունից, և այդպիսով Թուրքիան վերադարձնում էր Մակեդոնիան և Էդիրնեի (Ադրիանապոլսի) նահանգի որոշ տարածքներ, իրավունք ստանում իր բանակները տեղակայելու Բալկանյան լեռնաշղթայի անցումներում, իսկ Արևելքում իր տիրապետությունն էր վերականգնում Ալաշկերտի հովտում և Բայազետում[266]:

Թուրք պատմաբանը հօգուտ Օսմանյան կայսրության է գնահատում Բեռլինի կոնգրեսի ընդունած նաև այն որոշումը, որի համաձայն՝ նախքան Եվրոպական Թուրքիայի տիրապետության տակ մնացած մարզերի կազմակերպական Կանոնադրությունների կիրառումը՝ թուրքական կառավարությունը արդեն պետք է խորհրդակցեր ոչ թե Ռուսաստանի, այլ Արևելյան Ռումելիայի կազմակերպման համար նշանակված Եվրոպական հանձաժողովի հետ՝ շեշտելով, որ այդ հանգամանքը թուրքական կառավարությանը հնարավորություն էր ընձեռելու խուսանավելու և օգտվելու այդ հարցում եվրոպական տերությունների միջև առկա տարաձայնություններից[267]: Սակայն, ինչ վերաբերում էր Ասիական Թուրքիայի նահանգներում կատարվելիք բարենորոգումներին և բարելավումներին, ապա, շեշտում է թուրք պատմաբանը, այդ հարցում, հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված անգլո-թուրքական Պաշտպանողական դաշնակցության պայմանագրի համաձայն, նախաձեռնությունը վերապահվում էր Անգլիային[268]: Սակայն, նշում է նա, Օսմանյան կայսրության օգտին Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներից երկու կարևոր հոդված չի իրականացվում: Առաջինն այն է, նշում է նա, որ իր անկարողության և կասկածամտության պատճառով թուրքական կառավարությունը չի իրականացնում երկու բուլղարական նահանգները աշխարհագրորեն բաժանող Բալկանյան լեռնաշղթայում

[266] Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 14:
[267] Նույն տեղում:
[268] Նույն տեղում:

կայազորներ տեղակայելու վերաբերյալ Բեռլինի կոնգրեսով ճանաչված իր իրավունքը՝ այդպիսով նպաստելով այդ երկու նահանգների դյուրությամբ միավորմանը[269]: Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներից կատարված հաջորդ խախտումը, նշում է նա, թուրքական և անգլիական կառավարությունների բողոքներին հակառակ, Բաթում նավահանգիստը ռազմականացման չենթարկելու վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի ընդունած որոշումը Ռուսաստանի կողմից անտեսնելն էր[270]:

Գնահատելով Ռուսաստանին վերաբերող 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընդհանուր հետևանքները՝ թուրք պատմաբանը եզրակացնում է. այդ պատերազմում տասնյակ հազարավոր սպանվածներ տված, միլիոններ ծախսած, երկրի ներքին հասարակական կյանքը խաթարած Ռուսաստանը վերջնական արդյունքում Արևելքում ձեռք է բերում Կարսը, Արդահանը և Բաթումը, Բալկաններում՝ Բեսարաբիան և, ինչ-որ չափով իր ազդեցության տակ գտնվող Բուլղարիայի և Արևելյան Ռումելիայի միջոցով, մոտենում է Կ.Պոլսին և Նեղուցներին: Սակայն դրանց դիմաց, որպես փոխհատուցում, գրում է թուրք պատմաբանը, Բալկաններում Ռուսաստանի ավանդական ախոյան Ավստրիան, առանց արյուն թափելու, գրավում է Բոսնիան ու Հերցեգովինան և ռազմական գրավման ենթարկում Նովի-Բազարի գավառը, որի հետևանքով նրա իրական ձեռքբերումները ռուսականից շատ ավելի թանկարժեք կարևորություն են ստանում: Դրանցից բացի, ավելացնում է թուրք պատմաբանը, ռուս ժողովրդի արյան գնով անկախացած և իր սահմաններն ընդլայնած Սերբիայի վրա Ավստրիան իր հովանավորությունն է հաստատում[271]:

Բալկաններում ավստրիական ձեռքբերումներից բացի, նշում է թուրք պատմաբանը, Արևելքում Ռուսաստանի ավանդական ախո-

[269] Նույն տեղում, էջ 15:
[270] Նույն տեղում:
[271] Նույն տեղում, էջ 48-49:

յան Անգլիան, նույնպես առանց արյուն թափելու, Կիպրոս կղզին է գրավում[272]: Այդպիսով, եզրակացնում է թուրք պատմաբանը, Բոսնիան և Հերցեգովինան, Նովի-Բազարի գավառը և Կիպրոս կղզին, շարունակելով անվանապես պատկանել Օսմանյան կայսրությանը, իրականում այլևս չէին ենթարկվելու թուրքական իշխանությանը: Սակայն, նշում է թուրք պատմաբանը, Բոսնիա-Հերցեգովինայից, Նովի-Բազարի գավառից և Կիպրոս կղզուց բացի, Բեռլինի կոնգրեսից հետո էլ Օսմանյան կայսրությունը կրկին ունենում է տարածքային կորուստներ: Այսպես. Կիպրոս կղզին գրավելուց անմիջապես հետո՝ 1882թ., Անգլիան նաև տիրանում է 1517 թ.-ից Օսմանյան կայսրությանը պատկանող Եգիպտոսի փոխարքայությանը՝ այդպիսով Ռուսաստանի համեմատությամբ կատարելով անհամաչափորեն ավելի խոշոր տարածքային նվաճումներ:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, նշում է թուրք պատմաբանը, ապա այդ տերությունն էլ, առանց որևէ դժվարությունների, 1881 թ. իր տիրապետությունն է հաստատում 1574 թ.-ից Օսմանյան կայսրությանը պատկանող Թունիսի վրա[273]:

Մեկնաբանելով Բեռլինի կոնգրեսից հետո Օսմանյան կայսրության կրած տարածքային կորուստների հիմնական պատճառները՝ թուրք պատմաբան Բայուրը նշում է, որ Օսմանյան կայսրությանը՝ թեկուզ անվանապես պատկանող Եգիպտոսի և Թունիսի կորուստը, անկասկած, պայմանավորված էր Ռուսաստանի դեմ մղած պատերազմում նրա կրած ջախջախիչ պարտության հետևանքների չափազանց մեծ ազդեցությամբ: Իսկ Ավստրո-Հունգարիայի, Անգլիայի և Ֆրանսիայի տարածքային նվաճումների համեմատ Ռուսաստանի ձեռքբերումները նույնպես պայմանավորված էին Թուրքիայի դեմ մղած պատերազմից խիստ թուլացած դուրս եկած լինելու հետևանքների անմիջական ազդեցությամբ, եզրակացնում է թուրք

[272] Նույն տեղում, էջ 49:
[273] Նույն տեղում:

պատմաբանը[274]: Դեռ ավելին, շեշտում է նա, Բեռլինի կոնգրեսից հետո Բալկաններում և Արևելքում ծավալված աշխարհաքաղաքական իրադարձությունները սկսում են զարգանալ ի վնաս Ռուսաստանի: Մասնավորապես, Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով սլավոնական ժողովուրդների օգտին ամրագրված հոդվածները Բեռլինի կոնգրեսում փոփոխությունների ենթարկվելու հետևանքով, որոնցից էին՝ Բուլղարիան երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու, նրա հարավային սահմանը Էգեյան ծովից դեպի հյուսիս հեռացնելու, սլավոնական Բոսնիա-Հերցեգովինան Ավստրիայի կողմից գրավելու և կառավարելու պայմանները սասանում են ցարական Ռուսաստանի հեղինակությունը սլավոնական ժողովուրդների շրջանում, եզրակացնում է թուրք պատմաբանը[275]:

Ֆրանսիական պատմագրությունը, ամփոփելով Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումների հետևանքները, հիմնականում անդրադառնում է Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի ձեռքբերումներին՝ շեշտելով, որ ոչ մի մասնակցություն չունենալով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին՝ այդ երկու տերությունները, այնուամենայնիվ, կատարում են նշանակալից նվաճումներ: Այսպես. օսմանյան տիրույթների անվտանգությունը Ասիայում երաշխավորելու պատրվակով, իսկ իրականում՝ դեպի անգլիական գաղութ Հնդկաստան տանող ճանապարհից ռուսներին հեռացնելու, ինչպես նաև Սուեզի ջրանցքի անվտանգությունը ապահովելու նպատակով Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու իրավունքով, 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական դաշնակցային պայմանագրի համաձայն, Մեծ Բրիտանիան Արևելյան Միջերկրականում ձեռք է բերում Կիպրոս կղզին այնքան ժամանակով, քանի դեռ Կարսը և Արդահանը կմնային Ռուսաստանի տիրապետության ներքո, նշում է ֆրանսիական պատմագրությունը և ավելացնում, որ

[274] Նույն տեղում:
[275] Նույն տեղում, էջ 19:

ստանալով Կիպրոս կղզին՝ Անգլիան մի պաշտպանական օղակ է ավելացնում Ջիբրալթարի նեղուցից մինչև Բոմբեյ ձգված բրիտանական ռազմական հենակետերի շղթայում[276]:

Ինչ վերաբերում է Ավստրո-Հունգարիային, նշում է ֆրանսիական պատմագրությունը, ապա այդ կայսրությունը, գրավելով Բոսնիան ու Հերցեգովինան, հաստատվում է դեպի Էգեյան ծովի Թեսալոնիկե նավահանգիստը տանող ճանապարհի վրա՝ դրանով խախտելով ռազմաքաղաքական հավասարակշռությունը Բալկանյան թերակղզում՝ գերիշխող դիրք ապահովելով այդ երկրամասի արևմուտքում, իսկ Ռուսաստանը, թվում էր, որ Բուլղարիայի միջոցով պետք է իր գերիշխանությունը հաստատեր թերակղզու արևելյան մասի վրա: Սակայն, շեշտում է ֆրանսիական պատմագրությունը, այդ ժամանակվանից Ավստրիան ավելի է մոտենում Միջերկրական ծովին, նույնիսկ՝ Կ.Պոլսին, քան՝ Ռուսաստանը: Ավելին, ընդգծում է ֆրանսիական պատմագրությունը, Բալկանյան թերակղզու արևմուտքում գերիշխանություն հաստատած Ավստրիայի միջոցով Գերմանիան այդ ժամանակվանից արդեն սկսում է իրականացնել ավստրո-գերմանական կայսրությունների կողմից Մերձավոր և Միջին Արևելք ներթափանցելու՝ «Գրոհ դեպի Արևելք» քաղաքականությունը[277]: Սակայն Բալկանյան թերակղզու միջոցով Մերձավոր և Միջին Արևելք ներթափանցելու ավստրո-գերմանական քաղաքականությունը սրում է հարաբերությունները Անտանտի տերությունների հետ՝ ի վերջո դառնալով Առաջին համաշխարհային պատերազմի հիմնական պատճառներից մեկը:

[276] Տե՛ս История XIX века. Том 7. Москва, 1939, с. 447.
[277] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 20-ԱՄՅԱԿՈՒՄ

1868 թ. Կրետական կազմակերպական Կանոնադրության մեջ կատարված «փոփոխությունները և լրացումները»

Բեռլինի կոնգրեսի դաշնագրի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ թուրքական կառավարության կողմից «փոփոխությունների և լրացումների» ենթարկված Կրետական 1868 թ. կազմակերպական Կանոնադրությունը՝ 1878 թ. հոկտեմբերին ստորագրված սուլթանական հրամանագրով, մտնում է ուժի մեջ:

Գործող կազմակերպական Կանոնադրության մեջ կատարված «փոփոխությունների և լրացումների» համաձայն՝ Կրետե կղզու գեներալ-նահանգապետը սուլթանի կողմից պետք է նշանակվեր կառավարման հնգամյա ժամկետով: Կղզու ընտրովի Ընդհանուր ժողովը պետք է բաղկացած լիներ 80 պատգամավորներից, որոնցից 49-ը լինելու էին քրիստոնյա, իսկ 31-ը՝ մուսուլման: Ընդհանուր ժողովի տարեկան նստաշրջանը լինելու էր հրապարակային և տևելու էր 40 օր: Ընդհանուր ժողովը ձայների երկու երրորդով կարող էր որոշումներ կայացնել կազմակերպական Կանոնադրության մեջ զուտ՝ տեղական կարիքներից բխող փոփոխություններ կատարելու, քաղաքացիական և քրեական դատավարական օրենքներ ընդունելու, հարկային քաղաքականություն իրականացնելու, համայնքային կյանքը կանոնակարգելու վերաբերյալ: Սակայն Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները կարող էին կենսագործվել միայն թուրքական կառավարության հաստատումից հետո: Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ պետական հարկը վճարելուց հետո կղզու եկամուտների որոշակի մասը պետք է օգտագործվեր նաև հասարակականորեն օգտավետ աշխատանքների կատարման, դպրոցների, հիվանդա-

նոցների, հանրային շինությունների, նավահանգիստների ու ճանապարհների բարեկարգման համար:

Դատական իշխանությունը պետք է լիներ ինքնուրույն և միանգամայն անկախ գործադիր իշխանությունից: Կազաները կառավարող կայմակամների մեծամասնությունը բաղկացած էր լինելու քրիստոնյա պաշտոնյաներից: Վարչական կառավարման համակարգում պաշտոնյաների նշանակման նախապատվությունը տրվելու էր համապատասխան պատրաստվածություն և ունակություններ ունեցող տեղաբնիկներին:

Գեներալ-նահանգապետը կղզու ժանդարմերիան հիմնականում պետք է կազմավորեր տեղացի մուսուլմաններից և քրիստոնյաներից՝ միայն անհրաժեշտության դեպքում ծառայության վերցնելով կայսրության մյուս քաղաքացիներին: Ժանդարմերիայի պետին պետք է նշանակեր թուրքական կառավարությունը, իսկ տեղական իշխանությունների կողմից ընտրված սպաները իրենց պաշտոններում պետք է հաստատվեին սուլթանական կառավարության կողմից:

Կղզում թղթադրամները հանվում էին շրջանառությունից, իսկ պաշտոնյաների ռոճիկը պետք է վճարվեր միայն թուրքական մետաղադրամներով: Կղզու բնակիչներին թույլատրվում էր հիմնել գրական ընկերություններ, տպարաններ և հրատարակել կայսրության օրենքներին ու կանոններին համապատասխան օրաթերթեր: Միայն իշխանությունների թույլտվությամբ կղզու բնակիչները կարող էին զենք կրելու իրավունք ունենալ: Գեներալ-նահանգապետության պետահրավական համակարգում հունարենը դառնում էր թուրքերենին իրավահավասար պաշտոնական լեզու: Գեներալ-նահանգապետության պաշտոնական թղթակցությունները, դատավճիռները պետք է կազմվեին թուրքերեն և հունարեն: Քանի որ կղզու մուսուլման բնակիչները հիմնականում խոսում էին հունարեն, ուստի գեներալ-նահանգապետության Գլխավոր խորհրդում քննարկումները, ինչպես նաև դատական նիստերը, կարող էին ընթանալ

հունարեն[278]:

1879 թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված վերջնական հաշտության պայմանագիրը

Բեռլինի դաշնագիրը կայսր Ալեքսանդր 2-րդի կողմից հուլիսի 27-ին վավերացվելուց հետո ռուսական կառավարությունը օգոստոսին սկսում է իր զորքերը դուրս բերել 1877-1878 թթ. պատերազմի ընթացքում մինչև Կ.Պոլսի մատույցները գրաված Թրակիայից ու Մակեդոնիայից: Սակայն, Բեռլինի կոնգրեսի կողմից Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության չվերացված պայմաններով թուրքական կառավարությանը ռուս-թուրքական վերջնական հաշտություն պարտադրելու նպատակով, ռուսական զորքերի ամբողջովին դուրսբերումը կասեցվում է: Ուստի 1878 թ. սեպտեմբերի 27-ին ռուսական բանակի Գլխավոր շտաբը Սան Ստեֆանոյից փոխադրվում է Ադրիանապոլիս:

Ռուսական դիվանագիտության կողմից մի շարք դժվարություններ հաղթահարելուց հետո 1879 թ. փետրվարի 8-ին Կ.Պոլսում կնքված ռուս-թուրքական վերջնական հաշտության պայմանագրով «ցանկանալով ամրապնդել երկու կայսրությունների միջև վերականգնված խաղաղությունը»՝ բանակցող կողմերը համերաշխորեն համաձայնում էին, որ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումներով Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության պայմանագրի մի շարք հոդվածներ «վերացվել կամ փոփոխությունների են ենթարկվել»:

Ինչ վերաբերում էր Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության պայմանագրի այն հոդվածներին, որոնք Բեռլինի կոնգրեսում «չէին վերացվել կամ փոփոխությունների չէին ենթարկվել», վերջնականորեն որոշվում էին բանակցող երկու տերությունների կողմից:

[278] Schopoff A., Les réformes et la protection des chrétiens en Turquie. 1673-1904. Paris, 1904. Règlement organique de l'ile de Crète (1868), p. 600-637.

Պայմանավորվող երկու կողմերը առաջին հերթին համաձայնության էին գալիս Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության պայմանագրի 19-րդ հոդվածով սահմանված Թուրքիայի կողմից Ռուսաստանին վճարվելիք ռազմատուգանքի վերաբերյալ: «Նկատի ունենալով Թուրքիայի ֆինանսական դժվարությունները»՝ ռուսական կառավարությունը ընդառաջում էր պարտված տերության ցանկությանը և համաձայնում ռազմատուգանքի «հաշվված գումարների մեծ մասի վճարումը փոխարինել» Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Ռուսաստանին կատարած «տարածքային զիջումներով»: Ռազմատուգանքի ընդհանուր գումարի մեջ հաշվարկված տարածքների արժեքից բացի, թուրքական կառավարությունը պարտավորվում էր վճարել նաև 802.500.000 ֆրանկ ռազմատուգանք: Պատերազմի ժամանակ Թուրքիայում ռուսական հպատակներին և հիմնարկություններին պատճառած նյութական վնասի փոխհատուցման գումարը՝ մեկ տարվա ընթացքում, պետք է որոշեր և թուրքական կառավարությանը ներկայացներ Կ.Պոլսի ռուսական դեսպանությունը: Սակայն շեշտվում էր, որ պատերազմի ընթացքում Թուրքիայում ռուսական հպատակներին և հիմնարկություններին պատճառած նյութական վնասի փոխհատուցման ընդհանուր գումարը պետք է կազմեր ոչ ավելի, քան 26.750.000 ֆրանկ: Ռուսական և թուրքական կառավարությունների նշանակած հատուկ կոմիսարները պետք է հաշվարկեին երկու կայսրությունների ռազմագերիների վրա երկուստեք կատարած ծախսերը: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր յոթ տարվա ընթացքում փոխհատուցել գումարների այն տարբերությունը, որ ռուսական կառավարությունը ծախսել էր թուրքական ռազմագերիների պահպանության վրա:

Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Թուրքիայի կողմից Ռուսաստանին զիջած տարածքների բնակիչներն իրենց ցանկությամբ կարող էին վաճառել իրենց անշարժ սեփականությունը և երեք տարվա ընթացքում ազատորեն հեռանալ Օսմանյան կայսրության սահմաններից: Երկու տերությունները փոխադարձաբար պարտավորվում էին

չհետապնդել և հալածանքներ չթույլատրել ռուսական կամ օսմանյան այն հպատակների հանդեպ, ովքեր պատերազմի ժամանակ կապեր էին ունեցել երկու կայսրությունների բանակների հետ: Թուրքական իշխանությունները պարտավորվում էին արգելքներ չհարուցել այն ընտանիքներին, որոնք կցանկանային ռուսական զորքերի հետ միասին հեռանալ Թուրքիայից:

1879 թ. փետրվարի 8-ին Կ.Պոլսում կնքված ռուս-թուրքական վերջնական հաշտությամբ՝ նույնությամբ ուժի մեջ էին մտնում մինչև պատերազմը երկու տերությունների միջև կնքված բոլոր պայմանագրերը, համաձայնությունները և ստանձնած պարտավորությունները:

Երկու տերությունները համաձայնվում էին, որ փետրվարի 8-ին Կ.Պոլսում իրենց կնքած ռուս-թուրքական հաշտության վերջնական պայմանագիրը պետք է վավերացնեին և վավերացված երկու նույնանման տեքստերը փոխանակման ենթարկեին Ս. Պետերբուրգում երկու շաբաթվա ընթացքում կամ, հնարավորության դեպքում, ավելի շուտ[279]:

1879 թ. փետրվարի 8-ին կնքված ռուս-թուրքական վերջնական հաշտության պայմանագրի կնքումից հետո միայն ռուսական զորքերը, բացառությամբ Բուլղարիայի, ամբողջությամբ հեռանում են 1877-1878 թթ. պատերազմի ընթացքում մինչև Կ.Պոլսի մատույցները Բալկաններում գրաված թուրքական տիրույթներից:

Թուրքիայի հետ վերջնական հաշտության պայմանագրի վավերացման կապակցությամբ հրապարակված Ալեքսանդր II-ի կայսերական հրովարտակում մանրամասնորեն շարադրված էին ռուս-թուրքական պատերազմի պատճառները, ընթացքը, Սան Ստեֆանոյի «նախնական» հաշտության պայմանագրի կնքման հանգա-

[279] Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome quatrième. 1878-1902. Paris, 1903.
N 869. Protocole et Traité définitif de paix avec la Russie. Signé à Constantinople le 8 Février 1879. p. 204-208.

մանքները, Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանի ստանձնած պարտավորությունները: Հրովարտակում շեշտվում էր, որ պատերազմի վերջնական արդյունքում ճանաչվել է իրենց տարածքներն ընդարձակած Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի լիակատար անկախությունը, Հյուսիսային Բուլղարիան ստացել է անկախ իշխանապետության կարգավիճակ, Արևելյան Ռումելիա անվանված Հարավային Բուլղարիայի մեծ մասը, քրիստոնեական դավանանքին պատկանող գեներալ-նահանգապետի ղեկավարությամբ, ստացել է ինքնավարություն, Թուրքիան պարտավորվել է վարչական նոր հիմնարկություններ շնորհել նաև իր եվրոպական մյուս մարզերին: Ընդգծվում էր, որ Ռուսաստանը վերադարձրել է 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրով իրենից անջատված Բեսարաբիայի մի մասը, իսկ հարակից տարածքներով Կարսի, Արդահանի և Բաթումի միացումով Ռուսաստանի տիրույթները Ասիական Թուրքիայում ընդլայնվել են[280]:

1879 թ. ապրիլի 21-ի ավստրո-թուրքական համաձայնությունը Բոսնիա-Հերցեգովինայի և Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ

1879 թ. ապրիլի 21-ին Կ.Պոլսում կնքված ավստրո-թուրքական համաձայնությամբ, ըստ Բեռլինի դաշնագրի 25-րդ հոդվածի, Ավստրո-Հունգարիան իրավունք էր ստանում Օսմանյան կայսրության կազմում գրավելու և կառավարելու սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան: Սակայն Ավստրո-Հունգարիան պարտավորվում էր պահպանել այդ երկու մարզերի կառավարման նախկին վարչակազմը, իսկ պաշտոնյաների նշանակման դեպքում նախապատվությունը տրվելու էր ծագումով տեղաբնիկներին: Երկու մարզերի մուսուլման բնակիչները օժտվում էին դավանանքի, կրոնական արարողությունների ու ծեսերի, իրենց հոգևոր պետերի հետ

[280] Տե՛ս Татищев С., նշվ. աշխ., էջ 833-834:

առնչվելու լիակատար ազատության, անձի և գույքի անձեռնմխելիության իրավունքներով: Մզկիթներում կատարվող կրոնական արարողություններում և աղոթքներում նախկինի պես պետք է հիշատակվեր օսմանյան սուլթանի՝ մուսուլմանական աշխարհի հոգևոր պետի՝ խալիֆի անունը: Մինարեներում նախկինի պես պետք է ծածանվեր օսմանյան դրոշը: Բոսնիայից և Հերցեգովինայից հավաքված հարկերը բացառապես պետք է օգտագործվեին զուտ տեղական կարիքների, վարչության և անհրաժեշտ բարեփոխումների համար: Օսմանյան մետաղադրամը ազատորեն պետք է շրջանառվեր Ավստրո-Հունգարիայի գրաված Բոսնիայում և Հերցեգովինայում: Համաձայնության 5-րդ հոդվածը ամրագրում էր, որ թուրքական կայազորները իրենց ռազմամթերքով ու սպառազինությամբ ամբողջությամբ դուրս են բերվելու Բոսնիայում և Հերցեգովինայում տեղակայված ամրոցներից:

Բեռլինի դաշնագրի 25-րդ հոդվածի հիման վրա՝ երկու տերությունները պայմանավորվում էին Սերբիայի և Չեռնոգորիայի միջև գտնվող Օսմանյան կայսրության Նովի-Բազարի սանջակը Ավստրո-Հունգարիայի կողմից ռազմական գրավման ենթարկելու հանգամանքների վերաբերյալ:

Սերբիայի և Չեռնոգորիայի քաղաքական միավորումը մեկ միասնական սլավոնական պետության մեջ կանխելու նպատակով Ավստրո-Հունգարիան իրավունք էր ստանում կայազորներ տեղակայել այդ երկու իշխանապետությունների միջև գտնվող Նովի-Բազարի սանջակի Լիմ գետի ափի Պրիբոյ, Պրիեպոլիյե և Բիելոպոլիյե քաղաքներում: Ամրագրվում էր, որ Նովի-Բազարի սանջակի այդ երեք քաղաքներում տեղակայված ավստրիական կայազորների ընդհանուր թվակազմը պետք է բաղկացած լիներ չորսից մինչև հինգ հազար զինվորներից ու սպաներից: Անհրաժեշտության դեպքում, նախապես պայմանավորվելով թուրքական կառավարության հետ, Ավստրո-Հունգարիան կարող էր լրացուցիչ կայազորներ տեղակայել Նովի-Բազարի սանջակի նաև այլ քաղաքներում: Ինչ վե-

րաբերում էր Ավստրո-Հունգարիայի կողմից Օսմանյան կայսրության կազմում ռազմական գրավման ենթարկած Նովի-Բազարի սանջակի վարչական կառավարմանը, դատական և ֆինանսական բնագավառներին, ապա դրանք նույնությամբ և անմիջականորեն պետք է նախկինի պես ղեկավարվեին թուրքական կառավարության հրամանների ու կարգադրությունների համաձայն:

Ավստրո-թուրքական համաձայնության 9-րդ հոդվածով ամրագրվում էր, որ թուրքական կառավարությունը կարող էր նույն թվակազմով և իրավահավասարության սկզբունքներով կանոնավոր բանակի զորամասեր տեղաբաշխել ավստրիական կայազորներով տեղակայված Նովի-Բազարի սանջակի երեք քաղաքներում:[281] Փաստորեն, Ավստրո-Հունգարիան և Թուրքիան Նովի-Բազարի սանջակը Օսմանյան կայսրության կազմում երկուստեք վերածում էին ռազմական գոտու՝ ինքնուրույն իշխանապետություններ Սերբիայի և Չեռնոգորիայի քաղաքական միավորման և Բալկաններում մեկ միասնական սլավոնական պետության ստեղծման դեմ ընդհանուր զինված ուժերով պայքարելու համար:

Հյուսիսային Բուլղարիայի Ռուսական քաղաքացիական վարչական կառավարումը

Ռուսական զորքերի կողմից Դանուբը գետանցելուց անմիջապես հետո ազատագրված տարածքներում Տիրնովո կենտրոնով իր գործունեությունն է սկսում գործող բանակի Գլխավոր հրամանատարին առընթեր դեռևս նախքան պատերազմը ռուսական կառավարության ստեղծած Բուլղարիայի քաղաքացիական կառավարման հատուկ վարչությունը: Ալեքսանդր 2-րդը արդեն 1876 թ. նոյեմբերի 16-ին Բուլղարիայի քաղաքացիական իշխանության կազմա-

[281] Noradounghian G., նշվ. աշխ., h.4. 1878-1902:
N 872 Convention avec l'Autriche-Hongrie concernant la Bosnie et l'Herzégovine.Signée à Constantinople le 21 Avril 1879, p. 219-221. Annexe à la Convention, p. 221-222.

կերպման Գլխավոր վարչության ղեկավար էր նշանակել Լեհական թագավորությունում 1863-1867 թթ. փոխարքայի պաշտոնը զբաղեցրած իշխան Վլադիմիր Չերկասկցուն:

Ռուսական զորքերի առաջխաղացմանը զուգահեռ, Բուլղարիայի ազատագրված տարածքներում, թուրքական նախկին վարչական սահմաններում, ստեղծվում են նահանգներ: Պատերազմի ավարտին թուրքական տիրապետությունից ազատագրված Բուլղարիայի տարածքում արդեն ստեղծված էին ութ նահանգներ: Բացառությամբ Դանուբի աջ ափին ստեղծված Սվիշտովոյի նահանգի՝ բոլոր նահանգապետների պաշտոններում նշանակվում էին ռուսական սպաները, իսկ փոխնահանգապետների պաշտոնները զբաղեցնում էին բուլղարները: Նախկին թուրքական վարչական սահմաններում նահանգները բաժանվում են շրջանների: Ընդհանուր առմամբ՝ նահանգներում ստեղծվում են 56 շրջաններ, որոնց ղեկավարները նույնպես նշանակվում էին ռուս սպաները, իսկ նրանց օգնականների պաշտոնները զբաղեցնում էին բուլղարները: Շրջանները բաժանվում են գյուղական համայնքների, որոնք կազմում են սկզբնական վարչական միավորներ: Նահանգապետները և շրջանների ղեկավարներն էին իրականացնում իրենց ենթակայության ներքո գտնվող տարածքների ամբողջ վարչական իշխանությունը: Նահանգներում, շրջաններում և քաղաքներում ստեղծվում են պաշտոնատար, ինչպես նաև բնակչության կողմից գույքային և կրթական ցենզով ընտրված անձանցից բաղկացած վարչական խորհուրդներ, որոնք, շրջանների ղեկավարների հսկողությամբ, վարում էին տնտեսական գործերը, հետևում հարկերի բաշխմանը և հավաքմանը: Յուրաքանչյուր համայնք ղեկավարում էր նշանակովի գյուղապետը, որը ընտրովի ավագների խորհրդի հետ միասին կարգավորում էր տեղական գործերը:

Ռուսական քաղաքացիական վարչությունը օգնություն էր ցուցաբերում Բուլղարիայում ապաստանած բուլղար փախստականներին՝ նրանց տրամադրելով դրամական և այլ օժանդակություններ,

բնակություն հատկացնելով հեռացած թուրքերի բնակավայրերում ապահովում շինարարական և գյուղատնտեսական, արհեստագործական և այլ աշխատանքներով: Ռուսաստանի սլավոնական կոմիտեների աջակցությամբ Գաբրովոյում և Տիրնովոյում 300 որբերի համար հիմնվում է սննդով ապահովված մեկական խնամատուն: Ռուսական Կարմիր խաչի նախաձեռնությամբ, դերձակուհիներին աշխատանքով ապահովելու համար, Տիրնովոյում հիմնվում է զինվորական հանդերձանքի արտադրության ձեռնարկություն:

1877 թ. նոյեմբերի 4-ին հրապարակված Չերկասկցու հատուկ շրջաբերականով բուլղար փախստականներին են տրվում թուրքերի լքած հողերը:

Բուլղարների և թուրքերի միջև հնարավոր բախումները կանխելու, հասարակական կարգի պահպանության և անվտանգության նպատակներով Ռուսական քաղաքացիական վարչությունը կազմակերպում էր ազատավարձու զինված պահակախմբեր և պահակակետեր:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքման օրը մահացած իշխան Չերկասկցու փոխարեն Ալեքսանդր 2-րդը Բուլղարիայի Ռուսաստանի կայսերական կոմիսար է նշանակում Կիևի, Վոլինի և Պոդոլսկի նախկին նահանգապետ, գեներալ-լեյտենանտ, իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովին: 1878 թ. մայիսի 20-ին Ռուսաստանի կայսերական կոմիսարը ժամանում է Հարավային Բուլղարիայի՝ Ռումելիայի կենտրոն Պլովդիվ և ձեռնամուխ լինում իր պաշտոնական պարտականությունների կատարմանը: Այդ օրվանից գործող բանակի գլխավոր հրամանատարին առընթեր Բուլղարիայի քաղաքացիական կազմակերպման վարչությունը փոխարինվում է ռազմական իշխանության լիազորություններով օժտված Ռուսաստանի կայսերական կոմիսարի վարչությամբ: Ռուսական կառավարության հրահանգների համաձայն, կայսերական կոմիսարի ենթակայությամբ ստեղծվում է յոթ՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, ժողովրդական կրթության, ռազմական,

փոստ-հեռագրի, հաղորդակցության ուղիների և հասարակական աշխատանքների, ընդհանուր գործերի և դիվանագիտական բաժիններից բաղկացած կենտրոնական ղեկավարման մարմին՝ Բուլղարիայի Ռուսական քաղաքացիական վարչության Խորհուրդ: Յուրաքանչյուր բաժին ղեկավարում էր կառավարման վարչության անդամներից մեկը:

Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Հարավային Բուլղարիան՝ Արևելյան Ռումելիան, առանձին նահանգի վերածելու պատճառով ռուսական կայսերական կոմիսարի գործունեության բնագավառը սահմանափակվում է սոսկ Հյուսիսային՝ Բուլղարական իշխանապետության տարածքում: Ուստի Դոնդուկով-Կորսակովը Բուլղարական իշխանապետությունը կառավարելու և նրա պետական մարմինները կազմակերպելու նպատակով 1878 թ. հոկտեմբերի 20-ին Պլովդիվից իր աշխատակազմով և քաղաքացիական վարչությամբ տեղափոխվում է Սոֆիա:

Ռուսական բանակով Բուլղարիան ինը ամսով ռազմակալելու Բեռլինի կոնգրեսի որոշումը ստիպում է ռուսական կայսերական կոմիսարի վարչությանը այդ կարճատև ժամանակամիջոցում արագացնելու Բուլղարական իշխանապետության կազմակերպման գործընթացը: Նախ և առաջ անհրաժեշտ էր ստեղծել երկրային զորք և մշակել Բուլղարական իշխանապետության Սահմանադրությունը: Ռուսական զինվորական կանոնադրությունների օրինակով ռուս սպաների ղեկավարությամբ Բուլղարական իշխանապետությունում ստեղծվում է 27 հազարանոց երկրային բանակ, որի ավելի քան երեք հազարը կազմում էին ռուս զինվորները և սպաները: Քանի որ Բեռլինի կոնգրեսը չէր սահմանել իշխանապետության երկրային զորքի թվակազմը, Ռուսական քաղաքացիական վարչությունը այդ առումով գործում էր սեփական հայեցողությամբ: Քսանից մինչև երեսուն տարեկան տղամարդկանց համար սահմանվում է երկամյա պարտադիր զինվորական ծառայություն: Իշխանապետության երկրային զորքը համազգեստավորվում և զինվում է ռուսական հրամա-

նատարության կողմից: Այդ առումով իշխանապետության երկրային զորքը ստանում է տարբեր տեսակի 96 հազար հրացան, 142 դաշտային և 31 պաշարման հրետանի: Իշխանապետության ռազմածովային նավատորմը ստեղծելու նպատակով 1879 թ. ամռանը ռուսական հրամանտարությունը իշխանապետությանն է նվիրում Դանուբ գետի նավատորմը և սևծովյան 4 ռազմանավ: Ռուսական ռազմածովային սպաները մեծ աշխատանքներ են կատարում իշխանապետության ռազմածովային նավատորմը կազմակերպելու և մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Զինվորական մասնագետներ պատրաստելու նպատակով 1878 թ. նոյեմբերին Սոֆիայում հիմնվում է սպայական ուսումնարան, բազմաթիվ բուլղարներ սպայական կրթություն են ստանում Ռուսաստանի ռազմական ուսումնարաններում, Տուլայի զինագործական դպրոցում: Ռուսաստանում 1864 թ. կատարված դատական բարեփոխումների օրինակով ստեղծվում է իշխանապետության դատաիրավական համակարգը: Մեծ ուշադրություն է դարձվում ուսումնական համակարգի ստեղծմանը: Բացվում են ժողովրդական դպրոցներ, երկու դասական գիմնազիաներ, հինգ ռեալական և երկու հոգևոր ուսումնարաններ: Պետական հիմնարկության կարգավիճակով՝ 1878 թ. դեկտեմբերի 10-ին Սոֆիայում իր աշխատանքներն է սկսում Ռուսաստանի սլավոնական կոմիտեների ֆինանսական մասնակցությամբ հիմնված Բուլղարիայի ժողովրդական գրադարանը: Միջոցառումներ են ձեռնարկվում առողջապահական մարմիններ ստեղծելու գործում: Բացվում են շրջանային ու նահանգային հիվանդանոցներ ու դեղատներ, կազմակերպվում է ռազմաբժշկական ծառայությունը: Արդյունաբերությանը և առևտրի զարգացմանը օժանդակելու նպատակով 2 մլն ֆրանկ հիմնական կապիտալով 1879 թ. հունվարին Սոֆիայում հիմնվում է Բուլղարական ազգային բանկը: Բուլղարական իշխանապետության պետական կառավարման համակարգը ազգային կադրերով համալրելու նպատակով Ռուսական քաղաքացիական վարչությունը կազմակերպում է բուլղար պաշտոնյաների

պատրաստման դասընթացներ՝ գործավարությունը կազմակերպելով բուլղարերեն լեզվով և ռուս աստիճանավորներին հետզհետե փոխարինելով բուլղարներից բաղկացած աշխատակազմերով: Արդեն ռուսական քաղաքացիական վարչության գործունեության ավարտին՝ 1879 թ., Բուլղարական իշխանապետության կառավարման համակարգը համալրված էր 3 հազար բուլղար և մոտ 150 ռուս պաշտոնյաներով[282]:

Այնուամենայնիվ, Բուլղարական իշխանապետության քաղաքական կազմակերպման համար անհրաժեշտ էր մշակել և ընդունել նրա Սահմանադրությունը:

1879 թ. փետրվարի 10(22)-ին հանդիսավոր պայմաններում Տիրնովոյում իր նիստերն է սկսում իշխանապետության Հիմնադիր ժողովը, որը, որոշակի ուղղումներով, ապրիլի 16(28)-ին ընդունում է ռուսական կառավարության նախապես մշակած և կայսրի կողմից հաստատված կազմակերպական Կանոնադրությունը, որով Բուլղարական իշխանապետությունը հռչակվում էր սահմանադրական, ժառանգական միապետություն: Սահմանադրությունը շրջանցում էր օսմանյան սուլթանի գլխավորությամբ Բուլղարական ինքնավար իշխանապետության վասալական կախվածության իրավական կարգավիճակը ամրագրած Բեռլինի կոնգրեսի որոշումը:

---

[282] Տե՛ս Абакумов А.И., Помощь России в воссоздании Болгарской государственности (Организация русского гражданского управления). Вопросы новой и новейшей истории. Новосибирск, 1966, с. 96-126;
Анучин Д. Г., Князь В.А.Черкасский и гражданское управление в Болгарии в 1877-1878 гг. "Русская старина". 1895, 1896 гг.; Георгиевский Д., Гражданское управление в Болгарии (1877-1879). "Наблюдатель". 1882, N 9, с. 123-160, N 10, с. 169-195; История Болгарии, т. 1, М., 1954, с. 336-338; Косев Д., Новая история Болгарии, Курс лекций, М., 1952, с. 439-462; Տե՛ս Косик В. И., Русская политика в Болгарии в 1879-1886 гг. М., 1991; Коротких М.Г., Разработка и принятие Тырновской конституции Болгарии 1879 года. Воронеж, 1878; Коротких М.Г., Россия и конституционное строительство в Болгарии (1878-1879). Воронеж, 1982; Краткая история Болгарии, М., 1987, с. 246-249; Матвеев П., Болгария и Восточная Румелия после Берлинского конгресса (Исторический очерк), "Исторический вестник ". 1886 г.; Татищев, նշվ. աշխ., էջ 829-845:

Տիրնովոյի Սահմանադրությամբ ստեղծվում էր օրենսդիր իշխանության մարմին՝ միապալատ եռամյա պառլամենտ՝ Սովորական ժողովրդական ժողով՝ օրինագծեր մշակելու, պետական բյուջեն հաստատելու, կառավարության գործունեությունը վերահսկելու, ինչպես նաև համաներում շնորհելու համար: Սովորական ժողովրդական ժողովը կազմվում էր յուրաքանչյուր 10 հազար բնակիչներից ընտրված մեկ պատգամավորից: Ընտրություններին մասնակցում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվող 21, իսկ ընտրվելու համար՝ 30 տարին լրացած գրագետ տղամարդիկ: Պատգամավորները ներկայացնում էին ոչ միայն իրենց ընտրողներին, այլև ամբողջ իշխանապետությունը: Այդ առումով, պատգամավորներն օժտված չէին իմպերատիվ մանդատով: Պատգամավորները պատասխանատվություն չէին կրում քննարկվող օրինագծերի նկատմամբ քվեարկություններով և ելույթներով իրենց վերաբերմունքը արտահայտելու համար: Սովորական ազգային ժողովի առաջին նիստը նախագահող ամենաավագ պատգամավորի ղեկավարությամբ ընտրվում են Ազգային ժողովի մշտական նախագահը, նրա տեղակալները և քարտուղարները: Ժառանգական իշխանատոհմի վերանալու դեպքում, ինչպես նաև սահմանադրական փոփոխություններ, տարածքային փոխանակումներ կամ սահմանային ուղղումներ կատարելու համար պետք է հրավիրեր կրկնակի պատգամավորներից բաղկացած Ժողովրդական Մեծ ժողով:

Դատական համակարգը արդարադատությունը պետք է իրականացներ Բուլղարիայի իշխանի անունով:

Սահմանադրության համաձայն՝ Բուլղարիայի իշխանը գործադիր մարմնի՝ կառավարության և պետության գլուխն էր ու գերագույն ներկայացուցիչը: Սահմանադրությունը իշխանի անձը հռչակում էր «սրբազան ու անձեռնմխելի»: Սահմանադրության համաձայն՝ իշխանը օժտված էր պետական ապարատը կազմավորելու առանձնաշնորհումներով: Նա էր նշանակում գործադիր իշխանու-

թյան՝ կառավարության անդամներին՝ նախարարներին և նախարարների Խորհրդի նախագահին, որոնց գործունեությունը պետք է ենթարկվեր «իշխանի բարձրագույն հսկողությանը և ղեկավարությանը»: Բուլղարիայի իշխանը պետության զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր: Նա էր շնորհում զինվորական կոչումներ: Զինվորական ծառայության անցնողները պարտավոր էին հավատարմության երդում տալ իշխանին: Նա էր իրականացնում իշխանապետության արտաքին հարաբերությունները, Ժողովրդական ժողովի համաձայնությամբ կարող էր միջազգային պայմանագրեր և համաձայնություններ կնքել: Բուլղարիայի իշխանն էր հրավիրում Ժողովրդական Մեծ և Սովորական ժողովրդական ժողովները:

Սովորական ժողովրդական ժողովի նստաշրջանի բացման օրը հրապարակվում էր երկրի վիճակին վերաբերող իշխանի ուղերձը և թվարկվում էին ժողովի քննարկմանը ներկայացվող առաջարկությունները և օրինագծերը: Սովորական ժողովրդական ժողովը իր պատասխանն էր հղում իշխանի ներկայացրած ուղերձին:

Իշխանը օժտված էր օրենսդրական նախաձեռնության լիազորություններով, հաստատում և հրապարակում էր Ժողովրդական ժողովի ընդունած օրենքները: Իշխանի հրապարակած հրամանագրերը և հրամանները ունեին օրենքի ուժ, որոնց իրականացման համար պատասխանատվություն էին կրում դրանք կրկնավավերացրած համապատասխան նախարարները: Պետությանը ներքին կամ արտաքին սպառնալիք ստեղծվելու և Ժողովրդական ժողով հրավիրելու անհնարինության պարագայում իշխանը իրավունք ուներ իրականացնել օրենսդրական լիազորություններ, երկրի ամբողջ տարածքում կամ առանձին մասերում ռազմական դրություն հայտարարել:

Գործադիր իշխանության ղեկավարը՝ իշխանը, օժտված էր ֆինանսական լայն իրավասություններով: Ժողովրդական ժողովի ընդունած տարեկան բյուջեն ենթակա էր իշխանի հաստատմանը: Ժողովի կողմից հերթական տարեկան բյուջեն չհաստատելու կամ դրա

հաստատումը հետաձգելու դեպքում իշխանը կարող էր հաստատել նոր բյուջեն, իրավունք ուներ մինչև 300 հազ. ֆրանկի արտաբյուջետային ծախսեր թույլատրել, առանց Ժողովրդական ժողովի որոշման մինչև 1 մլն ֆրանկ արտասահմանյան փոխառություն վերցնել:

Պետության գլուխը օժտված էր քրեական դատավճիռները հաստատելու, պատիժները մեղմելու և քաղաքական բանտարկյալներին ներում շնորհելու իրավունքներով: Սակայն իշխանը իրավասու չէր ներում շնորհելու Սահմանադրության խախտման համար դատապարտման ենթարկված նախարարներին:

Սահմանադրության համաձայն՝ Բուլղարական իշխանապետությունում տիրապետող միակ կրոնը Արևելքի քրիստոնեական ուղղափառ եկեղեցու դավանանքն էր: Բուլղարական ուղղափառ քրիստոնեական եկեղեցին ենթակա էր միայն բուլղարական եկեղեցու գերագույն ղեկավար մարմնի՝ հոգևոր Սինոդի իրավասությանը: Ժառանգաբար գահ բարձրացած Բուլղարիայի իշխանը և նրա ժառանգները պարտավոր էին պաշտել միայն Բուլղարական ուղղափառ քրիստոնեական եկեղեցու դավանանքը:

Բուլղարական ուղղափառ եկեղեցու դավանանքին չպատկանող քրիստոնյաները, ինչպես նաև այլ կրոնների հավատացյալները, ունեին իրենց հոգևոր արարողություններն ու ծիսակատարությունները ազատորեն կատարելու իրավունքներ:

Սահմանադրությունը հռչակում էր օրենքի առաջ բոլոր բուլղարահպատակների իրավահավասարության սկզբունքը, վերացնում դասային բաժանումները, ազնվականական տիտղոսները, տարբերանշանները, ինչպես նաև քաղաքացիական շքանշանները: Յուրաքանչյուր ստրուկ, մտնելով Բուլղարական իշխանապետություն, ստանում էր անձնական ազատություն: Սահմանադրությամբ ընտրական իրավունք էին ստանում քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվող 21, իսկ ընտրվելու համար՝ 30 տարին լրացած գրագետ տղամարդիկ: Համայնքները օժտվում էին ինքնավարության իրավունքներով: Հռչակվում էր հավաքների, ժողովների,

մամուլի, դավանանքի, իշխանություններին անհատական կամ խմբակային հանրագրերով դիմելու լիակատար ազատության իրավունք: Հաստատվում էր պարտադիր անվճար տարրական կրթություն: Ամրագրված էին անձի և գույքի անձեռնմխելիության, նամակագրության գաղտնիության սկզբունքները: Սահմանվում էր համընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն[283]: Բուլղարական պաշտոնական պատմագրության գնահատմամբ՝ Տիրնովոյի սահմանադրությունը իր ժամանակաշրջանի դեմոկրատական սահմանադրություններից մեկն էր:

1879 թ. ապրիլի 3-ին իշխանապետության Հիմնադիր ժողովը Սոֆիան հռչակում է Բուլղարական իշխանապետության մայրաքաղաք:

1879 թ. ապրիլի 16(28)-ին ընդունելով Բուլղարական իշխանապետության Տիրնովոյի սահմանադրությունը՝ Հիմնադիր ժողովը ավարտում է իր գործունեությունը: Հաջորդ օրը՝ ապրիլի 17(29)-ին, Տիրնովոյում հրավիրված առաջին Ժողովրդական Մեծ ժողովը, որի 248 անդամներից 84-ը Հիմնադիր ժողովի պատգամավորներն էին, Բուլղարիայի իշխան է ընտրում Ալեքսանդր 2-րդի առաջարկած թեկնածուին՝ Ռոմանովների արքայատոհմի ազգական, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակում ծառայած, գերմանական 22-ամյա իշխան Ալ. Բատտենբերգին: Ռուսական և եվրոպական տերությունների արքունիքները կատարած պաշտոնական այցելություններից հետո, Կ.Պոլսում սյուզերեն սուլթանից ստանալով Բուլղարիայի իշխանի ընտրությունը վավերացնող կայսերական ֆերմանը, Ալ. Բատտենբերգը հունիսի 26-ին (հուլիսի 7-ին) Ժողովրդական Մեծ ժողովում հավատարմության երդում է տալիս Տիրնովոյի սահմանադրությանը: Մի քանի օր անց Հյուսիսային Բուլղարիայի իշխանը ժամանում է Սոֆիա և կայսերական կոմիսար Դոնդուկով-Կորսակովից ստանձնում իշխանապետության

[283] Annuaire de Législation étrangère. Neuvième année. Paris, 1880. Bulgarie. Constitution promulguée à Tirnova le 16 avril 1879, p. 774-790.

կառավարումը: Հյուսիսային Բուլղարիայի իշխանապետությունը իր գործունեությունն է սկսում ինքնուրույն պետության կարգավիճակով՝ սուլթանից որպես վասալական կախվածության նշան պարտավորվելով սոսկ ամենամյա հարկ վճարել թուրքական կառավարությանը:

1879 թ. հուլիսին Ռուսական քաղաքացիական վարչությունը և զորքերը հեռանում են Բուլղարական իշխանապետությունից և Արևելյան Ռումելիայից:

Արևելյան Ռումելիայի վարչական կառավարման կազմակերպումը

1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա՝ Բեռլինի կոնգրեսի որոշմամբ, սուլթանի քաղաքական և ռազմական գերագույն իշխանության ներքո Բալկանյան լեռնաշղթայից դեպի հարավ ստեղծվում է վարչական ինքնավարությամբ օժտված «Արևելյան Ռումելիա» անվամբ նահանգը[284]:

Բեռլինի դաշնագրի 14-րդ հոդվածի համաձայն՝ Արևելյան Ռումելիա ինքնավար նահանգի վարչական սահմանները հյուսիսում և հյուսիս-արևմուտքում սահմանակցվում են Բուլղարական իշխանապետությանը, արևելքում՝ Մեսեմվիրա (արդի Նեսեբըր) և Բուրգաս նավահանգիստներով հանդերձ՝ Սև ծովին, արևմուտքում՝ Դանուբի աջ՝ Իսկըր վտակի վերին հոսանքին, հարավում՝ Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռներին՝ կազմելով 33 հազար քառ. կմ. 900 հազար բնակչությամբ[285]: Այդպիսով՝ Բուլղարիայի հարավային սահմանը աշխարհագրորեն դեպի հյուսիս հեռացնելու 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա՝ Բեռլի-

[284] Noradounghian G., նշվ. աշխ., h.4. 1878-1902:
N 862. Protocoles et Comptes-rendus de la Commission Internationale chargée d'élaborer l'organisation de la Roumélie Orientale. Du 30 Septembre 1878 au 24 Septembre 1879. P.194.

[285] Кратка история на България. София 1983, с. 238.

նի դաշնագրի 14-րդ հոդվածով, Թուրքիային էր վերադարձվում Ռոդոպյան և Ստրանջա (Իստրանջա) լեռներից մինչև Էգեյան ծովը գտնվող տարածքը՝ պատմական Մակեդոնիան:

Մինչև թուրքական կառավարության և Եվրոպական հանձնաժողովի համագործակցությամբ Արևելյան Ռումելիայի տեղական կառավարման վարչական կառուցվածքի մշակումը՝ Բուլղարիայի՝ Ռուսաստանի կայսերական կոմիսար Դոնդուկով-Կորսակովը 1878 թ. հոկտեմբերին Արևելյան Ռումելիայի և Ադրիանապոլսի սանջակի Ռուսական ժամանակավոր վարչության ղեկավար, գեներալ-նահանգապետ է նշանակում Հարավային Բուլղարիայում տեղակայված 9-րդ կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ա.Դ. Ստոլիպինին: Միաժամանակ, Կ.Պոլսից Պլովդիվ է ժամանում Եվրոպական հանձնաժողովը, որը պետք է մշակեր վարչական ինքնավարությամբ օժտված Հարավային Բուլղարիայի՝ Արևելյան Ռումելիայի կազմակերպական Կանոնադրությունը և Ռուսական քաղաքացիական վարչությունից ստանձներ այդ նահանգի ֆինանսների տնօրինումը:

Նախքան Եվրոպական հանձնաժողովի Պլովդիվ ժամանելը՝ Արևելյան Ռումելիայի Ռուսական ժամանակավոր վարչությունը արդեն կազմակերպել էր տեղական ինքնակառավարման, ֆինանսական, դատական համակարգը, ռուս սպաների ղեկավարությամբ ստեղծել հասարակական կարգի պահպանության միլիցիա, ժողովրդական աշխարհազորի դրուժինաներ, գործավարությունը վարում բուլղարերենով:

Այնուամենայնիվ, ռուսական դիվանագիտության բալկանյան քաղաքականության կարևորագույն խնդիրը Արևելյան Ռումելիայի միավորումն էր Բուլղարական իշխանապետության հետ: Այդ առումով, Արևելյան Ռումելիայի կազմակերպական Կանոնադրությունը մշակող Եվրոպական հանձանաժողովի ռուսական ներկայացուցիչներին Պետերբուրգից հղված հրահանգում շեշտվում էր, որ ռուսական քաղաքականության խնդիրը Արևելյան Ռումելիայի միավո-

րումն է Բուլղարական իշխանապետության հետ:

Արևելյան Ռումելիայի միավորումը Բուլղարական իշխանապետության հետ թուրքական իշխանությունների կողմից զինված ուժով չխոչընդոտելու նպատակով ռուսական կառավարությունը հարկադրված էր կանխելու Բալկանյան լեռնաշղթայի լեռնանցքերում թուրքական կայազորներ տեղաբաշխելու վերաբերյալ Բեռլինի տրակտատի 15-րդ հոդվածի կիրառումը:

Անսալով Բալկանյան լեռնաշղթայի լեռնանցքներում թուրքական կայազորներ չտեղակայելու Ալեքսանդր 2-րդի գրավոր խորհրդին՝ սուլթան Աբդուլ Համիդը 1879 թ. ապրիլին վստահեցնում է, որ Բալկանյան լեռնաշղթայի լեռնակիրճերում կայազորներ տեղաբաշխելու հրատապ անհրաժեշտություն չի տեսնում[286]:

Բալկանյան լեռնաշղթայի լեռնածորերում թուրքական կայազորներ չտեղադրելը մեծապես նպաստում է Բուլղարական իշխանապետության և Արևելյան Ռումելիայի միջև կապերը ամրապնդելու և խաղաղ կերպով երկու Բուլղարիաների միավորումը իրականացնելու համար:

1879 թ. ապրիլի 26-ին Եվրոպական հանձնաժողովը ավարտում է Արևելյան Ռումելիայի կազմակերպական Կանոնադրության մշակումը, որն էլ մայիսի 16-ի սուլթանական հրավարտակով դառնում է Հարավային Բուլղարիայի սահմանադրությունը[287]:

Բեռլինի կոնգրեսի որոշման համաձայն, կազմակերպական Կանոնադրությունը սահմանում էր օսմանյան սուլթանի քաղաքական և ռազմական գերագույն իշխանության ներքո Արևելյան Ռումելիայի՝ որպես ինքնավար նահանգի, իրավական կարգավիճակը:

Արևելյան Ռումելիայի գործադիր իշխանության գլուխն էր Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունների համաձայնությամբ՝ հնգամյա ժամկետով սուլթանի նշանակած գեներալ-նահանգապե-

[286] Татищев С., նշվ. աշխ., էջ 837:

[287] Noradounghian G., նշվ. աշխ., h.4. 1878-1902. N 876. Ferman Impérial ordonnant l'exécution du Statut organique de la Roumélie Orientale. Donné le 16 Mai 1879, p. 224.

տը: Կազմակերպական կանոնադրության համաձայն, Արևելյան Ռումելիայի բարձրագույն իշխանության մարմինը 56 պատգամավորներից բաղկացած Մարզային ժողովն էր: Նրա կազմի 10 անդամները նիստերին էին մասնակցում «ըստ իրավունքի», 36-ը ընտրվում էին ժողովրդի, իսկ 10-ը նշանակվում էին գեներալ-նահանգապետի կողմից: Մարզային ժողովը իր կազմից ընտրում էր 10 անդամներից բաղկացած Մշտական հանձնաժողով և երեք տեղակալներ, որոնք կազմում էին ժողովի վերին պալատը: Մարզային ժողովի ընդունած օրենքները ենթակա էին սուլթանի հաստատմանը:

Արևելյան Ռումելիայի գործադիր իշխանության՝ կառավարության անդամները նշանակվում էին գեներալ-նահանգապետի կողմից և հաստատվում սուլթանական ֆերմանով: Արևելյան Ռումելիայի կառավարությունը բաղկացած էր վեց բարձրագույն պաշտոնյաներից՝ դիրեկտորներից, որոնք վարում էին իրենց տնօրինությանը ենթական ներքին գործերի, արդարադատության, ֆինանսների, գյուղատնտեսության, առևտրի և հասարակական աշխատանքների, ժողովրդական կրթության բնագավառները և ոստիկանության պետից: Կառավարության վեց դիրեկտորները հանդիսանում էին գեներալ-նահանգապետի խորհրդակցական մարմինը: Կառավարության գործունեությունը վերահսկվում էր Մարզային ժողովի տասը անդամներից ընտրված Մշտական հանձնաժողովի կողմից: Կազմակերպական Կանոնադրությունը հռչակում էր անձի ազատության և մասնավոր սեփականության անձեռնմխելիության, խոսքի, հավաքների, ժողովների, դավանանքի ազատության սկզբունքները: Կազմակերպական Կանոնադրությունը սահմանում էր ընտրական գույքային ցենզ, որը, սակայն, չէր կիրառվում պաշտոնյաների և մտավորականների նկատմամբ[288]:

1879 թ. մայիսի 16-ին սուլթանական ֆերմանով հաստատված

[288] Տե՛ս Краткая история Болгарии, с. 253-254.

Արևելյան Ռումելիայի կազմակերպական Կանոնադրությունը մտնում է ուժի մեջ: Միաժամանակ, Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունների համաձայնությամբ, սուլթանը Արևելյան Ռումելիայի գեներալ-նահանգապետ է նշանակում Վիեննայում Օսմանյան կայսրության նախկին դեսպան, բուլղարա-հունական ծագում ունեցող, քրիստոնեական ուղղափառ դավանանքին պատկանող Ալեքսանդր Բոգորոդիին (Ալեկո փաշային)[289], որը ժամանում է իր կառավարմանը ենթակա նահանգի կենտրոն Պլովդիվ և ձեռնամուխ լինում իր պաշտոնեական պարտականությունների կատարմանը:

1879 թ. հոկտեմբերի 7-ին Մարզային ժողովում ընտրված 36 պատգամավորներից 31-ը բուլղար ներկայացուցիչներ էին, 3-ը՝ հույներ, իսկ 2-ը՝ թուրքեր: 1879 թ. դեկտեմբերի 10-ին Մարզային ժողովից ընտրված Մշտական հանձնաժողովը կազմվում է միայն բուլղար պատգամավորներից: Մարզային ժողովի և Մշտական հանձնաժողովի նախագահ է ընտրվում խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչ, հետագայում՝ 1911-1913 թթ. բուլղարական կոալիցիոն կառավարության ղեկավար և 1912 թ. Բալկանյան դաշինքի կազմակերպիչներից՝ Իվան Գեշովը:

Մարզային ժողովի առաջնահերթ կարևորագույն խնդիրներից մեկը պետական լեզվի հաստատումն էր: Անտեսելով Եվրոպական հանձնաժողովի որոշումը և, անուշադրության մատնելով թուրք և հույն պատգամավորների բողոքները, Մարզային ժողովը Արևելյան Ռումելիայի պաշտոնական պետական լեզու է ճանաչում միայն բուլղարերենը: Կառավարությունը ենթարկվում է Ազգային ժողովի վերահսկողությանը՝ պատասխանատու դառնալով նրա առաջ[290]:

---

[289] Noradounghian G., նշվ. աշխ., h.4. 1878-1902.
N 875. Ferman Impérial nommant Aléko-Pacha Vogorodi Gouverneur général de Roumélie Orientale. Donné le 16 mai 1879, p. 223.

[290] Տե՛ս Абакумов А.И., Помощь России в воссоздании Болгарской государственности (Организация русского

Ազգային ժողովը և կառավարությունը փաստորեն անկախ են դառնում իրենց գործունեության մեջ՝ շատ հաճախ չենթարկվելով սյուզերեն սուլթանին՝ մարզի կարևորագույն հարցերը լուծելով միանգամայն ինքնուրույն կերպով:

Եվրոպական տերություններին հղած թուրքական կառավարության 1880 թ. հոկտեմբերի 3-ի շրջաբերականը

Եվրոպական տերություններին հղած 1880 թ. հոկտեմբերի 3-ի շրջաբերականով թուրքական կառավարությունը պարտավորվում էր իրականացնել Եվրոպական Թուրքիայի իր նահանգներում տեղական կարիքներին հարմարեցված կազմակերպական հատուկ Կանոնադրություններ կիրառելու վերաբերյալ Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածով իրեն առաջադրված պահանջները: Կոնգրեսի որոշման համաձայն, 1868 թ. կրետական կազմակերպական Կանոնադրությանը նմանօրինակ Կանոնադրությունների մանրամասների մշակումը թուրքական կառավարությունը մարզերում հանձնարարելու էր հատուկ հանձնաժողովների, որոնց մեջ տեղացի բնակչությունը ստանալու էր լայն մասնակցություն: Հանձնաժողովները իրենց կազմած վարչական կառավարման կազմակերպական Կանոնադրությունների նախագծերը ներկայացնելու էին թուրքական կառավարության քննարկմանը, որը, սակայն, նախքան դրանք կի-

---

гражданского управления). Вопросы новой и новейшей истории. Новосибирск, 1966, с. 96-126; Анучин Д. Г., Князь В.А.Черкасский и гражданское управление в Болгарии в 1877-1878 гг. "Русская старина". 1895,1896 гг..

Георгиевский Д., Гражданское управление в Болгарии (1877-1879). "Наблюдатель". 1882, N 9, с. 123-160, N 10, с. 169-195; История Болгарии, т. 1, М., 1954, с. 336-338; Косев Д., Новая история Болгарии, Курс лекций, М., 1952, с. 439-462; Տե՛ս Косик В.И., Русская политика в Болгарии в 1879-1886 гг. М., 1991; Коротких М.Г., Разработка и принятие Тырновской конституции Болгарии 1879 года. Воронеж, 1878; Коротких М.Г., Россия и конституционное строительство в Болгарии (1878-1879). Воронеж, 1982; Краткая история Болгарии, М., 1987, с. 246-249; Матвеев П., Болгария и Восточная Румелия после Берлинского конгресса (Исторический очерк), "Исторический вестник". 1886 г.. Татищев, նշվ. աշխ., էջ 829-845:

րառելը, պետք է խորհրդակցեր Արևելյան Ռումելիա նահանգի կազմակերպման համար նշանակված Եվրոպական հանձնաժողովի հետ: Սակայն եվրոպական տերություններին հղած շրջաբերականում թուրքական կառավարությունը շեշտում էր, որ Եվրոպական Թուրքիայում կիրառվելիք կազմակերպական Կանոնադրությունները պետք է ապահովեն օսմանյան սուլթանի լիակատար և ամբողջական գերիշխանությունը և չհանգեցնեն Օսմանյան կայսրության այդ բալկանյան մարզերի անջատմանը[291]: Սակայն, Օսմանյան կայսրության «Եվրոպական Թուրքիայի մյուս մասերում» տեղական կարիքներին հարմարեցված կազմակերպական Կանոնադրություններ կիրառելու Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածի պահանջները իրականացնելու միջազգային պարտավորությունները, բացի սոսկ խոստումներից, սուլթանական կառավարությունները երբեք չեն կենսագործել: Ավելին՝ 1889 թ. հոկտեմբերի 26-ի սուլթանական ֆերմանով վերացվում էին Կրետե կղզու ինքնավարության մի շարք իրավունքները[292]:

Թուրքական իշխանությունները ամենևին էլ չեն անդրադարձել նաև «հայաբնակ մարզերում» տեղական կարիքներից հարուցված բարելավումներ ու բարենորոգումներ իրականացնելու, չերքեզներից ու քրդերից հայերի անվտանգությունը ապահովելու վերաբերյալ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունները, անուշադրության են մատնել այդ առումով հղված տերությունների հուշագրերը և, ընդհակառակը, բարելավումներ և բարենորոգումներ իրականացնելու փոխարեն, կազմակերպում էին հայերի զանգվածային կոտորածներ: Թուրք պատմաբան Օսման Նուրին, խոսելով մասնավորապես 1896 թ. օգոստոսին Կ.Պոլսում կազմակերպված հայերի կոտորածի մասին, գրում է.

[291] Noradounghian G., նշվ. աշխ., h.4. 1878-1902. N 897. Note circulaire de la Sublime Porte aux Représentants d'Allemagne, d'Autrich -Hongrie, de France, de Grande-Bretagne, d'Italie et de Russie, à Constantinople, relatives à certains questions du Traité de Berlin. En date du 3 octobre 1880, p. 274-280.

[292] История XIX века, т. 8, с. 45.

«Այս ջարդը, բոլոր պարագաներում, մի ահարկու եղեռն էր մարդկության դեմ: Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նույն Աբդուլ Համիդ երկրորդն էր, որը ղեկավարում էր Յըլդըզի այդ հրոսախումբը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»[293]:

1881 թ. հունիսի 18-ին Բեռլինում Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքված գաղտնի պայմանագիրը

1881 թ. հունիսի 18-ին Բեռլինում ստորագրվում է Գերմանիայի և Ռուսաստանի, Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև 1873 թ. հոկտեմբերին Վիեննայի Շյոնբրունն պալատում գաղտնի համաձայնագրերով ձևավորված «Երեք կայսրերի դաշինքի» պայմանագրի պայմանները փոխարինող եռակողմ գաղտնի նոր պայմանագիր[294]:

Պայմանագրի ռազմական մասում երեք կայսրությունները պարտավորվում էին, որ պայմանավորվող կողմերից որևէ մեկը չորրորդ մեծ տերության հետ պատերազմի մեջ գտնվելու դեպքում պետք է պահպաներ բարյացակամ չեզոքություն, և ջանքեր գործադրվեին կոնֆլիկտը տեղափակելու համար: Սակայն պայմանավորվող երեք տերություններից որևէ մեկի կողմից Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում նախապես պետք է համաձայնություն կայացվեր պատերազմի արդյունքների վերաբերյալ[295]:

Պայմանագրի հիմնական մասը վերաբերում էր երեք կայսրությունների բալկանյան քաղաքականությանը:

Ռուսաստանը պարտավորվում էր անվերապահորեն ընդունել Բոսնիա-Հերցեգովինայի և Նովի-Բազարի սանջակի վերաբերյալ

---

[293] Օսման Նուրի, նշվ. աշխ., էջ 213:

[294] Сборник договоров России с другими государствами. 1856-1917. М., 1952. N 31. Договор, заключенный между Россией, Германией и Австро-Венгрией. Берлин, 6/18 июня 1881г., с. 228-233.

[295] Նույն տեղում, էջ 228-229:

Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումները՝ այդպիսով ճանաչելով Ավստրո-Հունգարիայի շահերը Օսմանյան կայսրության սլավոնական այդ երկրամասերի նկատմամբ[296]: Այդ գաղտնի պայմանագրին կցված արձանագրությամբ Ավստրո-Հունգարիան իրեն իրավունք էր վերապահում միջազգային բարենպաստ իրադրության պայմաններում բռնակցման ենթարկել Բոսնիան և Հերցեգովինան: Իր ուժն էր պահպանում նաև Ավստրո-Հունգարիայի կողմից Սերբիայի և Չեռնոգորիայի միջև գտնվող Նովի-Բազարի սանջակը բռնակցման ենթարկելու վերաբերյալ ավստրո-հունգարական և ռուսական ներկայացուցիչների միջև Բեռլինում 1878 թ. հուլիսի 13-ին ստորագրված հայտարարությունը[297]:

«Երեք կայսրերի դաշինքի» տերությունները համաձայնվում էին, որ միջազգային իրադրությունից թելադրված հանգամանքներում Բուլղարական իշխանապետությունը միավորվեր Արևելյան Ռումելիայի հետ: Սակայն երեք կայսրությունները բացառում էին Բուլղարական իշխանապետության կողմից օսմանյան տիրապետության տակ գտնվող բալկանյան որևէ այլ տարածքի, մասնավորապես՝ սահմանակից նահանգ Մակեդոնիայի, միացման հնարավորությունը՝ դրանով զրկելով Բուլղարիային դեպի Էգեյան ծով դուրս գալու հնարավորությունից[298]:

Երեք դաշնակից տերությունները կտրականապես շեշտում էին, որ իրենք չեն կարող հանդուրժել Թուրքիայի կողմից Արևելյան Ռումելիայի կամ Բալկանների գրավումը և, անհրաժեշտության դեպքում, ջանքեր կգործադրեն Թուրքիայի նման քայլը կանխելու համար[299]: Այդպիսով՝ «Երեք կայսրերի դաշինքի» տերությունները հանդես էին գալիս Բալկաններում թուրքական տիրապետության վերականգնման բոլոր հնարավոր փորձերը վճռականորեն միաս-

[296] Նույն տեղում, էջ 229:
[297] Նույն տեղում, էջ 232:
[298] Նույն տեղում:
[299] Նույն տեղում:

նաբար խափանելու, բալկանյան երկրների քաղաքական անկախությունը, նրանց սահմանների անձեռնմխելիությունը պահպանելու և Բալկանների վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումները երաշխավորողի դերում:

Երեք տերությունները պարտավորվում էին փոխադարձաբար հաշվի առնել պայմանավորվող կողմերի շահերը Բալկանյան թերակղզում և ընդգծում, որ Եվրոպական Թուրքիայում տարածքային status-quo-ի որևէ փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն իրենց փոխադարձ համաձայնության դեպքում[300]:

Արևելյան Ռումելիայի միավորումը Բուլղարական իշխանապետության հետ

1885 թ. փետրվարին Արևելյան Ռումելիայի կենտրոն Պլովդիվում ստեղծված Բուլղարական գաղտնի կենտրոնական հեղափոխական կոմիտեի ղեկավարությամբ սեպտեմբերի 18-ին կատարված ժողովրդական ապստամբության հետևանքով թուրքական սուլթանի քաղաքական և ռազմական անմիջական իշխանության ներքո գործող Հարավային Բուլղարիայի ինքնավար վարչակարգը տապալվում է: Բուլղարական գաղտնի կենտրոնական հեղափոխական կոմիտեն պաշտոնապես հրապարակում է «օտար ռումելիական կառավարության» տապալման վերաբերյալ հաղորդում՝ հռչակելով Բուլղարիայի երկու տարբեր վարչաքաղաքական նահանգները Հյուսիսային Բուլղարիայի իշխան Ալ. Բատտենբերգի «գայիսոնի ներքո» միավորելու հայտարարություն: Ժամանակավոր կառավարության պարտականությունները ստանձնած գաղտնի կոմիտեն հեռագրով Ալ. Բատտենբերգին ծանուցում է երկու Բուլղարիաների միավորման մասին և պաշտոնապես առաջարկում ընդունելու Հարավային Բուլղարիայի իշխանությունը: Նույն օրը Հարավային Բուլ-

[300] Նույն տեղում:

ղարիայում հայտարարվում է 18-ից մինչև 40 տարեկան պահեստայինների զորակոչ: Թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Ռումելիա կանխելու նպատակով ապստամբները պայթեցնում են Ադրիանապոլսից (Էդիրնեից) հյուսիս գտնվող Ջիսրիմուստաֆա կոչված կամուրջը՝ այդպիսով կտրելով Օսմանյան կայսրության հետ Հարավային Բուլղարիան միացնող հաղորդակցության ուղին:

Նախապես մանրամասնորեն տեղեկացված լինելով պատրաստվող ապստամբության մասին՝ Հյուսիսային Բուլղարիայի իշխան Ալ. Բատտենբերգը համաձայնում է ընդունելու Հարավային Բուլղարիայի իշխանությունը և անմիջապես հրավիրում Ազգային ժողովի արտակարգ նստաշրջան, որն էլ ընդունում է ռազմական բյուջե և հայտարարում զորակոչ: Սեպտեմբերի 20-ին Ալ. Բատտենբերգը հռչակում է երկու Բուլղարիաների միավորման և «Հյուսիսային ու հարավային Բուլղարիայի իշխան» տիտղոսը կրելու մասին մանիֆեստ: Սեպտեմբերի 21-ին ժամանելով Պլովդիվ, Ալ. Բատտենբերգը Հարավային Բուլղարիայում նշանակում է իր կոմիսարին և նրա երկու օգնականներին: Օգտվելով Բալկանյան լեռնանցքներում թուրքական կայազորների բացակայությունից՝ անարգել կերպով Հարավային Բուլղարիա են մտնում Բուլղարական իշխանապետության զորքերը[301]:

Անդրադառնալով երկու Բուլղարիաների անարգել կերպով միավորվելու պատճառին՝ թուրքական պատմագրությունը նշում է, որ թուրքական կառավարությունը իր անկարողության և անվճռականութան հետևանքով ոչ մի ձևով չի կարողացել օգտվել Հյուսիսային Բուլղարիան Արևելյան Ռումելիայից սահմանազատող Բալկանյան լեռնաշղթայում ամրություններ կառուցելու և կայազորներ տեղակայելու Բեռլինի դաշնագրի 15-րդ հոդվածով իրեն ընձեռնված իրավունքից և այդ իրավիճակը դյուրացրել է երկու տար-

[301] История Болгарии, т. 1, с. 362-377; История внешней политики России. Вторая половина XIX века, М., 1999, с. 240-258; История дипломатии, т. 2, с. 236-240. Краткая история Болгари, с. 253-258.

բեր վարչաքաղաքական նահանգների միավորման գործը[302]:

Երկու Բուլղարիաների միավորման հետևանքով առաջանում է այսպես կոչված Բուլղարական կամ Բալկանյան ճգնաժամը, որը տևում է 1885 թ. սեպտեմբերից մինչև 1886 թ. ապրիլը: Այդ ճգնաժամի հիմքը եվրոպական տերությունների և Թուրքիայի կողմից երկու տարբեր վարչաքաղաքական Բուլղարիաների միավորման փաստի իրավական ճանաչումն էր:

Ի պատասխան Արևելյան Ռումելիային սպառնացող թուրքական հարձակման՝ ռուսական կառավարությունը սուլթանին վճռականորեն հայտարարում է, որ Հարավային Բուլղարիա թուրքական զորքերի ներխուժում Ռուսաստանը չի կարող հանդուրժել[303]:

Անգլիական դիվանագիտությունը միավորված Բուլղարիային դիտարկելով Բալկաններից դեպի Կ.Պոլիս և Նեղուցներ Ռուսաստանի առաջխախացումը պատնեշող անջրպետ՝ իր հերթին սուլթանին խորհուրդ է տալիս ոչ միայն զորքեր չմտցնել Արևելյան Ռումելիա, այլև ինքնակամ կերպով ընդունել երկու Բուլղարիաների միավորման իրական փաստը: Որպես փոխհատուցում՝ անգլիական պահպանողական կառավարության ղեկավար դարձած Սոլսբերին սուլթանին հավաստիացնում է, որ երկու Բուլղարիաների միավորման դիմաց Հունաստանի կողմից տարածքային պահանջներով Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու դեպքում այդ երկիրը կենթարկվի ծովային շրջափակման: Սակայն առաջացած Բուլղարական ճգնաժամին ռազմական ուժով միջամտելու և զորքի կիրառումով երկու Բուլղարիաների միավորումն արգելելու Թուրքական կառավարության մտադրությունը չէր կարող իրականանալ 1881 թ. հունիսի 18-ին Բեռլինում Գերմանիայի, Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի հևտևանքով, ըստ որի՝ երեք դաշնակից տերությունները կտրականապես շեշտում

[302] Bayur Y. H., Türk İnkilâbi tarihi, cilt 1-2 (kisim 1-3). İstanbul-Ankara, 1940-1951. Birinci kisim. Berlin muahedesinden meşrutiyetin ilânina kadar. 1878-1908, s. 15.
[303] Краткая история Болгарии, с. 255.

էին, որ իրենք չեն կարող հանդուրժել Թուրքիայի կողմից Արևելյան Ռումելիայի կամ Բալկանների գրավումը և, անհրաժեշտության դեպքում, ջանքեր կգործադրեն Թուրքիայի նման քայլը կանխելու համար:

Արևելյան Ռումելիայի միավորումը Բուլղարական իշխանապետության հետ մեծ դժգոհություն է առաջացնում Սերբիայի կառավարող շրջաններում, որոնց համոզմամբ՝ երկու Բուլղարիաների միավորումը խախտում էր «բալկանյան պետությունների ուժերի հավասարակշռությունը», և որպես փոխհատուցում՝ Բուլղարիայից պահանջում են տարածքային զիջումներ Մակեդոնիայում: Ստանալով մերժում՝ 1885 թ. նոյեմբերի 14-ին Սերբիան ռազմական գործողություններ է սկսում Բուլղարիայի դեմ, որը, սակայն, ավարտվում է նրա ջախջախիչ պարտությամբ: Տերությունների, մասնավորապես՝ Ավստրո-Հունգարիայի վճռական միջամտությամբ պատերազմն ավարտվում է 1886 թ. մարտի 3-ին՝ Բուխարեստում կնքված հաշտությամբ[304]: Պարտված Սերբիան ճանաչում է երկու Բուլղարիաների միավորումը՝ հրաժարվելով տարածքային պահանջներից:

Սերբիայի դեմ տարած բուլղարական բանակի հաղթանակը մեծապես նպաստում է միավորված Բուլղարիայի միջազգային դրության ամրապնդմանը: Ի վերջո, 1886 թ. ապրիլի 5-ին Կ.Պոլսի սուլթանական պալատ Թոփհանեում եվրոպական վեց տերությունների և Թուրքիայի միջև կնքված համաձայնությամբ, երկու Բուլղարիաների միավորման փաստը ստանում է միջազգային իրավական ճանաչում: Ամրագրվում էր, որ ըստ Բեռլինի դաշնագրի 17-րդ հոդվածի, տերությունների համաձայնությամբ, սուլթանը հինգ տարի ժամկետով Հյուսիսային Բուլղարիայի իշխանին պետք է նշանակեր Արևելյան Ռումելիայի գեներալ-նահանգապետ, որի հետևանքով Արևելյան Ռումելիայի և Բուլղարական իշխանապետության վարչա-

[304] Noradounghian G., նշվ. աշխ., h. 4., 1878-1902.
N 940. Traité de paix de Bucarest. (Turquie, Serbie, Bulgarie). Conclu le 3 mars 1886, p. 422-423.

կան կառավարումը պետք է իրականացներ Բուլղարիայի իշխանը: Որպես փոխհատուցում երկու Բուլղարիաների միավորման՝ Արևելյան Ռումելիայի Կըրջա-Ալիի և Ռոդոպի շրջանի մուսուլմանական գյուղերը անցնում էին Թուրքիային[305]: Այդպիսով՝ եվրոպական վեց տերությունների և Թուրքիայի միջև 1886 թ. ապրիլի 5-ին Կ.Պոլսում կնքված համաձայնությամբ՝ չեղարկվում էր 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Բուլղարիան երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումը, և սուլթանի սյուզերենության ներքո ստեղծվում էր մեկ միասնական Բուլղարիա:

Օսմանյան կայսրության կազմում երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների՝ Հյուսիսային և Հարավային Բուլղարիաների միավորմանը մեծապես նպաստում է Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև 1881 թ. հունիսի 18-ին Բեռլինում կնքված գաղտնի պայմանագիրը, որով դաշնակից երեք տերությունները համաձայնվում էին, որ միջազգային իրադրությունից թելադրված հանգամանքներում Բուլղարական իշխանապետությունը միավորվեր Արևելյան Ռումելիայի հետ, սակայն, բացառում էին սահմանակից նահանգ Մակեդոնիայի միացման հնարավորությունը:

1886 թ. սկզբին Ալ. Բատտենբերգը Հարավային Բուլղարիայում կիրառության մեջ է դնում Բուլղարական իշխանապետության օրենսդրությունը և դատական համակարգը: Բուլղարական իշխանապետության և Հարավային Բուլղարիայի միջև գոյություն ունեցող մաքսային արգելքները վերացվում են, իսկ վարչական մարմինները՝ միաձուլվում: Հարավային Բուլղարիայի և Բուլղարական իշխա-

[305] Նույն տեղում, N 938. Protocoles de la Conférence de Constantinople. Pour règlement des difficultés survenues dans la Roumélie Orientale, au Kiosque Impérial de Top-hané, 5 novembre-5 avril 1886, p. 366-410:
Annexe au Protocole N 8, p. 410.

նապետության պատգամավորները Սոֆիայում միավորվում են մեկ ընդհանուր Ազգային ժողովի մեջ: «Բուլղարիայի միավորումը փաստ է»,- հայտարարում է Հյուսիսային Բուլղարիայի իշխան Ալ. Բատտենբերգը:

Հյուսիսային և Հարավային Բուլղարիաների միավորման հետևանքով Բուլղարիայի ընդհանուր տարածքը հասնում է 97 հազ. քառ. կիլոմետրի, իսկ բնակչությունը՝ ավելի քան երեք միլիոնի: Բնակչության թվաքանակով և տարածքի մեծությամբ, Ռումինիայից հետո, Բուլղարիան դառնում է երկրորդ պետությունը Բալկանյան թերակղզում:

Բուլղարիայի միավորումը ունենում է առաջադիմական մեծ նշանակություն: Օսմանյան կայսրության կազմում երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների՝ Հյուսիսային և Հարավային Բուլղարիաների միավորման հետևանքով ստեղծվում է միասնական ազգային պետություն, որն ուղի է հարթում բուլղար ժողովրդի ազգային համախմբման և որպես ազգի ձևավորման, նրա տնտեսական վերելքի, մշակույթի զարգացման և լիակատար քաղաքական անկախության նվաճման համար: Օսմանյան կայսրության կազմում սուլթանի սյուզերենության ներքո քաղաքական ինքնավարության իրավունքով օժտված Բուլղարական վասալական իշխանապետությունը 1899 թ. իր դիվանագիտական ներկայացուցչություններն է հիմնում Վիեննայում և Կ. Պոլսում:

Չեռնոգորիա

Բեռլինի կոնգրեսից հետո՝ 1878 թ. վերջին, Չեռնոգորիան դիվանագիտական հարաբերություններ է հաստատում Ռուսաստանի և Ֆրանսիայի, 1979 թ.՝ Մեծ Բրիտանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Թուրքիայի, 1881 թ.՝ Հունաստանի, 1897 թ.՝ Բուլղարիայի, 1905 թ.՝ ԱՄՆ-ի, իսկ 1906 թ.՝ Գերմանիայի հետ, որոնց դիվանագիտական ներկայացուցիչների նստավայրն է դառնում իշխա-

նապետության մայրաքաղաք Ցետինեն[306]: 1879 թ. օգոստոսին Չեռնոգորիան դիվանագիտական ներկայացուցչություն է հիմնում Կ. Պոլսում[307]: 1889 թ. Չեռնոգորիայի իշխան Նիկոլա Նեգոշը պաշտոնապես այցելում է Պետերբուրգ: Հանդիսավոր ընդունելության ժամանակ կայսր Ալեքսանդր 3-րդը իր բաժակաճառում Չեռնոգորիայի իշխանին հայտարարում է «Ռուսաստանի միակ ճշմարիտ և հավատարիմ բարեկամ»[308]:

Չեռնոգորիայի իշխան Նիկոլա Նեգոշը 1896 թ. պաշտոնական հրավերով այցելում է Սերբական թագավորության մայրաքաղաք Բելգրադ, իսկ հաջորդ տարի Սերբիայի թագավոր Ալեքսանդր Օբրենովիչը փոխադարձորեն ժամանում է Ցետինե[309]: Պատմության մեջ առաջին անգամ կատարված Չեռնոգորիայի և Սերբիայի միապետների աննախադեպ պաշտոնական փոխայցելությունները հիմք են դնում երկու սլավոնական պետությունների միջև դիվանագիտական և ռազմաքաղաքական համագործակցական հարաբերությունների հաստատմանը:

Բեռլինի կոնգրեսի ընդունած պայմանագրի 29-րդ հոդվածի հիման վրա, ըստ որի՝ Չեռնոգորիան Ավստրո-Հունգարիայի հետ պետք է համաձայնության հանգեր չեռնոգորյան նոր տարածքում ճանապարհներ և երկաթուղագիծ կառուցելու իրավունքի վերաբերյալ, 1885 թ. շահագործման է հանձնվում ավստրիական սահմանից մինչև իշխանապետության մայրաքաղաք Ցետինե կառուցված 26 կմ երկարությամբ ճանապարհը, Ադրիատիկ ծովի Բար նավահանգիստը Վիրբազարի հետ 1888 թ. միացնող 38 կմ, Ադրիատիկ ծովի Բար և Ուլցին նավահանգիստները 1905 թ. միացնող 30 կմ երկարությամբ ճանապարհները և այլ ճանապարհներ[310] (1948 թ.

[306] Živko Andrijašević, The history of Montenegro. From ancient times to 2003. Podgorica, 2006, p. 113.
[307] Նույն տեղում, էջ 126:
[308] Նույն տեղում, էջ 125:
[309] Նույն տեղում, էջ 120-121:
[310] Նույն տեղում, էջ 116:

շահագործման է հանձնվում 56.6 կմ երկարությամբ Նիկշիչ-Պոդգորիցա երկաթուղագիծը, որով Չեռնոգորիան հետագայում միանում է 1976 թ.-ից Սերբիայի մայրաքաղաք Բելգրադը Պոդգորիցայով Ադրիատիկ ծովի իր Բար նավահանգստի հետ կապող երկաթուղուն):

Հաղորդակցության ուղիների կառուցումը մեծապես նպաստում է Չեռնոգորիայի ներքին շուկայի ընդլայնմանը, տնտեսության հետագա զարգացմանը և քաղաքային բնակչության հետագա աճին: Արդեն 19-րդ դարի ավարտին Չեռնոգորիայի խոշոր քաղաքներից Պոդգորիցան ուներ 6 հազար, Ուլցինը՝ 5 հազար, Բարը՝ 4 հազար, մայրաքաղաք Ցետինեն և Նիկշիչը՝ 2 հազարական բնակիչ[311]: Բեռլինի կոնգրեսի որոշումներով ընդարձակված Չեռնոգորիայի տարածքում 19-րդ դ. վերջին բնակվում էին նաև 12 հազար մուսուլմաններ և 5-6 հազար կաթոլիկներ[312]:

Մեծանում է Բեռլինի կոնգրեսի որոշումներով քաղաքական անկախություն ստացած Չեռնոգորիայի իշխանապետության նկատմամբ Ռուսաստանի ցուցաբերած տնտեսական, ֆինանսական և ռազմական բազմակողմանի օգնությունը: 1896 թ.-ից Ռուսաստանը 82 հազար ռուբլի է տրամադրել Չեռնոգորիայի մշտական բանակի պահպանության ծախսերի համար, 1895-1905 թթ. ընթացքում՝ հատկացրել 60 հազար հրացան, 25 հազար ատրճանակ և 26 մլն փամփուշտ[313]:

Սերբիա

Բավարարում չստանալով իրենց տարածքային պահանջներում՝ Բեռլինի կոնգրեսից հետո Սերբիայի կառավարող շրջանները արտաքին քաղաքական կողմնորոշմամբ թեքվում են Ավստրո-Հունգարիայի կողմը՝ հուսալով նրա անմիջական օգնությամբ իրակա-

[311] Նույն տեղում:
[312] Նույն տեղում, էջ 118:
[313] Նույն տեղում, էջ 126:

նացնել Սերբական իշխանապետության սահմանների հետագա ընդլայնումը:

Սերբիայի իշխան Միլան Օբրենովիչը 1881 թ. հունիսի 28-ին Բելգրադում «հարատև խաղաղության և բարեկամության» դաշնակցային գաղտնի պայմանագիր է կնքում Ավստրո-Հունգարիայի հետ[314]: Դրա համաձայն՝ Սերբիան Բոսնիա-Հերցեգովինան և Նովի-Բազարի սանջակը ճանաչում էր բացառապես ավստրիական ազդեցության գոտի՝ փաստորեն հրաժարվելով այդ սլավոնական մարզերի նկատմամբ ձգտումներից: Այնուհետև, Սերբիան պարտավորվում էր առանց Վիեննայի նախնական համաձայնության քաղաքական պայմանագրեր չկնքել օտարերկրյա պետությունների հետ, իր տարածքում թույլ չտալ օտարերկրյա, ինչպես կանոնավոր, այնպես էլ կամավորական զինված ուժեր, նաև արգելել Ավստրո-Հունգարիայի դեմ ուղղված թշնամական գործողություններ: Ավստրո-Հունգարիայի հանդեպ պատերազմի սպառնալիք առաջանալու, մեկ կամ մի քանի տերությունների հետ պատերազմելու դեպքում Սերբիան պետք է պահպաներ բարյացակամ չեզոքություն և սերտ բարեկամության ու դաշնակցային պայմանագրի ոգուն համաձայն՝ դուալիստական կայսրությանը, ըստ ամենայնի, պետք է ցուցաբերեր բազմակողմանի օժանդակություն: Որպես փոխհատուցում՝ Ավստրո-Հունգարիան խոստանում էր «պահպանել ու ամրապնդել Սերբիան և նրա իշխանատոհմը», միջազգային ասպարեզում աջակցություն ցուցաբերել Սերբական իշխանապետության շահերի ամրապնդմանը, պատերազմի մեջ Սերբիայի գտնվելու դեպքում պահպանել բարյացակամ չեզոքություն, համաձայնվում Սերբական իշխանապետությունը ճանաչել թագավորություն և նպաստել դրա միջազգայնացմանը, պարտավորվում քաղաքական բարենպաստ պայմաններում, բացի Նովի-Բազարի սանջակից, նպաստել Սերբիայի հարավային սահմանների ընդարձակմանը: Այդ դաշնակ-

[314] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., մաս 1. N 228. Австро-сербский союзный договор, заключенный в Белграде 16/28 июня 1881 года, с. 239-240:

ցային գաղտնի պայմանագրով Ավստրո-Հունգարիան, փաստորեն, իր քաղաքական ազդեցությունն էր հաստատում Սերբիայի վրա, որի հետևանքով Բելգրադը երկար ժամանակով դուրս է գալիս ռուսական ենթակայության ոլորտից: Ի կատարումն ավստրո-սերբական դաշնակցային պայմանագրի՝ Ավստրո-Հունգարիայի աջակցությամբ, 1882 թ. մարտի 6-ին՝ Սերբական իշխանապետությունը հռչակվում է թագավորություն:

Սերբական կառավարության պաշտոնական հրավերով՝ 1896 թ. պետական այցով Բելգրադ է ժամանում Չեռնոգորիայի իշխան Նիկոլա Նեգոշը, իսկ Սերբիայի թագավոր Ալեքսանդր Օբրենովիչը 1897 թ. նույնպես պետական այցով փոխադարձաբար ժամանում է Չեռնոգորիայի մայրաքաղաք Ցետինե: Երկու հարավսլավոնական պետությունների միապետների մինչ այդ աննախադեպ փոխայցելություններից հետո՝ 1897 թ., դիվանագիտական և ռազմաքաղաքական համագործակցական հարաբերություններ են հաստատում այդ երկու մերձեցող երկրների միջև:

Ռումինիա

Ռումինիայի կառավարող շրջանները, դժգոհ լինելով Հարավային Բեսարաբիան Ռուսաստանին հանձնելու Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումից, արտաքին քաղաքականության բնագավառում նույնպես կողմնորոշվում են դեպի Ավստրո–Հունգարիան՝ հուսալով նրա ռազմական դաշնակցությամբ վերադարձնել այդ տարածքը: 1883 թ. հոկտեմբերի 30-ին Վիեննայում ստորագրվում է ավստրո-ռումինական ռազմական դաշինքը, ըստ որի՝ Ավստրո-Հունգարիան պարտավորվում էր Ռուսաստանի դեմ համատեղ պատերազմի դեպքում աջակցել Ռումինիային Հարավային Բեսարաբիան վերադարձնելու գործում: Դրա փոխարեն Ռումինիան հրաժարվում էր 1687 թ.-ից Ավստրիայի կազմում գտնվող Տրանսիլվանիայի նկատմամբ հավակնություններից: Նույն օրը ավստրո-ռումինական

դաշինքին է միանում Գերմանիան, իսկ 1888 թ.՝ Իտալիան: Ռումինիան Եռյակ դաշինքի համակարգում է մնում մինչև 1916 թ. օգոստոսի 27-ը:

Գերմանական դաշինքի տերությունների հետ ռազմաքաղաքական սերտ համագործակցության կողմնակից էր 1881 թ. մարտի 14-ին թագավորություն հռչակված Ռումինիայի գահակալ, գերմանացի իշխան Կարոլ 1-ին Հոհենցոլլեռն–Զիգմարինգենը (1866-1914 թթ):

Կիպրոս

Բեռլինի կոնգրեսի աշխատանքների ընթացքում՝ հուլիսի 7-ին հրապարակված սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հրովարտակը վավերացնում էր Օսմանյան կայսրության կազմում Կիպրոս կղզին Անգլիայի կողմից գրավելու և կառավարելու վերաբերյալ հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված անգլո-թուրքական դաշնակցային պայմանագիրը՝ Կիպրոսի կոնվենցիան: Նախքան կայսերական հրովարտակի հրապարակումը՝ Անգլիայի դեսպան Լայարդը և մեծ վեզիր Սաֆվետ փաշան հուլիսի 1-ին Կ.Պոլսում կնքում են անգլո-թուրքական դաշնակցային պայմանագիրը լրացնող առաջին համաձայնագիրը, իսկ օգոստոսի 14-ին և 1879 թ. փետրվարին 3-ին կնքվում են ևս երկու լրացուցիչ համաձայնագրեր: Անգլո-թուրքական դաշնակցային պայմանագրի երեք լրացուցիչ համաձայնագրերով որոշվում և ճշգրտվում էին Օսմանյան կայսրության կազմում Կիպրոս կղզին Անգլիայի կողմից գրավելու և կառավարելու հետ առնչվող քաղաքական, տնտեսական և կրոնական բնույթի հիմնահարցերը:

Հավելյալ համաձայնագրերի քաղաքական հոդվածներով սուլթանը անգլիական թագին էր փոխանցում Կիպրոս կղզում գործադիր և օրենսդիր իշխանություն իրականացնելու լիակատար իրավունքներ ու լիազորություններ:

Անգլիական տիրապետության ժամանակաշրջանում Կիպրո-

սում պետք է շարունակեր գործել մուսուլմանական կրոնական դատարանը, որի իրավասությունը պետք է տարածվեր բացառապես դավանաբանական բնույթի հարցերի վրա: Կիպրոսում գտնվող մզկիթների և մուսուլմանական այլ հաստատությունների սեփականության, կապիտալների և հողերի կառավարման հսկողությունը միասնաբար պետք է իրականացնեին Թուրքիայի մուսուլմանական հաստատությունների՝ վակուֆների վարչության նշանակած ռեզիդենտը և անգլիական իշխանությունների ներկայացուցիչը:Կղզում օսմանյան թագին և կառավարությանը պատկանող անշարժ սեփականության, ինչպես նաև ժառանգությամբ տրված կամ անժառանգ գույքից ստացված եկամուտների դիմաց անգլիական կառավարությունը պարտավորվում էր յուրաքանչյուր տարի սուլթանին վճարել 5000 ֆունտ ստեռլինգ հաստատագրված գումար: Որոշվում է նաև, որ Կիպրոս կղզու տարեկան 140-170 հազար ֆունտ ստեռլինգ եկամտի 92.682 ֆունտ ստեռլինգը, որպես ամենամյա «թուրքական հարկ», պետք է վճարվեր սուլթանական գանձարանին: Սակայն Կիպրոս կղզու տարեկան եկամտից սուլթանական գանձարանին վճարվող ամենամյա «թուրքական հարկը» ծախսվում էր Լոնդոնի սիթիի բանկիրների՝ 1855 թ. Թուրքիային տրամադրած փոխառությունները մարելու համար: Բանակցող կողմերը Անգլիայի կողմից Կիպրոսի գրավման և կառավարման ժամկետը չէին կոնկրետացնում, այլ պայմանավորում էին Հայաստանում Ռուսաստանի կատարած տարածքային ձեռքբերումներից երբևէ հրաժարվելու և դրանք Թուրքիային վերադարձնելու պարագայի հետ: Կիպրոսից հեռանալու Անգլիայի այդ վերապահումը արձանագրված էր Կիպրոսի կոնվենցիայի լրացումը հանդիսացող 1878 թ. հուլիսի 1-ի հավելվածի 6-րդ հոդվածում, որտեղ ուղղակիորեն շեշտված էր. «Եթե Ռուսաստանը Թուրքիային վերադարձնի Կարսը և վերջին պատերազմի ընթացքում Հայաստանում կատարած այլ նվաճումները, Անգլիան

էվակուացիայի կենթարկի Կիպրոսը և 1878 թ. հունիսի կոնվենցիան կդադարի գործելուց»[315]: Սակայն, ստորագրելով Կիպրոսը Թուրքիային վերադարձնելու այդ անհրաժեշտ պայմանը, անգլիական կառավարությունը լիովին համոզված էր, որ Ռուսաստանը երբեք չէր հեռանալու Հայաստանում կատարած իր տարածքային ձեռքբերումներից, մանավանդ, որ 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում անգլո-ռուսական կնքած Համաձայնագրով չէր առարկում Հայաստանում Ռուսաստանի տարածքային նվաճումները պահպանելուն: Մյուս կողմից, անգլիական կողմը լիովին համոզված էր, որ Անգլիան երբեք հոժարակամ չէր հրաժարվելու Արևելյան Միջերկրականի այդ ռազմաստրատեգիական կարևոր հենակետից, եթե անգամ Ռուսաստանը երբևէ Թուրքիային վերադարձներ Հայաստանում կատարած տարածքային նվաճումները:

Հունիսի 4-ի անգլո-թուրքական պաշտպանողական դաշնակցային պայմանագիրը վավերացնող սուլթանական հրովարտակի հրապարակման օրը՝ հուլիսի 7-ին, անգլիական կառավարությունը հրամայում է իր միջերկրածովյան ռազմածովային նավատորմի հրամանատարությանը անհապաղորեն շրջափակման ենթարկել Կիպրոս կղզին: Հուլիսի 11-ի առավոտյան անգլիական ռազմածովային էսկադրան խարիսխ է ձգում Կիպրոսի հարավային՝ Լարնակայի նավահանգստում:

Հուլիսի 12-ին Կիպրոսի նախկին թուրք նահանգապետը հանդիսավոր պայմաններում բրիտանական ռազմածովային սպաների շքախմբով կղզու մայրաքաղաք Նիկոզիա ժամանած Մեծ Բրիտանիայի թագուհու ներկայացուցիչ, կղզու ժամանակավոր նահանգապետ ծովակալ Ջոն Հեյին է հանձնում Անգլիայի կողմից Օսմանյան կայսրության կազմում Կիպրոս կղզին գրավելու և կառավարելու կոնվենցիան վավերացնող հուլիսի 7-ի սուլթանական հրովարտակը: Նիկոզիայի բերդապարսպի, գլխավոր հասարակական և պաշ-

[315] Documents diplomatiques. Affaires d'Orient. Congrès de Berlin. 1878, P., 1878. Annexe à la Convention du 4 juin 1878, p. 308-309.

տոնական հիմնարկություններից իջեցված թուրքական դրոշին փոխարինում է Մեծ Բրիտանիայի դրոշը: Նույն արարողություններն են կատարվում նաև Կիպրոսի մնացյալ քաղաքներում և խոշոր գյուղերում: Այդպիսով՝ փաստորեն վերանում է 1571 թ.-ից Կիպրոս կղզում հաստատված թուրքական տիրապետության 300-ամյա ժամանակաշրջանը: Հուլիսի 17-ին հիմնականում ավարտվում է անգլիական 10 հազ. բանակով Կիպրոս կղզին լիովին գրավելու գործընթացը: Հուլիսի 22-ին հանդիսավորությամբ Նիկոզիա է ժամանում Մեծ Բրիտանիայի թագուհու կողմից Կիպրոսի գերագույն կոմիսար և անգլիական կայազորի գլխավոր հրամանատար նշանակված Հարնետ Ուոլսին, որը միաժամանակ ստանձնում է նաև նահանգապետի և գլխավոր դատավորի պարտականությունները: Սկզբնական շրջանում նա ենթարկվում է միայն Անգլիայի արտաքին գործերի, իսկ այնուհետև գաղութների նախարարին: Կիպրոսի վրա, որպես Օսմանյան կայսրության տարածքի, թեև շարունակվեց պահպանվել սուլթանի սոսկ անվանական, ոչ մի նշանակություն չունեցող գերագույն սյուզերենությունը, կղզու օրենսդիր և գործադիր իշխանությունը, Մեծ Բրիտանիայի թագուհու անունից, սկսեց իրականացնել գերագույն կոմիսարը:

Կղզու բացարձակ մեծամասնությունը կազմող հույն ժողովրդի ինքնավարության ձգտող շարժումները, Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ միավորվելու ազգային փափագները ջլատելու, ինչպես նաև Եգիպտոսի գաղութացման նախօրյակին միջերկրածովյան ռազմածովային կարևոր հենակետ Կիպրոսում ներքաղաքական բարդություններից խուսափելու նպատակով՝ Անգլիան հարկադրված էր իրականացնել որոշ միջոցառումներ՝ իր կառավարման ներքո գտնվող կղզում դեմոկրատական վարչակարգի երևութականություն ստեղծելու համար:

Ու. Գլադստոնի երկրորդ լիբերալ կառավարության ժամանակ, 1882 թ. մարտի 10-ին՝ հրապարակվում է Մեծ Բրիտանիայի թագուհի Վիկտորյայի հրամանագիրը՝ Կիպրոս կղզուն սահմանադրու-

թյուն շնորհելու մասին[316]: Այդ սահմանադրության համաձայն՝ Կիպրոսում հիմնվում էր գերագույն կոմիսարի կողմից բացառապես անգլիացի պաշտոնյաներից նշանակված գործադիր խորհուրդ՝ կառավարություն:

Ստեղծվում էր 18 անդամներից բաղկացած Օրենսդիր խորհուրդ՝ «պառլամենտ», որի վեց անդամներին անձամբ նշանակում էր գերագույն կոմիսարը, իսկ 12 ընտրովի անդամներից 9-ը ներկայացնում էին կղզու մեծամասնությունը կազմող հույն բնակիչներին, երեքը՝ փոքրամասնություն կազմող թուրքերին: Ընտրական ձայնի իրավունք ունեին կղզում հինգ տարվա մշտական բնակություն ունեցող, սեփականության հարկ վճարող, 21 տարին լրացած արական սեռի քաղաքացիները: Ընտրությունները կայանում էին հինգ տարին մեկ անգամ, իսկ Օրենսդիր խորհրդի նիստերը՝ տարին մեկ անգամ: Սահմանադրության համաձայն, ընտրություններին կարող էին մասնակցել 16.727 քրիստոնյաներ և 1.264 մուսուլմաններ, ընդամենը՝ 17.991 ընտրական ձայնի իրավունք ունեցողներ, այսինքն՝ կղզու 186 հազ. բնակչության ընդամենը 9.6%-ը:

Սահմանադրության համաձայն՝ Կիպրոս կղզու գերագույն կոմիսարը Օրենսդիր խորհրդի նախագահն էր, ուներ վճռական ձայնի իրավունք և օժտված էր խորհրդի ընդունած բոլոր որոշումների վրա արգելք՝ վետո դնելու, խորհրդի նիստերն ընդհատելու, հետաձգելու կամ ընդհանրապես այն արձակելու, խորհրդի ընդունած օրինագծերը հաստատելու, ինչպես նաև ինքնուրույն կերպով օրենսդիր իշխանություն իրականացնելու բացառիկ լայն իրավունքներով ու լիազորություններով: Օրենսդիր խորհուրդը զրկված էր կղզու ֆինանսական հարցերը քննարկման ենթարկելու իրավունքից: Օրենսդիր խորհուրդը չէր կարող որևէ ազդեցություն գործել կղզու անգլիական վարչության ներքին քաղաքականության վրա[317]:

1713 թ., տիրանալով Ատլանտյան օվկիանոսը Միջերկրական

[316] Шпаро О. Б., Захват Кипра Англией, М., 1974, с. 262.
[317] Նույն տեղում, էջ 262-263:

ծովի հետ միացնող Ջիբրալթարի նեղուցին և նրա վրա գերիշխող եվրոպական ափի համանուն ամրոցին, 1800 թ.՝ Միջերկրականական ծովի Մալթա կղզուն, իսկ 1878 թ. Օսմանյան կայսրության կազմում գրավելով և իր կառավարմանը ենթարկելով միջերկրածովյան Կիպրոս կղզին, Անգլիան, այդպիսով իր հզոր ռազմածովային նավատորմի միջոցով վերահսկողություն է հաստատում Ջիբրալթարից ամբողջ Միջերկրականով դեպի Արևելք ձգվող ծովային ուղիների վրա:

Օսմանյան կայսրության կազմում գրավելով և իր կառավարմանը ենթարկելով սուլթանի անվանական սյուզերենության ներքո գտնվող 186 հազար բնակչությամբ 10 հազար քառ. կմ. կազմող Կիպրոս կղզին, Անգլիան այն վերածում է բրիտանական գաղութային կայսրության տիրույթի: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմում Եռյակ դաշինքի կազմում Անտանտի դեմ Թուրքիայի մասնակցությունից՝ 1914 թ. նոյեմբերի 5-ին Անգլիան բռնակցում է Կիպրոս կղզին՝ այդպիսով չեղարկելով 1878 թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված անգլո-թուրքական դաշնակցային պայմանագիրը՝ Կիպրոսի կոնվենցիան:

Հունաստան

Բեռլինի կոնգրեսի ավարտից հետո հունական կառավարությունը բանակցություններ է սկսում Թուրքիայի հետ՝ Մեծ տերությունների որոշման համաձայն թուրք-հունական սահմանը Էպիրոսում և Թեսալիայում ճշգրտումների ենթարկելու, այլ կերպ ասած՝ կոնգրեսի նշած սահմաններում այդ տարածքները Հունաստանին զիջելու համար: Եռամյա դիվանագիտական դժվարին բանակցություններից և տերությունների միջնորդությունից հետո, 1881 թ. հուլիսի 2-ին Կ.Պոլսում կնքված թուրք-հունական համաձայնությամբ, Թուրքիան Հունաստանին է զիջում Թեսալիայի մեծ մասը և Հարավային Էպիրոսի Արտայի շրջանը՝ մոտ 14 հազ. քառ. կմ ընդհանուր

տարածությամբ և 300 հազ. բնակչությամբ: Այդ տարածքների դիմաց Հունաստանը Թուրքիային է վճարում 1 մլն ֆրանկ փոխհատուցում[318]: Այդպիսով՝ անկախության պատերազմից հետո, հույն-թուրքական դիվանագիտական դժվարին բանակցությունների և տերությունների անմիջական միջնորդության արդյունքում, Բեռլինի կոնգրեսի առաջարկած սահմանների մոտավոր շրջանակներում Հունաստանին է միանում մինչև այդ թուրքական տիրապետության տակ գտնված հույն բնակչությամբ մի տարածք, որը նշանակալի իրադարձություն էր հույն ժողովրդի ազգային ազատագրության և միասնական, միավորված հունական ազգային պետության ստեղծման ճանապարհին:

Արևելյան Ռումելիայի միացումը Հյուսիսային Բուլղարիային, Սերբիայից բացի, նույնպես մեծ դժգոհություն և հուզմունք է առաջացնում հունական կառավարող շրջաններում, որոնք, ռազմաքաղաքական հավասարակշռությունը Բալկաններում վերականգնելու նպատակով որպես փոխհատուցում Բուլղարական ինքնավար իշխանապետությանը Արևելյան Ռումելիայի միացման, պահանջում են 1881 թ.-ից հետո թուրքական տիրապետության տակ դեռևս մնացած Թեսալիայի և Էպիրոսի մնացյալ շրջանները: 1885 թ. սեպտեմբերի 25-ին Հունաստանը զորակոչ է հայտարարում, և օգտվելով սերբ–բուլղարական պատերազմից՝ հունական որոշ զորաջոկատներ մտնում են Թեսալիա ու Էպիրոս: Սակայն 1886 թ. մայիսին անգլիական, իտալական, ավստրիական և գերմանական ռազմանավերը շրջափակման են ենթարկում հունական բոլոր նավահանգիստները՝ ստիպելով Հունաստանին պահպանել խստագույն չեզոքություն: Նման պայմաններում Հունաստանը ենթարկվում է տերությունների ճնշմանը, որի հետևանքով 1886 թ. հունիսին 7-ին Հունաստանի ծովային շրջափակումը վերանում է:

19-րդ դ. 90-ական թթ. թուրքական իշխանությունների կազմա-

[318] Noradounghian G., նշվ. աշխ., h. 4. 1878-1902. N 907. Convention avec la Grèce relative à la rectification des frontières Turco-grecques. Du 2 juillet 1881:

կերպած հայկական կոտորածների, Կրետե կղզում և Մակեդոնիայում բռնկված ազգային-ազատագրական ապստամբությունների կապակցությամբ կրկին բորբոքվում է Արևելյան հարցը՝ վերստին դառնալով եվրոպական Մեծ տերությունների դիվանագիտության քննարկման օրակարգային խնդիր:

1896 թ. մայիսին Կրետե կղզում սկսվում է ազգային-ազատագրական ապստամբություն՝ Հունաստանի հետ միավորվելու նշանաբանով: Ի պատասխան թուրքական կառավարությանը «սրբազան պատերազմ»՝ «ջիհադ» է հայտարարում ապստամբներին՝ կազմակերպելով կոտորածներ կղզու քրիստոնյա բնակչության նկատմամբ: 1897 թ. փետրվարի 15-ին Հունաստանից 1560 զինվորներով ապստամբներին օգնության է հասնում գնդապետ Վասոսը՝ կղզին Հունաստանի թագավոր Գեորգի անունից գրավելու համար: Միաժամանակ, կրետացի ապստամբներին օգնելու և թուրքական ափիհանումը կանխելու նպատակով հունական կառավարությունը կրետական ջրերն է ուղարկում չորս ռազմանավեր:

Կրետական հարցում հույն-թուրքական լարված հարաբերությունների պայմաններում 1897 թ. մարտի 14-ին հունական կառավարությունը հայտարարում է համընդհանուր զորակոչ և, առանց պատերազմ հայտարարելու, ապրիլի 9-ին հունական զորքերը, անցնելով սահմանը, ռազմական գործողություններ են սկսում Թեսալիայում և Էպիրոսում: Ապրիլի 18-ին Թուրքիան պատերազմ է հայտարարում Հունաստանին: Անկազմակերպ, վատ զինված հունական բանակը մոտ մեկ ամիս տևած պատերազմում կործանիչ պարտություն է կրում գերմանական սպաների օգնությամբ հրահանգավորված և զինված թուրքական բանակի կողմից: Ռուսաստանի անմիջական միջամտությամբ՝ մայիսի 19-ին կնքվում է զինադադար, իսկ դեկտեմբերի 4-ին տերությունների միջնորդությամբ Կ.Պոլսում կնքվում է հաշտության պայմանագիր: Դրա համաձայն՝ Հունաստանը Թեսալիայից 55 քառ. կմ ընդհանուր տարածքով Թուրքիային է զիջում ռազմաստրատեգիական նշանակություն

ունեցող վեց շրջաններ, պարտավորվում նաև վճարել 4 մլն թուրքական ֆունտ ռազմատուգանք[319]:

Հունաստանի տնտեսական ու ֆինանսական ծանր դրության հետևանքով 1898 թ. Մեծ տերությունները ստեղծում են միջազգային ֆինանսական հանձնաժողով՝ վերահսկողություն հաստատելով Հունաստանի ֆինանսական համակարգի վրա և ուժեղացնելով նրա կախումը օտարերկրյա կապիտալից:

Գնդապետ Վասոսի Կրետե ափ իջնելուց անմիջապես հետո տերությունները ռազմանավերով շրջափակման և գրավման են ենթարկում Կրետեն՝ այն բաժանելով անգլիական, ֆրանսիական, իտալական և ռուսական օկուպացիոն գոտիների: Թուրքական դրոշի կողքին բարձրացվում են հիշյալ չորս տերությունների պետական դրոշները: Տերությունների ճնշմամբ՝ հունական զինված ուժերը և ռազմանավերը 1897 թ. մայիսի 26-ին հեռանում են Կրետեից:

1897 թ. մարտի 21-ին, սկսելով Կրետե կղզու գրավումը և ռազմանավերով շրջափակումը, տերությունները նույն օրն իսկ հրապարակած հայտարարությամբ հանդիսավորապես ազդարարում են Օսմանյան կայսրության կազմում՝ սուլթանի սուվերենության ներքո, Կրետեին ներքին ինքնավարություն շնորհելու իրենց վերջնական որոշման մասին: Սակայն ապրիլին սկսված հույն–թուրքական պատերազմի հետևանքով տերությունները հարկադրված են լինում հետաձգել Կրետե կղզու ինքնավարության կարգավիճակը սահմանելու որոշումը:

Թուրք-հունական հաշտության պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո՝ դեկտեմբերի 18-ին, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ռուսաստանը Թուրքիայի հետ համաձայնություն են կայացնում Կրետե կղզուն վարչական կառավարման կազմակերպական Կանոնադրություն շնորհելու վերաբերյալ: Հիշյալ տերու-

[319] Noradounghian G., նշվ. աշխ., h. 4. 1878-1902:
N 987. Traité de paix définitif avec la Grèce et deux Protocoles annexes. Conclu à Constantinople le 4 décembre 1897, p. 553-561.

թյունների անմիջական նախաձեռնությամբ՝ 1897 թ. դեկտեմբերի 18-ին, Կրետե կղզուն շնորհված կազմակերպական Կանոնադրության համաձայն, Օսմանյան կայսրության կազմում Կրետեն ստանում էր վարչական ինքնավարության իրավունքներ: Կղզու բարձրագույն գործադիր իշխանությունը պետք է իրականացներ վերոհիշյալ տերությունների համաձայնությամբ կառավարման հնգամյա ժամկետով սուլթանի նշանակած քրիստոնյա գեներալ-նահանգապետը: Բարձրագույն գործադիր իշխանության ղեկավար գեներալ-նահանգապետը պետք է տնօրիներ կղզում տեղակայված բոլոր թուրքական զինված ուժերը: Օրենսդիր իշխանությունը պետք է իրականացներ կղզու քրիստոնյա և փոքրամասնություն կազմող մուսուլման բնակիչներից համամասնաբար ընտրված Ազգային ժողովը: Կղզու բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի ընդունած օրինագծերը և օրենսդրական ակտերը կարող էին օրենքի ուժ ստանալ և գործադրվել միայն գեներալ-նահանգապետի վավերացումից հետո: Բացի օսմանյան գանձարանին մուծելիք ամենամյա պարտադիր դրամական վճարից, կղզու ուղղակի և անուղղակի հարկերը պետք է օգտագործվեին միայն տեղական կարիքները բավարարելու համար: Մուսուլման բնակիչների անվտանգությունը և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, ինչպես նաև քրիստոնյաներին համահավասար նրանց իրավունքներն ապահովող երաշխիքները տերությունների կողմից արդյունավետ համարվելու դեպքում թուրքական զինված ուժերը աստիճանաբար պետք է դուրս բերվեին Կրետե կղզուց[320]:

Թուրքական կառավարությանը ստիպելով Կրետե կղզուն շնորհել ներքին ինքնավարության կազմակերպական Կանոնադրություն՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ռուսաստանը Կրետեն փաստորեն դուրս էին բերում թուրքական կենտրոնական իշխանության անմիջական ենթակայությունից՝ միասնաբար դառնալով

[320] Albin P., Les Grands Traités politiques. Depuis 1815 jusqu'à nos jours. Paris, 1911. La Crète. Statut organique (18 décembre 1897), p. 259-261.

կղզու վարչական ինքնավարության երաշխավորներ և պաշտպան տերություններ: Թուրքական կառավարության հետ 1897 թ. դեկտեմբերի 18-ին կայացրած համաձայնությամբ, եզրակացնում է թուրք պատմաբան Բայուրը, Կրետե կղզին փաստացիորեն դուրս էր գալիս Հունաստանի դեմ պատերազմում հաղթանակած Օսմանյան կայսրության ենթակայությունից՝ անցնելով Մեծ տերությունների վերահսկողության ներքո, այնինչ Հունաստանի դեմ պատերազմը առաջացել էր հենց Կրետե կղզու և այն Օսմանյան կայսրության կազմում պահելու նպատակով[321]:

Կրետե կղզուն վարչական ինքնակառավարման կազմակերպական Կանոնադրություն շնորհելու հետ միաժամանակ, Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդի անձնական նախաձեռնությամբ, առաջ է քաշվում Հունաստանի թագավորի երկրորդ որդուն՝ արքայազն Գեորգին Կրետե կղզու գերագույն կոմիսար նշանակելու հարցը: Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան անվերապահորեն իրենց համաձայնությունն են հայտնում արքայազն Գեորգին Կրետե կղզու գերագույն կոմիսար նշանակելու Նիկոլայ 2-րդի առաջարկությանը: Սակայն Կրետե կղզու շրջափակման մասնակից տերություններ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, Օսմանյան կայսրությունում հետապնդելով տնտեսական ու քաղաքական ազդեցություն հաստատելու նպատակներ, հրաժարվում են Նիկոլայ 2-րդի առաջարկած թեկնածությունը պաշտպանելուց և 1898 թ. մարտին իրենց ռազմանավերը դուրս են բերում կրետական ջրերից: Այդպիսով՝ 1898 թ. մարտին գերմանական երկու կայսրություններ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հրաժարվում են կրետական հարցում չորս պաշտպան տերությունների հետ միասնական համագործակցության քաղաքականությունից:

Չհաշտվելով Օսմանյան կայսրության իրական գերիշխանությունից Կրետե կղզու փաստացիորեն դուրս գալու իրողության հետ՝

[321] Y.H. Bayur, նշվ. աշխ., էջ 109:

թուրքական զինված ուժերը և փոքրամասնություն կազմող մուսուլման բնակիչները շարունակում են մեծամասնություն կազմող կրետացի քրիստոնյաների նկատմամբ իրենց դարավոր վայրագությունները և կոտորածները:

1898 թ. սեպտեմբերի 6-ին թուրքական զորքերը մուսուլմանների անմիջական մասնակցությամբ կազմակերպում են կղզու քրիստոնյա խաղաղ բնակչության հերթական կոտորածը, որի հետևանքով սպանվում են 500 կրետացի քրիստոնյաներ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսը և 14 անգլիացի զինվորներ[322]: Քրիստոնյա բնակչության նկատմամբ իրագործված կոտորածները և վայրագությունները ստիպում են պաշտպան տերություններին նոր որոշումներ կայացնել Կրետե կղզու հետագա վարչական ինքնակառավարման կարգավիճակի վերաբերյալ:

1898 թ. հոկտեմբերի 5-ին չորս պաշտպան տերությունները թուրքական կառավարությանը ներկայացրած վերջնագրով անառարկելիորեն պահանջում են մեկ ամսվա ընթացքում թուրքական վարչակազմը և թուրքական զինված ուժերը անվերապահորեն դուրս բերել Կրետեից, հակառակ պարագայում՝ սպառնալով զինված ուժ գործադրել իրենց որոշումներն իրականացնելու համար[323]: Այնուամենայնիվ, սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը դիմում է տերություններին, որպես իր սուվերեն իրավունքների պաշտպանության երաշխիք, իրեն իրավունք վերապահել սահմանափակ քանակությամբ թուրքական կայազորներ պահելու Կրետե կղզու Կանեա, Կանդիա և Ռեթիմո քաղաքներում[324]: Միաժամանակ, Նիկոլայ 2-րդին նոյեմբերի 23-ին հղած նամակով խնդրում էր արքայազն Գեորգի փոխարեն Կրետե կղզու գերագույն կոմիսարի պաշտոնում

[322] Édouard Driault et Michel Lhéritier. Histoire diplomatique de la Grèce.De 1821 à nos jours. Tome IV.P., 1926, p. 460.
[323] Նույն տեղում, էջ 461:
[324] Նույն տեղում, էջ 461-462:

հաստատել իր թեկնածուին[325]: Իր հերթին, Նիկոլայ 2-րդին հոկտեմբերի 20-ին ուղղած նամակով Վիլհելմ 2-րդը հորդորում էր գթալ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին և կրետական հարցը լուծել նրան ընդունելի պայմաններով[326]: Սակայն Նիկոլայ 2-րդին ուղղված երկու կայսրությունների միապետների՝ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի և կայսր Վիլհելմ 2-րդի անձնական դիմում-խնդրագրերը մնում են անհետևանք: Նոյեմբերի 9-ին պաշտպան տերությունները կրկնում են Կրետե կղզուց թուրքական զինված ուժերը և թուրքական վարչակազմը առանց վերապահումների դուրս բերելու հոկտեմբերի 5-ի վերջնագիրը: Նոյեմբերի 15-ին Կրետե կղզուց թուրքական բոլոր զինված ուժերի և վարչակազմի դուրս բերումը լիովին ավարտվում է: Նոյեմբերի 26-ին, պաշտոնապես ստանալով Հունաստանի թագավորի համաձայնությունը, չորս պաշտպան տերությունները, որպես իրենց անմիջական ներկայացուցիչ, ինքնավար Կրետե կղզու գերագույն կոմիսար են նշանակում արքայազն Գեորգին: Նոյեմբերի 30-ին պաշտպան տերությունները թուրքական կառավարությանն են հաղորդում Հունաստանի թագավորի երկրորդ որդուն՝ արքայազն Գեորգին, ինքնավար Կրետե կղզու գերագույն կոմիսար նշանակելու իրենց կայացրած որոշման մասին[327]: Միաժամանակ, պաշտպան տերությունները խոստանում են Կրետե կղզում պահպանել սուլթանի «գերագույն իրավունքները» և ապահովել կրետացի մուսուլմանների շահերն ու անվտանգությունը[328]:

Արքայազն Գեորգին Կրետե կղզու գերագույն կոմիսար նշանակելուց մի քանի օր անց՝ դեկտեմբերի 5-ին, պաշտպան տերությունները վերացնում են ռազմանավերով Կրետեի շրջափակումը: Դեկտեմբերի 21-ին ֆրանսիական զրահանավով և մյուս պաշտպան տերությունների ռազմանավերի ուղեկցությամբ Կրետե կղզու գերա-

[325] Նույն տեղում, էջ 464:
[326] Նույն տեղում, էջ 462:
[327] Նույն տեղում, էջ 465:
[328] Նույն տեղում, էջ 465-466:

գույն կոմիսար արքայազն Գեորգը մեծ հանդիսավորությամբ ժամանում է Կրետե և ձեռնամուխ լինում կղզու ինքնավար վարչական կառավարման համակարգի ձևավորման աշխատանքներին: Պաշտպան տերություններից յուրաքանչյուրը 1 մլն ֆրանկ կանխավճար է տրամադրում՝ կղզու ինքնավար վարչական համակարգի կազմակերպմանը ֆինանսապես օժանդակելու համար:

1899 թ. փետրվարի 5-ին ընտրված կրետական Ազգային ժողովը ձևականորեն հաստատում է տերությունների մշակած սահմանադրությունը, որով տերությունների անմիջական ենթակայության և հովանավորության ներքո Կրետե կղզին ստանում էր ներքին ինքնավարության իրավունքներ:

Թեև Կրետե կղզում ձևավորված ինքնավարությունը իրականում պաշտպան չորս տերությունների կողմից հաստատած օկուպացիոն վարչակարգ էր, այնուամենայնիվ, մեծ էր կրետական ազատագրական պայքարի պատմական նշանակությունը, որի քաղաքական հետևանքը եվրոպական չորս տերությունների անմիջական միջամտության արդյունքում թուրքական միջնադարյան դարավոր տիրապետության փաստական վերացումն էր: Հունաստանը 1897 թ. պատերազմում թեև կրում է ջախջախիչ պարտություն, այնուամենայնիվ, նշում է ֆրանսիական պատմագրությունը, հույների ոչ բոլոր ջանքերն են ապարդյուն անցնում, որովհետև հույն արքայազն Գեորգի գերագույն ղեկավարությամբ Կրետեն ստանում է ինքնավարություն, և նվազ հավանական է, որ այն երբևիցե կրկին հայտնվի թուրքական տիրապետության տակ[329]: Կրետեի հույն ժողովուրդը արդեն պետք է պայքար ծավալեր պաշտպան չորս տերությունների հաստատած ինքնավարության վարչակարգը վերացնելու և Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ քաղաքականապես միավորվելու համար:

Այդպիսով՝ 1898 թ. նոյեմբերին Կրետե կղզին փաստացիորեն

[329] История XIX века, с. 48.

դուրս է գալիս 1669 թ.-ից հաստատված թուրքական դարավոր տիրապետությունից և եվրոպական չորս տերությունների պաշտպանության և հովանավորության ներքո ստանում ներքին ինքնավարության լայն իրավունքներ: Որպես թուրքական սուլթանի սյուզերենության խորհրդանիշ՝ կղզու ամրոցներից մեկի աշտարակի վրա՝ չորս պաշտպան տերությունների դրոշների կողքին, սոսկ պահպանվում է թուրքական դրոշը: Այդպիսով, նշում է թուրք պատմաբան Բայուրը, 1898 թ.-ից Օսմանյան կայսրության հետ Կրետե կղզին միացնող միակ կապն է դառնում Կրետեի ամրոցներից մեկի վրա ծածանվող թուրքական դրոշը[330]: Եվրոպական տերությունների վերահսկողությամբ և պաշտպանությամբ Կրետե կղզում ստեղծված քաղաքական նոր վարչակարգի պայմաններում կրետական հարցը Թուրքիայի համար այլևս ընդունում էր ոչ թե իրավական, այլ միջազգային բնույթ, եզրակացնում է թուրք պատմաբանը[331]: Այնուամենայնիվ, նշում է նա, չնայած Կրետե կղզում թուրքական գերիշխանության վերացմանը, Հունաստանի դեմ 1897 թ. հաղթական պատերազմը բարենպաստ ազդեցություն է թողել Օսմանյան կայսրության ներքաղաքական իրադրության վրա՝ ամրապնդելով սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի բռնատիրական վարչակարգը: Բայուրը հավաստում է, որ հույն-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրության հաղթանակը բարձրացրել է սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հեղինակությունը, ներշնչել ապագայի նկատմամբ կրկին վստահությամբ նայելու զգացումը՝ համընդհանուր ոգևորություն առաջացնելով երկրում[332]: Հունաստանի դեմ հաղթական պատերազմը, շեշտում է Բայուրը, լայն արձագանք է գտնում համայն իսլամական աշխարհում և աննախադեպորեն բարձրացնում սուլթան Աբդուլ Համիդի՝ որպես կործանվող իսլամական աշխարհի պահապանի և փրկչի, համայն իսլամականության հոգևոր պետի՝ խալիֆի հե-

330 Y.H. Bayur, նշվ.աշխ., էջ 123:
331 Նույն տեղում, էջ 294:
332 Նույն տեղում, էջ 115:

ղինակությունը: Փլուզվող իսլամական աշխարհը, շեշտում է Բայուրը, Հունաստանի դեմ հաղթանակը համարեց որպես խավարը ճեղքող մի կայծակ, ապագայի հանդեպ հույսեր ներշնչող մի լուսատու և, ի դեմս Աբդուլ Համիդի, նրան վերապահեց որպես իսլամականության հզոր խալիֆի և պահապանի, ինչպես նաև ապագա հոգևոր փրկչի մեծ դերը[333]: Բայուրի կարծիքով, Հունաստանի դեմ հաղթանակը ամրապնդել է նաև Օսմանյան կայսրության միջազգային դրությունը՝ թեև ժամանակավորապես կասեցնելով այդ հսկայածավալ կայսրության կործանման գործընթացը: «1897-1898 թթ. Օսմանյան կայսրության կործանումը կասեցվում է: Թեև նրա քայքայումը սոսկ մի քանի տարվա խնդիր էր, այնուամենայնիվ, այդ կայսրությունը կարողանում է ևս քսան տարի իր գոյությունը երկարաձգել և առերևույթ հուսադրող որոշ ժամանակներ անցկացնել»,- գրում է նա[334]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բեռլինի կոնգրեսից հետո նրա կայացրած որոշումների, տերությունների իրականացրած գաղտնի դիվանագիտության ու նրանց կնքած համաձայնագրերի սկզբունքների հիման վրա բալկանյան երկրներում կատարվում են աշխարհաքաղաքական նշանակալից փոփոխություններ ու զարգացումներ:

1879 թ. ապրիլի 28-ին Տիրնովոյում Բուլղարական իշխանապետության Հիմնադիր ժողովն ընդունում է ռուսական կառավարության նախապես մշակած և Ռուսաստանի կայսր Ալեքսանդր 2-րդի կողմից հաստատված կազմակերպական Կանոնադրությունը՝ սահմանադրությունը, որով Բուլղարական իշխանապետությունը հռչակվում էր սահմանադրական, ժառանգական միապետություն: Սահմանադրությունը շրջանցում էր օսմանյան սուլթանի գլխավորու-

[333] Նույն տեղում, էջ 117:
[334] Նույն տեղում, էջ 115:

թյամբ Բուլղարական ինքնավար իշխանապետության վասալական կախվածության իրավական կարգավիճակը ամրագրած Բեռլինի կոնգրեսի համապատասխան հոդվածը:

Ապրիլի 29-ին Տիրնովոյում հրավիրված առաջին Ժողովրդական Մեծ ժողովը Բուլղարական իշխանապետության իշխան է ընտրում Ալեքսանդր 2-րդի առաջադրած թեկնածուին՝ Ռոմանովյան արքայատոհմի ազգական, գերմանական 22-ամյա իշխան Ալ. Բատտենբերգին: Հյուսիսային Բուլղարիայի իշխանապետությունը իր գործունեությունն է սկսում ինքնուրույն պետության կարգավիճակով՝ սուլթանից որպես վասալական կախվածության նշան պարտավորվելով սոսկ ամենամյա հարկ վճարել թուրքական կառավարությանը:

1879 թ. ապրիլի 26-ին Եվրոպական հանձնաժողովը ավարտում է օսմանյան սուլթանի քաղաքական և ռազմական գերագույն իշխանության ներքո Հարավային Բուլղարիայի՝ Արևելյան Ռումելիայի վարչական ինքնավարությանը վերաբերող կազմակերպական Կանոնադրության՝ սահմանադրության մշակումը, որը մայիսի 16-ի սուլթանական հրովարտակով ստանում է օրենքի ուժ: Արևելյան Ռումելիայի կազմակերպական Կանոնադրության հիման վրա ստեղծված Ազգային ժողովը և կառավարությունը, փաստորեն, անկախ են դառնում իրենց գործունեության բնագավառներում՝ շատ հաճախ չհենթարկվելով սյուզերեն սուլթանին՝ մարզի կարևորագույն հարցերը լուծելով միանգամայն ինքնուրույն կերպով:

Բեռլինի կոնգրեսի սահմանած ժամկետի համաձայն՝ 1879 թ. հուլիսին Ռուսական քաղաքացիական վարչությունը և զորքերը հեռանում են Բուլղարական իշխանապետության և Արևելյան Ռումելիայի սահմաններից:

1885 թ. սեպտեմբերի 18-ին Արևելյան Ռումելիայի կենտրոն Պլովդիվում կատարված ժողովրդական ապստամբության հետևանքով օսմանյան սուլթանի քաղաքական ու ռազմական գերագույն իշխանության ներքո գործող ինքնավար վարչությունը տա-

պալվում է, և սեպտեմբերի 20-ին Հյուսիսային Բուլղարիայի իշխան Ալ. Բատտենբերգը հռչակում է երկու Բուլղարիաների միավորման և «Հյուսիսային ու Հարավային Բուլղարիայի իշխան» տիտղոսը կրելու մասին մանիֆեստ:

1886 թ. ապրիլի 5-ին Կ.Պոլսի սուլթանական պալատ Թոփհանեում եվրոպական վեց տերությունների և Թուրքիայի միջև կնքված համաձայնությամբ՝ երկու Բուլղարիաների միավորման փաստը ստանում է միջազգային իրավական ճանաչում: Այդպիսով՝ վերացվում էր 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Բալկանյան լեռնաշղթայով Բուլղարիան երկու տարբեր վարչաքաղաքական նահանգների բաժանելու վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշումը և ստեղծվում էր մեկ՝ միասնական Բուլղարիա: Այժմ արդեն բուլղար ժողովուրդը պետք է պայքարեր անվանապես օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո միավորված Բուլղարիայի քաղաքական անկախությունը նվաճելու և միջազգային իրավունքի լիակատար սուբյեկտ դառնալու համար:

Սերբիայի իշխան Միլան Օբրենովիչը 1881 թ. հունիսի 28-ին Բելգրադում Ավստրո-Հունգարիայի հետ կնքում է «հարատև խաղաղության և բարեկամության» մասին դաշնակցային գաղտնի պայմանագիր, ըստ որի՝ Ավստրո-Հունգարիան, փաստորեն, իր քաղաքական ազդեցությունն էր հաստատում Սերբիայի վրա, որի հետևանքով Բելգրադը երկար ժամանակով դուրս է գալիս ռուսական ենթակայության ոլորտից: Ավստրո-Հունգարիայի աջակցությամբ՝ 1882 թ. մարտի 6-ին Սերբական իշխանապետությունը հռչակվում է թագավորություն:

1881 թ. մարտի 14-ին Ռումինիայի իշխանապետությունը հռչակվում է թագավորություն: 1883 թ. հոկտեմբերի 30-ին Վիեննայում ստորագրվում է ավստրո-ռումինական ռազմական դաշինքը, որի համաձայն՝ Ավստրո-Հունգարիան պարտավորվում էր Ռուսաստանի դեմ համատեղ պատերազմում աջակցել Ռումինիային Հա-

րավային Բեսարաբիան վերադարձնելու գործում: Դրա դիմաց Ռումինիան հրաժարվում էր 1677 թ.-ից Ավստրիայի կազմում գտնվող Տրանսիլվանիայի նկատմամբ իր հավակնություններից: Նույն օրը ավստրո-ռումինական դաշինքին է միանում Գերմանիան, 1888 թ.՝ Իտալիան: Ռումինիան գերմանական խմբավորման դաշինքի համակարգում է մնում մինչև 1916 թ. օգոստոսի 27-ը:

Բեռլինի կոնգրեսի աշխատանքների ընթացքում՝ հուլիսի 7-ին հրապարակված Աբդուլ Համիդի կայսերական հրովարտակը վավերացնում էր Կիպրոս կղզին Օսմանյան կայսրության կազմում Անգլիայի կողմից գրավելու և կառավարելու վերաբերյալ հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված անգլո-թուրքական պաշտպանողական դաշնակցության մասին պայմանագիրը՝ Կիպրոսի կոնվենցիան: Դրա հիման վրա՝ հուլիսի 17-ին, Անգլիան լիովին ավարտում է Օսմանյան կայսրության կազմում Կիպրոս կղզին ամբողջապես ռազմական գրավման ենթարկելու գործընթացը: Մեծ Բրիտանիայի թագուհու՝ Վիկտորյայի՝ 1882 թ. մարտի 10-ի հրամանագրով Կիպրոս կղզուն շնորհվում է տեղական ինքնակառավարման սահմանադրություն: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմում Եռյակ դաշինքի կազմում Անտանտի դեմ Թուրքիայի մասնակցությունից՝ 1914 թ. նոյեմբերի 5-ին Մեծ Բրիտանիան բռնակցում է Կիպրոս կղզին՝ այդպիսով չեղարկելով 1878 թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում կնքված անգլո-թուրքական դաշնակցային պայմանագիրը՝ Կիպրոսի կոնվենցիան:

Թուրք-հունական սահմանը Էպիրոսում և Թեսալիայում ճշգրտումների ենթարկելու վերաբերյալ Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշման համաձայն՝ տերությունների միջնորդությամբ 1881 թ. հուլիսի 2-ին Կ.Պոլսում կնքված թուրք-հունական համաձայնությամբ Թուրքիան Հունաստանին է զիջում Թեսալիայի մեծ մասը և Հարավային Էպիրոսի Արտայի շրջանը՝ 14 հազար քառ. կմ ընդհանուր տարածությամբ և 300 հազար բնակչությամբ: Այդ տարածքների դիմաց Հունաստանը Թուրքիային է վճարում 1 մլն ֆրանկ փոխհատուցում: Այդպիսով՝ խաղաղ ճանապարհով 1881 թ. Հունաստա-

նին է միանում մինչև այդ թուրքական տիրապետության տակ գտնված հույն բնակչությամբ մի տարածք, որը նշանակալի իրադարձություն էր հույն ժողովրդի ազգային ազատագրության և միասնական, միավորված հունական ազգային պետության ստեղծման ճանապարհին:

1896 թ. մայիսին Կրետե կղզում կրկին բռնկված հակաթուրքական, ազգային-ազատագրական ապստամբության և 1897 թ. հույն-թուրքական պատերազմի հետևանքով 1898 թ. հոկտեմբերի 5-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի կողմից թուրքական կառավարությանը ներկայացրած վերջնագրով նոյեմբերի 15-ին թուրքական վարչակազմի և զինված ուժերի դուրս բերումը Կրետե կղզուց լիովին ավարտվում է: Այդպիսով՝ 1898 թ. նոյեմբերին Կրետե կղզին փաստորեն դուրս է գալիս թուրքական դարավոր տիրապետությունից և չորս տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի անմիջական ենթակայության և հովանավորության ներքո, ստանում է ներքին ինքնավարության իրավունքներ: Որպես օսմանյան սուլթանի սյուզերենության միակ խորհրդանիշ՝ կղզու ամրոցներից մեկի աշտարակի վրա՝ չորս պաշտպան տերությունների դրոշների կողքին, սոսկ պահպանվում է թուրքական դրոշը: Այժմ Կրետեի հույն ժողովուրդը արդեն պետք է պայքար ծավալեր չորս պաշտպան տերությունների հաստատած ինքնավարության վարչակարգը վերացնելու և Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ քաղաքականապես միավորվելու համար:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

1908-1909 թթ. Բոսնիական ճգնաժամը

20-րդ դարի սկզբին ուժեղանում է ավստրո-ռուսական մրցակցությունը Բալկանյան թերակղզում ռազմաքաղաքական և տնտեսական գերիշխանության հաստատման համար: Այդ առումով, ռուսական դիվանագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը Սերբիայում ռուսամետ իշխանության հաստատումն էր: 1903 թ. մայիսին, ռուսական հատուկ ծառայությունների անմիջական մասնակցությամբ, Սերբիայում տեղի է ունենում պալատական հեղաշրջում, որի հետևանքով ավստրիամետ Օբրենովիչյան արքայատոհմին փոխարինում է ռուսամետ Կարագեորգիևիչների արքայատոհմը: Այդ պալատական հեղաշրջումը կտրուկ կերպով փոխում է Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը Սերբիայի նկատմամբ: 1906 թ. սկզբին Ավստրո-Հունգարիան փակում է իր սահմանը՝ տնտեսական պատերազմ սկսելով Սերբիայի դեմ: Քանի որ Սերբիան ելք չուներ դեպի ծով, և սերբական ամբողջ արտաքին առևտուրը իրականացվում էր կա՛մ Ավստրո-Հունգարիայում, կա՛մ նրա տարածքով եվրոպական երկրներում, ուստի սահմանի փակումը ավստրիական կառավարության համար դառնում է Սերբիայի վրա քաղաքական ճնշում գործադրելու հզոր միջոց[335]: Միաժամանակ, Ավստրո-Հունգարիայում ծրագրում էին պատերազմել Սերբիայի դեմ, որպես պետություն ոչնչացնել նրան, ուղի հարթել դեպի Էգեյան ծով և Թեսալոնիկեն դարձնել ավստրո-հունգարական նավահանգիստ: Այդ

[335] История дипломатии, том II, с. 635.

ծրագրի հեղինակներն էին ռազմական կուսակցության ղեկավարներ Ավստրո-Հունգարիայի Գլխավոր շտաբի պետ Կոնրադ ֆոն Հետցենդորֆը, արտգործնախարար Էրենտալը և թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանտը: Այդ նպատակի իրականացման համար նախատեսվում էր նախ սկսել Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումից, ապա ջախջախել Սերբիային որպես պետություն և զավթել նրա տարածքը[336]: Եթե հաջողվեր Ավստրո–Հունգարիայի այդ քաղաքականությունը Բալկաններում, իսկ Գերմանիայինը՝ Օսմանյան կայսրությունում, ապա այդ երկու գերմանական կայսրությունները Բալկաններով ներթափանցելու էին Մերձավոր և Միջին Արևելք: Սակայն Բալկանների վերաբերյալ այդ պլանները մեծ անհանգստություն էին առաջացնում Անտանտի երկրներում: Բալկաններում իրենց քաղաքականության համաձայնեցման նպատակով Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդը և Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ 7-րդը 1908 թ. հունիսի 8-9-ը բանակցություններ են վարում Ռևելում (Տալլինում): Անգլո-ռուսական գաղտնի բանակցությունները մեծ տագնապ են առաջացնում ոչ միայն Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում, այլև Օսմանյան կայսրությունում: Հետևանքը լինում է այն, որ 1908 թ. հուլիսի 3-ին Մակեդոնիայի Ռեսնե (արդի Ռեսեն) քաղաքի կայազորի ապստամբությամբ սկսված երիտթուրքական անարյուն հեղափոխության հետևանքով հուլիսի 24-ին վերականգնվում է 1878 թ. փետրվարի 14-ին Աբդուլ Համիդ 2-րդի կողմից կասեցված 1876 թ. Օսմանյան կայսրության սահմանադրությունը:

Ինչպես նշվում է թուրքական պատմագրության մեջ, Մակեդոնիայի լեռներում երիտասարդ սպաների կողմից ապստամբության դրոշ պարզելու պատճառ դարձած հիմնական իրադարձությունը 1908 թ. հունիսին Ռևելում կայացած Տեսակցությունն էր[337]: Գերմանական պաշտոնական փաստաթղթերի հիման վրա թուրքական

[336] Նույն տեղում, էջ 635-636:
[337] İlber Ortayli, Osmanli İmparatorluğunda Alman nüfuzu, İstanbul, 2016, s. 195.

պատմագրությունը վկայակոչում է 1908 թ. հեղափոխության վերաբերյալ կայզեր Վիլհելմ 2-րդի տեսակետը, որի համաձայն՝ 1908 թ. հեղափոխությունը կատարվել է ոչ թե Փարիզի և Լոնդոնի երիտթուրքերի, այլ միայն բանակի, իսկ իրականում՝ բացառապես Գերմանիայում դաստիարակված և իրենց «գերմանացի սպաներ» համարող սպաների կողմից: 1908 թ. հեղափոխությունը բացառապես ռազմական բնույթ ունի, շեշտում էր Վիլհելմ 2-րդը և եզրակացնում. «այդ սպաները սուրը ձեռքներին մտածում են իսկական գերմանացիների նման»[338]:

«Իսկական գերմանացիների նման մտածող» սպաներից էր 1909-1911 թթ. Բեռլինում Օսմանյան կայսրության ռազմական կցորդ, Վիլհելմ 2-րդի հավանությանը արժանացած Էնվեր փաշան, նշում է թուրքական պատմագրությունը: Նա այն աստիճանի էր գերմաներեն մտածում և իրեն որպես գերմանացի դրսևորում, նշում է թուրքական պատմագրությունը, որ գերմանացիների վստահությունը մեծապես շահած լինելու պատճառով Առաջին համաշխարհային պատերազմում գերմանացիները Թուրքիային «Էնվերլանդ» էին անվանում[339]: Էնվեր փաշայից բացի, նշում է թուրքական պատմագրությունը, նրա շրջապատի մտավորականների մի մասը, լիակատար կերպով գերմաներենին տիրապետելուց բացի, նույնպես գերմաներեն էր մտածում[340]:

Սահմանադրության վերահռչակմամբ երիտթուրքերը փորձում էին ապացուցել, որ արդեն սահմանադրական դարաշրջան է սկսվում Օսմանյան կայսրության համար: Ուստի, հայտարարում էին նրանք, «վերանում է եվրոպական տերությունների միջամտության անհրաժեշտությունը Օսմանյան կայսրության ներքին գործերին»:

Օսմանյան կայսրության սահմանադրության վերականգնումը անհանգստություն է առաջացնում Ավստրո-Հունգարիայի կառավա-

[338] Տե՛ս Lothar Rathmann, Alman emperyalizminin Türkiyeye girişi, s. 12.
[339] Նույն տեղում, էջ 13:
[340] Նույն տեղում, էջ 14:

րող շրջաններում, ուստի աճապարում են անհապաղորեն իրականացնել 1878 թ.-ից Օսմանյան կայսրության կազմում ձևականորեն գտնվող սլավոնական մարզեր Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը: Վիեննայում համոզված էին, որ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ջախջախված Ռուսաստանը չէր կարող լուրջ դիմադրություն ցուցաբերել այդ մարզերի բռնակցմանը: 1908 թ. սեպտեմբերի 10-ին Վիեննայում կայացած կայսերական խորհրդակցությունում վերջնականապես որոշվում է իրականացնել Բոսնիայի և Հերցեզովինայի բռնակցումը[341]: Սակայն ավստրո-հունգարական կառավարող շրջանները որոշում են նախապես համաձայնության գալ Ռուսաստանի հետ: 1908 թ. սեպտեմբերի 15-ին Բոհեմիայի Բուխլաու ամրոցում բանակցություններ են կայանում Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Էրենտալի և Իզվոլսկու միջև: Որպես փոխհատուցում այդ մարզերի բռնակցման՝ էրենտալը Իզվոլսկուն խոստանում է հօգուտ Ռուսաստանի նպաստել Նեղուցների միջազգային կարգավիճակի փոփոխմանը[342]: Նշենք, որ դեռևս 1841 թ. Լոնդոնի կոնֆերանսի որոշմամբ խաղաղ ժամանակաշրջանում Բոսֆորի և Դարդանելի նեղուցները փակ էին լինելու բոլոր տերությունների, ինչպես նաև Ռուսաստանի ռազմածովային նավերի համար: Ուստի խաղաղ ժամանակաշրջանում ռուսական ռազմանավերը չէին կարող Սև ծովից դուրս գալ Միջերկրական ծով և հակառակը: Իսկ Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում Թուրքիայի դաշնակից տերությունները կարող էին իրենց ռազմանավերը մտցնել Սև ծով և ռազմական գործողություններ ծավալել Ռուսաստանի դեմ, ինչպես որ դա տեղի էր ունեցել 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ: Այդ կարգավիճակի փոփոխմանն էր ձգտում Ռուսաստանը, և Էրենտալը խոստանում էր հօգուտ Ռուսաստանի նպաստել Նեղուցների միջազգային կարգավիճակի փոփոխմանը:

[341] История дипломатии, т. II, с. 649-650.
[342] Նույն տեղում, էջ 653:

Էրենտալը մերժում է Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման դիմաց որպես փոխհատուցում Նովի-Բազարի սանջակը Սերբիայի և Չեռնոգորիայի միջև բաժանելու Իզվոլսկու առաջարկը, բայց խոստանում, որ դուալիստական կայսրությունը իր զորքերը դուրս կբերի Նովի-Բազարի սանջակից և այն կվերադարձնի Թուրքիային[343]: Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման դիմաց, որպես փոխհատուցում, Էրենտալը նաև համաձայնվում է, որ Օսմանյան կայսրության վասալական իշխանապետություն Բուլղարիան հռչակվեր թագավորություն, Չեռնոգորիան վերացներ Բեռլինի դաշնագրի 29-րդ հոդվածով իրեն վերաբերող սահմանափակումները, իսկ Կրետե կղզին միացվեր Հունաստանին[344]:

Բայց, ռուսական կառավարության պաշտոնական պատասխանը դեռևս չստացած, 1908 թ. հոկտեմբերի 5-ին Ավստրո-Հունգարիայի կայսր Ֆրանց Իոսիֆը ռեսկրիպտ (հրովարտակ) է ստորագրում Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման մասին, որը պաշտոնապես հայտարարվում է հոկտեմբերի 8-ին: Միաժամանակ, Ավստրո-Հունգարիայում հայտարարվում է մասնակի զորակոչ[345]: Ավստրո-Հունգարիայի կողմից սլավոնական մարզեր Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման հետևանքով 1908 թ. հոկտեմբերին Եվրոպայում սկսվում է միջազգային նոր ճգնաժամ, որը պատմության մեջ է մտել «Բոսնիական ճգնաժամ» անունով:

Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը դժգոհության բուռն ալիք է բարձրացնում Սերբիայում, Չեռնոգորիայում, երկմիասնական կայսրության հարավսլավոնական երկրներում, հատկապես՝ բռնակցված մարզերում, որովհետև այդպիսով Ավստրո-Հունգարիան փաստորեն կանխում էր Սերբիայի գերիշխանությամբ երբևէ այդ մարզերի միավորումը մեկ միասնական սլավոնական պետության մեջ: Բացի Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման դեմ

[343] Նույն տեղում, էջ 652:
[344] История внешней политики России. Конец XIX-начало XX века, с. 234.
[345] История дипломатии, т. II, с. 660.

Վիեննային ուղղված բողոքներից, ավստրիական հնարավոր հարձակմանը դիմագրավելու նպատակով սերբական և չեռնոգորյան կառավարությունները կնքում են միասնական ռազմական գործողություններ վարելու համաձայնություն և միաժամանակ զորահավաք հայտարարում իրենց երկրներում[346]:

Օսմանյան կայսրության կազմում 1878 թ.-ից սոսկ անվանապես գտնվող Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման դեմ ուղղված որպես «համաժողովրդական» բողոքի արտահայտություն՝ բազմազգ կայսրության ներքաղաքական սուր խնդիրներից լայն զանգվածների ուշադրությունը շեղելու նպատակով թուրքական իշխանությունները կազմակերպում են խառնախռիվ խաժամուժից բաղկացած խառնաժխոր ու աղմկալից հակաավստրիական ցույցեր, Թուրքիա ներմուծված ավստրիական ապրանքների, օսմանյան նավահանգիստները ժամանած ավստրիական առևտրանավերի բեռնաթափման բոյկոտ և այլն:

Իր հերթին, ի պատասխան Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման, ռուսական կառավարությունը հոկտեմբերի 8-ին պաշտոնապես հայտարարում է, որ Ավստրո-Հունգարիայի գործողությունները խախտում են Բեռլինի դաշնագիրը, և, հետևաբար, այդ միջազգային պայմանագիրը պետք է քննարկման ենթարկվի Բեռլինի կոնգրեսի մասնակից տերությունների կողմից[347]: Բացասական էր նաև բռնակցման վերաբերյալ Վիեննային հղած անգլիական կառավարության պատասխանը, որը շեշտում էր, որ առանց մյուս տերությունների նախնական համաձայնության, Բեռլինի դաշնագրի պայմանների խախտումը կամ փոփոխումը, երբեք չի կարող ճանաչվել բրիտանական կառավարության կողմից[348]: Իսկ հոկտեմբերի 12-ին Անտանտի տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և ավստրո–գերմանական դաշինքի անդամ Իտալիայի

[346] Նույն տեղում, էջ 665:
[347] Նույն տեղում, էջ 662:
[348] Նույն տեղում:

դեսպանները թուրքական կառավարությանը հավաստիացնում են, որ առանց Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունների համաձայնության, Բալկաններում Ավստրո-Հունգարիայի կատարած փոփոխությունները չեն կարող օրինական ճանաչվել[349]:

Հենվելով իր ռազմաքաղաքական դաշնակից Գերմանիայի բացահայտ դիվանագիտական աջակցության վրա՝ 1908 թ. նոյեմբերի 14-ին Ավստրո–Հունգարիան պաշտոնապես հայտարարում է, որ հրաժարվում է Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման հարցը ենթարկել միջազգային կոնֆերանսի քննարկմանը՝ շեշտելով, որ այդ հարցը պետք է կարգավորվի միայն Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի երկկողմանի բանակցությունների միջոցով[350]: Միաժամանակ, Ավստրո-Հունգարիայում ռազմական պատրաստություններ էին կատարվում Սերբիայի վրա հարձակվելու և նրան որպես հարավսլավոնական երկրները իր գերիշխանությամբ միավորելու ձգտող պետության, ոչնչացնելու համար: Ոչնչացնելով Սերբիային, Վիեննայում նախատեսում էին նրա տարածքը բաժանել Ավստրո–Հունգարիայի, Բուլղարիայի և Ռումինիայի միջև[351]:

Սերբիայի անկախ պետականությանը սպառնացող նման վտանգավոր իրադրության պայմաններում Նիկոլայ 2-րդը հարկադրված էր Ավստրո-Հունգարիայի կայսր Ֆրանց Իոսիֆին 1908 թ. դեկտեմբերի 30-ին հղած նամակով զգուշացնել, որ Բալկաններում նրա արտաքին գործերի նախարարի վարած քաղաքականությունը կարող է շատ վտանգավոր հետևանքների հանգեցնել[352]: Միաժամանակ, ռուսական կառավարությունը դիմում է Անգլիային ու Ֆրանսիային՝ միասնական ջանքեր գործադրելու Սերբիայի դեմ ավստրիական ագրեսիան կանխելու համար: Լոնդոնի և Փարիզի ռուսական դեսպաններին հանձնարարվում է հայտարարել, որ եթե

[349] Նույն տեղում, էջ 664:
[350] Նույն տեղում, էջ 666:
[351] Նույն տեղում, էջ 665:
[352] Pierre Renouvin, La crise Européenne et la Première guerre mondiale (1904-1918). Paris, 1969, p. 160.

Անտանտի տերությունները չկարողանան զսպել Ավստրո-Հունգարիայի ռազմատենչ ագրեսիվ ձգտումները, ապա «մահացու հարված կհասցվի մեր արտաքին քաղաքականության գործող համակարգին, այսինքն՝ Ֆրանսիայի հետ ռազմական դաշինքին և Անգլիայի հետ կնքած համաձայնագրին»[353]:

Անգլիան, Ֆրանսիան և նրանց միացած Իտալիան 1909 թ. հունվարի 20-ին դիմում են Ավստրո-Հունգարիայի դաշնակից Գերմանիային՝ առաջարկելով համատեղ ջանքեր գործադրել Վիեննայի վրա՝ վտանգներով հղի ավստրո-ռուսական կոնֆլիկտը կարգավորելու համար[354]: Ստանալով բացասական պատասխան՝ Անգլիան և Ֆրանսիան խորհուրդ են տալիս «Եռյակ համաձայնության» իրենց գործընկեր տերությանը, կոնֆլիկտից խուսափելու համար, համակերպվել Ավստրո–Հունգարիայի կողմից Բոսնիան և Հերցեգովինան բռնակցելու իրողության հետ: Արդարացնելով սլավոնական այդ մարզերի բռնակցման հարցում Անգլիայի անվճռական դիրքորոշումը՝ արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյը նշում է, որ ինքը ռուսական կառավարությանը երբեք ոչինչ չի խոստացել, բացի «դիվանագիտական աջակցությունից»[355]: Իսկ Ֆրանսիան իր ռազմական դաշնակից և գերմանական հարձակման վտանգից պաշտպանող, Եվրոպայում իր անվտանգությունը փաստորեն երաշխավորող Ռուսաստանին հայտարարում է, որ չի կարող ներքաշվել պատերազմի մեջ այն պատճառով, քանի որ Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման հետևանքով Ռուսաստանի «կենսական շահերը» չեն վտանգված[356]: Փաստորեն Ռուսաստանը միայնակ է մնում այսպես կոչված «Բոսնիական ճգնաժամում»: 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ջախջախիչ պարտություն կրած Ռուսաստանը չէր կարող պատերազմել Ավստրո-Հունգարիայի և նրա ռազմական

[353] История дипломатии, т. II, с. 670.
[354] Pierre Renouvin, նշվ. աշխ., էջ 160
[355] Նույն տեղում, էջ 161:
[356] Նույն տեղում:

դաշնակից Գերմանիայի դեմ: Իր հերթին, միայնակ մնացած Թուրքիան հարկադրված էր 1909 թ. փետրվարի 26-ին Ավստրո-Հունգարիայի հետ կնքած համաձայնությամբ, 2.5 մլն ֆունտ ստեռլինգ փոխհատուցմամբ ճանաչել Օսմանյան կայսրության կազմում ձևականորեն գտնվող Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման իրողությունը: Այդ համաձայնությամբ, սակայն, Ավստրո-Հունգարիան իր զորքերը դուրս է բերում ռազմական գրավման ենթարկած Նովի-Բազարի սանջակից[357]: Այդպես է լուծվում Թուրքիայի հետ այդ մարզերի հարցը: Սակայն Ռուսաստանը չէր դադարեցնում իր դիվանագիտական բողոքները Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման կապակցությամբ: 1909 թ. մարտի 22-ին Գերմանիան վերջնագիր է ներկայացնում Ռուսաստանին՝ պահանջելով անվերապահորեն ճանաչել Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման փաստը, այլապես Ավստրո-Հունգարիան հարձակվելու էր Սերբիայի վրա: Նույն օրը Ավստրո-Հունգարիան երկու բանակային կորպուսներում հայտարարում է ռազմական դրություն[358]:

Պետերբուրգում կայացած կայսերական հատուկ խորհրդակցությունը, նկատի ունենալով ստեղծված իրադրության պայմաններում պատերազմին Ռուսաստանի անպատրաստ լինելու հանգամանքը, համաձայնվում է ճանաչել Ավստրո–Հունգարիայի կողմից կատարված Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման իրողությունը: Ելնելով կայսերական հատուկ խորհրդակցության կայացրած որոշումից՝ գերմանական վերջնագրի անմիջապես հաջորդ օրը Նիկոլայ 2-րդը անձամբ հեռագրում է Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդին՝ հավաստելով, որ Ռուսաստանն անվերապահորեն ընդունում է Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցումը ճանաչելու Գերմանիայի վերջնագիրը[359]: Այդպես իր

[357] Albin P., Les Grands Traités politiques. Depuis 1815 jusqu'à nos jours, P., 1911. La Bosnie Herzégovine. Accord Austro-turc (26 février 1909), p. 237-240.
[358] История дипломатии, т. II, с. 672.
[359] Նույն տեղում:

ռազմական թուլության և միջազգային մեկուսացվածության պատճառով Ռուսական կայսրությունը աննախադեպ դիվանագիտական պարտություն է կրում 1908-1909 թթ. Բոսնիական ճգնաժամում՝ անխուսափելի պատերազմի սպառնալիքով ընկրկելով ավստրո-գերմանական ռազմաքաղաքական դաշնակից տերությունների ճնշման ներքո: Մարտի 31-ին Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը ստիպված ճանաչում են նաև Սերբիան ու Չեռնոգորիան, իսկ ապրիլին՝ Ռուսաստանի դաշնակից «Եռյակ համաձայնության» տերություններ Անգլիան ու Ֆրանսիան: Այդպես է ավարտվում Եվրոպայի միջազգային հարաբերությունների պատմության մեջ հայտնի 1908-1909 թթ. «Բոսնիական ճգնաժամը»: Ռուսաստանի այդ դիվանագիտական պարտությունը պատմության մեջ է մտնում «դիվանագիտական Ցուսիմա» անունով՝ որպես համեմատություն 1905 թ. մայիսին Ցուսիմայի նեղուցում ճապոնացիներից կրած ռուսական ռազմածովային նավատորմի կործանիչ պարտության: Այնուամենայնիվ, Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման հարցում ավստրո-գերմանական դաշինքի տերությունների հաղթանակը չէր կարող անհետևանք մնալ. 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման անմիջական պատասխանն էին:

Բուլղարական իշխանապետության քաղաքական անկախության հռչակումը

1908 թ. սեպտեմբերի 15-ին Բուխլաու ամրոցում կայացած ավստրո-ռուսական բանակցություններում երկու կողմերը չեն բացառում, որ Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիան և Հերցեգովինան բռնակցելու հետևանքներից մեկը նաև կարող է լինել Օսմանյան կայսրության Բուլղարական վասալական իշխանապետության քաղաքական անկախության հռչակումը: Այդպիսով՝ Բուխլաու ամրոցում կայացած բանակցություններում ձեռք բերված համաձայնու-

թյամբ երկու կայսրությունների արտաքին գործերի նախարարները կանխորոշում են Բուլղարական վասալական իշխանապետության քաղաքական անկախությունը՝ այն պայմանավորելով Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիան և Հերցեգովինան բռնակցելու հետ:

Բեռլինի դաշնագիրը առաջինը խախտող միակ տերությունը չհանդիսանալու և Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցումը դյուրացնելու նպատակով 1908 թ. սեպտեմբերի 23-ին և 24-ին Բուդապեշտում Բուլղարիայի իշխան Ֆերդինանտի հետ կայացած հանդիպման ժամանակ Էրենտալը, տեղեկացնելով Բուխլաու ամրոցում Իզվոլսկու հետ կայացած պայմանավորվածությունների մասին, խորհուրդ է տալիս, որպեսզի Բուլղարական իշխանապետությունը օգտվի միջազգային առավել բարենպաստ իրադրությունից, Բալկաններում բուլղարական բանակի ընձեռած առավելություններից և իրականացնի իր «օրինական ցանկությունները», այսինքն՝ հռչակի քաղաքական անկախություն: Միաժամանակ, Էրենտալը ակնարկում է, որ «մոտ ապագայում» Ավստրո-Հունգարիան բռնակցման է ենթարկելու Բոսնիան և Հերցեգովինան: Բանակցող կողմերը պայմանավորվում են, որ Բուլղարական վասալական իշխանապետությունը իր քաղաքական անկախությունը պետք է հռչակի նախքան Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը[360]: Այդպիսով, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի և Բուլղարիայի իշխան Ֆերդինանտի միջև կայանում է ապագա քաղաքական գործողությունները միաժամանակ իրականացնելու համաձայնեցված գործարք: Արդեն սեպտեմբերի 30-ին Պետերբուրգում բուլղարական դիվանագիտական ներկայացուցչի միջոցով արտաքին գործերի նախարարությունում իրազեկվում են Էրենտալի և Ֆերդինանտի միջև Բուդապեշտում կայացած գործարքի հետևանքով մոտ ապագայում Բուլղարական վասալական իշ-

[360] Мартыненко А. К., Позиция России в связи с провозглашением независимости Болгарии в 1908г. Из истории русско-болгарских внешнеполитических отношений. Տե՛ս Из истории русско-болгарских отношений (Сборник статей), М., 1958, с. 58-59.

խանապետության քաղաքական անկախությունը հռչակելու վերաբերյալ[361]: Հոկտեմբերի 3-ին ավստրիական դեսպանը Ֆրանսիայի պրեզիդենտին հայտնելով Բոսնիայի ու Հերցեգովինայի մոտալուտ բռնակցման մասին՝ նշում է, որ նախ իշխանապետությունը կհռչակի իր անկախությունը, իսկ դրանից հետո արդեն Ավստրիան Բուլղարական բռնակցման կենթարկի Բոսնիան ու Հերցեգովինան[362]:

Էրենտալի և Ֆերդինանտի միջև Բուդապեշտում կայացած պայմանավորվածության համաձայն՝ Բոսնիան և Հերցեգովինան բռնակցման ենթարկելու կայսր Ֆրանց Իոսիֆի հոկտեմբերի 5-ի ռեսկրիպտը դեռևս չհրապարակված՝ նույն օրը Օսմանյան կայսրության վասալ Բուլղարական իշխանապետությունը Տիրնովոյում հանդիսավոր արարողություններով հռչակվում է անկախ թագավորություն, իսկ իշխան Ֆերդինանտը՝ «համայն բուլղարների թագավոր»: Նույն օրը՝ հոկտեմբերի 5-ին, Ֆերդինանտը իր սյուզերեն սուլթան Աբդուլ Համիդին հեռագրով հաղորդում է, որ ինքը «Բուլղարիան հռչակել է լիակատար անկախ թագավորություն»[363]: Հոկտեմբերի 15-ին Ազգային ժողովում Ֆերդինանտը հայտարարում է, որ իշխանապետության քաղաքական անկախության հռչակման ուղղությամբ կատարած իր գործողությունները նախապես համաձայնեցվել են ավստրիական կառավարության հետ և հույս հայտնում, որ Բուլղարիայի քաղաքական անկախությունը Ռուսաստանի և մյուս տերությունների կողմից կստանա միջազգային ճանաչում:

Բուլղարական իշխանապետության քաղաքական անկախությունը ճանաչելու և Արևելյան Ռումելիայից հրաժարվելու դիմաց թուրքական կառավարությունը պահանջում է 650 մլն. ֆրանկ փոխհատուցում:

Բուլղարական իշխանապետության քաղաքական անկախության հռչակման հետևանքով առաջացած թուրք-բուլղարական լար-

---

[361] Նույն տեղում, էջ 64:
[362] История дипломатии, т. II, с. 660.
[363] Տե՛ս А. К. Мартыненко, նշվ. աշխ., էջ 81-82:

ված հարաբերությունները բարելավելու և նրա քաղաքական նոր կարգավիճակը օրինականացնելու նպատակով 1909 թ. փետրվարի 2-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Իզվոլսկին հանդես է գալիս Բուլղարիայի և Թուրքիայի միջև ֆինանսական խնդիրները կարգավորելու նախաձեռնությամբ[364]: Բանակցությունների արդյունքում 1909 թ. մարտի 16-ին Պետերբուրգում ստորագրված ռուս-թուրքական համաձայնությամբ Ռուսաստանը Թուրքիային է զիջում 1877-1878 թթ. պատերազմի դեռևս չվճարված 125 մլն. ֆրանկ ռազմատուգանքը, իսկ Թուրքիան դրա դիմաց հրաժարվում է իր վասալական իշխանապետության և Արևելյան Ռումելիայի ամենամյա հարկային պարտավորություններից[365]:

1909 թ. մարտի 16-ին Պետերբուրգում կայացած ռուս-թուրքական համաձայնության հիման վրա 1909 թ. ապրիլի 6(19)-ին Կ.Պոլսում ստորագրված թուրք-բուլղարական արձանագրությամբ թուրքական կառավարությունը հրաժարվում է Բուլղարական իշխանապետության և Արևելյան Ռումելիայի ամենամյա հարկային պարտավորություններից՝ այդպիսով փաստորեն ճանաչելով իր նախկին վասալական իշխանապետության քաղաքական անկախությունը[366]:

Կ.Պոլսում թուրք-բուլղարական արձանագրության կնքման օրը՝ ապրիլի 6(19)-ին, Սոֆիայում կայացած ռուս-բուլղարական համաձայնությամբ բուլղարական կառավարությունը պարտավորվում էր 75 տարվա ընթացքում տարեկան 4 երեք քառորդ տոկոսով Ռուսաստանին վճարել Թուրքիային զիջած 125 մլն ֆրանկ ռազմատուգանքի միայն 82 միլոնը[367]: Փաստորեն, 125 մլն ֆրանկ ռազմատուգանքի 43 միլիոնը Ռուսաստանը Թուրքիային էր զիջում Բուլղարիայի քաղաքական անկախությունը ճանաչելու համար: Հետագայում խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Բուլղարիային է

[364] Նույն տեղում, էջ 104:
[365] Նույն տեղում, էջ 108:
[366] Նույն տեղում, էջ 109:
[367] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., N 337. Русско-болгарское соглашение по финансовым вопросам, заключенное в Софии, 6/19 апреля 1909 года, с. 343.

նվիրում 1909 թ. ապրիլի 6(19)-ին Պետերբուրգում ստորագրված ռուս-բուլղարական համաձայնությամբ տարեկան 4 երեք քառորդ տոկոսով վճարվող Բուլղարիայի 82 մլն ֆրանկ կազմող պարտքը:

125 մլն ֆրանկ ռազմատուգանքի 43 միլիոնը Թուրքիային զիջելու վերջնական համաձայնությունը կնքվում է Պետերբուրգում 1909 թ. դեկտեմբերի 21-ին, ըստ որի՝ Թուրքիան հրաժարվում է Բեռլինի պայմանագրի 9-րդ հոդվածի համաձայն Բուլղարիայից գանձվող ամենամյա հարկից՝ այդպիսով անվերապահորեն ճանաչելով Բուլղարիայի լիակատար քաղաքական անկախությունը[368]:

1909 թ. ապրիլի 20-ին տերություններից առաջինը Ռուսաստանն է ճանաչում Բուլղարիայի անկախությունը՝ այն գնահատելով որպես «մեծագույն իրադարձություն, որն ավարտում է բուլղարական պատմության կարևորագույն դարաշրջանը»[369]:

Ռուսաստանից հետո Բուլղարիայի անկախությունն են ճանաչում նաև մնացյալ տերությունները և պետությունները:

1909 թ. մայիսի 4-ին Ռուսաստանի դեսպանորդը իր դիվանագիտական հավատարմագրերն է հանձնում Բուլղարիայի թագավոր Ֆերդինանտին: Հունիսի 15-ին բուլղարական կառավարությունը ստանում է սուլթանի համաձայնությունը Կ.Պոլսում դեսպանորդ նշանակելու մասին, որով սկիզբ է դրվում Օսմանյան կայսրության և Բուլղարական թագավորության պաշտոնական հարաբերություններին:

Բուլղարական վասալական իշխանապետության քաղաքական անկախության հռչակումով ավարտվում է թուրքական դարավոր տիրապետությունը Բալկանյան թերակղզու նաև այդ սլավոնական երկրի նկատմամբ: Անկախացած Բուլղարիան ռազմաքաղաքական նշանակալի գործոն է դառնում ոչ միայն Բալկանների, այլև Եվրոպայի միջազգային հարաբերություններում:

---

[368] Նույն տեղում, N 340. Русско-турецкое соглашение по финансовым вопросам, заключенное в С.-Петербурге 8/21 декабря 1909 года, с. 345:
[369] Мартыненко А.К., նշվ. աշխ., էջ 111:

Բուլղարիայի քաղաքական անկախության նվաճման գործում նշանակալի է Ռուսաստանի վճռորոշ դերը՝ Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը նախապես պայմանավորելով Օսմանյան կայսրության Բուլղարական վասալական իշխանապետության քաղաքական անկախության հռչակման հետ՝ դիվանագիտական ակտիվ միջամտությամբ կարգավորելով այդ պատճառով առաջացած թուրք-բուլղարական լարված հարաբերությունները և նպաստելով Բուլղարիայի քաղաքականապես անկախ կարգավիճակի միջազգային ճանաչմանը:

Չեռնոգորիայի իշխանապետության հռչակումը թագավորություն

1908 թ. սեպտեմբերի 15-ին Բոհեմիայի Բուխլաու ամրոցում կայացած ավստրո-ռուսական բանակցություններում Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Էրենտալը համաձայնվում էր, որ Բուլղարական վասալական իշխանապետության անկախության հռչակումից բացի Չեռնոգորիայի իշխանապետությունը վերացներ Բեռլինի դաշնագրի 29-րդ հոդվածով իրեն վերաբերող որոշ սահմանափակումները: Օգտվելով 1908-1909 թթ. Բոսնիական ճգնաժամի հետևանքով Բալկաններում ստեղծված քաղաքական նոր իրավիճակից՝ Չեռնոգորիայի իշխանապետությունը հրաժարվում է ենթարկվել Բեռլինի դաշնագրի 29-րդ հոդվածով իրեն վերաբերող սահմանափակումներին, իսկ 1910 թ. օգոստոսի 15-ին հռչակվում է թագավորություն: Այդպիսով՝ Հունաստանից, Ռումինիայից, Սերբիայից և Բուլղարիայից հետո Չեռնոգորիայի իշխանապետությունը դառնում է հինգերորդ թագավորությունը Բալկաններում:

Բոսնիական ճգնաժամում դիվանագիտական պարտություն կրած Ռուսաստանի համար Չեռնոգորիայի թագավորությունը Ավստրո-Հունգարիայի էքսպանսիայի դեմ Բալկաններում նույնպես

դառնում էր կարևոր ռազմաքաղաքական դաշնակից: Այդ հիմքի վրա 1910 թ. նոյեմբերի 30-ին Պետերբուրգում Ռուսաստանի և Չեռնոգորիայի միջև կնքված ռազմական համաձայնությամբ Չեռնոգորիային տրամադրած Ռուսաստանի ամենամյա դրամական լրավճարները 800 հազար կրոնից հասնում են 1մլն. 600 հազարի: Ռուսական կառավարությունը հանձնառություն էր վերցնում չեռնոգորյան բանակը ռուսական ռազմական մասնագետներով կազմակերպելու, հրահանգավորելու և արդիական սպառազինությամբ զինելու համար: Չեռնոգորիայի հետ Ռուսաստանի կնքած ռազմական համաձայնության և նյութական օգնության հետևանքները իրենց անմիջական ազդեցությունն են թողնում Առաջին բալկանյան պատերազմում Թուրքիայի դեմ Չեռնոգորիայի տարած հաղթական ազատագրական պատերազմում:

Կրետական հարցը և թուրք-հունական հարաբերությունների սրումը

19-րդ դ. սկզբին Կրետե կղզում պայքար է սկսվում ինքնավարության պայմաններում պաշտպան չորս տերությունների հաստատած օկուպացիոն վարչակարգը վերացնելու և Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ քաղաքականապես միավորվելու համար:

Պաշտպան տերությունների օկուպացիոն վարչակարգի դեմ 1905 թ. մարտին սկսված ապստամբության ընթացքում կրետական Ազգային ժողովը, որի նիստերի դահլիճը զարդարված էր Հունական թագավորության դրոշներով, ապրիլի սկզբին ընդունում է Հռչակագիր՝ Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ Կրետեի քաղաքական միավորման վերաբերյալ: Ապստամբության անմիջական ազդեցության հետևանքով Կրետե կղզու պաշտպան տերությունների գլխավոր հյուպատոսները 1906 թ. հուլիսի 25-ին հրապարակում են կղզում վարչաֆինանսական բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ իրենց կառավարությունների ներկայացրած առաջար-

կությունները, որոնք, սակայն, ոչ մի փոփոխության չէին ենթարկելու 1899 թ. սահմանադրությամբ հաստատված Կրետեի քաղաքական կարգավիճակը: Այդ առաջարկություններում նշվում էր, որ հույն սպաների կողմից կրետական ժանդարմերիան վերակազմավորելուց և կրետական միլիցիան ստեղծելուց հետո պաշտպան տերությունների զորամասերը պետք է դուրս բերվեն Կրետե կղզուց:

1906 թ. վերջին Կրետե ժամանած հույն սպաները, որոնք պաշտոններ չէին զբաղեցնում հունական բանակում, արդեն 1907 թ. մարտին ավարտում են կրետական ժանդարմերիայի կազմավորման և կրետական միլիցիայի ստեղծման աշխատանքները:

Կրետե կղզու պաշտպան տերությունները 1908 թ. մայիսին կայացնում են որոշում, ըստ որի՝ իրենց օկուպացիոն զորքերի դուրսբերումը Կրետեից պետք է կատարվեր աստիճանաբար՝ 12 ամսվա ընթացքում: Այդ որոշման հետևանքով պաշտպան տերությունների օկուպացիոն ջոկատների մի մասը Կրետեից դուրս է բերվում 1908 թ. հուլիսի 24-ին: Կրետե կղզու պաշտպան տերությունների օկուպացիոն ջոկատների վերջնական դուրս բերումը պետք է կատարվեր մեկ տարի անց՝ 1909 թ. հուլիսի 24-ին:

Կրետե կղզուց պաշտպան տերությունների օկուպացիոն զորքերի առաջին խմբաքանակը դուրս բերելու նախօրյակին՝ հուլիսի 23-ին կատարված երիտթուրքական հեղափոխության հետևանքով, 1876 թ. Սահմանադրության վերականգնումը քաղաքական նոր իրադրություն է ստեղծում Օսմանյան կայսրությունում: Առաջնորդվելով Օսմանյան կայսրության բոլոր նվաճված և հպատակ ժողովուրդներին թուրքացնելու և «միասնական օսմանյան ազգություն» ստեղծելու օսմանիզմի գաղափարախոսությամբ՝ երիտթուրքերը կայսրության նվաճված բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, առանց ազգային և կրոնական պատկանելության, վերականգնված սահմանադրությամբ օրենքի առաջ հռչակում են իրավահավասար «օսմանցիներ»: Երիտթուրքական քարոզչությունը պնդում էր, որ 1876 թ. սահմանադրության վերականգնմամբ «օսմանյան ժողովուրդը,

ազատվելով համիդյան ինքնակալությունից ու բռնակալությունից, հաստատել է իր իշխանությունը»: Սահմանադրության շնորհիվ, բարձրագոչ հայտարարում էին նոր իշխանության ներկայացուցիչները, մոտ ժամանակներում Թուրքիան վերածվելու է ժամանակակից եվրոպական տերության՝ իրավահավասարության ու եղբայրության սկզբունքներով առաջնորդվող սահմանադրությամբ և օրենքներով:

Օսմանյան Սահմանադրության վերականգնմամբ երիտթուրքերը հետապնդում էին նաև քաղաքական այլ նպատակներ, որոնցից էր՝ կայսրության նախկին նահանգներում և մարզերում թուրքական տիրապետության լիակատար վերահաստատումը: Նրանք հայտարարում էին, որ Սահմանադրության վերականգնման շնորհիվ իրավահավասարության և ազատության հաստատման հետևանքով օսմանյան նախկին նահանգները պետք է վերադարձվեն թուրքական իշխանությանը: Երիտթուրքերի համոզմամբ, ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում կայսրության բոլոր նախկին տարածքների վերադարձը Թուրքիային միանգամայն օրինական պահանջ էր: Այդ դրույթի համաձայն՝ Բոսնիան ու Հերցեգովինան, Արևելյան Ռումելիան, Կրետե կղզին և մի շարք այլ նահանգներ, որոնք փաստական ոչ մի կախում չունեին Կ.Պոլսից, արդեն պետք է վերադարձվեին Թուրքիային: Առաջնորդվելով «օսմանիզմի» գաղափարախոսությամբ՝ երիտթուրքերը միաժամանակ հանդես էին գալիս նաև իրենց ազգային անկախությունը արյունով նվաճած Բալկանյան թերակղզու պետությունները թուրքական գերիշխանության տակ վերադարձնելու ցնորամիտ ծրագրերով: Այսպես. 1908 թ. նոյեմբերի 21-ին երիտթուրքական պաշտոնաթերթը գրում էր. «Եթե բալկանյան պետությունները ցանկանան հրաժարվել իրենց «մեծ գաղափարներից», ապա Թուրքիան պատրաստ է նրանց իր շուրջը համախմբելու և նրանց դաշնակիցը դառնալու»[370]: Երիտ-

[370] Տե՛ս Hauser M., Histoire diplomatique de l'Europe (1871-1914), Paris, 1929, p. 213:

թուրքերը բալկանյան երկրներին փաստորեն «խորհուրդ» էին տալիս հրաժարվելու արյունով նվաճած իրենց ինքնուրույն պետականությունից և դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող ազգային պատմական տարածքները ազատագրելու նպատակներից և կամովին ենթարկվել թուրքական գերիշխանության: Երիտթուրքական մամուլում բացահայտորեն արտահայտվում էին հարևան պետությունների դեմ ուղղված ռևանշիստական, զավթողական նպատակներ: Կայսրության նախկին տարածքային ամբողջականությունը վերականգնելու և ընդարձակելու, երբեմնի հզորությանը հասնելու հետևանքով, գրում էր թուրքական «Ստամբուլ» թերթը, «կիրականանան մեր ամենանվիրական, մեր ամենաօրինական հույսերը՝ դառնալ մի մեծ տերություն և առաջնակարգ դեր խաղալ աշխարհում»[371]: Այդ նպատակին հասնելու նախնական պայմանը, հրատապ խնդիրը, երիտթուրքերի համոզմամբ, Կրետե կղզին Թուրքիային վերադարձնելն էր:

Երիտթուրքական հեղափոխությունից մի քանի օր անց՝ հուլիսի 29-ին, երիտթուրքական թերթերից մեկը գրեց, որ սահմանադրության հռչակմամբ լուծվել է նաև կրետական հարցը և հույս էր հայտնում, որ Հունաստանը, հաշվի առնելով այդ քաղաքական իրողությունը, այլևս կհրաժարվի Կրետեն միացնելու նպատակից և ելնելով կայսրությունում բնակվող հույների շահերից՝ նույնիսկ գործնականորեն կաջակցի Թուրքիային: Մյուս կողմից՝ ակնկալվում էր, որ Մեծ տերությունները պետք է նպաստեին կղզին Թուրքիային վերադարձնելու գործին[372]: Նման տրամադրությունների հրապարակային դրսևորումները արտակարգ վրդովմունք էին առաջացնում Հունաստանում, որտեղ Կրետե կղզու քաղաքական ապագայի վերաբերյալ միանգամայն այլ կարծիք էր տիրում:

Շատ շուտով երիտթուրքերը գործնականում կրում են քաղաքական առաջին լուրջ պարտությունը՝ կայսրության նախկին տա-

[371] Տե՛ս Nicolaïdes N., Les Grecs de la Turquie, Bruxelles, 1910, p. 26:
[372] Տե՛ս Driault Ed., Histoire diplomatique de la Grèce, t.V (1908-1921), Paris, 1926, p. 3:

րածքային ամբողջականությունը վերականգնելու արկածախնդրական ծրագրերի և օսմանիզմի գաղափարախոսության իրականացման ճանապարհին:

1908 թ. հոկտեմբերի 5-ին Ավստրո-Հունգարիան բռնակցման է ենթարկում 1878 թվականից Օսմանյան կայսրության կազմում ձևականորեն գտնվող սլավոնական մարզեր Բոսնիան և Հերցեգովինան: Նույն օրը իր քաղաքական անկախությունն է հռչակում Օսմանյան կայսրության Բուլղարական վասալական իշխանապետությունը, և Արևելյան Ռումելիան դառնում է Բուլղարական թագավորության անբաժանելի մասը: Եվրոպայի քաղաքական կյանքում կատարված այդ պատմական իրադարձությունների անմիջական ազդեցությամբ և Ավստրո-Հունգարիայի խորհրդով Կրետե կղզում ուժեղանում է Հունաստանի հետ միավորվելու պայքարը:

1908 թ. սեպտեմբերի 24-ին Կրետե կղզու Կանեա գլխավոր քաղաքում կայացած մոտ 10 հազար կրետացիների հանրահավաքում ընդունվում է Կրետե կղզին Հունաստանի հետ միավորելու բանաձև, որը հաղորդվում է կղզու պաշտպան տերությունների հյուպատոսներին և հունական կառավարությանը[373]:

Հոկտեմբերի 8-ին կրետական կառավարությունը, միլիցիան և ժանդարմերիան հանդիսավորությամբ հավատարմության երդում են տալիս Հունաստանի թագավորին և Հունաստանի սահմանադրությանը: Հոկտեմբերի 12-ին կրետական Ազգային ժողովը, 15 թուրք պատգամավորների կամովին բացակայության պայմաններում, հռչակում է Կրետեի անկախությունը և միությունը Հունական թագավորության հետ: Այնուհետև հաջորդ օրը Կրետեն «հելլենների թագավորի անունից և Հունական թագավորության օրենքներին համաձայն կառավարելու համար» Ազգային ժողովն ընտրում է «Գործադիր հանձնաժողով»՝ կառավարություն[374]: Կրետական Ազ-

[373] Галкин И. С., Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905-1912 гг., М., 1960, с. 32.
[374] Նույն տեղում, էջ 32-33:

գային ժողովի իրոք այդ հեղափոխական գործողությունը, որը հենվում էր կղզում ծավալվող ազգային–ազատագրական պայքարի վրա, վերջնականապես խորտակում էր ոչ միայն թուրքական սուլթանի սոսկ անվանական «սյուզերենությունը», այլև լրջորեն սպառնում պաշտպան չորս տերությունների օկուպացիոն վարչակարգին:

Պաշտպան տերությունների միջև կայացած երկարատև բանակցություններից հետո, թուրքական կառավարության պնդմամբ, որն աջակցություն է ստանում Անգլիայի կողմից, որոշվում է կրետական հարցի լուծումը թողնել ապագային: Այդ ոգով կազմված հոկտեմբերի 28-ի հայտարարությամբ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Իտալիան նշում էին, որ «Կրետեի միությունը Հունաստանի հետ առկախ է այն տերությունների համաձայնությունից, որոնք պարտավորություններ են ստորագրել Թուրքիայի հետ: Այսուհանդերձ,- հավաստիացնում էին պաշտպան տերությունները, իրենք չեն հապաղի այդ հարցը Թուրքիայի հետ բարյացակամորեն քննարկելուց, եթե կղզում պահպանվի կարգը և երաշխավորվի մուսուլման բնակչության անվտանգությունը»[375]:

Պաշտպան տերությունների հայտարարությունը բարենպաստ տպավորություն է թողնում Կրետեում և Հունաստանում: Հունական մամուլը եզրակացնում էր, որ պաշտպան տերությունների հայտարարությունը իր հիմքում պարունակում է Հունաստանի հետ Կրետեի միավորումը ճանաչելու խոստումը:

Հունական կառավարությունը երկար ժամանակ չէր արձագանքում կրետական իրադարձություններին, որը, բնականաբար, ծայրահեղ դժգոհություն էր առաջացնում երկրի ներսում և Կրետեում: Գտնվելով ռազմաքաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում՝ Հունաստանը չէր կարող վճռականություն ցուցաբերել և ընդհարվել Թուրքիայի հետ: Իսկ թուրքական կառավարությունը, Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի բռնա-

[375] Տե՛ս Driault Ed., նշվ. աշխ., էջ 22:

գրավման և Բուլղարիայի անկախության հռչակման հետևանքով իր սասանված հեղինակությունը երկրի ներսում ամրապնդելու նպատակով, որոշում է չզիջել կրետական հարցում: Երիտթուրքերը այդպիսով հույս ունեին շեղել կայսրության ժողովուրդների ուշադրությունը բոլորին հուզող հիմնական ներքին խնդիրներից և, ինչպես նշում է թուրք պատմաբան Բայուրը, կրետական հարցը ծառայեցնել իրենց քարոզչական նպատակներին: Կրետական հարցում դրսևորելով անզիջում վերաբերմունք՝ երիտթուրքերը հույս ունեին ճնշել հույների ազգային շարժումները նաև Էգեյան ծովի կղզիներում, մասնավորապես՝ Սամոսում, որտեղ նույնպես ուժեղ էր Հունաստանի հետ միավորվելու ձգտումը: Ճգնելով վերահաստատվել Կրետեում՝ երիտթուրքերը ցանկանում էին վերականգնել Թուրքիայի՝ որպես միջերկրածովյան տերության նշանակությունը և անմիջական կապ հաստատել նրա աֆրիկյան նահանգներ Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի հետ: Իսկ եվրոպական տերությունների հետ միջպետական հարաբերություններում երիտթուրքերը կրետական հարցը դարձնում են քաղաքական կապիտալ շահելու կարևոր միջոցներից մեկը: Կրետական հարցի սրումը ձեռնտու էր երիտթուրքերին, քանի որ տերությունների հակասությունները խուսանավելու լայն հնարավորություններ էին ստեղծում նրանց համար: Իսկ Թուրքիայի առջև կանգնած էր մի թույլ երկիր, որը դեռևս չէր ապաքինվել 1897 թ. պատերազմից և շատ հեռու էր կրետական հարցում վճռական քաղաքականություն վարելուց:

Կրետական հարցում Հունաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով՝ երիտթուրքերը Կրետեի միացման դեմ «Կրետե կամ՝ մահ», «Կրետեն մեր հոգին է, մեր արյունը՝ հանուն Կրետեի» բնաբաններով կազմակերպում են բողոքների զանգվածային խառնիճաղանջ ցույցեր, խառնաժխոր հանրահավաքներ և կանխամտածված ազգայնական գրգռիչ ելույթներ: Երիտթուրքերը օգտագործում էին ամեն միջոց՝ հրահրելու թուրք խառնակույտ զանգվածներին՝ դրանով ձգտելով այդ բողոքներին և ցույցերին հաղորդել համաժո-

ղովրդական և համազգային բնույթ:

Հակահունական կամպանիայի ամենակարևոր միջոցառումներից մեկը հելլենների և թուրքահպատակ հույների դեմ ուղղված տնտեսական բոյկոտի քաղաքականությունն էր: Բոյկոտի էին ենթարկվում կայսրության նավահանգիստները ժամանող հելլենական առևտրանավերը, Հունաստանից ներմուծված ապրանքները և Թուրքիայում գործող հունական առևտրատնտեսական աշխարհի ներկայացուցիչները: Թուրք-հունական հարաբերությունների ծայրահեղ լարվածության այդ շրջանում խիստ կերպով վատթարանում է Օսմանյան կայսրության մեջ բնակվող հույների վիճակը: Տնտեսական բոյկոտից բացի, հույները ենթարկվում էին կատաղի հալածանքների, բռնությունների, ջարդի, բանտարկության: Անդրադառնալով այդ իրադարձություններին՝ Պետերբուրգի հեղինակավոր թերթերից մեկը՝ «Երիտասարդ թուրքերի գազանությունները և մոլեգնությունը ուղղափառ հույների նկատմամբ» վերնագրով հոդվածում գրում էր. «Ուղղափառ հույներին ենթարկում են ամենատարբեր տանջանքների և նույնիսկ՝ մահվան՝ դրանով հիշեցնելով պատմության ամենամռայլ ժամանակաշրջանները»[376]:

Կրետական հարցի կապակցությամբ սրված թուրք-հունական հարաբերությունների լարվածության պայմաններում պաշտպան տերությունները 1909 թ. հուլիսի 13-ին թուրքական, հունական և կրետական կառավարություններին հղած հայտարարությամբ հաղորդում են Կրետե կղզուց միջազգային ջոկատների վերջնական դուրսբերման իրենց որոշման մասին:

Կրետեի գործադիր հանձնաժողովին ուղղված հայտարարության մեջ նշվում էր, որ զորքերը դուրս բերելու պաշտպան տերությունների որոշումը հիմնված է այն համոզման վրա, որ կրետական իշխանությունները ի վիճակի կլինեն ապահովելու կարգը կղզում և երաշխավորելու մուսուլման բնակչության անվտանգությունը: Խոս-

[376] Տե՛ս “С.-Петербургские ведомости”, 29. IX (12. X), 1909.

տանալով ապագայում ևս բարյացակամորեն վերաբերվել կրետական շահերին՝ տերությունները միաժամանակ ընդգծում էին, որ իրենց իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում «վերականգնել կղզու կարգն ու կանոնը»:

Թուրքական կառավարությանը հղած հայտարարության մեջ նշվում էր, որ Կրետեից միջազգային ջոկատների դուրս բերումից հետո թուրքական և պաշտպան տերությունների դրոշների պահպանության, ինչպես նաև մուսուլմանների անվտանգությունը երաշխավորելու համար կղզու Սուդայի նավահանգիստ պետք է ուղարկվեն յուրաքանչյուր պաշտպան տերության մեկական ռազմանավ: Դրանց ներկայությունը վկայելու էր «Կրետեի նկատմամբ սուլթանի ունեցած գերագույն իրավունքները և տերությունների հովանավորությունը»: Միաժամանակ տերությունները նշում էին, որ հետագայում իրենք թուրքական կառավարության հետ վերջնականորեն կորոշեն Կրետեի քաղաքական ապագա վարչակարգը:

Կրետեից օկուպացիոն ջոկատների դուրս բերման որոշումը սխալ չընկալելու համար տերությունները խորհուրդ էին տալիս հունական կառավարությանը չկատարել այնպիսի քայլեր, որոնք Թուրքիայի կողմից կարող էին ընկալվել որպես մարտահրավեր և Կրետեի ու Հունաստանի համար ստեղծել նվազ բարենպաստ իրավիճակ, քան այն, որ գոյություն ուներ զորքերի դուրս բերման նախօրյակին[377]:

Պաշտպան տերությունների հայտարարությունը գոհացուցիչ տպավորություն է թողնում հունական կառավարության վրա:

Հունական կառավարությունը բավարարված էր նրանով, որ հայտարարությունը միաժամանակ կատարվել էր Կ.Պոլսում, Աթենքում և Կանեայում, և որ տերությունները, վերջապես, ուղղակիորեն դիմել էին կրետական կառավարությանը ու դրանով իսկ փաստացիորեն ճանաչել նրան: Իսկ թուրք կառավարիչները լիովին հասկա-

[377] Տե՛ս Галкин И.С., նշվ. աշխ., էջ 45:

նում էին, որ կղզուց միջազգային օկուպացիոն ջոկատների դուրս բերումը նշանակում էր Կրետեի անկախության փաստացի ճանաչում: Ճգնելով որևէ կերպ պահպանել Կրետեի նկատմամբ ունեցած սուլթանի «իշխանությունը»՝ մեծ վեզիրը դիմում է Անգլիայի դեսպանին՝ խնդրելով պաշտպան տերությունների չորս պահականավերին միացնել գոնե մեկ թուրքական ռազմանավ: Բայց այդ դիմումը ոչ մի ուշադրության չի արժանանում[378]:

Կրետեից միջազգային օկուպացիոն զորքերի վերջին խմբաքանակի դուրս բերումը կատարվում է 1909 թ. հուլիսի 27-ին: Մինչ այդ՝ Կրետեի Սուդա նավահանգիստն էին ժամանել պաշտպան տերությունների պահականավերը: Միջազգային օկուպացիոն զորքերի վերջին ջոկատի հեռանալուց անմիջապես հետո կղզու բոլոր պահակակետերը գրավվում են կրետական ժանդարմերիայի և միլիցիայի կողմից: Բոլոր պետական և հասարակական հաստատությունների շենքերից վայր են առնվում պաշտպան տերությունների դրոշները՝ դրանք ամենուրեք փոխարինելով Հունական թագավորության դրոշներով: Կրետացիները Սուդայի ծովածոցի կղզյակի դրոշակաձողից հանում են նաև թուրքական դրոշը, որը ծածանվում էր չորս պաշտպան տերությունների դրոշների հետ և թուրքական դրոշի փոխարեն բարձրացնում Հունական թագավորության դրոշը: Այդ իրադարձությունները և թուրքական դրոշի հետ կապված միջադեպը ավելի են բորբոքում հակահունական մթնոլորտը Թուրքիայում: Պառլամենտում թուրք պատգամավորները ռազմատենչ ելույթներով պահանջում են արյան գնով Կրետեն պահել կայսրության կազմում[379], իսկ մեծ վեզիրը սպառնում է, որ Թուրքիան կանգ չի առնի իր նավատորմը գործողության մեջ դնելուց՝ չվախենալով անգամ նոր Նավարինի հեռանկարից[380]: Իրենց հերթին, երիտթուրքերը Կ.Պոլսում և Թեսալոնիկեում կազմակերպում են Կրետեի միաց-

[378] Documents diplomatiques Francais, 2-ème série, t.XII, p. 374.
[379] Տե՛ս «Ազատամարտ» 1909, 17/30 VII:
[380] Տե՛ս Архив внешней политики России, Ф. Канцелярия, 1909 г., д. N 38, л. 448:

ման դեմ ուղղված աղմկալից բողոքներ ու խառնիճաղանջ ցույցեր՝ պահանջելով ռազմական ուժով կղզին վերադարձնել թուրքական տիրապետությանը: Կատարվում է մասնակի զորակոչ, և թուրքական նավատորմը Զմյուռնիայից ուղղվում է Կրետեից 40 մղոն հեռավորության վրա գտնվող Կարպատոս կղզին: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ չորս պաշտպան տերությունները օգոստոսի 4-ին կրետական կառավարությունից պահանջում են իջեցնել հուլիսի 27-ից հետո կղզու կառավարական և վարչական հաստատություններում բարձրացված Հունական թագավորության դրոշները, բայց հանդիպում են մերժման: Օգոստոսի 6-ին հունական կառավարությանը ներկայացրած վերջնագրով Աթենքում Օսմանյան կայսրության դեսպանը պահանջում է գրավոր կերպով հայտարարել, որ հունական կառավարությունը հավանություն չի տալիս դրոշակների հետ կապված միջադեպին և շահագրգռված չէ Կրետեն միացնելու գործում[381]:

Լրջորեն անհանգստացած Թուրքիայի սպառնալից վերաբերմունքից՝ հունական կառավարությունը պաշտպանություն է խնդրում Պետերբուրգից և Փարիզից: Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարար Սազոնովը օգոստոսի 7-ին Օսմանյան կայսրության դեսպանին խստորեն նախազգուշացնում է Հունաստանի նկատմամբ նրա կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ: Սազոնովը պահանջում է դադարեցնել կայսրության հույների նկատմամբ իրականացվող հալածանքները և վերջ տալ կրետական հարցում Հունաստանի վրա ոչնչով չարդարացվող հարձակման մշտական առիթ փնտրելուց[382]: Նույն օրը Կ.Պոլսում ռուսական դեսպանին հղված հեռագրով հրահանգվում էր թուրքական կառավարության ուշադրությունը լրջորեն հրավիրել այն վտանգների վրա, որ սպառնում են Թուրքիային՝ Կրետեի, Հունաստանի և ընդհանրապես հույների նկատմամբ նրա վարած գրգռիչ

[381] Галкин И. С., նշվ. աշխ., էջ 46-47, 49-50:
[382] Архив внешней политики России, Ф. Канцелярия, 1909г., д. N 37, л. 35.

ու անհաշտելի վերաբերմունքի պատճառով[383]: Ֆրանսիական կառավարությունը իր հերթին նշում է, որ Թուրքիան կրետական հարցում պետք է դիմի միայն կղզու պաշտպան տերություններին, և զգուշացնում, որ իրերի ներկա դրությամբ նա չի կարող ռազմածովային նավատորմ ուղարկել կրետական ջրերը[384]: Օգոստոսի 13-ին պաշտպան տերությունները համանման նոտա են հղում թուրքական կառավարությանը: Այնուամենայնիվ, կրետական հարցում չունենալով տերությունների լուրջ պաշտպանությունը՝ օգոստոսի 10-ին հունական կառավարությունը հայտարարում է Թուրքիային, որ ինքը բացարձակապես մասնակից չէ Կրետեի միացման շարժմանը և ապագայում նույնպես կշարունակի պահպանել վերապահ դիրք[385]: Նույն օրը կրետական կառավարությունը նույնպես հայտարարում է, որ Հունական թագավորության դրոշի բարձրացման խնդրում ենթարկվելու է պաշտպան տերությունների որոշմանը[386]: Օգոստոսի 14-ին հունական կառավարությունը պաշտպան տերություններին պաշտոնապես հայտարարում է կրետական գործերում Հունաստանի չեզոքության մասին[387]:

Հունաստանին սպառնացող թուրքական հարձակումը կասեցնելու և ընդհանրապես թուրք-հունական հարաբերությունների լարվածությունը թուլացնելու նպատակով պաշտպան տերությունները օգոստոսի 18-ին դիմում են թուրքական կառավարությանը՝ նշելով, որ կրետական հարցի առնչությամբ նա իրավունք չունի անմիջականորեն դիմելու Հունաստանին[388]: Նույն օրը պաշտպան տերությունների 250 նավաստիներ ժամանում են Կրետե կղզու Կանեա նավահանգիստը և Սուդայի ծովածոցի կղզյակի դրոշակաձողից իջեցնում Հունական թագավորության դրոշը: Դրա կրկին բարձրա-

[383] Նույն տեղում, էջ 409:
[384] Documents diplomatiques Français, նույն տեղում, էջ 409-410:
[385] Նույն տեղում, էջ 409:
[386] Նույն տեղում, էջ 409-410:
[387] Տե՛ս Driault Ed., նշվ. աշխ., էջ 31:
[388] Documents diplomatiques Français, նույն տեղում, էջ 412:

ցումը կանխելու նպատակով միջազգային այդ զորախմբի 22 նավաստիների հանձնարարվում է տեղում պահակություն կատարել: Հունական թագավորության դրոշը իջեցնելը և դրոշակաձողի մոտ միջազգային զորախմբի նավաստիների կողմից թուրքական դրոշը պահպանելու պարտավորությունը Թուրքիայում գնահատվում է որպես մեծ հաջողություն, հեգնում է թուրք պատմաբան Բայուրը[389]:

Կրետական հարցի շուրջ թուրք-հունական հարաբերությունների լարվածության շրջանում երիտթուրքերը իրենց պաշտոնական մամուլում սկսում են արծարծել այն միտքը, որի համաձայն՝ Թուրքիան կմիանա եվրոպական տերությունների այն ռազմաքաղաքական խմբավորմանը, որը գործնականում կնպաստի Կրետե կղզին թուրքական տիրապետությանը վերադարձնելու գործին: Այդ կապակցությամբ 1910 թ. հունիսի 5-ին երիտթուրքական պաշտոնաթերթ «Թանինը» հայտարարում է. «Եվրոպայի հավասարակշռությունը պահպանելու կոչված տերությունների երկու խմբավորումներում Թուրքիան կկարողանա խաղալ նշանակալի դեր: Եթե առայժմ նա մի կողմ էր թողնված, ապա կրետական հարցը առիթ է դառնում դուրս գալու իր չեզոքության քաղաքականությունից և արտահայտվելու հօգուտ այս կամ այն կողմի: Այս տեսակետից ճիշտ է ասել, որ կրետական հարցը կարող է անդրադառնալ եվրոպական ամբողջ քաղաքականության վրա»[390]:

1911 թ. աշնանը միության համար ծավալվող շարժումը Կրետեում բորբոքվում է նոր ուժով: Միաժամանակ, արագացնելու համար կղզու միացումը Հունաստանին Կրետեի նորընտիր հեղափոխական ժողովը որոշում է հունական պառլամենտ ուղարկել իր պատգամավորներին: Կրետեում ծավալվող հեղափոխական շարժումից խիստ մտահոգված՝ հունական կառավարությունը միջոցներ էր փնտրում արգելելու կրետական պատգամավորների մուտքը հունական պառլամենտ: Հունական կառավարությունը վախենում էր,

[389] Bayur Y.H., նշվ. աշխ., հ. 1, էջ 310:
[390] Տե՛ս Driault Ed, նշվ. աշխ., էջ 40:

որ կրետական իրադարձությունների հետևանքով կղզին կարող էր նորից օկուպացվել պաշտպան տերությունների կողմից, որի հետևանքով նոր բարդություններ կառաջանային կղզին Հունաստանին միացնելու գործում: Կղզու վերագրավման անցանկալի հեռանկարից խուսափելու համար Հունաստանի վարչապետ Վենիզելոսը ստիպված համաձայնվում է, որ պաշտպան տերությունների ուժերը կրետացի պատգամավորներին ձերբակալեն Հունաստան մեկնելու առաջին իսկ փորձը կատարելիս և նույնիսկ հունական դրոշը կրող նավերի վրա[391]: Դեկտեմբերի 15-ին, երբ Հեղափոխական ժողովի կողմից ընտրված պատգամավորները փորձում են հունական «Կոնդի» նավով մեկնել Աթենք, ձերբակալվում են ֆրանսիացիների կողմից և արգելափակվում նավերում: Խիստ հետապնդումների հետևանքով կրետացի ոչ մի պատգամավոր չի խուսափում ձերբակալումից[392]:

Ի վերջո, Օսմանյան կայսրության սուլթանի սոսկ անվանական սյուզերենությունը Կրետե կղզում վերացնելու և այն Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ քաղաքականապես միավորելու համար կրետական հարցը Հունական թագավորության համար դառնում է Թուրքիայի դեմ ուղղված բալկանյան պետությունների ռազմաքաղաքական դաշինքին միանալու և Առաջին բալկանյան պատերազմին մասնակցելու հիմնական պատճառներից մեկը:

Բալկանյան պատերազմի անմիջական նախօրյակին որոշ թուրք պետական գործիչներ փորձում էին ուղիներ որոնել վերահաս վտանգը նվազեցնելու համար: Միակ երկիրը, որի հետ նրանք հույս ունեին համաձայնվել, Հունաստանն էր: Լիովին գիտակցելով, որ Կրետե կղզին այլևս կորած է Թուրքիայի համար, նրանք առաջարկում էին այն հանձնել Հունաստանին՝ ենթադրելով այդպիսի գործարքով նրան ետ պահել վերահաս պատերազմից: Սակայն, թուր-

[391] Տե՛ս Международные отношения в эпоху империализма, серия II, т. XIX, ч. 1, N 99, с. 95:
[392] Նույն տեղում, էջ 161:

քական կառավարությունը համառորեն հրաժարվում էր այդ քայլից՝ կարծելով, որ մոտալուտ պատերազմը կրետական հարցը վերջնականապես լուծելու է հօգուտ կայսրության: Թուրք պատմաբան Բայուրը ենթադրում է, որ Կրետե կղզին Հունաստանին զիջելու պայմանով թուրքական կառավարությունը կարող էր կանխել Հունաստանի միացումը Բալկանյան դաշինքին: Այնինչ, գրում է նա, բոլոր բնագավառներում ձախողումներ կրած թուրքական կառավարությունը կրետական հարցը իր համար դարձնում է քարոզչական հաջողությունների գրավական, Հունաստանի դեմ ձեռնարկում է թշնամական մի շարք գործողություններ և սոսկ իր անվանական սյուզերենությունը Կրետե կղզում պահպանելու համառության հետևանքով Հունաստանին նետում է սլավոնական պետությունների գիրկը և այդպիսով նպաստում Բալկանյան դաշինքի ստեղծմանը[393]: Սակայն պարզ էր, որ Հունաստանն այլևս չէր կարող բավարարվել միայն Կրետեով, քանի որ պատմականորեն ստեղծված պայմանները խոսում էին հոգուտ Հունաստանի հետ կղզու միության: Մյուս կողմից, Հունաստանը չէր կարող չմասնակցել Թուրքիայի դեմ ուղղված պատերազմին, քանի որ Բալկանյան դաշինքի հաղթանակը հնարավորություն էր ստեղծելու թուրքական միջնադարյան դարավոր տիրապետությունից ազատագրելու Մակեդոնիան, Թրակիան, Էպիրոսը և Էգեյան ծովի ավազանը:

Թուրք պատմաբանը Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցման, Բուլղարիայի անկախության հռչակման և Հունաստանի հետ Կրետե կղզու միավորման դեմ կազմակերպված ցույցերի մասին

Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցման, Բուլղարական իշխանապետության անկախության հռչակման և Հունաստանի հետ Կրետե կղզու քաղաքական միա-

[393] Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 324:

վորման դեմ Կ.Պոլսում և այլ քաղաքներում խառնիճաղանջ խաժամուժից կազմակերպված «համաժողովրդական» խառնաժխոր ցույցերի և բողոքների խառնակույտ երթերի վերաբերյալ թուրք պատմաբան Բայուրը նշում է, որ այդ նահանգների հետ կապված իրադարձությունների հետևանքով Օսմանյան կայսրությունը իրականում ոչինչ չէր կորցնում, քանի որ այդ երեք նահանգները վաղուց արդեն դուրս էին եկել Օսմանյան կայսրության ենթակայությունից և սոսկ անվանապես էին նրան պատկանում: Նա հավաստում է, որ Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցման, Բուլղարական իշխանապետության անկախության հռչակման և Հունաստանի հետ Կրետե կղզու քաղաքական միավորման կապակցությամբ կազմակերպված բողոքների աղմկալից ցույցերը սուլթան Աբդուլ Համիդի բացարձակ միապետության վերականգնման կողմնակիցները անմիջականորեն ուղղում էին Օսմանյան կայսրության սահմանադրական կարգի և պառլամենտի դեմ: Բայուրը նշում է, որ միապետականների համոզմամբ սուլթան Աբդուլ Համիդին սահմանադրորեն իշխանությունից զրկելու հետևանքով են Բոսնիան ու Հերցեգովինան, Բուլղարիան, Արևելյան Ռումելիան և Կրետե կղզին անջատվել Օսմանյան կայսրությունից: Այնինչ, ընդգծում է նա, այդ նահանգները վաղուց արդեն և հիմնականում հենց Աբդուլ Համիդի իշխանության ժամանակ էին անջատվել Օսմանյան կայսրությունից, իսկ Մակեդոնիան, որ նույնպես արդեն գտնվում էր այդ ճանապարհին, միայն սահմանադրության շնորհիվ մի քանի տարի ևս շարունակում է մնալ Օսմանյան կայսրության կազմում, իսկ Նովի-Բազարի սանջակն էլ վերադարձվում է Թուրքիային: Բայուրի մեկնաբանության համաձայն՝ մուսուլմանների սրբազան գրքի՝ Ղուրանի սահմանած իսլամի կրոնական իրավական նորմերի՝ շարիաթի և Աբդուլ Համիդի բացարձակ միապետության վերականգնման կողմնակիցները Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի ու Հերցեգովինայի բռնակցման, Բուլղարիայի անկախության հռչակման և Հունաստանի հետ Կրետե կղզու քաղաքա-

կան միության դեմ կազմակերպված «համաժողովրդական» ցույցերի և բողոքների երթերը հիմնականում ուղղում էին Օսմանյան կայսրության վերականգնված սահմանադրության ու գործող պառլամենտի դեմ[394]:

Օսմանյան կայսրության մայրաքաղաքում և մի շարք այլ խոշոր քաղաքներում խառնիճաղանջ խաժամուժից կազմակերպված խառնաժխոր աղմկալից ցույցերը և երթերը ընդունում էին նաև հակառուսական բնույթ՝ ընթանալով «Թուրքիայի մերձավորագույն նպատակը Կովկասի նվաճումն է» նշանաբանով և ագրեսիվ կոչերով[395]:

1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները. Առաջին բալկանյան պատերազմը, Լոնդոնի հաշտության պայմանագիրը (1913 թ. մայիսի 30)

Օսմանյան կայսրության պարտությունը 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում, նրա լարված ներքաղաքական վիճակը, ծավալվող ազգային-ազատագրական շարժումները նպաստում են բալկանյան երկրների ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը՝ դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող իրենց պատմական տարածքները ազատագրելու և իրենց ազգային միավորումը ավարտելու համար: Բալկանյան դաշինքի ստեղծմանը մեծ շահագրգռություն էին դրսևորում Անտանտի տերությունները՝ Բալկանյան թերակղզում թուրքական տիրապետությունը վերջնականապես կործանելու, ինչպես նաև միավորված բալկանյան երկրների միջոցով այդ տարածաշրջանում Ավստրո-Հունգարիայի ռազմաքաղաքական և տնտեսական էքսպանսիային պատնեշ ստեղծելու համար: Սակայն, Բալկանյան դաշինքի ստեղծմանը խոչընդոտում

[394] Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 255:
[395] Տե՛ս Центральный государственный архив военно-морского флота, ф. 418, оп. 1, д. N 4193, л. 56:

էին քաղաքական բնույթի մի շարք դժվարություններ: Դրանցից մեկը վերաբերում էր թուրքական տիրապետության տակ գտնվող Մակեդոնիայի բաժանմանը, որի նկատմամբ հավակնություններ ունեին Բուլղարիան, Սերբիան և Հունաստանը: Տարաձայնություններ կային նաև Ալբանիայի հարցում: Սերբիան, ելք չունենալով դեպի ծով, ձգտում էր գրավել Ալբանիայի որոշ մասը և դուրս գալ Ադրիականի ափը: Սակայն Սերբիայի այդ ձգտմանը դեմ էին Ավստրո-Հունգարիան և Իտալիան, որոնք իրենք էին ցանկանում իրենց ազդեցությունը հաստատել Ալբանիայում: Ալբանիայի նկատմամբ հավակնություններ ուներ Հունաստանը՝ նրա հարավային տարածքը համարելով պատմական Էպիրոսի հյուսիսային մասը: Այդ բարդություններին հակառակ, այնուամենայնիվ, Անտանտի տերությունների դիվանագիտական և ֆինանսական օժանդակությամբ 1912 թ. մարտի 13-ին Սոֆիայում ստորագրվում է սերբ-բուլղարական դաշնակցային պայմանագիրը, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում էին իրենցից որևէ մեկի վրա մեկ կամ մի քանի պետությունների հարձակման, ինչպես նաև որևէ մեծ պետության կողմից թուրքական տիրապետության տակ գտնվող բալկանյան տարածքների որևէ մասի գրավման դեպքում իրենց բոլոր ուժերով միմյանց հասնել օգնության[396]: Դաշնակցող պետությունները պայմանավորվում էին նաև Մակեդոնիան իրար միջև բաժանելու վերաբերյալ: Դրա համաձայն՝ Սերբիան ճանաչում էր Բուլղարիայի իրավունքը Ռոդոպյան լեռներից և Ստրումա գետից արևելք գտնվող տարածքի, իսկ Բուլղարիան՝ Սերբիայի իրավունքը Շար-Պլանինայից հյուսիս և արևմուտք գտնվող տարածքի նկատմամբ[397]: Տարաձայնությունների դեպքում հաշտարար դատավոր էին ճանաչում ռուսական կայսրին:

1912թ. մարտի 13-ի սերբ-բուլղարական դաշնակցային պայմա-

[396] Ключников Ю. В и Сабанин А., նշվ. աշխ., N 348. Болгаро-сербский союзный договор, заключенный в Софии 29 февраля (13 марта) 1912 года, с. 352:
[397] Նույն տեղում, էջ 353:

նագիրը հավանության է արժանանում անգլիական և ֆրանսիական կառավարությունների կողմից, իսկ ֆրանսիական կառավարությունը համաձայնվում է փոխառություն տրամադրել Բուլղարիային:

Նույն թվականի մայիսի 12-ին կնքվում է նաև սերբ-բուլղարական ռազմական համաձայնությունը, ըստ որի՝ Թուրքիայի դեմ պատերազմում Սերբիան ռազմի դաշտ պետք է հաներ 100.000-150.000-անոց, իսկ Բուլղարիան՝ 200.000-անոց բանակ[398]: Միաժամանակ, մայիսի 29–ին Սոֆիայում ստորագրվում է հույն-բուլղարական դաշնակցային պայմանագիրը, որտեղ սակայն, չէր խոսվում Մակեդոնիայի բաժանման մասին[399]: Դեռևս հույն-բուլղարական դաշնակցային պայմանագրի կնքման նախօրյակին Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսը նշում էր, որ Մակեդոնիայի բաժանումը կատարվելու էր միայն ռազմական նվաճումների հիման վրա: Պայմանագրում խոսք անգամ լինել չի կարող ազդեցության գոտիների սահմանման մասին, շեշտում էր հունական կառավարության ղեկավարը, Մակեդոնիայի բախտը լուծվելու է միայն զենքի միջոցով: Նույն թվականի հոկտեմբերի 5-ին երկու երկրները ստորագրում են ռազմական համաձայնություն, ըստ որի՝ Հունաստանը Թուրքիայի դեմ պետք է հաներ 120.000-անոց, իսկ Բուլղարիան՝ 300.000-անոց բանակ, ավելի, քան նախատեսված էր Սերբիայի հետ կնքած ռազմական համաձայնագրով[400]:

Մայիսի 5-ին Աթենքում ստորագրվում է նաև հույն-սերբական հույժ գաղտնի դաշնակցային պայմանագիրը, որտեղ պայմանավորվող կողմերը համաձայնության էին հանգում Մակեդոնիան բաժանելու և ընդհանուր սահման հաստատելու հարցում միմյանց փոխադարձ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Մակեդոնիան ռազմական ուժով բաժանելու Բուլղարիայի ձգտումների դեմ պայմանավորվող կողմերը պարտավորվում էին միմյանց ցուցաբերել ռազմա-

[398] История дипломатии, т. II, с. 740.
[399] Նույն տեղում, էջ 742:
[400] Նույն տեղում:

կան օգնություն և հաշտությունը կնքել միասնաբար և փոխադարձ համաձայնության դեպքում[401]:

Նույն թվականի սեպտեմբերին Բուլղարիան և Չեռնոգորիան կայացնում են ռազմական դաշինքի բանավոր համաձայնություն Թուրքիայի դեմ պատերազմում Չեռնոգորիայի մասնակցության վերաբերյալ: Այդ բանավոր ռազմական դաշինքի համաձայն՝ Չեռնոգորիան պարտավորվում էր առաջինը պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, իսկ Բուլղարիան հանձն էր առնում պատերազմի յուրաքանչյուր ամիս Չեռնոգորիային տրամադրել 700 հազար լեվ ֆինանսական օգնություն: Պատերազմի անմիջական նախօրյակին՝ հոկտեմբերի 6-ին, ռազմաքաղաքական դաշինք է կնքվում Սերբիայի ու Չեռնոգորիայի միջև[402]:

Խեղաթյուրելով ազգային-ազատագրական Առաջին բալկանյան պատերազմի առաջացման քաղաքական իրական պատճառները՝ թուրքական պատմագրությունը շեշտում է, որ Բալկաններում իրենց նվաճողական քաղաքականությունը շարունակող Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան և Չեռնոգորիան Ռուսաստանի հրահրումով դաշինք են կնքել Օսմանյան կայսրության բալկանյան տիրույթները իրար միջև բաժանելու համար[403]:

Ֆրանսիական պատմագրությունը, խոսելով Թուրքիայի դեմ ստեղծված Բալկանյան երկրների ռազմաքաղաքական խմբավորման մասին, շեշտում է, որ Բալկանյան դաշինքը, Ռուսաստանի հովանավորության ներքո, ստեղծվել է Բուլղարիայի շուրջը: Սոֆիայում Ռուսաստանի դեսպան Նեկլյուդովը ներգրավված էր ընթացող բանակցությունների մեջ, նա սոսկ պարզ դիտորդ չէր, նշում է ֆրանսիական պատմագրությունը, այլ խորհուրդներ էր տալիս, խմբագրում տեքստերը: Բելգրադում նրա գործընկեր Հարդվիգը ա-

[401] Ключников Ю.В и Сабанин А., նշվ. աշխ., N 361. Греко-сербский союзный договор, заключенный в Афинах 22 апреля (5 мая) 1913 года, с. 366-367:
[402] Živko M. Andrijašević, նշվ. աշխ., էջ 139:
[403] Tarih, s. 248.

պագա տարածքների սահմանագծման շուրջ ջանում էր համաձայնություն հաստատել բուլղարների և սերբերի միջև: Ռուսական կառավարությունը նույնպես ծանոթ էր բանակցությունների ընթացքին և քննարկվող հարցերի վերաբերյալ առաջարկել էր իր հաշտարար միջնորդությունը: Ընդհանուր առումով, շեշտում է ֆրանսիական պատմագրությունը, Բալկանյան դաշինքը ռուսական դիվանագիտության գործադրած ջանքերի արգասիքն է[404]: Ինչ վերաբերում է հույն-բուլղարական դաշինքին, ապա, հունական պատմագրության համաձայն, այն ձևավորվել, համաձայնեցվել և կնքվել է Հունաստանի և Բուլղարիայի միջև Աթենքում և Սոֆիայում ընթացող բանակցություններում անգլիական դիվանագիտության անմիջական մասնակցության և գործադրած միջնորդական ջանքերի հետևանքով: Իտալա-թուրքական պատերազմը դեռևս չավարտված՝ Բալկանյան դաշինքի երկրները վերջնագիր են ներկայացնում թուրքական կառավարությանը՝ պահանջելով իրականացնել Մակեդոնիայում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածը: Ստանալով մերժում՝ 1912 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի դեմ առաջինը պատերազմ է սկսում Չեռնոգորիան: Հոկտեմբերի 17-ին Թուրքիային պատերազմ են հայտարարում Սերբիան և Բուլղարիան, իսկ հոկտեմբերի 18-ին՝ Հունաստանը՝ սկիզբ դնելով Առաջին բալկանյան պատերազմին:

Վերլուծելով 1912 թ. աշնանը Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին ճգնաժամային ծանր կացությունը՝ այդ ժամանակվա ռազմածովային նախարար Մահմուդ Մուխտար փաշան խոստովանում է. «Իրադրությունը երբեք այդքան բարենպաստ չէր եղել բալկանյան երկրների կողմից Թուրքիայի դեմ զինված ելույթ սկսելու համար, մանավանդ որ վերջինս գտնվում էր ֆինանսապես քայքայված ու ռազմական տեսակետից ահավոր թույլ վիճակում»[405]:

---

[404] Pierre Renouvin, նշվ. աշխ., էջ 172:

[405] Général M. Moukhtar Pacha, La Turquie, l'Allemagne et l'Europe.Depuis le Traité de Berlin jusqu'à la Guerre Mondiale. Paris, 1924, p. 144.

Սկսված պատերազմում դաշնակից բալկանյան երկրները Թուրքիայի դեմ էին հանել 603 հազարանոց բանակ, որից 230 հազարը Բուլղարիայի զինվորներն էին, իսկ թուրքական բանակը բաղկացած էր 412 հազար զինվորներից:

Բալկանյան պատերազմի հենց սկզբին Ռուսաստանը սերբական բանակի համար ուղարկում է 100 հազար զինվորական վերարկու, 80 հազար զինվորական բլուզ և 80 հազար զինվորի ու սպայի համար նախատեսված վրաններ: Նույն թվականի դեկտեմբերին բուլղարական բանակի համար Ռուսաստանը ուղարկում է 225 հազար ռուբլու գումարին համարժեք զենք: Պարենային ծայրահեղ կարիքի մեջ գտնվող Չեռնոգորիային պատերազմի առաջին իսկ ամիսներին Ռուսաստանը մատակարարում է 375 հազար փութ եգիպտացորենի և 137 հազար փութ ցորենի ալյուր: 1913 թ. հունվարին ռուսական կառավարությունը որոշում է կայացնում Չեռնոգորիայի պարենային կարիքները բավարարելու համար 2.150 հազար կրոնից բացի, լրացուցիչ կերպով հատկացնել 1.150 հազար կրոն: Ռուսական հասարակայնության շրջաններում լայն ծավալ է ստանում բալկանյան դաշնակիցներին տարբեր ձևերով օգնելու շարժումը: 1912 թ. հոկտեմբերին Պետերբուրգի Քաղաքային խորհուրդը 100 հազար ռուբլի է հատկացնում բուլղարական, սերբական, չեռնոգորյան և հունական բանակներին՝ բժշկա-սանիտարական օգնություն կազմակերպելու համար: Նման որոշումներ են ընդունում նաև այլ քաղաքների խորհուրդները և տարբեր բնույթի կազմակերպությունները: Բալկանյան դաշինքի երկրների բանակներին հսկայական օգնություն է ցուցաբերում ռուսական Կարմիր Խաչը, որը, օրինակ, Բուլղարիա է ուղարկում 400 մահճակալից բաղկացած ռազմադաշտային հոսպիտալ և յուրաքանչյուրը 100 մահճակալից բաղկացած երեք դաշտային լազարեթ և այլն[406]:

Աննախադեպ ռազմական փայլուն հաղթանակների շնորհիվ

[406] Տե՛ս Писарев Ю.А., Великие державы и Балканы накануне первой мировой войны, М., 1985, с. 109-110:

դաշնակից պետություններ Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան և Հունաստանը միասնական ուժերով կարճ ժամանակում ազատագրում են Բալկաններում դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող Կոսովո-Մետոխիան, Մակեդոնիան և Թրակիայի մեծ մասը: Միաժամանակ, Սերբիան դուրս է գալիս Ադրիատիկ ծով՝ գրավելով Դուրացցո (Դուրրես) նավահանգիստը, իսկ Չեռնոգորիան իր իշխանությունն է հաստատում Շկոդեր (Սկուտարի) քաղաքի վրա: Իր հերթին, հունական բանակի Էպիրոսյան խմբավորումը գրավում է նաև Հյուսիսային Էպիրոսը և Ադրիատիկ ծովի Խիմարա նավահանգիստը: Իր գերիշխանությունը հաստատելով էգեյան ծովում, բացառությամբ՝ 1911–1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում Իտալիայի գրաված Դոդեկանեզյան արշիպելագի, հունական ռազմածովային նավատորմը ազատագրում է թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր կղզիները:

Դեռևս Թուրքիային պատերազմ չհայտարարած՝ հոկտեմբերի 14-ին, Հունաստանի Ազգային ժողովը, իր կազմում վերջապես ընդունելով կրետական պատգամավորներին, աննկարագրելի ոգևորության պայմաններում մեծ հանդիսավորությամբ հռչակում է անվանապես օսմանյան սուլթանի սյուզերենության ներքո գտնվող Կրետե կղզու միավորումը Մայր Հայրենիքի՝ Հունաստանի հետ: Սկսված բալկանյան պատերազմի և Հունաստանի հետ Կրետե կղզու միության հռչակման հետևանքով Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ռուսաստանը իրենց ռազմանավերը դուրս են բերում կրետական ջրերից՝ ի վերջո փաստորեն ճանաչելով Կրետեի քաղաքական միավորումը Հունաստանի հետ: Եվրոպական տերությունների ռազմանավերի հեռանալուց անմիջապես հետո կղզու հունական իշխանությունները իջեցնում են օսմանյան սուլթանի սոսկ սյուզերեն իրավունքները ձևականորեն խորհրդանշող թուրքական դրոշը և այն փոխարինում Հունական թագավորության դրոշով: Միաժամանակ կղզի են ժամանում հունական բանակի որոշ զորամիավորումներ:

Օգտվելով բալկանյան դաշնակից երկրների հաղթական ռազմական գործողություններից՝ Վլյորա քաղաքում հրավիրված ալբանական Ազգային կոնգրեսը 1912 թ. նոյեմբերի 28-ին հռչակում է Ալբանիայի անկախությունը Թուրքիայից:

Օսմանյան կայսրությունը, պատերազմի առաջին իսկ շաբաթներում կրելով ջախջախիչ ռազմական պարտություններ, հարկադրված է լինում 1912 թ. դեկտեմբերի 3-ին կնքել զինադադար:

1912թ. դեկտեմբերի 16-ին Լոնդոնում սկսվում են հաշտության բանակցությունները բալկանյան դաշնակից պետությունների և Օսմանյան կայսրության միջև: Միաժամանակ դեկտեմբերի 17-ին իր աշխատանքներն է սկսում Մեծ տերությունների Լոնդոնի դեսպանաժողովը՝ բանակցող կողմերին թելադրելով իրենց քաղաքական շահերին համապատասխանող հաշտության պայմաններ:

Թուրք պետական գործիչները պարզորեն տեսնում և հասկանում էի, որ Եռյակ դաշինքի դիվանագիտական եռանդուն աջակցությանը հակառակ, ռազմական գործողությունների վերսկսման դեպքում, թուրքական դարավոր տիրապետությունը վերջնականապես կործանվելու էր Բալկանյան թերակղզում:

1913 թ. հունվարի 22-ին կառավարությունը բարձրաստիճան ավագանու հետ քննարկում է կայսրության արտաքին իրադրությունը և հաշտության կնքման հնարավորությունը: Գրեթե բոլորը արտահայտվում են հօգուտ հաշտության կնքման, սակայն ներքաղաքական իրադարձությունները ձախողում են այն:

Օգտագործելով Բալկանան պատերազմում Թուրքիայի կրած ջախջախիչ պարտությունները և այդ կապակցությամբ առաջացած դժգոհությունը՝ երիտթուրքերը ծավալում են 1912 թ. հուլիսին իրենց փոխարեն իշխանության եկած «Ազատություն և Համաձայնություն» կուսակցության կառավարության դեմ լայն քարոզչություն՝ պախարակելով «մահմեդական սրբավայր» Էդիրնեն (Ադրիանապոլիսը) դաշնակիցներին զիջելու մտադրությունը: Թուրքիայի հաղթանակը պատերազմում ապահովելու և կորցրած տարածքները վերագրա-

վելու ամենաառատ խոստումներով երիտթուրքերը նախապատրաստում էին պետական իշխանության գրավումը: Այդ ուղղությամբ երիտթուրքերը գործում էին այնքան բացահայտորեն, որ գերմանական լավատեղյակ թերթերից մեկը երիտթուրքական պետական հեղաշրջման անմիջական նախօրյակին ուղղակիորեն հայտարարեց. «Վերջին օրերում Թուրքիայում մեծ հավանականություն է ստացել ռազմական ռեժիմի հաստատման հնարավորությունը»[407]:

1913 թ. հունվարի 22-ին կայացած կառավարության արտակարգ նիստում, երբ որոշվում է հաշտության հարցը, երիտթուրքերը իրենց ելույթի պահը համարում են խիստ բարենպաստ: Օգտվելով գերմանական դիվանագիտության աջակցությունից՝ հունվարի 23-ին երիտթուրքերը իրագործում են պետական հեղաշրջում և կայսրության ղեկը կրկին վերցնում իրենց ձեռքը: «Երիտասարդ թուրքերը,- այդ կապակցությամբ նշեց բոլշևիկյան «Պրավդան»,- որոշեցին օգտվել կառավարության թուլությունից և դժվարին կացությունից, որպեսզի հայրենասիրություն խաղան ու կրկին զավթեն իշխանությունը»[408]: Նույնիսկ թուրք պատմաբաններն են նշում, որ երիտթուրքերի կողմից իշխանության գրավումը բացատրվում է ոչ թե կայսրությունը վտանգից փրկելու մղումից, այլ իշխանությունը նորից զավթելու ձգտումից: «Երիտթուրքերը կառավարությունը տապալեցին,- գրում է թուրք պատմաբան Բաղըբը,- ոչ թե հայրենիքը փրկելու, այլ պետական իշխանությունը ձեռք գցելու նպատակով»[409]: «Էդիրնեն (Ադրիանապոլիսը) ազատագրելու երիտթուրքերի քարոզչությունը,- նշում է Բայուրը,- դառնում է այդ նպատակին հասնելու արտահայտությունը»[410]:

1913 թ. հունվարի 23-ին երիտթուրքական պարագլուխները զինված ուժով կատարում են պետական հեղաշրջում և քաղաքա-

---

[407] Տե՛ս “С.-Петербургские ведомости”, 1(14). I. 1914:
[408] Տե՛ս “Правда”, 17. I. 1913:
[409] Bağip M., Ittihad ve Terakki tarihinde esrar perdesi. İstanbul, 1934, s. 88.
[410] Bayur Y. H., նշվ. աշխ., h. 2, մ. 2, էջ 273:

կան ասպարեզից հեռացնում իրենց հակառակորդ «Ազատություն և Համաձայնություն» կուսակցությանը և նրա կառավարությանը: «Մենք՝ երիտթուրքերս, հնարավորություն չունենալով ղեկավարության սանձերը թույլ, անզոր կառավարության ձեռքից օրինական ձևերով խլելու, հարկադրված էինք դիմելու պետական հեղաշրջման»,- բացահայտորեն խոստովանել է Ջեմալ փաշան[411]:

1913 թ. հունվարյան հեղաշրջման հետևանքով Կ.Պոլսում իշխանությունը զավթում են երիտթուրքական կուսակցության ռազմական թևի գերմանական կողմնորոշման մոլեռանդ կողմնակիցները, որոնք հույս ունեին կայզերական Գերմանիայի ռազմաքաղաքական ու դիվանագիտական անմիջական աջակցությամբ ու համագործակցությամբ ամրապնդել իրենց դիկտատուրան և պահպանել կայսրությունը:

Պետական իշանության բռնազավթումից հետո նոր կառավարությունը ամբողջությամբ կազմվում է երիտթուրքական կուսակցության պարագլուխներից՝ մեծ վեզիր Մահմուդ Շեվքեթ փաշայի գլխավորությամբ: Իրականում՝ ամբողջ փաստական իշխանությունը անցնում է Էնվերի, Թալաաթի ու Ջեմալի եռապետությանը:

Զավթելով պետական իշխանությունը՝ երիտթուրքերը այնուամենայնիվ չկարողացան իրականացնել ոչ միայն Թուրքիայի հաղթանակը ապահովելու իրենց խոստումները, այլև կրեցին ռազմական նոր պարտություններ:

Թուրքական բանակների անընդմեջ պարտությունները և տարածքային նոր կորուստները օսմանյան կառավարող շրջաններում ի վերջո առաջացնում են խորին հուսալքություն: Նրանք հասկանում էին, որ բալկանյան դաշնակիցների հաղթանակները թուրքական դարավոր տիրապետությունը վերջնականապես կործանելու էին ոչ միայն Բալկանյան թերակղզում, այլև օրակարգի հարց էին դարձնելու Օսմանյան կայսրության հետագա գոյությունը: «Մենք

[411] Джемаль паша, Записки. 1913-1919.Тифлис, 1923, с. 8.

պետք է դառնությամբ ընդունենք,- գրում էր Թասվիր-ը Էֆքյար թերթը, – որ մենք այժմ դեմ առ դեմ կանգնած ենք անխուսափելի կործանման առջև[412]»:

1913 թ. մարտի 6-ին հունական բանակը գրավում է Էպիրոսի կարևորագույն բերդաքաղաք Յանինան, իսկ մարտի 26-ին՝ 149-օրյա պաշարումից հետո, բուլղարական բանակը գրոհով վերցնում է Ադրիանապոլիս քաղաք-ամրոցը:

Ադրիանապոլսի անկումը ռազմական ու բարոյական մեծ հարված է հասցնում թուրքական բանակին և երիտթուրքերի քաղաքական հեղինակությանը:

Ռազմական պարտությունները և տարածքային կորուստները մեծ դժգոհություն են առաջացնում երիտթուրքերի քաղաքական հակառակորդների շրջաններում: Դժգոհությունը բացահայտ է դառնում բանակում: Մեծ վեզիրին ներկայացվում է հուշագիր, որով սպաների մի խումբ պահանջում էր կառավարության հրաժարականը՝ պատճառաբանելով, որ երիտթուրքերի ղեկավարությունը վատթարացրել է գործերի վիճակը: Օգտվելով երիտթուրքերի բռնատիրական վարչակարգի դեմ առաջացած դժգոհությունից՝ քաղաքական ընդդիմադիր ուժերը աշխուժացնում են իշխանության գլուխ անցնելու իրենց գործունեությունը: Երիտթուրքերի քաղաքական նկարագիրը բացահայտող պարսավագրերում ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները նշում էին. ««Միություն և Առաջադիմություն» կուսակցության առաջնորդները ոչ այլ ոք են, քան մարդասպաններ, որոնց ձեռքերը թաթախված են արյունով»[413]:Դժգոհությունն ընդգրկում է նաև երիտասարդ թուրքերի մի մասին:

Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունները և Հարավ-Արևելյան Եվրոպայում թուրքական տիրապետության խորտակումը հարված էին հասցնում նաև Բալկանյան թերակղզու նկատմամբ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի ռազմաքաղա-

[412] Տե՛ս “Le Temps”, 18. II. 1913:
[413] Джемаль паша, նշվ. աշխ., էջ 16:

քական ու տնտեսական նվաճողական ծրագրերին: Փաստորեն, Բալկանները լիովին ընկնում էին Անտանտի տերությունների քաղաքական ազդեցության տակ: Վերանում էր այն կամուրջը, որը աշխարհագրականորեն Կենտրոնական տերություններին պետք է միացներ Թուրքիայի, Մերձավոր ու Միջին Արևելքի հետ:

Բալկաններում թուրքական տիրապետության տապալման և միավորված, ընդարձակված ազգային ուժեղ պետությունների՝ Սերբիայի, Չեռնոգորիայի, Բուլղարիայի և Հունաստանի կազմավորման հետևանքով ստեղծվում էր տարածքային հզոր պատնեշ, որը վերջնականորեն արգելափակելու էր Ավստրո-Հունգարիայի առաջխաղացումը դեպի Էգեյան ծովի Թեսալոնիկե նավահանգիստը:

Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին ծանր վիճակը երիտթուրքերին հարկադրում էր մտածել հաշտության մասին: Վերջապես, տերությունների, մասնավորապես՝ դեսպանաժողովի նախագահի, Անգլիայի արտաքին գործերի նախարար էդ. Գրեյի դիվանագիտական ճնշմամբ, բանակցող կողմերը 1913 թ. մայիսի 30-ին Լոնդոնում ստորագրում են իրենց մշակած և տերությունների հավանությանն արժանացած հաշտության պայմանագիրը:

Լոնդոնի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիան Բալկաններում դաշնակիցներին էր զիջում Սև ծովի Միդիա և Էգեյան ծովի Էնոս նավահանգիստների միջև ձգվող ուղղագիծ սահմանագծից արևմուտք գտնվող բոլոր տարածքները, բացառությամբ՝ Գալլիպոլի թերակղզու և Ալբանիայի: Թուրքիան անվերապահորեն Հունաստանին էր զիջում միջերկրածովյան Կրետե կղզին: Հունական ռազմածովային նավատորմի կողմից ազատագրված Էգեյան ծովի կղզիների հետագա պատկանելության հարցը (բացի Դոդեկանեզյան արշիպելագից) վերապահվում էր Մեծ տերությունների վճռին[414]: Այդ հարցում դրսևորված հակասություններն այն աստի-

[414] Ключников Ю.В. и Сабанин А., նշվ. աշխ., N 362. Мирный договор между Турцией, с одной стороны, и Сербией, Грецией, Болгарией и Черногорией (“союзные государи”), с другой, заключенный в Лондоне 30 мая 1913 года, с. 367:

ճանի սուր էին, որ հաշտության բանակցություններում եվրոպական տերությունները չեն կարողանում վերջնական որոշում կայացնել: Ինչ վերաբերում էր Էնոս-Միդիա ուղղագիծ սահմանից արևմուտք գտնվող նախկին Եվրոպական Թուրքիային, ապա այդ տարածքի բաժանումը և սահմանագծումը կատարվելու էր բալկանյան դաշնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

Լոնդոնի հաշտության պայմանագրով ճանաչվում էր 1912 թ. նոյեմբերի 28-ին Վլյորա քաղաքում ալբանական Ազգային կոնգրեսի հռչակած Ալբանիայի անկախությունը[415]: Այդպիսով՝ Առաջին բալկանյան պատերազմի ռազմաքաղաքական կարևորագույն հետևանքներից մեկը թուրքական դարավոր տիրապետության վերացումն էր նաև բալկանյան այդ երկրի՝ Ալբանիայի նկատմամբ:

Անկախություն հռչակած ալբանական պետության տարածքը որոշելու նպատակով տերությունները, հիմնականում՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, ռազմաքաղաքական ճնշմամբ ստիպում են Սերբիային իր զորքերը հեռացնել Ադրիատիկի ծովափից և Դուրացցո (Դուրրես) նավահանգստից, Չեռնոգորիային՝ Սկուտարիից (Շկոդերից), իսկ Հունաստանին՝ Հյուսիսային Էպիրոսի մի շարք քաղաքներից ու Ադրիատիկ ծովի Խիմարա նավահանգստից: Ավստրո-Հունգարիան և Իտալիան մեծ շահագրգռվածություն էին ցուցաբերում Լոնդոնի դեսպանաժողովի կողմից անվերապահորեն անկախ ճանաչված Ալբանիայի և նրա սահմանների որոշման նկատմամբ: Իտալիան նոր ստեղծվող ալբանական պետությանը դիտարկում էր որպես մի հարթակ, որը Բալկաններում պետք է ծառայեր իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցության հետագա տարածման, ինչպես նաև Ադրիատիկ ծովի ավազանում իր գերիշխանության հաստատման համար[416]:

Ավստրո-հունգարական դիվանագիտության տեսակետից Ավստրո-Հունգարիայի համար Ալբանիան պետք է լիներ ոչ միայն

[415] Նույն տեղում:
[416] Писарев Ю. А., նշվ. աշխ., էջ 150:

Իտալիային Բալկաններում հակազդող ուժ, այլ նաև Ռուսաստանի ազդեցության տակ գտնվող Սերբիայի և Չեռնոգորիայի դեմ՝ որպես դաշնակից[417]:

Ելնելով իրենց ռազմաքաղաքական և տնտեսական շահերից՝ թե՛ Ավստրո-Հունգարիան և թե՛ Իտալիան դեմ էին Ալբանիայի տարածքով Ադրիատիկ ծով դուրս գալու Սերբիայի ձգտմանը, որովհետև, նրանց համոզմամբ, եթե Սերբիան Ադրիատիկ ծովում ստանար թեկուզ մեկ նավանգահանգիստ, ապա ռազմական նպատակներով այն կօգտագործվեր ոչ միայն Սերբիայի, այլ նաև 1902 թ.-ից Սերբիայի հետ երկաթուղագծային ուղղակի հաղորդակցություն հաստատած Ռուսաստանի կողմից[418]: Ուստի, մասնավորապես Ավստրո-Հունգարական կայսրության կառավարող շրջանների հիմնական ավանդական նպատակն էր Ալբանիայի ստեղծումով Սերբիայի դեմ արգելապատնեշ դնել դեպի Ադրիատիկ ծով[419]:

Սերբիայի տարածքով Ադրիատիկ ծով դուրս գալու Ռուսաստանի ձգտմանը վճռականորեն դեմ էին նաև նրա ռազմաքաղաքական դաշնակիցներ Անգլիան և Ֆրանսիան: 1912 թ. նոյեմբերի 13-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյը ռուսական կառավարությանը առաջարկում է ճնշում գործադրել Սերբիայի վրա՝ ստիպելով նրան սահմանափակվել Նովի-Բազարի սանջակը Չեռնոգորիայի հետ բաժանելով՝ շեշտելով, որ «սերբերի համառությունը կարող է առաջացնել ամբողջ Եվրոպայի հասարակական կարծիքի դժգոհությունը՝ չխոսելով արդեն Անգլիայի մասին»[420]: Իսկ Ռուսաստանի ռազմական դաշնակից Ֆրանսիան զգուշացնում է, որ եթե իր տեղական շահերից ելնելով Սերբիան պատերազմ հրահրի Ավստրո-Հունգարիայի դեմ, իսկ Ռուսաստանը պաշտպանի նրան, ապա Ֆրանսիան և Անգլիան «ոչ անպայման կաջակցեն Ռու-

[417] Նույն տեղում:
[418] Նույն տեղում, էջ 48, 118:
[419] История дипломатии, т. II, с. 750.
[420] Писарев Ю. А., նշվ. աշխ., էջ 123-124:

սաստանին»[421]:

Նոր ստեղծվող Ալբանիայի տարածքով Ադրիատիկ ծով դուրս գալու Սերբիայի ձգտման դեմ հանդիպելով Եռյակ դաշինքի տերությունների, ինչպես նաև իր ռազմաքաղաքական դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի անկոտրում դիմադրությանը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը ստիպված հայտարարում է. «Մենք չենք կարող մեզ թույլ տալ, որ Ադրիականում սերբական նավահանգստի հարցի պատճառով ներքաշվենք պատերազմի մեջ»[422]: Այսպիսով, եթե 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական Համաձայնագրի հիման վրա Բեռլինի կոնգրեսի կայացրած որոշմամբ Մակեդոնիան վերադարձվում էր թուրքական տիրապետության տակ, և դրանով Անգլիան Ռուսաստանին զրկում էր Սև ծովից Բուլղարիայի տարածքով դեպի Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությունից, ապա 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրի համաձայն՝ Եռյակ դաշինքի տերությունները և Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիան ու Ֆրանսիան, իրենց ռազմաքաղաքական ու տնտեսական շահերից ելնելով, ստեղծվելիք Ալբանական պետությունը Սերբիայի դեմ դարձնում էին արգելապատնեշ՝ ոչ միայն Սերբիային անջրպետելով Ադրիատիկ ծովից, այլև փակելով Սերբիայի տարածքով Ռուսաստանի ճանապարհը դեպի Ադրիատիկ ծով:

Սակայն Ալբանիայի սահմանների շուրջ տերությունների և դաշնակիցների միջև առկա տարաձայնությունների և հակասությունների պատճառով Լոնդոնի հաշտության կոնֆերանսը հետաձգում է նորաստեղծ պետության տարածքների որոշման վերաբերյալ մայիսի 30-ին Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրի իրագործումը: Այդպիսի քաղաքական արդյունքներով է ավարտվում Առաջին բալկանյան պատերազմը, որի հետևանքով թուրքական դարավոր տիրապետությունը վերջնականապես տապալվում է Բալ-

[421] Նույն տեղում, էջ 124:
[422] Տե՛ս Renouvin Pierre, նշվ. աշխ., էջ 175:

կանյան թերակղզու մեծագույն մասում: Բալկաններում տերությունները Թուրքիային էին թողնում Էնոս-Միդիա սահմանագծից արևելք գտնվող և Կ.Պոլսի անվտանգությունը ապահովող սոսկ մի փոքրիկ տարածք:

Առաջին բալկանյան պատերազմի քաղաքական և տնտեսական հետևանքները չափազանց մեծ առաջադիմական նշանակություն ունեցան հույն և սլավոնական ժողովուրդների հետագա պատմական զարգացման համար: Հույն և սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական դարավոր պայքարը թուրքական ամենաբարբարոսական բռնակալության դեմ ավարտվում է լիակատար հաղթանակով: Դրանով ազգային հարցը Բալկաններում հսկայական առաջընթաց քայլ է կատարում դեպի իր լուծումը: «Բալկանները՝ բալկանյան ժողովուրդներին» իրականացվում է: Թուրքական հետամնաց տնտեսական ու քաղաքական կարգերի ոչնչացումը բալկանյան երկրներին ընձեռում է արագ զարգացման լայն հնարավորություններ, որոնք կասեցված էին աբսոլյուտիզմով և ճորտատիրական հարաբերություններով: Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Արևելյան Եվրոպայում միջնադարյան կարգերի և թուրքական բռնակալական տիրապետության վերացումը բնութագրվում է որպես «համաշխարհային պատմության նոր գլուխ»:

Ներքաղաքական իրադրության սրումը Կ.Պոլսում Առաջին բալկանյան պատերազմից հետո

Եվրոպական Թուրքիայի, Կրետեի և Էգեյան ծովի կղզիների կորուստը քաղաքական ու տնտեսական չափազանց ծանր իրադրություն է ստեղծում Թուրքիայի համար և մեծ հարված է հասցնում կառավարող երիտթուրքական կուսակցության հեղինակությանը: Երիտթուրքերը չկարողացան իրականացնել պատերազմի ընթացքը հօգուտ Օսմանյան կայսրության փոխելու իրենց հավաստի-

ացումներն ու խոստումները, կրեցին նորանոր ռազմական պարտություններ՝ ջախջախվելով իրենց արկածախնդրական ծրագրերի կատարման մեջ:

Թուրքական պատմագրությունը չափազանց խիստ է արտահայտվում երիտթուրքերի արտաքին քաղաքականության մասին՝ նրանց ներկայացնելով Եվրոպական Թուրքիայի և Էգեյան ծովի կղզիների կորստյան անքավելի մեղադրանքը: Թուրք պատմաբան Բայուրը նշում է, որ երիտթուրքերի հունվարյան հեղաշրջումից սկսած՝ քաղաքական իրադարձություններն իրենց վերջնական արդյունքում Օսմանյան կայսրության համար եղան չափազանց աղետաբեր: Բնական է, նշում է նա, որ ստեղծված այդ պայմաններում քաղաքական ընդդիմադիր ուժերի ամբողջ դժգոհությունը պետք է ուղղվեր կառավարող երիտթուրքական կուսակցության դեմ՝ նրան համարելով կայսրությանը պատճառված բոլոր դժբախտությունների պատճառը: «Ուստի,- եզրակացնում է Բայուրը,- այդ շրջանում երիտթուրքերի քաղաքական կացությունն ավելի քան վատթար էր ու անհուսալի»[423]:

Քաղաքական ընդդիմությունը, որ գլխավորում էին հունվարյան հեղաշրջման հետևանքով իշխանությունից հեռացված իթիլաֆականները, անցնում է հարձակման: 1913 թ. հունիսի 11-ին Կ.Պոլսի Բայազեդի հրապարակում սպանվում է մեծ վեզիր Մահմուդ Շեվքեթ փաշան: Քաղաքական բնույթ կրող այդ սպանությամբ իթիլաֆականները հետապնդում էին ոչ միայն պետական հեղաշրջում կատարելու նպատակը, այլև փորձում էին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել երիտթուրքական կուսակցության բոլոր ղեկավարների և նրանց կողմնակիցների նկատմամբ:

Սակայն սկսված պետական հեղաշրջման փորձը դրանով էլ ավարտվում է: «Մենք ձերբակալեցինք բոլորին»,- հեղաշրջման փորձը ճնշելու կապակցությամբ իր հուշագրություններում նշում է

[423] Bayur Y. H., Türk inkilâbi tarihi, cilt II, Kisim, Ankara, 1943, s. 316.

Ջեմալ փաշան[424]: Կ.Պոլսում մտցվում է պաշարողական դրություն: Երիտթուրքերը արյունալի հաշվեհարդար են տեսնում իրենց քաղաքական հակառակորդների հետ՝ կանխելով նոր պետական հեղաշրջումը: Բոլոր ընդդիմադիր կուսակցությունները և ուժերը հայտարարվում են օրենքից դուրս, իսկ շուրջ 300 հայտնի գործիչներ բանտարկվում են Սինոպի ամրոցում: Հաստատելով ռազմական դիկտատուրա և դաժան հաշվեհարդարի միջոցով ոչնչացնելով իր քաղաքական հակառակորդներին՝ երիտթուրքական կուսակցությունը դառնում է կայսրության միակ տիրակալը: Այդ ճանապարհով ամրապնդելով իրենց ղեկավար դիրքերը երկրի ներսում և ուժեղացնելով դասակարգային ճնշումներն ու ազգային-կրոնական հալածանքները՝ երիտթուրքերը ուղիներ էին որոնում կայսրությունը արտաքին քաղաքական ծանր վիճակից հանելու և ռևանշիստական, զավթողական քաղաքականություն իրականացնելու համար: Բալկաններում ստեղծված քաղաքական լարված իրավիճակը, որ անմիջական հետևանք էր բալկանյան դաշնակից պետությունների միջև առկա սահմանային լուրջ տարաձայնությունների, փոխվրեժի և զավթումների մեծ հույսեր ու հեռանկարներ էր ներշնչում երիտթուրքերին:

Երկրորդ բալկանյան պատերազմը
Բուխարեստի հաշտության պայմանագիրը
(1913 թ. օգոստոսի 10)

Լոնդոնի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո թուրքական տիրապետությունից ազատագրված բալկանյան տարածքների, հիմնականում՝ Մակեդոնիայի բաժանումը փոխադարձ համաձայնությամբ պետք է կատարեին հաղթանակած բալկանյան դաշնակից երկրները: Սակայն Մակեդոնիան բալկանյան դաշնա-

[424] Джемаль паша, նշվ. աշխ., էջ 30:

կիցների միջև փոխադարձ համաձայնությամբ բաժանելու վերաբերյալ առկա հակասությունները լուրջ սպառնալիք էին ստեղծում Բալկանյան դաշինքի գոյությանը: Իրենց հերթին, Եռյակ միության տերությունները աշխատում էին խորացնել հակասությունները Բուլղարիայի, Հունաստանի ու Սերբիայի միջև և պայթեցնել Անտանտի ազդեցության տակ գտնվող բալկանյան երկրների խմբավորումը: Քաղաքական իրադրությունը Բալկաններում բարդանում էր նաև նրանով, որ երիտթուրքերը, կանխատեսելով հավանական պատերազմը դաշնակից պետությունների միջև, նախապատրաստվում էին ապագա իրադարձություններին:

Բալկաններում դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող իրենց ազգային-պատմական տարածքները ազատագրելու համար Բալկանյան դաշինքի երկրների մղած պատերազմը Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության ականավոր ղեկավարներից Ժան Ժորեսը բնութագրեց որպես քաղաքակրթական առաքելություն: Սակայն նա արտահայտում էր իր մտահոգությունը՝ շեշտելով, որ թուրքական տիրապետությունից ազատագրված բալկանյան տարածքների բաժանման վերաբերյալ դաշնակիցների միջև եղած առկա տարաձայնությունները հղի են քաղաքական շատ լուրջ հետևանքներով: «Բուլղարները ցանկանում են վերցնել Կ.Պոլիսը և պահել այն»,- շեշտում էր Ժ.Ժորեսը: «Սակայն բալկանյան երկրների միությունը կգոյատևի՞ մինչև այդ օրը,- հարցնում էր Ժ.Ժորեսը: Արդյոք նրանք իրականում համաձայնությա՞ն են հանգել հաշտության և հաղթանակից օգտվելու պայմանների վերաբերյալ»,- իր տարակուսանքն էր արտահայտում Ժ.Ժորեսը: Թուրքական տիրապետությունից ազատագրված տարածքների բաժանման կապակցությամբ բալկանյան դաշնակիցների միջև եղած առկա տարաձայնությունների պայմաններում Ժ.Ժորեսը իրավացիորեն իր կասկածներն էր արտահայտում Բալկանյան դաշինքի կայունության և հարատևության վերաբերյալ: «Եթե Բյուզանդիայի սրտում հույները, բուլղարները և սերբերը իրար հետ չկռվեն, ապա դա կլինի պատե-

րազմի ամենամեծ հրաշքներից մեկը: Միայն այդ փորձությամբ հայտնի կդառնա, որ բալկանյան պետությունները իրոք ընդունակ են քաղաքակրթական առաքելություն կատարելու»,- դեռևս պատերազմի երկրորդ ամսին Ժ.Ժորեսը «Հումանիտե» թերթում իր անհանգստությունն էր արտահայտում բալկանյան պատերազմի քաղաքական հետևանքների վերաբերյալ[425]:

Տարածքային հակասությունները ճակատագրական ազդեցություն են թողնում Թուրքիայի դեմ բալկանյան երկրների ազատագրական պայքարի վրա և անդարմանելի վնաս են հասցնում Բալկանյան դաշինքին:

Բուլղարիան, ձգտելով իր գերիշխանությունը հաստատել Մակեդոնիայի մեծ մասի վրա, Թեսալոնիկեն դարձնելով Էգեյան ծովի իր նավահանգիստը, պատերազմի ավարտից մեկ ամիս անց՝ հունիսի 29-ին, ավստրո-գերմանական աջակցությամբ անսպասելիորեն հարձակվում է իր նախկին դաշնակիցներ Հունաստանի և Սերբիայի վրա՝ սկիզբ դնելով Երկրորդ բալկանյան պատերազմին: Սակայն, դեռևս Լոնդոնի հաշտության պայմանագրի ստորագրումից ընդամենը մեկ օր անց՝ հունիսի 1-ին, Բուլղարիայի դեմ ռազմաքաղաքական դաշինք կնքած Սերբիան և Հունաստանը[426] սկզբնական ռազմական անհաջողություններից հետո անցնելով հակահարձակման՝ ջախջախիչ պարտության են մատնում իրենց նախկին դաշնակցին: Հուլիսի 10-ին պատերազմի մեջ է մտնում Ռումինիան՝ դեմ լինելով Բալկաններում Բուլղարիայի ռազմաքաղաքական գերիշխանության հաստատմանը, ինչպես նաև նպատակ ունենալով նրանից զավթել Հարավային Դոբրուջան:

Ստեղծված պայմաններում երիտթուրքական կառավարությունը որոշում է աճապարել և օգտվելով քաղաքական բարդ իրադրությունից՝ Առաջին բալկանյան պատերազմում ջախջախիչ պարտու-

[425] Տե՛ս “L’Humantité”, 4. XI. 1912:

[426] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., N 363. Греко-сербский союзный договор, заключенный в Салониках 19 мая (1 июня) 1913 года, с. 367-368:

թյան հետևանքները ինչ-որ չափով վերացնելու նպատակով մեկ հարվածով ետ վերցնել այն, ինչ որ հնարավոր էր: «Իրերի վիճակը պահանջում էր,- հետագայում գրել է Ջեմալ փաշան,- որպեսզի մենք օգտվեինք ստեղծված հարմար դրությունից և հարձակվեինք բուլղարների վրա՝ Ադրիանապոլիսը մեզ վերադարձնելու համար ... Մեր կուսակցության բոլոր անդամները ենթադրում էին, որ կառավարությունը կընդունի հենց այդպիսի որոշում և հույս ունեին, որ բանակին հարձակման հրաման կտրվի»[427]:

Այնուամենայնիվ, երիտթուրքական կառավարության անդամների մեծամասնությունը վարանում էր ռիսկի դիմել՝ վախենալով քաղաքական լուրջ բարդություններից, որ կարող էր ստեղծվել Թուրքիայի համար Լոնդոնի հաշտության պայմանագրով հաստատված Էնոս-Միդիա սահմանագիծը խախտելու հետևանքով: Կառավարող շրջաններում տիրող տարակարծությանը հակառակ՝ մեծ վեզիր և արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշան, ներքին գործերի նախարար Թալեաթը, ռազմածովային նախարար Ջեմալը և նրանց կողմնակիցները պնդում էին Բուլղարիայի վրա անհապաղորեն հարձակվելու և փոխվրեժ վերցնելու իրենց տեսակետը: «Մենք ջանում էինք նրանց համոզել այն բանում, - գրել է Ջեմալը,- որ մենք կկորցնենք պետությունը ղեկավարելու բարոյական իրավունքը և ստիպված կլինենք հրաժարական տալ, եթե չօգտվենք ստեղծված հնարավորությունից և ետ չվերադարձնենք Ադրիանապոլիսը, ինչի համար էլ մենք կատարեցինք պետական հեղաշրջումը»[428]: Ի վերջո, ռևանշիստական տրամադրությունները հաղթանակ են տանում: Հուլիսի 16-ին հարձակվելով անպաշտպան բուլղարական սահմանի վրա՝ Էնվերի հրամանատարությամբ թուրքական զորքերը առաջանում են Ադրիանապոլսի ուղղությամբ՝ վերագրավելով Արևելյան Թրակիան ու Ադրիանապոլիսը, ճանապարհին ավերելով ու կործանելով քրիստոնյա բնակավայրերը և ոչնչաց-

[427] Джемаль паша, նշվ. աշխ., էջ 35-36:
[428] Նույն տեղում:

նելով հազարավոր տեղաբնիկ քրիստոնյաների: «Հարձակվելով Արևելյան Թրակիայի վրա,- գրում էր ռուսական «Նովոյե վրեմյա» հեղինակավոր թերթը,- օսմանյան բանակը հող է պատրաստում նոր Թուրքիայի համար: Այդտեղ նա ոչնչացնում է քրիստոնյա բնակչությանը, այրում և հողին է հավասարեցնում նրանց գյուղերն ու քաղաքները՝ ազատվելով Թուրքիայի համար անցանկալի տարրերից և այդպիսով բնակչության հիմնական մասով դրանք վերածում զուտ թուրքական մարզերի»[429]: Թերթը նշում էր, որ Չաթալջայից Ադրիանապոլիս հարձակվելու առաջին իսկ օրերին թուրքական զորքերը իրենց ճանապարհին կոտորեցին 15 հազար քրիստոնյաների, հիմնականում՝ հույների[430]: «Բնաջնջելով քրիստոնյա բնակչությանը,- շարունակում է թերթը,- թուրքական կառավարությունը գրաված տարածքներում աճապարում է վերաբնակեցնել մահմեդական փախստականներին, որոնք զավթում են բնաջնջված քրիստոնյաների հողերն ու գույքը: Նա վերադարձնում է նաև Թրակիան լքած ու Փ.Ասիա տեղափոխված մահմեդականների»[431]: Թերթը նշում էր, որ թուրքական բանակների և բաշիբոզուկների կողմից քրիստոնյա բնակչության կոտորածով կառավարությունը միանգամից իրականացնում է երկու նպատակ. վերանում են քրիստոնյա բնակավայրերի արտաքին հատկանիշները, և գրեթե լիովին արմատախիլ է արվում թուրքական կառավարությանը անցանկալի բնակչության մի մասը: «Հաղթանակում է բուն թուրքական քաղաքականությունը»,- եզրակացնում էր թերթը[432]:

Երկրորդ բալկանյան պատերազմում ջախջախիչ պարտություն կրած Բուլղարիան հուլիսի 29-ին անձնատուր է լինում: Հաշտությունը կնքվում է 1913 թ. օգոստոսի 10-ին Բուխարեստում: Հաշտության համաձայն Սիլիստրա քաղաքով Բուլղարիան Ռումինիային է զի-

[429] Տե՛ս “Новое время”, 17(30) VI, 1913:
[430] Նույն տեղում:
[431] Նույն տեղում:
[432] Նույն տեղում:

ջում մոտ 8 հազ. քառ. կմ տարածությամբ Հարավային Դոբրուջան:

Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ռազմական սպառնալիքների հետևանքով Սերբիան զրկվում է դեպի Ադրիատիկ ծով դուրս գալու ելքից:

Սերբիան ստանում է Հյուսիսային Մակեդոնիան՝ ներառյալ Բիտոլա (Մոնաստիր) քաղաքը: Սերբիան և Չեռնոգորիան իրար մեջ են բաժանում թուրքական տիրապետությունից ազատագրած տարածքները, Նովի-Բազարի սանջակը՝ դառնալով սահմանակից երկրներ:

Հունաստանը ստանում է Հարավային Մակեդոնիան՝ Սերես ու Դրամա քաղաքներով և Էգեյան ծովի Թեսալոնիկե ու Կավալա նավահանգիստներով, Արևմտյան Թրակիան՝ մինչև Նեստոս (Մեստա) գետը, Հարավային Էպիրոսը՝ Յանինա քաղաքով, և միջերկրածովյան Կրետե կղզին:

Ստրումիցա քաղաքով Բուլղարիային է մնում Հյուսիսային Մակեդոնիայի մի փոքր մասը, Նեստոս (Մեստա) և Մարիցա (Էվրոս) գետերի միջև գտնվող Արևմտյան Թրակիայի տարածքը՝ Էգեյան ծովի Պորտո-Լագոս և Դեդեաղաջ (Ալեքսանդրապոլիս) նավահանգիստներով: Նեստոս (Մեստա) գետը դառնում է Հունաստանի, իսկ Մարիցա (Էվրոս) գետը՝ Թուրքիայի հետ Բուլղարիայի բնական սահմանը[433]: Այդպիսով՝ իր պատմության մեջ առաջին անգամը լինելով՝ Նեստոս (Մեստա) և Մարիցա (Էվրոս) գետերի միջև գտնվող տարածքով՝ Պորտո-Լագոս և Դեդեաղաջ (Ալեքսանդրապոլիս) նավահանգիստներով, Բուլղարիան ուղղակիորեն դուրս էր գալիս դեպի Էգեյան ծով:

Հունական պատմագրության համաձայն՝ Բուխարեստի հաշտության պայմանագրով Հունաստանին է անցնում պատմական Մակեդոնիայի 51,57%-ը, Սերբիային՝ 38,32%-ը, իսկ Բուլղարիային՝ 10,11%-ը:

---

[433] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., N 366. Мирный договор между Румынией, Грецией, Черногорией и Сербией, с одной стороны, и Болгарией, с другой стороны, заключенный в Бухаресте 28 июля (10 августа) 1913 года, с. 372:

Երկու Բալկանյան պատերազմների արդյունքում կատարված սահմանային փոփոխությունների հետևանքով Սերբիայի տարածքն ընդլայնվում է՝ 48.3 հազ. քառ. կիլոմետրից հասնելով 87.3 հազ. քառ. կիլոմետրի, իսկ բնակչությունը՝ 2.912 հազարից 4.444 հազարի: Չեռնոգորիայի տարածքը 9 հազ. քառ. կիլոմետրից հասնում է 14.2 հազ. քառ. կիլոմետրի, իսկ բնակչությունը՝ 285 հազարից 435 հազարի: Հունաստանի տարածքը գրեթե կրկնապատկվում է՝ 64 հազ. քառ. կիլոմետրից հասնելով 120 հազարի, իսկ բնակչությունը՝ 2 միլիոն 800 հազարից մինչև 5 միլիոնի: Բուլղարիայի տարածքն ընդլայնվում է՝ 96.345 կիլոմետրից հասնելով 112 հազար կիլոմետրի: Իր սահմաններն ընդլայնած Ռումինիայի տարածքը հասնում է 138 հազար քառակուսի կիլոմետրի, իսկ բնակչությունը՝ 7.5 միլիոնի:

Բալկաններում կատարված տարածքային փոփոխությունների հետևանքով բալկանյան բոլոր պետությունները դառնում են սահմանակից երկրներ: Դա նշանակում էր, որ Բալկանյան թերակղզում թուրքական տիրապետությունը տապալած բալկանյան երկրներն արդեն տարածքային պատնեշ էին ստեղծում դեպի Մերձավոր և Միջին Արևելք ձգտող ավստրիական ռազմաքաղաքական և տնտեսական էքսպանսիայի դեմ: Դա Անտանտի երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական հաղթական պատասխանն էր 1908-1909 թթ. Բոսնիական ճգնաժամին:

Երկրորդ բալկանյան պատերազմը ռազմաքաղաքական ուժերի նոր հարաբերակցություն է ստեղծում Բալկանյան թերակղզու պետություններում: Անտանտի տերությունների քաղաքական ազդեցության տակ գտնվող միասնական նախկին Բալկանյան դաշինքը տարածքային սուր տարաձայնությունների հետևանքով քայքայվում է: Հունաստանը, Սերբիան և Ռումինիան, բավարարվելով Երկրորդ բալկանյան պատերազմի ռազմաքաղաքական հետևանքներով ձեռքբերված արդյունքներով, պարտավորվում են փոխադարձաբար երաշխավորել 1910 թ. օգոստոսի 10-ի Բուխարեստի հաշտու-

թյան պայմանագրի պայմանները: Երկրորդ բալկանյան պատերազմում ջախջախիչ պարտություն կրած Բուլղարիան, փոխվրեժի և իր տարածքային պահանջները իրականացնելու համար արտաքին քաղաքականության բնագավառում կողմնորոշվում է դեպի Եռյակ դաշինքը՝ բանակցություններ սկսելով Թուրքիայի հետ[434]: Նման իրադրության պայմաններում 1914 թ. հունիսի 24-ին Գերմանիային հղած հուշագրով Ավստրո-Հունգարիան առաջարկում էր նպաստել Բուլղարիայի և Թուրքիայի մերձեցմանը՝ այդպիսով ստեղծելով Բալկանյան նոր դաշինք՝ Սերբիային մեկուսացնելու և Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում նվազեցնելու համար[435]:

Ալբանական պետության ստեղծումը

Առաջին բալկանյան պատերազմի ռազմաքաղաքական հետևանքներից մեկը 1912 թ. նոյեմբերի 28-ին ալբանական Ազգային կոնգրեսի կողմից Ալբանիայի անկախության հռչակումն էր:

Բալկանյան դաշնակիցների և Թուրքիայի միջև տեղի ունեցող պատերազմի հաշտության պայմանները մշակելու նպատակով Լոնդոնում հրավիրված Մեծ տերությունների դեսպանաժողովը, հաշվի առնելով Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի քաղաքական և տնտեսական շահերը, իր առաջին իսկ նիստում՝ 1912 թ. դեկտեմբերի 17-ին, ընդունում է որոշում՝ վեց տերությունների երաշխավորության ներքո ինքնավար Ալբանական պետություն ստեղծելու մասին: Առաջին բալկանյան պատերազմի արդյունքներն ամփոփող 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրով բալկանյան հաղթանակած դաշնակիցները և պարտված Թուրքիան ճանաչում են վեց տերությունների կողմից որոշված Ալբանիայի անկախությունը:

Երկրորդ բալկանյան պատերազմի ընթացքում՝ 1913 թ. հուլիսի 29-ին, վեց տերությունների դեսպանները Լոնդոնի կոնֆերանսում

[434] История дипломатии, т. II, с. 758-759.
[435] Տե՛ս Renouvin Pierre, նշվ. աշխ., էջ 182:

ընդունում են Ալբանական պետության կազմակերպական Կանոնադրությունը, որի համաձայն՝ այդ տերությունների երաշխավորության ներքո Ալբանիան հռչակվում էր ինքնավար, սուվերեն և ժառանգական, չեզոք իշխանապետություն, որի իշխանը վեց ամսվա ընթացքում պետք է նշանակվեր վեց տերությունների կողմից: Ալբանիայի նկատմամբ Թուրքիայի սյուզերենության որևէ դրսևորում բացառվում էր: Ալբանիայի քաղաքացիական կառավարման և ֆինանսների վերահսկողությունը հանձնարարվում էր Ալբանիայի և վեց տերությունների մեկական պատվիրակներից բաղկացած Միջազգային հանձնաժողովին: Ալբանիայի հասարակական անվտանգությունը և ներքին կարգը պետք է ապահովվեր շվեդական բանակի սպաների ղեկավարությամբ ստեղծված միջազգային ժանդարմերիայի միջոցով: Մինչև իշխանի նշանակումը և ազգային կառավարության կազմակերպումը՝ Ալբանիայի տեղական իշխանությունները և ժանդարմերիան պետք է վերահսկվեին Միջազգային հանձնաժողովի կողմից[436]:

Միջազգային սահմանային հանձնաժաղովի 1913 թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ՝ Ալբանիայի հարավային տարածքի մեջ են ընդգրկվում հունական բանակի կողմից Առաջին բալկանյան պատերազմում թուրքական տիրապետությունից ազատագրված պատմական Էպիրոսի հյուսիսային շրջանների Կորիցա (Կորչա), Արգիրոկաստրո (Գիրոկաստրա), Դելվինա, Լեսկովիկու, Մոսխոպոլիս, Պոգոնիս քաղաքները և Ադրիատիկ ծովի Խիմարա նավահանգիստը: Հունական պատմագրության համաձայն՝ Միջազգային սահմանային հանձնաժողովի 1913 թ. դեկտեմբերի 17-ի որոշման հետևանքով Հյուսիսային Էպիրոսը՝ իր 120 հազար հույն բնակչությամբ, երեք միտրոպոլիտություններով, 376 եկեղեցիներով, 360 դպրոցներով և 22 հազար աշակերտներով, միացվում է Ալբանիային: Հետա-

[436] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., N 364. Органический статут Албанского государства, принятый на конференции послов в Лондоне 29 июля 1913 года, с. 369:

գայում 1928 թ. նոյեմբերի 6-ին Ալբանիայի հետ կնքած համաձայնությամբ Հունաստանը հրաժարվում է Հյուսիսային Էպիրոսի նկատմամբ իր տարածքային պահանջներից:

Կ.Պոլսի բուլղարա-թուրքական 1913 թ. հաշտության պայմանագիրը

1913 թ. սեպտեմբերի 29-ին Կ.Պոլսում Բուլղարիայի և Թուրքիայի միջև կնքվում է Երկրորդ բալկանյան պատերազմին Թուրքիայի անմիջական մասնակցության հետևանքներն ամրագրող հաշտության պայմանագիրը: Դրա համաձայն՝ 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրով հաստատված Սև ծովի Միդիա և Էգեյան ծովի Էնոս նավահանգիստների միջև ձգվող Թուրքիայի ուղղագիծ սահմանը Բալկաններում վերացվում էր: Ադրիանապոլիս (Էդիրնե) քաղաքով հանդերձ՝ Թուրքիան ստանում էր Երկրորդ բալկանյան պատերազմում վերագրաված Արևելյան Թրակիան, և թուրք-բուլղարական սահմանն էր դառնում Մարիցա (Մերիչ) գետը: Այդպիսով՝ Առաջին բալկանյան պատերազմի հետևանքով դուրս շպրտված լինելով Բալկանյան թերակղզուց և Բալկաններում սահմանափակվելով Էնոս-Միդիա ուղղագիծ սահմանից դեպի արևելք գտնվող սոսկ մի փոքրիկ տարածքով, օգտվելով Բալկանյան դաշնակիցների միջև առկա տարածքային անհաշտելի տարաձայնությունների հետևանքով առաջացած Երկրորդ բալկանյան պատերազմից՝ երիտթուրքերը, վերագրավելով ամբողջ Արևելյան Թրակիան, Թուրքիային վերադարձնում են Բալկանյան թերակղզին:

Բուլղարա-թուրքական հաշտության պայմանագրով համաձայնություն էր կայացվում դիվանագիտական հարաբերությունների, փոստ-հեռագրային և երկաթուղագծային հաղորդակցության վերականգնման, գերիների փոխանակման պայմանների վերաբերյալ: Բուլղարիային անցած Օսմանյան կայսրության նախկին տարածք-

ների տեղաբնիկ մուսուլմանները դառնում էին բուլղարահպատակներ, որոնք չորս տարվա ընթացքում տեղական բուլղարական իշխանություններին դիմած սովորական հայտարարության և օսմանյան հյուպատոսարաններում գրանցվելու միջոցով կարող էին ստանալ օսմանյան քաղաքացիություն: Բուլղարիային անցած տարածքների բուլղարահպատակ մուսուլմանները չորս տարով ազատվում էին ռազմական ծառայությունից և ռազմական հարկերից: Օսմանյան քաղաքացիություն ընդունած մուսուլմանները չորս տարվա ընթացքում կարող էին առանց մաքսատուրքի իրենց շարժական գույքը ազատորեն դուրս բերել Բուլղարիայից, իսկ անշարժ սեփականությունը տեղում տնօրինել երրորդ անձանց միջոցով: Բուլղարահպատակություն ընդունած մուսուլմանները պետք է օժտվեին բուլղարական ծագման հպատակներին համահավասար քաղաքացիական և քաղաքական իրավունքներով, ինչպես նաև օգտվեին խղճի, դավանանքի, կրոնական ծեսերի ու ծիսակատարությունների ազատություններով: Սուլթանի՝ որպես մուսուլմանական աշխարհի հոգևոր պետի՝ խալիֆի անունը պետք է հիշատակվեր մուսուլմանների հասարակական աղոթքներում:

Սուլթանի, ինչպես նաև կայսերական ընտանիքի մասնավոր սեփականությունը պահպանվում էր: Այն կարող էին վաճառել կամ վստահված անձանց միջոցով վարձակալության հանձնել: Բուլղարական համայնքները Թուրքիայում պետք է օժտվեին Օսմանյան կայսրության քրիստոնյա համայնքներին շնորհված իրավունքներով: Պայմանավորվող յուրաքանչյուր պետության քաղաքացիները, ինչպես նախկինում, կարող էին երկու երկրներում ապրել և ազատորեն տեղաշարժվել: Բոլոր պարտավորություններով հանդերձ՝ բուլղարական պետութան սեփականությունն էր դառնում նրա տարածքով անցնող Արևելյան երկաթուղագծային ընկերությանը պատկանող հատվածը: Համաձայնություն էր կայացվում սահմանային Մարիցա (Մերիչ) գետով նավագնացության կազմակերպման, ինչպես նաև բուլղարական Մուստաֆափաշա (Սվիլեն, Սվիլենգրադ)

կայարանից դեպի Ադրիանապոլիս (Էդիրնե) և այնուհետև Բուլղարիայի տարածքով՝ Մարիցա գետի աջ ափով դեպի Էգեյան ծովի բուլղարական Դեդեաղաջ (Ալեքսանդրապոլիս) նավահանգիստը տանող երկաթգծի շահագործման պայմանների վերաբերյալ և այլն[437]:

Ամփոփելով Բուլղարիայի սանձազերծած Երկրորդ բալկանյան պատերազմի ռազմաքաղաքական հետևանքները, ըստ որոնց՝ Բուլղարիայի մարդկային կորուստները կազմել էին 55 հազար սպանված, 150 հազար ծանր վիրավոր, 2 միլիարդ բուլղարական լևի տնտեսական վնաս և Բալկաններում ի վնաս Բուլղարիայի ստեղծված աշխարհաքաղաքական փոփոխությունների միանգամայն անբնպաստ պայմանները՝ Ադրիանապոլիս (Էդիրնե) քաղաքով Արևելյան Թրակիայի կորուստը, խորհրդային պաշտոնական պատմագրությունը եզրակացնում է. «Այդպիսին էին Ֆերդինանտ թագավորի գլխավորությամբ Բուլղարիան կառավարող ազգայնական հանցախմբի արկածախնդրական քաղաքականության հետևանքները»[438]:

Աթենքի 1913 թ. թուրք-հունական հաշտության պայմանագիրը

Երկրորդ բալկանյան պատերազմից հետո՝ 1913 թ. նոյեմբերի 14-ին, Աթենքում կնքվում է թուրք-հունական հաշտության պայմանագիրը, և նույն օրն իսկ վերականգնվում են Առաջին բալկանյան պատերազմի հետևանքով երկու երկրների միջև խզված դիվանագիտական հարաբերությունները, նախկին պայմանագրերն ու համաձայնությունները: Բալկանյան պատերազմների հետևանքով Հունաստանին անցած տարածքների մուսուլման բնակիչները ստանում են հունահպատակություն: Հունական կառավարությունը պարտա-

[437] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., N 367. Болгаро-турецкий мирный договор, заключенный в Константинополе 16/29 сентября 1913 года, с. 373-375:
[438] История Болгарии, т. I, с. 498.

վորվում էր հարգել նրանց սեփականատիրական իրավունքները, սովորույթները, հավատը, կրոնական արարողություններն ու ծեսերը, ինչպես նաև անձեռնմխելի թողնել մուսուլմանական համայնքների ինքնավարությունն ու աստիճանակարգային կառուցվածքը, ճանաչել նրանց պատկանող շարժական ու անշարժ սեփականության իրավունքները, վակուֆները (մուսուլմանական հոգևոր հաստատությունների հողատարածքները): Մուսուլման բնակիչները ստանում են երեք տարվա ընթացքում Հունաստանի սահմանները թողնելու և օսմանահպատակ դառնալու իրավունք՝ շարունակելով մնալ այդտեղ թողած անշարժ սեփականության տերերը: Հունական կառավարությունը ճանաչում էր Հունաստանի տարածքում գտնվող սուլթանի ու կայսերական տան անդամների անշարժ սեփականության իրավունքները:

Հունական կառավարությանն էին փոխանցվում Հունաստանին անցած տարածքներում երկաթուղագծերի վերաբերյալ թուրքական կառավարության ունեցած իրավունքներն ու այդ երկաթուղագծերը շահագործող ընկերությունների նկատմամբ ստանձնած պարտավորությունները[439]: Այդպիսով՝ Աթենքի հաշտության թուրք-հունական պայմանագիրը կարգավորում էր Բալկանյան պատերազմների հետևանքով առաջացած թուրք-հունական հարաբերությունների մի շարք կարևոր հարցեր: Ամենահիմնականը, սակայն, այն էր, որ Աթենքի թուրք-հունական հաշտության պայմանագրով վավերացվում էին Հունաստանի տարածքային ձեռքբերումները Բալկանյան թերակղզում: Սակայն երկու պետությունների համար էլ հաշտության պայմանագիրն ուներ խոցելի կողմ. դա Էգեյան ծովի կղզիների պատկանելության անորոշությունն էր: Չկարողանալով հասնել վերջնական համաձայնության՝ երկու կողմերը հանգում են կղզիների պատկանելության հարցը տերությունների վճռին ներկայացնելու

[439] Տե՛ս Strupp St., La situation internationale de la Grèce (1821-1917), NCI, Zurich, 1918:

պայմանը[440]:

Թուրք-հունական Աթենքի հաշտության պայմանագիրը Կ. Պոլսում ընդունվում է դժգոհությամբ: Երիտթուրքական կառավարող շրջանների դժգոհությունը հիմնականում բխում էր Էգեյան ծովի կղզիների պատկանելության հետագա ճակատագրի անորոշությունից: «Կղզիների հարցը դեռևս չի լուծվել, իսկ այն մեզ համար հանդիսանում է հիմնական կենսական հարց,- գրում էր «Իկդամ» թերթը,- ուստի, կնքված հաշտությանը հակառակ, երկու երկրների հարաբերությունները չեն կարող անմիջապես մտնել բնական հունի մեջ: Բալկանյան թերակղզում կայուն խաղաղություն կարող է հաստատվել կղզիների հարցի վերջնական լուծման դեպքում, իսկ այդ հարցը պետք է լուծվի այնպես, որպեսզի երաշխավորվեն Օսմանյան կայսրության իրավունքները և կենսական շահերը»,- շեշտում էր թերթը[441]:

Էգեյան ծովի կղզիների պատկանելության շուրջ առաջացած թուրք-հունական հարաբերությունների լարվածության ընթացքում Օսմանյան կայսրությունը կառավարող երիտթուրքերը շիկացնում էին պատերազմական մթնոլորտը՝ փոխվրեժի տրամադրություններ բորբոքելով մասնավորապես Հունաստանի դեմ: Պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը մայիսի 19-ին պառլամենտում կոչ է անում վերագրավել այն բոլոր տարածքները, որոնք Բալկանյան պատերազմների հետևանքով անջատվել էին Թուրքիայից[442]:

Կ.Պոլսում տեղի էին ունենում սպայական խառնաժողովներ, որտեղ երիտթուրքերը բորբոքում էին փոխվրեժի, իմպերիալիստական զավթումների տրամադրություններ: Այդ սպայական խառնաժողովներում ցուցադրվում էր Օսմանյան կայսրության պատմական հսկա քարտեզը, որտեղ սև գույնով նշված էին երկու հարյուր տարիների ընթացքում կայսրության կրած տարածքային կորուստները:

---

[440] Նույն տեղում:
[441] Տե՛ս "С.-Петербургские ведомости", 7 (20), XI, 1913:
[442] Տե՛ս «Ազատամարտ» 7 (20), 5, 1914:

Այդպիսի խառնաժողովները, որոնցում սովորաբար նախագահում էր ռազմական նախարար Էնվերը, ընթանում էին Օսմանյան կայսրության նախկին հզորությունը և տարածքային ամբողջականությունը վերականգնելու, նոր զավթումներ կատարելու նշանաբանով[443]: Թուրքական ազգայնական, շովինիստական գաղափարախոսությունների (թյուրքիզմ, պանթյուրքիզմ, պանթուրանիզմ, պանիսլամիզմ), իմպերիալիստական զավթումների մոլեռանդ քարոզչությամբ էին զբաղված այսպես կոչված «Թյուրքական օջախները»՝ «Թյուրք դերնեյի», «Թյուրք յուրդու» և պաշտոնական այլ ակումբները, որոնք անմիջականորեն ղեկավարվում և ֆինանսավորվում էին երիտթուրքական կառավարության կողմից:

Էգեյան ծովի կղզիներում թուրքական տիրապետությունը պատերազմի սպառնալիքով վերականգնելու երիտթուրքերի քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դառնում է թուրք-հունական հարաբերությունների ծայրահեղ լարվածության հիմնական պատճառներից մեկը:

1914 թ. օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական դաշինքը

Թուրք-հունական ծայրահեղորեն սրված հարաբերությունների ընթացքում Եվրոպայում անսպասելիորեն բռնկված 1914 թ. հուլիսյան միջազգային ճգնաժամը մեծ հույսեր է ներշնչում երիտթուրքերին, ովքեր համոզված էին, որ Բալկաններում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները լայն հեռանկարներ կբացեն իրենց զավթողական ծրագրերի իրականացման համար: «Ստեղծված լուրջ իրադրությունը թելադրում էր Թուրքիային հմտորեն հարմարվել իրավիճակին՝ ըստ հնարավորին լավագույն ձևով օգտվելու եվրոպական պայթյունից»,- երիտթուրքական դիվանագիտության հիմնական խնդրի մասին գրել է Բեռլինում Օսմանյան կայսրության

[443] Տե՛ս Capitaine H. Seignobosc, Turcs et Turquie, Paris, 1920, p. 41:

դեսպան, գեներալ Մահմուդ Մուխթար փաշան[444]: Երիտթուրքական կուսակցության կառավարող վերնախավի գերմանական կողմնորոշման ջատագովները գերադասում էին դաշինքը Կենտրոնական տերությունների խմբավորման հետ, որի ռազմական հզորության միջոցով հույս ունեին իրականացնել իրենց զավթողական ծրագրերը և ամրապնդել իրենց անկայուն վիճակը երկրի ներսում: «Երիտթուրքերը համոզված են,- հուլիսի 22-ին Բեռլին ուղարկած իր հեռագրում հաղորդում էր Կ.Պոլսում Գերմանական կայսրության դեսպան Վանգենհայմը,- որ ռազմական առումով Եռյակ դաշինքն ավելի հզոր է, քան Անտանտը, և որ պատերազմի դեպքում Եռյակ դաշինքի հաղթանակը ապահովված է»[445]:

Ռազմական դաշինքը Գերմանիայի հետ երիտթուրքերին անհրաժեշտ էր նախ և առաջ Ռուսաստանը կործանելու և իրենց պանթուրքական ծրագրերը իրականացնելու համար: Թուրքական պատմագրությունը շեշտում է, որ երիտթուրքերի կառավարող վերնախավի քաղաքական երազանքը Արևելքում պանթուրքական լայնարձակ կայսրության ստեղծումն էր: Երիտթուրքերի համոզմամբ, նշում է թուրքական պատմագրությունը, այդ պանթուրքական լայնածավալ կայսրությունը Արևելքում կարող էր ստեղծվել միայն Գերմանիայի հետ ռազմական դաշնակցության միջոցով, քանի որ Գերմանիան իր ռազմաքաղաքական և տնտեսական գերիշխանությունը Արևելքում հաստատելու համար խրախուսում էր պանթուրքական կայսրություն ստեղծելու երիտթուրքական կուսակցության գաղափարախոսությանը[446]: Արևելքում պանթուրքական լայնարձակ կայսրություն ստեղծելու երիտթուրքական կուսակցության գաղափարախոսության պաշտպանությամբ էին հանդես գալիս նաև գերմանական արևելագիտության բնագավառի ներկայացուցիչները,

[444] Général M. Moukhtar Pacha, նշվ. աշխ., էջ 256:
[445] Տե՛ս Frangulis A.F., La Grèce et la crise mondiale, t.1. Paris, 1926, p. 116:
[446] Տե՛ս Ilber Ortayli, նշվ. աշխ., էջ 201:

նշում է թուրքական պատմագրությունը[447]:

Թուրքական պատմագրությունը վկայակոչում է այն փաստը, որի համաձայն՝ դեռևս վտարանդիության ժամանակ Գերմանիայում ապաստանած երիտթուրքերը հայտարարում էին Օսմանյան կայսրությունում իշխանության գալուց հետո Գերմանիայի հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրության մասին: Ինչպես նշում է թուրքական պատմագրությունը, «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պաշտոնական «Օսմանլը» թերթի գերմաներեն թարգմանությամբ հրատարակած 1900 թ. հունվարի 1-ի առաջին համարում երիտթուրքերը շեշտում էին. «Ապագայում Օսմանյան կայսրությունը կառավարող մեր կուսակցությունը այս պաշտոնաթերթի շնորհիվ հարաբերություններ է հաստատելու անվեհեր և վեհանձն գերմանացի ժողովրդի հետ»[448]: Այդպիսով՝ Գերմանիայում դեռևս վտարանդիության մեջ գտնվող երիտթուրքական «Միություն և Առաջադիմություն» կուսակցությունը վստահ համոզմունքով հայտարարում էր ապագայում Օսմանյան կայսրությունը կառավարող կուսակցություն դառնալու և Գերմանիայի հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու իր մտադրության մասին:

Այնուամենայնիվ, նշվում է թուրքական պատմագրության մեջ, երիտթուրքական կառավարող շրջաններում կային թուրք-գերմանական ռազմաքաղաքական համագործակցության հակառակորդներ, որոնք, սակայն, ի վիճակի չէին խանգարելու Թուրքիային Գերմանիայի հետ դաշնակցության մղող անխուսափելի զարգացումները [449]: Ըստ թուրքական պատմագրության՝ գերմանական բանակի Գլխավոր շտաբի մշակած պատերազմի ռազմական պլանի համաձայն՝ Օսմանյան կայսրության զինված ուժերը, Կովկասյան տարածաշրջանից Իրանի տարածքով հասնելով թուրքերի իրական հայ-

[447] Նույն տեղում, էջ 197:
[448] Նույն տեղում, էջ 194-195:
[449] Նույն տեղում, էջ 198-199:

րենիքը հանդիսացող Թուրան՝ այդտեղից Ռուսաստանին պետք է հարվածեին նրա ամենախոցելի տեղից[450]: Գերմանիայի ռազմական դաշնակցությամբ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու հիմնական նպատակը, շեշտում է թուրքական պատմագրությունը, Կենտրոնական Ասիայի թյուրքական երկրները Թուրքիայի գլխավորությամբ մեկ միասնական՝ պանթուրքական կայսրության մեջ միավորելու կարևոր խնդիրն էր[451]: Գերմանիայի հետ ռազմական դաշինքը երիտթուրքերին անհրաժեշտ էր նաև Բալկաններում իրենց զավթողական նպատակները իրականացնելու, Էգեյան ծովի կղզիները վերանվաճելու համար:

Հուլիսյան ճգնաժամի հետևանքով Եվրոպայում ծավալվող քաղաքական իրադարձությունները անխուսափելիորեն հանգեցնելու էին եվրոպական երկու խմբավորումների՝ Եռյակ դաշինքի և Անտանտի ռազմական բախմանը: Քաղաքական իրադարձությունների ծավալման այդպիսի հեռանկարը ստիպում էր Գերմանական խմբավորմանը շուտափույթ կերպով Թուրքիային ներքաշել Եռյակ դաշինքի ռազմաքաղաքական ոլորտը, որին անհամբերությամբ ձգտում էր երիտթուրքական կառավարող կուսակցության մեծամասնությունը:

Հասունացող ապագա պատերազմում Թուրքիային Եռյակ դաշինքի ռազմաքաղաքական ոլորտը ներգրավելու խնդիրը գերմանական դիվանագիտության համար ստացել էր խիստ հրատապ ու կարևորագույն նշանակություն: 1914 թ. հուլիսի 5-ին կայզեր Վիլհելմ 2-րդի նախագահությամբ Պոտսդամում կայացած խորհրդակցության ժամանակ, ի թիվս հրատապ ռազմաքաղաքական այլ հարցերի, քննարկվում է նաև ապագա պատերազմում Թուրքիայի՝ որպես Գերմանիայի հավանական դաշնակցի մասնակցության իրական հնարավորությունը: Խորհրդակցությանը հատկապես կանչված Կ.Պոլսի դեսպան Վանգենհայմին հրահանգվում է ամենայն ճշմար-

[450] Տե՛ս Ali Kemal Meram, Türk-Rus ilişkileri tarihi, İstanbul, 1969, s. 207:
[451] Տե՛ս Tarih, s. 251, 324:

տացիությամբ ու հանգամանորեն զեկուցել Թուրքիայի ընդհանուր կացության մասին[452]:

Միաժամանակ, դեպի Գերմանիան քաղաքականապես կողմնորոշված երիտթուրքերը տենդորեն շտապում էին: Հուլիսի 22-ին Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշան անմիջականորեն դիմում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմին՝ Եռյակ դաշինքին Թուրքիայի միանալու բացահայտ առաջարկությամբ: Հաջորդ օրը՝ հուլիսի 23-ին, Օսմանյան կայսրության մեծ վեզիր և արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշան նույն առաջարկությունը պաշտոնապես ներկայացնում է Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինիին՝ շեշտելով, որ Թուրքիան Եռյակ դաշինքի օգնությունն է խնդրում միայն ու միայն Ռուսաստանի դեմ[453]: Պատասխանը Բեռլինից չի ուշանում: Հուլիսի 24-ին կայզեր Վիլհելմ 2-րդի անմիջական հրահանգով Վանգենհայմը երիտթուրքական կուսակցության պարագլուխներին հայտարարում է գերմանա-թուրքական ռազմական դաշինք կնքելու գերմանական կառավարության պատրաստակամության մասին[454]: Սակայն կայզերական կառավարությունը, որպես ռազմական դաշինքի անհրաժեշտ ու կարևորագույն պայման, պահանջում էր, որպեսզի Ռուսաստանի դեմ մղվելիք պատերազմում թուրքական բանակի բարձրագույն ղեկավարությունը և հինգ բանակային կորպուսների հրամանատարությունը անպայմանորեն հանձնվեր գերմանական ռազմական միսիայի սպաներին: Վանգենհայմը, որ այդ պահանջի հեղինակն էր, Բեռլին ուղարկած իր զեկուցագրում նշում էր նաև այն կարևոր հանգամանքը, որ թուրքական բանակում գերմանական ռազմական միսիայի գերիշխող դերը Թուրքիային կստիպի պատերազմի դեպքում անշեղորեն կատարելու ռազմական դաշինքի պայ-

[452] Տե՛ս Morgenthau H., Mémoirs. Paris, 1919, p. 81:
[453] Տե՛ս Bompard M., L'entrée en guerre de la Turquie. "Revue de Paris", N 13, 1-er juillet. Paris, 1921, p. 81-83:
[454] Տե՛ս Général M. Moukhtar Pacha, նշվ. աշխ., էջ 251:

մանագրով ստանձնած իր պարտավորությունները[455]:

Հուլիսի 27-ին Կ.Պոլսում պաշտոնապես սկսվում են գերմանա-թուրքական ռազմական դաշինքի կնքման խիստ գաղտնի բանակցությունները:

Հուլիսի 28-ին Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան սուլթան Մեհմեդ Ռեշադի անունից Վանգենհայմին է ներկայացնում Ռուսաստանի դեմ գաղտնի ռազմական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկությունը, որի պայմանները մշակել էին ռազմական նախարար Էնվերը և Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի ղեկավար, գեներալ Լիման ֆոն Սանդերսը: Սուլթանական կառավարությունը պարտավորվում էր պատերազմի հռչակման առաջին օրն իսկ գերմանական ռազմական միսիային հանձնել թուրքական բանակի բարձրագույն ղեկավարությունը և թուրքական բանակի քառորդ մասը կազմող զորամասերի փաստական հրամանատարությունը: Թուրքիան Գերմանիայից չէր պահանջում ո՛չ ռազմական և ո՛չ էլ ֆինանսական օգնություն: Չէր ժխտվում նաև պատերազմը անջատ հաշտությամբ ավարտելու հնարավորությունը: Այդ պայմանագիրը ուժի մեջ պետք է մտներ Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելու կամ Եռյակ դաշինքի տերությունների, ինչպես նաև Թուրքիայի դեմ Ռուսաստանի հանդես գալու դեպքում[456]:

Գերմանա-թուրքական դաշինքի բանակցություններն ընթանում էին Եվրոպայի միջազգային հարաբերությունների խիստ լարված մթնոլորտի պայմաններում: Հուլիսի 28-ին Եռյակ դաշինքի անդամ Ավստրո-Հունգարիան ռազմական գործողություններ է սկսում Սերբիայի դեմ: Հուլիսի 31-ին Ռուսաստանում հայտարարվում է ընդհանուր զորակոչ, իսկ օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին:

Երիտթուրքական կուսակցության գերմանական կողմնորոշ-

[455] Տե՛ս Bompard M., նշվ. աշխ., էջ 83:
[456] Նույն տեղում, էջ 83-84:

ման ռազմական թևի պարագլուխները ցնծության մեջ էին: Նրանք լիովին պատկերացնում էին այն դերը, որ սկսված համաշխարհային պատերազմում պետք է խաղար Թուրքիան: «Այդ շրջանում մենք լիովին ըմբռնում էինք մեզ հետ դաշինք կնքելու Գերմանիայի դրդապատճառները»,- հետագայում հայտարարում է թուրք-գերմանական ռազմաքաղաքական համագործակցության մոլեռանդ կողմնակից, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալաաթը[457]:

Ռազմական դաշինքը Գերմանիայի հետ երիտթուրքերին նախ և առաջ անհրաժեշտ էր Ռուսաստանի դեմ զավթողական պատերազմ սկսելու համար: Այդ էր պատճառը, որ ռազմական դաշինքը Գերմանիայի հետ դեռևս պաշտոնապես չստորագրած թուրքական կառավարությունը տենդորեն սկսում է պատերազմի մեջ մտնելու ռազմական պատրաստությունները և դաշինքի կնքման նախօրյակին հայտարարում է ընդհանուր զորակոչ հռչակելու մտադրության մասին: Նման պայմաններում բանակցող երկու կողմերի համար էլ չկային որևէ խանգարիչ հանգամանքներ ագրեսիվ քաղաքականության նպատակները իրականացնելու ուղղությամբ: Ուստի, Թալաաթի վկայությամբ, Գերմանիան և Թուրքիան հեշտությամբ համաձայնվում են ռազմական դաշինքի նախագիծը մշակելու և այն ստորագրելու գործում:

Ի վերջո, գերմանա-թուրքական բանակցությունների արդյունքում օգոստոսի 2-ին Կ.Պոլսում Գերմանական կայսրության դեսպան Վանգենհայմը և Օսմանյան կայսրության մեծ վեզիր և արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշան ռազմական գործերի նախարար Էնվերի և ներքին գործերի նախարար Թալաաթի ներկայությամբ ստորագրում են Ռուսաստանի դեմ ուղղված գերմանա-թուրքական խիստ գաղտնի ռազմական դաշինքը[458], որին նախա-

[457] Տե՛ս Général M. Moukhtar Pacha, նշվ. աշխ., էջ 251:
[458] Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., մաս II. М., 1926:

պես տեղյակ չէին ոչ միայն երիտթուրքական կառավարության մնացյալ անդամները, Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպան Մահմուդ Մուխտար փաշան, այլև Էնվերի ու Թալաաթի հետ կայսրությունը փաստորեն կառավարող «եռապետության» անդամ, ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան: Հետագայում գերմանա-թուրքական գաղտնի ռազմական դաշինքը Թուրքիայի համար նա անվերապահորեն գնահատում է որպես «մեծագույն պետական կարևորություն ներկայացնող իրողություն»[459]:

Գերմանա-թուրքական ռազմական դաշինքի պայմանագիրը ուժի մեջ է մտնում նույն օրն իսկ՝ օգոստոսի 2-ին, նրա կնքումից անմիջապես հետո: Հաջորդ օրն այդ ագրեսիվ պայմանագրին է միանում Եռյակ դաշինքի անդամ Ավստրո-հունգարական կայսրությունը: Այդպիսով՝ ձևավորվում է երկու տերությունների ռազմաքաղաքական դաշինքը, որի հետևանքով Օսմանյան կայսրությունը դառնում է ագրեսիվ իմպերիալիստական Եռյակ դաշինքի գործուն անդամը, նրա հարվածային ուժը Մերձավոր և Միջին Արևելքում:

Այդ դաշինքը լիովին արտահայտում էր երկու տերությունների իմպերիալիստական, զավթողական ծրագրերն ու ձգտումները, նրանց քաղաքական շահերի միասնությունն ու համերաշխությունը: «Առաջին Համաշխարհային պատերազմում,- գրել է Բեռլինում թուրքական դեսպան Մահմուդ Մուխտար փաշան,- դաշինքը Օսմանյան կայսրության հետ պանգերմանացիների նկրտումների առջև բաց էր անում համաշխարհային գերիշխանության գայթակղեցուցիչ հորիզոններ: Ամբողջ երկրագնդով մեկ տարածված հարյուր միլիոնավոր մահմեդականների բարոյական ու նյութական օգնությունը Գերմանիայի համար ակնհայտորեն կարող էր դառնալ նշանակալի ծանրակշիռ ուժ ռազմական ու քաղաքական հաշվե-

---

N 4. Секретное германо-турецкое соглашение о союзе, заключенное в К. поле 2 августа 1914 года, с. 8-9.

[459]Джемаль паша, նշվ. աշխ., էջ 91:

կշռում»[460]: Մյուս կողմից՝ ռազմամոլ Գերմանիայի ու նրա դաշնակիցների ռազմական հզորությունը անհրաժեշտ էր երիտթուրքերին՝ Ռուսաստանը կործանելու և պանթուրքական ցնորական ծրագրերը իրականացնելու համար: Երկու տերությունների քաղաքական շահերի լիակատար համերաշխության պայմաններում երիտթուրքերը կատարալապես համոզված էին, որ «ոչինչ այնքան բնական ու հարմարադեպ չէր, ինչպես թուրք-գերմանական դաշինքը»[461]: Հենց թուրքական պատմագրությունն է շեշտում, որ 1914 թ. օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական դաշինքը կնքվել է գերմանական իմպերիալիզմի ֆինանսական կապիտալի և արկածախնդիր երիտթուրքական բուրժուազիայի քաղաքական ընդհանուր խնդիրները իրականացնելու նպատակով[462]:

Օգոստոսի 4-ին, երբ պատերազմի մեջ է մտնում Անգլիան, և դրանով իսկ Անտանտի տերությունները իրենց գաղութներով, մարդկային ու նյութական հզոր ուժերով ու ահռելի հնարավորություններով, միասնական ճակատով հանդես են գալիս Եռյակ դաշինքի դեմ, երիտթուրքերը որոշում են օգտագործել ստեղծված ռազմաքաղաքական նոր իրադրությունը և քաղաքական բնույթի մի շարք պահանջներ ու պարտավորություններ ներկայացնել իրենց ռազմական դաշնակից Գերմանիային: Օգոստոսի 6-ին Գերմանիան հարկադրված էր ձևականորեն ընդունել գրեթե այն բոլորը, ինչ որ պահանջում էին Օսմանյան կայսրության ղեկավար երիտթուրքական կուսակցության պարագլուխները՝ Էնվերի ու Թալաաթի անմիջական մասնակցությամբ: Ի թիվս այլոց՝ շեշտվում էր Ռուսաստանի հանդեպ Թուրքիայի տարածքային պահանջները բավարարելու Գերմանիայի պատրաստակամությունը: Այսպես. Գերմանիան պարտավորվում էր Օսմանյան կայսրության արևելյան սահմանները ուղղել այնպես, որպեսզի ապահովի Թուրքիայի անմիջական

[460] Général M. Moukhtar Pacha, նշվ. աշխ., էջ 1-2:
[461] Նույն տեղում:
[462] Տե՛ս Rathmann Lothar, նշվ. աշխ., էջ 14-15:

սահմանակցումը Ռուսաստանում բնակվող մուսուլմանական բնակչության հետ:

Հունաստանի վերաբերյալ նշվում էր, որ այդ երկրի պարտության դեպքում Գերմանիան ջանքեր կգործադրի, որպեսզի Էգեյան ծովի կղզիները վերադարձվեն Թուրքիային[463]:

Գերմանա-թուրքական ռազմական դաշինքը պետք է իրականացներ երիտթուրքերի զավթողական՝ պանթուրքական ծրագիրը, որի առաջին զոհն է դառնում հայ ժողովուրդը:Գերմանա-թուրքական համագործակցության կործանարար հետևանքները, որ Առաջին համաշխարհային պատերազմում կրում է հայ ժողովուրդը, շատ լավ գիտակցում էին այդ ժամանակվա գերմանական ռազմական որոշ գործիչներ: Օրինակ, Օսմանյան կայսրությունում 1913-1918 թթ. գերմանական ռազմական միսիայի ղեկավար, գեներալ Լիման ֆոն Սանդերսի անձնական քարտուղար և օգնական Հենրիխ Ֆիրբյուխերը 1930 թ. հրատարակած և ֆաշիստական վարչակարգի կողմից ոչնչացված «Հայաստան 1915. Թուրքիայի կողմից քաղաքակիրթ ժողովրդի ոչնչացումը» գրքում նշում է, որ գերմանական կառավարությունը ճշգրտորեն գիտեր Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին և ավելացնում՝ «գերմանական ռազմական կառավարությունը կիսում է պատասխանատվությունը նաև 1915 թ. ստոր ոճրագործության համար»[464]:

Գերմանա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը, ի վերջո, Առաջին համաշխարհային պատերազմում հանգեցնում է բազմազգ և հսկայածավալ Օսմանյան կայսրության կործանմանը: Հենց թուրքական պատմագրությունն է շեշտում, որ պանթուրքական ցնորական գաղափարախոսության իրականացման նպատակով «հեղաշրջական» մեթոդներով իշխանության

[463] Տե՛ս Ключников Ю. В. и Сабанин А., նշվ. աշխ., մաս II:
N 10. Германо-турецкое соглашение о союзе, заключенное в К.Поле 6 августа 1914 года, с. 17.
[464] Генрих Фирбюхер, Армения.1915. Уничтожение Турцией культурного народа. Ереван, 1991, с. 67, 69.

գլուխ անցած երիտթուրքական «Միություն և Առաջադիմություն» կուսակցության ռազմական թևը կրկին «հեղաշրջական» մեթոդներով 1914 թ. օգոստոսի 2-ին Գերմանիայի հետ ռազմական դաշինք կնքելով՝ Օսմանյան կայսրությանը նետում է Առաջին համաշխարհային պատերազմի հորձանուտը՝ դառնալով բանակ զորակոչված հարյուր հազարավոր թուրք երիտասարդների ոչնչացման և Օսմանյան կայսրության կործանման պատճառը[465]:

Սերբա-թուրքական 1914 թ. հաշտության պայմանագիրը

1914 թ. մարտի 14-ին Կ. Պոլսում կնքված սերբա-թուրքական հաշտությամբ երկու պայմանավորվող կողմերը 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրի՝ իրենց վերաբերող մասը համարում էին վավերացված: Երկու երկրների միջև հռչակվում էր խաղաղություն և բարեկամություն, վերականգնվում էին մինչև պատերազմը միմյանց միջև կնքված բոլոր տեսակի պայմանագրերը, ինչպես նաև դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունները: Սերբիային անցած տարածքների մուսուլման սերբահպատակները օժտվում էին սերբ քաղաքացիներին իրավահավասար քաղաքացիական և քաղաքական, կրոնական արարողությունների, ծեսերի ու ծիսակատարությունների լիակատար ազատության իրավունքներով: Սուլթանի՝ որպես ամբողջ մուսուլմանական աշխարհի հոգևոր պետի՝ խալիֆի անունը պետք է հիշատակվեր մուսուլմանների հասարակական աղոթքներում: Սերբիան ճանաչում էր մուսուլմանական մասնավոր բոլոր դպրոցների, ինչպես նաև Ուսկյուբի (Սկոպլեյի) և Մոնաստիրի (Բիտոլայի) մուսուլմանական արվեստների և արհեստների ուսումնարանների գոյությունը: Սերբիան պարտավորվում էր պահպանել ու հարգել սուլթան Մուրադ 1-ին Հուդավենդիգարի (1362-1389 թթ.) շիրիմը Կոսովոյում: Երկու կող-

[465] Rathmann Lothar, նշվ. աշխ., էջ 13, 15:

մերը փոխադարձաբար պարտավորվում էին հարգել պատերազմում զոհված իրենց զինվորների շիրիմները: Սերբական կառավարությանն էին փոխանցվում Թեսալոնիկե-Մոնաստիրի և Արևելյան երկաթուղագծերի ընկերությունների նկատմամբ թուրքական կառավարության ունեցած նախկին պարտավորությունները:Սերբա-թուրքական հաշտության պայմանագրի որոշ հոդվածներ նույնությամբ կրկնում էին Աթենքի 1913 թ. նոյեմբերի հաշտության պայմանագիրը[466]:

Բալկանյան երկրները 1918-1923 թթ.

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին ակնհայտ էր դառնում Գերմանական խմբավորման պարտությունը, որը հնարավորություն էր ստեղծում բալկանյան երկրների աշխարհաքաղաքական իրավիճակը արմատական փոփոխությունների ենթարկելու համար:

1917 թ. հուլիսի 20-ին Հոնիական ծովի Կորֆու կղզում Սերբիայի կառավարության ղեկավար Նիկոլա Պաշիչը և 1915 թ. մայիսին Լոնդոնում ստեղծված Հարավսլավոնական կոմիտեի նախագահ Անտե Տրումբիչը ստորագրում են համաձայնություն, որը նախատեսում էր Համաշխարհային պատերազմից հետո Սերբիայի և պարտված Ավստրո-Հունգարիայի կազմում գտնվող հարավսլավոնական հողերի՝ սերբական Վոյեվոդինայի, Սլովենիայի, Խորվաթիայի, Դալմաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի միավորումը մեկ ինքնուրույն՝ անկախ պետության մեջ: Այդ համաձայնությունը, որը պատմության մեջ է մտնում «Կորֆուի հայտարարություն» անունով, նախատեսում էր հարավսլավոնական հողերը միավորել 1903 թ.-ից Սերբիայում իշխող Կարագեորգիևիչների արքայատոհմի գլխավորությամբ՝ ստեղծելով Սերբերի, խորվաթների և սլովենների սահ-

[466] Ключников Ю. В. и Сабанин А., նշխ. աշխ., մաս I.N 371. Сербско-турецкий мирный договор, заключенный в К.Поле 1/ 14 марта 1914 года, с. 380-381:

մանադրական միապետությունը: 1917 թ. օգոստոսի 11-ին Կորֆուի հայտարարությանն է միանում 1917 թ. մարտին Փարիզում ստեղծված Չեռնոգորիայի Ազգային միավորման կոմիտեն:

1918 թ. նոյեմբերի 3-ին պարտված Ավստրո-Հունգարիայի կապիտուլյացիայի հետևանքով քաղաքական բարենպաստ պայմաններ են ստեղծվում Կորֆուի հայտարարությունը իրականացնելու համար: Չեռնոգորիայի Ազգային միավորման կոմիտեի կողմից Կորֆուի հայտարարությանը միանալու հետևանքով 1918 թ. նոյեմբերի 26-ին Պոդգորիցայում հրավիրված Չեռնոգորիայի սերբ ժողովրդի Ազգային ժողովը կայացնում է որոշում՝ Չեռնոգորիայի թագավոր Նիկոլա 1-ին Պետրովի Նեգոշին և նրա ամբողջ արքայատոհմին գահազրկելու և Կարագեորգիևիչների արքայատոհմի գլխավորությամբ Սերբիայի հետ մեկ միասնական թագավորության մեջ միավորելու համար[467]: 1918 թ. դեկտեմբերի 1-ին Բելգրադում հռչակվում է Սերբիայի, Չեռնոգորիայի և քայքայված Ավստրո-հունգարական կայսրության հարավսլավոնական մարզերի՝ Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի միավորումը Սերբերի, խորվաթների և սլովենների մեկ միասնական թագավորության մեջ՝ Սերբիայում իշխող Կարագեորգիևիչների արքայատոհմի գլխավորությամբ:

Բալկանյան հիմնախնդիրները 1919-1920 թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսում

1919 թ. հունվարի 18-ից մինչև 1920 թ. հունվարի 21-ը Փարիզում կայացած հաշտության կոնֆերանսում կնքված միջազգային պայմանագրերը լիովին փոխում են նաև Բալկանների աշխարհաքաղաքական քարտեզը՝ ամրագրելով Առաջին համաշխարհային

[467] Ключников Ю.В. и Сабанин А., նշխ. աշխ., մաս II. N 145, Резолюция великого национального собрания сербского народа Черногории о соединении с другими сербскими областями. Подгорица, 26 ноября 1918 года, с. 202-203:

պատերազմի արդյունքում ստեղծված նոր պետությունների անկախությունը և դրանց սահմանները:

Հարավսլավիա
(Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորություն)

1919 թ. սեպտեմբերի 10-ին Փարիզի արվարձան Սեն-Ժերմենում Ավստրիայի հետ կնքված հաշտությամբ բանակցությունների մասնակից բոլոր տերությունները և պետությունները ճանաչում են 1918 թ. դեկտեմբերի 1-ին Բելգրադում հռչակված Սերբերի, խորվաթների և սլովենների դաշնակցային պետության՝ Հարավսլավիայի քաղաքական լիակատար անկախությունը:

Փարիզի հաշտության կոնֆերանսում կնքված միջազգային պայմանագրերով հաստատվում են Հարավսլավիայի տարածքները և նրա սահմանները: Այսպես. 1919 թ. նոյեմբերի 27-ին Փարիզի արվարձան Նեյիում կնքված հաշտության պայմանագրով Հարավսլավիային են անցնում Բուլղարիայի արևմտյան սահմանի մոտ 2566 քառ. կմ տարածությամբ չորս շրջաններ, այդ թվում՝ Ստրումիցան (այժմ գտնվում է Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության կազմում):

1920 թ. հունիսի 4-ին Վերսալի Տրիանոնի պալատում կնքված հաշտությամբ Հունգարիայից Հարավսլավիային են անցնում Խորվաթիան, Բաչկան և Բանատի արևմտյան մասը: 1920 թ. նոյեմբերի 12-ին իտալական քաղաք Ռապալլոյում կնքված հաշտությամբ ավստրիական նախկին տիրույթներից Հարավսլավիային են տրվում Սլովենիան, Դալմաթիան, բացի Զադար նավահանգստից և մի շարք կղզիներից, որոնք 1918 թ. գրավվել էին Իտալիայի կողմից, Բոսնիան և Հերցեգովինան:

Այդպիսով՝ Փարիզի հաշտության կոնֆերանսում կնքված վերոհիշյալ միջազգային պայմանագրերով վերջնականորեն որոշվում և հաստատվում էին Սերբերի, խորվաթների և սլովենների թագավո-

րության՝ Հարավսլավիայի տարածքները և նրա սահմանները հարևան պետությունների՝ Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Իտալիայի, Ալբանիայի, Հունաստանի և Ռումինիայի հետ: Այդպիսով՝ իրականանում էր միապետական Սերբիայի գերիշխանության ներքո հարավսլավոնական բոլոր հողերը միավորելու և Բալկաններում հզոր սլավոնական պետություն ստեղծելու վերաբերյալ սերբ պետական ու քաղաքական գործիչ Իլիյա Գարաշանինի կողմից 1844 թ. կազմված Սերբիայի արտաքին քաղաքական ծրագիրը՝ «Նաչերտանիեն»: Իր գլխավորությամբ միավորելով հարավսլավոնական երկրները՝ Սերբիան Չեռնոգորիայի տարածքով դուրս էր գալիս Ադրիատիկ ծով, իսկ հետագայում՝ 1951-1976 թթ. կառուցված 476 կմ երկարությամբ երկաթուղագծով Բելգրադը ուղղակիորեն կապվում էր Ադրիատիկ ծովի չեռնոգորյան Բար նավահանգստի հետ:

1919-1920 թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսում կնքված միջազգային պայմանագրերի հիման վրա 12 մլն բնակչությամբ 248 488 հազ. քառ. կմ տարածքի վրա ստեղծված Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորությունը 1929 թ. հոկտեմբերին վերանվանվում է Հարավսլավիայի թագավորություն:

Բուլղարիա

1915 թ. հոկտեմբերի 14-ից Գերմանական խմբավորման դաշնակցությամբ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած և պարտություն կրած Բուլղարիայի վերաբերյալ հաղթանակած տերությունների կայացրած Նեյիի հաշտության պայմանագրով Բուլղարիայից անջատվում է 1913 թ. օգոստոսի 10-ի Բուխարեստի հաշտության պայմանագրով ստացած Նեստոս (Մեստա) և Մարիցա (Էվրոս) գետերի միջև գտնվող 8,5 հազ. քառ. կմ տարածությամբ Արևմտյան Թրակիան՝ Էգեյան ծովի Պորտո-Լագոս և Դեդեաղաջ (Ալեքսանդրապոլիս) նավահանգիստներով, որի հետևանքով Բուլղարիան զրկվում է դեպի Էգեյան ծով դուրս գալու ելքից:

1920 թ. օգոստոսին կնքված Սևրի պայմանագրով Արևմտյան Թրակիան տրվում է 1917 թ. հունիսի 27-ից Անտանտի տերությունների կողմում Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած Հունաստանին:

Ռումինիա

Սեն-Ժերմենում կնքված հաշտությամբ Ավստրիայից Ռումինիային է անցնում Բուկովինան: Նեյիի հաշտությամբ Բուլղարիայից Ռումինիային է անցնում Հարավային Դոբրուջան, իսկ Տրիանոնի հաշտության պայմանագրով՝ Հունգարիայից Ռումինիային են անցնում Տրանսիլվանիան և Արևելյան Բանատը: Օգտվելով Խորհրդային Ռուսաստանի դեմ սկսված օտարերկրյա ռազմական ինտերվենցիայից՝ 1918 թ. հունվարին Ռումինիան գրավում է Բեսարաբիան, իսկ նոյեմբերին՝ Բուկովինան: 1920 թ. հոկտեմբերի 28-ին ստորագրած Փարիզի արձանագրությամբ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան ճանաչում են Ռումինիայի կողմից Բեսարաբիայի գրավումը: Այդպիսով՝ Փարիզի հաշտության պայմանագրերի հետևանքով Ռումինիայի տարածքը 132 հազ. քառ. կմ-ից հասնում է 295 հազ. քառ. կմ-ի, իսկ բնակչությունը՝ մոտ 7 մլն-ից 18 մլն-ի:

Խորհրդային Ռուսաստանը, թեև 1920 թ. փետրվարին վերադարձրել էր Դնեստրի ձախ ափի բեսարաբական տարածքը, այնուամենայնիվ, չէր հաշտվում Բեսարաբիան կորցնելու իրողության հետ: Օգտվելով Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Եվրոպայում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններից՝ 1940 թ. հունիսի 26–ին ԽՍՀՄ կառավարությունը Ռումինիային ներկայացրած նոտայով պահանջում է վերադարձնել Բեսարաբիան, ինչպես նաև Հյուսիսային Բուկովինան: Երկու օր անց՝ հունիսի 28-ին, խորհրդային բանակի զորամասերը, առանց դիմադրության հանդիպելու, գրավում են Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան:

1940 թ. օգոստոսի 2-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 7-րդ նստաշրջանի ընդունած օրենքի համաձայն Բեսարաբիայի տարածքի վրա՝ Դնեստր և Պրուտ գետերի միջև, ստեղծվում է Մոլդավական սոցիալիստական հանրապետությունը: Սակայն ուկրաինացիներով բնակեցված Հարավային Բեսարաբիայի Իզմայիլի, Ակկերմանի և Խոտինի գավառները միացվում են խորհրդային Ուկրաինային: Ինչ վերաբերում է Հյուսիսային Բուկովինային, ապա այդ տարածքը, Չերնովցի քաղաքով, նույնպես միացվում է խորհրդային Ուկրաինային:

1940 թ. օգոստոսի 30-ին Վիեննայում կնքված պայմանագրի համաձայն, Ռումինիայից Հունգարիային են անցնում Տրանսիլվանիայի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները՝ 43 հազ. քառ. կմ տարածությամբ և 2,6 մլն բնակչությամբ:

Նույն թվականի սեպտեմբերի 7-ին Ռումինիայից Սիլիստրա քաղաքով Բուլղարիային է վերադարձվում Հարավային Դոբրուջան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1947 թ. փետրվարին, Փարիզում ստորագրված հաշտության պայմանագրի համաձայն Ռումինիան և Հունգարիան վերականգնում են 1938 թ. հունվարի 1-ի սահմանը, որի հետևանքով Տրանսիլվանիայի հյուսիսային և հարավ-արևելյան շրջանները վերադարձվում են Ռումինիային:

Ալբանիայի անկախության հռչակումը

1920 թ. հունվարի 21-ից 31-ը Լյուշնյա քաղաքում կայացած Ալբանական Ազգային կոնգրեսը հաստատում է 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրով ճանաչված Ալբանիայի անկախությունը՝ հայտարարելով, որ չի ընդունում «ոչ մի օտարերկրյա մանդատ և հովանավորություն» և Տիրանան հռչակում մայրաքաղաք: Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների Լոնդոնի կոնֆերանսը 1920 թ. նոյեմբերի 9-ին հաստա-

տում է Ալբանիայի անկախությունը: Մեծ տերությունների կողմից անկախ ճանաչված Ալբանիան 1920 թ. դեկտեմբերի 17-ին դառնում է Ազգերի լիգա միջազգային կազմակերպության լիիրավ անդամը:

Անկախ ճանաչված Ալբանիայի հյուսիսային սահմանները որոշվում են 1922 թ., իսկ հարավային սահմանները՝ Միջազգային հանձնաժողովի կողմից 1913 թ. դեկտեմբերի 17-ին կայացրած որոշման վրա՝ 1924 թ.:

Սևրի հաշտության պայմանագիրը (1920 թ. օգոստոսի 10)

Գերմանիայի ռազմական դաշնակից Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն է կրում: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում, անգլիական «Ագամեմնոն» ռազմանավի վրա կնքված զինադադարով ամբողջ Թուրքիան հանձնվում էր հաղթող տերություններին:

Թուրքիային իրենց հաշտության պայմանները թելադրելու նպատակով Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշմամբ անգլիական, ֆրանսիական և ամերիկյան ռազմանավերի աջակցությամբ հունական զորքերը 1919 թ. մայիսի 15-ին ափ են իջնում Էգեյան ծովի խոշորագույն նավահանգիստ Զմյուռնիայում (Իզմիր)՝ սկիզբ դնելով Թուրքիայի դեմ ուղղված պատերազմին:

Հունական բանակի սկզբնական հաջողությունների շրջանում, երբ Թուրքիայի առանձին տարածքները գրավված էին ֆրանսիական, անգլիական և իտալական զորքերի կողմից, դաշնակից տերությունները 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում հաշտության պայմանագիր են կնքում Թուրքիայի հետ:

Սևրի հաշտության պայմանագրի համաձայն Արևելյան Թրակիան՝ Էվրոս (Մարիցա) գետից մինչև Կ.Պոլսի մատույցները՝ Չաթալջայի բլուրները, Էդիրնե (Ադրիանապոլիս) քաղաքով, Սև ծովի

Միդիա և Մարմարա ծովի Ռոդոստո (արդի Թեքիրդաղ) նավահանգիստներով, ինչպես նաև Դարդանելի նեղուցի եվրոպական ափի Գալլիպոլի (Կալլիպոլիս) թերակղզով, Թուրքիան հանձնում էր Հունաստանին[468]: Այդպիսով՝ Սևրի հաշտության պայմանագրի համաձայն Թուրքիան Բալկաններում սահմանափակվում էր սոսկ Կ.Պոլսից մինչև Չաթալջայի բլուրները՝ մոտ 2 հազ. քառ. կմ տարածքում:

Սևրի հաշտության պայմանագրով Փ.Ասիայի արևմուտքում, հարակից տարածքով Հունաստանին էր տրվում Էգեյան ծովի խոշորագույն Զմյուռնիա (Իզմիր) նավահանգիստը, որը, ձևականորեն մնալով թուրքական սուվերենության ներքո, ժամանակավորապես պետք է կառավարվեր հունական կառավարության նշանակած հատուկ պաշտոնյաների կողմից: Գլխավոր դաշնակից տերությունների կողմից որոշված Զմյուռնիայի արտաքին ամրոցներից մեկի աշտարակի վրա, որպես թուրքական սուվերենության խորհրդանիշ, մշտապես պետք է ծածանվեր օսմանյան դրոշը: Թուրքական դրամը Զմյուռնիայում ազատորեն պետք է շրջանառության մեջ լիներ, իսկ Հունաստանը դրանք արժեզրկելու միջոցառումներ ձեռնարկել իրավունք չէր ունենալու: Զմյուռնիայի բնակիչները ստանում էին հունական քաղաքացիություն: Հունաստանը իրավունք էր ստանում Զմյուռնիայում ստեղծելու տեղական պառլամենտ, առանց պարտադիր զինվորական ծառայության պահելու զինված ուժեր, կարող էր քաղաքը՝ իր տարածքով հանդերձ, ներառել իր մաքսային համակարգի մեջ: Հինգ տարի անց Զմյուռնիայի պառլամենտը Ազգերի Լիգայի Խորհրդից կարող էր պահանջել հանրաքվեի միջոցով Զմյուռնիան՝ իր տարածքով վերջնականորեն միացնել Հունաստանին: Ազգերի Լիգայի Խորհրդի անցկացրած հանրաքվեի միջոցով Զմյուռնիան իր տարածքով Հունաստանին միացնելուց հետո Թուր-

[468] Տե՛ս Проф. Ю. В. Ключников. Мирные договоры империалистической войны в конспективном изложении. М., 1925. V. Мирный договор между союзными державами и Турцией, подписанный в Севре 10 августа 1920 года. Часть II. Границы Турции (с. 27-35):

քիան պետք է հրաժարվեր այդ քաղաքի և նրա տարածքի նկատմամբ ունեցած իր բոլոր իրավունքներից: Զմյուռնիան իր տարածքով Հունաստանին միացնելուց հետո անժամկետ վարձակալությամբ Զմյուռնիայի նավահանգստում Թուրքիային պետք է տրվեր ազատ գոտի՝ համապատասխան մաքսատուրքերով ապրանքներ ներմուծելու, խանութներ ու պահեստներ կառուցելու, ինչպես նաև տարբեր բնույթի արտադրություններ կազմակերպելու համար[469]:

Սևրի հաշտության պայմանագրով Հունաստանը ստանում էր Դարդանելի նեղուցի դիմաց գտնվող և ռազմաստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող Իմբրոս (արդի Գյոկչեադա) և Թենեդոս (արդի Բոզջաադա), ինչպես նաև փոքրասիական ափագծից երեք մղոն հեռավորության վրա գտնվող Էգեյան ծովի կղզիները[470]: Սակայն Դոդեկանեզյան արշիպելագը և հարակից կզղիները, որոնք 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում գրավվել էին Իտալիայի կողմից, հանձնվում են Իտալիային[471]: Սևրի պայմանագրով Անգլիան ստանում էր 1914 թ. նոյեմբերի 5-ին բռնակցած Կիպրոս կղզին, իսկ նրա բնակիչները ստանում են բրիտանահպատակություն[472]: Այդպիսով՝ նշվում է հունական պատմագրության մեջ, Սևրի հաշտության պայմանագրով ստեղծվում էր հինգ ծովերով շրջապատված, Էգեյան ծովում գերիշխող, Փ.Ասիայի մի մասում՝ Զմյուռնիայի շրջանում հաստատած, Էվրոս (Մարիցա) գետից արևելք՝ մինչև Մարմարայի ու Սև ծովի ափերը, և Չաթալջայի բլուրները տարածվող Մեծ հունական պետություն: Մեծ Հունաստան ստեղծելու՝ «Մեգալի իդեայի» գաղափարախոսությունը հիմնականում գրեթե իրականացված էր, եզրակացվում է հունական պատմագրության մեջ:

---

[469] Նույն տեղում, Отдел IV. Смирна, с. 65-83:
[470] Նույն տեղում, Отдел V. Греция, с. 84-87:
[471] Նույն տեղում, Отдел XI. Ливия и острова Эгейского моря, с. 121-122:
[472] Նույն տեղում, Отдел IX. Кипр, с. 115-117:

Լոզանի հաշտության պայմանագիրը (1923 թ. հուլիսի 24)

Սևրի հաշտության պայմանագրի կնքումից հետո Հունաստանի թե՛ ներքաղաքական կյանքում և թե՛ միջազգային հարաբերություններում կատարվում են ռազմաքաղաքական լուրջ իրադարձություններ, որոնց հետևանքով Հունաստանը ջախջախիչ պարտություն է կրում 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմում: 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմում Հունաստանի ջախջախիչ պարտությունը պատմության մեջ է մտնում «Փոքրասիական աղետ» անունով: Կ.Պոլսի անկումից հետո հույն ժողովրդի ապրած մեծագույն աղետը՝ 1919-1922 թթ. պատերազմում կրած ջախջախիչ պարտությունն էր, նշում է հունական պատմագրությունը:

1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմում Հունաստանի կրած ջախջախիչ պարտությունը հանգեցնում է նաև Սևրի հաշտության պայմանագրի կործանմանը:

1922 թ. հոկտեմբերի 11-ին Մարմարա ծովի արևելյան ափի Մուդանիա նավահանգստում մի կողմից՝ Թուրքիայի և մյուս կողմից՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև կնքված զինադադարին հոկտեմբերի 13-ին միանում է Հունաստանը: Զինադադարի համաձայն մինչև հաշտության պայմանագրի կնքումը՝ դաշնակիցների զորքերը պետք է մնային Կ. Պոլսում և Նեղուցների գոտում:

1922 թ. հոկտեմբերի 13-ին Մարմարա ծովի արևելյան ափի Մուդանիա նավահանգստում կնքված զինադադարով պատերազմը Հունաստանի և Թուրքիայի միջև ավարտվում էր: Հունաստանը պարտավորվում էր իր զորքերը անհապաղ դուրս բերել Արևելյան Թրակիայից՝ Բալկաններում հույն-թուրքական սահմանը դարձնելով Մարիցա (Էվրոս) գետը:

1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում Թուրքիայի հետ կնքված հաշտության միջազգային պայմանագրով վերջնականապես հաստատվում էին Հունաստանի սահմանները և նրան անցած ծովային և ցա-

մաքային տարածքները[473]: Բալկաններում Հունաստանը Բուլղարիայից ստանում է Արևմտյան Թրակիան՝ մինչև Մարիցա (Էվրոս) գետը, որն էլ դառնում է հույն-թուրքական բնական սահմանը: Հունաստանին են անցնում էգեյան ծովի բոլոր այն կղզիները, որոնք գտնվում են փոքրասիական ափից երեք մղոն հեռավորության վրա: Հունական կառավարությունը պարտավորվում էր ռազմականացման չենթարկել Փոքր Ասիայի դիմաց գտնվող էգեյան ծովի Լեսբոս (Միթիլեն), Քիոս, Սամոս և Իկարիա կղզիները՝ դրանցում չկառուցելով ամրություններ և ռազմածովային հենակետեր, սակայն իրավունք ստանալով դրանց պաշտպանության համար պահել անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր, ժանդարմերիա և ոստիկանություն: Հունական ռազմական ինքնաթիռներին արգելվում էր թռչել Փոքր Ասիայի առափնյա տարածքների, իսկ թուրքական ռազմական ինքնաթիռների թռիչքները՝ Էգեյան ծովի հունական կղզիների վրայով[474]:

Լոզանի հաշտության պայմանագրով Թուրքիան ստանում է Էգեյան ծովի Զմյուռնիայի նավահանգիստը և նրա շրջանը, Էվրոս գետից մինչև Սև ու Մարմարա ծովերը տարածվող ամբողջ Արևելյան Թրակիան՝ Ադրիանապոլիս քաղաքով և Էվրոս գետի ձախ ափի Էնոս (արդի Էնեզ) Էգեյան ծովի նավահանգստով, Գալլիպոլի թերակղզին, նաև փոքրասիական թերակղզուց մինչև երեք մղոն հեռավորության վրա գտնվող Էգեյան ծովի կղզիները: Դարդանելի նեղուցի դիմաց գտնվող և ռազմաստրատեգիական մեծ նշանակություն ունեցող Իմբրոս և Թենեդոս կղզիները տերությունները թողնում են թուրքական տիրապետության տակ՝ երաշխավորելով հույն բնակչության անվտանգությունը, գույքի անձեռնմխելիությունը և

[473] Նույն տեղում, VI. Мирный договор, подписанный в Лозанне 23 июля 1923 г. Отдел I.Территориальные положения (ст. 2-22), с. 2. Граница Турции с Болгарией и Грецией:
[474] Նույն տեղում, Հոդված 12, 13:

տեղական ինքնակառավարման վարչական հատուկ համակարգը[475]:

Այդպիսով՝ 1919-1922 թթ. պատերազմում ջախջախիչ պարտություն կրած Հունաստանը Լոզանի հաշտության կոնֆերանսի որոշումներով Թուրքիային է վերադարձնում Սևրի հաշտության պայմանագրով իրեն տրված ամբողջ Արևելյան Թրակիան, Դարդանելի նեղուցին հարակից Իմբրոս և Թենեդոս կղզիները, Փ. Ասիայի արևմուտքում՝ Էգեյան ծովի առևտրական խոշորագույն Զմյուռնիա նավահանգիստը: Այդպիսով՝ դառնությամբ եզրակացնում է հունական պատմագրությունը, Բալկանյան պատերազմներից հետո, երկարատև տասնմեկ տարիների ընթացքում մղած շարունակական պատերազմների արդյունքում, Լոզանի հաշտության կոնֆերանսի որոշումներով Հունաստանի ձեռք բերած միակ տարածքն է դառնում սոսկ միայն Արևմտյան Թրակիան՝ ընդհամենը 8 796 քառ. կմ տարածությամբ և 202,650 բնակչությամբ:

Լոզանի հաշտությամբ Իտալիային են տրվում 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում գրաված Էգեյան ծովի Դոդեկանեզյան արշիպելագը և հարակից կղզիները[476] (1947 թ. Դոդեկանեզյան արշիպելագը տրվում է Հունաստանին):

Լոզանի կոնֆերանսը ճանաչում է Անգլիայի կողմից 1914 թ. նոյեմբերի 5-ին կատարած միջերկրածովյան Կիպրոս կղզու բռնակցումը և կղզու բոլոր բնակիչները ստանում են բրիտանահպատակություն[477] (1925 թ. մարտի 1-ին Կիպրոսը հռչակվում է անգլիական գաղութ, իսկ 1960 թ. օգոստոսին հռչակվում է անկախ հանրապետություն):

Լոզանի հաշտության կոնֆերանսի ընթացքում՝ տեղի էին ունենում նաև հույն-թուրքական առանձին բանակցություններ: Դրանց արդյունքում 1923 թ. հունվարի 30-ին կնքվում է հույն-թուրքական

[475] Նույն տեղում, Հոդված 14:
[476] Նույն տեղում, Հոդված 15:
[477] Նույն տեղում, Հոդված 20, 21:

համաձայնություն՝ երկու երկրների հույն և թուրք բնակչությունների փոխանակման մասին: Սակայն փոխանակման ենթակա չէին Դարդանելի նեղուցին հարակից Իմբրոս և Թենեդոս կղզիներում, Կ.Պոլսում բնակվող հույները և Հունաստանին տրված Արևմտյան Թրակիայի թուրքերը: Հունական պատվիրակության ղեկավար Է. Վենիզելոսի դիվանագիտական ջանքերի շնորհիվ քեմալական կառավարությանը չի հաջողվում իրականացնել Կ.Պոլսից հունական պատրիարքությունը հեռացնելու պահանջը: Ինչ վերաբերում էր Հունաստանին ներկայացվող ռազմատուգանքի և թուրքական նավահանգիստներում պատերազմի հետևանքով արգելակալանքի ենթարկված հունական առևտրանավերը ստանալու Թուքիայի պահանջին, ապա, որպես փոխհատուցում, մայիսի 26-ի թուրք-հունական համաձայնությամբ Հունաստանը Թուրքիային է զիջում Ադրիանապոլսի արվարձաններից Կարաաղաջի եռանկյունու տարածքը:

Հունական պատմագրությունը բարձր է գնահատում Լոզանի հաշտության կոնֆերանսում հունական պատվիրակության ղեկավար Է. Վենիզելոսի աննկուն գործունեությունը՝ շեշտելով, որ նա իր դիվանագիտական բացառիկ ունակությունների շնորհիվ ընթացող բանակցություններում հմտորեն պաշտպանում էր Հունաստանի տեսակետերն ու շահերը:

Երկու երկրների հույն և թուրք բնակիչների փոխանակմանը վերաբերող 1923 թ. հունվարի 30-ի համաձայնությամբ միայն Կ. Պոլսից և նրա շրջակայքից սեփական ցանկությամբ Հունաստան են տեղափոխվում ավելի քան 200 հազար հույներ: Ընդհանուր առմամբ Թուրքիայից Հունաստան են տեղափոխվում 1,5 մլն հույն վերաբնակիչներ, այդ թվում՝ փախստականներ: Հունաստան են տեղափոխվում ցեղասպանությունից փրկված նաև 50 հազար հայ փախստականներ:

Ազգերի Լիգայի ֆինանսական օգնությամբ 1923-1930 թթ. ընթացքում լուծվում է հույն փախստականների վերաբնակեցման և տեղավորման խնդիրը: Օրինակ՝ 143 հազարից ավելի փախստա-

կան գյուղացիական ընտանիքներ վերաբնակեցվում են Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում:

Ստորագրելով Լոզանի հաշտության պայմանագիրը, այնուամենայնիվ, թուրքական կառավարող շրջանները այժմ էլ չեն հրաժարվում Բալկաններում, Էգեյան ծովի կղզիներում, Արևելյան Միջերկրականում, Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում, Կովկասյան տարածաշրջանում, Կենտրոնական Ասիայում իրենց ռազմաքաղաքական գերիշխանությունը հաստատելու իմպերիալիստական, պանթուրքական նկրտումներից: Թուրքիայի արտաքին քաղաքականության ագրեսիվությունը հատկանշական է ոչ միայն նրա անցյալ պատմական ժամանակաշրջանների, այլև արդի միջազգային հարաբերություններում արտաքին քաղաքական գործողությունների համար:

Հարավսլավիայի քայքայումը և մասնատումը

1945 թ. նոյեմբերի 29-ին Հարավսլավիայի հիմնադիր Սկուպշչինան վերացնում է միապետությունը՝ ստեղծելով Հարավսլավիայի ֆեդերատիվ ժողովրդական հանրապետությունը: 1946 թ. հունվարի 31-ին հիմնադիր Սկուպշչինան ընդունում է Սահմանադրություն, որը Հարավսլավիան հռչակում էր վեց սոցիալիստական հանրապետություններից բաղկացած դաշնակցային պետություն: Դրանք էին՝ Բոսնիան և Հերցեգովինան, Սերբիան, Սլովենիան, Խորվաթիան, Չեռնոգորիան և Մակեդոնիան: Սերբիայի կազմում են մտնում երկու ինքնավար երկրամասեր՝ Վոյեվոդինան և Կոսովո-Մետոխիան: 1974 թ. փետրվարի 21-ին ընդունված նոր Սահմանադրության համաձայն՝ Հարավսլավիայի ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետությունները պահպանում են իրենց Սահմանադրությունները, իսկ ինքնավար երկրամասերը՝ Ստատուտները:

20-րդ դարի 90-ական թթ. ԽՍՀՄ-ում և Եվրոպայի ժողովրդադեմոկրատական երկրներում սոցիալիստական հասարակարգի

համընդհանուր փլուզումը միաժամանակ ուղեկցվում է ոչ միայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգերի տապալմամբ, այլև սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետությունների քայքայմամբ և ինքնանկախ հանրապետությունների առաջացման գործընթացով:

20-րդ դարի 90-ական թթ. սոցիալիստական հասարակարգի փլուզման հետևանքով քայքայվում և մասնատվում է նաև Հարավսլավիայի ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետությունը, որի հետևանքով իրենց անկախությունը հռչակած նախկին հանրապետությունների միջև տեղի են ունենում ազգային, էթնիկական և միջկրոնական բախումներ, տարածքային հակասություններից բխող կոնֆլիկտներ ու արյունահեղ պատերազմներ:

Հարավսլավիայի ֆեդերացիայի կազմից դուրս են գալիս և 1991 թ. իրենց անկախությունը հռչակում Սլովենիան, Խորվաթիան, Մակեդոնիան, Բոսնիան և Հերցեգովինան: Նախկին Հարավսլավիայի կազմում են մնում միայն Սերբիան և Չեռնոգորիան, որոնք 1992 թ. մայիսի 27-ին ստեղծում են Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետությունը: Սակայն Սերբիայից և Չեռնոգորիայից բաղկացած ֆեդերատիվ հանրապետությունը նույնպես երկար չի դիմանում: 2006 թ. մայիսի 21-ին կայացած անկախության հանրաքվեի արդյունքում Չեռնոգորիան՝ որպես անկախ և ինքնուրույն պետություն, անջատվում է Սերբիայից:

Սերբիայի Կոսովո-Մետոխիա ինքնավար երկրամասում մեծամասնություն կազմող մուսուլման ալբանացիները հենց սկզբից պայքար են ծավալում Կոսովոն Սերբիայից անջատելու և անկախ պետություն հռչակելու համար: ՆԱՏՕ-ի տերությունների, հիմնականում՝ ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ակտիվ միջամտության և պաշտպանության արդյունքում Սերբիայի այդ պատմական տարածքը դարերի ընթացքում յուրացրած և ժողովրդագրական մեծամասնություն կազմած մուսուլման ալբանացիները 2008 թ. փետրվարի 17-ին հռչակում են Կոսովոյի անկախությունը՝ քրիստոնյա սերբերին

զենքի ուժով դուրս մղելով իրենց բնօրրանից:

Հաագայի միջազգային դատարանը 2010 թ. հուլիսի 22-ին կայացրած վճռում հաստատում էր, որ Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը չի հակասում միջազգային իրավունքի սկզբունքներին:

Հաագայի միջազգային դատարանի կայացրած վճիռը, թեև չի կրում պարտադիր բնույթ, այնուամենայնիվ, միջազգային իրավունքի առումով առաջին իրավական նախադեպն է ստեղծում ժողովուրդների ազգային ինքնորոշման համար մղվող պայքարում:

Կոսովոյի բնակչության մեծամասնությունը կազմող մուսուլման ալբանացիների և քրիստոնյա սերբերի միջև արյունալի ընդհարումները կանխելու նպատակով տեղակայված են նատոյական զինված ուժեր: Հունական խաղաղապահ զորքի կազմում իր պարտականություններն է կատարել հայկական վաշտը:

Փաստորեն, ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ 20-րդ դարի վերջին տարիներին և 21-րդ դարի սկզբին Բալկանյան թերակղզին վերածվել է եվրոպական Մեծ տերությունների, նաև ԱՄՆ-ի ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման պայթյունավտանգ տարածաշրջանի՝ հղի միջազգային անկանխատեսելի լուրջ բարդություններով և դրա անմիջական հետևանքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ՌՈՒՍԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալբանիա

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Պրոֆ. Ջ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972:
   - Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, 19 փետրվարի (3 մարտի) 1878 թ., էջ 83-98:
   - Բեռլինի պայմանագիրը, 1/13 հուլիսի, 1878 թ., էջ 105-129:
2. Ключников Ю.В. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. I, Литиздат Н.К. И. Д., М., 1925.
   - N 362. Мирный договор между Турцией, с одной стороны, и Сербией, Турцией, Болгарией и Черногорией (“союзные государи”), с другой, заключенный в Лондоне 30 мая 1913 года, с.367.
   - N 364. Органический статут Албанского государства, принятый на конференции послов в Лондоне 29 июня 1913 года, с. 369.
3. Арш Г. Л., Русско-албанские связи в период русско-турецкой войны 1787-1791 гг., ("Исторические записки". Изд. АН СССР, т. 63, М., 1958, с. 259-268).
4. Арш Г. Л., Албания и Эпир в конце XVIII-начале XIX в., Изд. АН СССР, М., 1963.
5. Арш Г. Л., Сенкевич И. Г., Краткая история Албании, Изд. "Наука", М., 1965.
6. Восточный вопрос во внешней политике России: конец XVIII-начало XX в., Изд. "Наука", М., 1978.
7. Галкин И. С., Из истории национально-освободительного движения в Албании в 1910-1912 годах. ("Вопросы истории". Изд. “Правда”, М., 1954, N 11, с. 35-46).

8. Галкин И. С., Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905-1912 гг. Изд. МГУ., 1960. (Часть II. Борьба албанского народа против турецкого гнета в начале XX века и политика Европейских держав, с. 107-186).
9. Грачев В. П., Балканские владения Османской империи на рубеже XVIII-XIX вв., Изд. "Наука", М., 1990.
10. Миле Л. Н., Освободительное движение албанского народа против турецкого ига в период Танзимата (30-70-е годы XIX в.). Автореферат кандидатской диссертации, М., 1961.
11. Могилевич А. А., Айрапетян М. Э., На путях к мировой войне 1914-1918 гг., Госиздат, 1940.
12. Писарев Ю. А., Великие державы и Балканы накануне Первой мировой войны, Изд. "Наука", М., 1985.
13. Россия и Восточный кризис 70-х годов XIX, Изд. МГУ., 1981.
14. Россия и национально-освободительная борьба на Балканах. 1875-1878 (Сб. ст.). Изд. "Наука", М., 1978.
15. Сенкевич И. Г., Национально-освободительное движение албанского народа в начале XX века. ("Вопросы истории". Изд. "Правда", М., 1956, N6, с. 48-57).
16. Сенкевич И. Г., Национально-освободительная борьба албанского народа в 1911-1912 годах. ("Новая и новейшая история". Изд. "Наука", М., 1957, N5, с. 43-67.).
17. Сенкевич И.Г., Младотурецкая революция 1908г. и албанское национальное движение. ("Советское востоковедение". Изд. "Наука", М., 1958, N 1, с.31-41).
18. Сенкевич И.Г., Освободительное движение албанского народа в 1905-1912 годах. Изд. АН СССР, М., 1959.
19. Сенкевич И.Г., Албания в период Восточного кризиса (1875-1881 гг.). Изд. "Наука", М.,1965.
20. Смирнова Н. Д., Сенкевич И. Г., Освободительная борьба албанского народа против турецких поработителей в XV веке. ("Вопросы истории". Изд. "Правда", М., 1953, N12, с. 80-97.).
21. Смирнова Н. Д., Документы АВПР о Призренской лиге (1878-1881). ("Балканские исследования". Вып. 8. Изд. "Наука", М., 1982, с. 222-235).

22. Смирнова Н. Д., Албания (Формирование национальных государств на Балканах. Конец XVII-70-е годы XIX века. Изд. "Наука", М., 1986, с. 407-418).
23. Բայբուրդյան Վահան, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
24. Միքայել Մուրադյան, Էդիկ Մինասյան, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIXդդ.), ԵՊՀ, Երևան, 2005:

Բոսնիա և Հերցեգովինա

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972:
   - Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, 19 փետրվարի (3 մարտի) 1878 թ., էջ 83-98:
   - Բեռլինի պայմանագիրը, 1/13 հուլիսի. 1878 թ., էջ 105-129:
   2. Albin P., Les Grands traités poliques depuis 1815 jesqu'à nos jours. Félix Alcan, éditeur, P., 1911.
   - Le traité de San-Stéfano (19 février/3 mars 1878), p. 187-201.
   - Le traité de Berlin (13 juillet 1878), p. 204-228.
   - La Bosnie Herzégovine. Accord Austro-turc (26 février 1909), p. 237-240.
3. Annuaire diplomatique de l'Émpire de Russie pour l'année 1878. Saint-Pétersbourg. 1878. Question d'Orient.
   - Conditions préliminaires de paix, p. 209-210.
   - Protocole constatant l'acceptation des bases préalables de paix et la convention
   - D'armistice, signée à Andrinople le 19(31) janvier 1878, p. 213-220.
   - Préliminaires de paix de San-Stéfano, en date de San-Stéfano 19 fevrier (3 mars) 1878, p. 245-263.
   - Traité de Berlin en date de Berlin 13(25) juillet, p. 265-295.
   - Protocoles du congrès de Berlin, p. 293-572.

4. Bareilles B., Le Rapport secret sur le Congrès de Berlin adressé à la S. Porte par Karathéodory pacha, premier plénipotentiaire ottoman. Éditions Bossard. P., 1919.
5. Hanotaux G., Le Congrès de Berlin. "Revue des Deux Mondes". P.,15 septembre 1908, p. 241-280.
   - 1er Octobre 1908, p. 481-514.
6. Steen de Jehay, La situation légale des sujets Ottomans non-musulmans. Bruxelles, 1906.
7. Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome troisième. 1856-1878. Librairie Cotillon. P.,1902.
   - N 836. Protocoles de la Conférence de Constantinople pour le rétablissement de l'ordre dans les pays Balkaniques. Du 23 décembre 1876 au 20 janvier 1877, p. 400-494.
   - N 852. Bases de paix avec la Russie. Signé à Andrinople, le 31 janvier 1878.
   - N 854. Préliminaires de paix avec la Russie. Conclu à San-Stéfano lès Constantinople le 3 mars 1878, p. 509-521. Les ratifications de ce Traité ont été échangées à Saint-Pétersbourg en mars 1878.
8. Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome quatri`eme. 1878-1902. Librairie Cotillon. P., 1903.
   - N 856. Le Congrès de Berlin du 13 juin au 13 juillet 1878. Protocoles du congr`es de Berlin, p. 1-175.
   - N 857. Traité de Berlin, p. 175- 192.
   - N 872. Convention avec l'Autrche-Hongrie concernant la Bosnie et l'Herzégovine. Signée à Constantinople le 21 avril 1879, p. 219-221.
   - Annex à la convention, p. 221-222.
9. Ключников Ю.В. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и деклорациях, Ч.I, От французской революции до империалистческой войны, Литиздат, Н.К. И. Д. М., 1925.
   - N 212. Берлинский меморандум России, Австро-Венгрии и Германии по Восточному вопросу от 30 апреля (12 мая) 1876 года, с. 215-216.
   - N 213. Конвенция между Россией и Австро-Венгрией, заключенная в Будапеште 3/15 января 1877 года, с. 217-218.

- N 214. Лондонский протокол по Восточному вопросу, заключенный 19/31 марта 1877 года, с. 219-220.
- N 215. Прелиминарный русско- турецкий мирный договор, заключенный в Сан-Стефано 19 февраля 1878 года, с. 220-225.
- N 218. Акт Берлинского конгресса 1/13 июня 1878 года, с. 226-230.
- N 220. Конвенция между Австро-Венгрией и Турцией по поводу управления Боснией и Герцеговиней, заключенная в К. поле 21 апреля 1879 года, с.231-232.

10. Сборник договоров России с другими государствами. 1856-1917. Госиздат, 1952.
    - N 21. Меморандум России, Германии и Австро-Венгрии по Балканским делам. Берлин, 1/13 мая 1876 г., с. 140-143.
    - N 22. Рейхштадтское соглашение между Россией и Австро-Венгрией. Рейхштадт, 26 июня / 8 июля 1876 года, с. 144-148.
    - N 23. Секретная конвенция между Россией и Австро-Венгрией. Будапешт, 3/15 января 1877 года, с. 149-155.
    - N 24. Протокол подписанный Россией, Германией, Австро-Венгрией, Францией, Великобританией, и Италией, по Балканским делам. Лондон, 19 / 31 марта 1877 года, с. 156-158.
    - N 25. Сан-Стефанский прелиминарный мирный договор. Сан-Стефано, 19 февраля / 3 марта 1878 года, с. 159-175.
    - N 26. Соглашение между Россией и Великобританией об изменении Сан-Стефанского договора, 18 / 30 мая 1878 года, с. 176-180.
    - N 27. Берлинский трактат. Берлин 1 / 13 июля 1878 года, с. 181-206.
    - N 31. Договор, заключенный между Россией, Германией и Австро-Венгрией. Берлин, 6 /18 июля 1881 года, с. 228-233.
11. Анучин Д.Г., Берлинский конгресс 1878 года. (“ Русская старина”.СПБ., 1912. Т. 149, Кн.1, с. 39-58. Кн.2, с. 231-255. Кн.3, с. 461-470. Т.150, Кн.4, с. 3-12. Кн.5, с. 223-236. Т.152, Кн.11, с. 221-238. Кн.12, с. 482-505).
12. Бескровный Л.Г., От Сан-Стефано до Берлинского конгресса (К дипломатической истории русско-турецкой войны 1877-1878гг.). (Международные отношения и внешняя политика СССР. История и современность. Изд. “Наука”, М., 1977, с.138-149).

13. Бобриков Г., Воспоминание о Берлинском конгрессе (“Русский вестник”, 1889 г., N 12, с.3-43).
14. Бобриков Г., В Берлине на конгрессе (“Русская старина”, 1913 г., N 2. с. 280-300).
15. Босния, Герцеговина и Россия в 1850-1875 годах. Народы и дипломатия. (“Балкансие исследования”. Вып.13. Изд. “Наука”, М., 1991).
16. Виноградов К. Б., Боснийский кризис 1908-1909 гг. Пролог первой мировой войны. Изд. ЛГУ., 1964.
17. Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII-начало XX в. Изд. “Наука”, М., 1978.
18. Грачев В. П., Балканские владения Османской империи на рубеже XVIII-XIX вв. Изд. “Наука”, М., 1990.
19. Данилова Н. П., Босния и Герцеговина в период первого сербского восстания (некоторые вопросы историографии). (Центральная и Юго-Восточная Европа в новое время. Изд. “Наука”, М., 1974, с. 253-257).
20. Дебидур А., Дипломатическая история Европы. Т. П. Госиздат. М., 1947 (Глава тринадцатая. Восточный кризис и Берлинский трактат, с. 450-501).
21. Жигарев С.А., Русская политика в Восточном вопросе (Ее история в XVI-XIX вв, критическая оценка и будущие задачи). Т. 1-2. Унив. тип., 1896.
22. История внешней политики России. Вторая половина XIX века. Изд. “Международные отношения”, М., 1999. (Гл. V. Восточный кризис 70-х годов XIX в., с. 174-219. Гл. VI. Европейская система в 80-е годы. Болгарский кризис, с. 220-258).
23. История внешней политики России. Конец XIX-начало XX века. (От русско-французского союза до Октябрьской революции).Изд. “Международные отношения”, М., 1997. (Гл. VI.Россия в международных отношениях 1908-1909 годов. Политика балансирования, с. 223-253).
24. История дипломатии. Т. П. Дипломатия в новое время. 1871-1914. Автор тома В. М. Хвостов. Госиздат. М., 1963. (Глава третья. Ближневосточный кризис (1875-1877 гг.), с. 83-116.
    - Глава четвертая. Русско-турецкая война (1877-1878 гг.) и Берлинский конгресс (1878.), с. 117-133.

- Глава восемнадцатая. Борьба держав Антанты и австро-германского блока. Морское соперничество и Боснийский кризис (1908- 1909 гг.), с. 625-673.
- Глава двенадцатая. Балканские войны (1912-1913), с. 734-766.

25. История южных и западных славян. Изд. МГУ.,1979.
26. Кондратьева В.Н., К истории первых лет оккупации Боснии и Герцеговины Австро-Венгрией (1878-1889). ("Балканские исследования". Вып. 8. Изд. "Наука", М., 1982, с. 236-255).
27. Международные отношения на Балканах. 1856-1878 гг. Изд. "Наука", М., 1986.
28. Освободительная борьба народов Боснии и Герцеговины и Россия. 1850-1864. Документы. Изд. "Наука", М., 1985.
29. Освободительная борьба народов Боснии и Герцеговины и Россия. 1865-1875. Документы. Изд. "Наука", М., 1988.
30. Освободительное движение западных и южных славян XIX-XX вв. (Сб.ст.). Изд. "Наука", М., 1963.
31. Поплыко Д. Ф., Боснийско-герцеговинское восстание 1875-1876 гг. и национально освободительное движение на Балканах ("Балканские исследования", Вып.3. Освободительное движение на Балканах. Изд. "Наука". М.,1978, с. 3-38).
32. Поплыко Д.Ф., Боснийско-герцеговинское восстание и русско-турецкая война 1877-1878 гг. ("Балканские исследования". Бып.4. Русско-турецкая война 1877-1878 гг. и Балканы. Изд. "Наука", М., 1978, с.93-114).
33. Формирование национальных независимых государств на Балканах. Конец XVIII-70-е годы XIX в. Изд. "Наука", М., 1986 (Глава седьмая. Босния и Герцегивина, с. 269-284).
34. Хевролина В. М., Революционная Россия и боснийско-герцеговинское восстание ("Балканские исследования". Вып. 3. Освободительные движения на Балканах. Изд. "Наука", М., 1978, с. 39-50).
35. Чуркина И. В., Государственно-правовое положение и политическое развитие Боснии и Герцоговины в 1878-1918 гг. (Балканы в конце XIX начале XX века. Очерки становления национальных государств и

политической структуры в Юго-Восточной Европе. Изд. “Наука”, М., 1991, с. 183-197).
36. Բայբուրդյան Վահան, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
37. Միքայել Մուրադյան, Էդիկ Մինասյան, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIXդդ.), ԵՊՀ, Երևան, 2005:

Բուլղարիա

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972:
   - Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը,19 փետրվարի (3 մարտի) 1878թ., էջ 83-98:
   - Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին: Լոնդոն, 18/30 մայիսի 1878 թ., էջ 99-103:
   - Պաշտպանողական դաշնակցության Անգլիայի և Թուրքիայի միջև: Կ. Պոլիս, 4 հունիսի 1878 թ., էջ 104-105:
   - Բեռլինի պայմանագիրը, 1/13 հուլիսի 1878 թ., էջ 105-129:
2. Albin P., Les Grands traités politiques depuis 1815 jusqu’à nos jours. Félix Alcan, éditeur. P., 1911.
   - Le Traité de San-Stéfano (19 février/3 mars 1878), p. 187-201.
   - Occupation de Chypre par l’Angleterre. Alliance défensive entre la Grand-Bretagne et la Turquie (4 juin 1878), p. 202-203.
   - Annexe à la Convention de 4 juin 1878, p. 203-204.
   - Le Traité de Berlin (13 juillet 1878), p. 204-228.
   - L’indépendance Bulgare. Les convention de Constantinople (6/19 avril 1909), p. 241-246.
   - Intervention financière Russe. Convention de Saint-Pétersbourg (8 décembre 1909), p. 247-249.

3. Annuaire diplomatique de l'Émpire de Russie pour l'année 1878. Saint-Pétersbourg. 1878. Question d'Orient. Conditions préliminaires de paix, p. 209-210.
   - Protocole constatant l'acceptation des bases préalables de paix et la convention d'armistice, signeée à Andrinople le 19(31) janvier 1878, p. 213-220.
   - Préliminaires de paix de San-Stéfano, en date de San-Stéfano 19 février (3 mars) 1878, p. 245-263.
   - Traité de Berlin en date de Berlin 13 juillet 1878, p. 265-292.
   - Protocoles du congrès de Berlin, p. 293-572.
   - Annuaire de Législation étrangère. Publié par la Société de Législation comparée, contenant la traduction des Principales lois votées dans les pays étrangères en 1879. Neuvième année. A. Cotillon et Ge, Paris, 1880. Bulgarie. Constitution, p. 774-790.
4. Bareilles B., Le Rapport secret sur le Congrès de Berlin adressé à la S.Porte par Karathéodory pacha, premier plénipotentiaire ottoman. Éditions Bossard. P., 1919.
5. D'Avril A., Négotiations relatives au traité de Berlin. 1875-1886. Ernest Leroux, éditeur. P., 1886.
6. Documents diplomatiques. Affaires d'Orient. Congrès de Berlin. 1878. Imprimerie Nationale. P., 1878.
   - Préliminaires de paix. Signés à Andrinople le (19) 31 janvier 1878, p. 10-11.
   - Traité préliminaire de San-Stéfano, p. 21-31.
   - Protocoles du Congrès de Berlin. 13 juin-13juillet 1878, p. 65-270.
   - Traité de Berlin.13 juillet 1878, p. 273-295.
   - Convention d'Alliance défensive entre la Grande-Bretagne et la Turquie, signée le 4 juin 1878, p. 307-308.
   - Annexe a` la convention du 4 juin 1878, p. 308-309.
7. Hanotaux G., Le Congrès de Berlin. "Revue des Deux Mondes". P., 15 septembre 1908, p. 241-280.
   - 1er Octobre 1908, p. 481-514.
8. Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome troisième. 1856-1878. Librairie Cotillon. P., 1902.

- N 836. Protocoles de la Conférence de Constantinople pour le rétablissement de l'ordre dans les pays Balkaniques. Du 23 décembre 1876 au 20 janvier 1877, p. 400-494.
- 852. Bases de paix avec la Russie. Signé à Andrinople, le 31 janvier 1878, p. 507-508.
- N 854. Préliminaires de paix avec la Russie. Conclu à San-Stéfano lès C.ple le 3 mars 1878, p. 509-521.
- Les ratifications de ce Traité ont été échangées à Saint-Pétersbourg en mars 1878.
- N 855. Convention d'alliance défensive avec l'Angleterre et Actes y relatifs. Signé à C.ple le 4 juin 1878, p. 522-524.
- Article additionnel à la Convention du 4 juillet.1878, p. 524-525.
- Déclaration concernant les revenus prévus dans la Convention de Chypre, p. 525.

9. Noradounghian G., Recueil d'Actes internationaux de l'Émpire Ottoman. Tome quatrième. 1878-1902. Librairie Cotillon. P., 1903.
   - N 856. Le Congrès de Berlin du 13 juin au 13 juillet 1878. Protocoles du Congrès de Berlin, p. 1-175.
   - N 857. Traité de Berlin, p. 175-192.
   - N 869. Protocole et Traité définitif de paix avec la Russie. Signé à C.ple le 8 février 1879, p. 204-208.
   - N 875. Firman Impérial nommant Aléko-Pacha Vogorodi Gouverneur général de la Roumélie Orientale. Donné le 16 mai 1879, p. 223.
   - N 876. Firman Impérial ordonnant l'exécution du Statut organique de la Roumélie Orientale. Donné le 16 mai 1879,p. 224.
   - N 877. Firman Impérial d'investiture d'Alexandre de Battenberg comme Prince de Bulgarie. Donné le 25 juillet 1879, p. 225.
   - N 880. Acte fixant la frontière entre la Bulgarie et la Roumélie Orientale. Signé à C. ple, le 14 août 1879, p. 230-236.
   - N 882. Acte fixant la frontière de la Roumélie Orientale, p. 246.
   - N 938. Protocoles de la Conférence de C. ple. Pour règlement des difficultés survenues dans la Roumélie Orientale, au Kiosque Impérial de Top-hané, 5 novembre-5 avril 1886, p. 366-410.
   - Annexe au Protocole N 8, p. 410.

- N 940. Traité de paix de Bucarest. (Turquie, Serbie, Bulgarie). Conclu le 3 mars 1886, p. 422-423.
10. Choublier M., La Question d'Orient depuis le Traité de Berlin. Rousseau.P., 1899.
11. Schopoff A., Les réformes et la protection des chrétiens en Turquie. 1673-1904. Librairie Plon. P., 1904.
    - N 36. Firman constitutif de l'Exarchat bulgare. En date du 11 mars 1870, p. 134-137.
12. Steen de Jehay, La situation légale des sujets Ottomans non-musulmans. Bruxelles,1906.
13. Stojanovic` M. D., The Great Powers and the Balkans. 1875-1878. Cambridge. At the University press. 1939.
14. Woodward E. L., The Congress of Berlin. 1878. Published by H.M. stationery office. L., 1920, p. 1-48.
15. Ключников Ю. В. и А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, Ч. 1, От французской революции до империалистической войны, Литиздат, Н.К. И. Д., М., 1925.
    - N 212. Берлинский меморандум России, Австрии и Германии по Восточному в опросу от 30 апреля (12 мая) 1876 года, с. 215-216.
    - N 213 Конвенция между Россией и Австро-Венгрией, заключенная в Будапеште 3/15 января 1877 года, с. 217- 218.
    - N 214. Лондонский протокол по Восточному вопросу, заключенный 19/ 31 марта 1877 года, с. 219-220.
    - N 215. Прелиминарный русско-турецкий мирный договор, заключенный в Сан-Стефано 19 февраля 1878 года, с. 220-225.
    - N 217. Договор оборонительного союза, заключенный между Великобританией и Турецией в К.поле 4 июня 1878 года, с. 226.
    - N 218. Акт Берлинского конгресса 1/ 13 июля 1878 года, с. 226-230.
    - N 219. Русско-турецкий мирный договор, заключенный в К. поле 27 января/8 февраля 1879 года, с. 230-231.
    - N 227. Соглашение о взаимных гарантиях между Россией, Германией и Австро-Венгрией, заключенное в Берлине 6 / 18 июня 1881 года, с. 237-238.

- N 240. Болгаро-сербский мирный договор, заключенный в Бухаресте 19 февраля/3 марта 1886 года, с. 251.
- 271. Русско-австрийское соглашение по балканским делам, состоявшееся 26 апреля/8 мая-5/17 мая 1897 года, с. 281-282.
- N 337. Русско-болгарское соглашение по финансовым вопросам, заключенное в Софии 6/19 апреля 1909 года, с. 343.
- N 340. Русско-турецкое соглашение по финансовым вопросам, заключенное в С.-Петербурге 8 / 21 декабря 1909 г., с. 345.
- N 348. Болгаро-сербский союзный договор, заключенный в Софии 29 февраля / 13 марта 1912 года, с. 352.
- N 350. Болгаро-греческий союзный договор, заключенный в Софии 16/29 мая 1912 года, с. 355.
- N 362. Мирный договор между Турцией, с одной стороны, и Сербией, Грецией, Болгарией и Черногорией ("союзные державы"), с другой, заключенный в Лондоне 30 мая 1913 года, с. 367.
- N 366. Мирный договор между Румынией, Грецией, Черногорией и Сербией, с одной стороны, и Болгарией, с другой стороны, заключенный в Бухаресте 28 июля / 10 августа 1913 года, с. 372.
- N 367. Болгаро-турецкий мирный договор, заключенный в К.поле 16/29 сентября 1913 года, с. 373.

16. Ключников Ю. В. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II. Литиздат Н.К.И.Д., М., 1926.
    - N 130. Договор о перемирии между союзными державами и Болгарией, заключенный в Салониках 29 сентября 1918 года, с. 177-178.
    - N 204. Нейский мирный договор, 27 ноября 1919 года, с. 399-419.
17. Мартенс Ф., Собрание трактатов и конвенций заключенных Россией с иностранными державами. Том VIII. 1825-1888. С. Петербург, 1888. N 361. 1878., июля 1-го (13-го). Берлинский трактат с приложениями, с. 639-676. Ратифирован в Царском селе 15-го июля 1878.
18. Абакумов А.И., Помощь России в воссоздании Болгарской государственности (Организация русского гражданского управления).

(Вопросы новой и новейшей истории. Западно-сибирское книжное издательство. Новосибирск, 1966, с.96-126.)
19. Авантюры русского царизма в Болгарии (Сб. док.). М., 1935.
20. Александрович С.С., Русское гражданское управление в Восточной Румелии: источники и историография (К 135-летию освобождения Болгарии от османского ига). Минск: БДУ, 2014, с. 5-11.
21. Андреев М., Ангелов Д., История болгарского государства и права. Пер. с болг. Изд. Иностранной литературы. М., 1962.
22. Анучин Д.Г., Князь В.А. Черкасский и гражданское управление в Болгарии в 1877-1878 гг. ("Русская старина", 1895, февр., с. 3-34, март, с.3-27, апр., с. 43-55, май, с. 3-36, авг., с. 44-69,сент., с. 53-104, окт., с. 3-32, ноябрь, с. 47-67, дек., с. 3-50, 1896, янв., с. 55-78, февр., с. 285-313, март, с. 449-470, май, с. 225-266, июль, с.45-81, авг., с. 231-254).
23. Анучин Д.Г., Берлинский конгресс 1878 года. ("Русская старина". 1912. Т. 149, кн. 1, с. 39-58, кн. 2, с.231-255, кн.3, с. 461-470. Т. 150, кн.4, с.3-12, кн.5, с. 223-256. Т. 152, кн.11, с. 221-238, кн.12, с. 482-503).
24. Балабанов Б., Болгария. София. 1959.
25. Беляев Н.И., Русско-турецкая война 1877-1878 гг. Воениздат. М., 1956.
26. Бескровный Л.Г., От Сан-Стефано до Берлинского конгресса (К дипломатической истории русско-турецкой войны 1877-1878 гг.). (Международные отношения и внешняя политика СССР. История и современность. Изд. "Наука". М.,1977, с. 138-149).
27. Бирман М.А, Маковецкая Т.Ф., К вопросу о некоторых тенденциях становления и развития болгарского буржуазного государства (Балканы в конце XIX начале XX века. Очерки становления национальных государств и политической структуры в Южно-Восточной Европе. Изд., "Наука". М., 1991, с. 288-330).
28. Бобриков Г., Воспоминание о Берлинском конгрессе. ("Русский вестник",1889 г., N 12, с. 3-43).
29. Бобриков Г., В Берлине на конгрессе. ("Русская старина". 1913 г., N 2, с. 280-300).
30. Боков Г., Современная Болгария; история, политика, экономика, культура. Изд. "София Пресс", 1981.

31. Болгаро-российское общественно-политические связи. 50-70-е гг. XIX в. Изд. “Штиинца. Кишинев. 1986.
32. Валев Л., Освобождение Болгарии от турецкого ига. (Сб. ст.). Изд. АН СССР. М., 1953.
33. Валев Л.Б., Из истории русско-болгарских отношений. (Сб. ст.). Изд. АН СССР. М., 1958.
34. Валев Л.Б., Исследования по новой и новейшей истории Болгарии (Сб. ст.). Изд. “Наука”, М., 1986.
35. Валев Э., Болгария. Албания. Изд. МГУ. 1955.
36. Виноградов В. И., Боевое содружество народов России и Балкан во время русско- турецкой войны 1877-1878 гг. Центральная и Юго-Восточная Европа в новое время (Сб.ст.). Изд. “Наука”, М., 1974, с. 205-213.
37. Виноградов В. И., Русско-турецкая война 1877-78 гг. и освобождение Болгарии. Изд. ”Мысль”, М., 1978.
38. Восточный вопрос во внешней политике России.Конец XVIII-начало XX в. Изд. “Наука”, М., 1978.
39. Галкин И. С., Образование Балканского союза 1912 г. и политика европейских держав “Вестник Московского университета”. Серия общ. наук. 4. Изд. МГУ., 1956, с. 9-40.
40. Георгиевский Д., Гражданское управление в Болгарии (1877-1879). “Наблюдатель”. 1882, N 9, с. 123-160, N 10, с. 169-195.
41. Граф Н.П. Игнатьев., Сан-Стефано, “ Исторический вестник”. 1915, N 1, с.27-61, N 2, с. 376-404, N 3, с. 746-772, N 4, с.36-65, N 5, с.394-425, N 6, с. 729- 752, N 7, с. 37-62, N 8, с. 359-391, N 9, с. 729-752, N 10, с. 59-92, N 11, с. 414-445.
42. Грачев В. П., Балканские владения Османской империи на рубеже XVIII-XIX вв. Изд. “Наука”, М., 1990.
43. Гринберг С. Ш., Внешнеполитическая ориентация Болгарии накануне первой мировой войны (1912-1914 гг.), “Славянский сборник”. Госиздат. М., 1947, с. 291-335.
44. Дебидур А., Дипломатическая история Европы. Т.II. Госиздат. М., 1947. Гл. тринадцатая. Восточный кризис и Берлинский трактат, с. 450-501.

45. Державин Н.С., Болгарско-сербские взаимоотношения и Македонский вопрос. СПб., тип. “Смолинский”. 1914.
46. Державин Н.С., История Болгарии.
- Т. 1. Изд. АН СССР. М.-Л., 1945.
- Т. 2. Изд. АН СССР. М.-Л., 1946.
- Т. 3. Изд. АН СССР. М.-Л., 1947.
- Т. 4. Изд. АН СССР. М.-Л., 1948.
47. Жебокрицкий В.А., Болгария во время Балканских войн 1912-1913 гг.Изд. Киевского ун-та. Киев, 1961.
48. Жигарев С. А., Русская политика в Восточном вопросе (Ее история в XVI-XIX вв., критическая оценка и будущие задачи). Т. 1-2. Унив. тип., 1896.
49. Зуева Н.В., Российская дипломатия и болгарское национально-освободительное движение в 1867 г., История и культура Болгарии. Изд. “Наука”, М., 1981, с. 164-178.
50. Зуева Н. В., Шатохина Е. М., Из истории балканской политики России 1856-1867 гг. (Отношение русской дипломатии к болгарскому национально-освободительному движению, “Балканские исследования”. Вып. 8. Изд. “Наука”. М.,1982, с. 153-172.
51. Иречек К., История болгар. Одесса. 1878.
52. История Болгарии. В 2-х томах.
- Т.1. Изд. АН СССР. М., 1954.
- Т.2. Изд. АН СССР. М., 1955.
53. История внешней политики России. Вторая половина XIX века. Изд. “Международные отношения”. М., 1999. Гл.V. Восточный кризис 70-х годов XIX в., с. 174-219.
54. История внешней политики России. Конец XIX-начало XX века. (От русско-французского союза до Октябрьской революции). Изд. “Международные отношения”. М., 1997. Гл.VI.Россия в международных отношениях 1908-1909 годов. Политика балансирования, с. 223-253. Гл. IX. 1912-1914 годы: борьба за укрепление Антанты, с. 316-370.
55. История дипломатии. Т.II. Дипломатия в новое время. 1871-1914. Автор тома В.М. Хвостов. Госиздат. М., 1963. (Гл. третья. Ближневосточный кризис (1875-1877 гг.), с. 83-116. Гл. четвертая. Русско-турецкая война

(1877-1878гг.) и Берлинский конгресс (1878г.), с. 117-133. Гл. двадцатая. Балканские войны (1912-1913 гг.), с. 734-766.
56. История дипломатии. Т. III. Политиздат. М., 1965, Гл. шестая. 2. Парижская конференция (18 января-28 июня 1919 г.), с. 140-166.
57. История южных и западных славян. Изд. МГУ, 1979.
58. Кабакчиев Хр. и Караколов Р., Болгария в Первой мировой империалистической войне (1915-1918 гг.).“Историк марксист”. Изд. “Правда”. 1941, N 1, с. 58-72.
59. Козьменко И. В., Англо-австрийская дипломатия против освобойденной Болгарии. (История и культура Болгарии). Изд. “Наука”, М., 1981, с. 194-206.
60. Козьменко И. В., Россия и освобождение Болгарии. “Балканские исследования”. Вып. 4. Русско-турецкая война 1877-1878 гг. и Балканы. Изд. “Наука”, М., 1978, с. 115-133.
61. Конобеев В., Русско-болгарское боевое содружество в войне 1877-1878 гг. “Вопросы истории”. Изд. “Правда”, М., 1951, N 10, с. 42-64.
62. Конобеев В. Д., Борьба болгарского народа за национальную независимость в период русско-турецкой войны 1877-1878 годов и против решений Берлинского конгресса. Освобождение Болгарии от турецкого ига (Сб. ст.). Изд. АН СССР, М., 1953, с. 71-138.
63. Косев Д., Новая история Болгарии. Курс лекций. Изд. Ин. Литературы, М., 1952.
64. Косик В.И., Русская политика в Болгарии в 1879-1886 гг. Изд. “Наука”, М., 1991.
65. Краткая история Болгарии. С древнейших времен до наших дней. Изд. “Наука”, М., 1987.
66. К новейшей истории Болгарии (1881-1883). “Русская старина”. 1886, сент., с. 703-752, ноябрь, с. 475-483.
67. Коротких М. Г., Разработка и принятие Тырновской конституции Болгарии 1879 года. Изд. Воронежского ун-та, Воронеж, 1878.
68. Коротких М. Г., Россия и конституционное строительство в Болгарии (1878-1879). Изд. Воронежского ун-та, Воронеж, 1982.
69. Кратка история на България, Изд. “Наука и изкуство”, София, 1983.

